Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱԴԻԱԲԵՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ


ՀՍՍՀ
Ա.ԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. Г. МЕЛКОНЯН

ГОСУДАРСТВО АДИАБЕНА И АРМЕНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

Ա 64089
9(47.925)1+9(35

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱԴԻԱԲԵՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ջ97-80



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1980

9(Ա)1+9(Շ43) 1 Ինդեքս ԳՄԴ 63.3(0)4+63.3(2Հ)1
Մ 537

Պատասխանատու խմբագիր
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Գիրքը հրատարակության են նրաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտորներ Հ. Մ. Բարթիկյանը և Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը

Մելիոնյան, Հ. Գ.

Մ 537 Ադիաբենի պետությունը և Հայաստանը / Պատ. խմբ. Ս. Տ. Երեմյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ. 1980.— 274 էջ:

Աշխատության մեջ հեղինակը բազմալեզու աղբյուրների հիման վրա առաջին անգամ տվել է Հայաստանի հարևան՝ Մեծ և Փոքր Զաբ գետերի միջև ընկած տարածքում կազմավորված Ադիաբենի պետության պատմությունը:

Գրքում հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական, մշակութային այն սերտ կապերին, որոնք գոյություն են ունեցել Ադիաբենի ու Հայաստանի միջև:

Գիրքը նախատեսված է Մերձավոր արևելքի և Հայաստանի հին և միջին դարերի պատմության ու մշակույթի խնդիրներով զբաղվող մասնագետների և բարձրագույն ուսումնական հաստատությունների հասարակագիտական ֆակուլտետների ուսանողության համար:

Մ $\frac{0504020000}{703(02)-80}$ 20—79

9(Ա)1+9(Շ43)1
ԳՄԴ 63.3(0)4+63.3(2Հ)1

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԲԵԼԱ ՔԱՂԱՔՆ ՈՒ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅՔԸ
(վաղագույն շրջան)

Միջագետքի աշխարհագրական դիրքը, այնտեղ ապրած և ապրող բազմաթիվ ժողովուրդների պատմությունը, եզակի արժեք ներկայացնող բարձրարվեստ մշակույթի հոյակապ կոթողները միշտ էլ պատմաբանների ուշադրության կենտրոնում են եղել:

Մեր այս աշխատության մեջ կփորձենք կանգ առնել Մեծ և Փոքր Զաբ գետերի միջև ընկած այն երկրի պատմության վրա, որը հետագայում կոչվեց նախ Ադիաբենե, և ապա՝ Խեդայաբ:

Հետագայում ևս ասում, որովհետև ասուրաբաբելական և պարսկական հին արձանագրություններում այդպիսի երկրի անուն ոչ մի անգամ չի հիշատակված, ուստի բնական է ենթադրել, որ այն Ադիաբենե է կոչվել ավելի ուշ: Այդ երկրի մասին խոսելիս, հին արձանագրություններում հանդիպում է Արբելա քաղաքի անունը, մի փաստ, որ նշանակում է, որ հին ժամանակներում այդ երկու գետերի միջև ընկած տեղանքում ապրող ցեղերի կամ ժողովուրդների տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում հիմնական դերը կատարում էր այդ քաղաքը, ուստի վաղագույն շրջանի պատմությունը ավարտվելու է Արբելա քաղաքի պատմությամբ:

Մեզ հասած տեղեկությունները այնքան քիչ են ու աղճատ, որ դրանց միջոցով դժվար է ամբողջական պատկեր կազմել, սակայն կցկտուր այդ փաստերը հնարավորություն կտան Արբելայի վաղ շրջանի պատմության մասին որոշ գաղափար կազմել:

Դժվար է ասել, թե ե՞րբ է կառուցվել Տիգրիս գետի արևելյան ափին, հուշարձաններով հարուստ, հատկապես Իշտար աստվածուհուն նվիրված իր շքեղ տաճարով հայտնի Արբելա քաղաքը, սակայն մի բան պարզ է, որ այն գոյություն է ունեցել դեռ շատ վաղ ժամանակ-

ներից և բաբելական արձանագրություններում հիշատակվել է Ուրբիլում ձևով[1]: Հետաքրքրական է, որ երբ բաբելացիները Արբելային ասում էին «Ուրբիլում», ապա ասորեստանցիները, հավանաբար այդ անունը իրենց լեզվական սուղաբանության ենթարկելով, դարձրել են «Արբա-իլու», այսինքն՝ «չորս աստված», անշուշտ, ենթադրելով, որ հաղարը այդպես է անվանվել, որովհետև այն ունեցել է «չորս աստվածություններ» և կամ՝ այդ հաղարում եղել են չորս աստվածությունների պաշտամունքին նվիրված տաճարներ: Ասորիին նմանությունից կատարված ասորեստանյան այս սուղաբանությունը, ինչպես եզրակացնում է եվրոպացի պատմաբանը, ըստ երևույթին, զուրկ է պատմական հիմքից[2]: Շատ ավելի ուշ, հունական ու պարսկական աղբյուրներում այս հաղարը անվանված է Արբելա, իսկ արաբական աղբյուրներում՝ Իրբիլ: Համենայն դեպս, ինչպես տեսնում ենք, Արբելան էլ Միջագետքի, Ասորիքի՝ Նինվեի, Հալեբի, Երեխի, Բեյրութի նման այն հազվագյուտ հաղարներից է, որի պատմությունը գնում է մեր թվականությունից առաջ մի քանի հազարամյակների խորքը: Կասկածից վեր է, որ Արբելան, ինչպես նաև վերը հիշատակված մյուս հաղարները, երկարատև գոյության համար պարտական են իրենց աշխարհագրական դիրքին, շրջապատող բնության գեղեցկությանն ու բնական հարստություններին: Արբելան, օրինակ, իր դաշտավայրով եղել է Միջագետքի գողտրիկ անկյուններից մեկը, որի բերրի դաշտերը, առատ ջրերն ու հարուստ հանքերը միշտ էլ հրապուրել են հողագործությամբ զբաղվողներին, տիրակալներին ու արհեստավորներին: Քաղաքը կառուցված է եղել դաշտավայրի կենտրոնում բարձրացած մի ամուր ժայռաբլրի վրա, որը նրան դարձրել էր անմատչելի մի ամրոց, և այդ էր պատճառը, որ ամեն անգամ հաղարը բշնամու կողմից ավերվելուց հետո, բնակիչները վերադարձել են ու վերաշինել իրենց հաղար-ամրոցը:

Անշուշտ, հաղարը շինելու կամ վերաշինելու պատճառներից մեկն էլ այն էր, որ այն գտնվում էր ռազմական և առևտրական հարավաճների գլխավոր խաչմերուկներից մեկում[3]: Օրինակ, ասորեստանյան,

---

[1] *S. Smith*. Early history of Assyria to 1000 B. C., London, 1928, p. 132.

[2] Նույն տեղում:

[3] *Փոքր Ասիայի կյանքում փոխանակության կարևորության մասին է վկայում այն փաստը, որ մ. թ. ա. մոտավորապես 2000 թ. և նրանից հետո, այստեղ երևան է գալիս առևտրական գաղութների մի ցանց, որտեղ գլխավոր դերը խաղում էին ասորեստանցիները (կամ, ավելի ճիշտ, աշուրցիները՝ Աշուր քաղաքի քաղաքացիները), իսկ այդ գաղութների գործունեությանը ակտիվորեն մասնակցում էին նաև տեղական բնակչության առավել ունևոր ներկայացուցիչները:*

ճետագայում նաև պարսկական ու հունական բանակները, բացի Բաբելոն—Եկբատան ճանապարհից, մեծ մասամբ օգտվում էին նաև Արբելա—Համադան, և ընդհանրապես այս ճանապարհից բաժանվող այլ բազում ճյուղավորումներից[4]:

Փաստերը վկայում են,[5], որ մ. թ. ա. III հազարամյակի վերջերից ու II հազարամյակի սկզբներից, այստեղ են հաստատվել խուրիական ցեղեր, որոնք հայտնի էին շուբարեցիներ անունով[6]: Մինչ այդ ի՞նչ բնիկ ցեղեր են ապրել այստեղ, հայտնի չէ, ուրեմն հասկանալի է, որ Արբելայի ու նրա շրջակայքի պատմությունը սկսվում է այս տեղահբը նվաճած շուբարեցիներով[7]:

Բաբելական արձանագրություններից (տախտակ XXIII, C) իմանում ենք, որ այս ցեղերի առաջնորդներից Շուլգի անունով մեկը (մ. թ. ա. 2277—2221 թթ.) նվաճել է Ուրբիլուն և նրա շրջակայքը[8]: Ուստի պետք է ենթադրել, որ այդ ժամանակներից էլ շուբարեցիներից ոմանք բնակություն էին հաստատել այդ վայրերում: Արդյո՞ք Շուլգին Արբե-

---

Ինչպես ցույց են տալիս առևտրական այդ գաղութների դիվանների տվյալները, մ. թ. ա. XX դ. ասորեստանյան գաղթականների գործունեության բոլոր շրջաններում, արդեն ստեղծվել էին վաղ-դասակարգային քաղաք-պետություններ, որոնցում իշխում էին արքայիկ-առաջնորդը (կառավարիչ) և թագուհի-քրմուհին (կառավարչուհին)՝ ավագների խորհրդի հետ միասին: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1971, հ. Ա, էջ 176: Արբելայում ևս ստեղծվել էր քաղաք-պետություն:

[4] *E. Herzfeld*, The Persian Empire, „Studies in geography and ethnography of the ancient Near East", Wesbaden, 1968, p. 231.

[5] *S. Smith*, Early history, p. 134.

[6] *«Խուրիների բնակեցրած տերիտորիան շումերներեն կոչվում էր Սուբիր, իսկ աքքադերեն՝ Սուբարտու կամ Շուբարտու: Մ. թ. ա. II հազարամյակի և I հազարամյակի սկզբների գրավոր աղբյուրներում Հյուսիսային Միջագետքի բնիկները կոչվում են շուբարեցիներ: Այս անունը պահպանվել էր և հին հայկական պատմական Աղձնիք գավառի Շուպրիա (կամ թերևս ավելի ճիշտ՝ Շուբրիա) անվան մեջ: Ավելի ուշ շրջանում, մ. թ. ա. VII—VI դդ. «Սուբարտու» էր կոչվում Հյուսիսային Միջագետքի այն մասը (Արևմտյան Խաբուր գետի վերին հոսանքի շրջանը), որտեղ նախապես գրտնվում էր Խուրրի-Միտանի Վաշշուգանե մայրաքաղաքը»: «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 147—148:*

[7] *«Ուրբիլումը», «Արբա իլուն» և կամ «Արբելաս» անունը ո՞ր լեզվից կամ ո՞ր ժողովրդից է գալիս, դժվար է ասել, արդյո՞ք մինչ շուբարեցիները այնտեղ ապրող բնիկ ցեղերն են այդ անունը տվել քաղաքին, հայտնի չէ, և դժվար է ասել՝ ինչ-որ իմաստ ունեցել է, թե ոչ. միակ ենթադրությունը, որ կարելի է անել, այն է, որ կապ պետք է ունեցած լինի ինչ-որ աստծո անվան հետ, որովհետև այդ ժամանակներում կառուցված քաղաքների անունները, ինչպես օրինակ՝ Նինվեն, Աշուրը, Ուրը աստվածների անուններ են եղել:*

[8] *S. Smith*, Early history, p. 134.

լան ու նրա շրջակայքը նվաճելուց հետո այն միացրել է իր կայսրությանը թե ոչ, ոչինչ չգիտենք, բայց նույն այդ արձանագրությունից պարզվում է, որ նա պատերազմական գործողությունները շարունակել է իր թագավորության 44—46-րդ տարիների ընթացքում (այսինքն 2233—2231 թթ. մ. թ. ա.) և իր իշխանությունը վերջնականապես ամրացրել այս վայրերում[9]:

Որքան էլ սակավ լինեն տեղեկությունները, սակայն մի բան պարզ է՝ Շուլգիի և նրա հաջորդ Պուր Սինի գերիշխանության տարիներին Միջագետքը բաժանվել էր երկու մասի՝ հյուսիսայինի և հարավայինի: Հյուսիսայինը առանձին ամբողջություն էր և իր մեջ էր ընդգրկում Արբելայի դաշտավայրը մինչև Նինվե և, հավանաբար, այս հաղթն էլ մտնում էր նրա մեջ: Հարավայինը նույնպես առանձին հաղթական միավոր էր և ենթակա էր Ուրի թագավորության[10]:

Ուրեմն, մեզ հայտնի առաջին վերաբնակիչները՝ շումբարեցիները, Արբելա հաղթն ու նրան շրջապատող դաշտավայրը նվաճելուց հետո շարժվում են առաջ: Թե ինչպիսի դիմադրություն են ցույց տվել բշնամի բանակներին այս վայրերում ապրող տեղաբնիկները, չգիտենք, սակայն, եթե նկատի ունենանք Արբելայի բնական ամրությունները, կարող ենք ենթադրել, որ նրանց միջև ուժեղ մարտեր են տեղի ունեցել, բայց ի վերջո հաղթել են շումբարեցիները, որոնք Արբելան գրավելուց հետո, անկասկած, առաջացել են դեպի Մեծ Ջաբ ու Տիգրիսի արևելյան ափը: Թեև իրենց առաջխաղացման ժամանակ Նինվեն գրավելու մասին ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել, սակայն բաբելական սույն տախտակից (XXIII, C) իմանում ենք, որ այս մեծ հաղթը Ասորեստանի թագավորներից Սինախերիբի (705—681 թթ.) ժամանակ էլ դեռ իր համբավն ու հզորությունը չէր կորցրել. Նինվեն և Կակզիները ըվանված են եղել Շուլգիի կողմից[11]:

---

[9] *Նույն տեղում:*

[10] *Դեպի Արբելա և նրա շրջակայքը արշավել է նաև ասորեստանյան արքաներից Շամշի Ադադ Ա-ն (1812—1780 թթ.): Նրանից մեզ հասած հուշատախտակի մի կտորի վրա, որը այժմ պահպանվում է Լուվրի թանգարանում, նկարագրված է այդ արշավանքը: Ըստ այս տախտակի, արքան իր բանակով շարժվում է նախ դեպի հարավ և ապա՝ դեպի հյուսիս՝ Արբելա, որը գտնվում էր Աշուրից հյուսիս-արևելք՝ 68 մղոն հեռավորության վրա: Այս վկայության համաձայն, Շամշի Ադադ Ա-ն իր արշավանքը սկսել է Աշուրից և ոչ թե Նինվեից: Բացի այդ, իմանում ենք, որ արդեն Արբելան, Արաբխան կամ Քերքուքը մտել էին Ասորեստանի տիրապետության մեջ: Այս մասին տե՛ս E. Herzfeld*, The Persian Empire, p. 210.

[11] *S. Smith*, Early history, p. 134.

Այսպես, «մ. թ. ա. XIX—XVIII դդ. Միջագետքի և Ասորիքի հյուսիսում ամենաուժգոր պետությունն է դառնում Աշուրը: Տիգրիս գետի վրա իշխանությունն իր ձեռքն է վերցնում Շամշի Ադադ Ա-ն՝ թագավոր տիտղոսով և ժամանակավորապես իր գերիշխանությանը ենթարկում արևմուտքում Եփրատի և արևելքում՝ Զագրոսի միջև ընկած ողջ տերիտորիան: Սակայն նրա մահվանից շատ չանցած, նախ Եփրատի միջին հոսանքի շրջանը, այնուհետև՝ Աշուրը և նրա հարևան բաղաքները (օրինակ Նինվեն) ճարկադրված են լինում ենթարկվելու Բաբելոնի Համմուրաբի թագավորին»[12]:

Այս ժամանակ է, որ սեմական, աքքադական ցեղերը Բաբելոնի շրջակայքից շարժվում են դեպի հյուսիս ու բնակություն հաստատում Տիգրիսի ափերին: Շատ չանցած Տիգրիսի արևելյան մասից և Էլամի հյուսիսից հարձակվում են կասիտական ցեղերը և իրենց տիրապետությունը հաստատում այս վայրերի վրա: Սակայն նրանց տիրապետությունը կարճ եղավ. աքքադական կամ ասորական ցեղերը միավորվելով կարողացան կասիտական լուծը թոթափել և Տիգրիսի արևելյան ափին պահպանել իրենց ինքնուրույնությունը: Քաջ և պատերազմասեր կասիտները, հակառակ դրան, իրենց գերիշխանությունը տարածեցին Տիգրիսից արևելք՝ Համադանի Ալվանի անցքերի վրա և Բաբելոն և Համադան ճանապարհից սկսած մինչև հարավ, Սուզայից (Շուշից) ոչ հեռու հոսող Եվլայոս գետը[13]: Կասիտները այս ամբողջը նվաճելուց հետո, մ. թ. ա. 1740 թ. հասկացան, որ այս երկու տարբեր մասերը, տարբեր այս ցեղերն ու ժողովուրդները ավելի հեշտ կառավարելու և նրանցից մի հզոր ուժ ստեղծելու համար, անհրաժեշտ էր բոլորին միավորել տնտեսական, քաղաքական ու մշակութային մի ամբողջության մեջ[14]: Նրանց այս միջոցառումները պատճառ դարձան, որ Բաբելոնից ու նրա շրջակայքից բազում սեմական ցեղեր նորից գաղթեն ու բնակություն

12 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 181:

13 E. Herzfeld, The Persian Empire, p. 40.

14 «Մի շարք մանր քաղաք-պետություններին նվաճման և միավորման հետևանքով մ. թ. ա. XVI դ. Արևմտյան Խարուր գետի վերին հոսանքի շրջանում՝ Հյուսիսային Միջագետքում, ստեղծվեց Միտաննի թագավորությունը՝ Վաշշուգանն մայրաքաղաքով: Թեև նրա թագավորները, հավանաբար հնդիրանական անուններ էլ էին կրում, բայց կենցաղում օգտագործում էին խուրրիերենը, իսկ պաշտոնական շրջաններում՝ նաև աքքադերենը և սեպագրի աքքադական սիստեմը: Հավանաբար, «խուրրի» և «Միտաննի» տերմինները խեթերն օգտագործել են որպես նույնանիշներ:

Միանգամայն հավանական է, որ Միտաննիի ազդեցությունը տարածվել է Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջանների վրա, ներառյալ Բոհտան և Մեծ Զաբ գետերի հովիտները»: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 182:

հաստատեն հյուսիսային շրջաններում, այսինքն՝ Աշուրի երկրում: Ինչպես ասացինք, հյուսիսում հաստատված աֆրադական ցեղերը Տիգրիսի արևելյան ափին ստեղծել էին իրենց պետությունը, որը հայտնի էր Աշուրիստան կամ Ասորեստան անունով: Ինչպես հետո կտեսնենք, տարբեր ժամանակներում «Ասորեստան» անունը ունեցել է տարբեր նշանակություն: Աշուրների ստեղծած այս պետությունը Բաբելոնից եկած սեմական նոր գաղթականության շնորհիվ ավելի ամրապնդվեց և կարողացավ ոչ միայն ետ մղել կասիտների նվաճողական ուժերը, այլև դառնալ հզոր աշխարհակալ մի պետություն[15]:

Կասիտները երկար ժամանակ իրենց տիրապետության տակ պահեցին Բաբելոնը, սակայն հզորացող Ասորեստանը սկսեց նեղել կասիտներին, որոնք, ի վերջո, պարտվեցին ու իրենց տեղը զիջեցին ասորեստանցիներին: Մ. թ. ա. 1275 թ. Ասորեստանի Թակուլ-տի-Նինիբ Ա թագավորը նվաճեց Բաբելոնը և վերջ տվեց կասիտների տիրապետությանը[16]: Քաղաքական ասպարեզից դուրս եկած կասիտները ասիմիլացվեցին Բաբելոնում և նրա շրջակայքում ապրող ցեղերի հետ: Դրանց փոխարեն քաղաքական բեմ բարձրացավ մինչ այդ երկրորդական նշանակություն ունեցող Ասորեստանյան պետությունը, որը մ. թ. ա. XIII դ. սկսած մինչև Նինվեի կործանումը (մ. թ. ա. 612 թ.) մնաց Առևմտյան Ասիայի ամենահզոր պետությունը և արևելքի ժողովուրդների քաղաքական տնտեսական ու մշակութային պատմության վրա դրեց իր կնիքը:

Ճիշտ է Թիգլաթ-Պալասար Ա-ի օրոք (մ. թ. ա. 1120—1100 թթ.) ասորեստանցիները քաղաքական ասպարեզում որոշ հաջողություններ հասան և նվաճելով տերության հյուսիսային սահմանները ևս, հասան մինչև Վանա լճի հարավային մասերը[17]: Սակայն նրա մահից հետո, երկիրը սկսեց անկում ապրել, որովհետև ոչ միայն նվաճված ժողովուրդներն ու ցեղերը, այլև սոցիալական ծանր պայմաններում ապրող ըստրուկներն ու ցածր խավի ներկայացուցիչները, իրենց հաճախակի ելույթներով թուլացնում ու ջլատում էին երկրի միասնությունը: Դրան նպաստում էին նաև գահակալական կռիվներն ու ներքին հակասությունները: Այդպես շարունակվեց մինչև մ. թ. ա. 885 թ., երբ Աշուր-Նասիրապալը ոչ միայն վերականգնեց կայսրության նախկին փառքը,

---

[15] *A. Harrison.* A guide to the Babylonian and Assyrian antiquities, London, 1908, p. 5.

[16] *A. Harrison.* A guide, p. 5.

[17] *Թիգլաթ-Պալասար Ա-ի թագավորության տարիներին Արևմտյան Ասիայի բոլոր առևտրական ճանապարհները ընկան ասորեստանցիների գերիշխանության ներքո:*

այլև նոր ժողովուրդներ նվաճելով հասավ մինչև Հրեաստան: Նա, Սալմանասար Ա-ի օրինակին հետևելով, իր պետության մայրաքաղաքը տեղափոխեց այս անգամ Աշուրից[18] մոտ 60 կմ դեպի հյուսիս՝ Կալախ (Նեմրուդ) և այնտեղ սկսեց մեծ շինարարություն[19]: Մեզ հասած մի արձանագրության մեջ նկարագրված են նրա արշավանքները դեպի Հյուսիս ու Արևելք, դեպի Արևմուտք և Հարավ: Այդ նկարագրությունից երևում է, որ Աշուր-Նասիրապալը ձգտում էր նվաճել ամբողջ աշխարհը: Սակայն նրա հաջորդների օրոք, համարյա երկու դ. (1100—900 մ. թ. ա.), Ասորեստանի քաղաքական կյանքում անկում է նկատվում: Ներքին խռովություններ, ապա Հյուսիսային Արաբիայից գաղթող արաբական և Ասորիքի դաշտերից դեպի Միջագետք ու Ասորեստան շարժվող արամեական ցեղերը սկսեցին ճնշում գործադրել և նույնիսկ սպառնալ, որ ասորեստանցիները էլ չեն կարող իրենց նվաճած որոշ երկրներից[20]: Ամեն ինչ փոխվեց, երբ Սալմանասար Բ-ն (մ. թ. ա. 860—825 թթ.) գահ բարձրացավ: Մեզ հասած մենագրության մեջ նկարագրված է, թե ինչպես նրան հաջողվել է հարևան փոքր իշխանություններն ու քաղաք-պետությունները, որոնք ինքնուրույնություն էին ձեռք բերել, իր գերիշխանության տակ առնել, այսինքն՝ նվաճել: Այս արձանագրության մեջ նկարագրված է նաև այն արշավանքը, որ նա կազմակերպել էր իր տերության հյուսիսային սահմանների վրա: Նա ճշում է. «Գիլզանից»[21] ես մեկնեցի Շիլայա՝ Հուրուշկիայի ամրոցներից մեկը և առաջացա, պաշարեցի և գրավեցի քաղաքը և կոտորեցի ռազմիկներից շատերին և երեք հազար գերիների և նրանց բազում եզներն ու ոչխարները, ձիերն ու ցուլերը տարա իմ Աշուր քաղաքը: Ան-

---

[18] *Աշուր անունը արտասանվել է նաև Աշիր ձևով և այն կարող էր նշանակել, կամ ավելի հիշտ՝ լինել երկրի, քաղաքի կամ աստծո անուն: Եվրոպացի պատմաբաններից Լ. Քինգը այդ բառը թարգմանել է «բարերար», «գթասիրտ». դա ենթադրել է տալիս, որ «Աշուրը» կարող էր նախապես լինել ինչ-որ աստծո անուն և միայն հետագայում է այն սկսել նշանակել երկրի, քաղաքի իմաստ: Այս ենթադրության օգտին է խոսում հին արձանագրություններում եղած հետևյալ արտահայտությունը՝ «Աշուրի քաղաք»: Նույնը տեսնում ենք Նինվե անվան մեջ. նախապես եղել է Նինա անունով գետի աստված, որն ունեցել է ձկան նմանություն: Այս մասին տե՛ս S. Smith,* Early history, p. 102.

[19] *A. Harrison.* A guide, p. 5.

[20] *R. F. Harper,* Assyrian and Babylonian literature, New York, 1904, p. IXVIII.

[21] *Հավանաբար խիզանն է: «Մեծ Իշայր գաւառ-Մոկաց նահանգի 2-րդ գավառը 250 կմ² տարածությամբ, այժմ կոչվում է խիզան և ընդգրկում է Կեցան գավառի մեծ մասը»: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 70:*

ձիտից[22] անցնելիս մտա Արբելայի վերևում՝ Քիրուրիի անցքերը»[23]:

Ինչպես երևում է արձանագրությունից, Արբելան ու նրա շրջակայքը Ասորեստանյան կայսրության մի մասն էին կազմում և իրենց աշխարհագրական դիրքով, ճանապարհներով կարևոր դեր էին խաղում ասորական բանակների դեպի հյուսիս կամ հյուսիս-արևելք տեղաշարժերի ժամանակ: Թե ովքեր էին կառավարում և ինչ ձևով՝ դժբախտաբար հայտնի չէ, սակայն ասուրական արձանագրություններից եզրակացնում ենք, որ ասորեստանյան թագավորները նվաճված երկրներում կամ հաղթներում կառավարիչ էին նշանակում զորավարներից մեկին կամ տեղաբնիկ այնպիսի անձնավորությունների, որոնք իրենց հավատարմությամբ ու հաջողությամբ վստահություն էին ներշնչում, որովհետև փաստերը վկայում են, որ Արբելայի կառավարիչները երբեմն մասնակից են եղել Ասորեստանի գերիշխանության դեմ կազմակերպված մի շարք ապստամբական շարժումների, որոնց նպատակն է եղել անջատվել Ասորեստանից ու ինքնուրույն պետություն դառնալ: Նման փորձերը, բնական է, հիմնականում կազմակերպում էին երկրի ներսում գոյություն ունեցող բարձր խավի ներկայացուցիչները, որոնք ձգտում էին իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:

Ասորեստանյան արխիվներից՝ Շամշի-Ռամմանի մեզ հասած (825—812 թթ. մ. թ. ա.) մի արձանագրությունից իմանում ենք, որ Սալմանասար Բ-ի թագավորության օրոք ապստամբել էին 27 տարբեր իշխանությունների կամ հաղթների բնակիչներ, և Շամշի-Ռամմանը ճնշում է այդ ապստամբությունը: Կարևորը մեզ համար, անշուշտ, այն է, որ ապստամբած հաղթների մեջ էր նաև Արբելան, որը հիշատակված է «Արբա-իլու» ձևով[24]: Արբելայի շրջակայքը այս արձանագրություններում երբեմն անվանվում է նաև «Զաբի վերևի աշխարհամաս» և կամ «Զաբի շրջակա երկրամաս»[25]: Այդպես են գրել հատկապես, երբ նկարագրել են բանակների տեղաշարժերը:

Այս արձանագրություններում եղած վկայությունները մեզ բերում են այն եզրակացության, որ երկու Զաբերի միջև ընկած աշխարհամա-

---

[22] *Խոսքը Անձիտ գավառի մասին է. «Ասուրա-բաբելական* Enszitu, *հուն.* Ἀνζιτηνή, *լյուդ.* Χανζιτ, *լատ.* Anzetenae. *Զորրորդ Հայքի 6-րդ գավառը՝ 3,825 կմ² տարածությամբ, դրավում էր Խարբերդի դաշտի հիմնական մասը: Այս գավառում էին գտնվում Անձիտ, Հուսերթդ, Ծովք և այլ ամրություններըե»: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 36:*

[23] *R. F. Harper,* Assyrian, p. 41.

[24] *Նույն տեղում, էջ 45:*

[25] *Նույն տեղում, էջ 29, 41:*

սում այդ շրջանում առանձին պետական իշխանություն չէր ստեղծվել դեռ, այլ կար Արբելայի խաղաք-պետությունը, որի իշխանությունը տարածվում էր նաև իր շրջակայքում ապրող տարբեր ցեղերի վրա[26]:

Արբելան, ինչպես ասուրական արձանագրություններն են ցույց տալիս, ասորեստանյան տիրապետության, հատկապես VIII—VI դդ.[27], մանավանդ Սինախերիբի և նրա հաջորդ՝ Ասարհադդոնի ժամանակ, իր ծաղկումն է ապրում: Իսրայելից ու Փյունիկյան այլ խաղաքներից բերված բազմահազար գերիներից շատերը հաստատվում են այս մասերում, որը, բնականաբար, օգնում է և՛ առևտրի, և՛ տնտեսության վերելքին: Աշխուժանում է նաև խաղաքի մշակութային կյանքը, և Արբելայի Իշտար աստվածուհին առաջնակարգ նշանակություն է ստանում: Այդ ժամանակներից ի վեր, ասորեստանյան արքաները կարևոր մի որոշում կայացնելիս կամ ռազմական մի կարևոր արշավանքի պատրաստվելիս, դիմում էին Արբելայի աստվածուհուն և նրա կամքը հարցնում: Իշտար աստվածուհու պատգամները հուրմերի միջոցով տեղեկացվում էին ար-

---

[26] *Եվրոպացի պատմաբաններից Սմիթը այսպես է գրում այդ մասին. «Հյուսիս-արևմուտքում արամեացիները պահպանում էին իրենց լեզուն և սովորույթները, բայց նրանք ընդունեցին այն և օգտագործեցին կատարելագործելով իրենց գտած քաղաքական կազմակերպությունը, որը և նրանք մեծացրին ու դարերի ընթացքում ամրողջացրին: Հարավ-արևմուտքում նրանք շատ բան կորցրին իրենց լեզվից ու սովորույթներից, սակայն պահպանեցին քաղաք-պետությունները, որոնք դեռևս Բաբելական կայսրության հիմքն էին: Տե՛ս* S. Smith Early history, p. *312: Այն մասին, որ երկու Զաբերի միջև ընկած տարածությունում դեռ պետական առանձին իշխանություն գոյություն չուներ, վկայում է նաև Սալմանասար Բ-ի որդի Սարգոնից (720—705 թթ.) մեզ հասած արձանագրությունը, որտեղ նա ասում է, որ «իր թագավորության 8-րդ տարում Դուզու (Թամուզ) ամսում մեկնելով իր մայրաքաղաք Կալխուից, անցնում է Վերին և Ներքին (Մեծ և Փոքր) Զաբերից, կտրում է Քուլլար լեռը և իջնում Սումբի դաշտավայրը»:*

Հայտնի պատմաբան Ն. Ադոնցը իր «Հայաստանի պատմություն» աշխատության մեջ կանգ է առել այս արձանագրության վրա: Նա ցույց է տվել, որ «Քուլլար լեռը իր անունը պահպանել է մինչև օրս և կոչվում է «Քուլլար դաղ». լեռը գտնվում է այն օղակում, որն անցնելով Զագրոսյան լեռնաշղթան, կազմում է Փոքր Զաբը: Իսկ Սումբի դաշտը՝ Ալոտի շրջանը, կլինի Զագրոսի ստորոտին: Քուլլարը տեղադրում են Լուլումու կամ Զամուա աշխարհամասում»: Տե՛ս N. Adonz, Histoire d'Arménie, Paris, 1946, p. 100.

[27] *Պատմությանը հայտնի է, որ ասորեստանցիները միշտ էլ փորձել են անցնել Ուրարտուի սահմանը և այդ փորձերը եղել են Զաբի (Մեծ Զաբի) դաշտավայրից կամ Տիգրիսի ակունքներից, այնպես որ Ուրարտուն ստիպված է եղել իր հարավային սահմանը ուժեղացնել Ուրմիա լճի կամ Մանայի կողմից, որովհետև դեպի Զաբի դաշտավայր տանող ճանապարհը մնում էր որպես Ուրարտուի ամենամեծ ամրությունը: Տե՛ս* N. Adonz, Histoire d' Arménie, p. 232.

ֆային: Մեզ են հասել, օրինակ, Ասարհադդոն (681—668 pp.) արձանի նման հարցումների ութ պատասխաններ, որոնք գրված են այնպիսի ոճով, որ վճռականություն ու իմաստնություն են ներշնչում արձանին[28]:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ աստվածություն էր Իշտարը: Մասնագետները, ուսումնասիրելով ասուրաբաբելական կրոնը, եկել են եզրակացության, որ այն իր հիմքում բնապաշտական է և իր պանթեոնում բազում աստվածություններից ունեցել է որոշ առաջնակարգ նշանակություն ունեցող աստվածներ: Դրանցից մեկը Իշտարն էր, որը ասորեստանյան միապետության մեջ մտնող համարյա բոլոր քաղաքներում, մանավանդ Աշուրում, Երեխում, Նինվեում և հատկապես Արբելայում, ունեցել է իր պաշտամունքին նվիրված հատուկ տաճարներ[29], որոնք տերության քաղաքական կյանքում խաղացել են ուրույն և կարևոր դեր:

Իշտարը սկզբում եղել է միայն բեղմնավորության աստված, սակայն հետագայում նրան վերագրվել են սիրո և պատերազմի աստծո հատկանիշները ևս: Վերջին հատկանիշը, նրա՝ պատերազմի աստված լինելու պարագան, երևան է գալիս ավելի ուշ, մոտավորապես մ. թ. ա. VIII—VII դդ., երբ ասորեստանյան արքաները, վերականգնելով իրենց երկրի հզորությունը, նորանոր նվաճումներով մեծացնում էին իրենց միապետության սահմանները: Այդ պարզ երևում է Սինախերիբի (մ. թ. ա. 705—681 pp.) և Ասարհադդոնի (681—668 pp.) ժամանակներից մեզ հասած արձանագրություններից, մանավանդ Ասարհադդոնի պատգամներից: Իշտար աստվածուհու պատերազմի աստված հռչակվելուն նպաստում է, մեր կարծիքով, այն հանգամանքը, որ Արբելայի Իշտար աստվածուհու տաճարին կից գործող աստղագիտարանը սկսում է երկրի ներսում մեծ համբավ ձեռք բերել, անկասկած, այնտեղ գործող շնորհա-

---

[28] *Բերում ենք մի քանի օրինակ պատգամներից. «Ասարհադդոն, թագավոր ամենայն երկրի, մի վախեցիր այն զրպարտություններից, որ նա քո դեմ էր հարուցել, ես նրան տանելու եմ, որ ես նրան չեմ պաշտպանելու: Քո թշնամիները վայրի վարազի նման... Սիմանու բերանով ցիրուցան են լինելու քո ոտների առաջ: Ես մեծ Տիկինն եմ, ես Արբելայի Իշտարն եմ, որը քո թշնամիներին քո ոտների առաջ է նետելուս, 3-րդ պատգամից. «Ես հրճվելու եմ Ասարհադդոնի հետ՝ թագավորի, ուրախացիր ով Արբելա և այլն: 6-րդ պատգամից. «Ես Արբելայի Իշտարն եմ, ով Ասարհադդոն, Ասորեստանի արքա, Նինվեի, Քալախի և Արբելայի հետ երկար օրեր, հավերժ տարիներ եմ շնորհելու իմ արքա Ասարհադդոնին»: Այս ութ պատգամները գտնված են մի մեծ կավե տախտակի վրա, որի միայն 2/3 մասն է պահպանված: Այդ մասին մանրամասն տե՛ս* R. F. Harper, Assyrian, pp. 414—419.

[29] G. *Contenau*, La civilisation d'Assur et de Babylone, Paris, 1937, p. 85.

լի, գուցե նաև իրենց գործին գիտակ մի շարք ֆուրմերի շնորհիվ, որոնք իրենց աստղագիտական կարողություններով որոշ կանխագուշակումներ էին կատարում: Այդ էլ, հավանաբար, պատճառ է դառնում, որ արաները պատերազմական արշավանքների նախապատրաստվելիս դիմեն Արբելայի Իշտար աստվածուհուն:

Թե ե՞րբ է սկսել գործել Արբելայում Իշտար աստվածուհու տաճարին կից այդ աստղադիտարանը, տեղեկություններ չունենք: Մեր ձեռքին է միայն Նինվեի պեղումներից հայտնաբերված մի կավե տախտակ (№ 63), որի վրա պահպանված է Արբելայի աստղադիտարանի ավագ աստղաբաշխ՝ Իշտար-Նատին-ապլի մի հաղորդումը, որն ունի հետևյալ բովանդակությունը. «Թագավորին իմ Տիրոջ, ֆո ծառա Իշտար-Նատին-ապլը, Արբելայի աստղաբաշխների մեծն [ասում է]. ողջույն թագավորին՝ իմ Տիրոջ. թող Նաբուն և Մարդուկը և Արբելայի Իշտարը բարեգութ լինեն իմ Տիրոջ՝ թագավորին: Մենք հսկեցինք 29-րդ օրը: երկինքը ամպոտ էր, և մենք չկարողացանք տեսնել լուսինը. [թվագրված է] Բել-խառանի-Շադուայի անվանառության ամսի մեկին»[30]:

Համենայն դեպս, աստղադիտարանի գոյությունը Արբելայում վկայում է այն մասին, որ Արբելան այն ժամանակ ունեցել է տնտեսական բարձր մակարդակ, որ կարողացել է ստեղծել գիտության՝ նման մի խոշոր կենտրոն:

Արբելայում և նրանից ոչ շատ հեռու գտնվող վայրերում տնտեսական ու քաղաքական կյանքի աշխուժացմանը նպաստում են ոչ միայն ավանդված հիշողություններից բերված հաղորդությունները, բազմաթիվ գերիների տեղափոխումն ու վերաբնակեցումը, այլև ցեղային այն տեղաշարժերը, որոնք նոր թափ էին ստացել VIII դ. սկզբներին[31]: Այսպես, Թիգլաթ Պալասար Գ-ի (745—727 թթ.) թագավորության 737 թ. արամեական ու գուրումու ցեղերը առաջ շարժվելով նվաճում ու բնակություն են հաստատում Արբելայից ոչ հեռու Բեյթ Գարմայում ու նրա շրջակայքում, որը, ինչպես հետո կտեսնենք, Սասանյանների օրոք, որոշ ժամանակ միացված է եղել Արբելայի նահանգին և այդ պատճառով էլ մտել

---

30 *A. Harrison*, A guide, p. 61.

31 *Սովետական պատմաբաններից Ի. Դյակոնովը իր աշխատության մեջ ցույց է տվել, որ արամեական ցեղերը, դեռ դրանից դարեր առաջ, այս կողմերը գաղթել ու նուվելիակ փոքր իշխանություններ էին հիմնել. Տե՛ս И. Дьяконов*, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 151.

է Արբելայի մետրապոլիտությանը ենթակա եպիսկոպոսական թեմի մեջ: Բեյթ Գարման կամ Գարամեան արաբներին հայտնի էր Բայարմա անունով: Այսօր էլ Քերկուքի մոտակայքում կա մի տեղ, որը կոչվում է Բեգերմա[32]: Համենայն դեպս այդ ժամանակներից հայտնի է դառնում նաև Քերկուք քաղաքը[33]:

Մեզ հասած արժեքավոր ասորական աղբյուրներից «Քարքա-դը-բեյթ-Սլոխի պատմությունը» գրում կարևոր տեղեկություններ են պահպանվել Բեյթ Գարմայի քաղաքական կյանքում տեղի ունեցած այս փոփոխությունների մասին և մանավանդ Քերկուք քաղաքի շինության, զարգացման ու ծաղկման վերաբերյալ:

Այս ասորական աղբյուրների տվյալների համաձայն, Քերկուք քաղաքը հիմնել է Ասորեստանի արքաներից՝ Սարգոնը (մ. թ. ա. 722—705 թթ.) կամ, ինչպես նույն այս բնագրի ուսումնասիրողն ու թարգմանիչը ենթադրում է, այն հիմնադրել է մի այլ արքա՝ Ասարհադդոնը, Սինախերիբ արքայի որդին: Ճիշտ է, այս պատմությունը կամ ժամանակագրությունը շատ ուշ է գրի առնվել (հավանաբար մեր թվականության VI դարում), սակայն հավատացած ենք, որ այս աղբյուրի հեղինակը իր ձեռքին ունեցել է հին ժամանակներից եկած վկայություններ ու փաստեր, և նրա հաղորդումը ունի պատմական հիմք ու արտացոլում է վերոհիշյալ ցեղերի այս վայրերում վերաբնակություն հաստատելու փաստը[34]:

Այս տեղաշարժերի վրա կանգ ենք առնում, որովհետև, Արբելայում և նրա շրջակա երկրամասերում կամ գավառներում մ. թ. ա. 2-րդ հազարամյակից սկսյալ տարբեր ժամանակներում եկել ու բնակություն են հաստատել տարբեր ցեղեր ու ժողովուրդներ: Մասնագետները դրժվարանում են պարզել, թե ովքե՞ր են եղել տեղաբնիկները կամ առաջին բնակիչները[35]: Համենայն դեպս այստեղ բնակություն հաստատած տարբեր ցեղերը մ. թ. ա. VIII դ. սկսում են միավորվել և հարմար առիթներով նույնիսկ ապստամբվել Ասորեստանյան կայսրության դեմ:

---

32 *E. Herzfeld*, The Persian Empire, p. 152.

33 *Նույն տեղում: Իր այս ուսումնասիրության մեջ հեղինակը հիմնվելով հին աղբյուրներից՝ Սոշյատարի նամակի վրա, Արրապխա քաղաքը նույնացնում է Քերքուքի հետ: Ենթադրում է, որ այն արամեական «Քարքա-դը-Բեյթ-Սլոխի» կրճատված ձևն է:*

34 *Н. Пигулевская*, Города Ирана в раннем средневековье, Москва-Ленинград, 1956, стр. 37—49, 138.

35 *S. Smith*, Early history, p. 60.

Այդ միավորումն ու ապա կազմակերպված ապստամբությունները տեղի էին ունենում ասորեստանցիների տնտեսական ու քաղաքական ծանր լծի հետևանքով[36]: Ինչպես վկայում են փաստերը, Սարգոնի թագավորության վերջին տարիներին «Հյուսիսային Միջագետքի, Տիգրիսի վերին հովտի, ներառյալ Արբելայի դաշտի բնակիչները, Տիգրիսի արևելքից մինչև Քերմուքի հարավը ստիպված եղան, ապստամբության ենթարկվելուց հետո, ճանաչել Սարգոնի գերիշխանությունը»[37]: Հետագայում, նորից ապստամբական գործողություններ սկսվեցին Սարգոնին հաջորդած Սեննեխերիբի (705—681 pp.) և ապա նրա հաջորդ՝ Ասարհադդոնի ժամանակ[38]: Ապստամբական այս գործողությունները, ներքին խռովությունները ու ստրկական շարժումները խարխլեցին ասորեստանյան հզոր կայսրության հիմքերը, և ի վերջո, Բաբելոնի կառավարիչ Նաբոպալասարը դաշնակցելով մեդացիների հետ՝ արշավեց Նինվեի վրա մ. թ. ա. 612 թ., կործանեց այն, վերջ տվեց Ասորեստանյան կայսրությանը: Ասորեստանի վերջին արքա Սին-Շար-Իշքուն փախավ Խառան քաղաք: Այսպես կայսրությունը բաժանվեց երկուսի: Ասորեստանը, այսինքն՝ Աշուրական թագավորությունը, ընկավ մեդացիների գերիշխանության ներքո, իսկ Բաբելոնը՝ Նաբոպալասարի: Այսպիսով, վերականգնվեց բաբելոնյան նոր կայսրությունը[39]: Բաբելացիները շարունակեցին ասորեստանցիների նույն քաղաքականությունը: Նրանց կողմից գործադրված ճնշումները, իրենց ենթակա իշխանություններին ու ժողովուրդներին ստիպում էին, որ նրանք գլուխ բարձրացնեն և ընդվզեն այս անգամ բաբելացիների դեմ: Ճիշտ է, բաբելացիները փայլուն հաջողություններ ունեցած Նաբուգոդոնոսոր Բ-ի (604—561 pp.) որդի, որը երկու անգամ (596 և 587 pp.) գրավեց Երուսաղեմը, բազում հրեա ու եգիպտացի գերիներ տեղափոխեց իր երկիրը և իր մայրաքաղաք Բաբելոնը զարդարեց ճարտարապետական հուշարձաններով հարուստ մի քաղաք: Սակայն այդ քաղաքական հաջողությունները երկար չտևեցին, որովհետև աքեմենյան թագավոր Կյուրոսը մ. թ. ա. 539 թ. վերջ տվեց բաբելոնյան այս թագավորությանը. մինչ այդ նա արդեն նվաճել էր մեդացիների երկիրը[40]:

Այս ժամանակներում Արբելան և նրա շրջակայքը, ընդհանրապես

---

[36] *R. F. Harper*, Assyrian, pp. 68—79.
[37] *S. Smith*, Early history, p. 94.
[38] Նույն տեղում:
[39] *A. Harrison*, A guide, p. 10.
[40] *G. Contenau*, La civilisation d'Assur, p. 48.

ՀԱՍԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հյուսիսային Միջագետքը, ընկել էին մեդացիների գերիշխանության ներքո և կազմել «Միջագետքի սատրապության մասը»[41]: Փաստորեն, Աքեմենյան տիրապետության հաստատումով այս երկրների քաղաքական կյանքում առանձին փոփոխություն տեղի չէր ունեցել, փոխվել էին միայն տերերը: Այս փոփոխությունը, սակայն, իր հետ բերել էր կառավարման մեքենայի կատարելագործում[42], այսպես՝ Դարեհ Ա-ի բազավորության տարիներին, տնտեսության ու հարկային սիստեմների ուժեղացումը, արքայական իրավունքների ընդլայնումն ու թագավորական իշխանության կենտրոնացումը նշանավոր դարձրին, որ Աքեմենյան սոցիալական կարգերը ավելի բարձր ու ամուր հիմքերի վրա դրվեն, ի վնաս նվաճված ժողովուրդների և հասարակության նշված ու ցածր խավերի: Տնտեսության մեջ առանձնապես զարգանում էին առևտրական, մանավանդ միջազգային առևտրական հարաբերությունները, որոնք աշխուժացել էին նահապարհների ապահովության և նոր շուկաների կազմակերպումով: Այդ աշխուժացմանը նպաստում էին հատկապես արամեական ցեղերը, որոնք իրենց բարավանների ու նահապարհորդությունների էին գնում կայսրության համարյա բոլոր սահմաններն և իրենց հետ տանում առևտրի համար անհրաժեշտ ապրանքներ: Արամեական ցեղերի առևտրական լայն գործունեության շնորհիվ արամերենը սկսեց շուկաներում, ապա տարբեր ժողովուրդների հարաբերությունների մեջ տիրապետող դառնալ: Եվ, իսկապես, Աքեմենյանների օրոք և նրանցից հետո, երկար ժամանակ արամերենը դարձավ միջազգային լեզու: Անշուշտ, առևտուրը, տնտեսության զարգացումը և առևտրական հարաբերությունները որոշ վերելք ապրել էին մարերի տիրապետության ժամանակ: Սակայն մարական պետությունն էլ, որը կազմված էր սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող ժողովուրդներից ու ցեղերից, որոնց միջև միասնություն չկար, չդիմացավ ներին հակասություններից առաջացած երկպառակություններին, և արտաքին ազդակների ազդեցության ներքո արագացավ նրա անկումը: Քաղաքական ասպարեզ իջան, ինչպես ասացինք, Աքեմենյանները: Մարերին վերջին հարվածը տվեց Պերսիս երկրի (Պարսք) թագավոր Կյուրոսը, որը վերջնականապես հաղթելով մարերի Աստիագես թագավորին, մ. թ. ա. 550 թ. հիմնել էր Իրանի Աքեմենյան տերությունը[43]:

---

41 *Նույն տեղում, էջ 49:*

42 *A. Christensen*, L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, p. 15.

43 «*Հայ ժողովրդի պատմություն*», *հ. Ա, էջ 444:*

Կյուրոսը ավաճել էր նաև Արբելաճ ու նրա շրջակայքը: Նրա այս պատերազմական գործողությունների մասին առձաճագրություններից մեկում կարդում ենք. «[Ապրիլին], Պարսուի թագավոր Կյուրոսը հավաքից իր բանակները և անցնելով Տիգրիսը մտավ Արբելա»[44], այն ավաճելով նա առաջաճում է ու Գուխումի կառավարիչ Գոբրիասի հետ մաճում Բաբելոնն[45]. այս հաղթաճակները նրան մեծ համբավ բերեցին և դրանից հետո նա իճն իրեն ավանեց այսպես. «Ես Կյուրոսս՝ աշխարճի թագավոր, մեծ թագավոր, ամենակարող թագավոր, Բաբելոնի թագավոր, թագավոր Շումերի, թագավոր չորս կողմերի»[46]:

Թե ի՞նչ վիճակում էր Արբելաճ Աճեմենյանների օրոք՝ չգիտենք: Բայց մի բան պարզ է. Արբելաճ, որը գտնվում էր առևտրական ճարավանային կարևոր խաչմերուկներից մեկում, Աճեմենյանների կիրառած տնտեսական հաղաքականության շնորհիվ վերելք է ապրել, որովճետև, ինչպես հետո կտեսնենք հունական աղբյուրներից, Արբելայից անցնող առևտրական ճանապարճները ճարմարավետ են եղել ճարավանների համար[47]: Ինչպես պարզվում է, հյուսիսից դեպի ճարավ և արևելքից դեպի արևմուտք գնացող այդ ճանապարճները անցնում էին Մեծ Զաբի ճովտով: «Արևելքից դեպի արևմուտք գնացող ճանապարճը հիմնականում որոշվում էր Զաբի և նրա արևելքում ու արևմուտքում գտնվող օժանդակ գետերի ընթացքով, որովճետև ջրով ապաճովված ճանապարճ կար դեպի խաբուրի ճովիտը, որն անցնում էր Սինջարյան լեռներով»[48]:

Ասորեստանցիները ոչ միայն նման առևտրական կապերի մեջ են եղել կայսրության հյուսիսային սաճմաններում ապրող ճարևան ժողովուրդների ու ցեղերի հետ, այլ նաև փորձել են ռազմական արշավանքներով ավաճել դրանք: Այսպես, Սալմանասար Ա-ի (1266—1243 թթ.) մեզ հասած արձանագրությունից իմանում ենք, որ նա իր գաճակալության առաջին տարիներին արշավանք է կազմակերպել Ուրարտու ընդճանուր անվան տակ միավորված ժողովուրդների դեմ և իր այդ արշավանքով կարողացել է հպատակեցնել դրանցից ութին, որոնք ապրում էին Վանա լճից ճարավ-արևելք ընկած լեռնոտ վայրերում, ճավանաբար, Մեծ Զաբ գետի վերին ճոսանքում[49]: Դրանից հետո ասորեստան-

---

44 *R. F. Harper*, Assyrian, p. 169.

45 *Նույն տեղում:*

46 *Նույն տեղում, էջ 171:*

47 *Նույն տեղում, էջ 175:*

48 *S. Smith*, Early history, p. 3.

49 *«Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 279:*

յան արհաւները հաճախ փորձել են ներխուժել և խորանալ այս երկրների զանազան սահմաններում, բայց միշտ էլ հանդիպել են ուժեղ դիմադրության: XI—X դդ. ասորեստանյան թագավորները հիմնականում զբաղված էին Միջագետք բախանցած արամեացիների դեմ մղված պայքարով: Այս ժամանակաշրջանում հզորանում է Ուրարտական պետությունը, որը, ինչպես ենթադրում են մասնագետները, կազմավորվել էր 870—860-ական թթ.[50]:

Պայքարը երկար է տևում Ասորեստանի և Ուրարտուի միջև, և, ի վերջո, Ուրարտուի թագավոր Սարդուր Ա-ի օրոք (845—825 թթ.) երկիրը հզորանում է և կարողանում իր գերիշխանությունը տարածել հնէնուրույն բազմաթիվ ցեղապետների, «թագավորների» և կառավարիչների վրա: Իսկ VIII դ. արդեն Մեծ Զաբի հովտում գոյություն ուներ Մուսասիր (Մուծածիր, Ուրարտ-Արդինի) թագավորությունը: Այս հովտում կային հարուստ տաճարներ, Կումենեում (Կումմե) գտնվում էր Թեյշեբա աստծո տաճարը, իսկ Արդինիում՝ Խալդի աստծունը: Հետագայում Խալդիի տաճարում էին թագադրվում ուրարտական թագավորները, և այնտեղ էին պահվում ուրարտական գանձերը, թեև ձևականորեն Մուսասիրը Ուրարտուի կազմի մեջ չէր մտնում»[51]: Համենայն դեպս, Ուրարտուն գնալով հզորանում է և տեսնապես մեծ վերելք ապրում Ուրարտական թագավոր Մենուայից (810—786 թթ.) սկսյալ, իսկ իր հզորության գագաթնակետին է հասնում Արգիշտի Ա-ի (786—764 թթ.) օրոք: Հզորանալով, Ուրարտուն համարձակորեն սկսում է իր ուժերը չափել հզոր ախոյան Ասորեստանի հետ: Այդ պատերազմական գործողությունները տարիներ են տևում: Անընդմեջ պատերազմները պատճառ դարձան, որ Ուրարտուն թուլանա, չնայած Առաջավոր Ասիայում իր առաջնությունը պահպանեց մինչև մ. թ. ա. VII դ. 40-ական թվականների վերջերը[52]:

Այսպես, «Արևմտյան և Արևելյան Տիգրիսի հովիտներում ընկած երկրները՝ Արմե-Շուպրիան, Նաիրի-Խուբուշկիան և Արդինի-Մուսասիրը (ավելի ուշ՝ հին հայկական Աղձնիք, Մոկք, Անձևացիք, Կորճայք և այլ գավառներ) Սարգոն Բ-ի մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո անջատվում են Ուրարտուից: Այդ երկրներից Արմե-Շուպրիան վաղուց ընդգրկվել էր հայերի կազմավորման ընդհանուր ընթացքի մեջ: Նույնիսկ Ռուսա Բ-ի թագավորության շրջանում (685—645 թթ.), երբ ու-

---

[50] *Նույն տեղում, էջ 284:*

[51] *Նույն տեղում էջ 294:*

[52] *Նույն տեղում, էջ 311:*

վերջնականապես չախչախնց ապստամբ բանակին, և նրանք բռնեցին Ջիտրաճտախմային և նրան բերեցին ինձ մոտ: Ապա ես կտրեցի նրա ֆիքը, ականջները, և կուրացրի նրան: Շղթաներով նրան պահեցի իմ պալատում և բոլոր մարդիկ նրան տեսան: Դրանից հետո նրան խաչեցի Արբելայում»[56]:

Մեզ համար ուշագրավն այն է, որ Դարեհը կարգադրում է, որ նրան խաչեն Արբելայում: Ենթադրում ենք, թե դրա պատճառն այն է, որ Արբելան ապստամբության հիմնական կենտրոնն է եղել, գուցե նաև՝ Ջիտրաճտախմայի նստավայրը: Կամ նա Արբելայի կառավարիչ էր և այս խաչելությամբ, Դարեհը մտածում էր ապստամբած ժողովրդին ահ ու սարսափի մեջ պահել և սոխպել, որ նրանք նման այլ փորձի չդիմեն:

Եվրոպացի պատմաբան Հարպրը գրում է, որ «Ջիտրաճտախմա» անունը նույն մեդական «Կիտրատր» անունն է, և եթե դա այդպես է, ապա այս փաստը ևս զալիս է հաստատելու, որ նա իսկապես մեդացի էր. որովհետև, ինչպես տեսանք, աղբյուրում վկայություն կար այն մասին, որ նա «սագարտացի» էր[57], ուրեմն, կարելի է ասել, որ Դարեհի օրոք էլ Արբելայի և նրա շրջակայքի վրա իշխում էր մեդական ծագում ունեցող Ջիտրաճտախման:

Ջիտրաճտախմայի պարտությունից հետո Դարեհը, անկասկած, Արբելայում նոր կառավարիչ է նշանակել, որը, հավանաբար, ամեն կերպ ձգտել է Սմերդիսյան գերիշխանությունը ավելի ամուր հիմքերի վրա դնել և զսպել ապստամբական շարժումները: Ըստ երևույթին, պարսիկներին հաջողվել էր այդ իրագործել, որովհետև մինչև մակեդոնացիների արևելյան արշավանքը Արբելայի ու նրա շրջակայքի մասին տեղեկություններ չենք գտնում աղբյուրներում: Մ. թ. ա. IV դ., ինչպես շուտով կտեսնենք, Ալեքսանդր Մակեդոնացին իր հաղթանակների շնորհիվ վերջ է տալիս Սմերդիսյան տիրապետությանը և Արևելքի պատմության մեջ նոր էջ բացում:

Սմերդիսյանների տիրապետության ժամանակ կազմավորված զրադաշտական կրոնը, ոչ միայն Սմերդիսյանների, այլ նաև պարթևների և մանավանդ սասանյանների օրոք իրենց պետականության հիմքերն ամրացնելու և իրենց տիրապետության մեջ ապրող բազում ժողովուրդների ու ցեղերի միավորելու համար որպես գաղափարախոսություն ծառայեց: Պետք է նշել նաև, որ Սմերդիսյանների անկումից հետո տեղական քրմերի դեմ մաքառելիս այս կրոնի հետևորդները սոցիալապես

[56] *R. F. Harper*, Assyrian, p. 181.

[57] Նույն տեղում:

իրենց վիճակը բարելավելու ու հաղթական իմքնուրույնություն ձեռք բերելու նպատակով այս վարդապետությունը որպես դրոշակ օգտագործեցին իրենց պշնամու դեմ:

Զրադաշտը՝ այս կրոնի հիմնադիրը, ինչպես ցույց են տվել հետազոտողները, ապրել է մ. թ. ա. 660—583 թթ., սակայն իր քարոզած վարդապետությունը երկրում վերջնականապես հաղթել է Աքեմենյան վերջին թագավորների ժամանակ[58]: Զրադաշտը իր դուալիստական գաղափարախոսությունը, այսինքն՝ բարու ու չարի, այս երկու հիմնական ուժերի հավիտենական պայքարի սկզբունքի վրա հիմնել է մի ամբողջ վարդապետություն, հիմք ունենալով մարական ու պարսկական հին հավատալիքներն ու սկզբունքները: Զրադաշտի քարոզած նորությունը, որը հետագա գաղափարախոսությունների ու կրոնական վարդապետությունների ամենակարևոր անկյունաքարերից մեկն էր լինելու, մարդու ազատ կամք ունենալու հնարավորությունն էր, այսինքն՝ մարդն ի սկզբանե ազատ էր բարու ու չարի միջև ընտրություն անելու: Այս հասկացությունից էլ բխում էր մի այլ շատ կարևոր սկզբունք՝ որ մարդը ազատ է ծնվում, այսինքն՝ մարդիկ հավասար են ծնվում, սակայն ոմանք հետո սուրկացվում են: Ահա բարոյական շատ բարձր մի հասկացություն, որ հետագայում, դարեր շարունակ, որպես հիմնական սկզբունք օգտագործվելու էր ցածր խավերի ներկայացուցիչների կողմից, պայքարելու համար հասարակության ներսում առաջացած անարդարությունների, անհավասարությունների դեմ:

Աքեմենյանները պետական կրոն դարձրին այդ ժամանակվա համար բարոյական բարձր սկզբունքներ քարոզող այս վարդապետությունը, հավատալով, որ այն բազում ցեղերից ու ժողովուրդներից կազմված, ավելի հիշտ՝ բռնի ուժով իրար մոտ բերված, նվաճված ժողովուրդներին իրենց գերիշխանության ներքո միավորելու, համախմբելու լավագույն միջոց կարող էր հանդիսանալ: Գուցե այն իր դերը կարողանար կատարել, եթե արտաքին ուժերը ժամանակավորապես չկանգնեցնեին առաջընթացը ու վերջ չտային Աքեմենյան կայսրությանը: Աքեմենյաններից հետո զրադաշտական կրոնը կորցրեց իր ազդեցությունը և իսկապես վերելք ապրեց Սասանյանների օրոք, նորից, անշուշտ, վճռիք դառնալով սասանյան տիրապետող դասակարգերի ձեռքին: Ճիշտ այնպես, ինչպես քրիստոնեական կրոնը, որը սկզբում կազմավորվեց

---

[58] *A. V. W. Jackson.* Zoroastrian studies. The Iranian religion and various monographs. New York, 1965, p. 15.

որպես հասարակության ցածր խավի վարդապետություն պայքարելու համար միրապետող խավերի դեմ, սակայն հետագայում դարձավ նույն այդ միրապետողների ձեռին զենք, ճնշելու այս անգամ հասարակ մարդկանց: Հնագույն կրոններից՝ զրադաշտականությունը, մովսիսականությունը, ինչպես նաև հրիստոնեությունը իրենց հիմում ունեն ընդհանուր գծեր և այդ ընդհանրությունը, անշուշտ, բխում է փոխադարձ ազդեցություններից, առաջին հերթին զրադաշտականությունից. օրինակ, այս երեք կրոնների հիմնական հավատալիքներից է «Հայր աստծո» հասկացողությունը, այսինքն՝ «Հայր աստվածը», որն ամեն ինչի տերն է[59]: Հայր աստվածը ունի իրեն սպասարկող հրեշտակներ, միայն այն տարբերությամբ, որ զրադաշտականության մեջ Ահուրամազդայի որդիներից առաջին հրեշտակն էր կրակը (Atare), երկրորդը՝ ջուրը (Abo), երրորդը՝ արևը և չորրորդը՝ լուսինը: Այսպես ուրեմն, եթե բարու, լույսի տերը Ահուրամազդան է, ապա շարի ու խավարի տերը Ահրիմանն էր ու նրա գործակիցներն էլ դևերն ու սատանաներն էին: Ինչպես տեսնում ենք, նման հասկացողություններ կան նաև մովսիսականության ու հրիստոնեության մեջ, և նմանությունները սրանցով չեն սահմանափակվում: Կան նաև այլ նմանություններ, ինչպես օրինակ, «Մեսիայի այսինքն՝ Փրկչի և ապա «մեռելների հարության» սկզբունքների մեջ: Հավատացած ենք, որ եթե հրիստոնեությունը որոշ հաջողություններ է ունեցել պարսկական միրապետության տակ ապրող ժողովուրդների մեջ, դա հետևանք էր հրիստոնեական վարդապետության՝ զրադաշտականության հետ ունեցած բազում ընդհանուր գծերի: Քանի որ զրադաշտականությունը այս երկրներում միրող դասակարգերի, այսինքն՝ պետության գաղափարախոսության դերում էր հանդես գալիս, ապա հրիստոնեությունը, հակադրվելով դրան, սկզբնական շրջանում դարձավ այդ կարգերին հակադրվողների՝ ցածր խավերի կրոն: Այս տեսակետից պատկերը բիչ այլ է Հայաստանում: Այստեղ սկզբից էլ հրիստոնեությունը ճանաչվեց որպես պետական կրոն և գտավ հայ ազնվական դասի մեծամասնության պաշտպանությունը: Այդպես էր ըստացվում, որովհետև Հայաստանում այլ ազդակներ էին գործում, այսինքն՝ հայկական արմունիքը հրիստոնեական կրոնն ընդունելով, մտածում էր հակադրվել պարսկական գերիշխանությանն ու հաղթական ազատության ամուր հենարան ստեղծել: Սա, անշուշտ, այլ հարց է: Անդրադառնալով մեր խնդրին, ասենք, որ դեռ Աքեմենյանների օրոք զրադաշտականությունը ընդհանուր պետական մեկ կրոն դարձնելու և

[59] *A. V. W. Jackson.* Zoroastrian studies, p. 39.

իրենց գերիշխանության մեջ մտնող մյուս ժողովուրդներին ու ցեղերին միավորելու համար նրանք փորձել են մինչ այդ գոյություն ունեցող հին աստվածություններ նույնացնել զրադաշտական կրոնի հիմնական դեմքերի հետ: Այսպես, Անուրամազդան նույնացվել է Բելի հետ, Միթրան՝ Շամաշի, իսկ Անահիտը՝ Իշտարի հետ, չնայած, ինչպես փաստերն են վկայում, Արբելայում դեռ երկար ժամանակ շարունակել է իր գոյությունը պահպանել Իշտար աստվածուհու պաշտամունքը, այն տարբերությամբ միայն, որ այն կորցնում է պատերազմի աստված լինելու հանգամանքը ևս և մնում է սիրո և բեղմնավորության հատկանիշներով[60]:

Պարսկական տիրապետության մեջ նման համընդհանուր կրոն ընտելծելու մի փորձ ևս կատարվել է մ. թ. III դարում՝ սասանյանների արքա Շապուհ Ա-ի օրոք, մանիքեականության հիմնադիր Մանիի կողմից: Մանին փորձեց զրադաշտականության, բուդդայականության, քրիստոնեության, ասորաբաբելական հին հավատալիքների համադրումով մի նոր կրոնական վարդապետություն ստեղծել, հնարավոր դարձնելու համար Արևելքի և Արևմուտքի քաղաքական միավորումը հօգուտ սասանյանների: Բայց Մանիի այս փորձը հաջողություն չունեցավ, որովհետև այդ գաղափարախոսությունը, ի վերջո, գործիք դարձավ տիրապետող խավի ձեռքին, չնայած այն իր խորքում ուներ այնպիսի մի նոր սկզբունք, որը կարող էր իր շուրջ համախմբել ճնշվածներին՝ պայքարելու տիրապետող դասակարգերի դեմ: Այդ սկզբունքը հետաշրջում էր մտցնում զրադաշտականության հարոզած հիմնական վարդապետության մեջ, որովհետև, եթե մինչ այդ Զրադաշտը խոսում էր բարու ու չարի հավերժական պայքարի մասին, ապա Մանին ասում էր, որ այդ պայքարը ժամանակավոր է և այն վերջանալու է բարու, այսինքն՝ խավարի դեմ լույսի հաղթանակով: Սակայն ինչպես Աքեմենյաններին, այնպես էլ սասանյաններին օրոք եղած այս փորձերը իրենց նպատակին չհասան, որովհետև եթե առաջին դեպքում արտահին միջամտությունը, այսինքն՝ Ալեքսանդր Մեծի Արևելք կատարած արշավանքները վերջ տվեցին պարսիկների քաղաքական ու մշակութային ճնշողական միջոցառումներին, ապա երկրորդ դեպքում՝ սասանյան ազնվականությունը տեսնելով մանիքեականության հարոզած դաղափարների մեջ իր համար վտանգավոր սկզբունքներ, միջոցներ ձեռք առավ վերջ տալու այդ վարդապետությանը:

---

[60] *A. Christensen.* L'Iran, p. 38.

Ինչ վերաբերում է Արբելային, ինչպես ասել եմ նախորդ էջերում, նիշտ է, նրան հավատալիմները երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանեցին այս հաղամում և նրա շրջակայքում, սակայն հետզհետե դրանք տեղի ավեցին և փոխարենը թափանցեց զրադաշտականությունը. դրան նպաստեց նաև այն, որ Աքեմենյան թագավորներից վերջինի՝ Դարեհ Գ–ի դեմ Ալեքսանդր Մեծի տարած հաղթանակով Արևելքում հաղաքական նոր պայմաններ էին ստեղծվել: Այժմ անդրադառնանք այդ իրադարձություններին:

ՄԱՍՆ Ա

ԳԼՈՒԽ Ա

ԱՐԲԵԼԱՆ ՄԻՆՉ ՍԵԼՋՎԿՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1. ԱՐԲԵԼԱՆ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԱԴԻԱԲԵՆԵ ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Դ դարից սկսյալ աղբյուրները համեմատաբար ավելի շատ տեղեկություններ են տալիս Մեծ և Փոքր Զաբ գետերի միջև ընկած երկրի և այնտեղ ապրող ժողովուրդների կամ ցեղերի մասին: Այդ պատմական փաստերը հիմնականում մեզ հաղորդում են հունական և ավելի ուշ՝ հռոմեական աղբյուրները: Ինչ վերաբերում է ասորական աղբյուրներին, ապա նրանք իրենց տեղեկությունները սկսում են քրիստոնեության շրջանից: Զարմանալի է, որ հայ պատմիչները համարյա լռել են այնպիսի մի ժողովրդի ու երկրի մասին, որը հարյուրամյակներ շարունակ ոչ միայն հարևան էր, այլև բնակեցված է եղել նաև հայերով, և երբեմն էլ նույնիսկ միասին հանդես են եկել ընդհանուր թշնամու՝ հռոմեացիների դեմ, աղատագրելու Հայաստանը[1]: Հայկական աղբյուրների լռությունը ուզում ենք բացատրել այն իրողությամբ, որ Ադիաբենը* եղել է ոչ միայն նեստորական եկեղեցու հիմնական միջնաբերդերից, այլ նաև աղանդավորական շարժումների կարևոր օջախներից մեկը: Իսկ V դարի մեր պատմիչների համար նեստորական եկեղեցին դիտվել է որպես հայ ժողովրդի և հայ եկեղեցու վտանգավոր թշնամի, ուստի նրանք հարմար են գտել մինչև այդ եղած բարեկամական փաստերը ևս մոռացության մատնել հավատացյալների հոգին «չպղտորելու համար:

Հասկանալի է, որ Ադիաբենի պատմության այս վաղ շրջանը շարա-

---

[1] Այդպիսի համառոտ պայքարի մասին տեղեկություններ կան, օրինակ, Տիգրան Բ-ի և Տրդատ Ա-ի ժամանակներից: Այդ մասին մանրամասն կգրենք հաջորդ էջերում:

* Մեր շարադրանքում հավասարապես օգտագործում ենք «Ադիաբենե» կամ «Ադիաբենն» ձևը:

դրելու համար. հիմնականում օգտագործելու ենք հունական և հռոմեական աղբյուրները։ Վերոհիշյալ պատմիչների երկերում, անշուշտ, չենք գտնի Ադիաբենի պատմությանը նվիրված առանձին գլուխներ, այլ՝ մեծ մասամբ կցկտուր տեղեկություններ, կամ շատ անգամ կողմնակի փաստեր, որոնք գրի են առնված հզոր պետությունների՝ այս երկրի վրայով կատարած արշավանքների և կամ այդ վայրերում կազմակերպված պատերազմական գործողությունների առիթով։

Ասացինք, որ մ. թ. ա. IV դ. սկսած տեղեկությունները համեմատաբար շատ են, որովհետև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով և դրանից հետո Սելևկյանների գերիշխանության ստեղծումով հույն գործիչներն ու դիտնականները հատուկ ուշադրություն են դարձնում Արևելքի և Արևելքում ապրող ժողովուրդների կյանքի ու պատմության վրա, որովհետև նրանց հետ ռազմական, քաղաքական, տնտեսական ու մշակութային անմիջական հարաբերությունների մեջ մտնելով, աշխարհագրական ու պատմական լայն տեղեկություններ, փաստերի կարիքն էին զգում։ Այդ կարիքն զգացվում էր առավելապես ռազմական գործողությունների, բանակների տեղաշարժերի, ապա նվաճված երկրները կառավարելու և դրանց միջև տնտեսական կապերն ու քարավանային ճանապարհների ապահովությունը կազմակերպելու համար։ Ճաշ հասկանալով, որ հետաքրքրում, գալիք սերունդներն էլ, որոնք նվաճված այս երկրները պետք է կառավարեին, կարիք են ունենալու նման դիտելիքների, ուստի գրի են առնում նաև արևելյան երկրներին ու ժողովուրդներին վերաբերող աշխարհագրական, պատմական բազում տեղեկություններ ու փաստեր, և երբեմն նույնիսկ ականատեսի հուշեր։

Մեր աշխատության այս հատվածում, գլխավորապես հունական աղբյուրների վրա հիմնվելով, մտածում ենք վերականգնել երկու Զաբերի միջև ընկած աշխարհամասում ստեղծված պետականության պատմական ուրվագիծը, մի փորձ, որի դժվարությունն առաջին իսկ քայլերից զգացվեց։

Ինչպես ասել ենք և ինչպես տեսանք, հին ժամանակ ասուրաբաբելական և մեզ հասած այլ աղբյուրներում չի հիշատակվել և ընդհանրապես էլ գոյություն չի ունեցել Ադիաբեն կամ «Ադիաբենե» անունը, մի փաստ, որ խոսում է այն մասին, թե այդ անվանումը ավելի ուշ է հանդես եկել։

Հավանաբար, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո և մինչ այդ էլ, ինչպես համոզվեցինք, ասուրաբաբելական, Աքեմենյան,

մեդական հզոր տիրակալությունների ժամանակ, Մեծ և Փոքր Զաբերի միջև ընկած մասում եղել են քաղաք-պետություններ (Արբելայի, կամ Քարքա-դը-Բեյթ-Սլոխի և այլ քաղաքների), որոնք կառավարվել են թագավորներից նշանակված կառավարիչների կողմից: Անշուշտ, այս քաղաք-պետությունների մեջ Արբելան յուրահատուկ տեղ էր գրավում ոչ միայն ռազմական կարևոր նշանակություն ունեցող աշխարհագրական իր դիրքով, այլև միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում ունեցած իր գործուն մասնակցությամբ, հատկապես քաղաքում արտադրվող և միջազգային շուկաներ վաճառահանվող իր ընտիր ապրանքներով և, մանավանդ, իշտար աստվածուհուն նվիրված իր հայտնի տաճարով, որը տոնակատարությունների ժամանակ բազում երկրներից ուխտավորների հոծ բազմություն էր դեպի իրեն ձգում: Անտիկ ժամանակաշրջանում երկու Զաբերի միջև ընկած երկրամասը կոչվում էր նաև «Արբելիտիս»: Հետագայում, տարբեր ժամանակներում այն տարբեր անվանումներ է ունեցել, ինչպես օրինակ, Ադիաբենե, Ասսիրիա կամ Ասորեստան, ապա՝ Խեդայաբ և ի վերջո՝ Խեդայա: Վերջին երկու անվանումները հանդես են գալիս ավելի ուշ, քրիստոնեությունից հետո, առաջինը սասանյանների օրոք և երկրորդը՝ նրանցից հետո, արաբական տիրապետության ժամանակ, այնպես որ՝ դրանց հանդիպում ենք ասորի ու արաբ պատմագիրների մոտ: Ինչպես ասացինք, երկու Զաբերի միջև ընկած այս երկիրը հույն և հռոմեացի պատմիչների կողմից անվանված է Ադիաբենե. այս փաստն էլ ենթադրել է տալիս, որ երկրի այս անվանումը առաջացել է Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումից հետո, երբ հույները իրենց գերիշխանությունը հաստատեցին այս երկրներում:

Այժմ տեսնենք, թե ինչ տեղեկություններ կամ ինչ ավանդություններ են պահպանվել վաղ շրջանի աղբյուրներում՝ այս երկիրը Ադիաբենե անվանելու կապակցությամբ: Այս տեսակետից հետաքրքրական են մեր թվականության IV դարի պատմիչներից՝ Ամմիանոսի[2] վկայությունները: Ամմիանոս Մարկելլինոսը, որը մասնակցել է Հուլիանոս կայսեր արևելյան արշավանքին և եղել այս վայրերում հռոմեական բանակնե-

---

[2] Ամմիանոսը ծնվել է մոտավորապես մ. թ. 330 թ. Ասորիքի Անտիոք քաղաքում: Թե երբ է մահացել, չգիտենք, սակայն հայտնի է, որ նա կենդանի էր 391 թ., գուցե նաև 393 թ.: Մահվան թվականը հայտնի չէ (իր գրքում վերջինը խոսում է Նեոպերիոսի 391 թ. կոնսուլության մասին): Նա շարադրել է Ներվա կայսեր մ. թ. 96 թ. գահակալությունից մինչև 378 թ. Վաղես կայսեր մահվան պատմությունը 31 գրքերի մեջ, որոնցից առաջին 13 գրքերը կորել են:

քի հետ միասին, գրի է առել ոչ միայն տեսածները, լսածները, այլ նաև տեղական ավանդություններ։ Պետք է նշել, որ Ադիաբենը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր սահմաններ, ուստի Ադիաբենի մասին տեղեկություններ քաղելիս, նկատի պիտի ունենալ աղբյուրի ժամանակը։ Օրինակ, Ամմիանոսի ժամանակ Ադիաբենի կազմի մեջ էր մտել Նինվեն, մինչդեռ հնում այդպես չէր, նույնը կարելի է ասել Ասորեստանի մասին։ Ահա թե ինչ է գրում նա. «Բոլոր երկրներից ամենամոտիկը մեզ Ասորեստանն է, որը հայտնի է իր հոծ բնակչությամբ, ընդարձակությամբ, մթերքների առատությամբ ու խոշոր բազմազանությամբ։ Այս երկիրը մի ժամանակ տարածված էր մեծ և բարգավաճ հողերի միջև (այն ընդգրկում էր Ասորեստանը, Բաբելոնիան և Միջագետքը), ապա այն ձուլվեց մի անվան տակ և այսօր ամբողջ այդ շրջանը կոչվում է Ասորեստան»[3]։ Այսպես ուրեմն՝ Ամմիանոսի օրոք «Ասորեստան» ասելով հասկացել են բուն Ասորեստանը, Բաբելոնը, Միջագետքը միասին վերցրած, մինչդեռ, ինչպես հետո կտեսնենք, Տրայանոսի ժամանակ «Ասորեստան» ասելով հասկացել են հռոմեացիների գերիշխանության տակ մտած «Ադիաբենե նահանգը»։ Այդ մասին վկայում է նաև Ամմիանոսը։ Ահա թե ինչ է գրում նա. «Այս տարածության մեջ ընկած է Ադիաբենեն, որը հին ժամանակներում Ասորեստան էր կոչվում, բայց հին մի սովորության համաձայն ստացել է այս անունը, որովհետև այն գտնվում էր երկու նավարկելի գետերի՝ Օնայի և Տիգրիսի միջև, և մենք՝ հույներս դրան [Ադիաբենին] մերձենալու համար հունը չէինք կարող կտրել անցնել[4] [հունարեն կտրել-անցնելուն ասում են «Դիաբենե», ուրեմն այդ երկիրն էլ դրա համար անվանվել է Ադիաբենե»]։

Այս տեղեկությունից հետո պատմիչը շարունակում է. «Անվավաղն սա նախնիների կարծիքն է։ Բայց ես ինքս ասում եմ, որ այս կողմերում կան հոսող երկու գետեր՝ Դիաբասն ու Ադիաբասը[5], որոնք ես ինքս կտրել անցել եմ[6], և որոնց վրա կան նավերից [պատրաստ-

---

[3] *Ammianus Marcellinus*. The surviving books of the history, english trans. John C. Rolfe, London, 1963, t. II, XXIII, 6, p. 361.

[4] Նույն տեղում։

[5] Ամմիանոսի բնագրի թարգմանիչը կարծում է, որ վերոհիշյալ գետերը նույն Զաբաս և Անզաբաս գետերն են, միայն այստեղ dia-ն դարձել է Za։ Այս ստուգաբանությունը հիմնված է հունարեն διαβαίνειν դիաբենին բառի վրա, որը նշանակում է կտրել-անցնել, և պատմիչը իր ասածը հաստատելու համար բերում է բազում օրինակներ։ Նույն տեղում, ծնթ. 2, էջ 360։

[6] Պատմիչը ակնարկում է հռոմեական բանակների հետ իր այստեղից փախչելու մասին։

ված] կամուրջներ, և այդ պատճառով էլ ենթադրվում է, որ դրանցից [այս գետերի անունից էլ երկիրը] անվանվել է Ադիաբենե, ինչպես Եգիպտոսը, Հոմերոսի ասածի համաձայն իր անունը ստացել է մեծ գետերից մեկի անունից[7]: Նույնը նաև Հնդկաստանը, և Եփրատենսիսը, որն ինձանից առաջ կոչվել է Կոմագենե, նույն ձևով Իբերիասից[8] [գետից] Իբերիան[9], և հոյակապ Բայետիս գետից՝ Բայետիկա նահանգը»[10]:

Եվրոպացի պատմաբաններից Լուի Դիլլեմանն իր «Վերին Արևելյան Միջագետքն ու հարևան երկրները» աշխատության մեջ կասկած է հայտնել Ամմիանոսի այս վկայությունների ճշմարտացիության մասին և ասել. «Անկարելի է, որ Ամմիանոս Մարկելլինոսը անցած լինի երկու Ջաբ գետերից Հուլիանոս կայսեր պարտությունից հետո, երբ հռոմեական բանակները ստիպված փախչում էին իրենց նվաճած այս հողերից, և իր ասածը հաստատելու համար բերում է այն փաստը, որ պատմիչը իրենց նահանջը նկարագրելիս ոչ մի մանրամասնություն չի հաղորդում այս փախուստի մասին, ավելին, ասում է նա, նույնիսկ ոչ մի ակնարկություն չկա պատմիչի՝ փախուստի ժամանակ ունեցած դեբի մասին, և չկա նույնիսկ անձնական հաղորդում այդ մասին»[11]: Դիլլեմանը գալիս է այն եզրակացության, որ Ամիանոսի պատմության այս հատվածը այլ տեղից է վերցված, ավելի ճիշտ, նա ենթադրում է, որ այս հատվածը վերցված է Դիոն Կասիոսի պատմության (LXVIII) գրքից, որտեղ նկարագրված է Տրայանոս կայսեր դեպի արևելք կատարած արշավանքը[12]:

Դիլլեմանի այս ենթադրություններն ու եզրակացությունները, մեր կարծիքով, ոչ մի հիմք չունեն, դրանք բխում են լոկ արտաքին նկարա-

---

[7] Պատմիչը իր այս աշխատության Բ հատորի XXII գլխի, 15, 3 գրում է, որ ըստ Հոմերոսի, Նեղոսի անունից է «Եգիպտոսը»:

[8] Նկատի ունի այժմյան Խալանիան:

[9] *A. Marcellinus*, t. II, XXIII, 6, 20—21.

[10] Եվրոպացի պատմաբաններից Շերեքը առաջարկել է Ամմիանոսի այս վկայությունը երկու գետերից՝ Դիաբասի մասին, ուղղել «Դիալասիս», նկատի ունենալով այն Դիալա գետը, որը խառնվում է Տիգրիսին, Տիզբոնի մյուս կողմում, որովհետև, իսկապես հռոմեական բանակը (Ամմիանոսի օրոք) նահանջի ժամանակ այդ գետը կտրել-անցել է: Սակայն մի այլ պատմաբան՝ Լուի Դիլլեմանը, իր աշխատության մեջ մանրամասն քննարկել է այս առաջարկը և գտել, որ դա անհավանական է, որովհետև, ասում է նա, դժվար թե երկու այնքան տարբեր գետեր նույն անունն ունենան: Այս մասին տե՛ս Louis Dillemann, Haute Mésopotamie orientale et pays adjacents, Paris, 1962, pp. 305—306.

[11] *L. Dillemann*, Haute Mésopotamie, p. 305.

[12] Նույն տեղում, էջ 306:

գրական մի երկու բառերի նմանությունից։ Դրանում մենք ավելի համոզվեցինք, երբ ծանոթացանք նաև Դիոնի հատվածի հետ։ Երկու բնագրերի համեմատությունը պարզեց, որ այս երկու պատմիչների վերոհիշյալ հատվածները մեկը մյուսից կախում չունեն, գրված են տարբեր ժամանակներում և արտացոլում են տարբեր իրադարձություններ ու դեպքեր։ Գլխավոր փաստն այդ մասին, ինչպես մասնագետներն էլ ցույց են տվել, այն է, որ այս երկու պատմիչների մոտ աշխարհագրական գիտելիքները, մանավանդ այս շրջանների վերաբերյալ, տարբեր են։ Մինչ այս հարցի քննարկումը, ծանոթանանք նաև Դիոն Կասիոսի վերոհիշյալ հատվածին։ Պատմիչը, խոսելով Տրայանոս կայսեր մ. թ. 116 թ. դեպի Ադիաբենի կատարած արշավանքի մասին, գրում է. «Հռոմեացիները անցան գետը և նվաճեցին ամբողջ Ադիաբենը»[13]։ Մինչ այդ, Տրայանոսը, կանխելու համար Ադիաբենի թագավոր Մեբարսապեսի պատերազմական գործողությունները, Մծբինում բաղում նավեր պատրաստել տալուց հետո, նույն այդ նավերով անցնում է գետը, հանկարծակիի բերում բարբարոսներին և նվաճում ամբողջ Ադիաբենը։ «Ադիաբենը,—ասում է պատմիչը,—Ասորեստանի մի նահանգն է Նինոսի [Նինվեի] մոտակայքում, այս նույն երկրում՝ Արբելայի և Գավգամելայի մոտերքում, Ալեքսանդրը հաղթեց Դարեհին։ Ադիաբենը նմանապես կոչվել է Աթուրիա, բարբարոսների լեզվում կրկնակի «ss»-ը փոխվել է «t»-ի»[14]։

Ինչպես ասացինք, մասնագետներն իրենց ուսումնասիրություններում նշել են, որ այդ մասին ինքը Դիլլեմանն էլ գիտի, որ Ամմիանոսն աշխարհագրական իր գիտելիքները հիմնականում վերցրել է հայտնի աշխարհագրագետ Պտղոմեոսից, սակայն վերոհիշյալ հատվածի իր տեղեկությունները արդյունք են անձնական իմացությունների և կամ արդեն ժամանակի համար որոշակի դարձած աշխարհագրական հասկացությունների։ Որովհետև, ինչպես Հոնիգմանն ու Մարիկը իրենց աշխատության մեջ ցույց են տվել, Պտղոմեոսը[15] Ասորեստանի և Բաբելոնի միջև որոշակի տարբերություն չի դրել, մինչդեռ Ամմիանոսը նկարագրելով Հուլիանոս կայսեր արշավանքը, որոշակի նշում և տարբերում է Ասորեստանը Բաբելոնից[16]։ Այնպես որ Դիլլեմանի այն ենթա-

[13] *Dio's* Roman History, english trans E. Cary, London, 1961, vol. VIII, Book LXVIII, pp. 403—411.

[14] *Նույն տեղում, էջ 411* (Assuria, Aturia).

[15] *Դիոնն էլ տարբերություն չի դնում։*

[16] *E. Honigmann* et *A. Maricq*, Recherches sur les Res Gestae Divi Saporis, 1952, p. 62.

դրությունը, թե Մարկելլինոսը ծանոթ չէ իր նկարագրած վայրերին և կամ այդ հատվածը վերցրել է Դիոնից, չի հաստատվում։ Մենք ևս համոզված ենք, որ Ամմիանոսը ոչ միայն ծանոթ, այլև քաջատեղյակ է իր նկարագրած աշխարհագրական վայրերին և, ինչպես նշեցինք, նա չի բավարարվել իր տեսածով, այլ շփվելով տեղի բնակչության հետ, տեղեկություններ է հավաքել և նույնիսկ մեծ բարեխղճությամբ գրանցել տեղական ավանդույթները, ցուցաբերելով իր քննադատական վերաբերմունքը, հիմնվելով ականատեսի փաստերի վրա. մեր կարծիքով, նա պատմական ճիշտ եղրակացության է հանգել։ Ինչպես տեսանք, նա չհամաձայնվելով գետը կտրել-անցնելու ավանդության հետ, երկրի Ադիաբենե անունը կապում է «Դիաբա» գետի հետ և եղրակացնում, որ Ադիաբենեն «Դիաբա» կամ «Դիաբենե» գետի անունից է[17]։ Այս տեսակետից ուշագրավն այն է, որ Ստրաբոնը Ադիաբենե երկրի մասին գրելիս ասում է, որ Մեծ Զաբ գետը անվանվում էր «Լիկոս» կամ «Լիխոս»։ Նա իր աշխատության այս հատվածում, Էրատոսթենի հաղորդած վկայություններին հետևելով, տալիս է Կասպիական դարպասներից մինչև Եփրատ գետը եղած հեռավորությունը, և ապա Եփրատից Տիգրիս և Տիգրիսի այն մասից, որ Ալեքսանդր Մակեդոնացին անցավ, այսինքն Գավգամելայի, և հետո Լիկոսի, Արբելայի, Էկբատանի և այլ գյուղերի և քաղաքների միջև ընկած հեռավորությունը[18]։ Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնը Մեծ Զաբ գետն անվանում է «Լիկոս» և այդ հաստատվում է մի այլ հատվածով, որտեղ գրել է, որ «Արբելայից և Նիկատորի լեռից այն կողմ (Ալեքսանդրը այդպես անվանեց այս լեռը Արբելայի մոտ տարած իր հաղթական ճակատամարտից հետո) գտնվում է Կապր գետը[19], որը հոսում է Արբելայից և Լիկոսից հավասար հեռավորության վրա[20]։ Իսկապես էլ, Արբելան գտնվում է Մեծ և Փոքր Զաբերի միջև, և խոսքը այն Լիկոս գետի մասին է, որը Արբելայից դեպի հյուսիս էր և այժմ մեզ հայտնի է Մեծ Զաբ անունով։

Աղբյուրներից հայտնի է, որ Լիկոս (Գայլ գետ) անունով մի շարք

---

17 *A. Marcellinus*, vol. II, Book XXIII, 6, p. 361.

18 *Страбон*, География, Москва, 1964, пер. Г. А. Стратановского, книга II, 24, стр. 84.

19 *Կապր գետը Փոքր Զաբն է։ Այս մասին տե՛ս E. Herzfeld*, The Persian Empire, p. 229.

20 *Страбон*, География, книга XVI, 4, стр. 685. *Ստրաբոնը ծնվել է մոտավորապես մ. թ. ա. 64/63 և մահացել մ. թ. 23/24 թ.։*

գետեր գտնվում են տարբեր վայրերում, ինչպես օրինակ՝ Պոնտոսում, Հայաստանում, Ասորիքում և այլն: Բայց այստեղ, ինչպես տեսանք, խոսքը Արբելայի հյուսիսում գտնվող Լիկոս գետի, այսինքն Մեծ Զաբի մասին է կամ, ինչպես Ամմիանոսն է անվանում, «Դիաբի» կամ «Դիաբայի» մասին է:

Հետաքրքիր է, որ «Լիկոս» հունարեն նշանակում է «Գայլ», ուրիմն հույները Մեծ Զաբը անվանում էին «Գայլ գետ» և, ինչպես գրել ենք, Վալեսիոսը ցույց է տվել, որ «Մեծ Զաբը» նույն «Դիաբա» կամ «Դիաբաս» գետն է, որը սկզբում եղել է «Դիաբա» և միայն հետագայում է, որ «Դիան» փոխվել է «Զիա»-ի[21], ավելի ճիշտ՝ «Դ»-ն դարձել է «Զ»[22]:

Ուշագրավ է և այն, որ «Դիաբա» (diaba-նաբա) ասորերեն նշանակում է «գայլ» (wolf, loup)[23]: Այս փաստը մեզ բերում է այն եզրակացության, որ գետի հին անունը եղել է «Դիաբա» և երբ հույները, Ալեքսանդր Մակեդոնացու օրոք, անցել են գետը, իմանալով, որ գետի անունը «գայլ» է, այն անվանել են Լիկոս: Իսկ երկրի «Դիաբա» կամ «Դիաբենե», «Ադիաբենե» անվանման հարցում համաձայնվում ենք Ամմիանոսի հետ և գտնում ենք, որ իսկապես «Ադիաբենը» առաջացել է «Դիաբա» գետի անունից: Ինչ վերաբերում է բառասկզբի «Ա» տառին (Դիաբա—Ադիաբա), ապա բանասերներն իրենց աշխատություններում ցույց են տվել, թե ինչպես նման շատ բառեր հանդես են գալիս սկզբի «Ա»-ով, կամ առանց «Ա»-ի, ինչպես օրինակ՝ Սիրիա—Ասիրիա, Սուրիստան—Ասուրիստան, Մադա—Ամադա, Ռափխա—Արրափխա, և այլն»[24]: Նույն ձևով էլ, հավանական է՝ «Դիաբան», «Ադիաբան» կամ «Ադիաբենը»:

Ադիաբեն անվան մասին գրելիս չի կարելի կանգ չառնել նաև մի սխալի վրա, որը զանազան ենթադրությունների առիթ է ծառայել: Այսպես՝ Ստրաբոնը այն հատվածում, որտեղ խոսում է Արբելայի և Նիկատոր[25] լեռան մոտ գտնվող Լիկոս գետի մասին, ասում է, որ «այս

---

21 *A. Marcellinus*, vol. II, p. 360, note 2.

22 Նույն տեղում:

23 *R. Payne Smith*, A compendious syriac dictionnary, Oxford, 1967, p. 89.

24 *E. Herzfeld*, The Persian Empire, §244, p. 306. A-ն հունարենում ժխտական իմաստ ունի. «Դիաբաս» նշանակում է «կտրել-անցնել», ապա «ադիաբաս» կնշանակի «անանցանելի» (գետ): Այդ մասին տե՛ս *H. Johens*, A Greek-English lexicon, Oxford, 1966, p. 21.

25 «Նիկատոր» նշանակում է «Հաղթանակ»:

շրջանը (այսինքն՝ Կապր և Լիկոս գետերի միջև[26] ընկած երկիրը) կոչվում է Արտաքենե»[27]:

Բնագրի ռուսերեն թարգմանիչը ծանոթագրության մեջ այն կարծիքն է հայտնում, որ այստեղ եղել է արտագրական սխալ՝ «Արտաքենեի» փոխարեն պետք է լիներ «Ադիաբենե»[28]:

Ստրաբոնի բնագրում եղած այս «Արտաքենեի» վրա ուշադրություն է դարձրել նաև Հերցֆելդը և գտել, որ իսկապես էլ երկու Զաբերի միջև ընկած երկիրը կոչվել է Ադիաբենե և ոչ թե Արտաքենե, և եզրակացրել, որ, հավանաբար, Ստրաբոնը այստեղ նկատի է ունեցել ոչ թե Ադիաբենեն, այլ Արփակենեն, որը գտնվում է Արրափխայի կամ Քերքուքի շրջանում[29]: Մեր կարծիքով, այստեղ ճիշտ է ռուս թարգմանիչը, որովհետև խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու այն հաղթանակի վայրի մասին է, որը, ինչպես մեզ հայտնի է, տեղի է ունեցել Արբելայի մոտակայքում: Ուստի հավատացած ենք, որ հույն պատմիչի սկզբնական բնագրում եղել է ոչ թե «Արտաքենե», այլ «Արբելենե», որովհետև մինչև Ադիաբենի պետականության ստեղծումը, այս երկիրը աղբյուրներում հայտնի է եղել «Արբելենե» կամ «Արբելիտիս» անունով, և Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքների ժամանակ այս շրջանում հայտնի էր Արբելա քաղաքը: Այս կապակցությամբ ուշադրավ է նաև Ստրաբոնի մի այլ վկայությունը. «Մակեդոնացիները տեսնելով, որ Գավգամելան խեղճ ու կրակ գյուղ է, մինչ Արբելան նշանակալից բնակավայր, լուր տարածեցին, և պատմիչներին այնպես հաղորդեցին, որ հաղթական ճակատամարտը կատարվել է Արբելայի մոտակայքում»[30]:

I դարի պատմիչներից Դիոդորոս Սիկիլիացին իր աշխատության մեջ նույնպես տեղեկություններ է տալիս Գավգամելայի ճակատամարտի մասին: Նա գրել է. «Իրականում ճակատամարտը տեղի ունեցավ Գավգամելայում՝ Մեծ Զաբի դաշտավայրի հյուսիսում և Դարեհը փախավ Արբելա»[31]: Ուրեմն, Գավգամելան գտնվում էր Արբելայի հյուսիսում և, ինչպես մի այլ հույն պատմիչ՝ Արրիանոսն[32] է վկայում, այն

---

[26] *Փոքր և Մեծ Զաբ գետերը:*

[27] *Страбон*, География, XVI, I, 4, стр. 685.

[28] *Նույն տեղում, էջ 830:*

[29] *E. Herzfeld*, The Persian Empire, p. 229.

[30] *Страбон*, География, книга XVI, I, 3, стр. 685.

[31] *Diodorus of Sicily*, Library of History, eng. trans. C. H. Oldfather, London, 1968, vol. III, Book XVII, 60, 7, 61, 3, p. 292.

[32] *Արրիանոսը ծնվել է մ. թ. 96 թ., մահացել է մոտավորապես մ. թ. 180 թ.:*

գտնվում էր Արբելայից 600 փարսախ[33], այսինքն՝ մոտավորապես հարյուր կիլոմետր հեռավորության վրա[34]: Եվ եթե այս ճակատամարտը պատմիչներին հայտնի դարձավ ոչ թե Գավգամելայի, այլ «Արբելայի ճակատամարտը», պատճառն այն էր, որ ամբողջ այս տարածքը՝ նաև Գավգամելան, որը խղճուկ մի գյուղ էր, մտնում էր Արբելայի մարզի մեջ: Անշուշտ, այդ ժամանակամիջոցին Արբելան իր շրջակայքով Աքեմենյան սատրապության մի մարզն էր, այն էլ՝ «Ասիրիայի» կամ «Ասիրիայի» մի մարզը: Ճիշտ է, Ստրաբոնը Արբելայի մասին նման տեղեկություններ չի տալիս, սակայն Գավգամելայի մասին ասում է, որ այն մտնում էր Ասուրիայի[35], այսինքն՝ Ասիրիայի մեջ: Խոսքն, անշուշտ, միայն Գավգամելային չի վերաբերում, այլ ամբողջ շրջակայքին, նաև Արբելային: Իսկապես. Աքեմենյան տիրապետության ժամանակ Հյուսիսային Միջագետքն ու Ասորիքը միասին կազմում էին «Ասուրիա» կամ «Ասիրիա» սատրապությունը և, հասկանալի է, որ Արբելան ու իր շրջակայքը այդ սատրապության միայն մի մարզն էին: Մինչ այս փաստի մասին խոսելը, ուզում ենք շեշտել, որ մակեդոնացիների գերիշխանության շրջանում Ադիաբենի կամ Ադիաբենեի իշխանություն գոյություն չի ունեցել, և այդ տերիտորիան, ինչպես ասացինք, աղբյուրներին հայտնի է եղել Արբելա անունով:

Մեր այս ասածը հաստատվում է նաև նրանով, որ Աստվածաշնչում այս տերիտորիայի մասին գրելիս, ոչ մի անգամ չի հիշատակվում Ադիաբենե անունը, այլ միայն Արբելա կամ արբելացիներ. այսպես՝ Մակաբայեցվոց գրքում հանդիպում ենք «յերկիրն արբելացւոց» և կամ «արբելացիներ» արտահայտության[36]:

Մեր կարծիքով, ոչ ճիշտ պատկերացում է տալիս մ. թ. I դարի պատմիչ Պլինիոսը[37], ավելի ճիշտ՝ իր ժամանակ եղած սահմանային փոփոխությունները նա կապել է աշխարհագրական հին տեղեկությունների հետ: Նա ճիշտ է, անշուշտ, երբ գրում է, որ «Ասորիքին ամենամոտ երկիրը Արբելիտիսն է», այն տեղը, ուր Ալեքսանդրը հաղթեց «Դարիոսին», բայց ճիշտ չէ նա, երբ ասում է, որ մակեդոնացիները ամբողջ

---

[33] Ատտիկյան փարսախը հավասար է 177,6 մ-ի, իսկ օլիմպիականը՝ 192,27 մ:

[34] *Arrian*. Anabasis of Alexander, english trans. *E. Hiff*, Robinson, London, 1967, vol. I, Book III, 8,3—7, p. 247.

[35] *Страбон*, География, книга XVI, I, 3, стр. 685.

[36] Աստվածաշունչ, Մակաբայեցւոց Առաջին գլ., թ. 2:

[37] Պլինիոսը ծնվել է մ. թ. 23 թ.:

Ադիաբենին Միդդոնիա անունը տվեցին, Մակեդոնիայում եղած Միդդոնիայի հետ նրա ունեցած նմանության պատճառով[38]:

Պատմիչն իր այս վերջին հաղորդումը հիմնել է երկու սխալ փաստերի վրա. նախ, ինչպես ասել ենք, մակեդոնացիների նվաճման ժամանակ դեռ Ադիաբենեն գոյություն չուներ, և երկրորդ, ինչպես բազում աղբյուրներից հայտնի է, մակեդոնացիները ոչ թե Ադիաբենեն, այլ Մծբին քաղաքն ու իր շրջակայքն են անվանել Միդդոնիա, և դա հայտնի էր նաև Պլինիոսին: Վերջինս սխալվում էր, կարծելով, որ Միդդոնիան կամ Մծբինն իր շրջակայքով Ադիաբենի մասն էր կազմում: Մինչդեռ հայտնի է, որ այն մտնում էր Հայաստանի մեջ և միայն մ. թ. I դարի 38 թ., ինչպես մեր այս աշխատության հաջորդ բաժնում մանրամասն կխոսենք, պարթևների Արտավան Գ արքան օգտվելով Հայաստանի թուլացումից, այն անջատել է Հայաստանից և որպես վարձատրություն տվել Ադիաբենի իշխանաց թագավորին[39]:

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ Պլինիոսի վերոհիշյալ վկայությունը ճիշտ չէ, և Ադիաբենը Միդդոնիա անունը չի կրել և ոչ մի այլ աղբյուրում այդպիսի տեղեկություն չկա: Ինչ վերաբերում է երկու Զաբերի միջև ընկած աշխարհամասին, ապա այն Աքեմենյան կայսրության առանձին քաղաքական միավոր չի եղել, և որպես Արբելայի մարզ՝ մտել է Ասորական Միջագետքի մեջ: Ոչ միայն ինքնուրույն պետություն չի եղել, այլև չի եղել այդ երկրամասում ապրող միասնական մի ժողովուրդ, և ինչպես աղբյուրներից իմանում ենք (և այդ մասին կխոսենք), այն բնակեցված է եղել տարբեր ցեղերով ու ժողովուրդներով: Դրա լավագույն ապացույցը այն է, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ելած Դարեհի բանակի մեջ մտնող ժողովուրդների ցուցակում չեն հիշատակվում ոչ արբելացիներ և ոչ ադիաբենցիներ:

Արրիանոսն իր գրքում Դարեհի բազմազգ բանակը նկարագրելիս, գրում է, որ այն մակեդոնացիների դեմ հետևյալ կերպ էր դասավորված. «Ասորապատեսը առաջնորդում էր մարերին, իսկ մարերի կողքին դասավորվել էին կադուսացիները, աղվաններն ու սակասենները: Կարմիր ծովը եղերող ցեղերին առաջնորդում էին Օկոնդոբատեսը, Արիոբարզանեսն ու Օրկսինեսը: Կասպից ծովի հյուսիսում բնակվող ուկսերի ու սուսիանցիների առաջնորդությունը ընդունել էր Աբուլիդեսի որդի Օկսատրեսը: Բուբարեսը հրամայում էր բաբելոնացիներին: Կարիացինե-

[38] *Pliny*, Natural history, eng. trans. H. Rackham, London, 1969. vol. II, Book VI. XVI, pp. 367—369.

[39] Այս մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 719:

րը, որոնք տեղափոխվել էին, և սիտակենացիները միացվել էին բաբելացիներին, իսկ հայերի հրամանատարներն էին Օրոնտեսն ու Միթրաուստեսը, կապադովկիացիներինը՝ Արիակեսը։ Ասորիքի դաշտավայրի և Ասորական Միջագետքի ասորիները գտնվում էին Մասայուսի հրամանատարության ներքո»[40]։

Այս վկայությունը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Արբելայում ու նրա շրջակայքում ապրողները կռվում էին Ասորական Միջագետքի զորքերի հրամանատար Մասայուսի գլխավորությամբ։ Թե ո՞վ էր և ի՞նչ ազգից էր Մասայուսը չգիտենք, բայց հայտնի է, որ նա Դարեհի սատրապներից էր։ Նման պատասխանատու պաշտոն վստահելը Մասայուսին, վկայում է այն մասին, որ նա Արևելքի ժողովուրդների մեջ հեղինակություն ունեցող անձնավորություն էր։ Արբիանոսը, ոչ միայն նկարագրել է Ալեքսանդրի և Դարեհի բանակների միջև Գավգամելայում տեղի ունեցած ճակատամարտը, այլև դրան հաջորդող իրադարձությունները։ Նա պատմում է, թե ինչպես Ալեքսանդրը մարտը շահելուց հետո իր հեծելազորով շտապում է Արբելա քաղաքը այն հույսով, որ կկարողանա Դարեհին բռնել այնտեղ։ 600 փարսախ ճանապարհ անցնելով, հաջորդ օրը Ալեքսանդրն իր զորքով մտնում է Արբելա, բայց այնտեղ չի գտնում Դարեհին, որովհետև վերջինս առանց կանգ առնելու փախել էր։ Սակայն մակեդոնացի զորավարին հաջողվում է Արբելայում գրավել Դարեհի ունեցվածքը, ինչպես նաև նրա կառքը, նետն ու աղեղը[41]։ Այսպիսի հարուստ ավար ձեռք բերելուց հետո, Ալեքսանդրը շարժվում է դեպի Բաբելոն և այն նվաճելուց հետո Մասայուսին Բաբելոնի սատրապ է նշանակում, իսկ Ապոլոդորոսին՝ թիկունքում մնացած պահապան զորքի հրամանատար, և Փիլոնի որդի՝ Ասկլեպիոդորոսի վրա դնում է հարկերը հավաքելու կարևոր պաշտոնը[42]։

Մակեդոնական բանակների այս հաջողություններից հետո Արբելայի քաղաքական կյանքում առանձնապես փոփոխություն տեղի չի ունեցել, և ընդհանրապես, ինչպես եվրոպացի մասնագետներն են ցույց տալիս, Ալեքսանդրը և նրա հաջորդները նվաճելով Աքեմենյան կայսրությունը, աշխատեցին Մեծն Դարեհի կատարելագործած պետական կառուցվածքը հիմնականում թողնել նույնը, և զարմանալի չէ, որ դրանից հետո և՛ սելևկյանները, և՛ պարթևները շարունակում են մեծ մա-

---

[40] *Arrian*, Anabasis of Alexander, vol. I, Book III, 8, 3, 7, London, 1967, p. 247.

[41] *Arrian*, Anabasis of Alexander, Book III, 15, 3—6, p. 271.

[42] Նույն տեղում, 3, 15, 14—16, 3, էջ 273։

սամբ պահել պետական ու վարչական հաստատությունները[43]: Քրիստենսենը իր ուսումնասիրության մեջ կանգ է առել այս հարցի վրա և ցույց տվել Աքեմենյան վերջին արքայի օրոք գոյություն ունեցող պետական կառուցվածքի ընդհանուր նմանությունը սելևկյանի և պարթևականի հետ[44]:

Նույն այդ մտքերն է արտահայտում և իր ուսումնասիրության մեջ նույն եզրակացությանն է հանգում մի այլ անգլիացի իրանագետ՝ Մալկոլմը[45]:

Այս փաստը խոսում է այն մասին, որ Աքեմենյան կայսրության մեջ մտնող բազում ժողովուրդների ու ցեղերի կեղեքելով՝ նախկին տիրակալներին փոխարինել են նորերը՝ հույն զորավարներն ու բարձր խավի ներկայացուցիչները, որոնք պետական նույն մեքենան ընդհանուր իր հիմունքներով օգտագործում են, շահագործելու համար իրենց քաղաքական լծի տակ տառապող և՛ ժողովուրդներին, և՛ սոցիալական իրավունքները կորցրած հոծ բազմություններին:

Մինչև սելևկյանների տիրապետության հաստատման մասին խոսելը, տեսնենք, թե ի՞նչ են ասում աղբյուրները Արբելա քաղաքի հիմնադրման, նրա բնակչության և ընդհանրապես նրա շրջակայքում, այսինքն Մեծ և Փոքր Զաբերի միջև ընկած երկրի վրա ապրող ցեղերի ու ժողովուրդների մասին:

2. ԱՐԲԵԼԱ ՔԱՂԱՔՆ ՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

(Վաղ շրջանից մինչև մեր թվականության սկիզբը)

Ուշ շրջանի պատմական հուշարձաններում պահպանվել են ավանդություններ Արբելա քաղաքի հիմնադրման վերաբերյալ: Այսպես, Միքայել Ասորին իր «Ժամանակագրության» մեջ խոսելով ասորեստանցիների առաջին թագավոր Բելի մասին գրում է, որ նրան հաջորդեց որդին՝ Նինոսը[46]: Սա, ասորեստանցիների երկրորդ թագավորը, կառուցեց

---

43 *A. Christensen*, L'Iran sous les Sassanides, pp. 15—16.

44 Նույն տեղում:

45 *M. A. R. Colledge*, The Parthians, London, 1967, p. 22.

46 Եվրոպացի պատմաբաններից Սմիթը իր աշխատության մեջ ցույց է տվել, որ Նինվե անունը առաջացել է ոչ թե ինչ-որ թագավորի, այլ գետ-աստվածուհի Նինայի անունից, որը ձկան տեսք ուներ: Տե՛ս *S. Smith*, Early history, p. 103.

մի քաղաք, որը կոչվեց Նինոս, իսկ հրեաները այդ քաղաքին Նինոսի փոխարեն ասում էին Նինվե: Համենայն դեպս, նա բացի Նինոսից կամ Նինվեից կառուցել է նաև այլ քաղաքներ՝ Ռախաբոտը, Ռաշանը և Կալնը[47]:

Ասորական այս հին ավանդությանը անդրադարձել է նաև ասոլի մի այլ պատմիչ՝ Բար Էբրայոսը: Նինոսի կառուցած քաղաքների մասին նա ասում է, որ դրանք Արբելան, Ռեշդայնան և Սելևկիան էին[48]:

Անշուշտ, պատմիչների այս վկայությունները մնում են դրույցի սահմաններում և պատմական ճշմարտության հետ կապ չունեն: Նույնն է պարագան Ամմիանոսի հաղորդած նման մի այլ ավանդության: Արհամարհել դրանք՝ ճիշտ չէր լինի, որովհետև այդ ավանդություններն իրենց հիմքում ունեն տարրեր, որոնք կարող են պատմական մեծ արժեք ներկայացնել: Առնվազն դրանք խոսում են այն մասին, որ ասորեստանյինների նվաճումից հետո Արբելան ու իր շրջակայքը քաղաքականապես ու տնտեսապես ինչ-որ վերելք են ապրել ու այդ շրջանի միջազգային կյանքում որոշ դեր են խաղացել: Մեզ ավելի հետաքրքրում է այն, որ ըստ Ամմիանոսի Նինվեն գտնվում էր Ադիաբենում: Նա գրում է. «Այս Ադիաբենում է գտնվում Նինոսի քաղաքը, այն (Նինոսի), որ մի ժամանակ իշխում էր Պարսկաստանի վրա, և, որը հավերժացնում է Նինոսի անունը, այն (մարդու), որը մի ժամանակ ամենահզոր թագավորն էր և ամուսինը Շամիրամի»[49]: Նույն պատմիչը շարունակում է իր վկայությունը և ասում, որ Ադիաբենում են գտնվում Արբելան և Գավգամելան[50]:

Իսկապես, ինչպես կտեսնենք, սասանյանների օրոք Նինվեի եկեղեցական թեմը միացվել էր Ադիաբենին, այնպես որ մ. թ. IV դ. պատմիչի այս վկայությունը արտահայտում է իր ժամանակի իրողությունը միայն: Այլ է Ստրաբոնի հաղորդած վկայությունը, որն ավելի ուշ շրջանում, ավելի ճիշտ՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո հորինված կլինի հավանաբար: Նա նույնպես հաստատում է Նինվե քաղաքի՝ Նինոսի կողմից հիմնադրվելու փաստը, սակայն Արբելա քաղաքի մասին ասում է, որ այն հիմնել է Աթմոնիայի որդի Արբելը[51]:

---

47 *Michel le Syrien*. Chronique, Paris, 1963, t. I, p. 26.

48 *Bar Hebraeus*. Chronicum Syriacum, ed. Abbeloos and Lamy, London, Louvain, 1872—1877, p. 11. Նույն կարծիքին է XVIII դ. հայտնի ասորագետ ու պատմաբան Ասեմանին: Տե՛ս *J. Assemani*, Bibliotheca Orientalis, Roma, 1719—1728, t. I, p. 26, n. 4.

49 *A. Marcellinus*. The surviving Books, XXIII, 6, 22, p. 361.

50 Նույն տեղում:

51 *Страбон*. География, книга XVI, I, 1—4.

Նինոսի, Շամիրամի[52], Ասմոնիայի հետ կապված տարբեր այս զրույցները, համենայն դեպս, մեզ հնարավորություն չեն տալիս պարզելու, թե ե՞րբ և ո՞վ է հիմնադրել այս քաղաքը և ովքե՞ր էին բնակվում երկու Զաբերի միջև ընկած տարածության վրա:

Արդեն ասել ենք, որ այս երկրամասի մեզ հայտնի առաջին նվաճողները շուբարեցիներն էին: Շուբարեցիների և ընդհանրապես Շուպրիայի մասին[53] «Հայ ժողովրդի պատմության» մեջ ասված է, որ «մ. թ. ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին գրավոր աղբյուրներում Հյուսիսային Միջագետքի բնիկները կոչվում էին շուբարեցիներ: Այս անունը պահպանվել է և հին հայկական պատմական Աղձնիք գավառի Շուպրիա (կամ թերևս ավելի ճիշտ՝ Շուբրիա) անվան մեջ»[54]:

«Խուրրիները մ. թ. ա. III—II հազարամյակների եղրին տարածված էին Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող Ուգարիտից սկսած դեպի արևելք՝ մինչև Արրափխա (այժմ՝ Քերքուքը՝ Քրդստանում) և Նուզի քաղաքները»:

«Հայկական Տավրոսից հյուսիս մ. թ. ա. հավանաբար արդեն II հազարամյակում ընկած էր ուրարտացիների էթնիկական տերիտորիան,

---

[52] Շամիրամը առասպելական դեմք է, հայտնի որպես Բաբելոնի հիմնադիր: Նրան նույնացրել են Ասորեստանի թագուհի Շամմուրամաթի հետ՝ Շամշի Ադադ Ե-ի կնոջ, որը ամուսնու մահից հետո, իր փոքր որդի Ադադ Ներար Գ-ի օրոք (810—782 թթ. մ. թ. ա.) որպես խնամակալ իշխել է: Տե՛ս G. Downey, A history of Antioch in Syrie, Princeton, 1961, p. 48.

Հայ գիտնականներից Ն. Ադոնցը իր աշխատության մեջ գրում է, որ «Շամիրամը իր նշանավոր փառքը պարտական է ոչ միայն Շամմուրամաթի խղճուկ ուրվականին, այլ գլխավորապես այնքան մեծ ժողովրդականություն վայելող Իշտար աստվածուհուն: Շամմուրամաթ անունը հետզհետե նույնացվել է Իշտարին խորհրդանշող Թռչունի՝ Ասմաստիճի (աղավնու) հետ: Պատմական Շամմուրամաթից, ասում է նա, մեզ հասել է մի քարակոթող, որտեղ նա ինքն իրեն ներկայացնում է որպես Ադադ Ներարի մայր: Տե՛ս N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, p. 90.

[53] «Վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. III հազարամյակում և II-ի սկզբներին, խուրրիական ցեղերն արդեն գերիշխող տարր էին Հայկական լեռնաշխարհի միջին մասում, նրան կից Հյուսիսային Միջագետքում և Փոքր Ասիայի արևելյան շրջաններում:

Խուրրիների բնակեցրած տերիտորիան շումերեն կոչվում էր Սուբիր, իսկ աքքադերեն՝ Սուբարտու կամ Շուբարտու: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության», հ. Ա, էջ 147:

[54] «Ավելի ուշ շրջանում մ. թ. ա. VII—VI դդ. «Սուբարտու» էր կոչվում Հյուսիսային Միջագետքի այն մասը (Արևմտյան Խաբուր գետի վերին հոսանքի շրջանը), որտեղ նախապես գտնվում էր Խուրրի-Միտաննի պետության Վաշշուգանն մայրաքաղաքը»: Տե՛ս նույն տեղում, էջ 148:

ժողովուրդը, որ խոսում էր խուրրիներենին մոտ լեզվով և ուներ խուրրիականին շատ բանով նման մշակույթ։ Ուստի կարելի է եզրակացնել, որ սկզբնապես խուրրիներն ու ուրարտացիները մի էթնոս են կազմել»[55]։

Այս բոլորը մեզ համար կարևոր են այնքանով, որ հասկանալի են դարձնում այն փաստը, թե ինչպես երկու Զաբերի միջև ընկած երկրամասում ապրող խուրրիական կամ ուրարտական ցեղերը հայացել են և այս վայրերում հայկական էթնոսի հիմք հանդիսացել։ Ստրաբոնն իր «Աշխարհագրություն» գրքում տեղեկություններ է թողել այն մասին, թե Ադիաբենի բնակչության հիմնական տարրերից մեկը եղել են հայերը։ Այսպես ուրեմն, հայկական ցեղերը դեռ շատ վաղ դարերից հաստատվել էին այստեղ։

Ահա, թե ինչ է գրում Ստրաբոնը. «Ադիաբենը մեծ մասամբ դաշտավայր է։ Չնայած այս մարզը Բաբելոնի մասն է կազմում, բայց և այնպես ունի իր հատուկ կառավարիչը և որոշ տեղերում սահմանակից է Հայաստանին։ Մարերը, հայերը և բաբելացիները այս երկրում [ապրող] ցեղերի մեջ ամենաշատն են և շատ վաղուց այնպիսի հարաբերությունների մեջ են եղել իրար հետ, որ հաճախ հարձակվել են միմյանց վրա, ապա կրկին հաշտվել։ Այս վիճակը շարունակվել է մինչև պարթևների գերիշխանության [հաստատումը]։ Այժմ պարթևները, ճիշտ է, տիրում են մարերին ու բաբելացիներին, սակայն հայերը երբեք նրանց ենթակա չեն եղել»[56]։

Այսպես, ուրեմն, Ստրաբոնի վկայությամբ հայերը Ադիաբենի բնակչության հիմնական տարրերից էին և այստեղ ապրող ժողովուրդների քաղաքական կյանքում ունեցել են իրենց կարևոր տեղը, հատկապես այն ժամանակ, երբ հայոց արքա Տիգրան Բ-ն իր գերիշխանությանն էր ենթարկել արևելյան բազում երկրներ։ Ինչ վերաբերում է Ադիաբենի բնակչության տարրերից բաբելացիներին, ապա հասկանալի է, որ պատմիչը այստեղ նկատի է ունեցել արամեական այն ցեղերին, որոնք ոչ միայն մ. թ. ա. 1200 թ., այլև դրանից հետո էլ դարերի ընթացքում հարավից գաղթելով եկել ու հաստատվել էին երկու Զաբերի միջև ընկած տարածության վրա։

Ինչպես տեսանք, Ստրաբոնի վկայությամբ Ադիաբենի բնակչության երրորդ տարրը մարերն էին, որոնք, անկասկած, մարական տիրապետության ժամանակ եկել ու բնակություն էին հաստատել այստեղ։ Նույն պատմիչը վկայում է նաև, որ բնակչության երեք տարրերի միջև

---

[55] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 148։

[56] Страбон, География, книга XVI, I, 20, стр. 691.

հարատև պայքար է գոյություն ունեցել քաղաքական իշխանության համար, նույնիսկ Ադիաբենի թագավորության ստեղծումից հետո։ Համեմատության դեպս, պատմական ինչ-որ ճշմարտություն կա հայկական աղբյուրներում եղած Օսրոյենի, ապա Ադիաբենի թագավորությունների հայկականացման մեջ։ Այստեղ կարևորն այն է, որ հայերը դեռ շատ վաղուց Ադիաբենում հաստատված ժողովուրդներից էին, և այդ մասին վկայում են նաև հունական աղբյուրներում պահպանված ավանդությունները կամ զրույցները։ Թեսսալական վարկածի վրա վերջին անգամ կանգ է առել ակադեմիկոս Ս. Երեմյանը և հիմնվելով Ստրաբոնի տեղեկության վրա, այդ մասին գրել է. «Այս վերսիայի հեղինակները Թեսսալիայի Փարսալա և Լարիսա քաղաքներից դուրս եկած Ալեքսանդր Մակեդոնացու (336—323) զորահրամանատարներ Կիրսիլոս Փարսալացին և Մենդիոս Լարիսացին են»[57]։ Ն. Ադոնցի կարծիքով, Անտիգոնոսը (384—301) «իշխանության գլուխ անցնելուց հետո հայոց թագավոր Արոանդեսի օժանդակությունն ապահովելու նպատակով նրա մոտ է ուղարկում երկու զորահրամանատարների՝ Կիրսիլոս Փարսալացուն և Մենդիոս Լարիսացուն, որոնք ժամանակին մասնակցել էին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին»[58]։ Շարունակելով իր կարծիքն այս ավանդության վերաբերյալ, պատմաբանը գրում է, որ «Կիրսիլոսն ու Մենդիոսը, անտարակույս, ձեռքի տակ ունեցել են Թեսսալիայում արմեններ լինելու մասին պատմական մի ավանդություն, որը մեզ չի հասել։ Հայաստանում (Հավանորեն Փոքր Հայքի թագավորությունում) լինելով, նրանք ուշադրություն են դարձրել Հայաստանի և իրենց հայրենի Թեսսալիայի որոշ տեղանունների համահնչունության վրա։ Նրանք ընդհանուր գծեր են գտել նաև տարազի մեջ և այլն։ Արմենիայի էպոնիմ Արմենին Կիրսիլոսն ու Մենդիոսը կապում են արգանավորդների առասպելի հետ և նրան վերագրում Թեսալական ծագում»[59]։

Այժմ տեսնենք, թե ինչ տեղեկություններ է տալիս Ստրաբոնը այս ավանդության կապակցությամբ։ «Պատմում են, որ Յասովնը, Թեսալացի Արմենի հետ դեպի կոլխերի երկիրը նավելիս, հասնում է մինչև Կաս-

---

[57] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 243։

[58] Նույն տեղում։ Տե՛ս նաև՝ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 316։ Ըստ նրա, «Թեսսալական տեսությունը Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից է գալիս։ Նրա հեղինակները Ալեքսանդրի բանակի երկու սպաներն են՝ Կիրսիլոս Փարսալացին և Մենդիոս Լարիսացին»։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 243։

[59] Նույն տեղում։

պից ծովը»։ Ըստ այս ավանդության, Արմենի ուղեկիցները բնակեցրել են Ակիլիսենեն և Սիսպիրիտիսը մինչև Կալաքենեն և Ադիաբենեն»[60]։ Ստրաբոնն իր նույն աշխատության մի այլ մասում նորից անդրադառնալով այս ավանդությանը, գրում է, որ «Արմենի ուղեկիցներից ոմանք գրավեցին Ակիլիսենեն, որը մինչ այդ գտնվում էր սոփենների (ծովափնյաների) իշխանության տակ, իսկ մյուսները բնակություն հաստատեցին Սիսպիրիտիսում մինչև Կալաքեն և Ադիաբեն՝ հայկական լեռներից այն կողմ»[61]։ Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը և Ս. Երեմյանը իրենց աշխատություններում կանգ են առել Ստրաբոնի այս վկայության վրա և գտել, որ «այն ճիշտ է արտացոլում պատմական իրականությունը։ Ակիլիսենեն (Երզնկայի դաշտը)՝ հյուսիս-արևմուտքում և Սի(ս)պիրիտիսը (Շուպրիտիսը), Կալաքենն ու Ադիաբենը՝ հարավ-արևելքում այն շրջանակն էր, որի սահմաններում ուրարտական պետության կազմավորումից դեռ շատ առաջ տեղի էր ունեցել արմենական ցեղերի տեղաշարժը Փոքր Ասիայից դեպի Հայկական լեռնաշխարհը»[62]։

Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնի այս վկայությունը ևս գալիս է հաստատելու, որ հայկական ցեղերը դեռ շատ վաղուց ապրում էին Ադիաբենի, ավելի ճիշտ՝ երկու Զաբերի միջև ընկած տարածության վրա՝ Արբելայում և նրա շրջակայքում[63]։

3. ԱՐԲԵԼԱՆ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ և դրանցից հետո Արբելայում կազմավորված սելևկյանների գերիշխանության վերաբերյալ տեղեկությունները համեմատաբար հարուստ են, որովհետև բազմազգ ու խայտաբղետ այդ հսկա կայսրությունը ղեկավարելու հա-

60 Նույն տեղում։

61 Նույն տեղում, XI, XIV, 12, էջ 499։

62 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 245։

63 Հետաքրքրական է, որ Ստրաբոնը գրում է, թե Ադիաբենի բնակիչներին անվանում են նաև «սակկոպադներ»։ Բնագրի ռուսերեն թարգմանիչը ենթադրում է, որ այն աղավաղված բառ է։ Կարծում ենք, այն ոչ թե աղավաղված է, այլ կապված է «սակերի» հետ։ Հայտնի է, որ սակերը, այժմյան Միջին Ասիայի՝ Տաշքենդի մոտակայքից շարժվել են առաջ և նրանցից որոշ ցեղեր եկել, հաստատվել են Արբելայում. ու նրա շրջակայքում։ Գուցե հենց այս «սակերի» հետ էլ կարելի է կապել «սակկոպադ» անունը։ Տե՛ս Страбон, География, XVI, I, 19, стр. 691.

մար մակեդոնացի նվաճողները ստիպված էին ուսումնասիրել ոչ միայն հեռավոր երկրների տեղանքը, աշխարհագրական դիրքն ու հարստությունը, այլ նաև այդ տարածությունների վրա ապրող զանազան ժողովուրդների ու ցեղերի տնտեսական, քաղաքական ու սոցիալական վիճակը: Հույն ու լատին պատմիչները ուղղակի կամ անուղղակի փաստեր են հաղորդել, որոնք թեև իրենց էությամբ միակողմանիորեն են արտացոլել պատմական ճշմարտությունը, սակայն անգնահատելի ծառայություն են մատուցել ինչպես ամբողջ Արևելքի, այնպես էլ Արբելայի ու նրա շրջակայքի պատմության մութ մնացած բաղում հարցերի լուսաբանմանը: Այդպիսի շատ կարևոր տեղեկություններ կան, օրինակ, Դիոդորոս Սիկիլիացու, Արրիանոսի և այլ պատմիչների գործերում:

Դիոդորոս Սիկիլիացին[64] պատմում է, որ «Դարեհը Արբելայի մոտ ճակատամարտում պարտվելուց հետո, ուղղություն վերցրեց դեպի վիրին սատրապությունները, որպեսզի իր բանակը վերակազմավորվելու հնարավորություն ու ժամանակ ունենա: Սկզբում գնաց Մեդիա՝ էկբատան, այստեղ կանգ առավ ու սկսեց հավաքել ճակատամարտից փախածներին և դինեց նաև նրանց, ովքեր կորցրել էին իրենց զենքերը»[65]: Համարյա նույն տեղեկություններն են տալիս այս իրադարձության մասին Կորտիոսն[66] ու Արրիանոսը: Արրիանոսն, օրինակ, գրում է, որ ճակատամարտից հետո «Ալեքսանդրն իր հեծելազորին մինչև կես գիշեր հանգիստ տվեց և ապա շտապեց Արբելա այն հույսով, որ այստեղ կբռնի Դարեհին: Սակայն նա այնտեղից փախել էր»[67]: Ըստ երևույթին, Դարեհի փախուստը պատճառ դարձավ, որ Արբելա քաղաքը, որը ուժեղ ամրոց էր և ուներ ամուր պարիսպներ, ոչ մի դիմադրություն ցույց չտվեց հաղթական զորավարին և բացեց իր դարպասները նրա առաջ: Իրապես պարսիկների խուճապը այնքան մեծ է եղել, որ նրանք չեն կարողացել նույնիսկ արքայական գանձերն ու հարստությունները քաղաքից դուրս հանել, և մակեդոնացիների ձեռքն են ընկել Դարեհի և՛ գանձերը, և՛ ունեցվածքը, և՛ մարտակառքը[68]: Մակեդոնացիները քաղա-

---

[64] Դիոդորոս Սիկիլիացին ապրել է մ. թ. ա. 80—20 թ. մ. թ.: Օգտագործել է արժեքավոր աղբյուրներ, որոնց մեծ մասը չի հասել մեզ, ինչպես օրինակ՝ Եփորոսի, Ապոլոդորոսի, Ագաթարխիդեսի, Փիլիստրոսի և Տիմայոսի գործերը: Տե՛ս Diodorus of Sicily Liberary of history:

[65] Նույն տեղում, XVII, 63, 2--64, էջ 299:

[66] Cortius, 5, I, 44.

[67] Arrian, Anabasis of Alexander, Book I, III, 15, 3–6, p. 271.

[68] Diodorus of Sicily, Lib. of history, vol. VIII, Book XVII, 64, 1—8, p. 301.

քում Դարեհի գանձերից բացի գտան ոչ միայն բազում այլ հարստություններ, այլ նաև սննդի առատ պաշարներ, պահեստներ։ Դիոդորոս Սիկիլիացին այս առթիվ գրում է, որ Ալեքսանդրը Արբելայում գտավ «ուտելիքի առատ պահեստներ, մեծ քանակությամբ բարբարոսների[69] ղգեստներ, գանձ և երեք հազար տաղանդ արծաթ»[70]։ Այսպիսի մեծ հարստության առկայությունը Արբելայում խոսում է այն մասին, որ առևտուրն ու միջազգային քարավանային ապրանքների տեղափոխությունը և տաճարային տնտեսություններին, մանավանդ Իշտար աստվածուհու տաճարին, ամեն կողմից եկած բազմահազար ուխտավորների արած նվիրատվությունները ու գործարքները, նպաստել են ոչ միայն քաղաքի տնտեսության բարգավաճմանն ու ծաղկմանը, այլ նաև հնարավորություն են տվել հարստության կուտակման։ Համենայն դեպս, ինչպես Արբելան, այնպես էլ Միջագետքի շատ քաղաքներ և՛ տնտեսությամբ, և՛ մշակույթով բարձր մակարդակի վրա էին գտնվում, այնպես որ հույն և լատին պատմիչներից ոմանց, հատկապես մ. թ. I դ. հեղինակներից Պլինիոսի[71] այն հաղորդումը, թե Արևելքում քաղաքները ծաղկեցին ու բարգավաճեցին, մշակութային բարձր մակարդակի հասան միայն Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, հույների ծավալած գործունեության շնորհիվ, ճիշտ չէ։ Ինչպես փաստերն են ցույց տալիս և վերջին տարիներին պեղումներից երևան հանված արևելյան հին քաղաքների ավերակներից պարզվում է, մինչև Ալեքսանդրի նվաճումները ևս այստեղ քաղաքները ունեցել են տնտեսական և մշակութային բարձր մակարդակ. անշուշտ չպետք է ժխտել նաև, որ հույների և հունական մշակույթի հետ անմիջական շփումը, փոխադարձ մշակութային ազդեցությունները, տնտեսական ու առևտրական կապերը նոր վերելքի, ծաղկման հիմքը հանդիսացան։ Խոսքը այստեղ այն մասին է, որ արևելյան քաղաքներից շատերը, Արևմուտքից անկախ, ստրկատիրության շրջանում զարգացման բարձր աստիճան են ունեցել։ Պլինիոսը պատմում է. «Ամբողջ Միջագետքում, որը մի ժամանակ ասորեստանցիներին էր պատկանում, բնակչությունը ցրված էր գյուղերում, բացի Բաբելոնից և Նինվեից։ Մակեդոնացիները բնակիչներին հավաքեցին քաղաքներում, հողի արգասաբերության պատճառով։ Նշված քա-

[69] Հույները ոչ հույներին «բարբարոս» էին անվանում։

[70] Մեկ արծաթ տաղանդը Բաբելոնում հավասար էր 70 մնայի, այսինքն՝ 7000 դրամի։ Կորդիոսի վկայությամբ Ալեքսանդրը Արբելայում գտավ 4000 արծաթ տաղանդ։ Տե՛ս Cortius, 5, 1, 10.

[71] Պլինիոսը ծնվել է մ. թ. 23 թ., մահացել՝ 79 թ.։

ղաքներից բացի, այն (Միջագետքը) ունի Սելևկիա, Լաոդիկիա և Արտեմիդա քաղաքները, իսկ արաբական երկրամասում (կան) Ուրհա, Մանդանի, Անտիոք (քաղաքները), որը (վերջինը) հիմնել է Նիկանորը, երբ նա Միջագետքի կառավարիչ էր, և որը կոչվում է արաբական Անտիոք»[72]:

Հավատացած ենք, որ հույն և լատին հին պատմիչները նման հաղորդումներով փորձել են արդարացնել իրենց արևելյան նվաճումներն ու քաղաքական տիրապետությունը, իբր դրանց շնորհիվ Արևելքի բարբարոս ժողովուրդներին քաղաքակրթություն են բերել և իբր թե դրանք եղել են առաջադիմական ու մարդասիրական, մի վկայություն, որը, ինչպես ասել ենք, զուրկ է պատմական ճշմարտությունից, և Արբելայի փաստը առնվազն դրա հակառակն է ասում: Հայտնի է, որ ինչպես Ասորեստանյան, այնպես էլ Մարական ու Աքեմենյան տիրապետության ժամանակ Միջագետքում ու Միջագետքի հարևան բոլոր երկրներում կային բազում քաղաքներ, որոնք և՛ ներքին, և՛ միջազգային առևտրի քարավանային ճանապարհներին կարևոր դեր էին կատարում և իրենց արտադրանքները ուղարկում հեռավոր երկրներ: Արբելան այդպիսի քաղաքներից մեկն էր, որը, ինչպես հետո կտեսնենք, մետաքսի ու կերպասագործության խոշոր մի կենտրոն էր դարձել հետագայում և իր արտադրած ընտիր մետաքսներն ու կերպասները մեծ համբավ ունեին շուկաներում: Արբելան հայտնի էր նաև նրանով, որ գտնվում էր հին աշխարհին քաջածանոթ ռազմական ու միջազգային քարավանային «արքայական ճանապարհի» վրա, որը, ինչպես «Հեկատեոսն ու Հերոդոտոսն են նշում (Հերոդոտոս, V, 52), անցնում էր Մարաստանի հյուսիս-արևմուտքից և գնում դեպի Բադրա-Բակշա»[73]:

Ճանապարհի այս հատվածում կային 34 կայաններ և երկարությունը 137 փարսախ էր: Ինչպես պարզվում է, հետագայում էլ, արաբական տիրապետության ժամանակ, գործել է այն, և քարավանները, իսկ պատերազմական գործողությունների ժամանակ՝ բանակները, Տիգրիսից անցել են Սապիա, Գավգամելա, ապա Արբելա և շարունակել դեպի Ալթուն Քյոպրու, Քերքուք, Թաղուկ, Տուզ, Խուրմատու, Քուփրի, Բարադան Թեփե, Ջալուլա և Մանդալի: Մինչև Նինվեի կործանումը (612 թ.) «արքայական» այս ճանապարհը անցնում էր Նինվեի միջով, սա-

---

[72] *Pliny*, Natural history, eng. trans. H. Rackham, London, 1961, Book VI, XXX, p. 427.

[73] *E. Herzfeld*, The Persian Empire, § 188, p. 228.

կայն նրա կործանումից հետո Նինվեին փոխարինեց Արբելան[74]։ Հասկանալի է, որ Ալեքսանդր Մակեդոնացին իր բանակները նախընտրեց շարժել այս ճանապարհով և նա Տիգրիսն անցնելով՝ Սապիայից գնաց Գավգամելա՝ պարսկական բանակին հանդիպելու։ Ծանոթանալով Ստրաբոնի հաղորդած տեղեկություններին, տեսնում ենք, որ դրանք հիմնավորված են, ավելի ճիշտ պատկերում են այս ճանապարհով կատարած առաջխաղացումը[75]։

Այսպիսով, Արբելայի պարտությունից հետո Դարեհի դիմադրության փորձերը արդյունք չտվեցին. Աքեմենյան կայսրությունը փուլ եկավ և դուրս մղվեց քաղաքական թատերաբեմից, որովհետև մ. թ. ա. IV դ. կեսերին նրա քաղաքական կապերը և ռազմական ուժերը ավելի էին թուլացել և փոխարենը զորեղացել էին կենտրոնախույս ձգտումները։ Փոքր Ասիայի առավել զարգացած հունական քաղաքները, Հարուստ Ասորիքը, հնադարյան Եգիպտոսն ու Բաբելոնը Աքեմենյան տերությանը խոչընդոտ էին համարում իրենց զարգացման ճանապարհին։ Նա նմանվում էր մի խարխլված տան, որը փուլ կգար ամենաթույլ երկրաշարժի դեպքում[76]։

Աքեմենյան կայսրությունը մի տեսակ շարունակությունն էր Ասորեստանյան, Բաբելական, Մարական տիրապետության, միայն այն տարբերությամբ, որ սատրապիրական կարգերի հակասությունները ավելի էին սրվել Աքեմենյանների օրոք, որովհետև բարձր խավի ներկայացուցիչները կարողացել էին իրենց իրավունքները, հարստությունները ու կալվածքները ավելի մեծացնել ու այդ բոլորը կարգավորող օրենքները և պետական կառուցվածքը ավելի կատարելագործել մանավանդ Կյուրոսի և Դարեհ Ա-ի տիրապետության տարիներին։ Ներքին այս հակասությունները, ինչպես ասացինք, և արտաքին ճնշումները խարխլեցին Աքեմենյան կայսրության հիմքերը և նրա կործանման պատճառ դարձան[77]։

Համարյա քաղաքական նույն սկզբունքներով և օրենսդրական նույն միջոցներով սկսեցին գործել Ալեքսանդր Մակեդոնացին և նրանից հետո սելևկյանները։ Նրանք ևս հիմնականում շարունակեցին պահպանել Աքեմենյանների վարչաձևը, այն տարբերությամբ միայն, որ այս անգամ պետական բարձրաստիճան պաշտոնյաներ էին նշանակվում այնպիսիք,

---

[74] *E. Herzfeld*, The Persian Empire, § 188, p. 228.

[75] Նույն տեղում։

[76] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 495։

[77] *A. Christensen*, L'Iran sous les Sassanides, pp. 15—16.

որոնք հավատարմությամբ ծառայում էին սելևկյան պետությանը: Եթե Աքեմենյանների օրոք նշանակված սատրապները տվյալ մարզի և՛ վարչական, և՛ տնտեսական, և՛ զինվորական իշխանությունները իրենց ձեռքում էին կենտրոնացնում և պատասխանատու էին միայն կենտրոնական իշխանության արքայից արքային, ապա Ալեքսանդրի օրոք այդ պաշտոնների մեջ բաժանում է մտցվում՝ սատրապներին վստահում են տվյալ մարզի զորքի հրամանատարությունը, իսկ վարչական և տնտեսական գործերը՝ այլ անձնավորությունների[78]: Այսպես, Ալեքսանդրը Բաբելոնի սատրապ էր նշանակել Մազայուսին, իսկ հարկահավաքի պաշտոնում՝ Ակլեպիոդորոսին[79]: Ալեքսանդրը նման բաժանում մըտցըրեց, որովհետև այն, մանավանդ ոչ հույն տարրերի համար, կդժվարացներ ապստամբության փորձերը: Ստեղծվել էր հսկա մի կայսրություն, որը, սակայն, մ. թ. ա. 323 թ., Ալեքսանդրի մահից հետո, նրա զորավարների միջև բաժան-բաժան եղավ: Նվաճված արևելյան երկրների մեծ մասը, որոշ ռազմական գործողություններից հետո, վերջնականապես անցավ Ալեքսանդրի զորավարներից Սելևկոսին, Եգիպտոսը՝ Պտղոմեոսին, իսկ Մակեդոնիան Հունաստանի հետ միասին՝ Անտիգոնոսին: Սակայն բաժանումը այնքան էլ խաղաղ ձևով տեղի չունեցավ. յուրաքանչյուրը սկզբում փորձեց իր գերադասությունը պարտադրել մյուսին և դրա համար էլ պատերազմեցին միմյանց դեմ: Ապպիանոսը գրում է, որ Անտիգոնոսը փորձել է Սելևկոսին իրեն ենթարկել, և երբ վերջինս դիմադրել է այդ փորձերին, նրա դեմ զորք է ուղարկել, և Սելևկոսը ստիպված փախել է Եգիպտոս՝ Պտղոմեոսի մոտ: Նրա փախուստից հետո Անտիգոնոսը, ինչպես հաղորդում է պատմիչը, «Միջագետքի կառավարիչ Բլիտորին հեռացնել է տալիս պաշտոնից, որովհետև վերջինս թույլ էր տվել, որ Սելևկոսը փախչի: Դրանից հետո Անտիգոնոսը իր վրա է վերցնում Բաբելոնի, Միջագետքի և մյուս երկրների՝ Մեդիայից մինչև Հելլեսպոնտոսի իշխանությունը, որովհետև այն ժամանակ մահացել էր [Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից] Անտիպատրոսը»[80]:

---

[78] *Arrian*. Anabasis of Alexander, III, 15, 6—16, 3, p. 273.

[79] Դիոդոր Սիկիլիացին ոչինչ չի գրում Մազայուսի մասին. ըստ նրա, Ալեքսանդրը Ապոլոդորոսին և Փելլային Բաբելոնի և մյուս սատրապությունների, մինչև Կիլիկիա, զինվորական կառավարիչ նշանակեց, տալով նրանց 1000 տաղանդ արծաթ, այն ցուցմունքով, որ ինչքան հնարավոր է զինվորներ հավաքագրեն: Տե՛ս *Diodorus of Sicily*, vol. VIII, Book XVII, 64. 1—6, p. 30.

[80] *Appian's* Roman History, London, 1964, vol. II, The Syrian Wars, chpt. IX, p. 205.

Պատմիչի[81] այս վկայությունը մեզ համար առանձին կարևորություն է ստանում, որովհետև այստեղ վկայություն կա այն մասին, որ Միջագետքը հիշատակվում է որպես առանձին սատրապություն[82]: Անկասկած, դեռ Աքեմենյանների տիրապետության ժամանակներից Միջագետքը Արբելայի հետ միասին առանձին սատրապություն է եղել, Բաբելոնից անկախ, և այդպես մնացել է Ալեքսանդր Մակեդոնացու և նրան հաջորդող Սելևկյանների ժամանակ: Այս ասածը հաստատող շատ կարևոր փաստ է պահպանվել Դիոդորոս Սիկիլիացու պատմական աշխատության մեջ. նա գրում է, որ մ. թ. ա. 321 թ., երբ Անտիպատրոսը[83] նորից բաժանեց սատրապությունները, «Պտղոմեոսին թողեց այն, ինչ որ նրա ձեռքին [գտնվում] էր, որովհետև անկարելի էր նրան տեղափոխել, և թվում էր, որ նա Եգիպտոսը պահում էր որպես պատերազմական ավար իր կատարած քաջագործության դիմաց: Նա Լաոմեդոնին, Կիլիկիան՝ Փիլոքսենոսին: Վերին սատրապություններից՝ Միջագետքն ու Արբելիտիսը [երկիր վերին Տիգրիսի հովտում, Արբելայի շրջակայքում] տվեցին Ամփիմախոսին, Բաբելոնիան՝ Սելևկոսին»[84]:

Ինչպես տեսնում ենք, Անտիպատրոսը ոչ թե նոր բաժանումներ է կատարում կամ նոր սատրապություններ ստեղծում, այլ գոյություն ունեցող սատրապությունների վրա նոր սատրապներ է նշանակում: Այստեղ հետաքրքրական է, որ Արբելիտիսը և կամ, ինչպես այդ երկիրը հետագայում կոչվել է, Ադիաբենեն մտնում էր Միջագետքի սատրապության մեջ և նրա մասն էր կազմում: Անշուշտ, Անտիպատրոսի այս նշանակումները եղել են մինչև նրա մահը՝ մ. թ. ա. 319 թ., երբ Սելևկոսը Անտիգոնոսից հալածվելով փախել էր Եգիպտոս: Դիոդորոս Սիկիլիացու այս վկայությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ Ադիաբենեն Մակեդոնացու արշավանքներից առաջ կոչվում էր Արբելիտիս, և,

---

81 Ապպիանոսը ապրել է մ. թ. II դ., ծնվել է մոտավորապես մ. թ. 95 և մահացել է 165 թ.:

82 *Appian's* Roman History, vol. II, chpt. IX, p. 205.

83 Անտիպատրոսը ծնվել է մ. թ. ա. 400 և մահացել՝ 319 թ.: Ալեքսանդրի մահից հետո նրան բաժին ընկավ Մակեդոնիան և նրա հարևան երկրները: Հետագայում նրան տեսնում ենք գլխավոր հրամանատարի դերում: Հայտնի է նաև, որ Անտիպատրոսը Ալեքսանդրի ասիական արշավանքներից առաջ փոխանորդ էր նշանակվել: Այս մասին մանրամասն տե՛ս. *Diodorus of Sicily*, vol. IX, Book XVIII, 3, 1—3, p. 17 and vol. VIII, Book XVII, 64, 6—65, 2, p. 303.

84 *Diodorus of Sicily*, vol. VIII, Book XVII, 53, 1—3, p. 271.

անկասկած, նրանք Արբելիտիս[85] ասելով հասկացել են այն հողային տարածությունը, որն ընկած էր երկու Զաբերի միջև։ Պլինիոսի տեղեկություններին ծանոթանալիս, տեսնում ենք, որ նրա մոտ էլ «Արբելիտիսը» ընկալվել է որպես երկիր և ոչ թե որպես քաղաք[86]։ Այդպես է նաև Պլուտարքոսի հաղորդած տեղեկություններում։ Ըստ նրա նկարագրության, մեր թվականությունից առաջ պարթևների թագավոր Հրահատ Գ-ն հարձակվում է հայկական Կորդուքի վրա, կոտորում բնակիչներին ու գրավում այն։ Այդ ժամանակ հռոմեացի զորավար Պոմպեոսը, որը գտնվում էր Փոքր Հայքում, լսելով այդ մասին և հասկանալով, որ պարթևների այս հարձակումները այլ նպատակներ ունեն, իր զորավարներից Ափրանիոսին զորքով ուղարկում է Հրահատի դեմ, որպեսզի սա իրերի նախկին դրությունը վերականգնի։ Ափրանիոսը իր զորքով պարթևներին վտարելով, հետապնդում է մինչև Արբելիտիս[87]։ Խոսքը այստեղ երկրի մասին է, որովհետև հայտնի է, որ Պոմպեոսից Տիգրան Բ-ի կրած պարտությունից հետո հայկական պետության սահմանները հասնում էին մինչև Մեծ Զաբ, այսինքն՝ պարթևների տիրապետության տակ էին մնացել մինչև Կորդուք հասնող տարածությունները, դրա համար էլ, երբ պարթևները անցնում են սահմանը, հռոմեական զորքերը հակահարված են տալիս նրանց և ետ մղում մինչև իրենց սահմանը՝ Արբելիտիս։ Այսպես ուրեմն, Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո «Արբելիտիս» երկիրը Միջագետքի հետ միասին կազմում էր մի սատրապություն, որի սատրապն էր Ամփիմակոսը։

Մինչ այս հարցերի վրա կանգ առնելը, հետաքրքրական կլինի մի ակնարկ նետել այն իրադարձությունների վրա, որոնք տեղի են ունեցել Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո։

Դիոդորոս Սիկիլիացին ձեռքի տակ ունենալով Կարդիացի Հիերոնիմոսի[88] պատմական աշխատությունը, մանրամասն նկարագրել է այն

---

[85] Ուշագրավ է, որ պատմիչը քաղաքի մասին գրելիս այն անվանում է «Արբելա», իսկ երկիրը «Արբելիտիս»։ Տե՛ս նույնը vol. VIII, Book XVIII, 39, 2—6, p. 121.

[86] *Pliny*, Natural history, Book VI, XVI, p. 367.

[87] *Плутарх*, Помпей, т. II, XXXVI, М., 1963, стр. 359.

[88] Եվմենեսը Ալեքսանդրի զորավարներից էր, որին բաժին ընկան Պափլագոնիան, Կապադովկիան և դրանց հարևան երկրները։ Իսկ Կարդիացի Հիերոնիմոսը Եվմենեսի բարեկամն ու հայրենակիցն էր և, փաստորեն, Եվմենեսի մահից հետո ընկերացել էր նաև Անտիգոնոս, Դեմետրիոս և Գոնատաս զորավարներին։ Նա ոչ միայն ժամանակակից էր իր նկարագրած դեպքերին, այլև անմիջական մասնակիցն էր և՛ Եվմենեսի, և՛ մյուս զորավարների ռազմական գործողություններին, այնպես որ այս տեսակետից Դիոդորոսի այս աղբյուրը բացառիկ արժեք է ներկայացնում։

բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ալեքսանդրի նվաճած հսկա տարածությունները բաժանելիս: Այժմ տեսնենք, թե ինչ է գրում պատմիչը: Ալեքսանդրի մահից հետո, նրա հիվանդոտ որդին դառնում է թագավոր, սակայն իրականում իշխանությունը անցնում է Պերդիկասի ձեռքը, որին մահից առաջ Ալեքսանդրը հանձնել էր մատանին: Սա, անշուշտ, գործում էր որպես խնամակալ[89]: Պերդիկասի օրոք տեղի է ունենում նվաճված երկրների առաջին բաժանումը: Դիոդորոսը մանրամասն տվել է ցուցակը այն զորավարների, որոնք բաժին չէին ստացել: Ճիշտ է, շատերն էին բաժին ստացել, սակայն հիմնականում իշխանությունը գտնվում էր Անտիպատրոսի, Կրատերիոսի և Պերդիկասի ձեռքում: Շուտով առաջին երկուսը Պերդիկասի դեմ դուրս եկան, և նրանց միջև ծագած երկարատև պատերազմական գործողությունները ավարտվեցին, երբ Պտղոմեոսին հաջողվեց սպանել Պերդիկասին[90], որը փաստորեն երեք տարի մնաց իշխանության գլուխ: Շուտով նույն ճակատագրին է արժանանում Կրատերիոսը, և, փաստորեն, հիմնական դեմք է դառնում Անտիպատրոսը:

Անտիպատրոսը, իշխանությունն իր ձեռքը վերցնելով, իրեն համակիր նոր սատրապներ նշանակեց և Միջագետքի ու Արբելայի սատրապությունը տվեց Ամփիմաքոսին:

Ո՞վ էր Ամփիմաքոսը, աղբյուրները ոչինչ չեն ասում, բայց պարզ է, որ նա Անտիպատրոսի հավատարիմ զինակիցներից էր: Հետագայում, երբ Անտիպատրոսի մահից հետո իշխանությունն անցնում է Անտիգոնոսին, սա պատերազմում է Սելևկոսի դեմ: Այդ պատերազմական գործողություններին Անտիգոնոսի հետ միասին մասնակցում էր նաև Միջագետքի ու Արբելայի սատրապ Ամփիմաքոսը իր 600 ձիավորներով[91]: Ուրեմն, Ամփիմաքոսը Անտիպատրոսի մահից հետո, Անտիգոնոսի իշխանության օրոք, շարունակում էր մնալ Միջագետքի ու Արբելայի սատրապ:

---

[89] *Diodorus of Sicily*, vol. IX, Book XVIII, 3, 1—3, p. 17, տե՛ս նաև Նախաբան, էջ 11:

[90] Արրիանոսը ասում է, որ իշխանությունը հիմնականում Կրատերիոսի, Միլիզերի և Պերդիկասի միջև էր բաժանվել: Սակայն Դիոդորոսը հայտնում է, որ Միլիզերը շատ շուտ էր իշխանությունից զրկվել, որովհետև նա դավաճանել էր Պերդիկասին և վերջինս նրան սպանել էր տվել: Տե՛ս *Diodorus of Sicily*, vol. IX, Book XVIII, 36, 4—37, p. 115.

[91] Նույն տեղում, vol. IX, Book XIX, 27, 5, p. 303.

Ի վերջո, ինչպես ասել ենք, Անտիգոնոսին հաջողվում է փախցնել Սելևկոսին և նրա հողերը միացնել իր տիրույթին[92]: Նա իր գերիշխանության տակ էր վերցրել Բաբելոնի, Միջագետքի և Մարաստանից մինչև Հելլեսպոնտոս բոլոր երկրները, մանավանդ որ երեք տարի անց մահացել էր նաև Անտիպատրոսը[93]: Սելևկոսը 316 թ. փախել էր Եգիպտոս՝ Պտղոմեոսի մոտ: Վերջինս նրան բարեկամաբար ընդունել էր և զորք տվել, որ գնա և վերստին գրավի իշխանությունը:

Սելևկոսը մոտենալով իր նախկին տիրույթներին[94], տեղի ժողովուրդների կողմից ջերմ ընդունելություն է գտնում, հավանաբար նրանք, զայրացած Անտիգոնոսի ոտնձգություններից, Սելևկոսին նայում էին որպես ազատարարի, քանի որ վերջինս իր իշխանության տարիներին, ինչպես պատմիչն է վկայում, «ամեն ինչի մեջ վնհանձն էր պահել իրեն»[95]: Այսպես, Սելևկոսը առաջ շարժվելով մտնում է Միջագետք և խառանում հաստատված մակեդոնացի զինվորներից շատերին համոզում է, մյուսներին էլ ստիպում է միանալ իրեն: Այնուհետև ճանապարհը շարունակում է դեպի Բաբելոն: Ամբողջ ճանապարհին բնակիչները ուրախ բացականչություններով ողջունում էին նրա գալուստը: Մ. թ. ա. 312 թ., ի վերջո, թշնամուն հաղթելով, մտնում է Բաբելոն[96]: Նորից տեր դառնալով իր նախկին երկրներին, ինչպես Ապպիանոսն է վկայում, իր տերությունը բաժանեց 72 սատրապությունների[97]: Այսպիսի մանր սատրապությունների ստեղծումը վկայում էր այն մասին, որ Սելևկոսը որոշել էր նոր վարչակարգ սահմանել և արևելյան այս երկրները վարչական ու քաղաքական մանր միավորների, իշխանությունների վերածելով, տեղական ուժերը չլատել, նրանց զրկել նախ ապստամբական մեծ գործողություններ ծավալելու հնարավորությունից, ապա այդ փոքր իշխանությունները իրար հակադրելով՝ հեշտացնել նրանց կառավարումը:

---

[92] *Diodorus of Sicily*, vol. X, Book XIX, 90, p. 77.

[93] Սելևկոսը փախել էր Եգիպտոս մ. թ. ա. 316 թ., իսկ Անտիպատրոսը, ինչպես գրել ենք, մահացել է 319 թ.:

[94] Ապպիանոսը գրում է, որ Սելևկոսը Պտղոմեոսից օգնական ուժ էր ստացել 1000 հետևակ և 300 ձիավոր: Իսկ Դիոդորոսը վկայում է, որ նա ստացել է 800 հետևակ և 200 ձիավոր:

[95] *Diodorus of Sicily*, vol. X, Book XIX, 91, p. 79.

[96] Սելևկոսի հաղթական այս մուտքից էլ սկսվում է մեզ ծանոթ հունական կամ Ալեքսանդրյան թվականը: Այն սկսում է 312 թ.:

[97] *Appian's* Roman history, chpt. X, p. 217.

Միջագետքի ու Արբելիտիսի սատրապությունն էլ ընկավ Սելևկոսի դերիշխանության տակ, և Ամփիմակոսը կամ սպանվեց պատերազմների ժամանակ, կամ փախավ, որովհետև պատմիչները նրա մասին ոչինչ չեն ասում: Հասկանալի է, որ Սելևկոսը նոր սատրապ էր նշանակել, և եթե նկատի ունենանք, որ նա բաժանել էր նախկին մեծ սատրապությունները, ապա հավատացած ենք, որ Սելևկոսի այս բաժանումների հետևանքով, Արբելիտիսի իշխանությունը անջատվել էր Միջագետքի սատրապությունից և դարձել առանձին սատրապություն: Արբելիտիսի այս սատրապությունն էլ հետագայում Ադիաբենեի իշխանության կամ թագավորության ստեղծման հիմք հանդիսացավ:

Սելևկոսը մոտ 42 տարի իշխելով, իր կենդանության օրոք Անտիոքոս որդուն հաջորդ նշանակելուց հետո, 73 տարեկան հասակում, մ. թ. ա. 280 թ. մահացավ[98]:

Թե ի՞նչ վիճակում էր գտնվում Արբելիտիսի սատրապությունը Սելևկոսի տիրապետության տարիներին, դժվար է ասել, որովհետև աղբյուրները այդ մասին ոչինչ չեն հաղորդում, և այդ լռության հիմնական պատճառներից մեկն էլ պետք է համարել այն, որ Միջագետքը այլևս հետու էր գտնվում ռազմական գործողություններից, քանի որ Սելևկյանների մայրաքաղաքը դարձել էր Ասորիքի Անտիոք քաղաքը: Դա նշանակում էր, որ Միջագետքը Արբելայի հետ միասին դարձել էր և՛ վարչականապես, և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես երկրորդական նշանակություն ունեցող երկրամաս:

Այս դրությունը, սակայն, երկար չի շարունակվել, որովհետև մ. թ. ա. 250 թ. արևելքից ներխուժած պարների ցեղը հաստատվելով Կասպից ծովից հարավ-արևելք ընկած տարածության վրա, իրենց առաջնորդ Արշակին մ. թ. ա. 247 թ. թագավոր են հռչակում[99]: Պարթևների Արշակ թագավորի հիմնադրած այս թագավորությունը հետզհետե հզորանում է և արդեն Միհրդատ Մեծի (171—138 թթ.) օրոք դառնում աշխարհակալ խոշոր մի տերություն: Անշուշտ, այս ժամանակաշրջանում քաղաքական խոշոր փոփոխություններ էին տեղի ունեցել: Մ. թ. ա. 191 թ. առաջին անգամ հռոմեական բանակները Եվրոպայից անցել էին Ասիա և Սելևկյանների Անտիոքոս Գ թագավորի դեմ 190 թ. Մագնեսիայում մղված վճռական ճակատամարտում հաղթելուց հետո, փաստորեն թուլացրել էին մինչ այդ ներքին ու արտաքին «հակասություններից խարխլված այդ տերությունը: Մ. թ. ա. 188 թ. Ապամեայում կնքված

98 Նույն տեղում:

99 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 551:

պայմանագրի համաձայն Սելևկյանները զրկվեցին գրեթե ողջ Փոքր Ասիայից, պարտավորվեցին վճարել ռազմատուգանք և բազմաթիվ այլ զիջումներ արեցին։ Անտիոքոսը դրանից հետո միայն մեկ տարի ապրեց։

Մագնեսիայի ճակատամարտը հայտանշեց մի նոր երևույթ. «Առաջավոր Ասիայի պատմաբեմ դուրս եկավ մի նոր, հզորագույն ուժ՝ Հռոմի հանրապետությունը»[99ա]։

Սելևկյանների թուլացումից և հռոմեական դիվանագետների ծավալած նպաստավոր գործունեությունից օգտվելով, Սելևկյանների գերիշխանության տակ եղած պետություններն ու ժողովուրդները, ապրստամբելով վերականգնում էին իրենց անկախությունը։ Այս շրջանում վերջնականապես Սելևկյանների տերությունից անջատվել էին նաև հայկական երկրները և միանալով կազմել հայկական հզոր պետություն, որը մ. թ. ա. I դ., ինչպես հետո կտեսնենք, իր հզորությունը ամրապնդելու համար ստիպված էր պատերազմել մի կողմից պարթևների և մյուս կողմից՝ Հռոմի դեմ։ Սկզբում պարթևները, հատկապես Միհրդատ Բ-ի (123—87 թթ.) թագավորության տարիներին, մտածում են իրենց ենթակա արևելյան փոքր ժողովուրդներին անկախություն տալով, մանր թագավորություններ ստեղծելով, ոչ միայն հեշտացնել նրանց կառավարումը, այլ նաև նրանց համակրանքը շահելով, միասնական մի ճակատ բացել Հռոմի դեմ։ Այդ նպատակով էլ նրա օրոք, ինչպես ցույց է տվել սովետական պատմաբան Նինա Պիգուլևսկայան, երևան են գալիս Օսրոյենի, Կորդուքի, Ադիաբենեի, Հադրայի և այլ փոքր ժողովուրդների թագավորությունները[100], որոնք պարթևների հովանավորության ներքո դառնում են արբանյակ պետություններ։ Համենայն դեպս, Միհրդատ Բ-ի օրոք պարթևները Արևելքում արդեն հզոր, աշխարհակալ մի տերություն էին և իրենց սահմանները հասցրել էին մինչև Եփրատ գետը[101]։

Ճիշտ է, աղբյուրներում տեղեկություններ կան Օսրոյենի, Կորդուքի և այլ փոքր թագավորությունների հիմնադրման վերաբերյալ, սակայն Ադիաբենեի առաջին թագավորի և նրան հաջորդած թագավորների մասին աղբյուրներում ոչ մի տեղեկություն չկա։ Միակ փաստը այն է, որ, ինչպես կտեսնենք, Տիգրան Բ-ի թագավորության տարիներին Ադիաբենի թագավորը հայոց արքայի ամենահավատարիմ զինակիցներից էր։

[99ա] Նույն տեղում, էջ 524։

[100] *Н. Пигулевская*, Города Ирана, стр. 55.

[101] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 552։

Իսկ թե ով էր մինչ այդ Ադիաբենի գահի վրա բազմած, մենք ոչինչ չգիտենք։

Այսպես, մ. թ. ա. II դ. վերջին 3-րդ տասնամյակում, հավանաբար 123 թ., երկու Զաբերի միջև ընկած տարածության վրա ստեղծվում է Ադիաբենի կամ Ադիաբենեի թագավորությունը։

4. ԱԴԻԱԲԵՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(II—I դդ. մ. թ. ա.)

Մեր թվականությունից առաջ 141 թ. արդեն պարթևները տարածվել և փորձում էին նվաճել նաև ամբողջ Միջագետքն ու Բաբելոնը։ Եթե մինչ այդ իրանական այս ժողովրդի պատմությունը ինչ-որ չափով անորոշության մեջ էր, ապա այս հաջողություններից հետո նրանք ոչ միայն քաղաքականապես, տնտեսապես և մշակույթով կապվել են Արևելքի հետ, այլև նման հարաբերություններ ստեղծել նաև Արևմուտքի ժողովուրդների հետ, ճանաչվել և իրենց մասին խոսելու բազում հնարավորություններ ընձեռել պատմիչներին։

Ինչպես ասել ենք սույն աշխատության նախորդ էջերում, պարթևների հաջողությունները իրենց գագաթնակետին են հասնում Միհրդատ Բ-ի թագավորության տարիներին, երբ վերջինս վերջնականապես 121 թ. նվաճեց Բաբելոնը Մեսենի (Խարակենի) արաբ իշխան Հիսպաոսինից, ապա հարձակվեց Հայաստանի վրա, իսկ 113 թ. արդեն ամբողջությամբ նվաճեց նաև Միջագետքը։ Միհրդատ Բ-ն էր, որ այս հաջողություններից հետո սկսեց օգտագործել «արքայից արքա» տիտղոսը[102] և իրեն համարեց Աքեմենյանների հետնորդ։ Անշուշտ, այդ բոլորը, ինչպես նրա, այնպես էլ նրա հետնորդների ժամանակ, արվում էր քաղաքական նպատակներով ոչ միայն իրենց նվաճումները արդարացնելու, այլ նաև իրենց հեղինակությունը բարձրացնելու համար։

Պարթևները քաղաքական նման նվաճումներով ձգտում էին իրենց ձեռքում պահել ոչ միայն արևելյան բազում երկրների միջև ընկած, այլ նաև միջազգային առևտրական շատ կարևոր քարավանային ճանապարհները, որոնք խոշոր եկամուտներ էին բերում արքունի գանձարանին։ Այդ ճանապարհներից կարևոր նշանակություն ուներ Հեռավոր Արևելքից դեպի արևմտյան երկրները տանող միջազգային «մետաքսի»

[102] *M. A. R. Colledge*, The parthians, p. 32.

ճանապարհը, որով հեռավոր այս երկրներից արևելյան թանկարժեք իրեր, համեմունքներ և մանավանդ կերպաս ու մետաքս էին տեղափոխում արևմտյան զանազան երկրներում վաճառելու։ «Մետաքսի» ճանապարհներից մեկը անցնում էր Արբելայի միջով. այսպես, Անտիոքից եկող քարավանները խառանի, Մծբինի վրայով մտնում էին Արբելա և ապա Համադանի, Մերվի վրայով գնում Չինաստան՝ անհրաժեշտ ապրանքները բերելու[103]։ Բացի այդ, Արբելան մետաքսի և կերպասեղենի արտադրության խոշոր քաղաքներից մեկն էր, և, ինչպես հետո կտեսնենք, շատ ավելի ուշ՝ քրիստոնեության ժամանակ, Արբելայի մետաքսը, շուկաներում վայելած համբավի շնորհիվ, մեծ պահանջարկ ուներ։ Այսպիսով, նոր կազմավորված Ադիաբենի թագավորությունը դարձել էր կարևոր մի օղակ միջազգային առևտրական փոխհարաբերությունների ոլորտում, և դա էլ պատճառ էր դառնալու, որ ամեն մի ուժեղ պետություն փորձեր տիրել այդ երկրին, և ընդհանրապես շատ շուտ տարբեր պետություններ պայքարի մեջ էին մտնելու միջազգային առևտրական ճանապարհների վրա իրենց տիրապետությունը հաստատելու համար, որովհետև այդ ճանապարհներից ստացված տնտեսական եկամուտը նախանձելի չափերի էր հասնում։

Միջազգային առևտրական այդ ճանապարհները պարթևներից ետ վերցնելու առաջին փորձը կատարել է հայոց Տիգրան Բ թագավորը։ Տիգրան Բ-ն պարթևների Միհրդատ Բ թագավորի մոտ պատանդ էր պահվել և որպես հավատարիմ զինակից «Յոթանասուն հովիտներ» կոչված տեղանքը[104] փրկագին տալով, վերադարձել էր հայրենիք և բռնվել հայկական գահին, խոստանալով, անշուշտ, գործակցել պարթևների հետ։ Այս կապակցությամբ Ստրաբոնը գրում է. «Տիգրանը երկուսի բաժանված Հայաստանը միացրեց և դարձավ ամբողջ երկրի տերը։ Տիգրանը, սակայն, փոփոխական բախտ ունեցավ։ Սկզբում նա պատանդ էր պարթևների մոտ, ապա նրանցից թույլտվություն ստացավ հայրենիք վերադառնալու, բայց պարթևները նրանից փրկագին վերցրին Հայաստանի «Յոթանասուն հովիտները» [տեղանքը]»։ Հետագայում հղորացնելով իր իշխանությունը, Տիգրանը ոչ միայն ետ վերցրեց այս գավառները, այլև նույնիսկ ավերեց նրանց սեփական երկիրը՝ Նինվեի և Արբելայի մոտակա մարզերը։ Իսկապես էլ, Տիգրանը քաղաքական մեծ հաջողությունների հասնելով նվաճել էր մինչև Փյունիկիա և Հրեաստան ընկած տարածությունը, իրեն հպատակեցնելով այդ տարածության վրա

---

103 *M. A. R. Colledge*, The parthians, p. 89.

104 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 556։

ապրող ժողովուրդներին ու ցեղերին։ Այսպիսի հսկայական տերություն ստեղծելուց հետո, բնականաբար, նա մտածելու էր նոր մայրաքաղաք կառուցելու մասին, որը լինելու էր ոչ միայն վարչական ամուր մի կենտրոն՝ տարբեր այս ժողովուրդներին ղեկավարելու համար, այլև էական օղակ միջազգային առևտրական ճանապարհները օղակավորելու համար, որովհետև Հայոց արքա Տիգրան Բ-ին հաջողվել էր պարթևներից վերցնել այդ քարավանային ճանապարհները և դրանք պահել իր հսկողության ներքո։ Այդ նպատակով էլ կառուցվում է Տիգրանակերտը, և նա քաղաքը շենացնելու, ծաղկեցնելու համար, ինչպես Ստրաբոնն է գրում[105], հունական 12 տարբեր քաղաքներից բնակիչներին տեղափոխում է իր նոր մայրաքաղաքը[106]։ Թե որ քաղաքների բնակիչներն էին դրանք, պատմիչը ոչինչ չի ասում։ Սակայն մի այլ հեղինակի՝ Պլուտարքոսի[107] մոտ հիշատակվում են դրանք։ Պլուտարքոսը Հռոմայեցի զորավար Լուկուլլոսի՝ Տիգրանակերտի պաշարումը նկարագրելիս, ասում է, որ «Տիգրանակերտում ապրում էին Կիլիկիայից բռնի գաղթեցրած հույներ, իսկ բարբարոսներից՝ ադիաբենցիներ, ասորիներ, գորդիենցիներ, կապադովկիացիներ, որոնց ևս նույն ճակատագիրն էր վիճակվել, որովհետև Տիգրանն ավերել էր նրանց հայրենի քաղաքները և նրանց քշել և ստիպել տեղավորվել այստեղ»[108]։

Միշտ էլ բռնակալները պատմության մեջ նման բռնի գաղթերն ու տեղափոխությունները օգտագործել են իրենց նոր կառուցած քաղաքների կամ մայրաքաղաքների շինարարությանը արագ և լայն ընթացք տալու համար։ Տիգրանը ևս դիմել է նման միջոցների, սակայն հույն պատմիչները, հատկանալի պատճառներով, այնպես են ներկայացրել, որ միայն հայոց արքան է ունեցել բռնակալի դաժան գծեր, մինչ հռոմայեցի զորավարներն ու նրանց բանակները Արևելքի ժողովուրդներին իբր բերել են «ազատության երջանիկ դափնիներ»։ Իրականում կողմերից երկուսն էլ նույն ձգտումներն են ունեցել, քաղաքական նվաճումներով ուզեցել են իրենց ձեռքը վերցնել միջազգային առևտրական ճանապարհները։ Տիգրանը նախապես տիրացել էր այդ ճանապարհներին, իսկ Հռոմը չէր կարողանում հանդուրժել այդ, ուստի միջոցներ էր որոնում

---

105 *Страбон*, География, книга XI, XIV, 15, стр. 500, 501.

106 Նույն տեղում, էջ 501։

107 Նրա ինչպես ծնունդը, այնպես էլ մահը հայտնի չէ. ծնվել է մեր թվականության 46—51 թթ. միջև և մահացել, հավանաբար, Տերտոնում 120—130 թթ. միջև։

108 *Плутарх*, Сравнительные жизнеописания, том II, М., 1963; Лукулл, XXV, стр. 194.

իր նպատակին հասնելու համար։ Համեմատաբար դեպքում, Տիգրանն իր հեռատես քաղաքականությամբ առաջավոր Ասիայի երկրներին տիրանալով, տեղի վերնախավի, առևտրականների ու արհեստավորների համակրանքը շահելու և տնտեսական խոշոր եկամուտներ ապահովելու համար, առաջին հերթին զբաղվում էր միջազգային առևտրական ճանապարհների անվտանգությունն ապահովելով[109]։ Իսկապես, տնտեսական այս և այլ միջոցառումների շնորհիվ, իր գրաված երկրներում աշխուժանում է միջազգային առևտուրը, և տնտեսությունը վերելք է ապրում։ Հետևանքը լինում է այն, որ իր գերիշխանության տակ եղած քաղաքները մեծանում և բազմամարդ են դառնում, մի փաստ, որի մասին ինքը Պլուտարքոսն էլ է գրել[110]։

Տիգրան Բ-ի տնտեսական ու քաղաքական նվաճումները պատահականության արդյունք չեն, ընդհակառակը, արդյունք են մտածող քաղաքագետի ճիշտ գործունեության և ցույց են տալիս, որ նա կարողացել է օգտվել նախ պարթևների արքունիքում առաջացած հակասություններից, ապա պարթևական տիրապետության մեջ մտնող վերնախավերի ու պարթևական արքունիքի միջև առաջացած հակասություններից։ Նա իր գործունեությունը հիմնել է պարթևական տիրապետությունից դժգոհ տարրերի վրա և նրանց հետ համագործակցելով՝ ապահովել իր գերիշխանությունը։ Այդ համագործակցությունը օգնել է, ինչպես ասել ենք, միջազգային առևտրի զարգացմանը և քաղաքների կյանքի աշխուժացմանը. ծաղկում է ապրում հատկապես Հարավային ու Հյուսիսային Միջագետքից դեպի Զևգմա, այնտեղից էլ Անտիոք ու Միջերկրականի ափերը ապրանք տանող քարավանների ու նավահանգիստների կյանքը[111]։

Տիգրան Բ-ի գործունեության այս կողմի վրա մանրամասն կանգ առնենք, որպեսզի ցույց տանք, որ ճիշտ չեն վերոհիշյալ հույն պատմիչների հաղորդած այն վկայությունները, որ իբր Տիգրանի տիրապետության մեջ մտնող վերնախավերը բոլորն էլ թշնամի էին Տիգրանին ու առիթը ներկայանալիս, իբր, բոլորն էլ դավաճանել են։ Խոսքը մասնավորելով, ասենք Ադիաբենի թագավորի կամ ադիաբենցիների մասին։ Պլուտարքոսի վկայությամբ Տիգրանը շատ դաժան է վարվել Ադիաբենի

---

109 Պլուտարքոսը պատմում է, որ Տիգրանը արաբական ցեղերին բերեց ու բնակեցրեց իր մայրաքաղաքի մոտակա առևտրական ճանապարհների վրա, որպեսզի սրանք առևտրական գործերը կարգավորեն։ Այս մասին տե՛ս *Плутарх*, Лукулл. XXI, стр. 189.

110 Նույն տեղում։

111 *Я. Манандян*, О торговле и городах Армении, Ереван, 1954. стр. 117.

նկատմամբ այն նվաճելուց հետո, իբր նա երկիրն ավերել ու բնակիչներին գաղթեցրել է իր մայրաքաղաքը[112]: Այդ դեպքում, բնական է, որ ադիաբենցիները վրեժխնդրությամբ լցվեին Տիգրանի դեմ և հարմար առիթին նրա դեմ դուրս գային: Առիթը ներկայանում է, սակայն ադիաբենցիները ոչ միայն Տիգրանին չեն դավաճանում, այլև որպես ամենահավատարիմներ կռվում են Տիգրանի կողքին, իսկ Տիգրանը Տիգրանակերտի ճակատամարտում, իր զորքի ձախ թևի հրամանատարությունը վստահում է Ադիաբենի թագավորին, որը մինչև վերջ կռվում է Տիգրանի հետ ընդհանուր թշնամու՝ հռոմայեցիների դեմ[113]: Մինչ այդ ճակատամարտը, Պլուտարքոսը պատմում է, որ հռոմայեցիների զորավար Լուկուլլոսը Ապպիոս Կլավդիոսին որպես պատգամավոր ուղարկել էր Տիգրանի մոտ, և սա, անշուշտ, ճանապարհին, իր ստացած գաղտնի հանձնարարություններին հետևելով, օգտվելով Տիգրանի բացակայությունից, Անտիոքում երկպառակություն էր սերմանել. իր այդ նպատակին հասնելու համար կաշառք, պաշտոն, դիրք, տիտղոս էր խոստացել, և գաղտնի բանակցություններով Տիգրանի ավագանիից շատերին կարողացել էր թեքել հռոմայեցիների կողմը, որոնցից մեկը Կորդուբի թագավոր Զարբիենոսն էր[114]: Եվ եթե հույները և շատ ուրիշներ դավաճանեցին Տիգրանին, Ադիաբենի թագավորն իր զորքի հետ միասին հավատարիմ մնաց Տիգրանին, մինչև որ վերջինս Պոմպեոսից պարտվելով[115], հրաժարվեց իր նվաճած երկրներից ու մնաց լոկ Հայաստանի թագավոր[116]: Մ. թ. ա. 66 թ. կնքված դաշինքով, Ադիաբենը ևս անջատվում է Հայաստանից և նորից ընկնում պարթևների քաղաքական ազդեցության տակ: Փաստորեն 66 թ. դաշինքով Հռոմը Արևելքում քաղաքական ազդեցությունների ոլորտների բաժանում էր մտցրել: Այդ բաժանումով Ադիաբենը ենթարկվում էր պարթևներին[117]: Այսպես, նորից Հայաստանի հարավային սահմանը դառնում է Ադիաբենը[118]:

---

[112] *Плутарх*, Лукулл, том II, XXVI, стр. 194.

[113] Նույն տեղում:

[114] *Плутарх*, Луклул, том II, XXI, стр. 189.

[115] 66 թ. Մանլիոսի օրենքով արևելյան պատերազմի ղեկավարության գործը հռոմեական ծերակույտի կարգադրությամբ հանձնվել էր Պոմպեոսին:

[116] Պլուտարքոսը գրում է, որ Տիգրանը հրաժարվեց Ասորիքից, Փյունիկիայից, Կիլիկիայից, Գալատիայից, Ծոփքից: Այս մասին տե՛ս *Плутарх*, Помпей, XXXIII, стр 358.

[117] *Н. Пигулевская*, Города Ирана, стр. 62.

[118] *Плутарх*, Помпей, XXXIII, стр. 358.

Թե ինչ փոփոխություններ տեղի ունեցան Ադիաբենում, երբ վերըստին այն միացվեց պարթևների տերությանը, ոչինչ չգիտենք, միակ ենթադրությունը, որ կարելի է անել, այն է, որ Տիգրան Բ-ին մոտ կանգնած անձնավորություններ, նախարարական որոշ տներ, նրա անմիջական գործակիցներ, հավանաբար դարեր առաջ այստեղ հաստատված հայ վերնախավի ներկայացուցիչներ լքում են երկիրը և գնում են ապաստան գտնելու Հայաստանի թագավոր Տիգրան Բ-ի մոտ, վախենալով, անշուշտ, պարթևների վրեժխնդրությունից: Մեր պատմիչների մոտ որոշ ակնարկներ կան այս գաղթի վերաբերյալ, և պատմաբանները գրել են այդ մասին: Օրինակ, ինչպես եզրակացնում է Ս. Տ. Երեմյանը վերջերս հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» Ա հատորում, «Թագավորի համար մեծ նշանակություն ուներ արքունի թիկնապահների գործակալությունը, որի գոյության մասին որոշակի տեղեկություններ են պահպանվել դեռևս Արտավազդ Բ-ի (56—34 թթ.) ժամանակվանից: Ըստ Խորենացու, այս գործակալությունը ևս ժառանգական է դառնում «Վաղարշակի» օրոք: Վերջինս իրեն զինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից ընտիր ու քաջ, նիզակավոր ու սուսերավոր մարդկանց և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխազ անունով մի բարի ու սրտոտ մարդու, բայց ցեղի անունը պահում է ըստ կըզբնականը: Մաղխազը, հավանաբար, Ադիաբենի արքայական տոհմի շառավիղներից էր»[119]:

Այս կապակցությամբ հետաքրքրական են մեր պատմահայր Մովսես Խորենացու հաղորդած այն վկայությունները, որոնք վերաբերում են մանավազյան և բզնունյաց նախարարական տներին: Խորենացին պատմում է, որ Հայկ Նահապետը Բելին հաղթելուց հետո գալիս ու կանգ է առնում Հարք գավառի դաշտում[120]: Այստեղ բավական ապրելուց հետո մահանում և ամբողջ ազգը հանձնում է Բաբելոնում ծնված Արամանյակ որդուն: Ահա այս Արամանյակն իր եղբայրներից երկուսին՝ Խոռին ու Մանավազին և Մանավազի որդի Բազին է թողնում Հարքն ու վանա լճի շրջակայքը. «Յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարևմտից հիւսիսոյ զեղր ծովուն Աղւոյ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբ: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս

---

119 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 832:

120 «Հարք գաւառ—Տաւրուբերան նահանգի 9-րդ գավառը՝ 2245 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Բուլանըխ շրջանին»: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62:

Մանաւազեան և զԲղնունեաց, և Որդունին անուանեալ, որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին ի միմեանց պատերազմաւ»[121]:

Մանավազը, ուրեմն, պատմահոր վկայությամբ, Հայկ նահապետի թոռն էր, իսկ սա մեզ հետաքրքրում է այնքանով, որ Ադիաբենի գահին բազմած թագավորները աղբյուրներում հայտնի են որպես Մանավազյաններ, ուրեմն, Ադիաբենում թագավորական իշխանությունը գտնվում էր Մանավազյանների ձեռքում: Արդյոք դրանք հայկական ծագում ունեին, թե ոչ, դժվար է ասել, բայց այդ թագավորական տան մեկ ճյուղը, որը, հավանաբար, շատ կապված էր Հայոց արքա Տիգրան Բ-ի հետ, Պոմպեոսից նրա կրած պարտությունից հետո հեռանում է Ադիաբենից ու գալիս Հայաստան: Տիգրանը նրան, որպես հավատարիմ զինակցի, պարգևատրում է և տալիս նախարարական իրավունք, նրա տունն էլ դառնում է մեզ հայտնի Մանավազյան նախարարությունը: Մեկ ճյուղն է գալիս, ասում ենք, որովհետև Մանավազյանների մյուս ճյուղը, որը մնացել էր Ադիաբենում, նորից թագավորական իշխանությունը վերցնում է իր ձեռքը և մեր թվականության առաջին դարի սկզբից, տեսնում ենք, որ Ադիաբենի գահի վրա են Մանավազյանները: Սույն աշխատության մեջ առանձին կանգ կառնենք այս հարցի վրա:

5. ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԵՆՑ ՀՊԱՏԱԿ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Պարթևական տերությունը չկարողացավ քաղաքական միաձույլ պատկեր ունենալ, որովհետև բազմաժողովուրդ ու բազմացեղ այդ տերությունը ստիպված էր հաճախակի դենքի դիմել, մի կողմից ներքին երկպառակությունները՝ գահին տիրանալու փորձերն ու ապստամբական շարժումները, մյուս կողմից՝ ինքնուրույնության ձգտող այլ ժողովուրդների ու նրանց վերնախավի ապստամբության ձգտումները ճնշելու համար: Հռոմեական դիվանագիտության շնորհիվ հունական քաղաքներում հակապարթևական տրամադրությունների ուժեղացումը ստիպում էր պարթևներին տարբեր միջոցներով պահպանել իրենց գեռ իշխանությունը: Համենայն դեպս, բացի այս ներքին հակասություն-

---

121 *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, աշխատ. Մ. Աբեղեան, և Ս. Յարութիւնեան, գիրք Ա, գլ. ԺԲ, Տփղիս, 1913, էջ 38:*

ներից այդ աշխարհակալ երկիրը բաժանված էր երկու տարաբնույթ մասերի՝ արևմտյան և արևելյան սատրապություններին։

«Արևմուտքում պարթևներին ենթակա էին Միջագետքը և Զագրոսյան լեռնաստանը, որը ձգվում էր մինչև Մարաստան։ Այս երկրամասերի ազգաբնակչության հիմնական տարրերն էին սեմական լեզուներով խոսող արամեացիներն ու արաբական ցեղերը, հույները, մասամբ՝ պարթևները և այլ իրանալեզու ցեղերը, որոնք, սակայն, տնտեսապես ու կուլտուրապես կապված էին ինքնավար քաղաքների հելլենացված վերնախավի հետ։ Ահա պարթևներին խորթ այս միջավայրը՝ Ստորին Միջագետքը, անխուսափելիորեն դարձավ պարթև Արշակունիների քաղաքական կենտրոնը։ Այն ժամանակվանից, երբ Տիգրան Բ Մեծը (95—55) նվաճեց պարթևների մայրաքաղաք Էկբատանան (մ. թ. ա. շուրջ 89—85), հարց առաջացավ պարթևական արքունիքը փոխադրելու Հյուսիսային Միջագետքից և Հայաստանից հեռու մի վայր։ Միհրդատ Բ-ի հաջորդ Որոդես Բ-ն (55—38/37) իր մայրաքաղաքը դարձրեց Տիգրոնը, որը աճել էր հելլենիստական աշխարհի երեք խոշորագույն կենտրոններից մեկի՝ Տիգրիսյան Սելևկիայի կողքին»[122]։

«Արևմտյան այս նահանգներին հակադրվում էին Պարթևաստանի արևելյան և հյուսիսարևելյան նահանգները՝ Մարաստանը, Պարթևաց աշխարհը՝ «Ապար աշխարհը», Մարգիանեն, Աստավանը, Ապավորդենեն (Ապավարկտիկենեն), Սակաստանը և սրանց հարակից երկրամասերը։ Սրանք հելլենականության դեմ պայքար էին մղում դեռևս Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում, իսկ այժմ Դրանգիանա-Սակաստանում ամրացած ռազմատենչ սակերն իրենց ձեռքն են վերցնում երկրի տնօրինությունը»[123]։

Հռոմայեցիների բազմակողմանի հովանավորությունը վայելող հելլենականության կողմնակիցները աշխուժանում են և փորձում նույնիսկ իշխանությունը իրենց ձեռքը վերցնել արևելյան շատ երկրներում։ Այդ աշխուժացումը իր զարգացումն ապրել էր հատկապես Պոմպեոսի հաջողությունից հետո, երբ հռոմայեցիները սկսել էին իրենց ռազմական հաղթանակներին զուգակցել նաև դիվանագիտական գործունեությունը ոչ միայն նվաճված, այլև իրենց տիրապետությունից դուրս եղող երկրներում։ Անշուշտ, արևելյան ժողովուրդների կյանքում նման բաժանվածությունը առաջացել էր Սելևկյանների տիրապետության ժամանա-

---

122 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 705—706։

123 Նույն տեղում, էջ 706։

կաշրջանում, բայց այն իր զարգացումն ապրել էր հռոմեական կայսրության տարիներին: Այսպես օրինակ, հրեաները դեռ մ. թ. ա. 200 թ. երկուսի էին բաժանվել, երբ նրանք գտնվում էին Սելևկյանների տիրապետության տակ: Հրեական երկու խմբերից առաջինը դեմ էր հելլենականության և իր պահպանողական հայացքներով ժխտում էր կապը այլ մշակույթների հետ, իսկ երկրորդը՝ նրանք, որոնք Հրեաստանից դուրս ափովել էին տարբեր երկրներում և այլ ժողովուրդների հետ ապրելով երկար ժամանակ կողմնակից էին հելլենականության և իրենց հայացքներով դարձել էին աղատամիտ[124]: Ահա հելլենականության կողմնակից հրեական տարրերը աշխուժացան և հռոմեական քաղաքականության նկատմամբ համակրանքով լցվեցին, որովհետև մ. թ. ա. 64 թ. Պոմպեոսը հելլենական մշակույթի կենտրոն հանդիսացող մի շարք քաղաքներում, ինչպես, օրինակ, Անտիոքում ապրող հրեաներին «ազատություն» (libertas) շնորհեց, այսինքն՝ այլ քաղաքացիներին հավասար իրավունքներ տվեց[125]: Հռոմեացիների այս քաղաքականությունն էլ հրեաների մոտ նրանց նկատմամբ համակրանք առաջացրեց: Սակայն, ինչպես հետո կտեսնենք, իրերի դրությունը փոխվեց մ. թ. I դ. սկզբներին, երբ Հռոմն արդեն հանդես էր գալիս կամ գործում էր արևելյան ժողովուրդների ազատագրման կեղծ լոզունգների ներքո, փորձում էր արևելյան նվաճված երկրները, ի թիվս նրանց նաև՝ Հրեաստանը հռոմեական նահանգ դարձնել, այդ պատճառով էլ շատ ժողովուրդների համակրանքը հռոմայեցիների նկատմամբ ատելության փոխվեց:

Նման խմորումներ Ադիաբենում էլ գոյություն են ունեցել, և այդ գործում կարևոր դեր են խաղացել հրեաները, որոնք վաղուց հաստատվել էին Ադիաբենի տարբեր քաղաքներում, մանավանդ մայրաքաղաքում և. նրա տնտեսական, առևտրական կյանքում նշանակալի դեր էին կատարում: Անկասկած, սկզբում Արբելայի մետաքսագործական ու կերպասագործական արհեստանոցներում հրեաները մեծ թիվ էին կազմում: Բնականաբար, սրանք հելլենականության կողմնակից տարրեր էին և համակիր հռոմայեցիներին: Սակայն, ինչպես ասացինք, իրերի դրությունը փոխվել էր մեր թվականության սկզբներից: Հրահատ Ե-ին հաջորդած Որոդես Գ-ի կարճատև գահակալությունից հետո պարթևները հարկադրված դիմեցին Օգոստոսին, խնդրելով Հռոմում գտնվող արքայազն Վոնոնին, որը Հրահատ Դ-ի ավագ որդին էր, նշանակել Պարթևաս-

124 *G. Downey*, A history of Antioch in Syria, Princeton, 1961, p. 108.

125 Նույն տեղում, էջ 145:

տանի թագավոր։ Սակայն հռոմեական դաստիարակություն ստացած Վոնոնը (7—11 թթ.) հենարան չուներ պարթևական ավագանու շրջանում։ Նրա դեմ համախմբվում էին հայրենասիրական ուժերը։ Հռոմեական դրածոյի դեմ պարթևների պետության արևելյան նահանգներում սկսված պայքարը գլխավորում էր Վրկանաց աշխարհի և Կրմանի կառավարչի որդի Արտավանը, մոր կողմից Սրշակունի, որը և դարձավ Սրշակունյաց հարստության կրտսեր ճյուղի հիմնադիրը։

Արտավանի գլխավորած պայքարի ընթացքում երկրից արտաքսվեց, ապա ոչնչացվեց նրա հիմնական քաղաքական հակառակորդ, պարթևական գահի հավակնորդ Տրդատ Գ-ն և ինքը հաստատվեց պարթևական գահի վրա։

Գահազուրկ Վոնոնը հարկադրված է լինում ապաստան գտնել Հայաստանում, որտեղ հռչակվում է Մեծ Հայքի թագավոր (11—16 թթ.)[126]։

Հռոմայեցիների արևելյան քաղաքականությունից հուսախաբված, Միջագետքի մի շարք քաղաքների հելլենականության կողմնակից վերնախավը, և մանավանդ հրեաները, թևթվում են Արտավան Գ-ի (12—38 թթ.) կողմը և նպաստում նրա վերջնական հաղթանակին։ Արտավան Գ-ով էլ սկսվում է պարթևական պետության զարգացման նոր ժամանակաշրջանը։

Արտավան Գ-ն, որը նախկինում Կասպից ծովի արևելքում գտնվող Հիրկանիայի կառավարիչն էր, պարթևական գահին տիրանալուց հետո, ինչպես ներքին ու արտաքին, այնպես էլ տնտեսական ու մշակութային կյանքում սկսեց փոփոխություններ մտցնել։ Նա սկսեց հելլենիստական տարրերից, որոնք իր տիրապետության մեջ մտնող քաղաքներում կարևոր աղդեցություն էին ձեռք բերել և իրենց հակապարթևական ձգտումներով նպաստում էին երկրի թուլացմանը։ Արտավան Գ-ն իր այս միջոցառումների ընթացքում հանդիպեց քաղաքներում հաստատված ազնվականության այն ներկայացուցիչների դիմադրությանը[127], ո-

---

126 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 710։

127 Պարթևական ազնվական մեծ ընտանիքները (ինչպես ենթադրում են, նույնն է եղել Աքեմենյանների օրոք) յոթն էին։ Դրանցից հետո գալիս էին միջին և փոքր նախարարական տները։ Ճիշտ է, «յոթը» ընտանիք լինելը մասնագետների մոտ վեճ է առաջացրել, սակայն Միհրդատ Բ-ից մեզ հասած Բեհիստունյան մի ժայռի վրա փորագրված մի տեսարանից իմանում ենք, որ արքայից արքան այդ 7 ընտանիքներից 4-ին պարգևներ է շնորհում։ Այս ընտանիքներից հայտնի է, օրինակ, Սուրեն ընտանիքը, որը տերն էր Սեյաստանի, և պարթև արքաներին թագադրելու իրավունքը նրանց էր

րոնք կարևոր պաշտոնների, հսկայական կալվածների ու եկամուտների տիրանալով, վարժվել էին հռոմեական կյանքի ճոխ նիստուկացին, սովորույթներին ու խրախճանքներին և, բնականաբար, իրենց կենտրոնախույս տրամադրություններով խանգարում էին կենտրոնական իշխանության հզորացմանն ուղղված քաղաքական միջոցառումներին։

Արտավան Գ-ն կարողացավ ոչ միայն ճնշել նրանց կազմակերպած մի շարք ապստամբությունները, այլ նաև մի շարք միջոցառումներով ուժեղացնել իր դիրքերը, այսինքն՝ կենտրոնական իշխանությունը[128]։ Ճիշտ է, հակառակորդներին, ինչպես հետո կտեսնենք, հաջողվեց ժամանակավորապես դահընկեց անել նրան, բայց և այնպես նա կարողացավ պարթևական իշխանությունը դարձնել նորից հզոր մի պետություն։ Այն չհասավ Աքեմենյանների և Սասանյանների հզորությանը, բայց այդ ժամանակ Արևելքի ամենաուժեղ պետությունն էր[129]։

Արտավան Գ-ի և նրա հաջորդների քաղաքական հզորությունների հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք մեծ նշանակություն էին տալիս երկրի տնտեսության, մանավանդ միջազգային առևտրական հարցերին։ Դրա համար էլ, հնարավորին չափ օգնում էին, որ առևտրական քարավանները անվտանգ երթևեկեին իրենց տերության մեջ մտնող առևտրական ճանապարհներով։ Պարթև արքաները արդեն հատուկ ուշադրություն էին դարձնում Չինաստանի և Արևմուտքի երկրների հետ իրենց ունեցած առևտրական կապերին, որովհետև առևտրական նման հարաբերություններից նրանք սկսել էին հարստացնել իրենց գանձարանը[130]։

Պարթևները սկսում են խոշոր կարևորություն տալ նաև մինչ այդ անուշադրության մատնված մշակութային հարցերին, հարաբերություններին, հատկապես՝ լեզվին ու կրոնին։ Միջագետքում, Ասորիքում և Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում տարածված ու միջազգային լեզվի իրավունք ստացած արամերենի ու հունարենի փոխարեն, աշխատեցին պարսիկների դասական լեզուն՝ պահլավերենը, պաշտոնական, պետական լեզու դարձնելով իրենց տերության մեջ տարածել[131]։

պատկանում։ Գիտենք կաբեն ընտանիքի մասին, որի նստավայրը Մարաստանի Նիհավանդն էր։ Հայտնի էր Դյուների ընտանիքը՝ Հիրկանիայում, որի ներկայացուցիչն էր Արտավան Գ-ն, Միհրաների ընտանիքը և այլն։ Այս մասին մանրամասն տե՛ս M. A. R. *Colledge*, The parthians, p. 61.

128 *F. Millar*, The Roman Empire and its neighbours, London, 1967, p. 250.

129 Նույն տեղում, էջ 252։

130 Նույն տեղում, էջ 255։

131 *R. Grousset*, La civilisation Iranienne, Paris, 1952, p. 88.

Զրադաշտական կրոնը նորից պետական հովանավորության տակ է վերցվում, որովհետև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից և Սելևկյանների տիրապետության հաստատումից հետո զրադաշտական կրոնը ուժեղ հարված էր ստացել և արքաների ուշադրությանը չարժանանալով, հազիվ էր իր գոյությունը պահպանում։ Չնայած մինչ այդ պարթևական գահին բազմած արքաները զրադաշտականներ էին, ինչպես ցույց են տալիս նրանց անունները՝ Արտավան, Միհրդատ և այլն, և նրանցից մեզ հասած դրամների վրա նկարված կրակարաններն ու Ահուրամազդայի նկարը նույնպես վկայում են արքայից արքաների զրադաշտական լինելու մասին[132], բայց նրանք մտածում էին տեղական այլ ժողովուրդների կրոնական հավատալիքներին չհակադրել զրադաշտականությունը, որպեսզի նրանց իրենց դեմ չհանեն։ Նրանք, ընդհակառակը, մտածում էին այդ բոլոր կրոնական հավատալիքների տեր ու պաշտպանի դերում հանդես գալ, բոլոր այդ կրոնական հավատալիքներին հետևող ժողովուրդներին սիրաշահելու համար։ Ճիշտ է, այս կրոնը մեր թվականության առաջին դարում աշխուժացում ապրեց, բայց չդարձավ պարթևների պետական միակ կրոնը, ինչպես Սասանյանների օրոք, որովհետև պարթևները չկարողանալով ստեղծել խիստ կենտրոնացված պետական իշխանություն, ստիպված որոշ զիջումներ արեցին, որպեսզի իրենցից չվանեն այն ժողովուրդներին, որոնք քաղաքական ասպարեզում գործակցում էին իրենց հետ, սակայն կրոնով տարբերվում էին և ունեին այլ հավատալիքներ։

Ինչպես մասնագետներն իրենց ուսումնասիրություններում մեջ ցույց են տվել, պարթևների գերիշխանության ժամանակ դեռ պահպանվել էին բաբելական կրոնական համայնքները տաճարների հետ միասին և իրենց գործունեությամբ շարունակում էին ազդել հետևորդների վրա։ Միջագետքում և, ընդհանրապես, Արևմտյան Ասիայի տարածքի որոշ տեղերում գործում էր բաբելական օրենքը, ուսումնասիրվում էին բաբելական գիտական և աստղաբաշխական հետազոտություններն ու գրավոր հուշարձանները։ Ավելի հյուսիսում՝ Աշշուր քաղաքում, աստծո պաշտամունքի հետևորդները, շրջապատի վրա չէին կորցրել իրենց քաղաքական ազդեցությունը։ Պարթևների օրոք, իրականում, բաբելացի քրմերը պահում էին, օրինակ, իրենց որոշ իրավունքները, որովհետև դեռ չէին փակվել տաճարների դռները։ Ինչպես Բելի, այնպես էլ Իշտար աստվածուհու պաշտամունքին նվիրված տաճարների կողքին ապրում էին նաև նույն կրոնի հետևորդ համայնքները։ Այդ բոլորի մեջ յուրահատուկ տեղ էր գրավում մանավանդ Արբելա քաղաքի Իշտար աստվա-

[132] *A. V. W. Jackson.* Zoroastrian studies, New York, 1965, p. 170.

ծուհուն նվիրված տաճարը, ավելի ճիշտ՝ այդ աստվածուհու պաշտամունքը, որովհետև ոչ միայն այլ ժողովուրդների, այլ նաև պարսիկներից շատերին հրապուրել էր այն, և դրա համար բազմահազար ուխտավորներ, նույնիսկ շատ հեռուներից, գալիս էին Իշտար աստվածուհու պաշտամունքի տոնակատարություններին մասնակցելու։ Մեծ ժողովրդականություն էր վայելում նաև շումերական ծագումով Նանա աստվածուհին։ Նանայի պաշտամունքը ամենատարածվածն էր պարթևների հայրենիքում, հատկապես, իրենց առաջին մայրաքաղաք Նիսայում[133]։ Նիսայում նրա անունով տաճար էր կանգնեցված և այդ տաճարին հողային մեծ կալվածներ էր շնորհված։ Ինչպես Իշտարը, այնպես էլ Նանան, պարթևների տիրապետության ժամանակ ներկայացվում էին որպես բեղմնավորության աստվածուհիներ. հետագայում, Սասանյանների օրոք, դրանք նույնացվել էին Անահիտ աստվածուհու հետ և կորցրել իրենց ինքնուրույնությունը։

Պարթևների տիրապետության մեջ, այս համայնքներից բացի, իրենց ուրույն տեղն ունեին հրեական համայնքները, որոնք տարածվել էին պարթևական տերության զանազան մասերում, հատկապես Պարթևաստանի արևմուտքում, Բաբելոնի հյուսիսում։ Պարթև արքաները, հաշվի առնելով, որ հրեական այս համայնքները իրենց տերության սահմաններում և սահմաններից դուրս տնտեսության և մանավանդ առևտրի ասպարեզում շատ կարևոր դեր էին խաղում, նրանց ճանաչել էին որպես ինքնուրույն կրոնական համայնք և շնորհել որոշ տեղական արտոնություններ ու ներքին ինքնավարություն։ Ինչպես երևում է Թալմուդից, հրեական համայնքի կրոնապետը ինքն էր պատասխանատու հրեաներից գանձվելիք հարկերի համար։ Նա ուներ հրեաներին դատելու իրավունք, այսինքն՝ հրեաների միջև ծագած դատական հարցերը լուծելու իրավունք, և հրեական կրոնական համայնքի պետի իրավունքը դատական գործերում հասնում էր մինչև այն աստիճանի, որ անհրաժեշտության դեպքում կարող էր նա իր համայնքի անդամներից մեկին դատել և նրա նկատմամբ նույնիսկ մահապատիժ կայացնել[134]։

Պարթևների տիրապետության ժամանակ, հատկապես հելլենական մշակույթի կենտրոններում, իրենց ուրույն տեղն ու ազդեցությունն ունեին հունական աստվածությունները։ Անշուշտ, այս աստվածությունները վերոհիշյալ քաղաքների բնակչության մոտ հաճախ այլափոխվում և նույնացվում էին տեղական աստվածությունների հետ և դառնում

133 *M. A. R. Colledge.* The Parthians, p. 87.

134 Նույն տեղում, էջ 95։

պաշտամունքի առարկա։ Այս փաստը ակնառու երևում է պարթևներից մեզ հասած փողերի վրա եղած հունական աստվածությունների՝ Զևսի, Արտեմիսի և այլ նկարներից։ Նման նույնացումներ են կատարվել նաև ասուրաբաբելական կրոնական հավատալիքների, աստվածությունների ու զրադաշտականության միջև. այսպես՝ պարթևների օրոք Ահուրամազդան նույնացվել էր Բելի, Միթրան՝ Շամաշի, Իշտարը կամ Նանան՝ Անահիտի հետ, և այլն[135]։

Պարթևական տիրապետության մեջ գոյություն ունեցող կրոնական տարբեր այս հավատալիքների, վարդապետությունների, սովորությունների մասին գրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ պարթև թագավորները սկզբում թաղվել են իրենց հայրենի քաղաք Նիսայում։ Սակայն հետագայում, երբ մայրաքաղաքը դարձել էր Տիզբոնը, պարթև արքաները, ինչպես աղբյուրներից հայտնի է, թաղվում էին ոչ թե Տիզբոնում, այլ Արբելա քաղաքում։ Անշուշտ, այնքան էլ համոզիչ չէր լինի, եթե արքայական գերեզմանատան հիմնադրումը Արբելայում կապեինք միայն այդ քաղաքի ունեցած ամրության հետ։ Ինչ-որ չափով այն կարող էր նշանակություն ունենալ, բայց հիմնական պատճառը պետք է փնտրել կրոնական հավատալիքների մեջ։ Այս աշխատության նախորդ էջերում մենք գրել ենք այն մասին, որ պարթևների հայրենիքում, մայրաքաղաք Նիսայում ամենատարածված պաշտամունքը Նանա աստվածուհու պաշտամունքն էր։ Ահա այդ աստվածուհին հետագայում նույնացվել էր բեղմնավորության աստվածուհի Իշտարի հետ։ Իսկ բեղմնավորության գաղափարը, ինչպես դիտենք, կապված է բնության, կյանքի, հավերժության և նույնիսկ անմահության հասկացողության հետ[136]։

Արբելան արքայական գերեզմանատուն դարձնելու գործում հավանաբար էական դեր են կատարել նաև դեռ շատ-շատ վաղուց, իրանական ցեղերի, մանավանդ սակերի գաղթերը։ Հայտնի է, որ դեռ մ. թ. ա. 1500 թ. սակերը գաղթել և եկել հաստատվել են ինչպես Արբելայի, այնպես էլ Քերքուքի շրջակայքում։ Դրանից հետո նորից են եկել սակերը. նրանց վերջին գաղթը եղել է մ. թ. ա. 130—110 թթ.։ Այս ցեղերը ապրելով Արբելայում և նրա շրջակայքում, նպաստել են, անկասկած, Նանայի՝ Իշտարի հետ նույնացմանը և Իշտարի ժողովրդականացմանը իրանական ցեղերի ու ժողովուրդների մեջ։ Ինչպես ասել ենք, այդ ժողովրդականությունն էլ պատճառ է եղել, որ պարթև արքաները Արբելան

---

135 Նույն տեղում, էջ 104։

136 *R. F. Harper*, Assyrian and Babylonian literature. p. I (12).

դարձնեն իրենց գերիշխանատունը։ Արբելան արքայական գերիշխանատուն դառնալով, բնականաբար արքայական տան համար հատուկ նշանակություն էր ստանում, և գահին բազմած թագավորները առանձին կարևորություն էին տալիս այդ քաղաքին, ձգտում էին հնարավորին չափ անառիկ դարձնել այն, որպեսզի թշնամին չկարողանար սրբությունդարձած իրենց պապերի գերեզմանները անպատվել։

Ճիշտ է, տարբեր այս աստվածությունների նույնացումը օգնում էր որոշ կապ ստեղծել պարթևական տիրապետության սահմաններում ապրող ժողովուրդների կյանքի մեջ, սակայն այն երբեք չկարողացավ նպաստել պարթևական պետականության միասնականության ստեղծմանը, որովհետև կրոնական բազում հավատալիքները, կրոնական վարդապետություններն ու գաղափարախոսությունները ամեն մի կրոնական համայնքի ու տվյալ ժողովրդի վերնախավի կողմից օգտագործվում էին սեփական տնտեսական ու քաղաքական շահերի դիրքերից։ Նման դիրքերից էին գործում նաև այդ կրոններին պինվորագրված քրմերի դասն ու քրմապետը։

Արտավան Գ-ն առաջինը փորձեց ուղիներ որոնել իր տիրապետության մեջ մտնող տարբեր այդ ուժերին միավորելու համար. այդ նպատակով էլ «Մեծ պայքար էր մղվում հելլենիստական սինկրետիկ պաշտամունքների դեմ և իբրև պետական կրոն ձևավորվում էր զրադաշտականությունը»[137]։ Բայց, անշուշտ, զրադաշտականությունը պետական կրոն դարձավ վերջնականապես մ. թ. III դարից, երբ Սասանյաններն անցան իշխանության գլուխ[138]։

---

[137] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 710։

[138] A. V. W. Jackson. Zoroastrian studies, p. 10.

ԳԼՈՒԽ Բ

ԱԴԻԱԲԵՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Մ. թ. I դար

Ադիաբենի պատմության վերաբերյալ տեղեկությունները շատ կըցկըտուր են։ Մ. թ. I դ. սկսած, համեմատաբար ավելի շատ վկայություններ ենք գտնում աղբյուրներում, հատկապես առաջին դարի պատմիչ Հովսեպոս Փլավիոսի աշխատություններում։ Մ. թ. 37 թ. ծնված հրեա այս պատմիչը հայտնի ընտանիքից էր և երիտասարդ տարիքում լավ էր ուսումնասիրել հրեական օրենքն ու հունական գրականությունը։ Նա անդամագրվել էր հրեական հասարակության ներսում քաղաքական դիրք ունեցող փարիսեցիների կազմակերպության։ Մահացել է 97 թ. հետո, այն ժամանակ, երբ քաղաքական վերջին իրադարձությունները սպանել էին նրա մեջ հավատը իր երկրի ապագայի նկատմամբ։ Նրա գրչին է պատկանում «Պատմություն հրեական պատերազմին» աշխատությունը, որը բաղկացած է 7 գրքերից, որոնց մեջ պատմում է մ. թ. ա. 170 թ. հրեա ժողովրդի՝ Թշնամու դեմ մղած պայքարի, ապստամբությունների ու քաղաքական գործունեության մասին։ Նրա երկրորդ գիրքը կոչվում է «Հրեական հնություններ»։ Այս աշխատության 20 գրքերում նա շարադրել է հրեաների պատմությունը մինչև մ. թ. 66 թ.։ Անշուշտ, այս աշխատություններում նա գրել է հրեաների և Մերձավոր արևելքի այլ ժողովուրդների, Ադիաբենի և հատկապես նրա թագավորներ Մոնոբազի, Իզատեսի, Հելինե թագուհու, կրտսեր Մոնոբազի և այլ գործիչների մասին։ Պատմիչի վկայություններն արժեքավոր են նրանով, որ նա իր նկարագրած որոշ իրադարձություններին ոչ միայն ժամանակակից է, այլև որպես քաղաքական գործիչ, երբեմն էլ՝ մասնակից։ Բայց, պիտի խոստովանել, որ Ադիաբենի վերաբերյալ նրա հաղորդածները ականատեսի փաստեր չեն, որովհետև Հովսեպոսը, ինչպես դժվար չէ կռահել, օգտվել է այնպիսի աղբյուրից, որը վաղ շրջանի քրիստոնեական գրական ու պատմական հուշարձանների նման, անկասկած, եղել է վարքագրական մի երկ, որտեղ ինչ-որ հրեա մի հեղինակ հրեաներին սիրելի

Ադիաբենի թագավորական տան որոշ ներկայացուցիչների կյանքն ու գործունեությունը փառաբանել է, որպեսզի համակրանք առաջացնի ընթերցողի մեջ, մինչդեռ հակառակորդը ներկայացվում էր միայն ու միայն բացասական գծերով: Այսպիսի երկերում, ճիշտ է, պատմական ճշմարտությունը որոշ չափով տուժում է, բայց դրանց մեջ հնարավոր է որոնել ու գտնել պատմական ու իրական փաստերը: Այսպիսին են, ուրեմն, նաև Հովսեպոսի այն վկայությունները, որոնք վերաբերում են Ադիաբենին ու նրա գործերին: Դեռ ժամանակին Հովսեպոս Փլավիոսի բնագրերով զբաղվող մասնագետներից Թաքրեյը նշել է, որ «Իզատեսի պատմությունը» գրված է շատ հեշտ ու դյուրահոս մի ոճով, որը բոլորովին տարբեր է «Հրեական հնություններ» գրքի ոճից: Նա ցույց է տվել, որ նույնիսկ «կան որոշ բացահայտ զուգահեռներ Աստվածաշնչի Ծննդոց գրքում եղած Հովսեփի պատմության հետ»[1]:

Իզատեսի ծննդյան հետ կապված մանրամասնություններին ծանոթանալիս, կասկած է առաջանում այն մասին, որ մեր թվականության առաջին դարի կեսին ապրած ու հրեական կրոնը ընդունած Իզատեսը Հովսեպոսի մոտ նույնացված է նախապես ինչ-որ պաշտամունքի առարկա դարձած, այսինքն՝ աստվածացված ինչ-որ կերպարի կամ դյուցազնի հետ: Եվրոպացի գիտնականներից Յուստինն իր ուսումնասիրության մեջ կանգ է առել «Իզատես» անվան վրա և գտել, որ այն պարսկերեն է և նշանակում է «ոգի», «աստվածային էություն», և ավելացնում, որ սա այն ածականն է, որը զրադաշտական կրոնի հավատալիքներում օգտագործում էին Միթրայի անվան հետ[2]: Արդյո՞ք «Իզատեսը» միայն որպես անուն է ծառայել մեզ հայտնի Իզատեսի համար, թե պատմական Իզատեսի մեծ ժողովրդականությունը նկատի ունենալով, մեծարելու ձգտումով, նրան վերագրել են նախապես ադիաբենցիների կողմից պաշտամունքի առարկա հանդիսացած ինչ-որ «Իզատեսի» աստվածային հատկանիշները: Փաստերը խոսում են հօգուտ վերջին ենթադրության, որ իսկապես այստեղ երկու տարբեր անձնավորությունների (պատմականի և աստվածայինի) նույնացում է կատարվել: Դրանում համոզվում ենք, երբ կարդում ենք, օրինակ, նրա ծնողների հարաբերությունների և իր ծնունդի վերաբերյալ տեղեկությունները: Այսպես, Հովսեպոսը պատմում է, որ «Մոնոբազոսը, մականվանված Բազայոսը՝ Ադիաբենի թագավորը, սիրահարվեց իր քույր Հեղինեին, ամուսնացավ նրա

[1] *Josephus*, Jewish Antiquities, London, 1966, XX, II. 1, p. 339.

[2] *F. Justi*, Iranisches Namenbuch, 1895, „Jazata", pp. 145—146: *Կարող է այդ անունը իրանական «Յազատ»-ից (անունից) սերած լինի:*

հետ և նրան հղիացրեց։ Մի անգամ, երբ նա (Հեղինեն) քնած էր իր կողքին, նա (Թագավորը) ձեռքը դրեց նրա փորին ու նրան թվաց, որ մի ձայն լսեց, որը խնդրում էր ձեռքը վերցնել փորի վրայից, որպեսզի չճնշի նեռսում եղած երեխային, որն աստծո նախախնամությամբ ունենալու էր երջանիկ սկիզբ ու վերջ։ Այս ձայնից անհանգստացած, (Թագավորն) անմիջապես արթնացավ և այս ամենը պատմեց իր կնոջը և ծնված զավակին անվանեց Իզատես»[3]։ Հովսեպոսի այս տողերը կարդալիս կարելի է մտածել, որ հեղինակը շատ բան հորինել է և, գուցե, «աստվածային» այդպիսի մի նախատիպ գոյություն էլ չի ունեցել։ Մենք դեմ չենք նաև այս ենթադրության. կարևորն այստեղ այն է, որ պատմական Իզատեսի կենսագրությանը միահյուսվել են հրաշապատում բազում զրույցներ։ Հովսեպոսի վերաբերյալ այս տողերում քույր ու եղբոր ամուսնության փաստին ևս արժե ուշադրություն դարձնել։ Արևելագետներից Հերցֆելդը իր շատ հետաքրքրական ուսումնասիրություններից մեկի մեջ կանգ է առել Արևելքում, մասնավորապես Պարսկաստանում գոյություն ունեցող «քույրերի ու եղբայրների» միջև տեղի ունեցած ամուսնությունների և, տվյալ դեպքում նաև, Մոնոբազոսի և Հեղինեի միջև եղած ամուսնության հարցի վրա։ Նա գրել է, որ «Կոշակները իր ուսումնասիրությունների մեջ ցույց է տվել, որ հին ժամանակ Առաբխայում (այժմ՝ Քերքուք) այդ երևույթը ընդհանուր էր, իսկ ինչ վերաբերում է սակերի մոտ ավելի ուշ առաջացած քույր-եղբայր ամուսնական փաստերին, ապա դրանք տեղի են ունեցել ոչ թե դրանց (պարսիկների) հետևողությամբ, այլ իրենց հայրենիքում՝ Սակաստանում գոյություն ունեցած սովորության համաձայն, այսինքն՝ ըստ սակերի արևելյան ճյուղի հին ավանդության, երբ քրոջ որդին էր ժառանգում գահը»։ Այս մասին, շարունակում է պատմաբանը, «լավագույնս վկայում են սակերից մեզ հասած դրամները»[4]։ Ուրեմն, պարզ ասած, սակերի մոտ դեռ շատ վաղուց, անկախ Միջագետքից, եղել է այդ սովորությունը, և ուշագրավն այն է, որ ըստ այդ ավանդության, քրոջ որդին է դառնում գահի ժառանգորդը։ Ահա նման փաստի մասին է գրել Հովսեպոսը։ Նրա պատմածից երևում է, որ այստեղ մենք գործ ունենք սակերի այն սովորության հետ, որի համաձայն քրոջ որդին դառնում էր թագաժառանգը։ Հերցֆելդը իր այդ ուսումնասիրության մեջ կանգ առնելով այս հարցի վրա, գալիս է այն եզրակացության, որ Քերքուքում

---

[3] *Josephus*, Jewish Antiquities, XX, II, 1, p. 399.

[4] *E. Herzfeld*, The Persian Empire, § 124, p. 153.

և Ադիաբենում թագավորական իշխանությունը անցել էր սակերի արևմտյան ճյուղին պատկանող նախարարական տների ձեռքը[5]: Նրան այս եզրակացության է բերել այն, որ այդ իշխաններից երկուսը մեզ ծանոթ են Շահրատ անունով: Շահրատներից առաջինը՝ ավագը, Շահրակերտ-Ալբին Քյոփրուի հիմնադիրն է, իսկ երկրորդը՝ (Արբելայի ժամանակագրության տվյալներով) Ադիաբենի սատրապ Շահարատը, որը պարթևների Արտավան թագավորի հետ միասին մ. թ. 213 թ. պատերազմեց հռոմայեցիների դեմ[6]:

Իսկապես էլ, Շահրկերտ քաղաքը, ինչպես հետո կտեսնենք աստրական աղբյուրներից, հետագայում՝ քրիստոնեության ժամանակաշրջանում, Ադիաբենի մետրոպոլիտության թեմի մեջ մտնող եպիսկոպոսական աթոռ էր:

Համենայն դեպս Շահրատ (Xšaharat < skr-kṣaharata-ն) նահապանայի տոհմանունն է, ասում է պատմաբանը, որը հիմնել է Հնդկաստանի արևմտյան Քսաոտրապա (Kṣatrapa) թագավորությունը, և սրանք էլ իրենց անունը տվել են սակա-տարեթվին[7]: Այս և այլ բազում փաստերի վրա հիմնվելով՝ Հերցֆելդը եզրակացնում է, որ Շահրկերտ քաղաքը և ամբողջ Քերքուքի թագավորությունը, որը կազմավորվել էր մ. թ. ա. 128 թ., գտնվում էր սակերի ձեռքին, այսինքն՝ այդ թագավորության հիմնադիրները եղել են սակերը[8]:

Մեր այս աշխատության մեջ գրել ենք, թե ինչպես «մ. թ. I դ. պարթև Արշակունիների դինաստիայի երկու թևերի միջև գահակալական կռիվներ էին սկսվել, որոնց հիմնական մասը հենվում էր արևելյան և հյուսիսարևելյան իրանական նահանգների վրա, իսկ նրանց հակառակորդները հենարան էին գտնում Միջագետքի հելլենացված վերնախավերի մոտ»[9]: Ահա «ներքին ուժերի վրա հենվող պարթև Արշակունիների հիմնական նեցուկն էր սակերից կազմված այրուձին՝ «սկյութական զորամասերը», որոնք հավաքագրվում էին Միջին Ասիայի քոչվոր ցեղերից, հատկապես՝ ապարհացիներից—դահերից: Այս «սկյութների» մոտ, ըստ երևույթին, առաջնահերթ դեր էր խաղում անդրկասպյան

---

5 Նույն տեղում:
6 Նույն տեղում:
7 Նույն տեղում:
8 Նույն տեղում:
9 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 706—707:

ափերին հիմնված Մաղթաց Արշակունիների թագավորությունը, որտեղ գերիշխում էին ապարհացիները և այլ իրանական ցեղերը»[10]:

Արդյո՞ք Տիգրան Բ-ի ժամանակ Ադիաբենի թագավորական գահին բազմել էր սակերի իշխանական տոհմերից մեկի ներկայացուցիչը, դժվար է ասել, սակայն համոզված ենք, որ Տիգրանի պարտությունից հետո, երբ Ադիաբենը նորից անցավ պարթևների ազդեցության տակ, պարթևական ծագումով Մոնոբազները կամ Մոնոբազյան նախարարությունը իր ձեռքը վերցրեց Ադիաբենի թագավորական իշխանությունը, և սրանք, անկասկած, Արշակունիների արևելյան ճյուղի ներկայացուցիչներից էին: Այս ենթադրությունը ավելի համոզիչ է դառնում, եթե նկատի առնվի այն փաստը, որ Արտավան Գ-ն գահակալական կռիվների պատճառով ստիպված լքել էր գահը և, փախչելով երկրից, ապաստան էր գտել Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի՝ որպես մոտիկ հարազատի ու բարեկամի, մոտ: Եվ հետագայում էլ, մ. թ. I դ. կեսերին, պարթևների Վաղարշակ Ա-ի թագավորության ժամանակ, Ադիաբենի, Ատրպատականի, Հայաստանի թագավորական տները արյունակցական կապերով էին միացած, և երբ հայոց Տրդատ Ա թագավորը Հռոմ էր գնում Ներոնից թագ ստանալու, նրան ընկերակցում էին վերոհիշյալ թագավորների որդիները: Այդ մասին մանրամասն կխոսենք իր տեղում, այժմ բավարարվում ենք նշելով այս փաստը, ասելու համար, որ Ադիաբենի թագավորական գահը մեր թվականության առաջին դարում գտնվում էր Արշակունիների արևելյան ճյուղի ներկայացուցիչների ձեռքին, և մեր այդ ասածը հաստատելու համար մենք այլ փաստեր ևս կնշենք: Այս խնդրի կապակցությամբ համամիտ ենք Հերցֆելդի այն կարծիքին, որ Մոնոբազոսի և իր քույր Հելինեի միջև տեղի ունեցած ամուսնությունը հետևանք էր Աքեմենյաններից մնացած սովորության և ոչ թե Միջագետքում, ավելի ճիշտ՝ Քերքուքում ապրող տեղաբնիկների մեջ տարածված ավանդության[11]: Համենայն դեպս, կարևորն այստեղ այն է, որ մենք գործ ունենք մի նախարարական ընտանիքի հետ, որը ծագումով Արշակունիների արևելյան ճյուղին էր պատկանում և իր ձեռքն էր վերցրել թագավորական իշխանությունը: Իսկապես, երբ վերլուծում ենք այդ թագավորական տան ներկայացուցիչների գործունեությունը, տեսնում ենք, որ դրանք ևս, ինչպես Պարսկաստանում թագավորական գահին բազմած նույն ճյուղի ներկայացուցիչ Արտավան Գ-ն և նրա հաջորդները

---

[10] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 717: Տե՛ս *С. Т. Еремян*, Страна „Махелония" надписи Кяаба-и Зардушт, ВДИ, 1967, № 4, стр. 56.

[11] *E. Herzfeld*, The Persian Empire, p. 153.

իրենց արտաքին քաղաքականության հիմնաքարն էին դարձրել հակահռոմեական քաղաքականությունը և դրա դեմ պայքարելու համար հակադրվել էին հելլենական մշակույթին և նրա կողմնակիցներին։ Դրա համար էլ, ինչպես Արտավան Գ-ն պարթևական տիրապետության մեջ, այնպես էլ Մոնոբազոսը և նրա որդին՝ Իզատեսը ոչ միայն օգնություն էին ստացել հրեաներից, այլև դարձել էին նրանց սիրելին։

Ինչպես հետո կտեսնենք, Հայաստանում, Ատրպատականում, Օսրոյենում ևս պարթև այս Արշակունիներին հաջողվում է իրենց հարազատներին բազմեցնել այդ գահերին, և արդյունքը լինում է այն, որ որոշ պատմիչներ շփոթելով իրականությունը, նույնացրել են այս թագավորությունները։

2. ՄՈՆՈԲԱԶՈՍ ԵՎ ԻԶԱՏԵՍ

Թե ե՞րբ էր Մոնոբազոսը նստել Ադիաբենի թագավորական գահին, ամեն հայտնի չէ, սակայն նրա մասին եղած տեղեկություններից կարելի է ենթադրել, որ դեռ պարթևների Արտավան Գ-ի գահակալությունից առաջ՝ մ. թ. 12 թ., գտնվել է իշխանության գլուխ։ Աղբյուրներում կան տեղեկություններ այն մասին, որ երբ Արտավան Գ-ն գրավեց պարթևների թագավորական իշխանությունը, իր հակառակորդներին ոչնչացնելուց հետո, կարողացավ իր տիրապետության տակ գտնվող թագավորական գահերին բազմեցնել իր հարազատներին ու ազգականներին։ Այսպես, գիտենք, որ նա Ատրպատականի գահը հանձնեց իր որդի Որոդեսին և այլն...[12]։ Ինչ վերաբերում է Ադիաբենին, նա այնտեղ ոչ մի փոփոխություն չի կատարել[13], նկատի ունենալով, որ Մոնոբազոսն իր հարազատներից էր և ամեն ինչ արել է, որպեսզի նա հասնի վերջնական հաղթանակի։ Ահա թե ինչ է գրում Հովսեպոսը Մոնոբազոսի և նրա կնոջ՝ Հելենեի մասին. «Նա (Մոնոբազոսը) Հելենեից ուներ մի ավագ որդի, որին Մոնոբազոս էր անվանել և ուրիշ կանանցից ևս ուներ երեխաներ, բայց նրա նախընտրածը Իզատեսն էր, կարծես նա միակ որդին լիներ»[14]։

Զարմանալի է ու Արևելքի համար անսովոր այս հատուկ ուշադրությունը, որովհետև մինչև այսօր միշտ էլ թագաժառանգ է համարվել ավագ որդին։ Հավանաբար այս օրինազանցությունը արդարացնելու հա-

---

12 *Josephus*, Jewish Antiquities, XVIII p. 52.

13 Նույն տեղում, XX, 32—37, էջ 467։

14 Նույն տեղում, XX, I, էջ 399։

մար էլ հորինվել են Իզատեսի ծնունդի հետ կապված «հրաշքները», որ իբր Իզատեսը նախախնամության շնորհիվ է արժանանում թագաժառանգի պատվին[15]: Բայց, անշուշտ, այս հրաշքները Իզատեսի եղբայրների համար նշանակություն չեն ունենում, և նրանք, տեսնելով իրենց հոր խորական վերաբերմունքը, ատելությամբ են լցվում նրա նկատմամբ և նախանձում իրենց եղբորը[16]:

Մոնոբազոսն անհանգստացած եղբայրների նախանձից ու ատելությունից և մտածելով, որ նրանք կարող են վնասել Իզատեսին, վերջինիս տալիս է շատ նվերներ և ուղարկում Խարաքս-Սպասինիի թագավոր Աբեններիգոսի մոտ[17]: Խարաքս-Սպասինին գտնվում էր Պարսից ծոցի ափին՝ Տիգրիսի գետաբերանին, այժմյան Քուվեյթի տեղում. սա Խարաքս կամ Խարաքենե փոքրիկ թագավորությունն էր, որտեղ իշխում էր Արշակունիների մի ճյուղը[18]:

Աբենններիգոսից մեզ հասած դրամները մասնագետներին բերել են այն եզրակացության, որ նա Խարաքսում թագավորել է մ. թ. 5—21 թթ.[19], ուստի պիտի կարծել, որ Իզատեսն այնտեղ է գնացել այդ տարիներին, և եթե, ինչպես հետո կտեսնենք, Իզատեսը ծնվել է մ. թ. ա. 3 կամ 2 թ., ապա Աբենններիգոսի մոտ, հավանաբար, գնացել է 14 կամ 15 տարեկանում, այսինքն՝ մ. թ. 17 կամ 18 թվին:

Աբենններիգոսը, ինչպես գրում է պատմիչը, Իզատեսին սիրով է ընդունում և այնքան է հավանում, որ իր դուստր Սիմակոսին[20] ամուսնացնում է նրա հետ[21]: Խարաքսի թագավորը փեսային մեծ եկամուտով ապահովելու համար նրան նվիրում է հողային մի մեծ տարածություն[22]:

Նույն աղբյուրից իմանում ենք, որ երբ Մոնոբազոսը ծերացել էր և մահից առաջ ուզում էր տեսնել որդուն, լուր է ուղարկում, և նա գալիս է հորը տեսության: Հայրը նրան ջերմորեն է ընդունում[23]: Բայց ուշա-

---

15 *Josephus*, Jewish Antiquities, XX, I, p. 399.

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, էջ 400:

18 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 775:

19 *Josephus*, Jewish Antiquitiies, p. 400.

20 Այս անունը տարբեր ձևագրիրում հանդիպում է տարբեր ձևերով. «Սամակոս, Ամակոս, Սիմակո»: Ասորերեն նշանակում է «վերատեղծյալ»: Արդյո՞ք դիցաբանական կամ կրոնական ծագում ունի, դժվար է ասել: Այս մասին տե՛ս ծանոթագրություն *Josephus*, Jewish Antiquities, p. 400.

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

դրավն այն է, որ հայրը որդուն մի կալվածք նվիրելով, նորից երկրից դուրս է ուղարկում, չնայած նա գիտեր իր մոտալուտ մահը։ Նախ հարց է առաջանում՝ եթե ուղարկելու էր, ինչո՞ւ կանչել տվեց, և եթե ինքը գիտեր, որ մահանալու է, ինչու թագաժառանգին երկրից դուրս ուղարկեց։ Այս հարցերի պատասխանը գտնել աղբյուրներում հնարավոր չէ, միայն պիտի ենթադրել, որ թագավորը մոռացել էր, թե հարմար ժամը դեռ չէր հասել։ Իր մտադրությունը իրագործել հնարավոր չեղավ և ներքին երկպառակությունների առիթ չտալու համար, Իդատեսին նվիրեց իր կալվածքներից մեկը և ուղարկեց այնտեղ։ Այդ կալվածքը, ինչպես բնագրում է ասված, «Կարրոնի» մարզն էր[24]։

Որտե՞ղ էր այս Կարրոնի մարզը՝ մասնագետները մինչև հիմա դժվարացել են որոշակի պատասխան տալ։ Ոմանք այն նույնացրել են Խառանի կամ Կարհայի հետ։ Բայց գերմանացի հայագետ Մարկվարտը, իր ուսումնասիրության մեջ անդրադառնալով այդ հարցին, ցույց է տվել, որ նման վարկածը անհավանական է, որովհետև Խառանը Ադիաբենի մեջ չէր մտնում և նրա մասը չէր կազմում։ Բնականաբար, նա չէր կարող այդպիսի մի երկիր նվիրել իր որդուն։ Իր հերթին Մարկվարտը ենթադրում է, որ Կարրոնը նույն Կորդվենն է, այսինքն՝ Կորդվաց աշխարհը[25]։ Գերմանացի գիտնականը իր այս ասածը հաստատելու համար վկայակոչում է Հովսեպոսի այն տեղեկությունները, որոնց համաձայն այդ մարզը «շատ մեծ տարածությամբ հիանալի հող ուներ ամոմումի (հնդկական պղպեղի)[26] մշակման համար», նաև, որ «այդ մարզում էին պահված Նոյի տապանից մասունքներ, որոնց միջոցով նա (Նոյը) փրկվել է ջրհեղեղից, և մինչև օրս էլ, դրանք՝ մասունքները, հետաքրքրվողներին ցույց են տալիս»[27]։ Իսկապես, ինչպես ասորական, այնպես էլ հայկական ավանդության համաձայն, Նոյի տապանը ջրհեղեղից հետո նստել է Կարդու կամ Արարատու լեռան գագաթին, իսկ հայտնի է, որ Կարդու լեռը գտնվում էր Կորդվաց աշխարհում[28]։

---

[24] Նույն տեղում։

[25] *J. Marcquart*, Osteuropaïsche und Ostasiatische Streifzüge, 1903, p. 289 n. 4.

[26] Կոճապղպեղ, հնդկական պղպեղ, այդ մասին տե՛ս *Wagler*, „Amomum", Pauly-Wissowa, I, 1894, pp. 1873—1874.

[27] *Josephs*, Jewish Ant., p. 400, սույն բնագրի անգլերենի թարգմանիչը ևս համաձայն է Մարկվարտի հետ։

[28] «Կորդուք գաւառ—Կորճայք նահանգի 1-ին գավառը՝ 5825 կմ² տարածությամբ, լեռնային երկիր՝ Ջերմ և Փոքր Խաբուր գետերի միջև։ Այս գավառը Քսենոֆոնի մոտ հիշվող Կարդուխների (Καρδοῦχοι) երկիրն է, հուն. Καρδυηνή, Τορδιγνή, լատ. Cor-

Նշված այս փաստը խոսում է հօգուտ գերմանացի գիտնականի: Գիտենք, որ Պոմպեոսի և Տիգրան Բ-ի միջև կնքված դաշինքի համաձայն, Կորդվաց աշխարհը հայկական թագավորության անբաժանելի մասն էր համարվում, և թեև դրանից հետո պարթևները մի քանի անգամ փորձել են այն գրավել ու անջատել Հայաստանից, բայց չի հաջողվել: Այսպես ուրեմն, եթե Կորդվաց աշխարհը Հայաստանի մասն էր կազմում, ապա ինչպե՞ս է, որ Մոնոբազոսը այն նվիրում է իր որդի Իզատեսին: Այստեղ Մարկվարտը տարվելով Նոյի տապանի մասունքների հետ կապված փաստի հետ, անուշադրության է մատնել պատմական ճշմարտությունը: Այնպես որ չենք կարող համաձայնել նաև գերմանացի գիտնականի այս առաջարկության հետ, և մնում է նորից Կարրոնի մարդը փընտրել մի այլ տեղում:

Արդյո՞ք Ադիաբենի թագավորները Կորդվաց աշխարհում ինչ-որ կալվածք ունեին, դժվար է ասել, բայց այդ կապակցությամբ կարելի է նշել մի այլ վկայություն, որ Ադիաբենի արքունիքը Հրեաստանում տեր է եղել կալվածների և բազում շինությունների ու պալատների:

Հովսեպոսն իր «Հրեական պատերազմ» գրքում[29] նկարագրում է Երուսաղեմի պարիսպներն ու դրանց շուրջ եղած ամրություններն ու շինությունները: Երուսաղեմի երրորդ պարսպի մասին ասում է. «Երրորդը սկսվում էր Հիպպիկոսի աշտարակից, որը տարածվում էր մի ժամանակ մինչև Պսեփինոսի աշտարակի հյուսիսային կողմերը և ապա իջնում Հեղինեի (Ադիաբենի թագուհու՝ Իզատես թագավորի դստեր)[30] հուշարձանի դիմաց, և շարունակվում է թագավորական քարայրների (հավանաբար նկատի ունի թագավորական. գերեզմանները) առջևով, թեքվում անկյունային աշտարակի դիմաց, որը կոչվում է Թափիչի գերեզման և միանում հին պատնեշին, որը վերջանում է Կեդրոն կոչված ձորով»[31]: Խոսքը այստեղ ոչ միայն ձորի, այլև կալվածքի ու Հեղինե

---

duenae, առանձին թագավորություն էր Փինակա մայրաքաղաքով (այժմ՝ Փինիկ գյուղ), որը նվաճեց Տիգրան Մեծը և այնուհետև դարձավ Մեծ Հայքի անբաժանելի մասը: Ասուրա-բաբելական աղբ. Kurti, որ սովորաբար կարդում են Ḫabḫi կամ Babḫi: Կորդվաց գավառում էր Աբարաղ սարը (ասուրաբաբել. Arartu), որի հարավային ստորոտում գտնվում էր Թման (Թմնիս) վայրը: Մարաբոնը վերջինիս անունով կորդուքը կոչում էր նաև Ταμονιτις, որ ասուրաբաբելական արձանագրությունների Tumni երկիրն էր: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 60:

[29] *Josephus*, The Jewish war, p. 244.

[30] Հեղինեն ոչ թե Իզատեսի դուստրն էր, այլ մայրը:

[31] *Josephus*, The Jewish war, trans, H. J. Thackeray, London, 1967. Այս գիրքը նախապես գրել է արամերեն և հետագայում այն ինքն էլ թարգմանել է

թագուհու հուշարձանի մասին է։ Այս հուշարձանի վերաբերյալ իր նույն աշխատության մեջ պատմիչը գրում է, թե ինչպես, երբ հռոմայեցի զորավար Տիտոսը զորքով մոտեցավ պարսպին, «դարպասների առաջ ոչ ոքի չպատահեց, բայց երբ թեքվեց ճանապարհից և առաջնորդեց ձիավոր զորքը կողմնակի մի ճանապարհով դեպի Պսեփինոսի աշտարակը, հանկարծ հրեաները մեծ բազմությամբ հարձակվեցին «Կանանց աշտարակների» մոտ այն դարպասի միջով, որը նայում էր Հելինեի հուշարձաններին»[32]։ Նույն այս ապստամբության մասին Հովսեպոսը պատմում էր, որ «երբ հռոմայեցի զորավար Տիտոսը իր բանակով շարժվեց Երուսաղեմի վրա, հրեաները, իրենց զորքի հրամանատար Սիմոնի գլխավորությամբ, անցել էին ինքնապաշտպանության, և ինքը՝ Արինոսի որդի Սիմոնը պաշտպանում էր քաղաքի (Երուսաղեմի) վերին մասը, այսինքն՝ Մեծ պարիսպը (3-րդ պարիսպը) մինչև Կեդրոն, և հին պարսպի մի մասը, այնտեղից, որ թեքվում է Սելոամի արևելյան կողմը, (այնտեղ) որտեղ գտնվում էր Եփրատից այն կողմ (բնակվող) Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի ապարանքը. նա պահում էր նաև աղբյուրի[33] և Ակրայի մի մասը, այսինքն՝ քաղաքի ներքնամասը, մինչև Մոնոբազոսի մայր՝ Հելինեի[34] պալատը»[35]։ Հովսեպոսի այս վկայություններից այնպես է երևում, որ Ադիաբենի արքայական տունը Երուսաղեմի պարսպի երկայնքով ունեցել է ընդարձակ մի կալվածք, որի վրա կառուցել էին բաղում շինություններ, նույնիսկ՝ թագավորական պալատ։ Տիտոսի նույն արշավանքի կապակցությամբ պատմիչը նորից գրում է, որ Հռոմայեցի զորավարը մ. թ. 70 թ. սեպտեմբերին Երուսաղեմը դրավելուց հետո, զորքին հրամայեց քաղաքն այրել ու կողոպտել[36]։ Հռոմայեցի զինվորները հաջորդ օրը կրակի տվեցին քաղաքային վարչության շենքը՝ Ակրան, ժողովատեղին, և այն շրջանը, որը Օփլաս էր կոչվում,

---

հունարեն։ Երրորդ պատի պարսպի ուղղությունը Պսեփինոսի պատից հետո անորոշ է, ոմանք այն նույնացնում են այժմյան հյուսիսային պարսպի հետ, ուրիշներն ընդգրկում են ավելի լայն տարածություն, անցնում հյուսիսից ավելի հեռու։ 1926 թ. պեղումները խոսում են հօգուտ վերջին կարծիքի։ Տե՛ս նույն տեղում, V, 147—153, էջ 244, ծնթ. ա, և նաև V, 51—58, էջ 217։

[32] Նույն տեղում։

[33] Հավանաբար, այստեղ նկատի ունի Սելոամի (ջրի) աղբյուրը։

[34] Անկասկած, խոսքը Հելինե թագուհու ավագ որդի Մոնոբազոսի մասին է։

[35] *Josephus*, Jewish war, V, 250—255, p. 279.

[36] Նույն տեղում։

բոցը տարածվեց մինչև Հեղինե թագուհու պալատը, որը Ակրայի կենտրոնում էր[37]։

Ի մի բերելով այս տեղեկությունները, տեսնում ենք, որ Ադիաբենի թագավորները ոչ միայն Երուսաղեմի մոտակայքում կալված են ունեցել, այլ այդ կալվածում, հետագայում, Հեղինե թագուհու և նրա որդիների՝ Իզատեսի և Մոնոբազոսի օրոք, կառուցվել են հոյակապ շինություններ ու պալատներ։ Ճիշտ է, աղբյուրը ոչինչ չի ասում, բայց որոշ փաստեր նկատի ունենալով, կարելի է ենթադրել, որ գուցե Իզատեսը հատուկ ուշադրություն էր դարձրել այդ կալվածին, որովհետև Խարաքս Սպասինիում նա ընդունել էր «հրեական» կրոնը և, բնականաբար, հրեաների երկրի հետ շփումը իրեն հաճելի էր, մանավանդ, որ հրեաները այն ժամանակ ամեն տեղ՝ հայրենիքում, թե սփյուռքում, հակահռոմեական իրենց ձգտումներով ու գործունեությամբ ուղիներ էին որոնում պարթևների, Ադիաբենի և պարթևական տիրապետության մեջ մտնող այլ փոքր թագավորություններում, բարձր խավի ու հասարակ ժողովրդի շրջաններում ամուր հենարան գտնել՝ դիմադրելու համար հռոմեական նվաճողական քաղաքականությանը։ Դրանով էլ պիտի բացատրել «հրեական կրոնի» քարոզչության աշխուժացումը այս երկրներում։ Բացառված չէ նաև, որ Իզատեսը ինքը անձամբ առաքելությամբ եղած լիներ այնտեղ այդ կապերը ամրապնդելու նպատակով։

3. ՀԵՂԻՆԵ ԹԱԳՈՒՀՈՒ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻ ԻԶԱՏԵՍԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՆՈՐ ԿՐՈՆԸ

Ինչպես գրել ենք, Խարաքս Սպասինիում Իզատեսի ապրած ժամանակ «ինչ որ հրեա վաճառական՝ Անանիա անունով, այցելել էր թագավորի կանանց և, հրեական սովորության համաձայն, նրանց սովորեցրել էր պաշտել աստծուն։ Նրանց միջոցով էլ նա (Անանիան) կարողացել էր Իզատեսի ուշադրությունը գրավել և նրան հավատափոխ անել»[38]։

Աղբյուրներում տեղեկություններ կան հրեա, հիմնականում քրիստոնյա քարոզիչների առաջին դարում ծավալած քարոզչական գործունեության վերաբերյալ։ Եվ, իսկապես, քարոզչական աշխատանքներն այն ժամանակ մեծ չափերի էին հասել և այդ աշխուժացումը պիտի կա-

37 Նույն տեղում։

38 *Josephus*, Jewish Antiquities, XX, 32—37, p. 407.

պել այն երևույթի հետ, որ հրեաները սկսել էին ո՛չ միայն արևելյան երկրների տնտեսական կյանքում կարևոր դեր խաղալ, այլ նաև իրենց հակահռոմեական տրամադրություններով ու գործունեությամբ վայելել արևելյան որոշ արքունիքների համակրանքը: Բացի այդ, շփվելով ու գործելով Արևելքի առևտրական ու արհեստավորական լայն խավերի ներկայացուցիչների հետ, իրենց քարոզած նոր վարդապետությամբ ճնշված լայն մասսաներին կոչ էին անում պայքարելու սոցիալական անարդարությունների դեմ: Մեզ հասած քրիստոնեական վաղագույն գրականության մեջ քարոզչական այս աշխատանքներն ամբողջությամբ վերագրվել են քրիստոնյա առաջին քարոզիչներին՝ Քրիստոսի տասներկու առաքյալներին և նրանց 70 աշակերտներին: Սակայն իրականում քրիստոնեությունն այն ժամանակ կազմավորված ամբողջական մի վարդապետություն չի եղել, այլ եղել է հրեական որոշ համայնքների ու վարդապետությունների ազդեցության տակ գտնվող մի աղանդ, հրեական նոր վարդապետություն, ավելի ճիշտ՝ հրեական աղանդավորական մի վարդապետություն, որ մովսիսական կրոնի նեղ ազգային գծերին հակադրվելով, շեշտը դրել էր մարդու և սոցիալական ցածր խավերին ազատագրելու ուղիների վրա: Համենայն դեպս, քրիստոնեական այս վարդապետությունը մեր թվականության երկրորդ դարում դուրս է գալիս հրեական իր շրջանակներից և ճանաչվում որպես ինքնուրույն կրոն: Դրա համար էլ, մեր կարծիքով, Հովսեպոսը վաղ շրջանի այդ վարդապետությունը անվանում է «հրեական»: Անշուշտ, այն հրեական էր, բայց ոչ մովսիսական, որովհետև Մովսիսական կրոնը, ինչպես հայտնի է, կազմավորվել էր հրեա ժողովրդին փրկելու և Դավթի թագավորությունը վերականգնելու սկզբունքների հիման վրա և, բնական էր, որ այդ կրոնի մեջ խոսք չէր կարող լինել ոչ հրեա ժողովուրդներին ազատագրելու մասին: Դրա համար էլ մովսիսականությունը ազգային իր նեղ գաղափարախոսությամբ արդեն մեր թվականության սկզբներին չէր բավարարում բազում հրեաների, մանավանդ այն բազմահազար հրեաներին, որոնք սփռվել էին աշխարհով մեկ և այլ ժողովուրդների ցածր խավի ներկայացուցիչների հետ միասին գտնվում էին տնտեսական և սոցիալական ծանր վիճակում:

Անհրաժեշտ էր, ուրեմն, մի նոր գաղափարախոսություն կամ վարդապետություն, որ կարողանար իր շուրջը համախմբել ոչ միայն հրեաներին, այլև այլ ազգերի ներկայացուցիչների՝ Հռոմի դեմ ազատագրական պայքար մղելու և սոցիալական անարդարությունների դեմ պայքարելու համար:

Ահա այս կարիքները բավարարելու, հատկապես սոցիալական ծանր վիճակը վերափոխելու հողի վրա, մովսիսականությունից[39] և Հրեաստանում գործող կրոնական այլ կազմակերպություններից ու համայնքներից[40] ծնվում է քրիստոնեությունը, որը հրեական կրոնական այս վարդապետություններից տարբերվում էր նրանով, որ իր «արքայության դռները» բացում էր նաև ոչ հրեաների, այսինքն՝ այլ ժողովուրդների առաջ։ Խարաքս Սպասինիում, Ադիաբենում, Անտիոքում, Նգեսիայում և այլ վայրերում քարոզված հրեական կրոնը քրիստոնեական այս վարդապետությունն էր, որովհետև հրեական կրոններից միայն սա էր, որ քարոզվեց Հրեաստանից դուրս, այլ ժողովուրդների մեջ։ Անշուշտ, քրիստոնեության վաղ շրջանում, այս վարդապետությունն ավելի շատ հրեական էր և իր հիմքում խտացնում էր սփյուռքում ապրող հրեաների երազանքներն ու ձգտումները, սակայն հետագայում, հատկապես մ. թ. I դ. երկրորդ կեսից այն մաքրազերծվեց հրեական, ավելի ճիշտ, ազգային իր նեղ սկզբունքներից և ստացավ համամարդկային, հիմնականում՝ սոցիալական նոր երանգավորում, որովհետև քրիստոնեության հետևորդների ճնշող մեծամասնությունն այլևս հրեաներ չէին։ Ինչ վերաբերում է Հեղինե թագուհուն, Իզատեսին և մյուսներին, համոզված ենք, որ նրանք այս «հրեական» կրոնը՝ «քրիստոնեական նոր վարդապետությունն» էին ընդունել։

Հրեա այս քարոզիչները բավական մեծ հաջողություններ են ունեցել և, կարծում ենք, որ քրիստոնեության առաջին կենտրոններից և կարևոր օջախներից մեկը եղել է Ադիաբենը։ Այդ գործում, անշուշտ, մեծ ավանդ են դրել Հեղինե թագուհին և Իզատեսը, և փոխադարձ կապերը այնքան են սերտացել հրեաների ու ադիաբենցիների միջև, որ հետագայում, 66 թ. հրեական ապստամբության ժամանակ, Հովսեպոսի վկայությամբ, հրեաները մեծ հույսեր էին կապել ադիաբենցիների օգնության հետ։ Ազնվական ծագումով, բարձր հասարակության ներկայացուցիչ Հովսեպոսը, ինչպես նշել ենք, քաղաքական իր հայացքներով Հռոմի կողմն էր, և գիտենք, որ հռոմեացիների թելադրանքով, մ. թ. 66 թ. նա ճրուսաղեմ էր եկել, որպեսզի կանխի հրեաների՝ Հռոմի դեմ

---

[39] Մովսիսական կրոնը հրեական էր, իսկ այդ կրոնի ամենապահպանողական թևը, որը ոչ մի զիջում չէր հանդուրժում, փարիսեցիությունն էր։ Քրիստոնեությունը, ինչպես գիտենք, առաջին իր սլաքը ուղղել էր փարիսեցիության դեմ։

[40] *И. Амусин*, Тексты Мертвого моря, Москва, 1961: *И. Амусин*, Тексты Кумрана, Москва, 1971; *М. Елизарова*, К вопросу об общине Терапевтов, „Ученые записки", Горький, 1965; *М. Елизарова*, Терапевтов, Москва, 1972.

նախապատրաստած ապստամբությունը: Հայրենիք եկած պատմիչը նկատում է իր ժողովրդի կյանքում առաջացած տրամադրությունները և հասկանում, որ նրանք հույսը կապել են պարթևների և մանավանդ «հավատակից»[41] ադիաբենցիների վրա: Հովսեպոսը իր գործունեությամբ աշխատում էր իր հայրենակիցներին համոզել, որ նման օգնություն սպասել Ադիաբենից, անհնարին է, ուստի պետք է լեզու գտնել հռոմայեցիների հետ: Այդ առթիվ իր խոսքն ուղղելով նրանց, ասում է. «Ինչպիսի՞ դաշնակիցներ կարող ենք ունենալ այս պատերազմում, մի՞թե զորք ենք հավաքելու անմարդաբնակ վայրերից, որովհետև բնակեցված վայրերում բոլորը հռոմայեցիներն են. գո՞ւցե հույս ունեք Եփրատից այն կողմ՝ Ադիաբենում ապրող հավատակիցների օգնության վրա, բայց նրանք չեն կարող օգնել, որովհետև ինչ-որ չնչին պատճառով նրանք կրնկկնեն յուրջ պատերազմի մեջ և եթե նրանք նման անմտություն չեն պատկերացնում, ապա պարթևը նրանց թույլ չի տա»[42]: Հովսեպոսն իր այս հռոմեասեր քաղաքականության համար լավ վարձատրություն առացավ, և Վեսպասիանոս, Տիտոս և Դոմետիանոս կայսրերը նրան համարեցին «Հռոմի լավ բարեկամ»:

Այժմ ծանոթանանք Իզատեսի հավատափոխության հետ կապված որոշ մանրամասնություններին: Իզատեսը Խարաքս Սպասինիում հրեա Անանիա վաճառականի շնորհիվ ընդունել էր հրեական կրոնը[43], և մեկնելով հայրենիք՝ հորը տեսնելու, իր հետ տարել էր նաև Անանիային[44]: Հայրենի տանը, ի զարմանս իրեն, իմանում է, որ մայրը ևս՝ Հեղինեն, մի այլ հրեա քարոզչի շնորհիվ հավատափոխ է եղել և ընդունել նոր կրոնը՝ հրեությունը[45]:

Թե ո՞վ էր այդ հրեան, որ քարոզել էր Ադիաբենում և կարողացել Հեղինե թագուհուն հավատափոխ անել, պատմիչը, ճիշտ է, այստեղ ոչինչ չի ասում, սակայն երբ նկարագրում է Իզատեսի թլփատության հարցի առիթով սկսված վեճը, տալիս է գալիլիացի Եղիազարի անունը[46]: Ուրեմն, եթե Անանիան քարոզել է Խարաքս Սպասինիում, ապա Ադիաբենի առաջին քարոզիչն է եղել գալիլիացի Եղիազարը:

---

41 Բնագրի անգլերեն թարգմանիչը թարգմանել է «Kinsmen», այսինքն՝ «հավատակից» և ոչ թե «հայրենակից»: Տե՛ս Josephus, The Jewish war, II, p. 475

42 Josephus, The Jewish war, II, 389—395, p. 477.

43 Josephus, Jewish Ant., XX, 32—37, p. 407.

44 Նույն տեղում, XX, 37—41, էջ 409:

45 Նույն տեղում:

46 Ավետարաններից իմանում ենք, որ Քրիստոսը մեծ մասամբ գործել է Գալիլիայի լճի ափին, և նրա առաքյալներից ոմանք գալիլիացիներ էին:

Համենայն դեպս, Իզատեսն իր այցելության ժամանակ երկար չի մնում հայրենի տանը և իր ուղեկիցների հետ մեկնում է իրեն հատկացված նոր բնակավայրը՝ Կարրոնի մարզը: Նրա մեկնումից որոշ ժամանակ անց, հայրենիքում կարևոր իրադարձություններ են կատարվում, մահանում է նրա հայրը՝ Ադիաբենի թագավոր Մոնոբազոսը: Այդ իրադարձությունների մասին Հովսեպոսը պատմում է. «Այն օրը, երբ Մոնոբազոսը այս կյանքից հեռացավ (մահացավ), Հեղինեն թագուհին լուր ուղարկեց թագավորության բոլոր հայտնի մեծամեծներին, սատրապներին և բոլոր նրանց, ովքեր իրենց դինվորական պարտքն էին կատարում (որ նրանք հավաքվեն): Նրանց գալուց հետո, ասաց նրանց. «Ես կարծում եմ՝ դուք անտեղյակ չեք, որ իմ ամուսինը ցանկանում էր, որ Իզատեսը հաջորդի իրեն և այդ պատվին նրան էր արժանի համարում. սակայն ես սպասում եմ ձեր որոշումին: Որովհետև օրհնյալ է նա, ով իր թագավորությունը ստանում է ոչ թե մեկ, այլ բազում ձեռքերից, որոնք կամավոր տալիս են իրենց համաձայնությունը: Նա ասաց (այս բոլորը) փորձելու համար նրանց տրամադրությունը, որոնց նա կանչել էր իր մոտ»:

Հետաքրքիր են Հովսեպոսի հաղորդած վերոհիշյալ մանրամասնությունները, որոնք, անկասկած, գրվել են շեշտելու համար Հեղինե թագուհու՝ Ադիաբենի ավագանու շրջանում ունեցած հեղինակությունն ու արժանիքները. հատկապես այն հարցում, որ նա նախապատվություն է տալիս այն թագավորին, որն իր թագը ստանում է ոչ թե մեկ, այլ բազում ձեռքերից: Իսկապես, սա իր ժամանակի համար խոշոր ու կարևոր միտք էր: Այս ոգով էլ պատմիչը շարունակում է դեպքերի նկարագրությունը. «Նրանք լսելով նրա խոսքը, ամենից առաջ, ըստ սովորության, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին թագուհուն և պատասխանեցին, որ իրենք համաձայն են թագավորի որոշմանը և պատրաստ են ուրախությամբ ենթարկվելու Իզատեսին, որին իրավացիորեն հայրը նրա եղբայրների միջից նախընտրել էր: Նրանք ավելացրին, որ նախ ուզում են նրա (Իզատեսի) եղբայրներին ու հարազատներին սպանել, որպեսզի Իզատեսը բոլորովին ապահով բազմի գահին, որովհետև, եթե նրանք չոչնչացվեն, ապա Իզատեսի նկատմամբ ատելությամբ ու նախանձով կարող են լցվել և հետո նրան վնասել: Հեղինեն իր երախտագիտությունը հայտնեց Իզատեսի նկատմամբ ցուցաբերած բարյացակամության համար, բայց և այնպես նա խնդրեց հետաձգել (նրա) եղբայրներին մահվան դատապարտելու որոշումը մինչև Իզատեսի գալը: Երբ նրանց (նախարարներին) չհաջողվեց սպանել տալ եղբայրներին, ապա նրան (Հեղինեին) համոզեցին, որ ապահովության համար առնը-

վազն (եղբայրներին) պահի բանտում։ Նույնպես նրան (Հեղինեին) խորհուրդ տվեցին, որ մինչև նրա (Իզատեսի) գալուստը թագավորության խնամակալ նշանակի ում որ ամենից շատ է վստահում։ Հեղինեն համաձայնվեց իր ավագ որդի Մոնոբազոսին թագավոր նշանակել։ Դնելով թագը գլխին և տալով նրան հոր արքայական մատանին և այն, ինչ որ նրանք անվանում են սամպսերան'[47] հորդորեց նրան, որ մինչև եղբոր գալը ղեկավարի թագավորությունը»[48]։

Հովսեպոսի այս տեղեկությունները, ինչպես դժվար չէ կռահել, ավելի շատ զրույցների են նման, քան թե պատմական փաստերի։ Կարևորը, փաստականը մեզ համար այն է, որ Հեղինեի ամուսնու մահվան ժամանակ Իզատեսը հայրենիքից շատ հեռու էր գտնվում, և Հեղինեն նախարարների հետ միասին որոշում է ժամանակավորապես թագավոր նշանակել Իզատեսի ավագ եղբայր Մոնոբազոսին։ Համոզիչ չէ, անշուշտ, որ Մոնոբազոսին թագավորական իշխանություն են հանձնում միայն նրա համար, որ Իզատեսը երկրից հեռու էր։ Կարծում ենք, որ տարաձայնություն է եղել Հեղինե թագուհու և նախարարների միջև։ Թեև պատմիչը լռում է, սակայն նրա տողերից զգացվում է այդ, և եթե ոչ բոլոր նախարարները, համենայն դեպս մեծամասնությունը պահանջել են պահպանել օրինականությունը և, ընդունված սովորության համաձայն, թագավորական իշխանությունը հանձնել օրինավոր թագաժառանգին՝ ավագ որդուն, և Հեղինեն ժամանակավորապես տեղի է տվել նախարարների ու ժողովրդի այդ պահանջին։ Այս ենթադրությունն ավելի հավանական է թվում, եթե նկատի ունենանք, որ հետագայում, երբ Իզատեսը նստել էր թագավորական գահին, տարիներ շարունակ նախարարների այդ խումբը փորձել է, և հետագայում նաև պարթևների օգնությամբ, գահընկեց անել Իզատեսին և Նէրից Մոնոբազոսին բազմեցրել է թագավորական գահին։

Մեր այս ենթադրությունից հետևում է, որ Հեղինեն իր որդի Իզատեսին հրավիրեց հայրենիք թագավորական իշխանությունը վերցնելու միայն այն ժամանակ, երբ ամեն ինչ նախապատրաստվել էր, և Մոնո-

---

[47] Կլեմենսը իր «Հրեական հնություններին» գերմաներեն թարգմանության մեջ ծանոթագրել և հետևյալ բացատրությունն է տվել. «սամպսա» արաբների մոտ նշանակում է «արև», և «սամպսերան» ոսկյա վահան է արևի ձևով, որը թագավորները կրում էին որպես իշխանության խորհրդանշան»։ Տե՛ս Josephus. Jewish Ant., XX, 32—37, p. 406.

[48] Նույն տեղում, էջ 405—406։

բազոսը հասկանալով, որ այլևս ամեն մի դիմադրություն անիմաստ է, գահը զիջում է եղբորը՝ Իզատեսին[49]։

4. ԱԴԻԱԲԵՆՆ ԻԶԱՏԵՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

Իզատեսը վերադառնում է հայրենիք ու տիրում Ադիաբենի թագավորական գահին։ Նախ ուզում ենք պարզել, թե ե՞րբ է մահացել Իզատեսի հայր Մոնոբազոսը, և ե՞րբ է Իզատեսը վերադարձել Ադիաբեն ու տիրացել գահին։

Հովսեպոսից իմանում ենք, որ Իզատեսը մահացել է 55 տարեկան հասակում և թագավորել է 24 տարի[50]։ Եթե այդպես է, ուրեմն՝ Իզատեսը գահ էր բարձրացել 31 տարեկան հասակում։ Նույն պատմիչը գրել է, որ երբ պարթևների Վաղարշ Ա թագավորը նստեց գահին, Ադիաբենի նախարարներն ու մեծամեծները նրան դիմեցին ու խնդրեցին նրա օգնությունը Իզատեսին գահընկեց անելու համար։ Վաղարշ Ա-ն նրանց խնդրանքին ընդառաջելով, մոտավորապես մ. թ. 52 թ., ճիշտ տարին չի նշված, իր բանակով արշավում է Ադիաբենի վրա։ Այս արշավանքից մոտ մեկ կամ երկու տարի հետո մահանում է Իզատեսը։ Եվ եթե մեր հաշվումները ճիշտ են, ապա պիտի ասել, որ նա ծնվել է մ. թ. ա. 3 կամ 2 թ. և մահացել է մ. թ. 53 կամ 54 թ.։

Մեզ մնում է պարզել, թե ինչքան ժամանակ է Իզատեսի ավագ եղբայրը՝ Մոնոբազոսը, գահի վրա մնացել։ Այդ մասին ոչ մի տեղեկություն չունենք և, տվյալ դեպքում, բավարարվում ենք մոտավոր ենթադրությամբ, այն է՝ մեկ տարի։ Եվ եթե ճիշտ է, և Իզատեսը թագավորական իշխանությունը իր ձեռքն է վերցրել մ. թ. 28 կամ 29 թվին, ուրեմն՝ հոր մահն ու եղբոր իշխանությունը պետք է դնել 26 կամ 28 թվին։

Այժմ շարունակենք ծանոթանալ Հովսեպոսի մյուս տեղեկություններին։ Նա պատմում է, որ երբ Իզատեսը վերադարձավ հայրենիք, տեսավ, որ իր եղբայրներն ու հարազատները շղթաների մեջ են։ Ամբարշտություն համարելով նրանց սպանելը կամ շղթաների մեջ պահելը, նա միևնույն ժամանակ մտածում էր, որ վտանգավոր է նրանց իր մոտ պահելը։ Այդ զգացմունքից ազատվելու համար, նա ոմանց որպես պա-

---

[49] *Josephus* Jewish Ant., XX, 32—37, p. 407.

[50] Նույն տեղում։

տանդ, իրենց երեխաների հետ միասին, ուղարկենք Հռոմ՝ Կլավդիոս կայսեր մոտ, և ոմանց էլ՝ պարթևների թագավոր Արտավանի մոտ»:

Հովսեպոսի այս վկայության վերջին տողերը մեզ մի քիչ անբնական են թվում, որովհետև Իզատեսն իր գործունեությամբ, ինչպես հետագա դեպքերն են ցույց տալիս, պարթևական արքունիքին մոտ էր կանգնած և դժվար թե իր եղբայրներին ընտանիքներով պատանդ ուղարկեր Հռոմի կայսեր մոտ, որովհետև նման արարքը կարող էր կասկած առաջացնել պարթևների մեջ, այնպես որ Հովսեպոսը, ինչպես ասել ենք, հռոմեասեր իր վերաբերմունքից տարված սխրած հերոսին այդպես է պատկերել: Փաստերը հօգուտ նրա չեն խոսում, եթե նկատի առնենք, որ Իզատեսը Արտավան Գ-ի հետ եղել է մտերմական կապերի մեջ: Այն ժամանակ հրեաները պարթևական տերության և մյուս Տարևան երկրների տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալից դեր էին խաղում և իրենց գործունեությամբ օգնում Արևելքի այս ժողովուրդների կյանքում հակահռոմեական տրամադրությունների ուժեղացմանը: Հրեաներն իրենց այդ գործունեության ընթացքում հենվում էին ոչ միայն արևելյան արքունիքների հետ համագործակցող իրենց կողմնակիցների, այլ նաև վերոհիշյալ երկրներում ապրող սոցիալական ծանր դրության մեջ գտնվող տարրերի վրա: Այս կապակցությամբ արժե հիշատակել Հովսեպոսի այն վկայությունը, որը վերաբերում է երկու հրեա եղբայրների գործունեությանը. «Այժմ կային երկու եղբայրներ՝ Ասինայոսն ու Անիլայոսը, որոնք բնիկ Նեարդայից[52] էին: Հոր մահից հետո, մայրը նրանց հյուսել սովորեցրեց, որովհետև այդ երկրի բնակիչների մոտ, տղամարդու համար բուրդ գործելը անպատվություն չէր համարվում: Մի օր, վարպետը, որից արհեստն էին սովորել, գործի ուշ գնալու համար նրանց պատժեց ծեծելով: Եվ որովհետև նման պատիժը իրենց արժանապատվության դեմ համարեցին, նրանք տան կտուրում պահված զենքերի մի մասը դուրս բերեցին (զինվեցին) և գնացին այն վայրը, որ կոչվում էր «Գետերի արոհում», այնպիսի մի լավ արոտավայր, որտեղից կարելի էր կանաչ խոտ կուտակել ձմռան համար: Ամենաչքավոր խավից երիտասարդներ հավաքեցին իրենց շուրջը և իրենք էլ (եղբայրները) դրանց զինեցին: Նրանք առանց դժվարության ու արգելքի գործում էին որպես (այդ շարժման) առաջնորդ ու ղեկավար: Երբ նրանք այնքան հզորացան, որ անպարտելի դարձան, իրենց համար

---

51 *Josephus*, Jewish Ant., XX, 32—37, p. 408.

52 Նեարդան Սիպպարից ոչ հեռու, Եփրատ ու Տիգրիս գետերի միացման տեղում է գտնվում:

ամրոց կառուցեցին և կարգադրեցին, որ հուվիվներն իրենց խաշներից այնքան հարկ վճարեն, որ իրենց գոյությունը կարողանան պաշտպանել: Իսկ փոխարենը առաջարկում էին բարեկամություն, միևնույն ժամանակ նրանց պաշտպանում էին բոլոր թշնամիներից և այն տերերից, որոնք փորձում էին նրանց (հարկը տալու) մերժումից հետո կոտորել խաշները: Բնակիչները ստիպված ենթարկվեցին, և պահանջված չափով անասուններ ուղարկեցին: Այսպիսով, նրանք այնքան ուժեղացան և այնպիսի դիրք գրավեցին, որ կարող էին հանկարծակի հարձակումով վնասել ում որ ուզեին: Բոլորը սկսեցին ենթարկվել նրանց և սարսափ էին դարձել բոլորի համար: Նրանց ուժի համբավը դուրս էր եկել տերության սահմաններից, նույնիսկ հասել էր պարթևների թագավորի ականջը»[53]:

Հետաքրքրական այս փոքր պատմությունը շատ արժեքավոր մի վկայություն է մ. թ. I դ. սոցիալական շարժումների վերաբերյալ, որովհետև աղբյուրներում քիչ տեղեկություններ կան նման ժողովրդական ելույթների մասին: Ճիշտ է, սկզբում այն կրել է տարերային բնույթ, սակայն գնալով իր շուրջն է համախմբել ցածր խավի ներկայացուցիչներին և վերածվել զինված ապստամբության: Այդ ապստամբությունը, սակայն, երկար չի տևում, որովհետև պարսիկների Արտավան Գ թագավորը հեռատես ու խորամանկ իր քաղաքականությամբ կարողանում է ոչ միայն չեզոքացնել այդ վտանգը, այլ նաև՝ ռազմական այդ կարևոր ուժը օգտագործել իր գահին թշնամի ներքին տարրերի դեմ[54]: *Սրանով էլ վերջ է դրվում այդ ժամանակի սոցիալական կարևոր շարժումներից մեկին:*

Սոցիալական շարժումների արտահայտության յուրահատուկ ձև էր նաև քրիստոնեական գաղափարախոսության տարածումը մ. թ. I դ. սկսյալ: Քրիստոնյա գործիչները իրենց վարդապետությունը քարոզելով, կարողանում էին համախմբել իրենց վիճակից դժգոհ տարրերին և հիմնել առաջին համայնքները, որոնք կազմված էին մեծ մասամբ կերպասագործներից, ջուլհակներից, մանր առևտրականներից, այսինքն՝ հատկապես արհեստավորներից: Այս կապակցությամբ արժե հիշել, որ Քրիստոսի յոթանասուն աշակերտներից Ադդան, որը Եդեսիա էր եկել քրիստոնեություն քարոզելու, իջևանել էր կերպասագործների ու կերպասի առևտրով զբաղվողների մոտ[55]: *Նրա հաջորդը՝ Ադգան նույնպես կերպա-*

[53] *Josophus*, Jewish Antiquities, XVIII, 314—318, p. 183.

[54] *Նույն տեղում, 323—379, էջ 187—211:*

[55] *Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Մելիոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (3—5 դարեր), Երևան, 1970, էջ 47:*

սագործ, կամ խուլրարար էր։ Ադիաբենի թագուհի Հելինեին և նրա որդի Իզատեսին քարոզողներից մեկը՝ Անանիան, առևտրական էր։ Նեարդայի երկու եղբայրները կերպասագործներ էին։ Այս, անշուշտ, պատահական երևույթ չէր, այն արտացոլում էր այդ շարժման մասնակիցների սոցիալական էությունը, սոցիալական կազմը։

Խոսելով արհեստավորների և ընդհանրապես քրիստոնեություն ընդունած ցածր խավի ներկայացուցիչների մասին, չպետք է մոռանալ, որ այդ շարքերն էին մտնում նաև բարձր խավին պատկանող անձնավորություններ, որոնք իրենց առանձին շահերն ունեին և ձգտում էին ըստեղծվող կրոնական այդ համայնքները ծառայեցնել իրենց նպատակներին։ Հովսեպոսը Հելինեի և Իզատեսի հավատափոխության մասին գրելիս, թեև ամեն կերպ շեշտում ու ուզում է ցույց տալ, որ նրանք հավատափոխ են եղել զուտ կրոնական իրենց զգացումներին հետևելով, բայց իրականում նրանք այդ քայլին դիմել են քաղաքական նկատառումներով և հավատացել են, անշուշտ, որ դրանով ապահոված կլինեն նոր կրոնի հետևորդների համակրությունն ու աջակցությունը։

Առաջին կրոնական այս համայնքների մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ միասնական չէին նաև քրիստոնյա քարոզիչների շարքերը, որովհետև նրանց մեջ ևս եղել են, ինչպես կտեսնենք, տարբեր հոսանքների ներկայացուցիչներ, այսինքն՝ հրեական նույն կրոնի տարբեր թևերի կողմնակիցներ։ Սակայն մինչ այդ ծանոթանանք Հովսեպոսի հաղորդած մյուս վկայություններին. «Երբ Իզատեսն իմացավ, որ իր մայրը շատ էր հավանել հրեական կրոնը, ինքը ևս նախանձախնդիր եղավ հավատափոխության։ Եվ երբ իմացավ, որ իսկական հրեա լինելու համար անհրաժեշտ է թլփատվել, նա այդ անելու պատրաստակամություն հայտնեց։ Սակայն, երբ մայրը նրա այդ ցանկության մասին իմացավ, համենայն դեպս փորձեց ամեն կերպ այն կասեցնել, ասելով, որ դա վտանգավոր քայլ է։ Որովհետև, ասում էր նա, «դու թագավոր ես, և եթե քո հպատակները իմանան, որ դու կապված ես իրենց համար տարօրինակ ու օտար ծեսերի հետ, այդ բանը մեծ դժգոհություն կարող է առաջացնել և նրանք չեն հանդուրժի, որ հրեական օրենքը տարածվի իրենց վրա»։ Այս խորհրդից բացի, նա (մայրը) ամեն միջոց գործ դրեց և նրան կասեցրեց։ Նա (Իզատեսը) իր հերթին, նրա (մոր) պատճառաբանությունները հայտնեց Անանիային։ Վերջինս համաձայնվեց մոր (ասածին), և խոստացավ, որ իսկապես, եթե չկարողանա Իզատեսին համոզել (այն չանելու), ապա ինքը կմեկնի ու կհեռանա երկրից, որովհետև, ասաց նա, եթե բոլորն իմանան, այդ մասին, ապա դրա

համար իրեն կպատժեն, քանի որ ինքն անձամբ պատասխանատու է թագավորին նման տհաճ բարքեր սովորեցնելու համար: «Թագավորը կարող է,— ասաց նա,—պաշտել աստծուն՝ առանց նույնիսկ թլփատվելու, եթե իսկապես նա որոշել է ամբողջությամբ հրեության նվիրված հետևորդ լինել, որովհետև այդ է ավելի շատ հաշվի առնվում, քան թլփատությունը»: «Բացի այդ,—ասաց նա,—աստված ինքը կների նրան, եթե նա անհրաժեշտությունից և իր հպատակներից վախենալով հրաժարվի այդ ծեսը կատարելուց»: Եվ այսպես, որոշ ժամանակ թագավորը նրա պատճառաբանություններից ելնելով համոզվեց: Սակայն, դրանից հետո, որովհետև իր այս ցանկությունից բոլորովին չէր հրաժարվել, Եղիազար անունով մի այլ հրեա, որը Գալիլիայից էր եկել և հայտնի էր նախնյաց օրենքների (պահպանության) հարցում իր ծայրահեղ խստությամբ, ստիպեց նրան այդ ծեսը կատարել: Որովհետև երբ նա (Եղիազարը) եկել էր նրա (թագավորի) մոտ իր հարգանքները մատուցելու և տեսել նրան Մովսեսի օրենքը[56] կարդալիս, ասել էր. «Ո՛վ թագավոր, դու քո անգիտության համար մեղավոր ես և ամենամեծ հանցանքն ես (գործել) օրենքի դեմ, և այդպիսով (մեղանչել ես) աստուծո դեմ: Որովհետև դու պարտավոր ես ուրախությամբ ոչ միայն կարդալ օրենքը, այլ նույնիսկ ավելին՝ կատարել այն, ինչ որ հրամայված է դրա մեջ: Ինչքա՞ն դեռ պիտի շարունակես անթլփատ մնալ: Եթե դու այդ կապակցությամբ եղածը չես կարդացել, այժմ կարդա, այնպես որ դու պետք է իմանաս, թե ինչ ամբարշտություն ես դու անում»[57]:

Իզատեսը այլևս գործը չհետաձգեց, կանչել տվեց իր բժշկին ու թլփատվեց: Ապա կանչելով մորն ու ուսուցիչ Անանիային, հայտնեց նրանց, որ ծեսը կատարել է: Նրանք չափից ավելի վախեցան, որովհետև եթե այդ հայտնի դառնար, ապա կարող էր թագավորը գահը կորցնելու վտանգի առաջ կանգնել: Բացի այդ, նրա հպատակները չէին ենթարկվի այնպիսի մի մարդու ղեկավարության, որն իրեն նվիրել էր օտար սովորույթների, և եթե այդ գործը բացահայտվեր, դրա համար իրենց կմեղադրեին և իրենք էլ վտանգի մեջ կլինեին: Աստված կարող էր խափանել իրենց վախի իրականացումը, որովհետև Իզատեսն ու նրա որդիները նույնպես հաճախ փորձությունների էին ենթարկվում: Աստված նրանց պահպանեց և դժվարին հուսահատության պահին, փրկության ճանապարհ բացեց: Այսպիսով աստված հասկացրեց, որ նրանք, ովքեր

---

[56] «Աստվածաշունչ», «Հին Կտակարան», Ծնունդք, ԻԷ, 11. «Թլփատեսցի ձեր ամենայն արու, եւ թլփատեսջիք զմարմին անթլփատութեան ձերոյ. եւ եղիցի նշանակ ուխտին ընդիս եւ ընդ ձեզ»:

[57] *Josephus*, Jewish Ant., XX, 44—48, pp. 413—414.

իրենց աչքերը ուղղում են միայն դեպի իրեն, իրենց բարեպաշտության վարձը չեն կորցնի (կատանան)[58]։

Պատմիչի այս տեղեկությունները թեև գրված են Իզատեսին ներբողելու համար, բայց ընթերցողի մեջ բացասական տպավորություն են առաջացնում, որովհետև այնպես է ստացվում, որ Աղիաբենի թագավոր Իզատեսը քաղաքական հոտառությունից զուրկ, անդեմ մի անձնավորություն էր, որն անտեսելով իր մեծամեծների, երկրի ու ժողովրդի կարծիքն ու վերաբերմունքը, շահերը, կրոնական մոլեռանդությունից տարված, ամեն ինչ անում էր թլփատվելու համար։ Հավատացած ենք, որ իրականում այդպես չի եղել։ Այդ են ցույց տալիս նույն պատմիչի այն վկայությունները, որ նա իր երկրի շահերը քաջ իմացող թագավոր էր։ Այստեղ պատմիչը պարզապես հրեական ինչ-որ աղբյուրի տվյալներին հետևելով հրեա ժողովրդի աչքին Իզատեսին բարձրացնելու, մեծարելու, հրեական օրենքի նկատմամբ նրա նվիրվածությունը ցույց տալու նպատակով, հորինել է այս մանրամասնությունները։ Մեր կարծիքով, եթե նույնիսկ Իզատեսը թլփատվել է, ապա դա նա արել է քաղաքական նկատառումներով։ Ըստ երևույթին, նա նկատի է ունեցել այն հանգամանքը, որ հրեաները այն ժամանակ Աղիաբենում զգալի ազդեցություն ունեին։

Իսկ ինչ վերաբերում է Իզատեսի ուսուցիչ Անանիայի և գալիլիացի Եղիազարի միջև թլփատության հարցում եղած կարծիքների տարբերությանը, ապա դա արդյունք էր նույն կրոնական համայնքի ներսում գոյություն ունեցող տարբեր մտայնությունների։ Դերենբուրգի հետևողությամբ Բամբերգերը մանրամասն անդրադարձել է այդ հարցին և եկել այն եզրակացության, որ Անանիայի և Եղիազարի միջև ստեղծված վեճը արդյունք էր հրեական երկու տարբեր դպրոցների՝ Հիլլելի և Շամմայի դավանած սկզբունքների։ Առաջինը գտնում էր, որ միայն մկրտությունը բավական է հրեական կրոն ընդունելու համար, իսկ մյուսը գտնում, որ թլփատությունը անհրաժեշտ է[59]։

Նման վեճ, կամ ավելի ճիշտ, տարաձայնություն գոյություն է ունեցել նաև Քրիստոսի առաքյալների միջև։ Նրանցից ոմանք գտնում էին, որ քրիստոնյա դառնալու համար բոլորովին անհրաժեշտ չէ թլփատությունը, իսկ ոմանք, ընդհակառակը, այն համարում էին նախապայման[60]։ Այսպես, Պողոս ու Բարնաբաս առաքյալները այն տեսակե-

[58] Նույն տեղում։

[59] *Derenbourg*, Essai sur l'histoire et la géographie de la Palestine. 1867, pp. 225—229: *J. Bamberger*, Proselytism in Talmudic period, 1939, pp. 48—49.

[60] *J. Klausner*, From Jesus to Paul, 1943, pp. 39—40.

տին էին, որ Թլփատությունը անհրաժեշտ չէ քրիստոնեական կրոնը ընդունողի համար, մինչդեռ Պետրոս և Հակոբոս առաքյալները հակառակ տեսակետի կողմնակիցներ էին[61]:

Մեր կարծիքով, մի կողմից Պողոս ու Բարնաբաս և մյուս կողմից Պետրոս և Հակոբոս առաքյալների միջև առաջացած տարաձայնությունը նույն Անանիայի և Եղիազարի միջև եղած վեճի շարունակությունն էր, և այն բարձրացել էր նորից այն ժամանակ, երբ քրիստոնեությունն առանձնանալով հրեությունից, արդեն սփյուռքում քարոզվել էր հրեաների և ոչ հրեաների շրջաններում, և որոնցից շատերի համար, բնական էր, որ Թլփատությունը կարևոր նշանակություն չպետք է ունենար:

Այս կապակցությամբ արժե ուշադրություն դարձնել այն կետի վրա, որի համաձայն Քրիստոսի 12 առաքյալներից շատերը գալիլիացի էին և ինքը՝ Քրիստոսը, գործել է նաև Գալիլիայի լճի ափերին: Եղիազարն էլ գալիլիացի էր, Պետրոս և Հակոբոս առաքյալներն էլ[62]: Արդյո՞ք այստեղ ինչ-որ կապ չկա: Կարծում ենք, որ նրանք բոլորն էլ նույն դպրոցի ներկայացուցիչներ են, որոնցից Եղիազարը Քրիստոսի աշակերտներից մեկն էր, որ եկել էր Անդիաբեն քարոզելու:

Այսպես, ուրեմն, Իզատեսը անսալով Եղիազարին, Թլփատվում է, հակառակ Անանիայի ու մոր զգուշացումներին: Նման քայլը վկայում է այն մասին, որ Իզատեսն ու Եղիազարը քաղաքականապես անշրջահայաց էին, մինչդեռ Հելենեն ու Անանիան նախընտրում էին խոհեմ գործունեությունը: Պատմիչը, կամ պատմիչին աղբյուր ծառայած հեղինակը համամիտ էր Իզատեսի այդ քայլին և իր այդ համամտությունը արտահայտում էր այն տողերի մեջ, երբ սկսում էր նկարագրել Թլփատությունից հետո Իզատեսի հաջողությունները, ասելով, որ հրեական սահծո օրենքին հետևելը միայն կարող է փրկության ճանապարհ բացել, ու իր այս միտքը հաստատելու համար գրում է, որ Իզատեսի Թլփատությունից հետո «Հելենեն՝ թագավորի մայրը, տեսավ, որ խաղաղությունը տիրել է թագավորության մեջ և իր որդին, իրեն տված սահծո խոհեմության շնորհիվ, ոչ միայն հաջողության մեջ է, այլև հիացմունքի առարկա է դարձել բոլորի, նույնիսկ՝ օտարականների աչքին»[63]:

Սակայն բոլորովին էլ այդպես չի եղել, որովհետև պատմիչը, ըստ

---

61 Առ կորնթացիս, Առաջին թուղթ, գլ. է—18—19: Գործք Առաքելոց, գլ. ժե:

62 Ավետարան ըստ Մարկոսի, գլ. Ա, 16—20, Նույն տեղում, գլ. ժԶ, 15—18:

63 *Josephus*, Jewish Ant., 5, p. 415.

երևույթին, մոռանալով իր ասածը, խոստացել է պատմել այն դժվարությունների մասին, որ երկրում ստեղծվել են Իզատեսի թլփատությունից հետո՝ ուղղված իր և իր որդիների դեմ, սակայն նույնպես, գուցե կամ թե ակամա, մոռացել է պատմել այդ մասին։

Ճիշտ է նաև այն, որ Իզատեսը կարողանում է հաղթահարել այդ դժվարությունները այն ժամանակ, որովհետև պարթևների թագավոր Արտավան Գ-ի ու Իզատեսի միջև սերտացել էին մտերմական կապերը, և այդ պայմաններում Իզատեսի հակառակորդ Ադիաբենի մեծամեծները չէին կարող իրենց պայքարում արտաքին օգնություն ստանալ, կամ հենվել պարթևների վրա, դրա համար էլ ժամանակավորապես տեղի են տալիս ու համակերպվում։

Սա, իսկապես, Իզատեսի թագավորության ամենափայլուն շրջանն էր, և նա, ինչպես կտեսնենք մեր այս աշխատության հաջորդ հատվածում, կարողացել էր Արտավան Գ-ին ցույց տված օգնության փոխարեն ընդարձակել իր երկրի սահմանները և որպես վարձատրություն ստանալ հայկական հողերից Մծբինը՝ իր շրջակայքով։

5. ՀԵՂԻՆԵ ԹԱԳՈՒՀՈՒ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԿԱՏԱՐԱԾ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հեղինե թագուհին Ադիաբենի պատմության խոշորագույն դեմքերից մեկն էր, որն իր գործունեությամբ, մանավանդ Հրեաստանի սովյալներին ցույց տված իր օգնության շնորհիվ, այնքան հայտնի էր դարձել, որ հետագայում այս բարեգործական արարքի շուրջ հորինվել են զրույցներ։ Նրա այդ փառքը նույնիսկ վերագրվել է ուրիշներին, նամանավանդ՝ Հռոմեական կայսրության նշանավոր կայսրերից՝ Կոստանդիանոս Մեծի մորը՝ Հեղինեին։

Ադիաբենի թագուհի Հեղինեն, ինչպես պարզ երևում է Հովսեպոսի նկարագրություններից, հենց սկզբից, իր ամուսին Մոնոբազոսի թագավորության օրոք, արքունիքում գրավել է նշանակալից դիրք և ակտիվ մասնակցություն է ունեցել երկրի քաղաքական կյանքում։ Անշուշտ, նրա դերն ավելի էր մեծացել ամուսնու մահից հետո, հատկապես՝ Իզատեսի իշխանության տարիներին։ Եվ երբ Իզատեսի քաղաքական գործերը վատ ընթացք են ստանում և նա ընդհարվում է Ադիաբենի նախարարների հետ, որոնք նրան գահընկեց անելու համար ուղիներ էին որոնում, Հեղինե թագուհին, չնայած մեծ տարիքին, դեպի Երուսաղեմ ուխտագնացության է պատրաստվում։ Թեև պատմիչն

այդ ուխտագնացությունը ներկայացնում է որպես Հեղինեի զուտ կրոնական, բարեպաշտական զգացումների արտահայտություն, բայց դժվար չէ կռահել, որ Հեղինեն այդ ճանապարհորդությամբ ուզում էր ոչ միայն Հրեաստանի, այլ ամբողջ սփյուռքում ապրող հրեաների համակրանքն ու աջակցությունը ապահովել հօգուտ Իզատեսի, և այդպիսով՝ ամրացնել իր որդու տատանման ենթակա գահը: Սովյալներին նրա ցույց տված մարդկային օգնությունը, իսկապես շատ բարձրացրեց նրա հեղինակությունը հրեաների մոտ, բայց այն չփրկեց որդուն դժվարություններից: Այժմ ծանոթանանք պատմիչի տվյալներին. «Նա Երուսաղեմ քաղաքը գնալու և այնտեղ աստծո տաճարում աղոթելու ու զոհ մատուցելու ցանկություն ունեցավ, որովհետև այն (տաճարը) հայտնի էր ամբողջ աշխարհում: Հետևաբար, որդուց խնդրեց, որ իրեն թույլ տա (գնալ): Իզատեսը մեծ խանդավառությամբ ընդունեց մոր խնդրանքը, մեծ պատրաստություն տեսավ նրա ճանապարհորդության համար և մի մեծ գումար էլ տվեց: Նույնիսկ որոշ ճանապարհ էլ ինքն անձամբ ուղեկցեց նրան, և նա (Հեղինեն) իրագործեց իր ցանկությունը. հասավ Երուսաղեմ քաղաքը: Նրա գալուստը Երուսաղեմի ժողովրդի համար շատ նպաստավոր եղավ, որովհետև այն ժամանակ քաղաքը սովից հեծում էր, և շատերը, փող չունենալու պատճառով և իրենց կարիքը հոգալ չկարողանալով, մահանում էին: Հեղինե թագուհին իր սպասավորներից ոմանց ուղարկեց Ալեքսանդրիա և ուրիշներին՝ Կիպրոս՝ մի մեծ գումարով, որ ցորեն գնեն և մի նավ էլ չորացած արմավ բերեն: Նրա սպասավորները շատ վերադարձան այդ (գնված) մթերքներով, որոնք բաժանվեցին կարիքավորներին: Այսպիսով, նա թողեց այնպիսի մեծ անուն, որ նրա բարեգործության համբավը հավիտյան կմնա ամբողջ մեր ժողովրդի մեջ: Երբ նրա որդի Իզատեսը իմացավ սովի մասին, նա էլ մի մեծ գումար ուղարկեց երուսաղեմցիների առաջնորդներին: Այդ գումարի բաժանումը կարիքավորներից շատերին ազատեց սովի ծայրահեղ դաժան ճնշումից»[64]:

Հրեական ավելի ուշ աղբյուրներից մեկում Հեղինեի այս ուխտագնացության մասին հետևյալ մանրամասնություններն են պատմվել. «Մի անգամ, երբ Իզատեսը պատերազմ գնաց, Հեղինեն ուխտեց, որ եթե իր որդին ողջ վերադառնա, ապա ինքը յոթը տարի կապաշխարի: Իր որդին վերադարձավ, և նա կատարեց իր ուխտը: Եվ յոթը տարին լրանալուց հետո գնաց Իսրայելի երկիրը»[65]:

---

[64] *Josephus*, Jewish Ant., XX, 5, p. 415.

[65] *The Mishah Nazir*, III, 6, տե՛ս *Josephus*, Jewish Ant., XX, 4, p. 409, note.

Հասկանալի է, որ նման պրույցների միջոցով միշտ էլ հեղինակները ձգտել են իրենց սիրելի հերոսի նկատմամբ համակրանք առաջացնել ժողովրդի և կամ հավատացյալների մեջ: Այնպես որ դժվար է ասել՝ այս պատմածներից որը իրական հիմք ունի: Համենայն դեպս, մայր և որդի հրեաների համար մեծ գումարներ են վաստում և նույնիսկ՝ դատարկում պետական գանձարանը: Իրենց այս արարքներով, եթե սիրաշահում էին հրեաներին, ապա ատելություն էին առաջացնում իրենց ժողովրդի և մանավանդ Ադիաբենի մեծամեծների մոտ: Այս տեսակետից արժեքավոր տեղեկություն է պահպանվել հրեական աղբյուրներից մեկում. ըստ այդ աղբյուրի՝ «երբ մայր և որդի սովյալներին փրկելու համար դատարկում էին երկրի գանձատունը, Ադիաբենի մեծամեծներից մի պատվիրակություն ներկայացավ Իզատեսին և ասաց. «Քո հայրը փող խնայեց և իր հայրենի գանձերը հարստացրեց, իսկ դու դրանք վատնում ես.» այս խոսքերին Իզատեսը պատասխանեց. «Իմ նախնիները կուտակեցին ներքևում (երկրում), իսկ ես կուտակում եմ վերևում (երկնքում)»[66]:

Անշուշտ, խելացի մի թագավոր դժվար թե նման պատասխան տար իր պալատականներին, բայց ասածի մեջ կար այն ճշմարտությունը, որ Իզատեսն ու մայրը ամբողջությամբ ընկել էին հրեաների քաղաքական ազդեցության ներքո, որը տհաճությամբ էին ընդունում ադիաբենցիները: Ադիաբենցիների վայրույթն իր գագաթնակետին է հասնում, երբ իմանում են, որ Հելինեն և նրա որդի Իզատեսը Երուսաղեմ քաղաքը շենացնելու նպատակով իրենց կալվածներում նոր շինարարություններ են սկսել, և թագուհին նույնիսկ տաճարին մեծ արժողությամբ նվիրատվություններ է արել: Հրեական մի աղբյուրի վկայությամբ Հելինե թագուհին անձամբ Երուսաղեմի տաճարին է նվիրել «ոսկյա մի ջահ, որը տեղադրել էին «Սրբություն Սրբոցի»[67] դռան վերևի մասում, և (նվիրել էր) ոսկյա մի տախտակ, որի վրա Թորայից մի հատված էր գրված»[68]:

Ահա նման մեծածախս նվիրատվությունները, սովյալների համար ծախսված մեծ գումարները և Երուսաղեմում ու նրա մոտակայքում եղած

---

[66] *The Talmud*, Baba Bathra, 11 a, *տե՛ս Josephus*, The Jewish Ant., XX, 55—56, III, p. 419.

[67] «Սրբություն Սրբոց» կոչվում էր Երուսաղեմի Սողոմոնի տաճարի այն հատվածը, որտեղ տարին մեկ անգամ մուտք էր գործում միայն քահանայապետը:

[68] *Mishnah Yoma*, III. 10. *տե՛ս Josephus*, Jewish Ant., XX, 52, pp. 418—419.

իրենց կալվածներում սկսած շինարարությունները, բնականաբար, ազդել էին երկրի տնտեսության վրա ու դժգոհության ալիք բարձրացրել ինչպես ժողովրդի, այնպես էլ Ադիաբենի նախարարների ու մեծամեծների մեջ:

Սակայն, մինչ ադիաբենցիների այդ դժգոհությունների մասին խոսելը, տեսնենք, թե աղբյուրներում ի՞նչ տեղեկություններ կան Հրեաստանում սկսված սովի մասին և ամենակարևորը՝ թե ե՞րբ էր այն սկսվել:

Հովսեպոսի բնագրի թարգմանիչն իր ծանոթագրության մեջ նշում է, որ Հելինե թագուհու դեպի Երուսաղեմ ճանապարհորդությունը տեղի է ունեցել մ. թ. 46 կամ 47 թվին: Եթե դա այդպես է, ապա պիտի հետևցնել, որ Հրեաստանի սովը եղել է նույն տարում, ինչպես փաստերն են հաղորդում[69]:

Հետաքրքրական է, որ «Գործք Առաքելոցում» հիշատակություն կա այն մասին, որ ինչ-որ Ագաբոս անունով մի մարգարե, որ Երուսաղեմից Անտիոք էր եկել, կանխագուշակել էր, որ մեծ սով է լինելու ամբողջ «աշխարհում», այնպիսի սով, որ պատահեց, ինչպես «Գործքի» հեղինակն է ասում՝ Կլավդիոս կայսեր թագավորության ժամանակ[70]:

«Գործք Առաքելոցի» այս վկայությունը համընկնում է Հովսեպոսի նկարագրած սովի պատմության հետ, որին ականատես էր եղել Հելինե թագուհին Երուսաղեմում:

Անգլիացի պատմաբաններից Թորին իր «Գործք Առաքելոցի» ուսումնասիրության մեջ, անդրադառնալով «Գործքի» նկարագրած սովին, եկել է այն եզրակացության, որ «Գործք Առաքելոցի» հեղինակ Ղուկաս ավետարանիչը, անկասկած, իր ձեռքի տակ ունեցել է արամեական մի աղբյուր, որտեղ խոսվում էր «երկրում», այսինքն՝ հրեական «աշխարհում»[71] տարածված սովի մասին, իսկ Ղուկասը սխալմամբ «երկիր» (աշխարհ) հասկացողությունը ըմբռնել է «ամբողջ աշխարհի» իմաստով[72]:

Այս հարցին անդրադարձել է նաև եվրոպացի պատմաբան Կասլը, որը եկել է այն եզրակացության, որ Հովսեպոսի հիշատակած սովը պա-

---

69 *Josephus*. Jewish Ant., XX, 5, p. 415.

70 «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղեմ մարգարէք յԱնտիոք: Յարուցեալ մի ոմն ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղեւ առ Կղաւդեաւս»:

71 Ասորերենում էլ «ատրա»—atra—աշխար՝ բառը ունի և «երկիր» և «աշխարհ» իմաստը:

72 *C. Torrey*, The composition and date of Acts, 1916, p. 21.

տահել է Կլավդիոս կայսեր օրոք՝ մ. թ. 46 կամ 47 թ. գարնանը[73]: Ուրեմն, Հեղինե թագուհին էլ ճիշտ նույն ժամանակ գնացել էր Երուսաղեմ:

Ուշագրավ է, որ Հեղինե թագուհու՝ Երուսաղեմ գնալու և, ընդհանրապես, թագուհու մասին կարևոր և հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Նախ ասենք, որ պատմահոր մոտ Հեղինե թագուհին ներկայացված է ոչ թե Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի, այլ որպես Եդեսիայի թագավոր Աբգարի կին: Հեղինեն այստեղ քրիստոնյա է և ընդունել է քրիստոնեական կրոնը: Մովսես Խորենացին այդ կապակցությամբ գրում է, որ Եդեսիայի թագավոր Աբգարի որդին՝ Անանունը, սպանել է տալիս Եդեսիայի առաջին քրիստոնյա քարոզիչ Ադդեին հաջորդած Ագգային: Սակայն շատ չանցած, ինքն էլ սպանվում է՝ պալատի շինարարության ժամանակ ընկնելով շուռ եկած սյան տակ: Նրա մահից հետո Եդեսիայի բնակիչները առանց թագավորի մնալով, դիմում են հայոց Սանատրուկ թագավորին, «խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեսցէ զնոսա ի քրիստոնեութեան հաւատոց, եւ նոքա տացեն զքաղաքն ի ձեռս եւ զգանձս թագաւորին»: Սանատրուկը նախապես համաձայնվում է եդեսացիների առաջարկի հետ, սակայն հետագայում խաբում ու կոտորում է Աբգարի արու զավակներին, իսկ աղջիկներին աքսորում Հաշտենից կողմերը և «զգլուխ կանանցըն Աբգարու, որում անունն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն բնակել ի Խառան, թողեալ նմա զտիկնութիւնն ամենայն Միջագետաց, փոխանակ բարեացն զոր գտեալ էր ի ձեռն նորա յԱբգարէ»: Այս Հեղինեն, ասում է Խորենացին «զարդարեալ հաւատովք, որպէս զայր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն»: Դրա համար էլ հեռանում է այնտեղից ու Կլավդիոս կայսեր օրոք գնում Երուսաղեմ «ի սովին զոր մարգարէացաւն Ագաբոս, և տուեալ զամենայն գանձս իւր յեդիպտոս՝ գնեաց ցորեան, բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտելոց»[74]: Ապա ավարտում է, ասելով, որ իր այս տեղեկությունները հաստատում է ինքը՝ Հովսեպոսը, ակնարկելով, անշուշտ, մեզ հայտնի պատմիչին[75]:

Հետաքրքրական է, որ պատմահայրը իր ասածները հաստատելու համար թեև վկայակոչում է Հովսեպոսին, սակայն նրանց գրածները

---

[73] *K. S. Capp*, The universal famine under Claudius, „Harv. Theol. Rev.", XXVIII, 1935, p. 261, n. 11:

[74] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. Լե, էջ 159—160:

[75] Նույն տեղում, էջ 160:

շատ բանով տարբերվում են: Անշուշտ, Աբգարի և նրա կնոջ՝ Հեղինեի մասին գրելիս Մովսես Խորենացին օգտվել է նաև Եվսեբիոսի «Եկեղեցական պատմություն» գրքից: Եվսեբիոսը իր տեղեկությունները սկսում է Հրեաստանի սովի նկարագրությամբ և այդ առիթով Հեղինեի կատարած բարեգործությամբ: Ահա թե ինչ է գրում նա. «Զայսու ժամանակաւ եւ սով մեծ լինել ի Հրէաստանի, ասէ, յորում և դշխոյն Հեղինէ գնեաց ցորեան յԵգիպտոսէ բաղում ոսկւոյ և բաշխեաց կարօտելոց»[76]: Այստեղ խոսքը նույն Կլավդիոս կայսեր օրոք Հրեաստանում պատահած սովի մասին է, մանավանդ, որ վերջում հեղինակը ավելացրել է. «Եւ միաբան գտանես դու զբանս ընդ Գործոց Առաքելոցն, յորում գրեալ է»[77]: Եվսեբիոսն իր «Եկեղեցական պատմության» համապատասխան գլխի վերնագրում Հեղինեի մասին ասում է, որ նա Օսրոյենի թագուհին էր. մինչդեռ նույն այդ գլխում գրում է՝ «ասում են, թե նա Ադիաբենի թագուհին էր», իսկ նույն այս գլխի V դարի հայերեն թարգմանության մեջ ասված է, որ նա Միջագետքի թագուհին էր:

Այս տարբերությունները վկայում են այն մասին, որ պատմիչի ձեռքի տակ եղել են մի շարք աղբյուրներ, որոնց հիմքում ընկած են եղել ավանդություններ կամ զրույցներ: Անկասկած, Հեղինեի ժողովրդականությունն այնքան մեծ է եղել քրիստոնեություն ընդունած արևելյան մի շարք երկրներում, որ նրանցից ոմանք նման զրույցներով փորձել են Հեղինեի փառքը սեփականացնել: Եվսեբիոսը և նրա գրքի վաղ շրջանի թարգմանիչները, իրենց ծանոթ աղբյուրների և ավանդությունների հետևողությամբ, դարձրել են Հեղինեին այս կամ այն երկրի թագուհին: Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» համապատասխան բաժինը շարադրելիս, հետևել է Եվսեբիոսի հաղորդած այն տեղեկությանը, որի համաձայն Հեղինեն Օսրոյենի կամ Եդեսիայի թագուհին էր[78]: Եվ, ընդհանրապես, Հեղինեի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը եղել է Եվսեբիոսը: Մովսես Խորենացին ծանոթ լինելով Հանդերձ Հովսեպոսին, նախընտրել է քրիստոնյա պատմիչ Եվսեբիոսի աղբյուրը, և դա հասկանալի է: Համենայն դեպս, Եվսեբիոսն էլ ճիշտ կողմնորոշվել է և որովհետև նա օգտագործել է նաև Հովսեպոսի վկայությունը, ապա նրա հետևողությամբ գրել է՝ «Եւ զի սորին իսկ այսր Հեղինեայ, զորմէ

---

[76] «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», թրգմ. Ա. Ծարհան, Վիեննա, 1877, դպր. Բ, գլ. ԺԲ, էջ 98—99:

[77] Նույն տեղում:

[78] Օսրոյենի կամ Եդեսիայի թագավոր Աբգարի մասին, տե՛ս Հ. Մելիքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 160:

չիշատակէ պատմագիրս, կան շիրիմք նշանաւորք մինչև ցայսօր ժամանակի ի բուրաստանս քաղաքին որ Ելիա կոչի և Ադիաբենաց դշխոյ ասեն լինել»[79]:

Այս տեղեկութիւնները, ինչպես ասացինք, վերցված են Հովսեպոսից, որը գրել է, թե, ճիշտ է, Հելինեն թագուհին մահացել է Ադիաբենում, սակայն նրա որդի Մոնոբազոսը, որը եղբոր՝ Իզատեսի փոխարեն նորից նստել էր Ադիաբենի գահին, իր մոր դիակը Ադիաբենից ուղարկել էր Երուսաղեմ՝ այնտեղ թաղելու: Հետաքրքրական է, որ մոր դիակի հետ է եղել նաև Իզատեսի մարմինը: Մոնոբազոսի կարգադրությամբ մահացածների ոսկորները բերում են Երուսաղեմ, որ թաղեն «երեք բուրգերում»[80]:

Հնագետներից շատերը այս բուրգերը տեղադրում են Երուսաղեմի հին պարսպի մոտակայքում գտնվող այն վայրում, որը հայտնի է «Թագավորների գերեզման» անունով: Իսկապես, XIX դ. այդ գերեզմանները պեղելիս եվրոպացի հնագետ Սոլսին հայտնաբերում է մի չբացված սարկոֆագ, որի մեջ կար ինչ-որ մումիա: Սարկոֆագը բացելիս մահացածի մարմինը փոշիանում է: Ասում են, որ սարկոֆագի վրա եղել է երկու բառից բաղկացած արամերեն, թե պալմիրերեն մի արձանագրություն՝ «Հելինեն թագուհի»[81]:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Հովսեպոսի վկայությունները Հելինեն թագուհու և, ընդհանրապես, Ադիաբենի մասին, մեծ մասամբ ունեն պատմական հավաստիություն: Փաստն այն է, որ Ադիաբենի թագուհի Հելինեի և նրա որդի Իզատեսի և, ընդհանրապես, Ադիաբենի և Հրեաստանի միջև մ. թ. I դ. սկզբներից փոխհարաբերությունները հետզհետե սերտացել և իրենց գագաթնակետին էին հասել Իզատեսի ժամանակ: Իզատեսի թագավորության օրոք փոխհարաբերությունները սերտացել և ամրապնդվել էին նաև պարթևների, հատկապես նրանց թագավոր Արտավան Գ-ի հետ, որը, ինչպես շուտով կտեսնենք, հարևան փորր ժողովուրդների նկատմամբ պարթևական նոր քաղաքականության հիմքը դրեց:

---

[79] «Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւն», էջ 99:

[80] *Josephus*, Jewish Ant., XX, 91—94, 3, p. 4 7.

[81] Այս մասին տե՛ս Հովսեպոսի Բարդմանչի ծանոթագրությունը, XX, 91—94, 3, էջ 437: Մի այլ մասնագետ՝ Կլարքը, գտնում է, որ Հելինեն թագուհու գերեզմանը պետք է որ լիներ այլ վայրում, որովհետև, ասում է նա, Հովսեպոսի նկարագրած հեռավորությունը ավելին է, քան այն, որ կար, Երուսաղեմի հին պարսպի և «թագավորների գերեզմանի» միջև: Տե՛ս *N. P. Clarke*, Helena's pyramids, „Pal. Explor. quart." IXX, 1938, pp. 88—89.

6. ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ԱՐՏԱՎԱՆ Գ ԵՎ ԱԴԻԱԲԵՆԻ ԻԶԱՏԵՍ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պարթևների Արտավան Գ թագավորի և, ընդհանրապես, պարթևների ու Ադիաբենի և հարևան մյուս ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ բազում տեղեկություններ են հաղորդել ինչպես Հովսեպոսը, այնպես էլ հույն և հռոմայեցի պատմիչները: Նրանց այդ տեղեկություններից պարզվում է, որ պարթևների և Հռոմի միջև արևելյան երկրներին տիրելու համար վաղուց սկսած իրենց պայքարը ավելի է սրվել մ. թ. I դ. սկզբներից: Արտավան Գ-ն բազմելով գահին, փորձում էր իր տերությունը ազատել հելլենականացած տարրերի ազդեցությունից, որպեսզի հնարավոր լիներ մի կողմից հռոմեական քաղաքականության համակիրների շարքերը թուլացնել և չեզոքացնել նրանց ունեցած քաղաքական ազդեցությունը պարթևների և նրանց հարևան այլ երկրներում, և մյուս կողմից՝ ստեղծեր միասնական ամուր հիմք ունեցող մի պետություն՝ դուրս նետելու համար հռոմայեցիներին Հայաստանից, Միջագետքից, Ասորիքից և իրենց գրաված այլ երկրներից: Արտավան Գ-ն իր այս գործունեության ընթացքում հանդիպեց դժվարությունների, որովհետև հակառակորդ տարրերը կարողացան երկրի ներսում երկպառակություն սերմանելով կազմակերպել գահակալական կռիվներ: Արտավան Գ-ն մեր թվականության 36 թ. ստիպված լքում է գահը, փախչում մայրաքաղաքից ու գալով Ադիաբեն, ապաստան է գտնում Իզատեսի մոտ: Այդ դեպքերը հետևյալ կերպ է նկարագրում Հովսեպոսը.«Արտաբանոսը՝ պարթևների թագավորը, իմանալով, որ սատրապները իր դեմ դավադրություն են կազմակերպել, և տեսնելով, որ նրանց հետ մնալը վտանգավոր է, որոշեց գնալ Իզատեսի մոտ: Որովհետև մտածում էր, նախ ապահովել ինքն իրեն և ապա, հնարավորության դեպքում, որոշ օգնություն ստանալ նրանից (Իզատեսից) իր իշխանությունը վերականգնելու համար: Մոտ հազարի (հասնող) հարազատների ու ծառաների հետ հաջողվեց հասնել նրա մոտ: Նա Իզատեսին պատահմամբ հանդիպեց ճանապարհի վրա: Արտաբանոսը նրան լավ էր ճանաչում, մինչդեռ Իզատեսը չգիտեր իրեն, և նա (Արտաբանոսը), հայրենի սովորության համաձայն, կանգնեց նրա կողքին և բոլորից առաջ ողջունեց նրան և ապա ասաց. «Ո՛վ թագավոր, անտարբեր մի լինիր իմ նկատմամբ և մի մերժի ապաստան հայցողիս խնդրանքը, որովհետև բախտի բերմամբ ցած բերվեցի, և թագավորությունս փոխարինվեց հասարակ կյանքով, և քո օգնության կարիքի մեջ եմ: Ուստի աչք

դիր բախտի անկայունության վրա և նկատի ունեցիր, որ ինձ համար նախատեսվածը քեզ հետ էլ կարող է պատահել, որովհետև եթե ես արհամարհվեմ ու անվրեժ թողնվեմ, ապա շատերը կհանդգնեն այլ թագավորների ևս հարվածել»: Նա այդ ասաց արցունքը աչքերին և գլուխը խոնարհած: Երբ Իզատեսը լսեց նրա անունը և նկատեց, որ Արտաբանոսը կանգնած է իր կողքին հայցվորի և բախտ աղերսողի ձևով, անմիջապես իր ձիուց վայր ցատկեց և ասաց. «Սիրտ առ, ո՛վ արքա, և մի շվարիր (մի հուսահատվիր) քո ներկա վիճակից, և այն անբուժելի մի համարիր, որովհետև կարող է հանկարծակի փոփոխություն լինել, և այդպիսով վերջ տրվել քո տխրությանը: Դու ինձ կդտնես, որպես ավելի լավ բարեկամի ու դաշնակցի, քան կարող էիր ակնկալել: Որովհետև կամ ես կվերականգնեմ քեզ Պարթևաստանի գահին, կամ ես էլ կհրաժարվեմ իմից (իմ գահից)»:

Այսպես ասելով, նա Արտաբանոսին օգնեց հեծնելու իր ձին, որով հետևեց և նրան արժանացրեց այդ պատվին, որովհետև նա ավելի մեծ թագավոր էր: Սակայն Արտաբանոսը, երբ նկատեց այդ, ծանր տարավ և՛ իր դժբախտությունը, և՛ այդ պատիվը, դրա համար էլ երդվեց, ասելով, որ ինքը կիջնի ձիուց, եթե Իզատեսը չնստի (ձին) ու չառաջնորդի իրեն: Վերջինս համաձայնվեց, նստեց ձին ու նրան բերեց իր թագավորությունը, և այստեղ տալիս էր ամեն տեսակի պատիվներ, իսկ ժողովների ու խնջույքների ժամանակ տալիս էր գլխավոր բազմոցը, որովհետև Իզատեսը հաշվի էր առնում ոչ թե նրա ներկա վիճակը, այլ նրա նախկին աստիճանը. ավելին, նա նկատի էր առնում նաև այն փաստը, որ բախտի փոփոխությունը շատ մարդկանց ճակատագիրն է: Նա (Իզատեսը) գրեց պարթևներին, խնդրելով, որ նրանք նորից ընդունեն Արտաբանոսին, առաջարկեց իր աջ ձեռքը[82], երդումներն ու խորհուրդը և վստահեցրեց, որ Արտաբանոսը նրանց կատարածի (վատության) համար ոչինչ չի անի: Պարթևները պատասխանեցին, որ նրան ընդունելու դեմ չեն, բայց այդ անել չեն կարող, որովհետև նրանք իշխանությունը արդեն վստահել են մի ուրիշի՝ Սիննամոսին (կամ Կիննամոսին), և դրա համար նրանք վախենում են, որ նման քայլը քաղաքացիական պատերազմի պատճառ կարող է լինել: Սիննամոսը, նրանց մտադրությունն իմանալով, ինքն անձամբ գրեց Արտաբանոսին, որովհետև ինքը մեծացել էր նրա ձեռքի տակ ու խառնվածքով կատարյալ ազնվական էր, հրավիրեց նրան, որ հավատա իրեն, վերադառնա ու ընդունի իր

---

[82] Այստեղ հավանաբար ուզում է ասել, որ ինքը պատրաստ է այդ գործի համար ամեն օգնություն ցույց տալ:

թագավորությունը։ Արտաբանոսը վստահեց նրան ու եկավ։ Սիննամոսը հանդիպեց նրա հետ, իր հնազանդությունը հայտնելուց հետո, որպես թագավորի դիմեց, և թագը հանելով իր գլխից՝ դրեց Արտաբանոսի գլխին»[83]։

Այստեղ, ինչպես դժվար չէ կռահել, պատմական անցքերի նկարագրության կողքին մեծ է նաև գեղարվեստական պատկերավորության բաժինը։ Պատմիչը հուզիչ պատկերների ու ազդեցիկ տեսարանների նկարագրությամբ աշխատել է շեշտել իր սիրելի հերոսի՝ Իզատեսի հոգու մեծությունն ու մարդկային գեղեցիկ հատկանիշները, և պիտի ասել, որ հեղինակը հասել է իր նպատակին։ Անշուշտ, գեղարվեստական այդ պատկերների ու գույների առկայությունը, տվյալ դեպքում, առանձնապես չի ազդել նրա պատմական ճշմարտության վրա։

Այդ բոլորից իմանում ենք, որ Արտաբանոսը կամ Արտավանը ոչ միայն երկրից փախչելուց հետո ապաստան է գտել Իզատեսի մոտ, այլև նրա օգնությամբ կարողացել է վերստին ստանալ իր թագավորական գահը։

Գահին բազմելուց հետո, Արտավանը վարձահատույց է լինում և Իզատեսին է տալիս Հայաստանից անջատված Մծբինն՝ իր շրջակայքով, այսինքն՝ Արվաստանի նահանգը։ Սակայն այս բոլորից հետո Արտավանը երկար չի ապրում և 38 թ. մահանում է։

Այս դեպքերի և, ընդհանրապես, պարթևների ու Հռոմի միջև այդ ժամանակ ծավալված պատերազմական գործողությունների վերաբերյալ բազում տեղեկություններ է տալիս նաև Տակիտոսը։ Ըստ այս պատմիչի, Արտավան Գ-ն իր գահը լքելուց հետո փախչում է Սկյութիային սահմանամերձ մի երկիր։ Այդտեղ Ադիաբենի անունը չի հիշատակվում։ Բացի այդ, նա պատմում է, թե ինչպես հզորացած Արտավանը կարողանում է ոչ միայն Հայաստանի գահի վրա բազմեցնել իր որդի Արշակին[84], այլև արշավանք սկսել Հռոմի ասիական նահանգների դեմ՝ վերականգնելու համար Աքեմենյան նախկին սահմանները։ Ահա թե ի՞նչ է

---

[83] *Josephus*, Jewish Ant., XX, 56, 61, 2, pp. 421—422.

[84] Այս Արշակի անունը «ըստ հայկական ավանդությունների թերևս Սանատրուկ էր։ Սրան հայ ավագանին թագավոր հռչակեց։ Սանատրուկ թագավորի մասին բերվող տեղեկությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ «հաստատվում են Հովսեպոս Փլավիոսի տեղեկություններով և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Սանատրուկի մայրաքաղաքն է եղել Մծբին քաղաքը»։

«Սանատրուկի կատարած գործերի մասին Խորենացին հատկապես արժանի է համարում հիշատակության Մծբին քաղաքի կառուցումը, որը ըստ նրա հաղորդման, ավերվել էր երկրաշարժից»։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 714։

գրում այդ մասին Տակիտոսը. «Շուտով նա (Արտավան Գ-ն) մեր նկատմամբ գոռոզացավ և դաժանացավ իր հայրենակիցների վերաբերմամբ: Պարծենալով շուրջը գտնվող ժողովուրդների դեմ վարած հաջող պատերազմներով, արհամարհեց Տիբերիուսի անուժ ծերությունը և տենչալով գրավել Հայաստանը, Արտավանն Արտաշես թագավորի մահից հետո, իր որդիներից երիցագույնին՝ Արշակին, թագավոր դրեց Հայաստանում: Ավելացնելով վիրավորանքը, նա մարդիկ ուղարկեց պահանջելու Վոնոնի կողմից Սիրիայում և Կիլիկիայում թողնված գանձը: Միաժամանակ նա պահանջում էր Պարսկաստանի և Մակեդոնիայի հին սահմանները, պարծենում և սպառնում էր, թե կարշավի Կյուրոսի և ապա Ալեքսանդրի կողմից նվաճված երկրները»[85]:

Հռոմի Տիբերիոս կայսրը փորձում է պարսիկ մեծամեծներից Արտավան Գ-ի նախորդների գործակցությամբ, որոնց գլուխ էր կանգնած Սիննակը (անկասկած, Հովսեպոսի հիշատակած նույն Սիննակոսը), տապալել Արտավանին և փոխարեն գահ բարձրացնել Հրահատ Գ-ի կրտսեր որդուն՝ Հրահատին[86]: Սկզբից ևեթ դավադրությունը բացվում է, և Արտավանը դիմում է հակամիջոցների: Ի վերջո, երբ նա բանակով Հայաստան էր գնացել պատժելու դավադիրներին, նույն Սիննակը մ. թ. 36 թ. իր համախոհների հետ միասին խլում է իշխանությունը: Տակիտոսը գրում է. «Սիննակը, որի մասին վերևում հիշատակել էի, որ թշնամի է Արտավանին, հայր Աբդագեսին և խորհրդի մյուս գաղտնի մասնակիցներին, որոնք այժմ շարունակվող պարտությունների պատճառով ավելի վճռական էին դարձել, հորդորեց անջատվել: Նրանք, ավելի շուտ վախից, քան թե հոժարակամ, ենթարկվում են» և աստիճանաբար համախմբվում Սիննակի շուրջը և առաջնորդներ գտնելով ոգի են առնում: Արտավանի մոտ ոչ ոք չէր մնացել, բացի այն զորապետներից, որոնք «որպես թիկնապահ էին ծառայում. սրանք արտաքսված լինելով իրենց երկրից, ոչ բարու մասին ըմբռնում ունեին և ոչ էլ հոգատար էին չարի դեմ. ապրում էին վարձով ու ճիրանների սորուկ էին: Այդ մարդկանց իր հետ վերցնելով, Արտավանը փախավ Սկյութիային սահմանամերձ հեռավոր երկիրը, օգնության հույս ունենալով, որովհետև նա Հիրկանների (Վրկանների) և Կարմանների հետ խնամիությամբ էր կապված»[87]:

Ուրեմն, ըստ Տակիտոսի, պարթևների թագավոր Արտավան Գ-ն փա-

---

85 Ս. Տակիտոս, *Թարգմ. Պ. Սոսնիկյան, Երևան, 1941, գիրք VI, գլ. 31, էջ 21—22:*

86 *Նույն տեղում:*

87 Տակիտոս, *գիրք VI, գլ. 36, էջ 31:*

խել էր վերոհիշյալ երկրները, այնտեղից օգնություն ձեռք բերելու համար։ Այս տեսակետից, մեր կարծիքով, Հովսեպոսի տեղեկությունները ավելի հավաստի պատմական հիմք ունեն, որովհետև Արտավանը դժվար թե գնար այդքան հեռու՝ Սկյութիայից այն կողմ եղած երկիրը, այնտեղից օգնություն ստանալու համար, որովհետև այդքան հեռվից դյ միայն օգնություն բերելը, այլև համախոհների հետ կապի մեջ մտնելը այդ ժամանակներում կապված էր մեծ դժվարությունների հետ։ Մինչդեռ Ադիաբենը նման գործողությունների համար ուներ բոլոր հարմարությունները և հայտնի է, որ Արտավանը երկրից հետանալուց հետո չի դադարել բանակցությունների մեջ լինել իր տերության ներսում մնացած համախոհների հետ, և այդ բանակցությունների շնորհիվ է, որ նա կարողանում է վերստին ստանալ իր գահն ու իշխանությունը։

Փաստ է նաև այն, որ Արտավանը Իզատեսի մատուցած ծառայությունների համար նրան է պարգևում, ինչպես գիտենք, Մծբինը՝ իր շրջակայքով։ Իսկապես էլ, Մծբինի նահանգը այդ ժամանակ մտել է Ադիաբենի կազմի մեջ։ Այս բոլորը նկատի ունենալով, մենք գտնում ենք, որ Հովսեպոսի տեղեկությունները, որոնք կապված են Արտավանի՝ Ադիաբեն փախչելու հետ, պատմական են ու իրական։ Ճիշտ է նաև նրա այն հաղորդումը, որը նկարագրում է Արտավանի նվիրատվությունը։ Ահա թե ինչ է գրել պատմիչը այդ մասին. «Այսպես, Իզատեսի օգնությամբ Արտաբանոսը նորից վերահաստատվեց իր գահի վրա, նախապես ավազանու կողմից վտարված լինելու պատճառով։ Նա չմոռացավ իր նկատմամբ Իզատեսի ունեցած երախտիքը և փոխհատուցեց նրան՝ իրենց մոտ ընդունված ամենամեծ պատիվներով։ Այսպես, նա թույլատրեց Իզատեսին բարձր խույր կրել և քնել ոսկյա մահճում, առանձնաշնորհումներ, որոնք միայն պարթև թագավորների մենաշնորհներն էին։ Ապա նրան տվեց ընդարձակ ու բերրի մի երկրամաս, որը նա վերցրել էր Հայաստանի թագավորից։ Երկրամասը կոչվում էր Նիսիբիս, և մակեդոնացիները հին ժամանակ այստեղ կառուցել էին Անտիոք քաղաքը, որը նրանք վերանվանել էին էպիմիգդոնիա։ Սրանք էին այն մեծարանքները, որոնք Իզատեսը ստացավ պարթևների թագավորից»[88]։

Սա, ինչպես տեսնում ենք, մեր աղբյուրներում հիշատակված Արուաստան երկիրն է[89], որը մ. թ. 37 թ. Արտավան Գ-ն Հայաստանից վերց-

---

[88] *Josephus*, Jewish Ant., XX, 67—70, 3, pp. 423—425.

[89] «Հունարեն Միգդոնիա, ասոր. Bêth 'Arabāyē, բյուզ. Βεϑραβηε։ Մինչև մ. թ. 37 թ. մտնում էր Մեծ Հայքի կազմում՝ 5850 կմ² տարածությամբ։ Կենտրոնն էր

նելով՝ որպես վարձատրություն նվիրում է Ադիաբենի թագավոր Իզատեսին[90]։

«Մեծ Հայքի հարավում կատարված այս տերիտորիալ» փոփոխությունների մասին տեղեկություններ են եղել նաև Պլինիոսի (23—79 թթ.) մեզ չհասած «Պատմության» մեջ, որի որոշ հատվածներ պահպանվել են նրա հանրահայտ «Բնական պատմության» (Naturalis historia-ի) մեջ։ Այդ տեղեկություններից երևում է, որ 37 թ. հռոմեապարթևական պայմանագրի համաձայն, երբ վերոհիշյալ գավառները հանվեցին Մեծ Հայքի թագավորության կազմից, Արտավան Գ-ի կամքով կցվեցին Ադիաբենի (Խեդայաբ) կախյալ թագավորությանը։ Ադիաբենեն, ըստ երևույթին, վերածվեց սահմանամերձ կուսակալության, բդեշխության։

Այս տերիտորիալ փոփոխությունները նկատի ունենալով, Մովսես Խորենացին հաղորդում է, որ Սանատրուկ թագավորի մահվանից հետո Միջագետքը, իր վերականգնված մայրաքաղաք Մծբինի հետ միասին, անցնում է հռոմայեցիներին, ապա՝ պարթևներին։ «Այս ժամանակվանից սկսած,—հաղորդում է նա,—Միջագետքի վրայից վերացավ Հայոց իշխանությունը»[91]։

Մեր թվականության 38 թ., Արտավան Գ-ի մահից հետո, պարթևական գահին է նստում Վարդանը[92]։ Այսպես է ասում Հովսեպոսը, սակայն Տակիտոսի վկայությամբ Արտավանին հաջորդում է Վոնոնի մյուս որդին՝ Գոտարզը[93]։ Իրականում այս երկու պատմիչների տեղեկությունների մեջ էական տարբերություն չկա, որովհետև Գոտարզը առաջին անգամ գահի վրա շատ քիչ է մնում, զիջելով աթոռը իր եղբայր Վարդանին։ Ուրեմն, մնում է ենթադրել, որ Հովսեպոսը կամ չի իմացել Գոտարզի այդ կարճատև թագավորության մասին, կամ այն գիտակցորեն լռության է մատնել։ Համենայն դեպս, Գոտարզին հաջողվում է իր եղբայր Վարդանին (42—45 թթ.) սպանել և երկրորդ անգամ գահ բարձրանալ (45—51 թթ.)։ Այս թագավորներից մեզ հասած դրամները, ի-

---

Մծբին քաղաքը, որի քաղաքային տերիտորիան էր Արուաստան երկիրը»։ Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40։

[90] Հովսեպոսի այս աշխատության որոշ ձեռագրերում տեղեկություն կա այն մասին, որ Արտաբանոս Գ-ն 6 տարի հետո է վերադարձել Ադիաբենից, սակայն, ինչպես գիտենք, նա մեկ տարի է մնում Ադիաբենում։

[91] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 719—720։

[92] *Josephus*, Jewish Ant., XX, 67—70, 4, p. 425.

[93] *Tacite*, Annales, XI, 10.

կապես, հաստատում են Տակիտոսի ճշմարտացիությունը[94]: *Այսպես, եղբայրների միջև ծավալված գահակալական կռիվները թուլացնում են պարթևական տերությունը քաղաքականապես ու տնտեսապես: Ադիաբենը ևս որպես կախյալ պետություն ներգրավվում է այդ գահակալական կռիվների շրջանակի մեջ: Հովսեպոսը պատմում է, որ «Երբ Վարդանը Արտավան Գ-ից հետո գրավում է իշխանությունը, մտածում է անմիջապես պատերազմ սկսել Հռոմայեցիների դեմ: Այդ մտադրությամբ գալիս է Իզատեսի մոտ և ստիպում նրան արշավանքին մասնակցելու համար օժանդակ ուժ պատրաստել: Սակայն Իզատեսը «չհամոզվեց, որովհետև քաջ գիտեր հռոմայեցիների ուժն ու կարողությունը, դրա համար էլ հասկացավ, որ Վարդանը անկարելին է ցանկանում: Անշուշտ, ավելի շատ նա դժկամում էր այն պատճառով, որ նա իր հինգ մատղաշ որդիներին ուղարկել էր (Երուսաղեմ)՝ տաճարում աղոթելու: Ուստի նա փորձեց Վարդանի միտքը փոխել, հաստատորեն նկարագրելով հռոմայեցիների միջոցներն ու կարողությունները, ենթադրելով, որ նման պատճառաբանությունները բավական կլինեն նրան վախեցնելու և նրանց դեմ պատերազմելու նրա ցանկությունը փոխելու համար»*[95]:

Հովսեպոսը թեև մանրամասնություններ չի տալիս Վարդանի կյանքի ու գործունեության վերաբերյալ, սակայն եղածից կարելի է եզրակացնել, որ նա տաքարյուն ու ավելի շատ պատերազմական գործողությունների հակամետ անձնավորություն է եղել ու այդ է պատճառը, որ, ինչպես Տակիտոսն է վկայում, չնայած նրա բազում հաղթանակներին՝ պարսկական ավազանին նրա դեմ դուրս եկավ, նկատի ունենալով նրա տաքարյունությունն ու միահեծան իշխելու ցանկությունը, և այդպես էլ որսի ժամանակ կազմակերպված դավադրության միջոցին սպանեցին նրան[96]:

Մ. թ. X դ. մեզ հասած պարսկական «Շահնամե» կամ «Թագավորների գիրք» դյուցազներգական պոեմում այդ սպանության մասին զրո-

---

[94] *Սելևկիայում գտնված 44/45—45/46 թթ. Գոտարզի դրամներից երևում է, որ 10 ամիս հետո արդեն նրա եղբայր Վարդանն էր գրավել գահը, որովհետև նրա դրամներն են մնջտեղում: Դրանից 6 ամիս հետո բաց են թողնված Գոտարզինը, 3 ամիս հետո՝ Վարդանինը, 9 ամիս հետո՝ նորից Գոտարզինը: Տե՛ս* R. H. Mcdowell, Coins from Seleucia on the Tigris, 1935, pp. 189—190.

[95] *Josephus*, Jewish Ant., XX, 70—74, 4, p. 427.

[96] *Տակիտոս, գիրք XI, գլ. 10, էջ 45:*

ված է, որ Ֆարուդը (Վարդանը) սպանվեց Գոտարզի հետ կապված Բիզանի և Ռահանի կողմից[97]:

Մինչ Վարդանի սպանությունը, Հովսեպոսը գրում է, որ երբ Իզատեսը մերժեց միանալ Վարդանի՝ հռոմեացիների դեմ ձեռնարկված արշավանքին, այս անգամ նա, կատաղած, պատերազմ սկսեց նրա դեմ: Պատմիչը գրում է, թե «Պարթևը (Վարդանը) համեմատաբար դեպս, դրանից զայրացավ, անմիջապես Իզատեսի դեմ սկսած արշավանքից շահ չունեցավ, քանի որ աստված նրա բոլոր ակնկալությունները կարճ կապեց: Որովհետև պարթևները լսելով հռոմայեցիների դեմ արշավելու Վարդանի ցանկության ու որոշման մասին, նրան սպանեցին և իշխանությունը հանձնեցին եղբորը՝ Գոտարզին:

Ադիաբենի թագավոր Իզատեսի դեմ պարթևների թագավոր Վարդանի պատերազմական գործողություններ սկսելու մասին այլ պատմիչների մոտ տեղեկություններ չեն պահպանվել, թերևս նույնիսկ այն պատճառով, որ Վարդանը հենց սկզբում դավադրության զոհ է դառնում և սպանվում:

Գոտարզը, իշխանությունը վերստին ձեռք բերելուց հետո, շարունակում է դաժանորեն կառավարել երկիրը և իր գործերով ահ ու սարսափ տարածել շրջապատի վրա[98], և դա էլ պատճառ է դառնում, որ նրանից դժգոհ մեծամեծները ուղիներ որոնեն նրան դահընկեց անելու համար: Նրանց հաջողվում է պատգամավորներ ուղարկել Հռոմ և խնդրել, որ այնտեղ պատանդ եղող Մեհերդատին օգնեն, որ գրավի հայրական գահը[99]: Նորից երկրում ծայր են առնում գահակալական կռիվներն ու նեղքին երկպառակությունները, մինչև որ Եփրատի ափին հռոմեական լեգիոնների հետ միասին երևում է Մեհերդատը, որը բանակ է դնում Զևգմայի մոտ, որտեղից հեշտ էր գետն անցնել: Մեհերդատը փոխանակ Միջագետքի վրայով գնար ուղիղ դեպի պարթևների մայրաքաղաքը, Գոտարզի կողմնակիցների դավադիր խորհուրդներին անսալով, շարժվեց նախ դեպի Հայաստան: Այդ ուշացումն էլ հետագայում ճակատագրական նշանակություն ունեցավ, որովհետև մինչ այդ Գոտարզը հնարավորություն ունեցավ իր ուժերը, համախմբելու ու հակահարված տալու: Ադիաբենի թագավոր Իզատեսը, որը Գոտարզի կողմնակիցն էր, առերես կնքած դաշինք էր կնքել Մեհերդատի հետ: Եվ երբ Մեհերդատը իր բանակով, Հա-

---

[97] J. C. Coyajee, The house of Gotarzes, „Jour. and proc. of the Asiatic soc. of Bengal„, n. s. XXVIII, 1932, p. 211.

[98] Տակիտոս, գիրք XI, գլ. 10, էջ 45:

[99] Նույն տեղում, գլ. 11, էջ 49:

յաստանի ձմեռային խիստ պայմաններից ու լեռնային ճանապարհներից հոգնած, շարժվում էր առաջ՝ իրեն համակիր պարսկական զորքի հետ միանալու, Տակիտոսի ասելով. «անցնելով Տիգրիս գետը, կտրում են Ադիաբենը, որի թագավոր Իզատեսն առերես դաշն էր կնքել Մեհերդատի հետ, իսկ գաղտնի, և ավելի մեծ հավատարմությամբ, թևակում էր Գոտարզի կողմը։ Անցնելիս վերցնում են Նինոսը (Նինվէն)՝ Ասորեստանի այդ շատ հին մայրաքաղաքը և ամրոցը[100], որը հայտնի է նրանով, որ Դարիոսի (Դարեհի) և Աղեքսանդրի միջև տեղի ունեցած մարտում, այնտեղ ոչնչացան պարսիկների ուժերը»[101]։ Մեհերդատի այս առաջխաղացումը դանդաղ էր տեղի ունենում, և Գոտարզն էլ ամեն ինչ անում էր ժամանակ շահելու համար, որպեսզի կարողանար իր ուժերը վերջնականապես համախմբել ու դասավորել։ Ահա թե ինչ է գրում այդ մասին պատմիչը. «Իսկ Գոտարզը դեռ բավականաչափ չէր ուժեղացել զորքով. նա Կորմա գետը[102] որպես ամրություն էր օգտագործում և, թևպետ նրան ծաղրի էին ենթարկում ու սուրհանդակների միջոցով մարտի հրավիրում, նա հապաղելու առիթներ էր հնարում, փոխում տեղերը, և ուղարկված մարդկանց միջոցով կաշառում էր թշնամիներին՝ նրանց հավատարմությունից հանելու նպատակով»[103]։ Ահա առիթից օգտվելով՝ Ադիաբենի թագավոր Իզատեսը և Օսրոյենի թագավոր Աբգարը իրենց զորքով անցնում են Գոտարզի կողմը։ Այսպիսով, Մեհերդատը զրկվում է օժանդակ զորքից և նրա մտքում կասկած է առաջանում նաև մնացածների հավատարմության վրա, ուստի նրան մնում էր միայն մի ելք՝ ճակատամարտել, տեսնելու համար, թե այն ինչով կավարտվի։ Ի վերջո, ճակատամարտը սկսվեց Մեհերդատի համար աննպաստ պայմաններում։ Նման պատերազմական գործողություններից հետո Մեհերդատը պարտվում է և իր հոր հովանավորյալ Պառակի խոստումներին հավատալով, հետևում է նրան, որը դավադրաբար հանձնում է նրան Գոտարզին։

Դրանից հետո Գոտարզը երկար չի մնում գահի վրա, հիվանդանալով, մահանում է։ Թագավորելու համար պարսիկ մեծամեծները հրավիրում են Մեդիայի կառավարիչ Վոնոնին. «Սա չի ունենում ո՛չ հաջող, ո՛չ էլ անհաջող գործեր, որոնցով ինքը հիշատակվեր։ Կարճ ու անփառու-

---

100 Հասկանալի է, որ խոսքը այստեղ Արբելա քաղաքի մասին է, և, իսկապես, աղբյուրներից հայտնի է, որ Արբելան կոչվել է նաև «Ամրոց»։

101 Տակիտոս, գիրք XI, գլ. 12, էջ 49։

102 Տեղը անհայտ է։

103 Տակիտոս, գիրք XI, գլ. 12, էջ 49։

նակ իշխանությունից հետո մեռնում է, և պարթևների գործերի ղեկավարությունն անցնում է նրա որդի Վոլոգեսին (Վաղարշակին)»[104]:

Թեև Հովսեպոսը գրում է, որ Գոտարզը ևս ինչ-որ դավադրության ժամանակ սպանվեց ու նրան հաջորդեց նրա եղբայր Վոլոգեսը կամ Վաղարշը[105], սակայն կարծում ենք, որ այս հարցում ավելի ճիշտ է Տակիտոսը, որովհետև հայտնի է, որ Գոտարզին հաջորդել է Վոնոն Բ-ն 51 թ. սկզբներին և թագավորել է ընդամենը մի քանի ամիս, իսկ նրան հաջորդել է Վոնոն Բ-ի որդիներից՝ Վաղարշը (51—75 թթ.), որի եղբայրներն էին Տրդատն ու Բակուրը: Հովսեպոսը գրում է, որ Վաղարշ Ա-ն գահ բարձրանալուց հետո, իր ավագ եղբայր Բակուրին տվեց Մեդիայի թագավորությունը, իսկ փոքրին՝ Տրդատին, Հայաստանը[106]:

Վաղարշ Ա-ով հարևան փոքր ժողովուրդների նկատմամբ պարթևների արտաքին քաղաքականության մեջ նոր դիծ է որդեգրվում: Վաղարշն իր նոր քաղաքականությամբ նպատակ ուներ հարևան գահերին բազմեցնել իր եղբայրներին ու հարազատներին, նրանց միջոցով սիրաշահել վերնախավերին և ստեղծել միասնական մի ճակատ՝ Հռոմի և Արևելքի այս երկրներում ապրող ու նրա մշակույթին համակիր տարրերի դեմ ծավալվող պայքարում:

7. ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐԵՎԱՆ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Վաղարշ Ա-ի թագավորությամբ պարթևների և նրանց հարևան փոքր ժողովուրդների միջև քաղաքական նոր հարաբերություններ են հաստատվում: Եթե մինչ այդ պարթևները աշխատում էին այդ ժողովուրդներին բռնի ուժով պահել իրենց քաղաքական ազդեցության ներքո, ապա Վաղարշի օրոք բռնի միջոցների փոխարեն հիմք է դրվում տնտեսական, քաղաքական ու մշակութային համագործակցության: Երկարատև գահակալական կռիվները երկրի ներսում, և ապա՝ Հռոմի հետ, քաղաքական ազդեցության ոլորտները, առևտրական ճանապարհները իրենց հսկողության տակ վերցնելու նպատակով հաճախ տեղի ունեցած պատերազմները, պարթևների պետությունը կանգնեցրել էին քայքայման ու անանկացման եղրին, ուստի անհրաժեշտ էր նոր ուղիներ որոնել երկրի հզորությունը վերականգնելու ու հռոմայեցիներին հարված հասցնելու

[104] Նույն տեղում, գիրք XI, գլ. 14, էջ 53:
[105] *Josephus*, Jewish Ant., XX, 74—76, 4, pp. 428—429.
[106] *Josephus*, Jewish Ant., XX, 74—76, 4, p. 429.

համար, մանավանդ, որ հռոմայեցիները արևելյան այս երկրներում ապրող հույներից բացի իրենց գործակից ու համակիր էին դարձրել վերնախավերի բաղում ներկայացուցիչներին, ոմանց կաշառելով, ոմանց խոստումներ, ոմանց էլ պաշտոններ տալով: Հռոմայեցիների օգտին էին գործում նաև խոշոր առևտրականներից շատերը: Այնպես որ իրերի դրությունը ի նպաստ պարթևների փոխելու համար Վաղարշ Ա-ին անհրաժեշտ էր գտնել խելացի և հեռատես գործելակերպ: Նրա առաջին քայլն է լինում իր եղբայր Բակուրին տեղավորել Ատրպատականի, իսկ Տրդատին՝ Հայաստանի թագավորական գահի վրա: Նրա այս փորձը հանդիպում է հռոմայեցիների բուռն դիմադրությանը, որը առիթ է տալիս պատերազմական գործողություններին, որոնք, ի վերջո, ավարտվում են փոխզիջողությամբ:

Տնտեսական ասպարեզում Վաղարշը հույն և հռոմայեցի առևտրականների, արհեստավորների համար այնպիսի արհեստական դժվարություններ է ստեղծում, որ նրանք ստիպված հեռանում են պարթևական տիրապետության մեջ մտնող երկրներից և իրենց տեղը, բնականաբար, զիջում տեղաբնիկներին՝ պարսիկներին, հրեաներին, ասորիներին ու հայերին: Վերջիններս աստիճանաբար իշխող ու ազդեցիկ դիրք են գրավում ինչպես արհեստագործության, այնպես էլ տարանցիկ ու միջազգային առևտրում: Հասկանալի է, որ արհեստավորների ու առևտրականների այս խավը նեցուկ էր կանգնելու պարթևական այս նոր քաղաքականությանը:

Վաղարշ Ա-ի օրոք մեծ շարժում է սկսվում հունականության դեմ «նույնիսկ աշխարհագրական անունների բնագավառում: Այսպես, օրինակ, «Ալեքսանդրիա Արաքոզիայի» քաղաքը սկսում է անվանվել տեղական «Փանջվեյ» կամ «Անտիոքիա Մարգիանա», այնուհետև կոչվում տեղական «Մարվ» անունով և այլն: Պարթևական դրամների վրա հունարեն գրությունները փոխարինվում են պարթևականով՝ տեղական արամեական գրի տառատեսակներով»[107]:

«Նույն այդ ժամանակ մեծ հետաքրքրություն է առաջ գալիս դեպի ժողովրդական ավանդությունները, էպոսը, երգերը և բանավոր գրականությունը»:

«Վաղարշ Ա-ի օրոք գրի են առնվում «Ավեստայի» կարևոր մասերը, կազմվում նրա առաջին խմբագրությունը: Հետագայում տեղի է ունենում սրանց կանոնացումը և վեր է ածվում «զրադաշտականության»՝

---

[107] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 730:

իբրև որոշ կրոնական համակարգ, որը այնուհետև դառնում է պետական կրոն»[108]:

«Օրեցօր հզորացող մազդեական կրոնի՝ զրադաշտականության կենտրոնն են դառնում Ատրպատականի մայրաքաղաք Գանձակը (այժմ՝ Լայլան գյուղը) և Ցրաասպան կամ Գիշը (արաբական աղբյուրների Ջիշը կամ Շիզը)»:

«Վաղարշ Ա-ն նույնիսկ փորձ արեց իր մայրաքաղաքը հելլենացված Տիզբոնից փոխադրել Եփրատի աջ ափին հիմնադրված Վոլոգեսակերտ (Վաղարշակերտ) քաղաքը, որտեղ ժամանակի ընթացքում պիտի փոխադրվեր Պալմիրայի միջազգային առևտուրը, սակայն հաջողություն չունեցավ»[109]:

Վաղարշ Ա-ի համակողմանի այս միջոցառումները իրենց արդյունքը տվեցին, և ստեղծվեց մի ամուր հենարան՝ հակահարված տալու մի կողմից տիրապետության ներսում ապրող հելլենական տարրերին, այսինքն՝ հռոմեասերներին, և մյուս կողմից՝ հռոմեական քաղաքական ու տնտեսական կամայականություններին, որովհետև վերջին տարիներին հռոմայեցիները իրենց ոտնձգություններով խոր ատելություն էին առաջացրել և՛ դեպի սեփական, և՛ դեպի դրածո թագավորները: Անշուշտ, ժողովուրդների այս ատելությունը բարենպաստ պայմաններ էր ստեղծում Վաղարշի քաղաքականության համար: Ժողովրդական դժգոհություն էր առաջացել նաև Ադիաբենում, Իզատեսի դեմ: Ըստ երևույթին, վերջին տարիներին Իզատեսը բոլորովին ընկել էր հրեաների քաղաքական ու տնտեսական ազդեցության ներքո և նրա գործունեությունը, մանավանդ հրեական կրոնը տարածելու նրա փորձերը հանդիպեցին Ադիաբենի մեծամեծների, իր եղբայր Մոնոբազոսի և բազմության դիմադրությանը: Հովսեպոսը գրում է, որ «Իզատեսի եղբայր Մոնոբազոսը և նրա ազգականները տեսան, որ թագավորը ստիպված ունեցած աստվածավախ պաշտամունքով բոլոր մարդկանց հիացմունքն է շահել, և նախնիների կրոնը լքելու և հրեական ավանդությունները ընդունելու նախանձախնդիր է դարձել»[110]: Նրա այդ մտադրությունը բացահայտվեց և հայտնի դարձավ բնակիչներին:

Չնայած աղնվականությունը դրանից վրդովվել էր, բայց իր վրդովմունքը չէր արտահայտում, այլ սպասում էր հարմար առիթի, նրան

---

108 Նույն տեղում:

109 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 730:

110 Բնագրի թարգմանիչը ցույց է տվել, որ այս հատվածում հետագայում հավելումներ են եղել և ինքը տողատակում բերել է այդ հավելագրությունները: Այդ մասին տե՛ս Josephus, Jewish Ant., XX, 74—76, IV, 1, p. 429.

(Իզատեսին) իր այդ մտադրության համար պատժելու։ Նրանք դրեցին արաբների Աբիաս թագավորին և մեծ գումար խոստացան նրան, եթե նա համաձայնի պատերազմել իրենց թագավորի դեմ։ Ապա նրանք խոստացան, առաջին իսկ առիթին, լքել թագավորին, որովհետև ուզում են պատժել նրան, քանի որ նա ատում է իրենց սովորույթները։ Հավատարմության երդումներով փոխադարձաբար կապվելուց հետո, նրանք Աբիասին հաղորդեցին, որ շտապի։ Արաբ թագավորը համոզվեց և մեծ բանակով արշավեց Իզատեսի դեմ։ Հարձակումը չսկսած, նախապես պայմանավորված ազդանշանով, Իզատեսին լքեցին, ձևացնելով, որ խուճապի են մատնված և դառնալով դեպի թշնամին՝ փախան։ Իզատեսը, համենայն դեպս, խուճապի չմատնվեց։ Հասկանալով, որ դա աղնվականների կողմից դավաճանություն է՝ անձամբ զնաց ճամբարը։ Փախուստի պատճառի մասին հարցուփորձից իմացավ, որ նրանք իրենց ուժերով միացել են Արաբին, (ուստի) հանցավորներին մահվան դատապարտեց։ Հաջորդ օրը, մարտի ժամանակ, թշնամիներից շատերին սպանեց և մնացածներին փախուստի մատնեց։ (Արաբների) թագավորին անձամբ հետապնդեց և շրջափակեց ինչ-որ ամրոցում, որը Արշամոս էր կոչվում։ Համառ կռվից հետո, հարձակումով գրավեց այն, և այնտեղ եղած բազում ավարը կողոպտելուց հետո Ադիաբեն վերադարձավ։ Նա Աբիասին կենդանի չբռնեց, որովհետև վերջինս ամեն կողմից պաշարված լինելով, Իզատեսի թակարդը ընկնելուց առաջ, անձնասպան եղավ»[111]։

Պատմիչի տեղեկություններից հետևում է, որ հակառակ Ադիաբենի նախարարների դավաճանության, Իզատեսը կարողանում է հեշտությամբ հաղթել արաբների թագավոր Աբիասին։ Ո՞վ էր Աբիասը։ Դեռ շատ վաղ ժամանակներից արաբական ցեղերը հարավից՝ Նեգեվից կամ Եմենից եկել ու տարածվել էին ամբողջ Միջագետքի երկայնքով[112] ու որոշ տեղերում ստեղծել էին նույնիսկ իրենց թագավորությունները[113]։ Տակիտոսի մոտ, օրինակ, Օսրոյենի Աբգարը անվանված է արաբների թագավոր[114]։ Հովսեպոսը պատմում է, որ Աբիասը Իզատեսից փախչելով եկել ու դիրք էր գրավել «Արշամոս» ամրոցում[115]։

Ադիաբենի աղնվականներն ու նախարարները Իզատեսի եղբոր՝ Մոնոբազոսի գլխավորությամբ, պարտությունից չվհատվելով, այլ ուղի-

111 *Josephus*, Jewish Antiquities, XX, 74—76, IV, 1, pp. 429—430.

112 *L. Dillemann*, Mésopotamie orientale et pays adjacents, Paris, 1962, p. 74.

113 *Страбон*, География, I, 34, p. 49.

114 Տակիտոս, *դիրք XII, գլ. 12, էջ 49, 51*։

115 *Արշամոս ամրոցը գտնվում էր Մծբինի մոտակայքում*։

ներ են որոնում Իզատեսին տապալելու համար։ Այդ նպատակով այս անգամ դիմում են պարթևների թագավոր Վաղարշ Ա-ին և փորձում նրա օգնությամբ լուծել այդ հարցը։ Հովսեպոսը պատմում է, որ «Իրենց առաջին անհաջող փորձից հետո, Ադիաբենի մեծամեծները նորից հանդիսատ չմնացին, չնայած ասուված նրանց այդպիսի (լավ) թագավոր էր տվել. այս անգամ մի այլ նամակ գրեցին պարթևների Վոլոգես թագավորին, խնդրելով նրան, որ նա Իզատեսին սպանի և փոխարենը պարթևների սերնդից մի այլ տիրակալ նշանակի, որովհետև, ասում էին նրանք, «մենք ատում ենք մեր թագավորին, որը լքել է մեր սովորությունները և կապվել օտար նիստուկացի հետ»։ Պարթև թագավորը նրբանց խոսքից ազդված, պատերազմի առիթ էր որոնում, բայց որովհետև ազնիվ (հարմար) պատրվակ չուներ, պատգամ հղեց, պահանջելով, որ Իզատեսն իրեն շնորհված պատիվները եւ վերադարձնի, մերժելու դեպքում նա սպառնում էր, որ պատերազմ կհայտարարի։ Իզատեսն իր մտքում ցավով վրդովվեց, երբ այս պատգամը ստացավ, որովհետև պարգևները եւ հանձնել, կնշանակեր անարգանքի ենթարկվել։ Բացի այդ, նա գիտեր, որ Պարթևը (Վաղարշը) պարգևները եւ ստանալով էլ չէր բավարարվի, ուստի ներկա վիճակում, որոշեց իրեն հանձնել աստծո ողորմածությանը։ Անդրադառնալով, որ ինքն աստծո մեջ ուներ դաշնակիցներից ամենամեծին, նա իր զավակներին ու կանանց տեղավորեց իր ամենաապահով ամրոցներից մեկում, հացահատիկն ամբարեց բերդերում, և այրեց արոտավայրերի խոտը»[116]։

Հետաքրքիր են պատմիչի հաղորդած այս մանրամասնությունները։ Պարզվում է, որ ադիաբենցի մեծամեծներն ու իշխանները ամեն գնով շահագրգռված էին գահից հեռացնել Իզատեսին։ Թեև պատմիչի ասածից հետևում է, որ այդ ատելությունը առաջացել էր հավատափոխության պատճառով, բայց իրականում կապված էր այն փաստի հետ, որ Իզատեսն իր գործունեության ընթացքում, հակադրվելով տեղական իշխաններին, հենվում էր հրեաների վրա։ Հետաքրքրական են նաև Հովսեպոսի մյուս տեղեկությունները, թե ինչպես Վաղարշի պատերազմական գործողություններից առաջ Իզատեսը պատրաստություններ է տեսնում։ Երեխաներին ու իր կանանց ամրոցում պահելուց հետո, հացահատիկ է ամբարում, այրում է արոտավայրերի խոտերը, որպեսզի թշնամին չկարողանա օգտվել դրանցից։ Ահա նման նախնական միջոցառումներից հետո սպասում է պարթևական ուժերի ժամանմանը։ «Պարթևը (Վաղարշը) հասավ հետևակ ու ձիավոր մեծ ուժով, ավելի

[116] *Josephus*, Jewish Ant., XX, 81—86, 2, p. 433.

շուտ քան սպասվում էր և արագ շարժվեց ու բանակեց, ցցապատնեշված ճամբար դնելով այն գետի մոտ, որը Ադիաբենի ու Մեդիայի միջև սահման էր»[117]:

Պետք է ենթադրել, որ ոչ բոլոր մեծամեծներն էին գործում Իզատեսի դեմ, այլ միայն նրանք, ում շահերը այս կամ այն կերպ կապված էին պարթևական արքունիքի հետ: Անկասկած, նրանց թիվը քիչ չի եղել Ադիաբենում: Այդ մասին քաջ իմանալով, Վաղարշը մտածում էր Իզատեսի փոխարեն Ադիաբենի գահին բազմեցնել իր նախընտրածին: Ինչպես գիտենք, Վաղարշը փորձում էր հարևան թագավորական իշխանությունները հանձնել իր եղբայրներին, հարազատներին ու հավատարիմներին: Այդ նպատակով էլ իր բանակով շարժվում է Ադիաբենի վրա:

Հովսեպոսը պատմում է, որ «Իզատեսը ևս, որն իր հետ վեց հազար ձիավոր ուներ, բանակ դրեց նրանից (Վաղարշից) ոչ հեռու: Պարթևի կողմից պատգամավոր նկավ Իզատեսի մոտ և հայտնեց պարթևների տերության մեծության մասին, թե ինչպես այն տարածված է Եփրատ գետից մինչև Բակտրիա[118]: Նա հիշեցրեց թագավորի հպատակի պարտավորության մասին, սպառնալով, որ Իզատեսը կպատժվի տերերի նկատմամբ ցուցաբերած ապերախտության պատճառով, և որ այն աստվածը, որին նա պաշտում է, անկարող կլինի նրան ազատել թագավորի ձեռքից»: Իզատեսը պատասխանում է, թե «գիտե, որ պարթևների տերությունը շատ ավելի մեծ է, քան իրենը, բայց այդ բոլորի հետ, ամենից ավելի նա վստահ էր, որ աստված ամենակարող է, քան մարդը: Այսպես պատասխանելով, նա հայցեց աստծո օգնությունը: Ծունկի գալով, մոխիր ցանեց իր գլխին, կնոջ ու երեխաների հետ ծոմ պահեց ու այսպես աղոթեց աստծուն. «Ո՛վ ամենակալ տեր, եթե իզուր չէ, որ ես վստահել եմ քո բարության, և հավատացել եմ, թե բոլորի մեջ դու ես միակ ճշմարիտ տերը, օգնիր ինձ ոչ միայն թշնամիներից պաշտպանվելու, այլ նաև նրա համար, որ նրանք հանդգնում են քո կարողությունը փորձել»[119]: Այսպես բարձրաձայն նա լաց եղավ, ողբաց ու աստված էլ լսեց նրան: Եվ ճիշտ նույն գիշերը Վոլոգեսը նամակ ստացավ, որի մեջ գրված էր թե դահերի ու սակերի մի մեծ ուժ, օգտվելով նրա բացա-

---

117 Թե որ գետի մասին է խոսքը, աղբյուրում չի հիշատակված: Պիտի ենթադրել, որ՝ Մեծ Զաբն է:

118 Այժմ այն Սովետական Միության կազմի մեջ է մտնում, Աղվանստանի հյուսիսում, մեզ հայտնի Տաջիկական ՍՍՀ:

119 Բանասերները կապ են տեսնում Իզատեսի և Եզեկիա մարգարեի աղոթքի միջև: Տե՛ս «Թագավորութեանց Չորրորդ», ԺԹ, 15—19:

կայութիւնից հայրենի երկրից, արշավել ու ավերում են պարթևների երկիրը: Հետևաբար, հուսախաբված վերադարձավ: Այսպես աստվածային նախախնամությամբ Իզատեսը փրկվեց Պարթևի (Վաղարշի) սպառնալիքներից»[120]:

Վաղարշ Ա-ի նշված արշավանքի մասին այլ աղբյուրներում ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Եթե այս տվյալների վրա հիմնվենք, ապա պիտի ենթադրենք, որ Վաղարշի արշավանքը Ադիաբենի վրա տեղի է ունեցել նրա թագավորության առաջին տարիներին, այն ժամանակ, երբ դեռ նրա դիրքերը ամրացած չէին երկրի ներսում: Մոտավոր հաշվումները այդ մասին են խոսում: Վաղարշի այս արշավանքից քիչ անց մահանում է Իզատեսը: Եվ եթե, ինչպես գրել ենք նախորդ էջերում, Իզատեսը ծնվել է մ. թ. ա. 3 կամ 2 թ. և ապրել է 55 տարի ու թագավորել 24 տարի, ապա այդ արշավանքը եղել է 52 կամ 53 թ., այսինքն՝ Վաղարշի գահակալությունից մեկ կամ երկու տարի հետո:

Հովսեպոսը խոսելով Իզատեսի մահվան մասին, գրում է, որ «Դրանից (արշավանքից) քիչ անց, 55 տարեկան հասակում, և իր թագավորության 24-րդ տարում, մահացավ Իզատեսը: Նա թողեց 24 տղա զավակ և 24 աղջիկ: Նրա հրամանն էր, որ իր եղբայր Մոնոբազոսը հաջորդի իրեն»[121]:

Փաստորեն, Հովսեպոսի այս վերջին վկայությունը Մոնոբազոսին դնում է հակասական վիճակի մեջ, որովհետև, ինչպես իր աշխատության նախորդ էջերում է գրել, Մոնոբազոսը Իզատեսի դեմ Ադիաբենի մեծամեծների կողմից կազմակերպված ապստամբական շարժման պարագլուխն էր և Իզատեսի դեմ կազմակերպված դավադրությունների մասնակիցը:

Իսկ ինչ վերաբերում է Իզատեսի 24 արու զավակ և 24 աղջիկ ունենալուն, ապա, մեր կարծիքով, այն չափազանցված թիվ է և կապ ունի կրոնական նախապաշարման հետ: Այսպես՝ Աստվածաշնչում հաճախ օգտագործել են 24 թիվը: Սակայն այդ բոլոր զավակներից ոչ մեկը ոչ մի դեր չի խաղում Ադիաբենի պատմության մեջ: Համենայն դեպս, պատմությունը լռում է նրանց մասին:

Պատմիչը գրում է, որ Հեղինե թագուհին որդու մահվան լուրն առնելով, խիստ վշտանում է, որովհետև հասկանում է, որ կորցրել է «մի շատ բարեպաշտ որդի»: «Սակայն նա մխիթարվեց, իմանալով, որ իր ավագ որդին է հաջորդել նրան, և շտապեց միանալ (գնալ) նրան: Նա

---

120 *Josephus*, Jewish Ant., XX. 91—94, 2, pp. 435, 437.

121 Նույն տեղում, 3, էջ 437:

Ադիաբենն հասավ, բայց իր որդի Իզատեսից (մահից) հետո, (ապա) առաջացած տարիքից ու վշտից, երկար չապրեց և շունչը փչեց (մահացավ)»[122]։

Մոնոբազոսը Հելինե թագուհու «և իր եղբայր (Իզատեսի) ոսկորները (դիակները) ուղարկեց Երուսաղեմ այն կարգադրությամբ, որ դրանք թաղվեն երեք բուրգերում, որն իր մայրը (Հելինեն) կառուցել էր Երուսաղեմ քաղաքից երեք ասպարեզ[123] հեռավորության վրա»[124]։

Ճիշտ է, Հովսեպոսը այնպես է նկարագրում, թե իբր Մոնոբազոսը մոր և եղբոր դիակները որպես մեծ հարգանք ուղարկել է Երուսաղեմ, բայց կարծում ենք, որ թագավորը այս քայլին է դիմել՝ մի կողմից վերջ տալու համար հրեաների՝ Ադիաբենում ունեցած խոշոր ազդեցությանը, մյուս կողմից՝ սիրաշահելու երկրի մեծամեծներին, որոնց գերգրում էր այդ ազդեցությունը։ Կարծում ենք, որ Մոնոբազոսը Իզատեսի և Հելինե թագուհու դիակների հետ միասին, գահի ապահովության համար, երկրից հեռացրեց ու իրենց հայրենի կալվածը՝ Երուսադեմ, ուղարկեց իր եղբոր ընտանիքի անդամներին ու նրանց մոտ կանգնած անձնավորություններին։ Ըստ երևույթին, գնացողների թիվը այնքան էլ քիչ չի եղել։ Նրանց մեջ էին նաև հայտնի պինվորականներ ու զորավարներ, որովհետև տարիներ հետո, 66 թ. սկսված հրեական ապստամբության ժամանակ, ադիաբենցի այս պինվորականները հռոմայեցիների դեմ կազմակերպված ռազմական գործողությունների ընթացքում աչքի են ընկնում իրենց քաջագործություններով։ Պատմիչը գրում է, որ 66 թ. հրեաները պատրաստվում էին ապստամբության, և այդ ապստամբության կենտրոնն էր Գալիլիան։ Ահա այդ ապստամբության առաջն առնելու համար հռոմայեցիները պատմիչ Հովսեպոսին ուղարկում են ապստամբներին համոզելու, որ նրանք ետ կանգնեն իրենց մտադրությունից։ Հովսեպոսը հանդիպում է նրանց և աշխատում համոզել, որ ապստամբությունը զուր արյունահեղության պատճառ կլինի, և իրենք արդյունքի չեն հասնի, որովհետև «նրանք արդեն հռոմայեցիներին պատանդներ են ուղարկել»։ Չպետք է մտածել նաև, ասում է նրանց պատմիչը, Եփրատից այն կողմ՝ Ադիաբենում ապրող հավատակիցների օգնության մասին, որովհետև այդ դեպքում նրանք «կընկնեն լուրջ պատերազմի մեջ։ Եթե նույնիսկ (Ադիաբենի բնակիչները) մտածեն նման հիմարություն անել, ապա պարթևը ինքը թույլ չի տա, որովհետև

---

122 *Josephus*, Jewish Ant., XX, 94—96, 3, p. 439.

123 Ասպարեզը հունական «ստադիոնն» է, որը հավասար է 201 մետրի։

124 *Josephus*, Jewish Ant., XX, 94—96, 3, p. 439.

նա զգույշ է, հռոմայեցիների հետ ուզում է խաղաղ ապրել, ուստի եթե ենթականերից մեկը դեմ դուրս գա նրանց (հռոմայեցիներին), ապա այդ կդիտվի դաշինքի խախտում»[125]:

Ահա այսպիսի փաստերով Հովսեպոսը փորձում է համոզել ապըստամբության պատրաստվող իր հայրենակիցներին, բայց ապարդյուն: Հրեաները սկսում են ապստամբությունը հռոմայեցիների դեմ: Հռոմայեցի կեստիուս զորավարը իր զորքով շարժվում է դեպի Գալիլիա ու գրավում ամրացված քաղաք Շաբուլոն: Այս հաջողություններից հետո, նա ամբողջ Գալիլիան ապստամբներից մաքրելու նպատակով, 12-րդ լեգեոնի հրամանատար Կայեսենիուս Գալլոսին թողնում է այնտեղ, իսկ ինքը շարժվում է Հրեաստանի մայրաքաղաք Երուսաղեմի վրա 66 թ. Թեշրի, այսինքն՝ հոկտեմբեր ամսի 15—22-ին[126]: Երուսաղեմի պարիսպների առաջ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ հրեաները հաջողության են հասնում և կոտորում են հռոմայեցիներից շատերին: Հետաքրքրական է, որ այդ ճակատամարտում հրեաների կողքին կռվում էին ադիաբենցիներ ու նրանց հետ միասին՝ Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի հարազատներից՝ Մոնոբազոսն ու Կենեդայոսը, որոնք աչքի են ընկնում իրենց քաջությամբ[127]:

Այս ադիաբենցիները, ինչպես նաև Մոնոբազոսի հարազատները այն անձնավորություններն էին, որոնք Իզատեսի մահից հետո (հավանաբար Իզատեսի զավակներից) բնակություն էին հաստատել Հրեաստանում:

Այս տեսակետից հետաքրքրական է նաև այն, որ 69 թ., Տիտոսի արշավանքի ժամանակ, հրեական ապստամբության ղեկավարներից Սիմոնի կողքին հռոմայեցիների դեմ կռիվներին մասնակցել է նաև ադիաբենցի ինչ-որ Նաբատեոսի որդին, որը Սեակիրաս (կաղ) էր կոչվում մարմնի վնասվածքի պատճառով: Սա իր քաջությամբ ու անձնազոհությամբ խլում է ջահերը և նետվում հռոմեական ռազմական մեքենաների վրա ու այրում դրանք: Սկսում է հրդեհը: Հրդեհին ու հրեաների հարվածներին չդիմանալով, հռոմայեցիները նահանջում են իրենց ճամբարը[128]:

Այս բոլորը ի մի բերելով, տեսնում ենք, որ Իզատեսի մահից հետո

---

125 *Josephus*, Jewish war, II, 385—389, pp. 475—477.

126 Նույն տեղում, էջ 513—519, 523—525:

127 Նույն տեղում:

128 *Josephus*, Jewish war, V, 472—479, pp. 349, 351.

էլ կապը Ադիաբենի ու Հրեաստանի միջև չի դադարել. այս անգամ ադիաբենցիները իրենք են աշխուժացրել իրենց գործունեությունը հրեաների երկրում և, երբ անհրաժեշտ է եղել, նրանց հետ միասին զենք են բարձրացրել հռոմայեցիների դեմ ու կռվել Հրեաստանի ազատագրության համար: Այն փաստը, որ հրեաները ապստամբությունից առաջ մտածել են, որ ադիաբենցիները կարող են իրենց օգնության հասնել, վկայում է այն մասին, թե ինչպիսի սերտ կապերի մեջ են եղել այս երկու ժողովուրդները: Համենայն դեպս, Իզատեսից հետո, նրա եղբայր Մոնոբազոս Բ-ի թագավորության ժամանակ, ադիաբենցիների ու հրեաների միջև բարեկամական փոխհարաբերությունները շարունակվել են:

8. ՊԱՐԹԵՎՆԵՐԻ, ՀԱՅԵՐԻ ԲՆ ԱԴԻԱԲԵՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԵՄ ՀՌՈՄԻ

Թեև Հովսեպոս պատմիչը իր մեզ ծանոթ աշխատության մեջ խոստանում է գրել Ադիաբենի թագավոր Մոնոբազոս Բ-ի (Իզատեսի ավագ եղբոր) կյանքի ու գործունեության մասին, սակայն, չգիտես ինչու, միայն նշում է. «Ինչ վերաբերում է Մոնոբազոս թագավորի գործերին, նրա կյանքի ընթացքին, ես դրանք կպատմեմ ավելի ուշ»[129]: Պատմիչը բավարարվել է լոկ իր այս խոստումով: Բարեբախտաբար, Մոնոբազոս Բ-ի կյանքի ու գործունեության հետ կապված որոշ մանրամասնություններ հասել են մեզ Տակիտոսի շնորհիվ: Նրա պատմածից երևում է, որ Մոնոբազոս Բ-ն եղել է պարթևների թագավոր Վաղարշ Ա-ի ամենահավատարիմ զինակիցներից մեկը:

Վաղարշ Ա-ն մ. թ. 52 թ. իր եղբայր Բակուրին Ատրպատականի թագավոր նշանակելուց հետո, օգտվելով Հայաստանում ուժեղացող հակահռոմեական տրամադրություններից, ցանկանում է իր մյուս եղբորը՝ Տրդատին, բազմեցնել հայկական թագավորական գահին: Այդ նպատակով, նրան մի մեծ բանակ հանձնելով, ուղարկում է Հայաստան, որը հայերի անմիջական օգնությամբ իր ձեռքն է վերցնում հայկական թագավորական իշխանությունը: Այս կապակցությամբ Տակիտոսը պատմում է. «Որովհետև Վոլոգեսը կարծում է, որ հասել է ատիթը հարձակվելու Հայաստանի վրա, որն իր նախնիների տիրապետության տակ էր և որին այժմ տիրում էր օտար թագավորը՝ շնորհիվ զաղրելի արարքի, զորք է ժողովում

---

[129] *Josephus*, Jewish Ant., XX, 94—96, 3, p. 439.

և պատրաստվում է իր եղբայր Տրդատին թագավոր դարձնել, որ իր ընտանիքի որևէ անդամն առանց իշխանության չմնա[130]: Վաղարշը հաջողությամբ մտնում է հայկական Տիգրանակերտ ու Արտաքսատա (Արտաշատ) քաղաքները և տիրում երկրին, սակայն, ինչպես ասում է պատմիչը, «դաժան ձմեռը, չնախատեսված պաշարի պակասությունը և այդ երկու պատճառներից ծագած համաճարակը ստիպում են Վոլոգեսին թողնել նվաճած երկիրը»[131]:

Սկսվում է տասնամյա պատերազմը, հայ-պարթևների ու հռոմայեցիների միջև: Տասնամյա պատերազմի ժամանակ հռոմայեցիները ամեն միջոց գործադրեցին, որ իրենց դրածոյին պահեն հայկական գահի վրա: Սակայն Տրդատն անընդհատ դիմադրում էր նրանց այդ փորձերին: Ճիշտ է, նա խուսափում էր սկզբում լայն ճակատով պատերազմել հռոմայեցիների դեմ, բայց, ի վերջո, ստիպված է լինում մարտահրավերն ընդունել: Այդ ճակատամարտում Տրդատը պարտվեց, որովհետև Վաղարշ Ա-ն իր տերության հյուսիս-արևելքում ծագած վրկանաց աշխարհի ապստամբությունը ճնշելու գործով էր զբաղված: Ստեղծված այս իրադրության մեջ Վաղարշը որոշ զիջումներով փորձում է ժամանակ շահել: Այդ ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարն էր հռոմայեցի նշանավոր զորավար Կորբուլոնը, որն իր ռազմական կարողություններից բացի, ուներ նաև դիվանագիտական ու քաղաքական գործչին յուրահատուկ ընդունակություններ, և բոլոր միջոցները գործ էր դնում, որ այս անգամ Ներոն կայսեր կողմից ընտրված Տիգրանին բազմեցնի հայկական գահին: Տիգրանը Կապադովկիայի մեծամեծներից Արքելայոս թագավորի ծոռն էր, բայց, որովհետև երկար ժամանակ Հռոմում պատանդ էր եղել, իջել էր մինչև ստրկական համբերությունը: Ըստ Տակիտոսի, հայերի շրջանում Տիգրանին ոչ բոլորն էին համակրում[132], բայց նրանք ժամանակավորապես լռում էին, անկասկած, սպասելով հարմար առիթի: Այսպես Արտաշատն ու Տիգրանակերտը վերադրավելուց հետո, հռոմայեցիները, ինչ-որ Տիգրանի, Հերովդես Մեծի ծոռին (Տիգրան Ե-ի եղբոր՝ Ալեքսանդրի որդուն), Արտաշեսյանների հետ հետու ազգակցական կապ ունենալու պատճառով հայոց թագավոր նշանակեցին (60—61 թթ.), որը պատմությանը հայտնի է Տիգրան Զ անունով: Տիգրան Զ-ի օրոք Հայաստանի մայրաքաղաքը նորից Տիգրանակերտն է դառնում, որովհետև Արտաշատը ավերվել էր: Ամենացա-

130 Տակիտոս, *դիրք 12, գլ. 50, էջ 63—65:*

131 *Նույն տեղում:*

132 Տակիտոս, *դիրք XIV, գլ. 25, էջ 91:*

վալին, սակայն, այն էր, ինչպես Տակիտոսը պատմում է, որ Տիգրան Ջ-ի ժամանակ, հռոմայեցիները Հայաստանը վերջնականապես թուլացնելու ու նրա ուժերը ջլատելու նպատակով իրենց դաշնակիցներին վարձատրում են, նրանց նվիրելով հայկական որոշ հողեր[133]: Այսպես, «Մեծ Հայքից անջատված հողերից Պոնտոսի Պոլեմոն Բ թագավորը պետք է որ ստացած լիներ արմենոխալիբներով բնակեցված Ճորոխի վերին հոսանքում գտնվող Սպեր գավառը: Իբերիայի Փարսաման Ա-ն, բացի 37 թ. դաշնագրով ստացած մոսխերի երկիր Գոդերձականից, այժմ պետք է ստանար ամբողջ Գուգարքը: Փոքր Հայքի Արիստոբուլոս թագավորը պիտի ստացած լիներ Աքիլիսենե—Եկեղյաց երկրամասը, որը բաղկացած էր Եկեղեաց, Դարանաղի, Աղիվն և Մուղուր գավառներից: Իսկ թե ո՞ր երկրամասն էր ստացել Կոմագենի թագավոր Անտիոքոս Դ-ն, դժվար է ասել, որովհետև այդ թագավորության տարածքը 37 թվականից հետո, երբ Հայոց Միջագետքը անցավ պարթևներին ենթակա Ադիաբենի թագավորությանը, ընդհանուր սահման չուներ Մեծ Հայքի հետ, մանավանդ, որ այժմ, բացի դրանից, գոյություն ուներ Ծուփաց թագավորությունը, որն ընկած էր Կոմագենեի և Մեծ Հայքի միջև»[134]:

Պատմաբանների ուշադրությունն է գրավել այն, որ Հայաստանն այսպես բաժան-բաժան անելուց և նրա ուժերը ջլատելուց հետո, Հայաստանի թագավոր հռոմայեցիների դրածո Տիգրան Ջ-ն հանկարծ արշավել է Ադիաբենի վրա: Սովետական պատմաբաններից Կուդրյավցևը, օրինակ, իր հոդվածում անդրադարձել է այդ հարցին և եկել այն եզրակացության, որ «Տիգրան Ջ-ի այդ արշավանքը Ադիաբենի վրա եղել է Կորբուլոնի կամքին հակառակ, որովհետև նրա վերջին գործողությունները վկայում են այն մասին, որ նա կողմնակից էր ստեղծված վիճակի պահպանմանը, սակայն Ներոն կայսրը, արևելյան իր նոր քաղաքականության սկզբունքի համաձայն, չի բավարարվում այդ վիճակով. նրա անմիջական թելադրանքով, Տիգրան Ջ-ն հռոմեական զորքի օգնությամբ ացնում է սահմանը և արշավում Ադիաբենի վրա»[135]:

Ակադեմիկոս Ստ. Երեմյանը «Հայ ժողովրդի պատմություն» գրքի «Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում» գլու-

---

[133] Նույն տեղում, գլ. 26, էջ 91, 93:

[134] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 742:

[135] *О. В. Кудрявцев*, Рим, Армения и Парфия во второй половине правления Нерона, „Вестник Древней Истории", Мос-Лен, 1949, № 3 (29), стр. 52.

խում իրավացիորեն գտնում է, որ Կուզրյավցևի այս կարծիքը իրականությանը չի համապատասխանում։ Այդ առիթով նա գրում է. «Տիգրան Ջ-ի ներխուժումը Ադիաբենե, ավելի ճիշտ «վերջինիս «թագավորության» կազմի մեջ մտնող Հայոց Միջագետքը, պատմագրության մեջ համարվել է անհասկանալի և չպատճառաբանված փաստ։ Սակայն դա հասկանալի է դառնում, երբ այդ դեպքը դիտում ենք 37 թ. համաձայնագրի հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների (Ադիաբենեի դեպքերը անհասկանալի են մնացել նաև Հ. Մանանդյանին, տե՛ս նրա «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, էջ 340) և այդ տերիտորիաների ռազմավարատեգիական նշանակության «տեսանկյունից»։

Տիգրան Ջ-ի մայրաքաղաք Տիգրանակերտը համարյա սահմանակից էր պարթևների թագավորության մեջ մտնող Ադիաբենեի կախյալ թագավորությանը, որտեղ թագավորում էր Մոնոբազ (Մանաւազ) Բ-ն։ Տիգրան Ջ-ն մի քանի անգամ անցել է սահմանագիծը՝ Տիգրիս գետը, որպեսզի ետ նվաճի Հայոց Միջագետքը, որտեղ գտնվում էր Մեծ Հայքի երրորդ խոշորագույն կենտրոնը՝ Մծբին քաղաքը։

«Հռոմեա-պարթևական 10-ամյա պատերազմի ընթացքում Մծբինը դառնում է այն հենարանը, որը թույլ է տալիս պարթևներին և նրանց կողմնակից հայերին համախմբվելու և ռազմական պատրաստություններ տեսնելու պատերազմը շահելու համար։ Այս հանգամանքները նկատի ունենալով, պարզ է դառնում Տիգրան Ջ-ի ռազմական գործողությունների իմաստը պարթևների դեմ։ Նրա ներխուժումների հիմնական նպատակն էր, ուրեմն, խանգարել պարթևներին և, անձամբ Տրդատին, պատերազմական պատրաստություններ տեսնելու»[136]։

Ակադեմիկոս Ս. Երեմյանի այս ճիշտ ու մանրամասն վերլուծությունը, իսկապես, հասկանալի է դարձնում այն պատճառները, որոնք Տիգրան Ջ-ին մղեցին նման արշավանքի։ Տակիտոսը պատմում է, որ Վոլոգեսը իմացել էր իր եղբոր՝ Տրդատի, Հայաստանից վտարելու և փոխարենը օտար ծագումով ինչ-որ Տիգրանի հայկական գահին նստեցնելու մասին։ Նա մտածում էր վրեժխնդիր լինել, սակայն տատանման մեջ էր։ Բայց լսելով, որ Տիգրանը դուրս գալով Հայաստանից, ավերել է Հարևան Ադիաբենը, սկսեց արագ նախապատրաստվել պատերազմի, մանավանդ Ադիաբենի թագավոր Մոնոբազոսը անհանգստացած էր պարթևների թուլությունից, իսկ Տրդատն էլ ծանր էր տանում իր վի-

---

[136] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 742—743։

ճակը, ասելով, թե՝ «անգործությամբ չէ, որ պահվում են մեծ պետությունները, այլ մարդկանց ու զենքերի մրցակցությամբ։ Մարդկանց բախտի գագաթնակետում այն է ավելի արդարը, որն ավելի ուժեղ է։ Մասնավոր ընտանիքների գործն է իրենը պահել, իսկ ուրիշինը վեճի առարկա դարձնել, և դա է կազմում թագավորների փառքը»[137]։

Եվ որովհետև Տիգրան Ջ-ի այս արշավանքը հաջողություն չունեցավ, Տակիտոսը հռոմայեցիների այդ սխալը արդարացնելու համար իրերի դրությունը այնպես է ներկայացնում, որ իբր Տիգրանը ինքնակամ է գործել և թե, իբր, այդ արշավանքը «դժկամությամբ էին տանում ժողովուրդների առաջնորդները»։ Իբր «նրանք գանգատվում էին, թե արհամարհանքն այն աստիճանի է հասել, որ արշավում են ոչ թե հռոմայեցի առաջնորդների հրամանատարության տակ, այլ պատանդի հանդգնության շնորհիվ, որը տարիներ շարունակ եղել է տարկության մեջ»[138]։ Պատմիչն այս ամբողջ մեղադրանքների շարանը հորինում է մեղքը Տիգրանի վրա բարդելու համար, մինչդեռ իրականում հռոմայեցիները սխալվել են իրենց հաշիվներում։ Այդ արշավանքը սկսելիս նրանք մտածում էին, որ Վաղարշը զբաղված լինելով վրկանների դեմ պատերազմական գործողություններով, չի կարողանա դեմ դուրս գալ հռոմայեցիներին։ Սակայն Վաղարշը շտապ դաշինք է կնքում վրկանների հետ և, օգտվելով առիթից, որ հռոմայեցիները խախտել էին 37 թ. կնքված դաշինքը, սկսում պատերազմական գործողությունները, նախ՝ Ադիաբենում պարթևների գերիշխանությունը վերականգնելու և ապա՝ իր եղբայր Տրդատին Հայաստանի թագավորական գահի վրա վերահաստատելու համար։

Ինչպես ասել ենք, Ներոնը՝ Հռոմի կայսրը, 60-ական թվականներից Արևելքում սկսել էր ծավալել նոր քաղաքականություն։ Եվ եթե Օգոստոս կայսրից սկսյալ հռոմայեցիները Արևելքում չէին ձգտում նոր նվաճումների, այլ աշխատում էին պահպանել եղածը, ապա Ներոնը միանձնյա իշխանության ձգտելով, փորձեց Արևելքում նոր երկրներ գրավել՝ իր հեղինակությունը հպատակների մոտ բարձրացնելու և իրեն դափնիներով պսակազարդելու համար։ Բնական է, որ նրա նման քայլը կխախտեր պարթևների 37 թ. կնքած դաշինքը։

Պիտի ասել, որ Ներոնի արտաքին այս քաղաքականությունը հանդիպել է հռոմեական վերնախավի դիմադրությանը, և այդ պատճառով

---

137 Տակիտոս. գիրք XV, գլ. 1, էջ 93, 95։

138 Նույն տեղում։

էլ 60-ական թվականներից սկսեցին Ներոնի դեմ վերնախավի կազմակերպած մահափորձերը[139]։

Մեր կարծիքով, Հռոմում ստեղծված այս իրավիճակի՝ ներքին հակասությունների մասին իմացել էր, անկասկած, Վաղարշ Ա-ն և փորձել էր օգտվել առիթից ու նախապատրաստվել ռազմական գործողություններին։ Ուշագրավ է այդ ռազմական գործողությունները սկսելուց առաջ գումարված ժողովի նկարագրությունը, որն այնքան վառ գույներով, գեղարվեստական շնչով հաղորդել է պատմիչը։ Նա գրել է, որ «ազդվելով դրանից (այսինքն՝ Տրդատի տրտունջներից ու Մոնոբազոսի՝ Ադիաբենի թագավորի, հռոմայեցիների հետ դաշինք կնքելու սպառնալիքից), Վոլոգեսը խորհրդակցության է հրավիրում, իրեն ավելի մոտ նստեցնում Տիրիդատին ու այսպես սկսում իր ասելիքը. «Ես ու սա ծնված ենք միևնույն հորից և չնայած իր ավագությանը, բարձրագույն իշխանությունը ղիջել է ինձ, և ես նրան տվել եմ Հայաստանի իշխանությունը (թագավորությունը)։ Տիրիդատի տերությունը մեր հզորության երրորդ աստիճանն է, որովհետև նրանից առաջ Պակորուսը (Բակուրը) տիրացել է Մեդիային։ Եվ թվում էր ինձ, որ հակառակ եղբայրների նախկին ատելության ու մրցակցության, ես մեր ընտանիքի գործերը կանոնավոր կերպով կարգավորել էի։ Սակայն հռոմայեցիները խանգարում ու խախտում են խաղաղությունը, որը միշտ էլ խախտել են անհաջող ձևով, և այժմ էլ խախտում են ի կորուստ իրենց։ Ես չեմ ժխտում, որ միշտ ավելի ցանկացել եմ մեր պապերի նվաճածը պահել արդարությամբ քան արյունով, իրավունքով՝ քան զենքով։ Եթե դանդաղկոտությանս պատճառով (իմ պարտականությունների մեջ) թերացել եմ, այն կուղղեմ արիությամբ։ Ձեր ուժն ու փառքը մնացել են անսասան, և ավելացել է համեստության համբավը, որը չի արհամարհվել մահկանացուների, ամենամեծամեծների կողմից և գնահատվել է աստվածներից»[140]։

Վաղարշ Ա-ի այս ճառը, եթե նույնիսկ այն իրականում չի արտասանվել, բայց և այնպես հակառակորդ պատմիչի կողմից այնպես է նկարագրվել, որ իր մեջ խտացրել է Վաղարշ Ա-ի հետագա անելիքների ամբողջ պատկերը և պարզել, որ պարթևների թագավոր Վաղարշը վստահ է ու համոզված գալիք ռազմական գործողությունների հաջողության վրա։ Անշուշտ, Մծբինում գումարված այս խորհրդակցության հիմնա-

---

139 О. В. Кудрявцев, Рим, Армения, стр. 47.

140 Տակիտոս, գիրք XV, գլ. 2, էջ 96։

կան նպատակը այլ էր։ Նա բոլոր մեծամեծներին հավաքել էր, որպեսզի մեծ հանդիսավորությամբ Մծբինում իր եղբայր Տրդատի գլխին թագ դնելով նրան պաշտոնապես դարձնի Հայաստանի թագավոր։ Այդ գեղեցիկ ու հուզիչ հանդիսավոր արարողությունից հետո[141], Վաղարշը Տրդատի տրամադրության տակ դրեց «պատրաստի հեծելազորային գունդը, որն, ըստ սովորության, ուղեկցում էր արքային, (հրամանատարությամբ) մեծատոհմիկ Մոնեսի, ավելացրեց նաև ադիաբենցիների օժանդակ զորքը և հանձնարարեց, որ դուրս վտարեն Տիգրանին Հայաստանից, մինչ ինքը հաշտություն կապելով վրկանների հետ, պետության հեռավոր անկյուններից զորք ու մեծ քանակությամբ ռազմամթերք էր հավաքում ու սպառնում հռոմեական պրովինցիաներին»[142]։

Նույն այս իրադարձությունների մասին գրել է նաև II դ. պատմիչ Դիոն Կասիոսը։ Թեև Դիոնը օգտվել է Տակիտոսից, սակայն պետք է ենթադրել, որ նա օգտվել է նաև մի այլ աղբյուրից, որովհետև նրա մոտ կան այնպիսի տեղեկություններ, որոնք չկան առաջինի մոտ։ Դիոնի պատմածից մենք իմանում ենք շատ կարևոր այն վկայությունը, որ Ադիաբենի բանակի հետ միասին Տրդատին միանում է նաև նույն երկրի թագավոր Մոնոբազոս Բ-ն[143]։ Հասկանալի է, որ Մոնոբազոսը ևս շահագրգռված էր Տիգրան Ջ-ին պատժելու գործում, որովհետև, ինչպես գիտենք, Հայաստանի այս թագավորը օգտվելով պարթևական երկրում առաջացած գահակալական կռիվներից ու թշնամի ցեղերի՝ պարթևների տերության վրա կատարած հարձակումներից, փորձեց պարսկական սահմանն անցնել ու գրավել Ադիաբենը։ Բնական է, որ Մոնոբազոսը միանալով Տրդատին, ցանկանում էր նաև վրեժ լուծել Տիգրանից։

Մոնոբազոսի ու Տրդատի համատեղ ուժերով Տիգրանի զորքը հետ է մղվում Մծբինից, և հետո, երբ Վաղարշը թարմ ուժերով օգնության է գալիս, բոլորը միասին շարունակում են պատերազմական գործողությունները հռոմեական լծից ազատագրելու համար ամբողջ Հայաստանը։ Դիոն Կասիոսը պատմում է. «Վոլոգեսը լսելով, որ Ներոնը ուրիշներին է տվել Հայաստանը և Տիգրանը ավերել է Ադիաբենը, Կորբուլոնի դեմ անձամբ Ասորիքում ճակատամարտելու համար պատրաստություն է

---

141 Նույն տեղում։

142 Նույն տեղում, էջ 96։

143 *Dio's* Roman history, eng. trans. E. Cary, London, 1968, vol. VIII, book LX, p. 121.

տեսնում և Հայաստան ուղարկում Ադիաբենի թագավոր Մոնոբազոսին ու պարթև Մոնեսին»[144]:

Այսպես, Վաղարշի գլխավորությամբ պարթևական, հայկական ու Ադիաբենի զորքը շարժվում է Տիգրանի ու հռոմեական զորքի վրա՝ վերջ տալու Արևելքում հռոմեական նվաճողական քաղաքականությանը: Ի վերջո, իրականանում է Վաղարշի ցանկությունը՝ արևելյան միասնական ուժերով դեմ դուրս գալ Հռոմին: Իսկապես, համատեղ գործողությունները տալիս են իրենց արդյունքը: Վաղարշն իր բանակը բաժանել էր երկուսի: Մի մասը Տրդատի գլխավորությամբ ու Մոնոբազոսի և Մոնեսի ընկերակցությամբ անցնում է Տիգրիսը և մտնում Հայաստան, իսկ մյուս մասը Վաղարշ Ա-ի առաջնորդությամբ շարժվում է Հայոց Միջագետքով դեպի Եփրատի ափը, որպեսզի այնտեղից սպառնա Ասորիքին, որի կառավարիչն էր այն ժամանակ Կորբուլոնը:

Տակիտոսի վկայությամբ Տրդատն իր ընկերակիցների օգնությամբ շարժվում է առաջ, որպեսզի հանկարծակիի բերի Տիգրան Զ-ին, որն «այնքան էլ անտեղյակ չէր և անակնկալի չի գալիս: Տիգրանը գրավել էր արդեն Տիգրանակերտ քաղաքը, որն ուժեղ էր և՛ պաշտպանների մեծ թվով, և՛ պարիսպների մեծությամբ: Ընդամին, ոչ արհամարհելի լայնություն ունեցող Նիկեփորիում գետը շրջապատում էր պարիսպների մի մասը, իսկ այնտեղ, որտեղ գետով չէր պաշտպանված, անցկացված էր մի խրամ: Ներսում հռոմեական զինվորներ կային և առաջուց նախատեսված էր մթերքների հավաքումը: Մթերքներ բերելու ժամանակ փոքրաթիվ զինվորներն ավելի ոգով առաջ շարժվելով, հանկարծ շրջապատվում են թշնամիների կողմից, որը մնացածների մեջ ավելի շուտ բարկություն է բորբոքում, քան վախ ազդում: Իսկ պարթևները պաշարման գործողությունների ժամանակ, մոտիկից ոչ մի համարձակություն չունենք, քանի որ հատուկենտ նետերն ամրոցի ներսում փակվածներին չեն վախեցնում, միայն իրենք են խոցվում: Երբ ադիաբենցիները սկսում են առաջ քաշել սանդուղքներ և մեքենաներ, հեշտությամբ հետ են շպրտվում և հետո արտաելքի դուրս եկած մեր զինվորների կողմից սպանվում»[145]:

61 թ. սկսված պատերազմական այս գործողությունները շարունակվում են և, ի վերջո, 62 թ. Հռոմից ուղարկված զորավար Պետոսը Հռանդեայի մոտ լուրջ պարտության է մատնվում և դրանով էլ վերջ է

---

144 *Dios* Roman history, vol. VIII, book LX, p. 121.

145 Տակիտոս, *գիրք XV, գլ. 4, էջ 97, 99:*

դրվում Հայաստանը հռոմեական նահանգ դարձնելու քաղաքականությանը։ Փոխադարձ դիջումներով համաձայնում են, որ Տրդատ Ա-ն թագավորի Հայաստանում, պայմանով, որ նա գնա Հռոմ ու իր թագը Ներոն կայսրից ստանա։

Ուշագրավ է այն, որ 62 թ. գարնանը հռոմայեցիների ու պարթևների միջև կնքված դաշնագրի արարողությանը, որպես վկա, մասնակցում է Ադիաբենի թագավոր Մոնոբազոսը։ Այդ դաշնագրով «որոշվում է, որ լեգեոնները պաշարված դրությունից պիտի ազատվեն, ամբողջ հռոմեական զորաբանակը պիտի թողնի Հայաստանի սահմանները և ամրություններն ու պաշարեղենը պիտի հանձնվեն պարթևներին. որոշվում է այդ բոլորը կատարելուց հետո, Վոլոգեսին հնարավորություն տալ պատգամավորներ ուղարկել Ներոնի մոտ»[146]։

Մ. թ. 64 թ. գարնանը, ի վերջո, պայմանավորվում են և 65 թ. Տրդատը գնում է Հռոմ՝ թագը ստանալու։ Ճանապարհին, ինչպես Դիոն Կասիոսն է պատմում, Տրդատին ընկերացել էին ոչ միայն Վաղարշ Ա-ի, այլև մյուս եղբոր՝ Բակուրի և Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի որդիները։ Հռոմ գնալիս Տրդատի երթը նման էր հաղթական արշավի։ Տրդատը իր փառքի գագաթնակետին էր և՛ իր տարիքի, և՛ իր գեղեցկության, և՛ ծագման, և՛ բանականության բերումով[147]։

66 թ. Տրդատը արդեն որպես օրինավոր թագավոր վերադառնում է Հայաստան ու բազմում հայկական գահին. «Տրդատ Ա-ի գահակալմամբ Հայաստանում մոտավորապես վերականգնվեց այն իրավիճակը, որ հաստատվել էր Պոմպեոսի և Տիգրան Բ-ի միջև մ. թ. ա. 66 թ. Արտաշատում կնքված պայմանագրի համաձայն, երբ մնում էր տեղական դինաստիան, իսկ Հռոմը միայն հաստատում էր նոր գահ բարձրացող թագաժառանգին, որը համարվում էր «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ», իսկ սկսած Օգոստոս կայսրից՝ «Հռոմեական կայսեր և ժողովրդի դաշնակից և բարեկամ»[148]։

Թե ինչ վիճակում էր գտնվում Ադիաբենը մինչև Տրայանոս կայսեր 115 թ. սկսած արևելյան արշավանքները, աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն տալիս։ Մեզ հայտնի չէ նաև, թե ինչ վարձատրություն ստացավ Մոնոբազոսը Վաղարշ Ա-ի ու Տրդատի հետ միասին Հռոմի և նրա դրածո Տիգրանի դեմ պատերազմելիս։ Չգիտենք նաև, թե դրանից

---

146 Տակիտոս, գիրք XV, գլ. 14, էջ 113։

147 *Dio's* Roman history, book LXII, p. 139.

148 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 752—763։

հետո դեռ քանի՞ տարի Մոնոբազոս Բ-ն մնաց Ադիաբենի գահի վրա, և հայտնի չէ նաև, թե ե՞րբ է մահացել նա։

Մեր կարծիքով, ճիշտ չէ նաև այն տեղեկությունը, որը, ինչպես շուտով կտեսնենք, Մոնոբազոսի թագավորությունը հասցնում է մինչև Տրայանոս կայսեր արևելյան այս արշավանքները, քանի որ Մոնոբազոսն Իզատեսից մեծ էր, նրա ավագ եղբայրը չէր կարող այդքան երկար ապրել ու մնալ Ադիաբենի գահի վրա, մանավանդ որ մի այլ աղբյուրից մեզ հայտնի է Տրայանոսի այդ արշավանքների ժամանակ Ադիաբենի թագավորի անունը։ Եվ եթե դա այդպես է, ուրեմն պիտի ենթադրել, որ Մոնոբազոսը վաղուց մահացել էր և նրան հաջորդել էր Մեբարսապեսը։ Մինչդեռ Հովսեպոսի վկայությամբ «Մոնոբազոսի թագավորությունից հետո Ադիաբենը նվաճվեց Տրայանոսի կողմից և դարձավ հռոմեական նահանգ՝ Ասորեստան (Assyria) անունով»[149]։ Ո՞վ էր Մեբարսապեսը, արդյո՞ք Մոնոբազոսի ավագ որդին կամ նրա որդիներից մեկը՝ դժվար է ասել, բայց, շատ հավանական է, որ դրանցից մեկը եղած լինի։

Մոնոբազոսի որդիները, հավանական է, որ դեռ իշխանության գլուխ մնացած և հրեա ժողովրդի հետ սերտ կապերը շարունակած լինեն, որովհետև Թալմուդում կա տեղեկություն այն մասին, որ «Մոնոբազոսի ընտանիքի անդամները այնքան աստվածավախ էին, որ իրենց հետ (ճանապարհորդությունների ժամանակ) մեզուզա[150] էին տանում և տեղավորում այն օթևաններում, որտեղ մնում էին, չնայած նման ժամանակավոր ապրելու տեղերի համար մեզուզա չէր պահանջվում»[151]։

Ամփոփելով մեր խոսքն՝ ասենք, որ մինչև Տրայանոս կայսեր արևելյան արշավանքները Ադիաբենի թագավորությունը գոյություն է ունեցել, անշուշտ, պարթևական քաղաքականության աղեցության ոլորտի ներսում և որովհետև 65 թվից հետո, մինչև Տրայանոսը, համեմատաբար խաղաղ տարիներ են եղել, ապա և պատմիչները ոչինչ չեն գրել Ադիաբենի թագավորության ու ժողովրդի մասին։ Փաստորեն Տրայանոսով Ադիաբենի և, ընդհանրապես, Արևելքի ժողովուրդների համար սկսում է մի նոր ժամանակաշրջան։

---

149 *Josephus*, Jewishs, Ant.. XX, p. 439.

150 *Մեզուզան այն գրությունն էր, որ հրեաները կախում էին իրենց դռների վրա որպես թալիսման։ Նրանք մագաղաթի վրա գրում էին Հին Կտակարանի «Երկրորդումն օրինաց» գրքի 2 գլխի 8—9 հատվածը և նույն գրքի ԺԱ գլխի 20-րդ հատվածը։*

151 *Josephus*, Jewish Ant., p. 439.

ԳԼՈՒԽ Գ

ԱԴԻԱԲԵՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՂԹԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. ՇԱՄԲԱՏ ԲԱԳԱՐԱՏԻ ՏՈՒՆԸ

Սույն աշխատության նախորդ բաժնում տեսանք, թե ինչպես ադիաբենցիները իրենց թագավոր Մոնոբազոս Բ-ի գլխավորությամբ օգնության եկան հայոց Տրդատ Ա թագավորին և նրա հետ միասին պատերազմեցին հռոմայեցիների դեմ՝ նրանց Հայաստանից դուրս վտարելու համար: Այս զինակցությունն ու համագործակցությունը, բնականաբար, ամրացնում էին ադիաբենցիների ու հայերի կապերը ու ստեղծում բարեկամական հարաբերություններ: Այդպիսի բարեկամական սերտ կապերի արդյունք պետք է համարել այն, որ երբ հայոց Տրդատ թագավորը գնում էր Հռոմ Ներոն կայսրից թագ ստանալու, որպես շքախմբի պատվավոր անդամներ, Ճանապարհին նրան ընկերակցում էին Վաղարշ Ա-ի և իր մյուս եղբայր Բակուրի զավակներից բացի, նաև Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի որդիները: Այս փաստը խոսում է այն մասին, որ Ադիաբենի թագավորական ընտանիքի անդամները Հայաստանում դասված էին հարազատների շարքում:

Անշուշտ, Ադիաբենի թագավորի հետ միասին ռազմական գործողություններին մասնակցում էին նաև ադիաբենցի նախարարներ, իրենց զորքը ու բանակի հրամանատարները, որոնք իրենց քաջագործությամբ ու անձնուրաց ծառայությամբ Տրդատի ուշադրությանն էին արժանացել: Նրանցից ոմանք, որպես վարձատրություն հողային կալվածներ ստանալով, անկասկած մնացել են Հայաստանում: Անհավանական չէ նաև, որ մնացածների մեջ եղել են նաև այնպիսիները, որոնք ծագումով հայ էին, բայց ապրում էին Ադիաբենում և այժմ, երբ հնարավորություն էր ստեղծվել, նրանք իրենց ընտանիքներով եկել ու հաստատվել էին հայրենիքում: Տրդատն, անշուշտ, շահագրգռված էր, որ իր

հավատարիմ զինակիցները մնան արքունիքում, որովհետև նման հավատարիմների օգնությամբ ոչ միայն կարելի էր վերականգնել երկրի կյանքը, վերաշինել քաղաքները, այլև կարգ ու կանոն ստեղծելով, ղեկավարել, շենացնել երկիրը, ամրացնել նրա ռազմական հզորությունը:

Մասնագետները ցույց են տվել, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ Վաղարշի մասին եղած տվյալները համընկնում են Հայոց Տրդատ Ա Թագավորի կերպարի ու գործողությունների հետ:

Այսպես, օրինակ, երկրի քաղաքական ու տնտեսական վիճակը կայունացնելու համար, բոլոր տեսակի հողերի հաշվառումներն ու սահմանազատումները, (հողային) կադաստրը, որ հայերեն արտահայտվում էր «աշխարհագիր» բառով, կատարել է Տրդատը[1]: Ահա թե ինչ է գրում այդ մասին պատմահայրը. «Սա (նկատի ունի Վաղարշին), որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոհեմ՝ ընդարձակ տիրեաց ի վերայ սահմանաց իւրոց, և կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս, և նախարարութիւնս հաստատեաց զարս պիտանիս, որք ի զաւակաց նախնւոյն մերոյ Հայկայ և յայլոց»[2]: Այսպես, ուրեմն, Մովսես Խորենացին գրում է, որ Վաղարշը (Տրդատը) Հայաստանում հաստատում է նախարարություններ և այդ նախարարությունների գլխին նահապետներ է կարգում և՛ հայերից, և՛ օտարներից: Ըստ այս վկայության քաջ պարթևը (Վաղարշ-Տրդատը) օտարներից «նախ և առաջին փոխարեն բարեաց հատուցանելով առնն զօրավարի և իմաստնոյ , որ ի հրէից՝ Շամբատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն աղգաւ թագադիր լինել Արշակունեաց. և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բագրատունի, որ է այժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս»[3]:

Թեև պատմահայրը ուղղակի չի ասում, բայց նրա հաղորդած տվյալները խոսում են այն մասին, որ Շամբատ Բագարատը Մծբինից Տրդատի հետ Հայաստան եկած ադիաբենցի զորավարներից էր, որն իր հավատարմությամբ ու ռազմական կարողություններով արժանացել էր ոչ միայն Տրդատի, այլև Վաղարշի հատուկ ուշադրությանը և, անկասկած, նրա այդ ընդունակությունները նկատի ունենալով, Մծբինում, թագադրության արարողության ժամանակ, նրան դարձրել էին թագադիր-թագակապ ասպետ: Տրդատը հայկական գահին տիրանալուց հետո

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 797:

[2] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. Գ, էջ 104:

[3] Նույն տեղում, էջ 104—105:

այդ իրավունքը շնորհում է Շամբատ Բագարատին և այն դարձնում ժառանգական, տալով նրան բազում այլ պատիվներ:

Ինչ վերաբերում է նրա ծագմանը, պատմահայրը գրում է, որ նա հրեա էր[4]: Զարմանալի է, որ Տրդատը հրեական ծագումով այս Շամբատին նման բարձր պատիվների է արժանացնում. չէ՞ որ նրա այդ քայլը կարող էր թշնամաբար ընկալվել հայ նախարարների կողմից և նրանց մեջ անվստահություն առաջացնել թագավորի նկատմամբ: Գուցե այստեղ Մովսես Խորենացին, օգտվելով Մար Աբաս Կատինայի գրքից, «հրեա» ասելով հասկացել է «հավատը», այսինքն «հավատը» վերցված է «ազգության» իմաստով: Հին աշխարհում, ըստ երևույթին, ընդունված էր հավատակիցներին համարել նույն ազգության ներկայացուցիչ: Ինչպես մեր այս ուսումնասիրության առաջին մասում տեսանք, Հովսեպոս Փլավիոսը մեզ ծանոթ իր աշխատության մեջ գրել է, որ ադիաբենցիները հրեաների հայրենակիցներն են. հասկանալի է, որ պատմիչը իր այս արտահայտությամբ նկատի է ունեցել, որ ադիաբենցիներն ու հրեաները հավատակիցներ են: Արդյո՞ք նույն ձևով պետք է հասկանալ Մովսես Խորենացու գրածը: Գաղտնիք չէր, անշուշտ, որ Ադիաբենի արքունիքում որոշ մեծամեծներ իրենց նախկին թագավորի՝ Իզատեսի և թագուհու՝ Հելինեի հետևողությամբ ընդունել էին հրեական այն նոր վարդապետությունը, որը հետագայում հայտնի դարձավ «քրիստոնեություն» անունով:

Կանգ առնելով Շամբատ Բագարատի ծագման հարցի վրա, ակադեմիկոս Ս. Երեմյանը գրել է. «Մովսես Խորենացու մոտ հայտնի Շամբատ Բագարատը (ըստ Անանունի՝ Բազարատ Փառազյանը) ժամանակակից էր Վաղարշ Ա-ին և Տրդատ Ա-ին և Ադիաբենի թագավորներին հետևելով ընդունել էր հրեական կրոնը (ավելի ճիշտ՝ նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը): Ինչպես երևում է, այս Բագարատը պարթևներին կողմնակից հայ մեծամեծներին (μεγιστᾶνες) էր պլխավորում և նրանց հետ միասին ապաստան էր գտել Մծբինում: Անանունի տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ Բագարատ Փառազյանը (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագարատը), իբրև հայ ավագանու ներկայացուցիչ և պարթև Արշակունիների արքունիքի ամենամոտ և հավատարիմ անձնավորություններից մեկը, մասնակցում է Տրդատին Մեծ Հայքի թագավոր հռչակելու արարողություններին, հանդես գալով իբրև թագադիր-թագակապ»[5]:

---

[4] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Ա, գլ. ԻԲ, էջ 68:

[5] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 747:

Հարգելի դիտնականի այն եզրակացությունը, որ Շամբատ Բագարատը ծագումով հայ է, և որ նա իր շուրջ էր համախմբել հայկական այն ուժերին, որոնք պարթևների քաղաքականության կողմնակիցներ էին և Տրդատի հետ միասին իրենց ուժերով պատերազմել էին հռոմայեցիների դեմ հայկական գահի վրա Տրդատին բազմեցնելու համար, համոզիչ է ու հասկանալի: Սակայն ինչպե՞ս է, որ պատմահայրը այսպիսի կարևոր անձնավորությանը օտար ծագում է վերագրում. արդյո՞ք, ինչպես ասել ենք, նա նկատի է ունեցել լոկ հավատի խնդիրը: Դժվար է ասել: Բայց երբ Խորենացու վկայությունները Շամբատի վերաբերյալ վերցնում ենք իրենց ամբողջության մեջ, տեսնում ենք, որ դրանք այնքան էլ համոզիչ չեն թվում: Որովհետև Մովսես Խորենացին Շամբատի և նրա որդիների մասին գրում է, որ նրանք մոլեռանդ հավատացյալներ են և ոչ միայն բլուրներ են տալիս իրենց զավակներին, այլ նաև խորը համոզվածությամբ պահպանում են հրեական կրոնի սովորույթները: Եթե դա այդպես է, այսինքն՝ եթե Շամբատը և նրա որդիները հայեր էին, ապա դժվար թե նրանք հրեական նոր կրոնը ընդունելով այդ աստիճանի մոլեռանդությամբ կապված լինեին հրեական կրոնական հավատալիքներին ու սովորույթներին: Պատմահոր վկայությամբ Բագարատն ու իր հետնորդները այնպիսի ջերմեռանդությամբ էին կապվել այս կրոնին, որ ստիպված Տրդատին հաջորդած հայոց թագավորը արտակարգ միջոցների է դիմում, նրանց այդ հավատալիքներից հրաժարեցնելու համար: Այս ամենը մի փոքր տարօրինակ է թվում, մանավանդ, եթե նկատի առնենք, որ պարթևական տերության մեջ և նրա հարևան փոքր երկրներում այդ ժամանակ կրոնական հարցերը ղեկավարության ուշադրության կենտրոնում չէին, ինչպես հետագայում Սասանյան Պարսկաստանում: Ուստի կարծում ենք, որ Խորենացին ճիշտ է, երբ գրում է, որ նա ծագումով հայ չէր, այլ հրեա և գուցե նա հրեական նոր կրոնն ընդունած, ծագումով հայ ադիաբենցի էր, և կամ պարթևական ծագումով՝ Ադիաբենի մեծամեծներից կամ զորավարներից մեկը, որը դեռ շատ վաղուց Ադիաբենի թագավոր Իզատեսի կամ թագուհի Հելինեի հետևողությամբ ընդունել էր հրեական նոր վարդապետությունը և առաջին իսկ օրից հավատարմաբար ու անձնուրացաբար համագործակցելով Տրդատի հետ, եկել էր Հայաստան: Ահա իր այդ բոլոր ծառայությունների համար նա, անկասկած, սիրելի էր դարձել նաև մյուս հայ նախարարներին ու մեծամեծներին, և արժանի համարվել թագադիր-թագակապ ասպետության: Բացի այդ, Վաղարշակը (Տրդատը) նրան նշանակում է

«կուսակալ, բիւրերի և հազարների իշխան» և տալիս է նրան բազում մենաշնորհներ: Ահա թե ինչ է գրում Խորենացին այդ մասին. «Արդ՝ նախ և առաջին օրինադրէ թագաւորն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գըլխոյ իւրմէ և ի թագէ: Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի հրէից, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգևելով և իշխել և առանց ոսկւոյ և ապկանց, զկրտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել՝ յորժամ յարքունիս և ի տան թագաւորին շրջիցի»[6]:

Ի մի բերելով գրավոր աղբյուրների տեղեկությունները, համոզվում ենք, որ Շամբատը Ադիաբենից եկած այն զորավարներից մեկն էր, որ դեռ Ադիաբենում եղած ժամանակ ընդունել էր հրեական նոր ուսմունքներից՝ քրիստոնեական վարդապետությունը: Ապրելով Հայաստանում, Շամբատը, ապա նրա որդիները շարունակում են հավատարիմ մնալ իրենց հավատին, և երբ հայոց թագավորն իր մայրաքաղաք Արմավիրում մեհյան է կառուցում և այնտեղ Արեգակին, Լուսնին ու իր նախնիներին նվիրված արձաններ կանգնեցնում, նա «հրեա Շամբատի» որդի Բագարատին՝ թագադիր ասպետին, հորդորում ու նույնիսկ խնդրում է, որ սա թողնի իր հրեական կրոնը և կուռքեր պաշտի, սակայն Բագարատը հրաժարվում է և չի կատարում թագավորի խնդրանքը: Ճիշտ է, վաղարշը (Տրդատը) բոնի միջոցների չի դիմում, բայց նրան հաջորդած իր որդին (Արշակը) այլ կերպ է մոտենում հարցին և ստիպում, որ թողնեն այդ կրոնը և ընդունեն հեթանոսությունը: Եվ երբ Բագարատի որդիները չեն ենթարկվում թագավորին, սա դիմում է դաժան միջոցների ու նրանցից երկուսին գլխատել է տալիս, որի մասին Խորենացին գրում է. «Սրով կատարեցան արիաբար ի վերայ հայրենի օրինաց»[7]: Դրա վրա Բագարատի մյուս զավակները տեղի են տալիս. «այսչափ միայն, ի շաբաթու յեծանել յորս և ի պատերազմունս, և զմանկունս թողուլ անթըլփատս, յորժամ լինիցին, քանզի անկիւնք էին»[8]: Համենայն դեպս հայոց թագավորը կարգադրում է բոլոր հայ նախարարներին, որ նրանց կին չտան, մինչև վերջիններս չհրաժարվեն թլփատվելուց: Ի վերջո, Բագարատի այս զավակները հրաժարվում են նաև թլփատությունից, բայց կուռքեր չեն պաշտում[9]:

---

[6] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Գիրք Բ, գլ. է, էջ 110:

[7] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Գիրք Բ, գլ. Թ, էջ 117:

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

Մովսես Խորենացու այս տեղեկությունից այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստանում միայն Բագրատունիներն էին հրեաներ, մինչդեռ մեր պատմիչների վկայություններից պարզ երևում է, որ մեր երկրում դեռ Տիգրան Բ-ի թագավորության ժամանակներից, և նրանից հետո, Հայաստան է բերվել հրեական մի մեծ գաղթականություն: Վկայություն կա նաև այն մասին, որ նրանք շարունակել են ապրել մեզ մոտ նույնիսկ մինչև մ. թ. IX դարը:

Ինչպե՞ս հասկանալ պատմահոր լռությունը հրեական այդ համայնքի մասին: Կարծում ենք, որ նա լռել է այն պատճառով, որ Բագրատունիները հրեական իրենց նոր ուսմունքով տարբերվում էին Մովսիսական կրոնի հետևորդներից, կամ նկատի է ունեցել այն հանգամանքը, որ մնացած հրեաները Հայաստանի քաղաքական կյանքում Բագրատունիների նման կարևոր դեր չեն կատարել: Մեզ համար էականն, անշուշտ, այն է, որ այստեղ մենք գործ ունենք մի շատ արժեքավոր փաստի հետ, որը հնարավոր է հետագայում առանձին ուսումնասիրության առարկա դարձնել: Դա այն է, որ Բագրատունիների շնորհիվ մ. թ. I դարի երկրորդ կեսին քրիստոնեական վարդապետության առաջին ծիլերը բերվել են Հայաստան և, անկասկած, հետզհետե նրանց միջոցով էլ այստեղ կազմավորվել է քրիստոնեական համայնքներից մեկը, որը գնալով իր ազդեցության ոլորտները ընդլայնել ու երևի լուրջ վտանգ է դարձել երկրի համար: Դրա համար էլ, այսինքն այս վտանգը նկատի ունենալով, Տրդատին հաջորդած հայոց թագավորը խիստ միջոցների է դիմում ու նույնիսկ երկուսին գլխատում:

Եթե մեր այս եզրակացությունը ճիշտ է, ապա պետք է ընդունել, որ Բագրատունիների միջոցով առաջին անգամ, նաև Ադիաբենի վրայով, քրիստոնեական կրոնական նախնական մի ուսմունք մեր թվականության I դ. 2-րդ կեսին բերվել է Հայաստան:

2. ՄԱՂԽԱԶԸ ԵՎ «ՄԱՂԽԱԶՈՒԹԻՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասել ենք, Շամբատ-Բագարատից բացի, հայոց թագավորը Հայաստանում ապրող և դրսից եկած հայ և օտար մեծամեծներից ու զորավարներից ոմանց ոչ միայն նախարարական իշխանություններ է հանձնում, այլև նրանց տալիս է բարձր պաշտոններ կամ գործակալություններ ժառանգական իրավունքներով: Խոսխոռունիների նախարարա-

կան տունը այն ընտանիքներից էր, որ ստացավ արքունի այդպիսի բարձր գործակալություններից մեկը՝ թիկնապահությունը: Մովսես Խորենացին պատմում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը «իրեն դինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից ընտիր ու քաջ նիզակավոր և սուսերավոր մարդկանց, և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխազ անունով մի բարի ու սրտոտ մարդու»[10]:

Նախ տեսնենք, թե ո՞վ էր Հայկազն Խոռը: Պատմահոր վկայությամբ, Հայկ նահապետը մեռնելիս «ամբողջ տոհմը հանձնում է իր Արամանյակ որդուն: Իսկ սա իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին իրենց ամբողջ աղխով, ինչպես Մանավազի որդի Բազին, թողնում է Հարք կոչված տեղում: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բազը, ժառանգում է Աղի ծովի հյուսիս-արևմտյան ափը և գավառն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նախարարությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք վերջերս, սուրբ Տրդատից հետո, մեկը մյուսին ոչնչացրեց պատերազմում: Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում, և ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակվում է Խոռխոռունիների ցեղի մեծ նախարարությունքաջ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են»[11]:

Ուրեմն, ըստ այս տեղեկության, Խոռը ինչպես նաև Մանավազը Հայկ Նահապետի զավակներն էին, որոնք ժառանգել էին Հարքը և ընդհանրապես Բզնունյաց ծովի հյուսիսային և արևմտյան ափերը: Հայոց թագավորը Հայկի սերնդից՝ Խոռի զավակներից կամ ցեղից կազմում է մի նախարարություն և այդ նախարարության գլուխ է նշանակում «Մաղխազ» անունով մի բարի ու սրտոտ մարդու, տալով նրան արքունի տան «թիկնապահություն» գործակալությունը: Կարծում ենք, որ պատմահոր մոտ ինչ-որ մի բան հստակ չէ կամ օգտագործած աղբյուրը պարզ չի եղել, որովհետև «Մաղխազը» ոչ թե հատուկ անուն է, այլ պաշտոնի անուն: Սակայն մինչ այդ հարցին անցնելը ուզում ենք կանգ առնել մի այլ խնդրի վրա: Ինչպես հայտնի է, «մանավազյանները» կամ «բազերը» նախարարական տան այն ներկայացուցիչներն էին, որոնք տիրացել էին Ադիաբենի թագավորական գահին: Այժմ հարց է առաջանում, արդյո՞ք կապ կար հայկական «մանավազյան» ցեղի և Ադիաբե-

---

[10] Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց*. Թրգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, Գիրք Բ, գլ. է, էջ 135:

[11] Մ. Խորենացի, *Պատմություն հայոց*, գիրք Ա, գլ. ԺԲ, էջ 90:

նում թագավորական իշխանության գլուխն անցած թագավորական այս ընտանիքի միջև։ Այդ մասին ճշգրիտ խոսք ասել, անշուշտ, դժվար է, բայց այս վկայությունները նման կապի գոյության օգտին են խոսում։ Հնարավոր է, որ այդ մարդը, որը Խոռխոռունիների նախաբարական տան գլուխ նշանակվեց և ստացավ արքունի տան «թիկնապահություն» գործակալությունը, լինի Տրդատի հետ Ս.Գիսաբենից եկած Մոնոբազների (մանավազների կամ բազերի) արքայական ընտանիքի անդամներից մեկը, որն իր քաջագործություններով ու նվիրվածությամբ գրավել էր հայոց թագավորի ուշադրությունը և, իբրև վարձատրություն իր այդ ծառայությունների, ստացել նախաբարական իրավունք և «թիկնապահություն» գործակալությունը։ Համենայն դեպս, «Խոռխոռունիք», «Մաղխազունիք», «Բզնունիք» և նման այլ նախաբարական տների նահապետները կամ հիմնադիրները Հայաստան եկած մեծամեծներից ու դրաավարներից էին։

Այժմ մի այլ հարցի մասին. Խորենացու պատմածից այնպես է ստացվում, որ Հայկազն Խոռի սերնդից ընտիր ու քաջ նիպակավորների և սուսերավորների գլխին նշանակված մարդու անունը «Մաղխազ» էր։ Այդ անունը գրավել է պատմաբաններից ոմանց ուշադրությունը։ Այսպես, հայտնի պատմաբաններից Հ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ կանգ առնելով «Մաղխազ» անվան վրա, գրում է, որ «մաղխազը» Խոռխոռունիների տոհմային տիտղոսն էր։ «Պարզ է, ուրեմն,—եզրակացնում է գիտնականը,—որ արքունի այս «գործակալությունը» հանձնված է եղել Խոռխոռունիների նախաբարական տոհմին և անվանվել է «մաղխազություն» ըստ նրանց տոհմային տիտղոսի՝ միանգամայն համապատասխան վերոհիշյալ գործակալություններին»[12]։

Կարծում ենք, որ «Մաղխազը» ոչ թե տոհմի անուն է, ինչպես ենթադրում է Հ. Մանանդյանը, այլ պաշտոնի և «մաղխազ» ասելով հասկացել են «թիկնապահություն» գործակալության նախարարին, մեծին, և հասկանալի է նաև, որ «մաղխազությունն» էլ եղել է գործակալության անունը։ Այդ է պատճառը, որ Հայոց թագավոր Վաղարշի (Տրդատ Ա-ի) օրոք այդ պաշտոնը ժառանգաբար վարելու իրավունք ստացած նախաբարական տունը հետզհետե նույնացվել է պաշտոնի անվան հետ և հետագայում «մաղխազ» ասելով հասկացել են արքունի թիկնապահական

---

[12] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 68։

գործակալությունը վարող նախարարին։ Խոշոր հայագետներից Ն. Ադոնցը իր ուսումնասիրության մեջ Հայաստանում նախարարական տների առաջացման մասին խոսելիս, կանգ է առնում «մաղխազ» (malxaz) անվան վրա և հայտնում այն կարծիքը, որ այդ բառը ասուրերեն «մալխազուն է (malxazu արաբերեն melik), որն ընդհանրապես նշանակում է «տեր», «իշխան», «թագավոր»[13]։

Այս դեպքում ևս համամիտ չենք գիտնականի հետ, որովհետև նման բացատրությունը չի կարող այդ հարցին սպառիչ պատասխան տալ, ուստի կարծում ենք, որ «մաղխազը» ոչ թե ասուրերին, այլ ասորերեն երկու բառերից կազմված մի անուն է և նշանակում է «հսկողություն անող, դիտող, հետևող»[14]։ Եվ եթե դա այդպես է, ուրեմն հասկանալի կլինի, թե ինչու «թիկնապահական գործակալությունը» կոչվել է «մաղխազության»։ Անշուշտ, այդ գործակալությունը մինչ Տրդատը (Վաղարշակը) եղել է և այդ մասին վկայություններ պահպանվել են Արտավազդ Բ-ի (56—34) ժամանակվանից[15], սակայն այն ժառանգական չի եղել, և հայոց թագավորները ըստ իրենց ցանկության հանձնել են այս կամ այն նախարարին կամ զորավարին։ Երկրի քաղաքական վիճակը կայունացնելու համար, երբ Տրդատը մի շարք արքունի պաշտոնները ժառանգական է դարձնում, ի թիվս դրանց ժառանգական է դարձնում նաև արքունի թիկնապահության գործակալությունը։ Արքունի պաշտոնները ժառանգական դարձնելով՝ հայոց թագավորը մտածում էր այդ պաշտոնները ժառանգաբար ստացող նախարարական տները մշտապես կապել արքունիքի հետ, որը այդ ժամանակվա համար առաջադեմ մի միջոցառում էր։

Այսպես, ուրեմն, «մաղխազը» ոչ թե մարդու կամ անձի անուն էր, այլ պաշտոնի, ավելի ճիշտ տիտղոս։ Դրանում մեզ ավելի համոզում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ եղած տեղեկությունը։ IV դ. խոռխոռունիների նահապետին նա անվանում է «Գար-

---

13 *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 400.

14 «Mal.» ասորերեն նշանակում է «կատարել», իսկ «xaz» «հսկել, դիտել, տեսնել, հետևել». ուրեմն՝ «մաղխազ կամ մալխազ»-ը կլինի «հսկողություն կատարող», այսինքն՝ «թիկնապահ»։ Տե՛ս *J. Payne Smith*, A compendious syriac dictionary, Oxford, 1957, pp. 136, 273.

15 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 832։

ջոյլ Մաղխազ[16] Նահապետն Խոռխոռունեաց»[17]: Մի այլ տեղ սոսկ «Գարջոյլ Մաղխազ» և կամ միայն «Գարջոյլ»[18]: Ուրեմն, Փավստոսի այս տողը պետք է հասկանալ «Խոռխոռունիների նախարարական տան նահապետ Գարջոյլ մաղխազը», այսինքն՝ Գարջոյլը, որը մաղխազ էր և ուներ թիկնապահների գործակալություն:

Մի խոսքով՝ «Մաղխազը» թիկնապահների հրամանատարն էր: Նույն այս պաշտոնը, գործակալությունը եղել է նաև Սասանյան Պարսկաստանում և այն անվանվել է „puštik pânsâlâr", այսինքն՝ փուշտիպանների կամ թիկնապահների հրամանատար[19]: Դրա համար էլ Խոռխոռունիների նախարարական տունը, որը ժառանգաբար վարել է այդ գործակալությունը, կոչվել է նաև «Մաղխազութեան տուն»: Ահա այս արտահայտությունը պահպանվել է և՛ Փավստոսի, և՛ Ագաթանգեղոսի մոտ[20]: Հետաքրքրական է նաև, որ Փավստոսն ունի նաև մի այլ տեղեկություն, որի համաձայն Խոռխոռունիների նախարարական տանը տրված իշխանության հողամասը կոչվել է «Մաղխազեան»: Հավանաբար, որպես արքունի պաշտոնյա թագավորը Խոռխոռունիների նախարարական տանը տվել է արքունի հողամասերից մի ինչ-որ մաս, որը և հայտնի է եղել «Մաղխազեան» անունով: Փավստոսը պատմում է, որ IV դ. պարսից Շապուհ արքայի զորքը Հայաստանի վրա արշավելիս, «Գային հասանէին ի տեղին, որ կոչին Մախազեան»[21]: Այդ տեղանվան մասին վկայություն կա նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Նա գրում է, որ հայոց Սանատրուկ թագավորը Աբգարի որդիներին ոչնչացնելիս, նրանցից մեկին՝ Արտաշեսին «առնել սրնտնտուի նորա՝ փախեալ ի կողմանս Հերայ, ի Հովուավանս Մաղխազանի»[22]:

Ըստ երևույթին այս երկրամասը «Մաղխազանի» է կոչվել որպես «Մաղխազին» տրված «պարգև», այսինքն՝ հայոց թագավորի կողմից

---

16 Հնում հայկական ձեռագրերը ընդօրինակվում էին երկաթագրերով և մեծատառեր գոյություն չունեին, այնպես որ այստեղ «Մաղխազը», որ մեծատառ է գրված, ուշ շրջանից է: Բացի այդ, հնում, հավանաբար մագաղաթի խնայողության համար, բառերը կցում էին իրար:

17 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1914, դպր. Դ, գլ. ԺԱ, էջ 139:

18 Նույն տեղում, դպր. Ե, գլ. ԼՀ, էջ 309:

19 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 68:

20 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», դպր. Դ, գլ. ՔԲ, էջ 47: «Ագաթանգեղայ Պատմութիւն», ՃԺԲ, էջ 414:

21 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», դպր. Դ, գլ. Լ, էջ 192:

22 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. ԼԷ, էջ 162:

«մաղխազին»՝ արքունի թիկնապահության գործակալության պաշտոնյային նվիրված հողամաս, որը տարբերվելու էր խոռխոռունիների նախարարական տան սեփական ժառանգական հողերից, որոնք գտնվում էին Բզնունյաց ծովի հյուսիսարևմտյան ափին: Մինչդեռ «Մաղխազանին» գտնվում էր այժմ Խոյի մոտակայքում: Ակադեմիկոս Ս. Երեմյանը գրում է. «Մաղխազան ասան—այժմ Մահլա գյուղ Հեր (Խոյ) քաղաքի մոտ: Հեր քաղաքի վերակացու՝ «շահապի» մաղխազի իրավասության ներքո գտնվող վայր էր, ուստի կոչվում էր Մաղխազան»[23]:

Ամփոփելով մեր խոսքը, ասենք, որ, ուրեմն, «մաղխազը» ոչ թե հատուկ անուն է, այլ խոռխոռունիների նախարարական տան նահապետին տրված տիտղոս, որը վարել է «մաղխազության» գործակալությունը, այսինքն՝ եղել է հայկական արքունիքի թիկնապահների հրամանատարը:

3. ԳՆԹՈՒՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՁԵՌԷՍ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև հայոց թագավոր Վաղարշակի (Տրդատ Ա-ի) կողմից մի այլ նախարարության՝ Գնթունիներին հանձնած արքունի մի այլ գործակալությունը, որը Խորենացին կոչում է «ձեռէս»: Ահա թե ինչ է գրում պատմիչը այդ առիթով. «Եւ զգեցուցանողս իւր զձեռէս ի զաւակէ Քանանցւոց. և անուն կոչէ զգինն գնթունիս, ոչ գիտեմ էր աղագաւ»[24]:

Նույն այս հատվածը Ստ. Մալխասյանը բնագրի իր թարգմանության մեջ հետևյալ ձևով է ներկայացրել. «Իրեն զգեստներ հագցնող նշանակում է Ձեռեսին, քանանացիների սերնդից և նրա ցեղի անունը դնում է Գնթունի, չգիտեմ ինչ պատճառով»[25]: Ինչպես տեսնում ենք, գիտնականը «Ձեռեսը» մեծատառ է գրել և հասկանալով անձ, այն ծանոթագրել և գրել է, ասելով, որ «Ձեսէս» բառը շատերը հասկացել են ձեռնոց և ըստ այնմ թարգմանել: Վիստոնյան եղբայրները թարգմանել են «ձեռնները հագցնել»: Բայց ձեռէք-ձեռէս նշանակությամբ բառ չկա: Հայտնի էլ չէ, թե հին Հայաստանում ձեռնոց հագնո՞ւմ էին, թե ոչ, և

---

23 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 64:

24 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. է, էջ 110:

25 Մ. Խորենացի, Պատմություն հայոց, գիրք Բ, գլ. է, էջ 135:

տարօրինակ կլիներ, եթե վաղարշակը միայն ձեռնոցներ հագցնելու պաշտոնյա նշանակեր, բայց թողնելով բոլոր զգեստները։

Բանասերները այն կարծիքին եկան, թե «Ձեռէս» կամ «Ձեռէ» մարդու հատուկ անուն է, որի պաշտոնն է եղել թագավորին հագցնել (=զգեցուցանող), (Մառ, К Крит. Хор., էջ 7)։ Միայն Ն. Մառը «Ձեռէս» բառում «ս»-ն համարելով հոգնակիական մասնիկ, հասկանում է. «Վաղարշակ իրեն զգեցուցանողներ է նշանակում Ձեռէսներին»[26]։

Ուրեմն, այս բառը բանասերների ու պատմաբանների մոտ զանազան մեկնաբանությունների ու ենթադրությունների տեղիք է տվել և, ի վերջո, անլուծելի է մնացել, որովհետև վերոհիշյալ ենթադրությունները չեն ճշգրտել Մովսես Խորենացու այս վկայության իսկական իմաստը՝ էությունը։ Բնագիրը ընթերցելիս տեսնում ենք, որ խոսքը այստեղ ոչ թե հատուկ անձի մասին է, այլ պաշտոնի։ Պարզ ասած, պատմահայրը խոսում է այստեղ սովորական արարողության մասին։ Ինչպես բոլոր պալատներում, հայոց արքան էլ իր արքունիքում նշանակում է իրեն զգեստավորողներ, որոնք «Ձեռէս» էին կոչվում, այսինքն, ինչպես շուտով կտեսնենք, «զգեստավորողներ»։ Անշուշտ, հայոց արքունիքում զգեստավորողներ եղել են մինչ այդ, բայց այդպիսի գործակալություն չի եղել, և առաջին անգամ Վաղարշակը (Տրդատ Ա.-ն) հիմնում է զգեստավորողների գործակալությունը և այն ժառանգաբար հանձնում Գրքունիների նախարարության[27]։ Ովքե՞ր էին Գնթունիները։ Պատմահայրը ասում է, որ նրանք քանանացիներ էին, այսինքն՝ հրեաներ։ Քանանացիները, ինչպես Աստվածաշունչն է վկայում, Նոյի որդիներից՝ Քամի սերընդից էին, այսինքն՝ Քանանը Քամի որդին էր, և սրանք, նույն աղբյուրի վկայությամբ, ապրում էին «ի Սիդոնէ մինչեւ ի գալ ի Գերարս եւ ի Գազա մինչեւ ի գալ ի Սոդոմ եւ ի Գոմոր, եւ Յադամայ եւ ի Սեբոյիմ մինչեւ ի Լասա»[28]։ Աստվածաշունչը հաղորդում է նաև, որ դեռ շատ հին ժամանակներից սերտ կապ է եղել քանանացիների երկրի ու Միջագետքի միջև։ Շատ հաճախ բազում քանանացիներ գաղթել և բնակություն են հաստատել Միջագետքում, երբեմն էլ ընդհակառակը՝ Մի-

---

[26] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, ծնթ. 80, էջ 341։

[27] Մեր հարգելի խմբագիրը մեզ առաջարկեց նաև հետևյալ տեսակետը, որը, մեր կարծիքով, արժանի է լուրջ ուշադրության և իր հիմքում կարծես մոտ է ճշմարտության։ Նա ասում է, որ «Հայաստանի լեռնանցքներում կային «Ձեռնակ» անունով ամրոցներ։ Հնարավոր է ձեռեսները ունեցել են այդ ամրոցների պաշտպանության գործակալությունը»։ Այս կարծիքը ևս հանձնում ենք մասնագետների ուշադրությանը։

[28] Նույնդ, ժ, 18—19։

ջագետքից մարդիկ գնացել են քանանացիների երկիրը[29]: Այժմ մասնավորելով մեր խոսքը, ասենք, որ Հայաստան եկած այս քանանացիները, անկասկած, հայոց թագավոր Տրդատ Ա-ի հետ Ադիաբենից եկել ու մասնակցել են Հռոմի դեմ ծավալված պատերազմական գործողություններին և, ինչպես Բագրատունիները, արժանացել են հայոց արքայի վստահությանն ու շնորհին: Իբրև վարձատրություն իրենց «հավատարմության, նրանք հաղթանակից հետո ստացել են «զգեստավորողների» գործակալությունը: Գուցե այս քանանացիները Ադիաբենի արքունիքում նույնպե՞ս «զգեստավորողներ» են եղել, և այժմ հայոց թագավորը Ադիաբենի արքունի սովորության հետևողությամբ «գործակալություն» է հիմնում և այն ժառանգական իրավունքներով հանձնում Գրնթունիների նախարարությանը: Անշուշտ, այս ենթադրությունը դժվար է հաստատել, բայց որոշ տվյալներ ի նպաստ դրան են խոսում: Համենայն դեպս, եթե նույնիսկ քանանացիները Ադիաբենի արքունիքում «զգեստավորողներ» չեն եղել, բայց և այնպես «զգեստավորողների» այս գործակալությունը հայոց թագավորը գուցե հիմնել է Ադիաբենի արքունիքում ընդունված կարգի հետևողությամբ: Զգեստավորողների գործակալության ասորերեն անունը պարզ ասում է այն մասին, որ այդ գործակալությունը Հայաստանում ստեղծվել է ասորական սովորության համաձայն: Մեզ հայտնի է, որ այդ ժամանակ հայերը, ինչպես նաև հայկական արքունիքը, սերտ կապերի մեջ էին ադիաբենցիների հետ և «ձեռէս» գործակալության անունը այդ ժամանակներում էլ ընդունվել է հայկական պալատում[30]: Եթե մեր այս բացատրությունը համոզիչ է, ապա պարզ կդառնա Մովսես Խորենացու բնագրի տվյալ հատվածը, և մենք զանազան ենթադրություններ անելու կարիքը չենք զգում: Այսպես, ուրեմն, պատմահոր վերոհիշյալ հատվածը պետք է թարգմանել. «Իրեն զգեցուցանողներ՝ ձեռեսներ է նշանակում քանանացիներին և նրանց ցեղը կոչում Գնթունի»[31]:

Թե ինչո՞ւ էր քանանացիների այս ցեղը հայոց թագավորը «Գնթունի» անվանել, Մովսես Խորենացին չգիտի:

Ինչպես նշել ենք, մեր հարգելի խմբագիրը այն կարծիքին է, որ Հայաստանի լեռնանցքներում կային «Ձեռնակ» անունով ամրոցներ,

---

29 Նույն տեղում, ԺԱ, 31:

30 Ձերե—tzhere — ասորերեն բառ է և նշանակում է հագուստը հագցնող, կապող, կարող: Տե՛ս J. Payne Smith, A comp. dictionary, p. 483.

31 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Գիրք Բ, գլ. է, էջ 110:

Արդյոք «Զեռնակ» ամրոցները կապ ունե՞ն «Զեռեսի» հետ: Եթե կապ ունեն, ապա պետք է ենթադրել, որ «Զեռնակը» նույն «Զեռեսն» է, ուրեմն գնթունիների նախարարությունը նաև այդ ամրոցները պաշտպանելու պարտականություն ուներ: Հետաքրքրական է, որ ասորերեն «գանթա—ganta» բառը ևս նշանակում է «ամրոց, թաքստոց, լեռնանցքներում եղած ապաստարան» և այլն[32]: Եթե դա այդպես է, ուրեմն հայոց թագավորը Ադիաբենից եկած այս քանանացիներին վստահում է «Զեռես» դործակալությունից բացի նաև Հայաստանում եղած ամրոցների պաշտպանության դործը:

4. «ՍՐԻԿԱՆՆԵՐԸ» ԵՎ «ՍՐԻԿԱՆԵՐԻ» ԿՈՐՇԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Մովսես Խորենացին հայոց թագավոր Վաղարշակի՝ Հայաստանում մտցրած կարգ ու կանոնի, նախարարական տների ու գործակալությունների նշանակման մասին պատմում է, որ հայոց թագավորը Մոկը գավառից մի մարդու, որն իր ձեռքի տակ ուներ բազում «սրիկաներ», նախարար նշանակեց: Ահա նշված հատվածը. «Իսկ զմսկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ»[33]:

Նույն այս վկայությունը Ստ. Մալխասյանը այսպես է թարգմանել. «Իսկ Մոկաստ գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ ավազակներ, հաստատում է նախարարություն»[34]:

Ինչպես տեսնում ենք, այս թարգմանությունը անիմաստ է ստացվել, որովհետև դժվար թե թագավորը ինչ-որ ավազակապետի նախարար դարձներ: Ինքը՝ թարգմանիչն էլ զգացել է այդ նախադասության անիմաստությունը, ուստի և ծանոթագրել է և տվել հետևյալ բացատրությունը. «Սրիկա բառը բառարանները բացատրում են իբրև սուր կրող, ավազակ, դող-ավազակ, դատարկապորտ»: Այսպես էլ թարգմանում են.—էմին՝ «большое число разбойников», Սեմիանե՝ «շատ

---

32 *J. Payne Smith*, A compendious syriac dictionary, p. 74.

33 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Գիրք Բ, գլ. Ը, էջ 116:

34 Մ. Խորենացի, Պատմություն հայոց, գիրք Բ, գլ. Ը, էջ 140:

սրիկաներ»։ Մենք էլ պահպանեցինք այս բառը, թեպետ և կասկածում ենք ճշտության մասին»[35]։

Այսպես, ուրեմն, ոչ միայն Մալխասյանի, այլ նաև մինչ այդ Մովսես Խորենացու բնագրի այլ թարգմանիչների համար տվյալ նախադասությունը անհասկանալի է մնացել։ Այս դեպքում ևս, բարեբախտաբար, ասորերենը գալիս է օգնելու մեզ։ Ասորերեն «սրիկա» (srikā صريكا) նշանակում է, ինչպես ասորերեն բառարաններն են ցույց տալիս, «մերկ, դատարկ, պարզ, հոլանի, աղքատ» և այլն[36], այսինքն՝ «անզեն»։ Եվ եթե «սրիկա» բառը այդպես թարգմանելու լինենք, ապա Մովսես Խորենացու վերոհիշյալ տեղեկությունը իր իմաստն է գտնում, այսինքն՝ Վաղարշակը «Մոկքում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ մերկեր[37] (անզեններ), նշանակում է նախապար»։

Մեր հին աղբյուրներից իմանում ենք, որ ամեն մի նախարար կամ նախարարություն, երբ երկիրը գտնվում էր պատերազմական դրության մեջ, պարտավոր էր ներկայանալ թագավորին, ըստ իր կարողության իր հետ բերելով զինված ձիավորներ կամ հետևակ, և հիմնականում նախարարական դասի ավագության կարգը հաստատվում էր ըստ նախարարի այդ կարողության[38]։

Բանակի համար անհրաժեշտ էին նաև անզեն մարդիկ, որոնք պատերազմական գործողությունների ժամանակ կռվողներին պարեն էին մատակարարում, ջուր հայթայթում, ճանապարհները մաքրում, վիրավորներին տեղափոխում և, գուցե նաև, բժշկական օգնություն ցույց տալիս։ Այս անզեններն բանակում «մերկ» էին կոչվում, այսինքն՝ «զենք չունեցող»։ Հայոց թագավոր Վաղարշակը (Տրդատ Ա-ն) նկատի ունենալով անզենների անհրաժեշտությունը բանակի համար, ստեղծում է արքունի «սրիկաների» գործակալությունը, և այդ գործը վստահում է Մոկաց նախարարին։ Հետագայում Մոկաց նախարարին տեսնում ենք ավագ նախարարների շարքում, նա, ըստ երևույթին, «մերկերի» կամ «անզենների» հրամանատարի պաշտոնը զիջել էր մեկ ուրիշին և, փո-

---

35 Նույն թարգմանության վերջին հրատարակության մեջ հանված է այս ծանոթագրությունը։

36 C. Brockelmann, Lexicon Syriacum, p. 240, լատ. „inanis"—մերկ, դատարկ։ Տե՛ս նաև J. Payne Smith, A comp. syr. dict., p. 393.

37 Հին ժամանակներում «անզեն» զինվորները «մերկ» էին կոչվում։

38 *Н. Адонц*, Армения, стр. 236.

խարենը, ավագ նախարարների նման իր ձիավորներով, անհրաժեշտության դեպքում, միանում էր հայկական զորքին[39]:

* * *

Տրդատ Ա-ի ժամանակ Հայաստանում կատարված տնտեսական և քաղաքական փոփոխությունները էապես օգնեցին երկրի հզորությունը վերականգնելու գործին:

Դրանում մեծ դեր կատարեց նաև Հայաստանի միջազգային առևտրական կապերի ընդլայնումը, որովհետև մի կողմից պարթևների, ապա պարթևական տիրապետության մեջ մտնող երկրների, մանավանդ Ադիաբենի հետ ստեղծված բազմակողմանի բարիդրացիական սերտ հարաբերությունները և մյուս կողմից՝ Հռոմի բարեկամական կապերի ամրապնդումը, հնարավորություն ավելին հայ առևտրականների միջազգային փոխադարձ կապերի ընդլայնման և Հայաստանի վրայով միջազգային առևտրական քարավանների աշխույժ երթևեկության: Այդ ժամանակ հայկական քաղաքների վերաշինությունն ու կառուցումը, մշակութային կյանքի ծաղկումը, հեթանոսական ճարտարապետական հոյակապ շենքերի կառուցումը, ինչպես, օրինակ՝ Դաունիի տաճարի հիմնադրումը, վկայում են տնտեսական ու քաղաքական կյանքի վերելքի մասին: Այդ վերելքը ինչ-որ չափով պայմանավորված էր նաև Տրդատ Ա-ի հետ եկած այն մարդկանց գործունեությամբ, որոնք պատերազմական հաջող գործողություններից հետո, բնակություն հաստատելով Հայաստանում, ուժերի ներածին չափով նպաստեցին նախարարական տների վերակենդանացմանը և արքունի գործակալությունների կարևոր աշխատանքի կազմակերպմանը: Այստեղ արժանին պիտի հատուցել նաև պարթևների թագավոր Վաղարշ Ա-ի և Ադիաբենի թագավոր Մոնոբազոս Բ-ի՝ Տրդատ Ա-ին ցույց տված աջակցությանն ու օգնությանը: Նպաստավոր այս վերաբերմունքն ու օգնությունը, մեր կարծիքով, շարունակվել են մինչև մ. թ. 115 թ., երբ Հռոմի կայսր Տրայանոսը Արևելք արշավելով, վերջ տվեց խաղաղ գոյավիճակին: Պարթևների թագավոր Վաղարշ Ա-ն մահացել էր 75 թ., հայոց Տրդատ Ա թագավորը՝ 88 թ., բայց դրանց մահից հետո էլ խաղաղ գոյավիճակը շարունակվել էր Արևելքում, ինչպես ասացինք, մինչև Տրայանոսի արշավանքները: Իսկ թե ո՞րը էր մահացել Ադիաբենի Մոնոբազոս Բ թագավորը, որոշակի հայտնի չէ, թեև մեզ հասած Մենախաոի թալմուդում տեղեկություն կա այն մասին, որ Մոնո-

[39] *Н. Адонц*, Армения, стр. 263.

բազոսի մահից շատ չանցած, Տրայանոսը արշավում է Ադիաբենի վրա, նվաճում այն և դարձնում «Ասսիրիա» կամ «Ասորեստան» անունով հռոմեական նահանգ[40]։

Թալմուդի այս վկայությունը ընդհանուր բնույթ է կրում և դժվար թե մոտ լինի ճշմարտության, կասկածելի է, որ մեր թվականությունից առաջ ծնված Մոնոբազոս Բ-ն (որը Իզատեսի ավագ եղբայրն էր) ապրած լինի համարյա մինչև մ. թ. 115 թ.։ Ուրեմն պիտի ենթադրել, որ կա՛մ Թալմուդի հաղորդած վկայությունը ճիշտ չէ և կա՛մ խոսքը այստեղ մի այլ Մոնոբազոսի, գուցե Մոնոբազոս Բ-ի որդիներից, թոռներից մեկի մասին է։ Համենայն դեպս, Տրայանոսի արշավանքներով ժամանակավորապես վերանում է Ադիաբենի թագավորական իշխանությունը և Ադիաբենը կցվելով Հռոմեական կայսրությանը, դառնում է Հռոմեական արևելյան նահանգներից «Ասսիրիան», որը հայկական աղբյուրներին ծանոթ է «Ասորեստան» անունով։

---

[40] *Josephus*, Jewish Ant., XX, 91—94, 3, notice „The Talmoud, Menahat 32, b, pp. 437—442.

ՄԱՍՆ Բ

ԳԼՈՒԽ Ա

ԱԴԻԱԲԵՆԸ ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ա.ԴԻԱԲԵՆԸ («ASSYRIA» ԱՍՈՐԵՍՏԱՆ ԱՆՈՒՆՈՎ) ՀՌՈՄԵԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ

Մինչև Տրայանոս (98—117 թթ.) կայսեր արևելյան արշավանքները, Արևելքում համեմատաբար խաղաղ իրավիճակ էր ստեղծվել, և քաղաքական կյանքում, կարելի էր ասել, անդորր էր տիրում: Սակայն իրերի դրությունը փոխվում է, երբ վերոհիշյալ կայսրը Եվրոպայում Դակիան գրավելուց հետո, պատրաստվում է Արևելք արշավելու և իր նվաճողական մեծ ծրագրերը իրագործելու: Հայտնի է, որ հայկական գահին թագավոր էր նշանակվում Հռոմի փոխադարձ համաձայնությամբ: Պարթևների արքա Խոսրովը (109—129 թթ.) առանց Հռոմի գիտության գահընկեց էր արել Հայաստանում իշխանության գլուխ կանգնած էկզեդարեսին (Աշխադարին) և փոխարինը հայկական գահին նստեցրել պարթևների նախկին թագավորի՝ Բակուր Բ-ի (77—109 թթ.) որդի Պարթամասիրին: Խոսրովի այս ինքնագլուխ արարքը լավագույն առիթ էր Տրայանոսի համար, և նա, այդ հանգամանքից օգտվելով, ծրագրում է իր արևելյան արշավանքը, նվաճելու համար նախ Հայաստանը, ապա և՝ Միջագետքն ու պարթևների երկիրը: Տրայանոսի պատերազմական այս գործողությունների պատմությունը որոշ մանրամասնություններով պահպանվել է մ. թ. II—III դ. պատմիչ Դիոն Կասիոսի աշխատության մեջ[1]: Հռոմայեցի պատմիչը հիացմունքով նկարագրում է Տրայանոսի ռազմական կարողությունները ու գործողությունները, սակայն, նկատի ունենալով նրա անփառունակ վախճանն ու փաստորեն կայսրության համար անօգուտ ելքը, նա, ի վերջո, այդ գործողությունները վերագրում է կայսեր փառամոլությանը:

---

[1] Դիոնը, ավելի ճիշտ Կասիոս Դիոնը ծնվել է մ. թ. 150 թ. Փոքր Ասիայի Բյութանիայում գտնվող Նիկիա քաղաքում: Հոր մահից հետո 180 թ. գալիս է Հռոմ և մտնում

Երբ Տրայանոսը շարժվում էր դեպի Արևելք, Աթենքում նրա մոտ է գալիս պարթևների Խոսրով թագավորի դեսպանությունը, իր հետ բերելով նվերներ ու խաղաղության առաջարկ: Նրանք ասում էին, որ Խոսրով արքան էկզեդարեսին գահից զրկել է որպես պարթևների և հռոմայեցիների համար անցանկալի անձնավորություն և խնդրում, որ Տրայանոսը թագ ուղարկի Բակուրի որդի Պարթամասիրին: Կայսրը պատասխան չտվեց դեսպաններին ու միայն ասաց, որ բարեկամությունը որոշվում է գործերով, ոչ թե խոսքերով, և թե՝ Ասորիք հասնելով կանի անհրաժեշտը[2]:

Տրայանոսը 114 թ. շարժվում է Հայաստանի վրա, թեև հայ իշխաններն ու սատրապները նրան ընդառաջ են գնում նվերներով, սակայն նա կարևորություն չի տալիս: Եվ երբ նրան ուղղված հայոց թագավոր Պարթամասիրի նամակն էլ անպատասխան է մնում, այն ժամանակ թագավորը անձամբ ներկայանում է կայսրին, իսկ վերջինս ստորությամբ ձերբակալում է նրան ու Հայաստանն էլ դարձնում հռոմեական նահանգ[3]: Այնտեղից շարժվում է դեպի Եդեսիա, բայց նա այստեղ բարյացակամորեն է վերաբերվում Օսրոյենի թագավոր Աբգարի հետ, որովհետև Նա (Տրայանոսը) մտերիմ էր իր մոտ պատանդ գտնվող Աբգարի որդի Արբադևսի հետ[4]:

115 թ. Տրայանոսը շարժվում է դեպի Միջագետք, ըստ երևույթին Արտաշատը Տիգրանակերտի հետ կապող «արքունի ճանապարհով», այսինքն՝ այն ճանապարհով, որով նրանցից առաջ անցել էր Կորբուլոնը: Ինչպես երևում է, Վանա լճի հյուսիսային կողմերով անցնելիս, կայսրը դեպի Հարավ է ուղարկում իր զորավարներից մեկին՝ Լուսիոս Կուիետոսին: Կորդուքի Մանիսար իշխանը (Բերևս Կորդվաց աշխարհի բդեշխը) Հայաստանի հարավում հրաժարվում է հռոմեական գերիշխանությունը ճանաչելուց: Լուսիոս Կուիետոսը, Վանա լճի արևելյան ափերով անցնելիս, ներխուժում է Կորդուք (երևի Կրերյաց լեռնանցքով) և գրավում ամբողջ երկիրը: Այստեղից հռոմեական զորավարը մտնում է այժմյան Ռևանդուզի շրջանը՝ «Մարաց ամուր աշխարհը», որտեղ ապրում էր

սենատ: Բարձր պաշտոններ է վարում, լինում է նույնիսկ Պերգամոնի և Զմյուռնիայի կառավարիչ: Առաջացած տարիքում՝ 229 թ., վերադառնում է իր ծննդավայրը և 235 թ. մահանում է այնտեղ:

[2] Dio's Roman History, vol. VIII, Book LXVIII, pp. 387—403.

[3] Նույն տեղում, էջ 397:

[4] Նույն տեղում, էջ 403:

մարդերի ցեղերից՝ mardomedi-ները։ Ըստ երևույթին, այս ռազմական գործողությունը նպատակ էր հետապնդում փրկել Ատրպատականի կողմից Տիգրիսի հովտով անցնող Տրայանոսի զորքը պարթևների հնարավոր հարձակումից[5]։

Ի վերջո, 116 թ. գարնանը Տրայանոսը շարժվում է դեպի Ադիաբենե։ Ինչպես նախապես ասել ենք, այն ժամանակ Ադիաբենի թագավորական գահին էր բազմել Մեբարսապեսը[6], որի մասին, դժբախտաբար, մեզ տեղեկություններ չեն հասել, և որը, անկասկած, լի էր իր երկիրը հռոմեական ոտնձգություններից փրկելու վճռակամությամբ։ Նա պատրաստություն է տեսնում իր զորքով արժանի հարված տալու, սակայն Տրայանոսը չի սպասում, որ Ադիաբենի թագավորը իր զորքի դեմ պատրաստված դուրս գա, այլ ինքն է շտապում առաջ՝ հակառակորդին ժամանակ չտալու համար։ Այսպիսով հասնում է Սինգարայի մոտակայքը և այն մի քանի տեղերը, որոնք առանց կռվի զրավվել էին Լուսիոսի կողմից[7]։ Առաջ շարժվելու համար անհրաժեշտ էին նավեր, և քանի որ Տիգրիսի շրջակայքում անտառ չկար և այդ պատճառով էլ հնարավոր չէր այնտեղ նավեր պատրաստել, ուստի նա գետի վրայով բերել տվեց իր այն նավերը, որոնք պատրաստվել էին Մծբինի շրջակա անտառներում։ Նա մեծ դժվարությամբ կարող-անցավ Կորդվաց լեռների դիմացի գետի հոսանքը, որովհետև բարբարոսները[8] հակառակ ափում դիրք էին բռնել և փորձում էին խափանել նրանց անցումը։ Սակայն Տրայանոսն իր հետ վերցրել էր նաև մեծ քանակությամբ զորք, այնպես որ նա կարգադրեց շտապ մի քանի նավ իրար միացնել՝ որպես կամուրջ օգտագործելու համար։ Մյուս նավերը, իրենց վրա ունենալով ծանր հետևակազոր ու աղեղնաձիգերին, անցան նրանց դիմաց, իսկ ուրիշները ձևացնում էին, թե իբր փորձում են անցնել գետը։ Ռազմական այս գործողությունները և հանկարծ ցամաքից այսքան մեծ քանակությամբ նավեր երևալը ահաբեկեցին «բարբարոսներին» և նրանք ստիպված եղան տեղի տալ[9]։ Հռոմայեցիները անցան Տիգրիս գետը և նվաճեցին Ադիաբենը[10]։

Ինչպես տեսնում ենք, պատմիչը հետաքրքիր մանրամասնություններով նկարագրում է ոչ միայն Տրայանոսի այս արշավանքը, այլև նրա

---

[5] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 774։

[6] *Dio's* Roman History, vol. VIII, Book LXVIII, p. 405.

[7] Նույն տեղում։

[8] Հռոմայեցիները ոչ հռոմայեցիներին «բարբարոս» էին անվանում։

[9] *Dio's* Roman History, vol. VIII, Book LXVIII, p. 411.

[10] Նույն տեղում։

ռազմական կարողություններն ու ընդունակությունները: Բայց այդ նվաճումը, ինչպես պետք է հետևցնել նույն այս պատմիչի տեղեկություններից, այնքան էլ հեշտ չի եղել: Ադիաբենի Մեբարսապես թագավորը լուրջ դիմադրություն է ցույց տվել Տրայանոսի զորքին, այնպես որ կայսրը այլ միջոցներ էր որոնում և նույնիսկ աշխատում բանակցությունների միջոցով, նենգ ու խարդախ ձևերով չլատել ադիաբենցիների դիմադրությունը: Այդ նպատակով Սենտինոս հարյուրապետին (Centurion) որպես պատվիրակ ուղարկում է Ադենիատրայե ամրոցը[11], որտեղ քաշվել էր Մեբարսապես թագավորը՝ դիմադրությունը շարունակելու համար: Մեբարսապեսը հասկանում է հռոմայեցիների նենգ մտադրությունն ու բանտարկել է տալիս Սենտինոսին: Սակայն դավադիրների օգնությամբ հարյուրապետին հաջողվում է բանտից փախչել, սպանել ամրոցի հրամանատարին (անկասկած նույն դավադիրների օգնությամբ) և բացել ամրոցի դարպասները իր հայրենակիցների առաջ[12]:

Մեբարսապեսը հազիվ կարողանում է իրեն հավատարիմ զինակիցների հետ հեռանալ ամրոցից ու ամրանալ Ադիաբենի անմատչելի լեռներում՝ դիմադրությունը շարունակելու համար: Հետագայում, երբ ապստամբություն է բարձրանում Ադիաբենում, Հայաստանում, Միջագետքում, Մեբարսապեսը նորից անցնում է ապստամբների գլուխ ու կազմակերպում ռազմական գործողությունները:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Ադիաբենի թագավոր Մեբարսապեսը օժտված էր իր ժողովուրդն ու հայրենիքը պաշտպանելու անկոտրում կամքով ու եռանդով: Անհաջողությունները նրան չեն հուսահատեցրել, և նա մինչև վերջ դիմադրել է հռոմայեցիներին, չնայած վերջիններս արդեն գրավել էին երկիրը:

Մեբարսապեսի կողմից Ադիաբենի ապստամբությունը ղեկավարելու մասին Դիոնը ոչինչ չի ասում: Նկատի ունենալով, որ Տրայանոսի նվաճումներից քիչ հետո սկսվեցին ապստամբական շարժումները Ադիաբենում, ենթադրում ենք, որ Մեբարսապեսը դեռ կենդանի էր ու շարունակում էր գործել հռոմայեցիների դեմ: Այս բոլոր նկարագրություններից հետո պատմիչը Ադիաբենի մասին հետևյալ տեղեկությունն է տալիս. «Ադիաբենը Ասորեստանի մի գավառն էր Նինվեի մոտակայքում, իսկ Արբելան ու Գավգամելան, որոնք այս երկրի մեջ են մտել, այն վայրերն են, որտեղ Ալեքսանդրը հաղթեց Դարեհին: Ադիաբենը

---

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում:

բարբարոսների լեզվով նաև կոչվել է Ավրիա (Autria), այստեղ երկու «ss»-երը փոխվել են «t»-ի[13]:

Մինչ Ադիաբենի աշխարհագրական հարցերի վրա կանգ առնելը, տեսնենք, թե պատմագրության մեջ ինչպիսի գնահատական է տրված Տրայանոսի արևելյան այս արշավանքներին: Դեռ շատ վաղուց պատմաբանները այդ ժամանակաշրջանի պատմությունը գրելիս անդրադարձել են Տրայանոսի արշավանքներին: Սակայն վերջին մի քանի տասնամյակներում հատուկ ուսումնասիրություններ տպագրվեցին Հռոմեական կայսրության խոշորագույն դեմքերից մեկի՝ Տրայանոսի մասին: Այդ աշխատություններից չորսը մանրակրկիտ քննությունների վերլուծում են ոչ միայն աղբյուրների մեջ հաղորդած վկայությունների ճշգրտությունը, այլև փորձում են այդ աղբյուրների հիման վրա գտնել Տրայանոսի 114—116 թթ. մղած մարտերի ճիշտ թվականը, ժամանակը[14]: Այս չորս գրքերում ամենից առաջ մեր ուշադրությունը գրավեց այն, որ չորս հեղինակներն էլ իրենց աշխատություններում փորձում են ժխտել Դիոն Կասիոսի այն վկայությունը, թե Տրայանոսը ոչ թե փառասիրության մղուցքից տարված է սկսել իր ռազմական գործողությունները Արևելքում, այլ նա այդ բոլորը կատարել է նախ և առաջ տնտեսական նկատառումներով: Իբր թե Տրայանոսը մտածում էր քաղաքական այդ նվաճումներով միջազգային տնտեսական միասնական մի սիստեմ ստեղծել, այսինքն՝ ձգտում էր Արևելքը Արևմուտքի հետ կապող միջազգային առևտրական բոլոր ճանապարհները վերցնել Հռոմեական կայսրության ազդեցության ներքո և այդպիսով կանոնավորել ամբողջ առևտուրը, որից կօգտվեին ամենքը, ամենից առաջ, անշուշտ, Հռոմեական կայսրության գանձատունը: Ահա իրենց այս թեզը ապացուցելու համար նրանք հիշատակում են Տրայանոսի կազմակերպած տնտեսական միջոցառումներն ու նրա հիմնադրած բազում նոր մաքսատները[15]: Նրանցից Գին իր ուսումնասիրության մեջ, օրինակ, գրում է, որ Տրայանոսը առաջին հերթին գրավեց Հայաստանը, նկատի ունենալով նրա՝ միջազգային առևտրում ունե-

---

[13] *Dio's* Roman History, vol. VIII, Book LXVIII, p. 411. (*Այսինքն* Autria-*ն դարձել է Ավուրիա, Ասսուրիա* (Assyria):

[14] *G. Julien*, Essai sur la guerre Parthique de Trajan, 1938, Paris: *R. P. Longden*, The wars of Trajan, „Cambridge ancient history", vol. XI, chpt, VI: *F. A. Lepper*, Trajan's Parthian war, London, 1948: *L. Dillemann*, Haute Mésopotamie orientale et pays adjacents, Paris, 1962.

[15] *F. A. Lepper*, Trajan's Parthian war, p. 158.

ցած կարևոր դերը[16]: Իսկ Դիլեմանը հակադրվում է նրան այն տեսակետով, որ իբր Հայաստանը այն ժամանակ էական դեր չուներ Միջագետքի հետ կատարվող միջազգային առևտրում[17]:

Եվրոպացի պատմաբանները իրենց այս փաստարկումներով, անշուշտ, աշխատում են արդարացնել Տրայանոսի արևելյան քաղաքական այդ նվաճումները, ասելով, որ այդ արշավանքները մարդկության համար իրենց հիմքում առաջադիմական էին, որովհետև ձգտում էին ամբողջ տնտեսությունը, մանավանդ առևտուրը, ընդգրկել միասնական մի սիստեմի մեջ:

Մենք այդ ձևով չենք մտածում, այլ, ընդհակառակը, գտնում ենք, որ Տրայանոսի այդ արշավանքները զուտ քաղաքական նվաճողական բնույթ էին կրում, և նրա տնտեսական միջոցառումները ինքնաբերաբար բխել են այդ նվաճումներից: Այդպես ենք մտածում, որովհետև նա իր ռազմական գործողությունների ընթացքում դիմել է ստորության, նենգության և ոտնահարել նույնիսկ տեղաբնիկների ամենատարրական իրավունքները: Անշուշտ ճիշտ է Դիլեմանը, երբ գրում է, որ Տրայանոսի քաղաքական այդ նվաճումների հիմքում ընկած է դեռ Պոմպեոսի օրերից Հռոմի երազանքը՝ Հայաստանն ու Միջագետքը հռոմեական նահանգ դարձնելով, լուծել Արևելքի հետ կապված իրենց հիմնական հարցը[18]: Ինչպես ասացինք, Տրայանոսին հաջողվում է շատ կարճ ժամանակով հասնել այդ նպատակին: Այդ է պատճառը, որ Դիոն Կասիոսը իր աշխատության մեջ, Տրայանոսի արշավանքները վերլուծելիս, գալիս է այն եզրակացության, որ հռոմայեցիները «Հայաստանը, Միջագետքի մեծ մասը, Պարթևաստանը նվաճելու համար իզուր ջանքեր թափեցին ու վտանգների ենթարկվեցին, որովհետև պարթևները նույնիսկ մերժեցին Պարթամասպատին, նրան (վտարեցին երկրից)[19], և սկսեցին ղեկավարվել հիմնականում իրենց (ուզած) ձևով»[20]:

Իսկապես էլ, Տրայանոսին հաջորդած Հադրիանոս կայսրը (117—

---

16 *J. Guey*, Essai sur la guerre, p. 26.

17 *L. Dillemann*, Haute Mésopotamie, p. 274.

18 *L. Dillemann*, Haute Mésopotamie, p. 275.

19 *Մեզ է հասել մի հավաքածու (285—335 թթ.). Ենթադրում են, որ այն 6 հեղինակների գործ է: Այդ հավաքածուում ասված է, որ Պարթամասպատին ոչ թե պարթևները վտարեցին, այլ ինքը՝ Հադրիանոսը հեռացրեց, բայց մենք գտնում ենք, որ այդ հարցում ավելի ճիշտ է Դիոնը: Այդ մասին տե՛ս* The Scriptores Historiae Augustae, eng. trans. D. Magie, London, 1967, vol. I, XXI, 17, p. 67.

20 *Dio's* Roman History eptiome, vol. VIII, 13, LXIX, p. 431.

138 թթ.) համոզվեց, որ Հռոմին մնում է հրաժարվել Տրայանոսի նվաճած երկրներից ու նրա վարած արտաքին քաղաքականությունից։ Նա որոշեց վերադառնալ մինչտրայանոսյան քաղաքականության, այսինքն՝ Օգոստոսի դրած սկզբունքին, որը գտնում էր, որ «Հռոմեական արևելյան սահմանները պետք է տարածվեն մինչև Եփրատի ափերը»[21]։

Հռոմեական աղբյուրներից այն տպավորությունն է ստեղծվում, որ Հադրիանոսը կամավոր հրաժարվեց Տրայանոսի նվաճումներից, բայց իրականում Հադրիանոսը ստիպված էր այդ զիջումները կատարել, որովհետև դեռ Տրայանոսի օրոք, երբ վերջինս գտնվում էր Բաբելոնում, տեղի ժողովուրդները ապստամբել և իրենց երկրներում տեղավորված հռոմեական զորքին կա՛մ արտաքսել և կա՛մ կոտորել էին[22]։ Ապստամբել էին ադիաբենցիները, հայերը, եդեսացիները։ Տրայանոսը վախենալով, որ պարթևները ևս կապստամբեն, շտապեց Տիգրոն և «իր մոտ կանչեց բոլոր հռոմայեցիներին և պարթևներին, ապա բարձրացավ ամբիոն, ճոռոմաբան լեզվով պատմեց աննկիքի մասին և Պարթամասպատին թագավոր նշանակեց պարթևների վրա և թագը դրեց գլխին»[23]։

Ինչպես երևում է Դիոնի վկայությունից, դեռ Տրայանոսի ժամանակ զիջումներ են արվել, որովհետև վերջինս ականատես լինելով ապըստամբություններին, համոզվում է, որ հնարավոր չէ այդպես շարունակել, մանավանդ որ այդ ժամանակ ապստամբում են նաև հրեաները, եգիպտացիները, կիպրացիները և այլն։

Իրերի այս դրության մեջ, իսկապես, նոր կայսր Հադրիանոսին մնում էր հրաժարվել այդ հողերից։ Նրա այդ քայլը բարձր գնահատականի է արժանանում, և Դիոն Կասիոսը նկատի ունենալով նրա խելացի գործունեությունը, իր աշխատության մեջ Տրայանոսի դաժանությանը հակադրում է Հադրիանոսի բարձր խմացականությունն ու մարդկային գծերը[24]։ Հադրիանոս կայսեր հասցեին դրվատանքի խոսքեր կան նաև հռոմեական այլ աղբյուրներում, որտեղ նա ներկայացված է որպես պարթևների մշտական բարեկամ[25]։

Այսպիսով, Հադրիանոս կայսեր օրոք, հռոմեական բանակները հետ են քաշվում դեպի Եփրատի ափերը, և դրանից հետո վերականգնվում

---

[21] *D. Magie*, Roman rule in Asia Minor. vol. I, Princeton, 1950, p. 610. Նաև *A. Jones*, The ties, Oxford, 1937.

[22] *Dio's* Roman History, Book LXVII, p. 417.

[23] Նույն տեղում, էջ 419։

[24] *Dios* Roman History, vol. VIII, Book LXIX, p. 431.

[25] The Scriptores, p. 67.

են Հայաստանի ու Օսրոյենի թագավորությունները։ Թե ի՞նչ վիճակ է ստեղծվում Ադիաբենում, հռոմեական աղբյուրները լռում են։ Միակ աղբյուրը այդ ժամանակից մնում է VI դ. ասորի պատմիչ Մշիխա Զնխայի «Ադիաբենի եկեղեցու պատմությունը»։ Մինչ այդ շրջանի մասին գրելը, անդրադառնանք նաև Տրայանոսի ժամանակ Ադիաբենի հռոմեական նահանգ դառնալու հարցին։ Տրայանոսը Ադիաբենը նվաճելուց հետո, ինչպես Հայաստանում, Միջագետքում, այստեղ ևս վերացրեց թագավորությունը և Ադիաբենը «դարձրեց հռոմեական երրորդ նահանգ, այն կոչելով Ասիրիա» (Ասորեստան)[26]։ Ուրեմն, Ասիրիա (Ասորեստան, Ասիրիա—Assyrie) ասելով այդ ժամանակ հասկանում էին այն տերիտորիան, որ եղել է Ադիաբենի թագավոր Մեբարսապեսի գերիշխանության ներքո, այսինքն՝ Տիգրիս գետից մինչև Մեծ Զաբ գետն ընկած տարածությունը։ Ինչպես ասել ենք, Ադիաբենի սահմանները միշտ էլ փոխվել են։ Դիոնի նկարագրություններից երևում է, որ Տրայանոսի արևելյան արշավանքների նախօրեին Ադիաբենի արևելյան սահմանը տարածվել է նաև Տիգրիս գետի աջ ափից այն կողմ[27]։ Ինչպես հետո կտեսնենք, նրա սահմանները փոխվել են նաև Սասանյանների օրոք։

Հռոմեական «Assyrie» կամ «Ասորեստան» նահանգը, ըստ երևույթին, վարչական շատ կարճ կյանք է ունեցել, և, ինչպես ցույց են տալիս փաստերը, Տրայանոսի մահից անմիջապես հետո, Հադրիանոս կայսեր թագավորության առաջին տարիներին, վերանում է հռոմեական գերիշխանությունը այս շրջաններում, հռոմեական բանակները դուրս են գալիս այս երկրից, և նորից Ադիաբենը ընկնում է պարթևների քաղաքական ազդեցության ներքո։

---

[26] *L. Dillemann*, Haute Mésopotamie, pp. 288, 289.

[27] Նույն տեղում, էջ 284։ *Dio's* Roman History, vol. VIII, Book LXVIII, pp. 403—411:

ԳԼՈՒԽ Բ

ԱԴԻԱԲԵՆԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ («ՄՈԳՊԵՏՆԵՐԻ») ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Հռոմեական բանակները Հադրիանոսի օրոք հեռանում են Ադիաբենից և ընդհանրապես՝ Տրայանոսի նվաճած արևելյան երկրներից: Վերականգնվում են Հայաստանի, Օսրոյենի թագավորությունները, պարթևների խոսրով թագավորը վերստին գրավում է իր գահը, և նորից երկու կողմերը՝ հռոմայեցիներն ու պարթևները համաձայնվում են պահպանել 63 թ. Հռանդեայի դաշնագրի պայմանները:

Թեև աղբյուրներում ոչինչ չի ասված, բայց իրար հաջորդած դեպքերը խոսում են այն մասին, որ Մեբարսապհանը, հավանաբար, սպանվել էր Տրայանոսի դեմ մղած ապստամբական կռիվներում: Պարթևները օգտվելով նրա մահից և Ադիաբենի ներսում մեծամեծների թուլությունից, ինչպես նաև հռոմայեցիների Ադիաբենում ստեղծած վարչական նոր կարգից, իրենց հերթին, չեն վերականգնում Ադիաբենի թագավորությունը, այլ այն կցում են պարթևների իշխանությանը: Այսինքն՝ այն դարձնում են պարթևական մի մարզ կամ նահանգ, իշխանությունը տալով իրենց կողմից նշանակված կառավարիչին:

Այս և հետագա իրադարձությունների մասին հռոմեական աղբյուրները մեզ տեղեկություններ չեն տալիս, և այս անգամ մեզ օգնության են հասնում ասորական աղբյուրները, հատկապես մ. թ. VI դ. գրի առնված «Ադիաբենի եկեղեցական պատմություն» աշխատությունը[28]: Մշիխա Զեխան պատմական իր այս երկը շարադրելիս, ինչպես ինքն է ասում, օգտվել է հիմնականում վարքագրական գործերից և մինչև այժմ մեզ անհայտ, հավանաբար II դ. հեղինակ, ինչ-որ Հաբելի պատմական աշխատությունից[29]:

---

[28] *A. Mingana*, Histoire de L'église d'Adiabène, Mosoul, 1907:

[29] *Այս աշխատության մեջ օգտագործելու ենք Մշիխա Զեխայի վերոհիշյալ երկի*

Մենք ևս մեր այս ուսումնասիրության մեջ որպես աղբյուր հիմնականում օգտագործում ենք Մշիխա Զնխայից մեզ հասած արժեքավոր տեղեկությունները: Արժեքավոր ենք ասում, որովհետև նրա տեղեկությունների շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել ոչ միայն մ. թ. II—III դդ. Ադիաբենի ու նրա հարևան երկրների, հատկապես Պարսկաստանի, պատմական անցքերի հետ կապված շատ կարևոր փաստեր ու իրադարձություններ, այլ նաև Սասանյանների օրոք Ադիաբենում ու պարսկական տիրապետության տարբեր շրջաններում ստեղծված քրիստոնեական համայնքների պատմությունը: Ճիշտ է, ասորական այս աղբյուրը խճճվել է քրիստոնեական գրականության, մանավանդ վարքագրական երկերի ազդեցության ներքո, հրաշքների ու աստվածաբանական հավատալիքների նկարագրություններ, բայց դա չի նսեմացնում երկի պատմական արժեքը:

Պարթևները Ադիաբենի թագավորությունը վերացնելուց հետո զանազան միջոցների են դիմում իրենց ազդեցությունը Ադիաբենի ներսում ուժեղացնելու համար: Մի կողմից ձգտում են ուժեղացնել կապը տեղի մեծամեծների ու զրադաշտական կրոնի ներկայացուցիչների միջև և մյուս կողմից՝ զրադաշտական մոգերի ու ժողովրդի միջև: Այդ նպատակի համար առիթ են հանդիսանում Ադիաբենում կազմակերպված քրիստոնեական համայնքների դեմ հարուցված հալածանքները: Օրինակ՝ Մշիխա Զնխան, Հաբելի գրքից օգտվելով, պատմում է, որ Ադիաբենի մեծամեծները գործակցում էին մոգերի հետ քրիստոնյաներին հալածելու համար, և այդ գործակցության շնորհիվ, նրանց հաջողվում է գլխատել տալ Ադիաբենի առաջին եպիսկոպոսներից մեկին՝ Շեմշունին: Այդ գլխատումը, նշա պատմելով, տեղի է ունեցել «Արշակունիների արքա՝ Խոսրովի Հռոմայեցիների կայսր Տրայանոսից պարտվելուց յոթը տարի անց, երբ նա (Տրայանոսը) եկել էր մեր երկիրը»[30]:

Ինչպես տեսանք Դիոն Կասիոսի վկայություններից, Տրայանոսը Ադիաբենը նվաճել էր մ. թ. 116 թ., ուրեմն, ըստ այս տեղեկության, Ադիաբենի եպիսկոպոս Շեմշունը նահատակվել է մ. թ. 123 թ.:

Այդ ժամանակ ո՞վ էր Ադիաբենի կառավարիչը, չի հիշատակված, բայց նրա հաջորդի՝ Խսահակ եպիսկոպոսի օրոք Ադիաբենի կառավա-

---

մեր հայերեն թարգմանությունը, որը լույս է տեսել «Ասորական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» աշխատության մեջ, Երևան, 1977:

[30] Հ. Մելիքյան, Ասորական աղբյուրներ, էջ 66:

րիշն էր պարսիկների թագավորի կողմից նշանակված «Ռակբակտ անունով հայտնի ու հարուստ մի մարդ»[31]:

Հաբելի մոտ թեև մանրամասնություններ չկան, բայց նրա հաղորդած հետագա տեղեկություններից իմանում ենք, որ Ռակբակտը Ադիաբենի մեծամեծներից կամ հայտնի նախարարներից մեկն էր, որն, ըստ երևույթին, իր ունեցած մեծ հեղինակության շնորհիվ պարթևներից ըստացել էր Ադիաբենի կառավարիչի պաշտոնը: Պատմական փաստերը ցույց են տալիս, որ նա այդ պաշտոնում պարսիկների հյու-հնազանդ կամակատարը չի եղել և գործել է այնպես, որ հարմար առիթին կարողանա իր երկրի քաղաքական անկախությունը վերականգնել: Մեր կարծիքով, այդ է եղել պատճառը, անշուշտ, որ նա տիրող կարգերից դժգոհ քրիստոնեական համայնքների հետ մտերիմ ու սերտ կապեր է ունեցել, հակադրվելով մոգերին, որոնք, բնականաբար, գործում էին Պարսկաստանի շահերի դիրքերից: Թեև Մշիխա Զնխան, Հաբելին հետևելով, Ռակբակտի մասին գրում է, որ նա քրիստոնյա էր, բայց կարծում ենք, որ այստեղ խոսքը ավելի շատ համագործակցության մասին է, և նա մտածում էր քրիստոնյաների օգնությամբ իրագործել նաև քաղաքական իր իղձերը, մանավանդ որ Իզատեսի թագավորության տարիներից քրիստոնյաների ազդեցությունը ինչպես հրեաների, այնպես էլ ոչ հրեաների շրջանում գնալով ուժեղացել և մեծացել է:

Պարթևական գահին բազմած Վաղարշ Բ թագավորը կարողացել էր իր դիրքերը ավելի ամրացնել, և նույնիսկ Հադրիանոս կայսեր հետ բանակցություններին մեջ մտնելով, ստիպել էր, որ հռոմայեցիները այս անգամ Օսրոյենի թագավորական գահից հեռացնեն Պարթամասպատին, որին, մինչև այդ, Տրայանոս կայսրը նստեցրել էր պարթևական գահին[32]: Պարթևների արտաքին քաղաքական հաջողությունները, սակայն, երկրի ներքին կյանքում իրերի դրությունը չփոխեցին, և գնալով ներքին դժգոհությունները սաստկացան, և փոխարենը պարթևները ուժեղացրին ճնշումը: Ադիաբենում ուժեղացող այդ ճնշման դեմ, ինչպես ասացինք, գործում էին քրիստոնեություն ընդունած ադիաբենցիները, որոնք, ինչպես վկայում է ասորական այս աղբյուրը, իրենց կազմակերպություններով պայքարի դրոշ էին դարձրել քրիստոնեական գաղափարախոսությունը: Այսպիսով, քրիստոնեությունը վտանգ տուկ էր դնում նաև մոգերի շահերը: Մոգերն էլ իրենց հերթին գործնական միջոցների են դի-

---

31 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ*, էջ 67:

32 *D. Magie*, Roman rule, p. 610.

մում հարվածելու համար այդ վարդապետության հետևորդներին, և որովհետև քրիստոնյաները պաշտպանություն էին գտնում Ռակբակոսի, այսինքն՝ Ադիաբենի կառավարիչի մոտ, ուստի նրանք փորձում են առաջին հարվածը հասցնել Ռակբակոսին: Սակայն մոգերը չեն կարողանում իրենց այդ իղձերը իրագործել:

Այդ ժամանակ Ռակբակոսին հրաման էր եկել մեկնել Տիզբոն, «որպեսզի ինքը ևս իր զորքով մասնակցի Կորդվաց աշխարհի վրա հարձակված «բարբարոս» ցեղերի դեմ ձեռնարկվող ռազմական գործողություններին, որովհետև նրանք (բարբարոս ցեղերը) այդ երկրի բնակիչներին կողոպտում ու թալանում էին»[33]:

Ռակբակոսը, ինչպես գրել է Հաբեղը, իր զորքով մեկնել է, և մոգերը, օգտվելով առիթից, զայրույթը թափել են Ադիաբենի եպիսկոպոս Իսահակի վրա, բանտարկելով նրան: «Բարբարոս» ցեղերի դեմ մղված մարտերում Ռակբակոսը փայլել է իր քաջությամբ ու հերոսությամբ և փրկելով զինվորներին իրենց սպառնացող մեծ վտանգից, ինքն է զոհվել: Հասկանալի է, որ նրա մահվան լուրը ծանր ազդեցություն է գործել Ադիաբենի քրիստոնյաների վրա, և նրանք անօգնական են մնացել մոգերի կազմակերպած հալածանքների դեմ:

Քրիստոնյա քարոզիչները իսկապես աշխուժացրել էին իրենց քարոզչական աշխատանքները և սկսել էին Մերձավոր արևելքի ու ընդհանրապես, Առաջավոր Ասիայի բոլոր երկրներում իրենց հետևորդների շարքերը խտացնել: Այդ աշխուժացմանը նպաստել էին հատկապես հրեական ապստամբական գործողությունների անհաջողությունները, որոնց գլուխն էր կանգնել հրեական ժողովրդի լավագույն զավակներից մեկը՝ Բարքոբան, որի մասին Մովսես Խորենացին, անկասկած քրիստոնեական վաղ աղբյուրների բացասական վկայությունների հետևողությամբ, գրում է (թեև ինքն ասում է, որ օգտվել է Արիստոն Փեղղացուց), որ «հրեաներն ապստամբվել էին Հռոմայեցիների Ադրիանոս թագավորի դեմ և պատերազմեցին Ռուփոս եպարքոսի դեմ, առաջնորդությամբ մի ավազակ մարդու, որ կոչվում էր Բարքոբա, այսինքն՝ աստղի որդի. նա մի չարագործ և սպանող մարդ էր, բայց մեծ-մեծ ջարդում էր պարծենալով, որ ինքը երկնքից ծագել է որպես փրկիչ նեղվածներին ու դերիներին: Նա պատերազմն այնքան սաստկացրեց, որ նրան նայելով նաև Ասորիքը, Միջագետքը և ամբողջ Պարսկաստանը Հռոմայեցիներին հարկ տալուց հրաժարվեցին»[34]:

---

83 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ*, էջ 68:

34 Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց*, գիրք Բ, գլ. Կ, էջ 192—193:

Հուսախաբություն ապրած այս «նեղվածներին, գերիներին» փրկելու, այսինքն՝ իրենց շարքերը բերելու գործը ստանձնում են քրիստոնեական վարդապետության առաջնորդները և համոզում, մանավանդ սիլուքում տարածված հրեաներին, որ իրենց փրկությունը կարող են գտնել քրիստոնեական կրոնի հաղթանակով։ Պետք է ասել, որ այս անգամ այդ «նեղվածներից ու գերիներից» և հատկապես Անտիոքում ապրող հրեաներից շատերը ընդունում են քրիստոնեական կրոնը։ Անտիոքում ապրող հրեաների քրիստոնեության ընդունումը[35] քրիստոնեական եկեղեցու հետագա ճակատագրի համար ունենում է ուրույն նշանակություն, որովհետև դրանով արևելյան եկեղեցիներից շատերը, մանավանդ Անտիոքի պատրիարքական աթոռը իր գործունեությամբ հիմնականում ընկնում է հրեական մտածողության, հասկացողությունների ազդեցության տակ, և Անտիոքի եկեղեցին իր աստվածաբանական դատողություններին, դարձվածների ու Ս. Գրքի մեկնությունների հարցում հենվում է հրեական սկզբունքների վրա։

Քրիստոնեության այս աշխուժացումից և մանավանդ հասարակության ցածր խավերին իրենց շարքերը հավաքագրելու ու նրանց մի դրոշի տակ կազմակերպելու քրիստոնյա գործիչների ընդունակությունից անհանգստացած, պարսկական տիրապետության մեջ, հատկապես քրիստոնեության առաջին ու կարևոր կենտրոններից մեկում՝ Ադիաբենում, մոգերը հալածանքն ուժեղացնում և փորձում են վերացնել քրիստոնեությունը։

Այդ հալածանքները Ադիաբենում ավելի են սաստկանում պարթևների վաղարշ Բ թագավորի մահից հետո, արքայական գահին բազմած վաղարշ Գ-ի՝ Պերոզի[36] (148—191 թթ.) օրոք։ Մոգերը օգտվելով այն հանգամանքից, որ պարթևների արքան խիստ ղբաղված է պատերազմական պատրաստություններով հռոմայեցիների դեմ, այնքան դաժան են դառնում իրենց հալածանքներում, որ, ինչպես Մշիխա Զխեան է պատմում, Ադիաբենի եպիսկոպոս Աբրահամը քրիստոնյա մեծամեծներից նվերներ է վերցնում ու գնում է պարթևների արքայի մոտ, որպեսզի նրանցից մի թուղթ բերի հօգուտ քրիստոնյաների[37], այսինքն՝ մի հրաման, որ Ադիաբենում մոգերը վերջ տան իրենց հալածանքներին։ Ինչպես պետք է եզրակացնել ասորական այս աղբյուրի տվյալներից, այդ

---

[35] *G. Downey*, A history of Antioch in Syria, Princeton, New Jersay, 1961, p. 300.

[36] «Պերոզ» նշանակում է հաղթող, հաղթական։

[37] Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, էջ 71։

միջոցառումները տեղական բնույթ են կրել և դեռ կենտրոնական իշխանության կողմից չեն քաջալերվել։ Համենայն դեպս, Աբրահամի այս առաքելությունը հաջողությամբ չի պսակվում, որովհետև, ինչպես գրված է աղբյուրում, «արքան խառը գործերի մեջ էր», և Աբրահամ եպիսկոպոսը իր նպատակին չհասավ, որովհետև «երկրի բոլոր կողմերից, բազում զորք էր հավաքվել և պատրաստվում էին հռոմեական երկրների վրա հարձակվելու»[38]։

Եվ, իսկապես, Վաղարշ Գ-ի հռոմայեցիների դեմ սկսած ռազմական այդ գործողությունների մասին որոշ տեղեկություններ են պահպանվել Դիոն Կասիոսի մեզ հայտնի պատմական աշխատության մեջ։ Նա պատմում է, որ Վոլոգեսը (Վաղարշ Գ-ը) 161 թ. սկսել է պատերազմը, շրջապատակելով Սևերիանոսի հրամանատարությամբ էլեգիայում[39] գտնվող զորքը։ Նա հաղթականորեն առաջանում է՝ ավերելով, ոչնչացնելով ու կոտորելով իրեն հանդիպած հռոմեական ազդեցության տակ եղող երկրներն ու այդ երկրներում գտնվող հռոմեական դինվորներին։ Սակայն 161 թ. հաջողությամբ սկսած Վաղարշ Գ-ի ռազմական այս արշավանքները, մ. թ. 165 թ. ավարտվում են պարթևների պարտությամբ Մարկոս Անտոնիոս (161—180 թթ.) կայսեր օրոք[40]։

Վաղարշի պարտության մասին ուրախությամբ հիշատակում է Հաբել վարդապետը, և այդ մասին նրա հետևողությամբ Մշիխա Զեխան գրել է. «Սակայն աստված չկամեցավ, որ նրանց (պարթև) արքաների ցանկությունը իրականանա, որովհետև նրա բազում հարվածներից հետո, պարթևները պարտվեցին ու հռոմեական բանակների կողմից հալածվեցին մինչև իրենց երկիրը՝ Տիգրոն»[41]։ Հռոմայեցիները այնուհետև դադարեցնում են պարթևների հետապնդումը, որովհետև, ինչպես գրում է ասորական այս աղբյուրը, «հռոմեական բանակում ժանտախտ էր սկսվել, և այդ ժանտախտը այնքան ուժեղ է եղել, որ հռոմայեցիները չեն կարողացել նույնիսկ իրենց ունեցվածքը տեղափոխել»։

«Այսպես երեք ամիս տևող այս ժանտախտը բազում բնակիչների մահվան պատճառ է դառնում։ Ժանտախտը թափանցում ու տարածվում է Ադիաբենում, սակայն մեզ հայտնի Ադիաբենի Աբրահամ եպիսկո-

---

38 Նույն տեղում։

39 «Էլեգիա այժմ՝ Իլիջա, Կարին գավառի ջերմուկները։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 782։

40 *Dio's* Roman History, vol. IX, Book LXXI, pp: 3—5.

41 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, էջ 71։

պոսն իր անդուլ ու ժրաջան գործունեությամբ օգնում է այդ վտանգի վերացմանը, բայց վերջում ինքն էլ վարակվում ու մահանում է»[42]։

Ադիաբենի Աբրահամ եպիսկոպոսի կյանքի վերաբերյալ ասորական աղբյուրում պահպանված մանրամասնությունները խոսում են այն մասին, որ քրիստոնեությունը արդեն մ. թ. II դ. կեսերին Ադիաբենում հետզհետե ամուր հենարան էր ստեղծել և քաղաքական անկախության ձգտող տարրերից շատերին իր շարքերը բերել, նրանց մեջ ուժեղացնելով հակապարթևական տրամադրությունները։ Պատմիչի մոտ պարթևների՝ Վաղարշ Գ-ի պարտության առիթով առաջացած ուրախությունը արտահայտում է այն ժամանակվա Ադիաբենում ապրող քրիստոնյաների և ընդհանրապես քաղաքական անկախության ձգտող ադիաբենցիների ներքին ղպացմունքները։ Ճիշտ է, մեզ հայտնի չեն Ռակբակտից հետո Ադիաբենի կառավարիչի պաշտոնին կանչված անձնավորությունների անունները, բայց նույն «Ադիաբենի եկեղեցու պատմություն» աշխատությունից հստակ երևում է, որ Ռակբակտի մահից հետո դեռ երկար ժամանակ Ադիաբենը զրկված է եղել քաղաքական իր անկախությունից և կառավարվել է Տիզբոնից նշանակված կառավարիչների կողմից։ Այդ կառավարիչները, ինչպես Ռակբակտը, այն ժամանակ եղել են հավանաբար ադիաբենցիներ։ Դժբախտաբար տեղեկություններ չկան, սակայն հավատացած ենք, որ Ադիաբենում չեն դադարել սոցիալական և ազատագրական շարժումները։ Քրիստոնեական համայնքի ուժեղացումը երկրի ներսում խոսում է սոցիալական շարժումների առկայության մասին, իսկ Ադիաբենի թագավորության վերականգնումը հետագայում, ապացույց է ժողովրդի մղած քաղաքական անվերջ պայքարին։ Պարզ է, որ ադիաբենցիները չեն հաշտվել իրենց պարտադրված պարթևական լծի հետ և ի վերջո կարողացել են թոթափել այն։ Համենայն դեպս, մ. թ. II դ. երկրորդ կեսից սկսյալ, ինչպես Ադիաբենի, այնպես էլ Պարթևական ու Հռոմեական կայսրության արևելյան շրջաններում ցածր խավի ու մանավանդ քրիստոնեություն ընդունածների վիճակը գնալով ծանրանում էր և հալածանքները խստանում։ Ասորական մեզ հայտնի այս աղբյուրից երևում է, որ իշխանության գլուխ կանգնած բարձրաստիճան պաշտոնյաները, մոգերի ու քուրմերի հետ համագործակցած, սկսել են մասսայական կոտորածները. ահա թե ինչ է գրում պատմիչը. «Հեթանոսների ու մոգերի առելության պատճառով (Ադիաբենի եկեղեցին այրի մնաց, այսինքն հովիվ կամ եպիսկոպոս չուներ)։

---

[42] Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, էջ 72։

Այն ժամանակ մեր եղբայրները շատ տառապեցին։ Շատերը, որոնք հրիտասարդ էին ու հավատով թույլ, նորից սատանաների կրոնին դարձան, որովհետև տեսնում էին, որ իրենց տները ավերում են, տղանհրին ու աղջիկներին կալանավորում կամ թաքցնում և իրենց էլ դաժանորեն ծեծում»[43]։ Միայն չորս տարի հետո Ադիաբենի եպիսկոպոս է ձեռնադրվում ինչ-որ մի ատաղձագործի որդի Հաբելը[44]։ Ի միջի այլոց պետք է ասել, որ Ադիաբենի եպիսկոպոսները մ. թ. II դ. հիմնականում եղել են հասարակության ցածր խավի ներկայացուցիչներ։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ քրիստոնեությունը Ադիաբենում մեծ մասամբ տարածվել էր ցածր խավի շրջանակներում։ Նույն այդ աղբյուրում ավելի հետաքրքիր մանրամասնություններ կան քրիստոնյաների կրած ծանր տառապանքների մասին։ Ահա թե ինչ է գրում պատմիչը այդ մասին. «Նրանք (քրիստոնյաները) թաքնվում էին ամեն տեղ, և (եթե) ապաստան չէին գտնում, լեռներն էին փախչում, իսկ հեթանոսները, վագրերի նման, թակարդ ընկածների արյունն էին ուզում (խմել)։ Իրենց տներում մնացածները, կանանց և երեխաների հետ, գառների նման զոհվում էին, և նրանց, որոնց շնորհ էին անում, դատապարտում էին (հանքերում) առավոտից մինչև երեկո տաժանակիր աշխատանքի»[45]։

Համենայն դեպս, այս բոլորը վկայում են այն մասին, որ երկու մեծ պետություններն էլ՝ պարթևներն ու հռոմայեցիները թուլացել էին անընդմեջ պատերազմների պատճառով և, ինչպես ասել ենք, թեև հռոմեական բանակները ժանտախտի պատճառով նահանջել էին պարթևների երկրներից ու մեծ ավար թողել այնտեղ, բայց նրանք մ. թ. 166 թ. կնքված խաղաղության պայմանագրով որոշ առավելության էին հասել. այդ պայմանագրով «կայսրությանն անցավ Միջագետքի արևմտյան մասը, մինչև Խաբուր գետը։ Օսրոյենե-Եդեսիայի թագավորությունը դարձավ Հռոմից կախյալ պետություն, իսկ հելլենականացված հինավուրց Խառան քաղաքը հայտարարվեց ազատ քաղաք՝ կայսրության հովանավորության ներքո»[46]։ Պարթևների կողմից նման զիջումը վկայում է նրանց ռազմական ուժերի և քաղաքականության թուլացման մասին. այդ թուլացմանը նպաստել էին նաև ոչ միայն հռոմեական բանակից պարթևների այն ժամանակ կրած ծանր պարտությունը, այլ նաև ներքին երկպառակությունները ու գահակալական կռիվները։ Ահա դրանից էլ

---

43 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, Հաբել եպիսկոպոս, էջ 76։

44 Նույն տեղում։

45 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, Հաբել եպիսկոպոս, էջ 79։

46 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, էջ 786։

օգտվում են Ադիաբենի մեծամեծները և վերականգնում Ադիաբենի թագավորությունը։ Իսկապես, Վաղարշ Գ-ի մահից հետո գահին բազմած Վաղարշ Դ-ի օրոք (191—208 թթ.) Ադիաբենում արդեն թագավորական իշխանություն կար և գահին բազմել էր Նարսայը կամ Ներսեհը։ Թե մինչև Նարսայը ո՞վ էր վերականգնել Ադիաբենի թագավորությունը, մեզ հայտնի չէ, իսկ Նարսայի կամ Ներսեհի միայն մահվան հետ կապված իրադարձություններն են հայտնի Մշիխա Չերթայի գրքից։ Սակայն հետաքրքրական է, որ Մովսես Խորենացին անգամ քրիստոնեական վարդապետություն ընդունած Աբգարի մասին գրելիս, իր բնագրում մնջ է բերել այն նամակների պատճենները, որոնք նա գրել էր տարբեր թագավորներին։ Դրանց մեջ կա մի նամակ գրված Ասորեստանի թագավորին կամ, ինչպես Խորենացին է վերնագրել, «Աբգարի թուղթը Ներսեհին»։ Այդ նամակը, ինչպես պարզվում է բնագրից, գրվել է Ադիաբենի թագավոր Ներսեհին, նամակում խոսելով ինչ-որ Պերոզի մասին։ Աբգարը ասում է. նրան «կապանքներից արձակեցի և հանցանքը ներեցի, և եթե կամենաս, նշանակիր Նինվեի վերակացու»[47], իսկ ինչպես գիտենք, այն ժամանակ Նինվեն իր շրջակայքով մտնում էր Ադիաբենի գերիշխանության ներքո։ Ուրեմն, այս նամակից հաստատվում է, որ Նարսայը ժամանակակից էր քրիստոնեություն ընդունած Աբգարին։ Մեր մի այլ աշխատության մեջ, եվրոպացի պատմաբանների ուսումնասիրության վրա հենվելով, ցույց ենք տվել, որ վերոհիշյալ թագավորը մ. թ. 202 թ. քրիստոնեություն ընդունած Եդեսիայի կամ Օսրոյենի քրիստոնյա թագավոր Աբգար Թ-ն է[48]։ Եվ եթե դա այդպես է, ապա պետք է կարծել, որ Նարսայը մ. թ. II դ. վերջերին էր գրավել Ադիաբենի թագավորական իշխանությունը։ Ըստ երևույթին այդ գործում, ինչպես հետո կտեսնենք, օգնել էին նաև հռոմայեցիները, ավելի ճիշտ՝ II դ. վերջերին, նրանք Ադիաբենն էլ վերցրել էին իրենց քաղաքական ազդեցության շրջանակների մեջ, և Ադիաբենի թագավորը որոշ վասալական կախման վիճակի մեջ էր, որովհետև հռոմայեցիներին հաջողվել էր այստեղ ևս պահակազոր դնել ամրոցներում։

Այժմ տեսնենք, թե ինչ վիճակում էին հռոմայեցիների գործերը, մանավանդ Արևելքում։ Մարկոս Ավրելիոս կայսեր մահից հետո (180 թ.), նրա որդի Կոմմոդոսի թագավորության ժամանակ (180—192 թթ.),

---

47 Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Բ, գլ. ԼԳ, էջ 167։

48 Հ. Մնացականյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (3—5-րդ դարեր), Երևան, 1970, էջ 162։

կայսրության ներսում ծանր դրություն էր ստեղծվել և ինչպես Կասիոս Դիոնն է վկայում, ամեն ինչ երևի վրա էր թողնված, կայսրը իրեն հանձնել էր ղեխ կյանքի ու զվարճությունների, և երբ հետզհետե սաստկանում են ժողովրդական դժգոհությունները երկրի ներսում, նա այդ շարժումները ղսպելու համար դիմում է սարսափի քաղաքականության, և սկսում են մահապատիժները, բռնակալություններն ու ծանր հալածանքները: Վախկոտ այս կայսրը, իր կասկածամտության պատճառով, սկսեց ոչնչացնել իրեն հավատարիմ զինակիցներին ու գործակիցներին[49], մինչև որ ժողովրդի ծոցից դուրս եկած, բայց իր զինվորական ծառայության շնորհիվ առաջ քաշված Պերտինակսը ժողովրդի ու Հռոմի բարձր խավի՝ Կոմմոդոսի նկատմամբ ունեցած ատելությունից օգտվելով, սպանում է նրան և բազմում գահին[50]:

Սակայն Պերտինակսը երկար չկարողացավ իշխել, որովհետև Հռոմեական բանակից երեք հայտնի զորավարներ՝ Սևերոսը, Նիգերն ու Ալբինոսը, յուրաքանչյուրն իր հերթին, փորձում էր իշխանությունն իր ձեռքը վերցնել: Այդ պատճառով էլ նրանց միջև սկսվեցին պատերազմական գործողությունները: Ալբինոսը Բրիտանիայի կառավարիչն էր, Սևերոսը՝ Պաննոնիայի, իսկ Նիգերը՝ Ասորիքի[51]: 193 թ., ի վերջո, Սևերոսը կարողացավ տիրանալ գահին: Մնում էր Նիգերի հետ հաշիվ տեսնել: Այդ նպատակով, 194 թ. Սևերոսը մեծ բանակով շարժվեց դեպի Ասորիք՝ Նիգերի դեմ: Երկու մրցակիցների բանակները հանդիպեցին Կիլիկյան դռների՝ Իսոսի մոտ: Սևերոսի զինվորներին առաջնորդում էին Վալերիանոս և Անուլլինոս զորավարները, իսկ Նիգերը ինքն անձամբ էր ղեկավարում իր զորքը: Բուռն ճակատամարտից հետո Նիգերը պարտվեց, և Սևերոսի բանակը հաղթական մուտք գործեց Անտիոք: Սևերոսը դրանից հետո սկսեց պատժել բոլոր նրանց, ովքեր իր դեմ պատերազմի ժամանակ օգնել էին Նիգերին[52]:

Ինչպես Հերոդիանոսն է վկայում, այդ պատերազմական գործողությունների ժամանակ Նիգերին օգնել էին Հադրայի՝ Բարսեմիոս և Եդեսիայի՝ Աբգար թագավորները, որոնք օգնական զորք էին տվել Նիգերին[53]: Չգիտես ինչու Հերոդիանոսը չի հիշատակում ադիաբենցիների

---

[49] *Dio's* Roman History, epitome of Book LXIII, p. 91:

[50] Նույն տեղում, Book LXXIV, p. 127.

[51] Նույն տեղում, էջ 151:

[52] *Dio's* Roman History, Book LXXV, p. 181:

[53] *Herodian's* history of the empire, eng. trans. C. R. Whittaker, vol. I, London, 1959, Book III, 2, p. 315.

օգնությունը, որովհետև Կասիոս Դիոնի վկայությունից պարզ երևում է, որ Նիգերին օգնել են նաև ադիաբենցիները: Դա էլ պատճառ է դարձել, որ Սևերոսը 195 թ. իր բանակով արշավի արաբների երկիր՝ Հադրա, ապա Եդեսիա և Ադիաբեն[54]: Այժմ տեսնենք, թե ինչ է գրում Հերոդիանոսը այդ կապակցությամբ. «Այսպես նա (Սևերոսը) Բարսեմիոսի՝ Նիգերի հետ ունեցած բարեկամությունը առիթ դարձնելով, արշավանք կազմակերպեց դեպի Արևելք: Այնտեղ հասնելով, նա մտածեց հարձակվել նաև Հայաստանի վրա, սակայն Հայոց թագավորը կանխեց նրա մտադրությունը, նրան փող, նվերներ ու պատանդներ ուղարկեց և առաջարկեց բարի կամեցողության դաշինք կնքել»[55]: Սևերոսը (193—211) Հայաստանում հաջողություն ունենալուց հետո, շարժվեց Հադրայի դեմ[56]: Օսրոյենի թագավորն էլ, ինչպես գրում է Հերոդիանոսը, լեզու գտավ Սևերոսի հետ, և նրա վստահությունը շահելու համար իր որդիներին որպես պատանդ նրան տվեց[57]:

Հերոդիանոսի այս վկայությունները, անշուշտ, իրականության մեկ կողմն են արտացոլում, որովհետև Սևերոսն Ադիաբենի և Հադրայի վրա արշավելիս ոչ միայն մտածում էր վրեժ լուծել այս երկրներից այն բանի համար, որ նրանք օգնել են Նիգերին, այլ նաև պատժելու նրանց, ովքեր համաձայնվել էին կոտորել այն հռոմայեցի զինվորներին, բնաջնջել հռոմեական այն լեգեոնները, որոնք մնում էին իրենց երկրների ամրոցներում, իբր թե դրանք պաշտպանելու համար: Ահա ադիաբենցիներն ու հադրացիները ոչ միայն կոտորում են հռոմայեցի այս զինվորներին, այլ նաև միացյալ ուժերով հարձակվում են Մծբինի վրա, շրջափակում ու գրավում են այն[58]: Սևերոսը մտածում էր հիմնականում այս ժողովուրդներին պատժել ապստամբական գործողությունների համար և, անշուշտ, ամենակարևորն այն էր, որ նա փորձում էր իրականացնել դարեր շարունակ Հռոմի փայփայած երազը՝ հռոմեական տիրապետության սահմանները տարածել Եփրատից այն կողմ: Նա հասնում է իր նպատակին, իրեն հավատարիմ ու քաջ զորավարների՝ Կլավդիոս Կանդիդոսի, Կորնելիոս Անուլլինոսի և իր նկատմամբ վստահությամբ լեցուն հռոմեական լեգեոնների հերոսական գործողությունների շնոր-

---

[54] *Dio's* Roman History, Book LXXV, p. 195.

[55] *Herodian's* history of empire, vol I, Book III, 2, p. 315.

[56] *Տե՛ս* Ս. Տ. Երեմյան, *Վաղարշ Բ-ի քաղաքական հարաբերությունները Հռոմի և պարթևների հետ*, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4 (75), էջ 39—40:

[57] *Herodian's* history of empire, p. 315.

[58] *Dio's* Roman History, vol. IX, Book LXXV, p. 195.

հիլ[59]: Հերոսական ենք ասում, որովհետև նկատի ունենք արշավանքի ժամանակ առաջացած դժվարություններն ու մանավանդ՝ ջրի պակասը: Բայց այդ բոլորը հաղթահարվում է, որովհետև Սևերոսը կարողացել է իր հեռատես քաղաքականությամբ սիրաշահել զինվորներին: Սևերոս կայսեր մահվան պահին արտասանած վերջին խոսքերը՝ իր երկու որդիներին որպես կտակ, պարզում են բանակի հետ ունեցած նրա սերտ կապի գաղտնիքը. նա ասում է. «Եթե ուզում եք, որ ոչ մի բանի համար չանհանգստանաք, ապա լավ վճարեք ձեր բանակներին»[60]: Այսպես, Սեպտիմոս Սևերոս կայսրը 195 թ. նվաճելով վերին Միջագետքը, Ադիաբենն ու Հադրան, հռոմեական գերիշխանության սահմանը հասցրեց մինչև Տիգրիսի գետաբերանը՝ Հարաքս-Սպասինի: Ադիաբենն ու Հադրան հռոմեական լեգեոնների առաջխաղացումից անհանգստացած, մանավանդ, տեսնելով, որ պարթևները ոչ մի օգնություն ցույց չեն տալիս (սովետական գիտնական՝ Նինա Պիգուլևսկայան ենթադրում է, որ Ադիաբենն ու Հադրան ապստամբվել ու Մծբինի վրա են արշավել պարթևների Վաղարշ Դ-ի թելադրանքով[61]), փորձել են, ինչպես Դիոն Կասիոսն է վկայում, լեզու գտնել, և այդ նպատակով նվերներով պատգամավորներ են ուղարկել Սևերոսի մոտ, խոստանալով, որ իրենք կպատժեն հռոմայեցի գերիներին և կվերադարձնեն վերցված ավարը, պայմանով, որ հռոմեական պահակազորը դուրս գա իրենց երկրներից ու ամրոցներից, և փոխարեն ուրիշները չգան ամրոցներում հաստատվելու[62]:

Ինչպես երևում է Դիոնի այս վկայությունից, Ադիաբենի ու Հադրայի մեծամեծները այնքան էլ վախեցած չէին. նրանք ուզում էին իրենց երկրի անկախությունը և շատ լավ հասկանում էին, որ Սևերոսը ոչ միայն պատժելու համար է գալիս իրենց երկրները, այլև՝ նվաճելու:

Թե ինչո՞ւ պարթևները այդ ժամանակ չեն միջամտում և արգելք հանդիսանում Սևերոսի այս ոտնձգություններին, այդ մասին հռոմեական աղբյուրները լռում են, և մեզ տվյալ դեպքում օգնում է Մշիխա Ջեխայի Ադիաբենի պատմությունը: Ըստ այս պատմության, պարթևների թագավոր Վաղարշ Դ-ն (191—208 թթ.) մինչ Սևերոսի արշավանքը, երբ վերջինս զբաղված էր Նիգերի դեմ պատերազմելով, իր բա-

---

[59] *D. Magie*, Roman rule, vol. I, p. 673.

[60] *M. P. Charlesworth*, The Roman Empire, London, 1968, p. 105.

[61] *Н. Пигулевская*, Города Ирана в раннем средневековые. Мос-Лен., 1956, стр 86.

[62] *Dio's* Roman History, vol. IX, Book LXXV, p. 197.

նակով հարձակվել էր ու «հռոմայեցիներից բաղում հողեր գրավել»[63]։ Թե ինչ հողեր գրավեց, դժբախտաբար աղբյուրը ոչինչ չի ասում, բայց Ն. Պիգուլևսկայան ենթադրում է, որ դա ակնարկ է պարթևների թելադրանքով ադիաբենցիների ու հադրացիների Մծբինն ու շրջակայքը գրավելուն[64]։ Դուցե ասորական աղբյուրը նկատի ունի Մծբինի դեմ ձեռնարկված վերոհիշյալ արշավանքները և, բացի այդ, նաև հռոմեական որոշ ամրոցների գրավումը, դժվարանում ենք ճշգրիտ խոսք ասել, բայց մի բան պարզ է, որ պարթևների առաջխաղացումները շատ կարճ են տևում, որովհետև այս անգամ պարսիկները օգտվելով Վաղարշ Դ-ի բացակայությունից, փորձում են իշխանությունը տապալել ու երկրի ղեկավարությունը վերցնել իրենց ձեռքը։ Ահա թե ինչ է գրում պատմիչը. Վաղարշ Դ-ն «վերադարձավ այն պարսիկների (նկատի ունի Սասանյաններին) դեմ, որոնք երկար ժամանակ պատրաստվել էին նրան հարվածելու։ Վաղարշն ինքն անձամբ արշավեց նրանց դեմ 120 հազարանոց զորքով։ Նրանք հանդիպեցին Խորասանում։ Սակայն տեսնելով, որ պարսիկների ու մեդացիների բանակն է զորով բոլոր կողմերից շրջապատված են, նրանք (պարթևները) մի մեծ ճակատամարտից հետո սկսեցին փախչել։ Նրանք բարձրացան մոտակա լեռները, ցրվեցին և իրենց ձիերը թողեցին պարսիկներին»[65]։

Ասորական աղբյուրի այս վկայությունները, ինչպես տեսնում ենք, բացառիկ արժեք են ներկայացնում։ Այդ տեղեկություններից իմանում ենք, որ արդեն վերջին տասնամյակի սկզբներից պարսիկները սկսում են պարթևական իշխանությունը տապալելու իրենց փորձերը և, ինչպես կտեսնենք, III դ. երրորդ տասնամյակի սկզբներին հասնում են իրենց նպատակին։ Համենայն դեպս, նրանց առաջին փորձն էլ մեծ նշանակություն է ունենում, որովհետև սկզբում Վաղարշի զորքը պարտվում ու ստիպված լեռներն է քաշվում, դիմադրությունը շարունակելու համար։ Պարսիկները նրանց հետապնդում են նաև այնտեղ և պարթև զինվորներից շատերին կոտորում։ Եվ «երբ պարթևները տեսան, որ առանց քաջաբար կռվելու բոլորն էլ հաստատ կկոտորվեն, ստիպված նորից հարձակվեցին պարսիկների վրա, նրանց խուճապի մատնեցին և ստիպեցին փախչել։ Նրանց հետապնդեցին մինչև ծովը[66], և գետինը մարախ-

---

[63] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Հարել եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 78։

[64] *Н. Пигулевская*, Города Ирана, стр. 86.

[65] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Հարել եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 78։

[66] Նկատի ունի հավանաբար Կասպից ծովը։

ների (ամպի) նման դիակներով ծածկեցին։ Վերադարձին հանդիպեցին այլ պարսիկների, որոնք իրենց ընկերներից անջատվել էին. մի նոր ճակատամարտ սկսվեց նրանց միջև և տևեց երկու օր։ Երրորդ օրվա գիշերը, երբ ի վերջո բանակները հանգստանում էին առավոտյան ճակատամարտը վերսկսելու համար, երբ պարթևներն արթնացան, ոչ մի պարսիկի չտեսան, բոլորն էլ գիշերը փախել էին իրենց ընկերներին միանալու և նրանց հետ խմբավորվելու համար։ Այսպես պարթևները հաղթական ու իրենց վրա վստահ, վերադարձան»[67]։

Հիշատ է, Սևերոսի բանակները 195 թ. մտել էին Ադիաբեն ու Հադրա[68], սակայն այս երկրները նվաճելուց հետո նա առանձին փոփոխություններ չէր մտցրել ներքին կառավարման գործերի մեջ։ Ըստ երևույթին, ժողովուրդներին չգրգռելու և Հռոմի դեմ ապստամբական շարժումների առիթ չտեղծելու նպատակով նա բավարարվել էր հպատակության ու հավատարմության երաշխիքներով։ Սևերոսը այդ նկատառումներով քաղաքական որոշ անկախություն է շնորհում, անշուշտ Հռոմի հովանավորության ներքո, վերոհիշյալ երկու երկրներին։ Ադիաբենի թագավոր Նարսայը նորից իշխանության գլուխ էր մնացել Հռոմի հետ համագործակցելու խոստումից հետո միայն, և դրանից հետո Ադիաբենը Նարսայի ղեկավարությամբ շարունակել է քաղաքական կյանքում որոշ դեր կատարել և պահպանել իր ինքնուրույնությունը։ Պարթևների թագավոր Վաղարշ Դ-ն պարսիկների դեմ մղած ռազմական գործողությունների ժամանակ դիմում է Ադիաբենի թագավոր Նարսային, որպեսզի վերջինս իր բանակով օգնության շտապի։ Սակայն Նարսայը հրաժարվում է, մտածելով, որ խոհեմություն կլինի չխառնվել պարթևների երկրի ներսում տեղի ունեցող ներքին, այսինքն՝ քաղաքացիական կռիվներին, մանավանդ դեռ թարմ էր Նիգերի ու Սևերոսի օրինակը, և նախընտրում է չեզոքությունը։ Սակայն նրա չեզոքությունը թանկ է նստում։ Այդ մասին այսպես է գրում պատմիչը. «Նվ որովհետև Ադիաբենի թագավոր Նարսայը պարթևների հետ միասին չէր մասնակցել պատերազմին, ուստի այս անիրավ գայլերը զայրացած, պատերազմից հաղթական վերադառնալիս, մտան մեր երկիրը, կործանեցին ու ավերեցին մեր քաղաքները և Նարսայ թագավորին Մեծ Զաբում խնդրելուց հետո վերադարձան»[69]։

---

[67] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Հաբել եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 78։

[68] *D. Magie*, Roman rule, p. 673.

[69] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Հաբել եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 80։

Ինչպես երևում է աղբյուրից, պարթևները շատ խիստ են պատժում ոչ միայն Ադիաբենի թագավորին, այլ նաև ադիաբենցիներին. չեն խնայում ոչ մեկին, և կոտորածը այնքան մեծ է լինում քրիստոնյաների շարքում, որ կենդանի մնացածներից ոմանք ելք են որոնում ապաշխարության ու աղոթքի մեջ, իսկ նրանց եպիսկոպոս Հաբելը շրջագայում է Ադիաբենի բոլոր գյուղերը քաջալերելու հավատացյալներին, որպեսզի «Քրիստոսի սիրույն տոկան այդ ծանր վշտերին»[70]:

Այնուհետև մ. թ. 198 թ. Վաղարշ Ի-ն, օգտվելով այն հանգամանքից, որ Սևերոս կայսրը զբաղված է քաղաքացիական կռիվներով, իր բանակով շարժվում է Մծբինի վրա և քիչ էր մնացել, որ նա գրավի այդ քաղաքը, եթե չլիներ Սևերոսի հայտնի զորավարներից Լաետոսը, որը ոչ միայն կարողացավ քաղաքը պաշտպանել, այլև ստիպեց Վաղարշ Դ-ին նահանջել: Այդ միջոցին տեղ հասած Սևերոսը կարգադրեց նավեր պատրաստել և իր զորքի մի մասը նավերով, մյուսը՝ ոտքով առաջ շարժվեցին Տիգրիս գետի երկայնքով: Շրջակայքի անտառները հնարավորություն էին տվել կայսրին, որ նա կարողանա արագընթաց ու հարմար նավեր պատրաստել տալ, որոնք օգնեցին Սևերոսին կարճ ժամանակամիջոցում գալ և գրավել Սելևկիան ու Բաբելոնը, որոնք արդեն պարթևների կողմից լքվել էին: Հռոմայեցիները այստեղից շարժվեցին դեպի Տիգրոն, գրավեցին այն, ավերեցին ու թալանեցին: Սևերոսը այլևս չհետապնդեց Վաղարշ Դ-ին և այլ ճանապարհով վերադարձավ, և, ինչպես պատմիչն է ասում, կարծես նրա նպատակը երկիրն ավերելն էր միայն[71]:

Սևերոսն ապա մտնում է Ադիաբեն: Ադիաբենցիները զայրացած պարթևների գաղանությունից, ըստ երևույթին, առանձնապես դիմադրություն ցույց չեն տալիս հռոմայեցիներին: Այդ պատճառով էլ, ինչպես Հերոդիանոսն է վկայում, Սևերոսն Ադիաբենում երկար չի մնում,[72] այլ իր զորքով շտապում է Հադրա: Ճանապարհին բաղում քաղաքներ ու գյուղեր ավերելով, շարժվում է առաջ, գնում ու պաշարում է ամուր պարիսպներ ունեցող Հադրա քաղաքը[73]:

198 թ. իր նվաճումների ընթացքում, ինչպես տեղեկանում ենք հռոմեական մի այլ աղբյուրից, Սևերոսն ավելի դաժանորեն է վարվում, և մտածում է վերջնականապես այս երկրները՝ Ադիաբենն ու Հադրան, հռո-

---

70 Նույն տեղում:

71 *Dio's* Roman History, vol. IX, Book LXXV, pp. 217—219.

72 *Herodian's* history of empire ,Book III, 9, 3, p. 317.

73 Նույն տեղում:

մեական նահանգների վերածել, որովհետև պատմիչը, Սևերոսի այս արշավանքի մասին գրելիս նշում է, որ այս անգամ նա կարողացավ «իր իշխանությունը տարածել արաբների վրա և ստիպել, որ Ադիաբենեն հարկ վճարի իրեն»[74]: Այդ էր պատճառը, որ Սևերոսն այս ռազմական հաջող գործողություններից և քաղաքական նվաճումներից հետո, մեծ պատվով ընդունվեց Հռոմի բնակիչների ու սենատի կողմից: Վերջինս այդ առթիվ նրան շնորհեց «Արաբիկոս, Ադիաբենիկոս և Պարթիկոս» պատվանունները[75]:

Արժե այստեղ նշել այս նույն աղբյուրի մի այլ տեղեկությունը, ըստ որի, խորամանկությամբ ու Հռոմի շահերը ամուր հիմքերի վրա դնելու նպատակով, նա (կայսրը) «մի քարով փորձում է երկու թռչուն խփել»: Այսինքն, Արևելքի նշված երկրների ռազմական ուժը թուլացնելու ու ապստամբական շարժումներից հեռու պահելու համար, նա հավաքագրում է վարձկան զինվորների և տեղափոխում Արևմուտք՝ ապստամբած գերմանական ցեղերին ճնշելու համար, և այդ զինվորները, ինչպես գրված է, «Հայաստանից, Օսրոյենից, Պարթևաստանից, և տարբեր երկրներից էին վերցված»[76]:

Պարթևների այս անհաջողությունները նպաստում են երկրում ներքին երկպառակությունների առաջացմանն ու ուժեղացմանը, որի հետևանքով տեղի է ունենում ռազմական ուժերի թուլացում: Մ. թ. 208 թ. մահանում է պարթևների վաղարշ Դ թագավորը, և նրան է հաջորդում նրա որդի Վաղարշ Ե-ն: Երեք տարի հետո 211 թ. 65 տարեկան հասակում, 8 ամիս և 3 օր թագավորելուց հետո մահանում է նաև Սեպտիմոս Սևերոս կայսրը[77]: Սրան ևս հաջորդում է իր որդին՝ Անտոնիոս Կարակալլան: Թեև վերջինս պետք է իշխանությունը կիսեր եղբոր հետ, բայց առաջին իսկ օրից եղբորը չեզոքացրեց և միանձնյա իշխանություն ստեղծեց: Կարակալլայի մասին պատմիչը գրում է, որ նա ոչ այնքան զինվորական կարողություններ է ունեցել, որքան նենգելու, խարդախ միջոցներով գործելու, խաբելու ընդունակություն: Նույնպիսի խարդախ միջոցներով նա փորձեց Արևելքի հարցերը լուծել: 213 թ. Օսրոյենի թագավոր Աբգարին բարեկամական այցի հրավիրելով, խաբեց

---

[74] The scriptores historiae Augustae, vot. I, XVIII, p. 413.

[75] Նույն տեղում, 9, 4, p. 393:

[76] Նույն տեղում:

[77] *Dio's* Roman History, vol: IX, Book LXXVII, p. 277.

նրան, ձերբակալեց ու նրա երկիրն էլ Հռոմին հպատակ արևելյան նահանգներից մեկը դարձրեց[78]։

Նույն ձևով վարվեց նաև Հայոց թագավոր Խոսրով Ա-ի հետ։ Այն ժամանակ հայոց թագավորն իր զավակների հետ գահակալական կռիվներ էր մղում (անկասկած Հռոմի կազմակերպածն էր)։ Առիթից օգտվելով՝ Անտոնիոսը սիրալիր նամակ գրեց հայոց թագավոր Խոսրովին, ասելով, որ նա շտապ գա իր մոտ, որովհետև ինքն ուզում է նրա և զավակների միջև առաջացած վեճը կարգավորել։ Եվ երբ Խոսրովը գնաց, կարակալլան նրան ևս ձերբակալեց։ Սակայն հայերը չընկճվեցին, ընդհակառակը, զայրացած կայսեր նենգ գործունեությունից, զենքի դիմեցին և թույլ չտվեցին, որ հայոց թագավորի հետ ևս կամայականորեն վարվի։ Ուշագրավ է այս առիթով Դիոն Կասիոսի այն եզրակացությունը, որ «Կարակալլան, հասկացավ, թե ինչ մեծ պատժի է ենթարկվում այն կայսրը, երբ նման խաբեբայությամբ է գործում իր բարեկամների հետ»[79]։

Պարթևների վիճակը գնալով ավելի էր վատանում և գահակալական կռիվների պատճառով երկպառակությունները խորանում։ Թեև Արտավան Ե-ին (213—226 թթ.) հաջողվել էր գահ բարձրանալ իր եղբայր Վաղարշ Ե-ի փոխարեն, սակայն նրան չէր հաջողվել վերականգնել երկրի միասնությունն ու ռազմական ուժը։

Մեր թվականության 216 թ. Անտոնիոս Կարակալլա կայսրն արշավում է պարթևների դեմ, պատճառաբանելով, թե իբր պարթևների Արտավան Ե թագավորը հրաժարվել է իր աղջկան կայսրին կնության տալ։ Այս մասին պատմիչը կարծիք է հայտնում, որ «պարթևների թագավորը շատ լավ էր հասկանում, որ կայսրն ամուսնանալով իր դստեր հետ, ուզում է տիրանալ նաև իր գահին»[80]։

Կարակալլայի կողմից ամուսնության առաջարկն, ուրեմն, զուտ առիթ էր հարձակումը սկսելու համար։ Նույն այս դեպքերը նկարագրելիս պատմիչ Հերոդիանոսը[81] շատ ճիշտ է բնութագրում Կարակալլայի ցանկությունը, թե նա այս արշավանքով իր նախորդների նման փառքի էր ձգտում։ Ահա թե ինչ է գրում նա. «Կարակալլան ուզեց պարթիկոս պատվանունը ունենալ և հռոմայեցիներին ցույց տալ, որ նա նվաճել է Արևելքի բարբարոսներին, և թեև խաղաղություն էր տիրում, բայց

---

78 Նույն տեղում,

79 Նույն տեղում, էջ 307։

80 Նույն տեղում, Boo՞ LXXIX, p. 341։

81 Հերոդիանոսը ծնվել է մ. թ. 178—179 թթ., դա նշանակում է, որ նա ժամանակակից է իր նկարագրած այս դեպքերին։

նա հետևյալ ծրագիրը մշակեց»[82]: Ըստ պատմիչի նկարագրության, պարթևների թագավոր Արտավանն Անտոնիոս Կարակալլայի կողմից նվերներով եկած դեսպանությանը մերժում և նա է ուղարկում: Դրանից հետո էլ կայսրը շարունակում է պնդել իր առաջարկության վրա: Ի վերջո, նա իր բանակով անցնում է պարթևների սահմանը, և սահմանը այնպես է անցնում, որ պատմիչն անգամ զարմացած գրում է. «կարծես դրանք իր դերիշխանության տակ եղած լիներին»:

Վիտտակերը կարծում է, որ սահմանի անցումը եղած կլինի 216 թ. մայիսի 27-ից առաջ և իր ասածն ապացուցելու համար հիշատակում է Դմեյրի արձանագրությունը[83]: Թե ո՞ր սահմանից էր անցել, պատմիչն ուղղակի ոչինչ չի ասում, բայց երբ Հռոմեական բանակի տեղաշարժերն է նկարագրում, պարզվում է, որ նա անցել է Տիգրիսի վրայով և շարժվել դեպի Ադիաբեն, մի հատվածք, որ համապատասխանում է իրականության և, հասկանալի է, որ ավելի դեպքում ճիշտ չէ Դիոն Կասիոսի այն վկայությունը, թե Կարակալլան իր բանակով սահմանն անցել է Մեդական լեռներից, և ոչ էլ, ինչպես գրում է, նա գնացել է դեպի Կասպից ծով[84], այլ նա Տիգրիս գետն անցնելով, շարժվել է դեպի Ադիաբենի մայրաքաղաք Արբելա, ինչպես Հերոդիանոսն է գրել: Արտավան Ե-ն ևս իր բանակով շտապել էր դեպի Արբելա, և երկու բանակները հանդիպել էին Արբելա քաղաքից դուրս՝ դաշտում[85]:

Արտավանը, սակայն, մտածում էր լեզու գտնել Կարակալլայի հետ և խնդիրը լուծել առանց պատերազմական գործողությունների: Այդ նպատակով էլ հռոմեական բանակի և կայսեր դիմավորումը կատարվել է տոնական հանդիսությամբ: Պատմիչը գրում է, որ Արտավանը կայսրին դիմավորեց ու ողջունեց որպես իր փեսայի, իսկ «բարբարոս» բնակիչներն իրենց հանդիսավոր զգեստները հագած, սրինգների, փողերի, թմբուկների և պարի երաժշտության տակ նշում էին այդ նշանակալից իրադարձությունը: Մինչ զինվորներն ու ժողովուրդը ուրախանում էին, Անտոնիոս կայսրը հրամայեց հռոմեական բանակը պահել պատրաստ վիճակում՝ պարթևների վրա հարձակվելու համար: Տոնակատարության միջոցին հռոմայեցիները հանկարծ հարձակվեցին, իսկ Արտավանն իր թիկնապահների օգնությամբ հազիվ կարողացավ փախչել: Հռոմայեցիները, առիթից օգտվելով, կոտորում են անզեն ժողովրդին, ավերում

---

[82] *Herodian's*, vol. I, Book IV, 10, n. 2. p. 435.
[83] *Dio's* Roman History, vol. IX, Book LXXIX, p. 341.
[84] *Herodian's*, vol. I, Book IV, n. 2, p. 435.
[85] *Dio's* Roman History, vol. IX, Book LXXIX, p. 341.

գյուղերն ու քաղաքները, թալանում ամեն ինչ[86]: Ամենից առաջ հռոմայեցիները ավերում են Արբելան և, չբավարարվելով քաղաքի ավերածությամբ, նրանք, կայսեր թելադրանքով, քանդում ու դերեզմաններից դուրս են բերում Արբելա քաղաքում մահացած պարթև թագավորների ոսկորները ու դրանք քամուն տալիս[87]: Այդ զազրելի արարքը, նաև Կարակալլայի այս նենգ ու խարդախ արևելյան արշավանքը իրենց պատմական երկերում դատապարտել են և՛ Դիոն Կասիոսը, և՛ Հերոդիանոսը: Հետաքրքրական է, որ Դիոն Կասիոսը, կարծեք, անհարմար զգալով եղածից, կարճ է կապում, ասելով. «Առանձնապես ոչինչ չունի պատմելու այս արշավանքի մասին»[88]:

Պարթևներն ու մարերը, մեծապես վրդովված հռոմայեցիների արարքներից, Տիգրիսից այն կողմ մեծ բանակ հավաքեցին և պատրաստվեցին հարձակման: Կարակալլան, գրում է Դիոն Կասիոսը, ընկավ սարսափի մեջ, և նա, որ իր վարվեցողությամբ այդպես հանդուգն էր, բայց և ամենամեծ վախկոտը վտանգի ժամանակ, թեև դիմադրելու պատրաստություններ տեսավ, բայց չհաջողվեց այն իրականացնել, որովհետև հռոմեական զորքի մեջ դժգոհությունը գնալով ուժեղացավ, և արդյունքը եղավ այն, որ 217 թ. ապրիլի 8-ին Եդեսիայից Խառան գնալիս, ճանապարհին, իր զորավարներից Մակրինոսը սպանեց նրան[89]:

Այս իրադարձությունները համարյա նույն ձևով նկարագրում է նաև Հերոդիանոսը և պատմում, որ կայսրը սպանվեց այն ժամանակ, երբ գնում էր Խառանում եղող Սելենի[90] տաճարում ղոհաբերություն կատարելու[91]:

Ճիշտ այս սպանության ժամանակ Արտավանը մեծ բանակով մոտենում էր Բշնամի զինվորներին և պատրաստվում վրեժ լուծել ու պատժել հռոմայեցիներին, որոնք առանց պատերազմ հայտարարելու հանկարծակի հարձակվել էին իրենց վրա[92]:

Կարակալլայի սպանությունից երկու օր հետո կայսր հռչակվեց

---

[86] *Herodian's*, vol. I, Book IV, 11, pp. 437—439.

[87] *Dio's* Roman History, vol. IX. Book LXXIX, pp. 341—343.

[88] Նույն տեղում:

[89] *Herodian's*, Book IV, 13, p. 449.

[90] Լուսնի աստվածուհուն կամ, ինչպես ասորիներն էին ասում, ասորական «Շին» կամ «Սին» աստվածուհուն՝ «Սելենին»:

[91] *Herodian's*, Book IV, 13, p. 455.

[92] Նույն տեղում:

Մակրինոսը[93]: Վերջինս տեսնելով, որ արդեն Արտավանն իր բանակով մոտեցել է, հավաքեց իր զինվորներին, ոգևորող մի ճառ ասաց ու պատրաստվեց ճակատամարտի:

Արշալույսին Արտավանն իր բանակով երևաց, նրանք «բարբարոսական» իրենց սովորության համաձայն արևին ողջունելուց հետո (աղոթելուց հետո), բարձր աղաղակներով ու կանչերով սկսեցին մարտը: Մարտի երրորդ օրը պարթևները փորձեցին շրջապատել հռոմայեցիներին, բայց այդ չհաջողվեց, իսկ հռոմայեցիներն էլ տեսնելով, որ այլևս ելք չկա, մի նամակով պարթևների մոտ դեսպան ուղարկեցին, ասելով, որ «ձեզ չարիք պատճառող կայսրը մահացել և իր արդար պատիժը ստացել է»: Ուստի առաջարկում էին խաղաղության դաշինք կնքել: Արտավանը համաձայնվեց և խաղաղության դաշինք կնքեցին: Այդ դաշինքի համաձայն Մակրինոս կայսրն իր բանակը Միջագետքից դուրս բերեց և շտապեց Անտիոք[94]: Այսինքն՝ վերականգնվեց նախկին վիճակը, և Եփրատը նորից դարձավ երկու մեծ տերությունների սահմանը:

Այս նույն իրադարձությունների մասին ավելի հետաքրքրական և ավելի ճիշտ մանրամասնություններ է տալիս նաև Դիոն Կասիոսը: Նա հայտնում է. «Մակրինոսը իմանալով, որ Արտավանը չափազանց զայրացել է, որ իր հետ այդ ձևով են վարվել, և իմանալով, որ արդեն նա մեծ ուժով հարձակվել է Միջագետքի վրա, սկզբում կամավոր նա ուղարկեց (վերցված պարթև) գերիներին և նրան գրեց մի նամակ, խնդրելով, որ ընդունի խաղաղությունը: Արտավանը սակայն դրանով չբավարարվեց և պահանջեց, որ հռոմայեցիները վերադառնան ամրոցները, ավերված քաղաքները, ամբողջովին հեռանան Միջագետքից և փոխհատուցեն թագավորների գերեզմաններին հասցրած անպատվության և այլ վնասների համար: Մակրինոսն այս բոլոր պահանջներին չհամաձայնելով, սահիպված Մծբինի մոտակայքում մարտի բռնվեց, սակայն պարտվեց և, ի վերջո, դաշինք կնքեց (պարթևների հետ)»[95]:

Այս դաշինքից օգտվեցին նաև հայերը, որովհետև, ինչպես հաղորդում է պատմիչը, այդ դաշինքով վերջ էր տրվում նաև հայերի ու հռոմայեցիների միջև նախապես ստեղծված թշնամությանը: Հայոց Տրդատ Բ թագավորին Մակրինոս կայսրը թագ է ուղարկում և վերադարձնում նրա բանտարկված մորը: Նա է տալիս նաև Հայաստանից տարված ա-

---

93 Եթե Մակրինոսը Կարակալլայի սպանությունից երկու օր հետո կայսր դարձավ, նշանակում է, որ նա իշխանության գլուխ է անցել մ. թ. 217 թ. ապրիլի 10-ին:

94 *Herodian's*, vol. I, Book IV, 15, pp. 465, 467.

95 *Dio's* Roman History, vol. IX, Book LXXIX, p. 403.

վարը և Տրդատից գրավված այն կալվածները, որոնք Կապադովկիայում էին գտնվում, և խոստանում է, որ նորից կտրվի տարեկան նպաստը[96]:

Այս իրադարձությունների մասին տեղեկություններ կան նաև Մշիխա Զեխայի մեզ հայտնի «Ադիաբենի եկեղեցական պատմության» մեջ: Նրա պատմածից իմանում ենք, որ այդ օրերին «Արևը խավարեց և իրեն (աստծուն) բարկացնող ժողովրդի ցասումից իր լույսով մեզ չէր լուսավորում: Որովհետև այն ժամանակ բազում պատերազմներ տեղի ունեցան Հռոմայեցիների ու պարթևների միջև և Արտավան վերջին արքան մտավ Հռոմայեցիների երկիրն ու այրեց Բեյթ-Արամեի շատ քաղաքներ»[97]: Այս նույն աղբյուրից իմանում ենք, որ Արտավան Ե-ի այս արշավանքին, ավելի ճիշտ, Հռոմայեցիների դեմ ձեռնարկված ռազմական գործողություններին, Արտավանի կողքին մասնակցում էր նաև Ադիաբենի թագավոր Շահրատը[98]:

Ինչպես նախկին, այնպես էլ Ադիաբենի այս թագավորի մասին ասորական աղբյուրներից միայն Մշիխայի պատմական այս երկում են տեղեկություններ պահպանվել: Համենայն դեպս, Շահրատը, մեր կարծիքով, Նարսայի սպանությունից հետո պարթևների կողմից առաջադրված թեկնածուն էր Ադիաբենի գահին: Այսինքն՝ նա պարթևներից վասալական կախման մեջ լինելով, ինչպես իր նախորդները, բանակով մասնակցում էր պարթևների կողմից ձեռնարկված ռազմական գործողություններին և, ինչպես գիտենք, իր նախորդը՝ Նարսայը երբ փորձեց չկատարել վասալական այդ պարտքը, պարթևները նրան պատժեցին և խեղդեցին Մեծ Զաբ գետում: Ահա Շահրատը, այդ պարտականության բերումով, մասնակցում էր Հռոմայեցիների դեմ պարթևների ծավալած պատերազմական գործողություններին, որովհետև, ինչպես երևում է պատմիչի վկայությունից, նա, ըստ երևույթին, ստիպված էր մասնակցելու և առանձնապես Արտավանի ինչ-որ արարքներից դժգոհ, հավանաբար, հարմար առիթի էր սպասում ապստամբելու համար: Երբ Սասանյանները պատերազմեցին Արտավանի դեմ Պարսկաստանում իրենց իշխանությունը հաստատելու համար, Սասանյաններին միացավ նաև Շահրատը[99]:

Պարթևների ու ադիաբենցիների համատեղ պատերազմական գործողությունները, համենայն դեպս, ղեռևի արդյունք չեն տալիս ոչ թե

---

96 Նույն տեղում:

97 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ), էջ 82:

98 Նույն տեղում:

99 Նույն տեղում:

նրա համար, որ Արտավանի զորքը հաջողություններ չի ունենում, այլ պարզապես Արտավանի գործերը երկրում վատ էին ընթանում: Պարսիկները սկսել էին իրենց ապստամբական գործողությունները, և Արտավանը ստիպված էր շտապ դաշինք կնքել ու վերադառնալ ներքին գործերը կարգավորելու համար: Ահա թե ինչ է գրված այդ մասին «Ադիաբենի եկեղեցական պատմության» մեջ. «Հռոմայեցիները լսելով այդ (որ Արտավանը մտել է իրենց երկիրը), մեծ բանակով նրա դեմ դուրս եկան: Պատերազմը նրանց միջև շարունակվեց, բայց վերջում երկու թագավորներն էլ համաձայնվեցին, որ առանց մեծ հիմքի, երկու կողմից մարդկային արյուն չթափեն և երկուսն էլ վերադարձան իրենց երկրները»[100]:

Անշուշտ, Մակրինոս կայսեր վիճակն էլ լավ չէր: Նա ևս շտապելու հիմք ուներ, որովհետև վերադառնալով Հռոմ, ականատես եղավ երկրի ներսում առաջացած սուր դժգոհություններին: Օգտվելով կայսեր թուլությունից, հռոմեական նահանգներում սկսվել էին խռովություններն ու զինվորական անկարգությունները: Ով մինչ հռոմայեցիները չբաղված էին երկրի ներսում տեղի ունեցող այս երկպառակություններով, Արևելքում քաղաքական ասպարեզ էին իջել Սասանյանները Արտաշիրի գլխավորությամբ և տապալելով պարթևների իշխանությունը, հաստատել էին իրենցը: Այս իրադրությունը սոսկ տեղական բնույթ չէր կրում, որովհետև այդ փոփոխությամբ փոխվում էին նաև միջազգային առևտրական, քաղաքական ու մշակութային հարաբերությունները, և այդ փոփոխություններով նոր իրավիճակ էր ստեղծվում ոչ միայն սասանյան տիրապետության մեջ ապրող ժողովուրդների կյանքում, այլ նաև՝ հարևան մյուս երկրներում: Պատմիչները բազում տեղեկություններ են հաղորդել այդ մասին և, որովհետև այդ փոփոխությունը կարևոր նշանակություն է ունեցել Ադիաբենի ու նրա բնակիչների և ընդհանրապես պարսկական տիրապետության մեջ ապրող քրիստոնյաների համար, ուստի տեսնենք, թե աղբյուրներում ինչ փաստեր են արձանագրվել այդ մասին:

Այսպես, Դիոն Կասիոսը մեզ հայտնի իր աշխատության մեջ հետևյալ կերպ է նկարագրում այդ իրադարձությունները. «Սակայն Միջագետքում դրությունը ավելի մտահոգիչ դարձավ, և իսկական վախ էր ներշնչում ոչ միայն Հռոմի ժողովրդին, այլ նաև ամբողջ մարդկությանը: Որովհետև մի պարսիկ՝ Արտաքսերքսեսը (այսինքն Արտաշիրը), պար-

100 Նույն տեղում:

թներին երեք ճակատամարտերում հաղթելուց և նրանց Արտավան թագավորին սպանելուց հետո, արշավեց Հադրայի վրա, այն հույսով, որ կգրավի և այն կայան կդարձնի հռոմայեցիներին հարվածելու համար։ Նա իսկապես կարողացավ (իր հարձակումներով) անցք բացել (Հադրայի) պարսպի վրա, սակայն արձակված (նետերից) նրա բազում զինվորները ոչնչացան, և նա (սոսկալած այնտեղից) շարժվեց Մեդիայի վրա։ Ինչպես այս երկրից, այնպես էլ Պարթևաստանից, մասամբ ուժով, մասամբ սպառնալիքով մի մեծ բաժին (երկրատաս) ձեռք բերեց և ապա շարժվեց Հայաստանի դեմ։ Այստեղ նա տեղաբնիկներից պարտութեյան մատնվեց»։

«Ասում են, որ մեդացիներից և Արտավանի որդիներից ոմանք փախել են, թե նահանջել, որպեսզի մի մեծ արշավանք կազմակերպեն նրա (Արտաքսերքսեսի) դեմ։ Այստեղ նա տեղաբնիկներից պարտութեյան մատնվեց»։ Այսպիսով նա (Արտաշիրը) դարձավ մեզ համար վախի մի աղբյուր, որովհետև նա զինվորների մի մեծ խմբով բանակել և սպառնում է ոչ միայն Միջագետքին, այլև Ասորիքին և պարծենում, որ նա վերստին կնվաճի այն ամենը, ինչ եղել է հին ժամանակներում պարսիկների (աքեմենյանների) օրոք»[101]։

Նույն այս դեպքերի մասին Հերոդիանոսը գրում է. «Ալեքսանդրի թագավորության 10-րդ տարում անսպասելի նամակներ ստացվեցին Ասորիքի և Միջագետքի կառավարիչներից այն մասին, որ Արտաքսերքսեսը՝ (Արտաշիր) պարսիկների թագավորը, հաղթել է պարթևներին ու սպանել նրանց թագավոր Արտավանին, որը կրկնակի թագ ուներ։ Բացի այդ, նա հարևան ժողովուրդներին ենթարկել էր իրեն ու նրանցից հարկ էր վերցնում։ Դրանով չբավարարվելով, նա անցնում է Տիգրիսը, խախտում հռոմայեցիների սահմանը։ Միջագետքը արդեն նվաճել է և Ասորիքն էլ սպառնալիքի տակ է։ Նա (Արտաշիրը) ուղում է վերականգնել Դարեհի կայսրությունը»[102]։

Հռոմայեցիները, ինչպես տեսանք այս երկու պատմիչների վկայություններից, լուրջ մտահոգության մեջ էին Սասանյանների ռազմական հաջողությունների, որոնք հռոմեական սահմանն անցնելուց ու իրենց ազդեցությունը Միջագետքի վրա տարածելուց հետո սպառնում էին Ասորիքին։ Հռոմայեցիները անմիջապես չեն կարողանում դիմել կարուկ միջոցների, որովհետև հռոմեական զինվորները բարոյալքման մեջ էին։ Ականատես պատմիչ Դիոն Կասիոսի վկայությամբ, սասան-

[101] *Dio's* Roman History, vol. IX, Book LXXX, p. 483.

[102] *Herodian's*, vol. II, 9—2. pp. 89—105.

յանների ռազմական ու ռազմատենչ այդ ոգու դեմ կանգնած էին հռոմեական այնպիսի լեգեոններ, որոնք անկազմակերպ վիճակում էին և բարոյական անկում ապրելով, չէին ենթարկվում իրենց հրամանատարներին. նույնիսկ Միջագետքում գտնվող զինվորները փորձեցին սպանել իրենց հրամանատար Փլավիոս Հերակլեոսին: Պատմիչը՝ Դիոն Կասիոսը, որն այն ժամանակ Պանոնիայում գտնվող հռոմեական զորքի հրամանատարն էր, փորձեցին զինվորական խոստումներով իր զորքին այդ բարոյալքումից հետու պահել, և պրետորիանները իր այդ խստության համար բողոքել են Ուլպիանոսին[103]:

Սասանյանների իշխանության գլուխ անցնելու և, ընդհանրապես, պարթևների իշխանությունը տապալելու փորձերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Մշիխա Զևխան իր պատմական երկում: Նա հին աղբյուրների տվյալների վրա հենվելով, Սասանյանների իշխանության գլուխ անցնելը բացատրում է այնտեղ ապրող քրիստոնյաների շահերով և գտնում, որ դա դրական երևույթ էր, որովհետև Սասանյանների հաղթանակից հետո, նրանք բարյացակամ վերաբերմունք են ունեցել քրիստոնյաների նկատմամբ: Նախ տեսնենք, թե ինչ է գրված Ադիաբենի պատմության մեջ. «Պարթևներն այն ժամանակ շատ ուժեղ, շատ կարող և հանդուգն էին. նրանք միայն կոտորելու մասին էին մտածում, սակայն աստված, որն իր մարգարեի միջոցով ասել է «եթէ բարձրասցիս իբրև զարծուի, եւ եթէ ի մէջ աստեղաց դիցես զբոյն քո եւ անտի իջուցից, զքեզ», (այնպես էլ) սանձեց նրանց ու պատրաստեց նրանց կործանումը: Հին ժամանակներում պարսիկները նրանց (պարթևներին) ուղեցին գահընկեց անել և պատերազմում փորձեցին իրենց ուժերը, սակայն իրենց ուժերը հետ մղվեցին և նրանք չկարողացան պայքարել պարթևների հետ: Դրանից հետո նրանք (պարթևները) բաղում պատերազմներից ու ճակատամարտերից թուլացան: Պարսիկներն ու մեդացիները այդ հասկանալով, Ադիաբենի թագավոր Շարհատի և Քարքա-Սլոխի թագավոր Դոմիտիանի հետ միանալով, գրնանը պարթևների հետ մեծ պատերազմ սկսեցին: Նրանք (պարթևները) պարտվեցին և վերջնականապես նրանց թագավորությունը վերացավ»[104]:

---

103 *Dio's* Roman History, vol. IX, Book LXXX, p. 483. *Մեր թվականության 222 թ. Դիոն Կասիոսը, ինչպես ինքն է վկայում, պրետորիանների հրամանատար Դոմետիոս Ուլպիանոսի կողմից կառավարիչ էր նշանակված նախ Դալմատիայում և ապա վերին Պանոնիայում: «Պրետորիանները» նիզակակիր, թիկնապահ դվարդիականներ էին: Նույն տեղում, էջ 485:*

104 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ, էջ 82—83:*

Ուշագրավ է, որ Խեդայաբի կամ Ադիաբենի թագավոր Շարհատը, դավաճանելով Արտավանին, անցնում է Արտաշիրի կողմը: Թե ինչու է այդ քայլին դիմում, դժբախտաբար պատմիչը ոչինչ չի ասում, մնում է ենթադրել, որ Շարհատը գործել էր իր երկրի շահերից ելնելով:

Մշիխան պատմում է, որ «պարթևների բոլոր միջոցառումներն արդյունք չտվեցին, որովհետև իրենց օրը հասել էր, երգը՝ երգվել: Ի վերջո, նրանք ամբողջովին փախան բարձր լեռները և պարսիկներին (Սասանյաններին) թողեցին իրենց ամբողջ երկիրն ու քաղաքներում պահված իրենց հարստությունները: Արտավանի փոքր որդին, որ Արշակ էր կոչվում, պարսիկների կողմից անգթորեն սպանվեց Տիզբոնում և այստեղ էլ (Տիզբոնում) նրանք (Սասանյանները) հաստատվեցին ու այն իրենց մայրաքաղաք դարձրին: (Այսպիսով) քաջ Արշակի որդիների՝ պարթևների թագավորությունը վերջ գտավ Հույների թագավորության 535 թ. Նիսան (ապրիլ) ամսի 27-ին, չորեքշաբթի օրը»[105]:

Այսքան մանրամասն ու ճշգրիտ տվյալները, մանավանդ պարթևների իշխանության տապալման ճշգրիտ օրվա իմացումը, վկայում են այն մասին, որ Մշիխա Զևխան այս դեպքերը նկարագրելիս իր ձեռքի տակ ունեցել է շատ վստահելի գրավոր մի աղբյուր: Մշիխա Զևխայի այս վկայությունները կարծես ականատեսի հուշեր լինեն և դրանց ճշգրտությունը ապացուցել են ուսումնասիրողները:

Ականատեսի հուշեր լինելը հաստատվում է, օրինակ, նրա հաղորդած հետևյալ տեղեկությամբ. «Պարսիկների տիրապետության սկզբում քրիստոնյաներիս համար խաղաղության (շրջան) եղավ, որը և օգնեց (քրիստոնեության) տարածմանն ու ծավալմանը»[106]: Արևելքի եկեղեցիների պատմությունը ուսումնասիրողների համար շատ արժեքավոր ու կարևոր տեղեկություններ կան Մշիխա Զևխայի այս գրքում, մանավանդ սասանյանների իշխանության հաստատման առաջին տարիներին Արևելքի եկեղեցիների վիճակի ու սասանյանների՝ քրիստոնեական եկեղեցիների նկատմամբ որդեգրած վերաբերմունքի և, ընդհանրապես, իրենց տիրապետության մեջ մտնող ժողովուրդների նկատմամբ կիրառած քաղաքականության մասին: Այդ ժամանակ, ըստ այս աղբյուրի, «Արևելքում կային քսան եպիսկոպոսություններից ավելի», այսինքն՝

---

105 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 83: Մշիխայի տվյալներով, պարթևների անկումը տեղի է ունեցել մ. թ. 224 թ. ապրիլի 27-ին չորեքշաբթի օրը:

106 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 83:

երբ սասանյանները տեր դարձան պարթևական տիրապետության, Արևելքում գոյություն են ունեցել ավելի քան քսան եպիսկոպոսություններ, թեմեր, և պատմիչը մեկ առ մեկ թվարկում է այդ եպիսկոպոսությունները: Քանի որ սույն աշխատության հաջորդ մասում առանձին կխոսվի արևելյան այդ եկեղեցիների մասին, ուստի այսքանով բավարարվում ենք: Միայն հետաքրքրական է այն վկայությունը, որ արևելյան համարյա շատ քաղաքներում եղել են եպիսկոպոսներ, բացի Մծբինից և, զարմանալի է, որ քրիստոնյաները չեն համարձակվել այս քաղաքում եպիսկոպոսական աթոռ հիմնել, որը վկայում է այն մասին, որ այս քաղաքում հեթանոսությունը ամուր հիմքերի վրա էր, և քրիստոնյաները իրենց քարոզչական աշխատանքների համար հարմար հող չէին գտնում: Համեմատաբար դեպս, կարևորն այն է, որ սասանյանները սկզբում բարյացակամորեն են տրամադրվել և դժվարություններ չեն հարուցել քրիստոնյաների դեմ, և քրիստոնյանները, քաջալերված այդ վերաբերմունքից, մտածել են նույնիսկ, ինչպես ասորական այս աղբյուրն է վկայում, ունենալ կաթողիկոս[107], այսինքն՝ կաթողիկոսություն ունենալ: Թեև Մշիխա Զեխան գրում է, որ երբ «պարսիկները Արևելքի տեր դարձան, քրիստոնյանները մի քիչ վախեցան, որ նրանք սուր դանակներով իրենց կմորթեն», ուրեմն սկզբում քրիստոնյանները վախ են ապրում, «սակայն աստված անդուլ իր աչքերը պահում էր եկեղեցու վրա, որպեսզի ալիքներն ու մրրիկները այն չընկղմեն»: Ահա նույն այս պատմիչը արձանագրում է, որ ոչ միայն եկեղեցին այդ ալիքներից ու մրրիկներից չընկղմվեց, այլ ընդհակառակը «մեզ մի երջանիկ բախտավորություն շնորհեց»[108]:

Արտաշիրը՝ սասանյանների առաջին արքան սկզբում, ճիշտ է, քրիստոնյաների նկատմամբ որոշ բարյացակամություն է հանդես բերում, սակայն քաղաքական իր դիրքերն ամրացնելու, միասնությունը ապահովելու համար հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է զրադաշտական կրոնի հզորացման վրա, և եթե պարթևների մոտ կրոնը երկրորդական դեր էր կատարում և զրադաշտականությունը մի օժանդակ օղակ էր իրենց քաղաքական սկզբունքները իրագործելու համար, ապա սասանյանների օրոք, Արտաշիրից սկսյալ, զրադաշտականությունը սասանյան արքաների ներքին քաղաքականության հիմնաքարերից մեկն է

---

107 Նույն տեղում: Բայց կաթողիկոսության հարցը ոչ թե այս շրջանում, այլ IV դարում է առաջանում և Տիզբոնի եպիսկոպոս Պապայի օրոք է ստեղծվում:

108 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ), էջ 84:

դառնում և ստանում է պետական շատ կարևոր նշանակություն։ Այդ նպատակով բարձրացվում է նաև զրադաշտական քուրմերի, այսինքն՝ մոգերի ու մոգպետների դերը, նրանք պետական գործերի տնօրինման մեջ ունենում են իրենց ուրույն տեղը։ Ահա թե ինչ է պատմում Մշիխա Զեխան. «Սասանյանների հիմնադիր՝ Արտաշիր արքան, հրամայեց, որ նոր ատրուշաններ կառուցվեն ի պատիվ աստվածների, և արևր՝ ամբողջ տիեզերքի մեծ աստվածը, հատուկ երկրպագության արժանի լինի։ Ինքն առաջինը ընդունեց «արքայից արքա» և «աստված» տիտղոսը։ Այսպես նա եղած անարդարություններին ավելացրեց նաև անեծքը (որովհետև) ուզում էր, որ իրեն աստվածների իրավունք տրվի։ (Սիպում էր), որ բազում ծառ հավատալիքներ ձուլվեն արևի ու կրակի (պաշտամունքի) հետ»[109]։

Այսպիսով, պարզվում է, որ Արտաշիրի՝ քրիստոնյաների նկատմամբ որոշ բարյացակամություն ցուցաբերելը ժամանակավոր բնույթ է կրել միայն նրա թագավորության սկզբնական շրջանում։ Հետագայում, երբ նա նվաճել էր արդեն բազում երկրներ և ամրացրել իր քաղաքական դիրքը երկրի ներսում, փորձում էր զրադաշտականության և մանավանդ իր անձի նկատմամբ պաշտամունք ստեղծելով, սասանյան թագավորական տան հեղինակությունը բարձրացնել, այն հասցնել, ինչպես աղբյուրն է ասում, նույնիսկ «թագավորի աստվածացման»։

Ասորական այս աղբյուրում Արտաշիրի կրոնական սկզբունքների և կիրառած միջոցառումների մասին տեղեկություններից բացի, հաղորդումներ կան նրա քաղաքական գործունեության, մանավանդ գրաված երկրների նկատմամբ ցուցաբերած իր արտաքին քաղաքական սկզբունքների վերաբերյալ։ Եթե պարթևները, մանավանդ Վաղարշ Ա-ի թագավորության տարիներին, աշխատում էին իրենց գերիշխանության մեջ մտնող ժողովուրդներին տալ ինքնավարություն, այդ երկրների գահերին բազմեցնելով իրենց հարազատներին կամ հավատարիմ գործակիցներին, ապա սասանյանները բոլորովին այլ քաղաքականություն են որդեգրում, և պարթևների «ապակենտրոնացված» քաղաքականությանը հակադրում են «կենտրոնացված» քաղաքականությունը։ Արտաշիրը քաղաքական իր նվաճումները հաջողությամբ իրագործելուց հետո, վերացրեց իրեն ենթակա բոլոր մեծ ու փոքր թագավորությունները, ինչպես նաև իր դաշնակիցներին՝ Ադիաբենի թագավոր Շարհատին և Քարքա-Սլոխի թագավոր Դոմիտիանին։ Թե ինչպես վարվեց նրանց հետ, աղբյուրում ոչինչ չի ասված. ըստ երևույթին, նրանց սպանել է տվել ու

[109] Նույն տեղում, էջ 84։

փոխարենը մարզպաններ ուղարկել: Ահա թե ինչ է գրում Մշիխա Զեխան այդ մասին. Արտաշիրը «Արևելքի բոլոր թագավորներին հաղթելով, փոխարենը իրեն ենթակա կառավարիչներ ու մարզպաններ նշանակեց»: Ահա այդ ժամանակ էլ վերացվում է Ադիաբենի թագավորությունը, և «Պարսիկների առաջին արքա՝ Արտաշիրը, մեր երկիր ուղարկեց մի կառավարիչ, որը Ադորզահադ էր կոչվում»[110]:

Ո՞վ էր այս Ադորզահադը, չգիտենք, բայց ենթադրում ենք, որ նա Արտաշիրի հավատարիմ զորավարներից մեկն էր, որ իր քաջագործությունների և ընդունակությունների համար ստացել էր այդ պաշտոնը:

Արտաշիրի ինքնակամ գործողությունների մասին լուրերը անհանգստացրին Ալեքսանդր Սևերոս կայսրին (222—235 թթ.)[111], որը, սակայն, քաղաքի ճոխ կյանքին կապվելով, չէր էլ մտածում պատերազմական գործողությունները վերսկսելու մասին[112]: Իր օգնականների հետ խորհրդակցելով, նա մի դեսպանություն ուղարկեց նամակով և պահանջեց, որ Արտաշիրը դուրս չգա իր երկրի սահմաններից և զգուշանա հռոմայեցիների հետ պատերազմելուց, հիշեցնելով նրան Օդոստոսի, Տրայանոսի, Լուկկիոսի և Սևերոսի հաղթանակները: Ալեքսանդր կայսրը կարծում էր, որ այդ նամակով կհաջողվի զսպել պարսիկների արքային: Սակայն Արտաշիրը ոչ մի կարևորություն չտվեց գրվածին, որովհետև նա համոզված էր, որ զենքը և ոչ թե խոսքն է որոշում ելքը:

Երբ Ալեքսանդր կայսրը տեսավ, որ իր նամակը ոչ մի արդյունք չտվեց, ատիպված թողեց մայրաքաղաքը և մեծ բանակով եկավ Անտիոք, զեկավարելու համար պարսիկների դեմ սկսվելիք պատերազմը: Անտիոքից նորից դեսպանություն ուղարկեց Արտաշիրի մոտ և փորձեց այդ դեսպանության միջոցով հաշտության ելք գտնել: Սակայն Արտաշիրն արհամարհեց և նույնիսկ չընդունեց դեսպաններին, նա ուղարկեց: Կայսրը պատրաստվեց իր բանակով անցնել Եփրատ և Տիգրիս գետերը, բայց այդ ժամանակ եգիպտացի ու ասորի իր զինվորները ապստամբություն բարձրացրին և փորձեցին նոր կայսր նշանակել: Ապստամբությունը զսպվեց, և կայսրը ապստամբության հետ կապված զորքին ետ ուղարկեց: Դրանից հետո, բանակը երեքի բաժանեց: Մի մասը, հյուսիսային շրջանները հետազոտելով պետք է առաջանար դեպի Հայաստան,

---

110 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 84:

111 *A. Jardé*, Etudes critique sur la vie et le règne de Sévère Alexandre Paris, 1925.

112 Նրա մասին բարձր գնահատական է տալիս եվրոպացի պատմաբան Գլանվիլը, տե՛ս *G. Downey*, A history of Antioch in Syria, p. 251.

իսկ Հայաստանը այն ժամանակ Հռոմայեցիների դաշնակիցն էր, և հայկական ուժերի օգնությամբ արշավեր Մեդիայի վրա[113]: Այսպես, Ալեքսանդր Սևերոսը իր թագավորության 10-րդ տարում[114] Սասանյանների Արտաշիր թագավորի դեմ կազմակերպում է իր արշավանքը:

Այսպես ուրեմն՝ Ալեքսանդր կայսեր բանակի առաջին թևը Եփրատն անցնում է Մելիտինե քաղաքից ոչ հեռու մի տեղից, շտապում է մտնել Հայաստան: Իսկ իր բանակի երկրորդ թևը անցնելով Եփրատը, Դուրա-Եվրոպոսի վրայով շարժվում է դեպի Սելևկիա—Տիզբոն: Եվ երրորդ թևն կայսեր գլխավորությամբ, ինչպես երևում է պատմիչի վկայությունից, գնալու էր դեպի Հադրա, որը նույնպես այն ժամանակ դաշնակցում էր Հռոմայեցիների հետ[115]:

Հայաստան ուղարկված ուժը, դժվար ճանապարհորդությունից հետո, հայերի օգնությամբ մտավ Մեդիա և ավերեց այդ երկրի մի մասը: Արտաշիրը վախենալով, որ Հռոմայեցի զինվորները կարող են ավերել Պարսկաստանը, Մեդիայում մի փոքր ուժ թողնց, իսկ ինքը բանակով շտապեց իր տերության արևելյան շրջանները: Այստեղ էլ Հռոմեական զինվորները ձախողվեցին: Ալեքսանդր Սևերոս կայսրը չկարողացավ առաջադրված խնդիրներն իրականացնել և պարտված, հիվանդ վիճակում, նահանջեց մինչև Անտիոք[116]:

Սասանյանների դեմ ծավալված պատերազմական այս գործողությունների և, ընդհանրապես, Արտաշիրի դեմ գործակցող ուժերի՝ հռոմայեցիների, հայերի և այլ ժողովուրդների համատեղ ռազմական գործողությունների մասին տեղեկություններ են պահպանվել նաև Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի աշխատություններում: Ըստ երևույթին, Ալեքսանդրի այս արշավանքի ժամանակ Հայոց Խոսրով թագավորը «խաղայ ի վերայ Արտաշիրի. և ճակատ տուեալ՝ ի փախուստ դարձուցանէ, թափելով ի նմանէ զԱսորեստան[117] և զայլ արքայանիստ աշխարհս»[118]:

Համարյա նույն տեղեկությունները կան Ագաթանգեղոսի «Պատ-

---

113 *Herodian's*, vol. II, Book VI, I, 9—2, pp. 89—105.

114 Եթե Ալեքսանդր Սևերոսը կայսերական գահին է բազմել մ. թ. 222 թ., ապա նրա թագավորության 10-րդ տարին կլինի մ. թ. 232 թ., ուրեմն, կայսրն իր արշավանքն սկսել է 232 թ.:

115 *Herodian's*, vol. II, Book VI, 5, 1—2, p. 109.

116 Նույն տեղում, Book VI, 5, 8—10, pp. 113—115.

117 Մովսես Խորենացին «Ասորեստան» ասելով հասկացել է նաև Ադիաբենը:

118 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», դիրք Բ, գլ. ԿԲ, էջ 205—209:

մութիւն Հայոց»-ի մեջ. այստեղ ևս նշված է, թե ինչպես Արտաշիրը շրջակա երկրները իրեն հնազանդեցնելուց հետո փորձում է վերացնել նաև հայկական թագավորությունը, մանավանդ որ հայկական գահի վրա դեռ իշխում էին պարթևական ծագում ունեցող հայ թագավորները։ Եվ թե ինչպես Հայոց Խոսրով թագավորը աշխատում է իր շուրջ համախմբել հակապարսկական տրամադրություններ ունեցող տարրերին ու ժողովուրդներին։ Եվ երբ նա պատերազմական գործողություններ է ծավալում Արտաշիրի դեմ, ահա այդ ժամանակ, որպես հռոմայեցիների դաշնակիցներ, օգնության «Հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն Ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արիան Արտաւանայ խնդրեսցին»[119]։

Սասանյանների դեմ հայերի մղած այս երկարատև պատերազմները, ինչպես ցույց է տվել հայտնի պատմաբան Հ. Մանանդյանը, «տեղի էին ունեցել Արտաշիր Ա-ի ու նաև Շապուհ Ա-ի դեմ և ոչ թե Խոսրով թագավորի, այլ Տրդատ Բ-ի թագավորության ընթացքում՝ 228 և 252/3 թվականների ժամանակամիջոցում»։

Այդ պատերազմների բաւտերաբեմը, ինչպես կարելի է եզրակացնել նաև հունա-հռոմեական աղբյուրների վկայություններից, եղել են գլխավորապես Մեդիան ու նրա հարևան Ադիաբենը, որը հայկական ավանդության մեջ անվանված է Ասորեստան[120]։ Այս պատերազմական գործողությունների շնորհիվ, հայերը հենվելով հռոմայեցիների օգնության վրա, այս կամ այն կերպով պահպանել են Հայաստանի անկախությունը։ Սակայն Ադիաբենն ամբողջովին ընկավ Սասանյանների քաղաքական ազդեցության տակ, կորցնելով իր անկախությունը։ Երկիրը ղեկավարում էին Տիզբոնից նշանակված կառավարիչները։ Հետաքրքրական է, որ մեզ հայտնի Մշիխա Զեխայի Եկեղեցական պատմության մեջ Տիզբոնից նշանակված Ադիաբենի կառավարիչները կոչվում են «մոգպետներ»։ Հայկական աղբյուրներից գիտենք, որ «մոգպետ» բառը կրոնական իմաստ ունի և այն տրվել է զրադաշտական կրոնի գործակալների, այսինքն՝ քուրմերի, ավելի ճիշտ՝ մոգերի պետին, մի խոսքով «մոգպետը» քրմապետն էր և նա ղեկավարում էր ոչ միայն մոգերին, այլ նաև սասանյան տերության մեջ մտնող զրադաշտական հա-

119 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլ. Ա, էջ 17։

120 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 88։

վատացյալների կրոնական հարցերը։ Սակայն ասորական աղբյուրի[121] տեղեկության համաձայն «մոգպետը» Ադիաբենում ուներ քաղաքական ու զինվորական իրավունքներ, նա, պարզապես, երկրի կառավարիչը կամ մարզպանն էր։ Արդյո՞ք նույն մոգպետին, այսինքն՝ կրոնապետին սասանյանները նման պաշտոն էին տալիս, թե պարզապես Ադիաբենում մարզպանն ուներ նաև կրոնապետի, մոգերի պետի ատիճան։ Համենայն դեպս, ասորական այս աղբյուրում Ադիաբենի կառավարիչները կամ մարզպանները սասանյանների օրոք կոչվում են «մոգպետ»։

Մոգպետների իշխանության ժամանակ Ադիաբենի ժողովուրդը ընկնում է ավելի ծանր պայմանների մեջ և կորցնելով իր ներքին ինքնավարությունը, ղեկավարվում է անմիջապես պարսկական արքունիքից եկած հրամաններով։

Արտաշիր Ա-ի մահից հետո սասանյանների գահին նստած Շապուհ Ա-ի (241—272 թթ.) և նրա հաջորդների օրոք Ադիաբենի կյանքում էական փոփոխություններ տեղի չեն ունենում։ Միայն Շապուհ Ա-ը պատերազմների միջոցով նվաճված երկրներից և քաղաքներից, ինչպես օրինակ Անտիոքից և Պարսկական տիրապետության մեջ մտնող այլ ժողովուրդներից մի հոծ բազմություն, հատկապես քրիստոնյաներ, որոնց մեծ մասը արհեստավորներ էին, գաղթեցնում է Պարսկաստան և նրանց տեղավորում նոր և կամ վերակառուցվող պարսկական քաղաքներում։ Տալիս է նրանց հող, նույնիսկ եկեղեցիներ կառուցելու արտոնություն, որպեսզի նրանք իրենց աշխատանքով ու գործունեությամբ շենացնեն վերոհիշյալ երկրամասերը։ Գաղթական այս ժողովրդի (հիմնականում ասորիների) շնորհիվ, օրինակ, վերակառուցվում է Գունդիշապուր քաղաքը, որը երկար ժամանակ ավերակ վիճակում էր[122]։

Թեև Շապուհի և նրանից հետո տարբեր կայսրերի օրոք հռոմայեցիները փորձում էին պատերազմական գործողությունների միջոցով իրենց ազդեցությունը նորից տարածել Եփրատից այն կողմ՝ մինչև Վիբրին Միջագետք ու Ադիաբեն, սակայն այդ փորձերը միշտ էլ ինչ-որ ձևով ձախողվում էին։ Օրինակ, հռոմայեցիների կայսր Կարոսը (282—283 թթ.) ցանկանալով վերականգնել իրավունքները Արևելքում, 282 թ. մեծ զորքով մտավ Հայաստան, այնտեղից շարունակելով ճանապարհը,

---

121 Ասորերենում «մոգպետը» զինվորական կառավարիչի պաշտոնի անունն է և կապ չունի «քրմապետի». այսինքն՝ կրոնական ատիճանի հետ։ Ինչպես հետո կտեսնենք, ասորերենում եկեղեցական բարձր ատիճան ունեցողը Պարսկաստանում կոչվում էր Rabkourma «քուրմերի մեծ» կամ «պետ»։

122 G. Downey, A history, p. 261.

հեշտությամբ վերագրավեց Միջագետքը, հասավ մինչև Տիգրոն և տիրեց Սելևկիային: Բայց 283 թ., Տիգրիսի ափերի մոտ, հանկարծամահ եղավ: Այդ ժամանակ պարսիկների թագավոր Վահրամ Բ-ն (276—293 թթ.) ցանկանում էր դեսպանների միջոցով խաղաղություն կնքել հռոմայեցիների հետ, սակայն կայսրը մերժում է, և վստահ արշավում մինչև պարսիկների մայրաքաղաք Տիգրոն[123]: Ճիշտ է 286 թ. պարսիկները դաշինք կնքեցին հռոմայեցիների հետ, սակայն Արևելքում ազդեցության ոլորտների հարցը (թեև այդ դաշինքով նորից հռոմայեցիների իրավունքները որոշ չափով վերականգնվում են՝ օրինակ, Հայաստանը նորից նրանց ազդեցության ոլորտի մեջ է մտնում) էականում մնում էր չլուծված:

Վահրամ Բ-ի իշխանության թուլացման ժամանակ է, որ, հավանաբար, Ադիաբենի մոգպետ Գուտիրաշնասպը ապստամբում է պարսիկների այս արքայի դեմ: Մոգպետը, ինչպես Մշիխա Զեխան է պատմում, «լեռան մեջ կառուցել էր բարձր մի բերդ, որը նրան պետք է պաշտպաներ թշնամիների հարձակումներից: Այդ նպատակով նա իր հետ է բերում բազում մարդկանց, 560 քաջ ազնվատոհմների. և որոնք ըստ սովորության ամեն տարի փոխվում էին: Սրանք ամեն օր 50 կամ 30 հոգով ճանապարհ էին դուրս գալիս և ում որ գտնում էին, կողոպտում էին ու թալանում: Այս ավազակային հարձակումների պատճառով, քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ երթևեկությունները դադարել էին: Ադիաբենի շատ բնակիչներ լքեցին իրենց բնակավայրերը և այլ երկրներ գնացին, և (այսպես) հարուստ գյուղերը ամայացան: Մարդիկ սերմանել չէին կարող, որովհետև հողագործները ավազակների վախից նույնիսկ տներից դուրս չէին գալիս: Ի վերջո, քաղաքներից բազում հարուստներ իրար հետ համաձայնվելով, գնացին իրերի վիճակը վարհարանին (Վահրամին) ներկայացնելու: Արքան լսեց նրանց աղերսանքը և մեծ թվով զորք ուղարկեց, որոնք եկան Գուտիրաշնասպի ամրոցը կործանելու և քանդելու: Սակայն նրանք նույնիսկ չկարողացան մոտենալ ամրոցին Գուտիրաշնասպի զինվորների՝ մեծ վարպետությամբ արձակած բազում նետերի պատճառով: Երկու ամիս շարունակ ոչինչ չկարողացան անել, և հոգնած, այդ մասին հայտնեցին վարհարանին, և նա նորից անհամար զորք ուղարկեց Զարհասպ անունով հաջողակ ու փորձառու հրամանատարի գլխավորությամբ: Սա ևս չկարողացավ ամրոցը գրավել, որովհետև այն շատ բարձր էր և այնտեղ տեղավորված զինվորները շատ քաջ, հաջողակ նետաձիգներ էին, և թույլ չէին տալիս (թշնամուն), նույնիսկ հեռվից մոտենալ: Ուստի, երբ Զարհասպը տեսավ, որ (ամ-

123 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Բ, մասն Ա, էջ 102:

րոցը) չէր կարող քանդել, ապա մտածեց Գուիրաշնասպին դարանը գցել։ Նա նրա մոտ ուղարկեց իր որդուն թանկարժեք ու հարուստ նվերներով, որ նրան ասի, թե «արքայից արքան լսելով քո քաջությունը, ուզում է մտերմանալ քեզ հետ և քեզ դարձնել իր ամբողջ պետության ընդհանուր կառավարիչ։ Ուստի ես ուզում եմ քեզ հետ առանձին խոսել, պայմանով, որ մեզ հետ ոչ մի զինվոր չլինի։ Մարտին վերջ տուր և միայնակ արի մի տեղ, և մենք միասին կխորհրդակցենք»։ Գուիրաշնասպը հավատաց հրամանատարին, կամ գուցե ինքն էլ խաղաղության դաշինք կընքել էր ցանկանում, որովհետև պայքարը երկար էր տևել և ինքն էլ իր զինվորների հետ հոգնել էր։ Նա ամրոցից դուրս եկավ հեռու մի տեղ և Զարհասպին հրավիրեց գալ իր հետ բանակցել։ Զարհասպը բաղում քաջ զինվորների հրամայեց, որ իրենից ոչ հեռու դարան մտնեն, և զինվորները երբ տեսան, որ նրանք նստեցին և զրուցում են, այն ժամանակ հարձակվեցին, Գուիրաշնասպին բռնեցին։ Այս խորամանկության շնորհիվ Գուիրաշնասպը բռնվեց։ Քանդեցին նրա ամրոցը և նրան մայրաքաղաք բերեցին արքայից արքա Վարհարանի մոտ։ Զարհասպի այս կատարածից նա (արքան) շատ ուրախացավ, և հրամայեց, որ նրան (Գուիրաշնասպին) մորթատերծ անեն և կախեն իր պալատում, որպեսզի բոլորը տեսնեն, վախենան և իմանան, թե ինչպիսի խստությամբ ու արդարությամբ, արքայից արքան վրեժխնդիր է լինում նրանցից, որոնք նրան անհնազանդ են լինում»[124]։

Այս պատմությունը ևս հաստատում է, որ սասանյաններն իրապես թուլացել էին, և կենտրոնախույս ուժերն առիթից օգտվելով՝ տեղական ուժերի վրա հենվելով քաղաքական ինքնուրույնություն էին ձեռք բերել։ Ադիաբենի մոգպետ Գուիրաշնասպը, ապստամբության անհաջողությունից հետո, իր քաջ ու հավատարիմ զինվորների հետ բարձրանում է իր կողմից նախօրոք պատրաստված անմատչելի մի ամրոց և այնտեղից շարունակում դիմադրությունը։

Եթե մի կողմից Ադիաբենում ապստամբական շարժումներ էին տեղի ունենում, ապա մյուս կողմից սոցիալական պայմանների ծանրացումը հասարակ խավի բաղում ներկայացուցիչների ստիպում էր, իրենց գոյությունը պահպանելու անհրաժեշտության կարիքից մղված, պայքարի ուղի գտնել։ Նման մարդկանց, և ընդհանրապես եղած կարգերից դժգոհ անձանց համախմբելու գործում այդ ժամանակ մեծ դեր էին կատարում քրիստոնյա քարոզիչները, որոնք քաղաքից քաղաք,

[124] Հ. Մելիքոնյան, *Ասորական աղբյուրներ (Սխադաբուհի եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 89։

գյուղից գյուղ ճանապարհորդելով, հավաքագրում էին այդ մարդկանց, և Ադիաբենում III դ. 2-րդ կեսից սկսյալ գործը արդեն ամուր հիմքերի վրա էր դրված և եկեղեցական թեմը մեծացած: Ահա թե ինչ է պատմում ասորի պատմիչը Ադիաբենի այդ ժամանակվա եպիսկոպոս Ախադաբուհու գործունեության մասին. «Քաջ Ախադաբուհին տեսնելով այս դաժանություններն ու վայրենությունները, չկրցավ, որ իր հոգին վհատվեր և ոչ էլ բաջությունը կորցներ: Նա սկսեց շրջագայել իր մեծ թեմում, բարի խորհուրդներ էր տալիս, խրատում, սլաքոնում էր, ինչպես որ վայել էր քրիստոնյաներին, երկայնամտության ու ընկերասիրության (կոչ) էր անում»[125]:

Պարսիկները արգելք չէին հարուցում, երբ քրիստոնյա քարոզիչները գործում էին ոչ պարսիկների շրջանում և թուլլատրում էին նրանց այդ գործունեությունը, որովհետև պարսկական տիրապետության մեջ մտնող քրիստոնյաները տնտեսական և, մասնավորապես, Պարսկաստանի վրայով կատարվող միջազգային առևտրական կյանքում էական դեր էին կատարում: Տնտեսական այդ եռուզեռի մեջ ընկնելով, փող աշխատելու մոլուցքով տարվելով, նրանք կորցնում էին իրենց ժողովրդի ու հայրենիքի նկատմամբ ունեցած պարտականությունը և, բնականաբար, կորցնում էին նաև իրենց քաղաքական համոզմունքներն ու սկզբունքները:

Հասկանալի է, որ պարսիկների համար նման մարդկանց կամ ժողովուրդներին ղեկավարելը նպաստավոր էր, և այդ է պատճառը, որ իրենց թագավորության հիմնադրման առաջին տարիներից պարսկական տիրապետության մեջ մտնող այլ ժողովուրդներին, ինչպես, օրինակ, ասորիներին, հրեաներին, հույներին և մյուս ժողովուրդներին, նրանք ճանաչեցին որպես կրոնական համայնքներ և որոշ արտոնություններ շնորհելով նրանց կրոնապետներին կամ կրոնական գործիչներին, հեշտացրին նրանց կառավարումը:

Նման մոտեցումը հպատակ ժողովուրդների նկատմամբ արդարացրեց իրեն և հետագայում՝ թե՛ արաբների և թե՛ թուրքական կայսրության տարիներին, նրանք ևս իրենց տիրապետության մեջ մտնող ժողովուրդների նկատմամբ նույն եկեղեցական քաղաքականությունը որդեգրեցին: Այդ մասին մանրամասն կխոսենք հաջորդ հատվածում:

---

125 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ (Ախադաբուհու եպիսկոպոսության օրոք), էջ 89:

ՄԱՍՆ Գ

ԳԼՈՒԽ Ա

ԱԴԻԱԲԵՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄՆ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ԱԴԻԱԲԵՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ամեն մի հին քրիստոնեական եկեղեցի հնություն ու առաքելություն հաստատելու համար ունեցել է ավանդություններ ու զրույցներ, որոնք երբեմն իրենց խորքում պահպանել են որոշ պատմական փաստեր և երբեմն էլ հորինվել են, երբ կարիք է զգացվել տվյալ եկեղեցու շահերը պաշտպանող փաստերի վրա հենվել: Այս պատճառով էլ երբեմն նույն եկեղեցու շուրջ տարբեր ժամանակներում տարբեր զրույցներ ու ավանդություններ են կազմվել: Բնականաբար այդպիսով խճճել են պատմական իրականությունը և այդ հարցերն ուսումնասիրողների համար ստեղծել դժվարին դրություն:

Այդպիսիներից է Ադիաբենի եկեղեցին, որի ստեղծման կամ կազմավորման մասին մեզ հասել են տարբեր ավանդություններ ու զրույցներ: Այսպես, օրինակ, ասորական հնագույն աղբյուրներից «Ադդայի վարդապետության» մեջ, ինչպես ամբողջ Արևելքի, այնպես էլ Ադիաբենի եկեղեցու հիմնադիր են համարվում Քրիստոսի յոթանասուներկու աշակերտներից Ադդան ու նրա աշակերտ ու հաջորդ՝ Ագգան: Ահա թե ինչ է գրված այդ աղբյուրի ասորական բնագրում. «Ուռհան և նրա ամբողջ շրջակայքը, բոլոր կողմերում, և Սոբան[1], և Հարավը, և Միջագետքի բոլոր մասերը Ադդա առաքյալից ընդունեցին քահանայությունը»[2]: Ինչպես տեսնում ենք, այստեղ ընդհանուր է ներկայացված «Արևելքը», և նույն աղբյուրում հստակ ասված է, որ սրա հաջորդի՝ Ագգայի օրոք

---

[1] *«Սոբան» ասորական աղբյուրներում անվանված է «Մծբինը»:*

[2] *W. Cureton*, Ancient Syriac documents, Amsterdam, 1967, p. 34.

քահանայություն[3] ստացան «ամբողջ Պարսկաստանը, աթուրացիները[4], Հայերը, մեդացիները և Բաբելոնի շուրջ եղած բոլոր երկրները, խուզիտները և գելացիները, նույնիսկ հնդիկների սահմանի մոտ ապրողները և ապա Գոգ և Մագոգ տեղում, և նորից բոլոր երկրներում քահանայություն ստացան մետաքսագործ Ագգայից»[5]: Այս հարցին դեռ մենք մանրամասն կանդրադառնանք: Կարևորն այն է, որ այս աղբյուրի տվյալներով ամբողջ Արևելքի, հատկապես Օսրոյենի, Ադիաբենի, Հայաստանի, Միջագետքի և Պարսկաստանի քարոզիչ առաքյալները եղել են Ադդան և նրա հաջորդ Ագգան: Մեր մի այլ աշխատության մեջ ցույց ենք տվել, որ այս անձնավորությունները առաջին դարի, այն էլ երկրորդ կեսի քրիստոնյա գործիչներ են և նրանց վերաբերյալ տեղեկությունները արտացոլում են մ. թ. I դ. վերջին մի քանի տասնամյակների իրադարձությունները, այնպես որ Արևելքում, այսինքն՝ Եդեսիայում, Ադիաբենում, Հայաստանում և պարսկական այլ քաղաքներում քրիստոնեական եկեղեցու առեղծումը պիտի հաշվել վերոհիշյալ ժամանակներից, այսինքն՝ I դ. երկրորդ կեսից[6]: Անշուշտ, մինչ այդ եղել են քրիստոնեական զանազան համայնքներ, սակայն դրանք ավելի շատ հրեական, քրիստոնեական ուսմունքի հիման վրա առաջացած կրոնական կազմակերպություններ են եղել, և ոչ հրեա բնակչության կյանքում այն ժամանակ էական դեր չեն կատարել[7]: Երբ հետզհետե այս համայնքների ներսում գնալով աճել է ոչ հրեաների թիվը և այս կազմակերպությունների ղեկավարությունն անցել է (անշուշտ երկարատև պայքարից հետո) ոչ հրեաների ձեռքը, վերջիններս ամեն կերպ փորձել են մոռացության մատնել մինչ այդ եղած փաստերը և ներկայացնել այնպես, որ իբր նրանք իշխանությունն անմիջապես ստացել են առաքյալներից:

Մեր այս աշխատության նախորդ գլխում տեսանք, թե ինչպես, Հով-

---

[3] Նույն այս բնագրի V դ. հայերեն հին թարգմանության մեջ գրված է «եպիսկոպոսութիւն», որ ավելի ճիշտ է, որովհետև այստեղ նկատի է առնված եպիսկոպոսական աթոռի հիմնադրումը:

[4] Աթուրացիներ ասելով՝ բնագիրը նկատի է ունեցել ադիաբենցիներին, ասորական աղբյուրներում Ադիաբենը անվանված է Աթուրիա և ամբողջ բնագրից էլ երևում է, որ խոսքը այստեղ Ադիաբենի մասին է:

[5] *W. Cureton*, Ancient Syriac, p. 34.

[6] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրները հայ եկեղեցու մասին*, «Էջմիածին», 1978, № 6—8:

[7] *A. Atiya*, A history of Eastern christianity, London, 1968, p. 239.

ասպոս Փլավիոսի վկայությամբ, Ադիաբենում մ. թ. I դ. կեսերին հրեական կրոնը տարածող քարոզիչներ են եղել, որոնք Հրեաստանից գալով, փորձել են իրենց վարդապետությունը, կամ ավելի ճիշտ՝ դաղափարախոսությունը արմատավորել Ադիաբենի բնակչության և մանավանդ հրեա բնակչության մեջ։ Հասկանալի է, որ այս նոր վարդապետությունը ինչ-որ բանով պետք է տարբերվեր մեզ հայտնի մովսիսական կրոնից, և նոր միսիոներների նման աշխատանքի ծավալումը վկայում է այն մասին, որ իրենց քարոզած վարդապետությունը այլ է, ապա թե ոչ այդպիսի քարոզչական գործունեության կարիք չէր ղգացվի, քանի որ, ինչպես գիտենք, դեռ վաղ դարերից հրեական հոծ բազմություն էր բնակություն հաստատել Ադիաբենի տարածքի վրա։

Մ. թ. I դ. կեսերին կազմավորված, այսպես կոչված, քրիստոնեական առաջին համայնքները Ադիաբենում, քաղաքական հետագա իրադարձությունների և իրար հաջորդող պարսկա-հռոմեական պատերազմների պատճառով, առանձին հաջողության չեն հասնում և ծավալվելու հնարավորություն չեն ունենում։ Դրա համար էլ մնում են տեղական շրջանակների մեջ և երկար ժամանակ քարոզվում էր հրեաներին, որպես մովսիսական կրոնի ծոցից դուրս եկած ինչ-որ աղանդավորական շարժում։ Մասնագետները իրենց ուսումնասիրությունների մեջ ցույց են տվել վաղ հրեական ու քրիստոնեական համայնքների միջև գոյություն ունեցող հավատալիքների ու սկզբունքների նմանությունը[8]։

Մեզ համար պարզ է, որ I դ. քրիստոնեությունն որպես հրեությունից անջատ և ինքնուրույն կատարյալ վարդապետություն դեռ չէր կազմավորվել և միայն II դ. սկսյալ հատկապես մ. թ. 131 թ., երբ Բար Քոբայի գլխավորությամբ հռոմայեցիների դեմ սկսված մի քանի տարիներ շարունակվող հրեական ապստամբությունը ջախջախվեց վերջնականապես, հրեաներից շատերը ստիպված լքեցին իրենց հայրենիքը և գաղթեցին տարբեր երկրներ։

Հրեաները, մանավանդ Հրեաստանից դուրս ապրող հրեաներից շատերը, որոնք օտարության մեջ ամենից շատ ղգում էին քաղաքական ծանր ճնշումից բացի նաև սոցիալական հակամարդկային ճնշումների խորությունը, եկան այն համոզման, որ միայնակ հանդես գալ հզոր թշնամու դեմ անիմաստ է և արդյունք չի տա, ուստի անհրաժեշտ է իրենց շուրջը համախմբել ոչ միայն հրեաներին, այլ նաև բոլոր ժողովուրդների այն խավերին, որոնք դժգոհ լինելով գոյություն ունեցող

---

[8] *И. Амусин*, Рукописи Мертвого моря, Москва, 1961, стр. 248.

քաղաքական և սոցիալական պայմաններից, պատրաստ էին հակադրվելու իշխող տարրերին ու հավատալիքներին: Ստեղծված այս վիճակում կազմավորվում է քրիստոնեական վարդապետությունը: Այդ վարդապետության քարոզիչները, տարբերվելով հրեաներից, կոչ էին անում բոլոր ժողովուրդներին մտնել իրենց շարքերը և իրենց վարդապետությանը հավատալու դեպքում խոստանում էին բոլորին «փրկություն»:

Ստրկատիրական կարգերի քայքայման պայմաններում այսպիսի կոչը յուրահատուկ նշանակություն էր ստանում, որովհետև ստրկատիրոջ կալվածքներում, արհեստանոցներում միատեղ ապրող ու նույն ստրկական վիճակում գտնվող տարբեր ժողովուրդների ղավակներին նույն դրոշակի տակ միավորող քրիստոնեական այս գաղափարախոսությունը մեծ դեր է կատարում ստրկատերերի և այդ կարգերը պաշտպանող տարրերի դեմ ապստամբական շարժումները աշխուժացնելու և այդ կարգերի հիմքը թուլացնելու գործում:

Մի կողմից քրիստոնեական դրոշի շուրջ համախմբվում էին սոցիալական ցածր խավերի ներկայացուցիչները, մյուս կողմից՝ այդ շարքերն էին համալրում ոչ ստրկական վիճակում գտնվող և նրանց համեմատ մի փոքր առավելություն ունեցող առևտրականներն ու արհեստավորները, ինչպես նաև՝ այն ազատ մտավորականները, որոնք փորձում էին իրենց իրավունքները կաշկանդող շղթաներից ազատագրվել:

Նվ եթե մինչ II դ. երկրորդ կեսը քրիստոնեական համայնքների կազմում մեծամասնություն էին հրեաները (և դրա լավագույն ապացույցն այն է, որ այն ժամանակ այդ համայնքների առաջին ղեկավարները հրեա եպիսկոպոսներ էին), ապա դրանից հետո հարաբերությունը փոխվեց, և III դ. սկսյալ արդեն քրիստոնեական կազմակերպությունների մեջ հրեաները կա՛մ աննշան փոքրամասնություն էին և կա՛մ արդեն այդ շարքերում տեղ չունեին:

Ինչպես տեսանք նախորդ գլուխներում, Ադիաբենի իշխաես թագավորի և նրա մայր Հելենեի օրոք հրեական կրոնական համայնքներ էին ստեղծվել Ադիաբենում: Թե ի՞նչ ճակատագիր ունեցան դրանք հետագայում, աղբյուրներից մեզ հայտնի չէ: Միայն կարելի է ենթադրել, որ դրանք հիմք հանդիսացան Ադիաբենում քրիստոնեական եկեղեցու հիմնադրման: Թե ո՞վ էր այդ եկեղեցու հիմնադիրը, ասորական աղբյուրները այս հարցում տարբերվում են: Օրինակ՝ «Ադդայի վարդապետությունից» իմացանք, որ այդ եկեղեցու հիմնադիրը Ագգան էր, որովհետև Ադդան, ինչպես նույն աղբյուրի ասորական բնագրից երևում է, մահացել էր Նգեսիայում, և նրա աշակերտ Ագգան է կարողացել գնալ Հարևան

երկրները քարոզելու։ Ի միջի այլոց, այստեղ պետք է նշել, որ Ադդան և նրա հաջորդ ու աշակերտ Ագգան մի շարք աղբյուրներում և նույնիսկ նույն բնագրի այլ լեզուների թարգմանության մեջ շփոթվել ու նույնացվել են[9]։

Սակայն Մշիխա Զեխան, օգտվելով մեզ չհասած ասորական հնագույն աղբյուրներից մեկի՝ Հաբելի աշխատությունից, ցույց է տալիս, որ Ադիաբենի առաջին եպիսկոպոսը Պկիդան է, որը ձեռնադրությունը ստացել է նույն մեզ ծանոթ Ադդա առաքյալից[10], այսինքն՝ Պկիդան այստեղ ներկայացված է որպես Ադդայի աշակերտ, մի բան, որ ավելի հավանական է թվում, որովհետև նույն «Ադդայի վարդապետությունից» իմանում ենք, որ Ագգան հաջորդել էր Ադդային և դարձել Եդեսիայի եպիսկոպոսը և նա դժվար թե դրանից հետո թողներ իր աթոռը, ուստի շատ հավանական է, որ Պկիդան Ադդայի և ավելի ճիշտ՝ Ագգայի աշակերտներից էր, որ եկել էր Ադիաբեն քարոզելու։ Իսկապես, «Ադդայի վարդապետության» վկայությունից երևում է, որ «եւ բազումք յարևելից ի նմանութիւն վաճառականաց՝ յիշխանութիւն Հոռոմոց գային, տեսանել զնշանս՝ զոր առներ Ադէ առաքեալ և աշակերտեալքն ի նմանէ ընդունէին ձեռնադրութիւն քահանայութեան. և յաշխարհին իւրեանց յԱսորեստանի[11] զգաւառականս իւրեանց աշակերտէին, և տունս աղօթանոցս շինէին ի ծածուկ վասն երկիւղի այնոցիկ՝ ոյք երկիր պագանէին կրակի և պատուէին ջուրս»[12]։

Հետաքրքրական է, որ նույն «Ադդայի վարդապետության» V դ. հայերեն թարգմանության մեջ Ադդան ոչ թե մահանում է Եդեսիայում, այլ իրեն հաջորդ ձեռնադրելուց հետո կամենում է մեկնել Ասորեստան, այսինքն՝ Ադիաբեն, քարոզելու։ Որովհետև այն ժամանակ Ադիաբենի թագավոր Ներսեն կամ Ներսեհը նամակ էր գրել Եդեսիայի թագավոր Աբգարին, ասելով, որ «կամ տուր ածել ինձ զայրդ որ զնշանսդ առնէ առ քեզ, զի տեսից զդա և լուայց զբանս դորա, և կամ տուր դի-

[9] Լաբուբենայ, Թուղթ Աբգարու, էջ 49։

[10] Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, էջ 64։ Մշիխա Զեխայի պատմության մեջ Ադիաբենն կամ Ադիաբենը անվանված է Խեդայար և ընդհանրապես ասորական աղբյուրներում այդ երկիրը Խեդայար է կոչվում։ Անկասկած, այդ երկրին Խեդայար անունը տվել են սասանյանները, երբ վերացրին Ադիաբենի թագավորությունը և այն պարսկական նահանգ դարձրին և այդ նահանգը ղեկավարելու համար կառավարիչներ նշանակեցին. այդ ժամանակվանից էլ, այսինքն 3-րդ դարի կեսերից, երկիրը կամ այդ նահանգը անվանվեց՝ Խեդայար։

[11] Ասորերեն բնագրում «Ասորեստանի» փոխարեն «Աթուրիա» է։

[12] Լաբուբենայ, Թուղթ Աբգարու, էջ 34։

տել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է դորա ի քաղաքիդ քում»[13]։ Ահա այս թարգմանության Ադդե առաքյալը «ելեալ գնաց ընդ Արևելս»[14] բառերից մի քանի էջ առաջ ասված է. «Եւ յետ այսր ամենայնի կամեցաւ Ադէ առաքեալ (գնալ) ի կողմանս արևելից և յերկիրն Ասորեստանի քարոզել և ուսուցանել և անդ զնոր վարդապետութիւնն Քրիստոսի, և շինել եկեղեցիս յամենայն գաւառս և ի գեօղս ի կողմանս արևելից»[15]։

Ուշագրավ է նաև այն, որ նույն Ադդեի կամ Թադեոս առաքյալի հայկական վարքում նա ոչ թե մահանում է Եդեսիայում, այլ գալիս ու նահատակվում է Հայաստանում[16]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ ամեն մի արևելյան եկեղեցի ձգտելով ապացուցել, որ ինքն առաքելական է, ավանդության միջոցով ցույց է տվել, որ հիմնադիրը Ադդա կամ Թադեոս առաքյալն է։ Բայց, անշուշտ, պատմականն այստեղ այն է, որ եթե նույնիսկ ինքը չի եղել հիմնադիրը, ապա նրա աշակերտներն են եղել, որոնք գործել են իրենց ուսուցչի անունով։ Փաստն այն է, որ արևելյան եկեղեցին՝ ասորականը, հայկականը, պարսկականը և մյուսները, հիմնադրվել են Ադդայի և նրա աշակերտների կողմից, մ. թ. I դ. վերջին տասնամյակներին։ Ասորական այս աղբյուրներում այնպես է ներկայացված, որ Ադդան առաջին դարի սկզբներից է ապրել, իրականում, ինչպես ասել ենք, նա նույն դարի վերջին տասնամյակներին է գործել և, պիտի ասել, որ նրա հիմնած արևելյան եկեղեցին որպես ինքնուրույն միավոր և ճանաչված համայնք, արդեն ոչ որպես հրեական, այլ քրիստոնեական կազմակերպություն, հանդես է գալիս II դ. սկսյալ, հատկապես ինչպես կարելի է ասորական աղբյուրներից հետևցնել, սասանյանների իշխանության գլուխ գալուց հետո, այսինքն՝ 224 թ. հետո, նրանց թույլտվությունից օգտվելով, քրիստոնյաները Արևելքում աշխուժացնում են իրենց գործունեությունը։

Ադիաբենի և ընդհանրապես արևելյան երկրների հիմնադրման կամ առաջացման մասին խոսելիս պետք է ասորական աղբյուրներում պահպանված Մար Մարիի վարքի վրա կանգ առնել։ Որովհետև այս վարքի հերոս, Ադդա առաքյալի աշակերտներից Մար Մարին այնպես է ներկայացված, որ նա է հիմնականում Արևելքի եկեղեցիների և դրանց կենտ-

---

[13] Նույն տեղում, էջ 34։

[14] Լաբուբնեայ, Բուղի Արգարու, էջ 45։

[15] Նույն տեղում, էջ 38։

[16] Հ. Մելիոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 169։

րոն՝ կաթողիկոսական աթոռի հիմնադիրը։ Նվ եթե «Ադդայի վարդապետության» մեջ այդ կենտրոնը համարվում է Եդեսիան, «Ադիաբենի պատմության» մեջ՝ Արբելան, այս վարքի մեջ կենտրոնը Տիզբոնն է։ Ըստ այս վարքի, Ադդա առաքյալը իր աշակերտներից Մարիին քարոզելու է ուղարկում Բաբելաստան (Atra Babel—Ատրա-Բաբել)։ Ուտհայից, այսինքն՝ Եդեսիայից, Մար Մարին նախ գալիս է Մծբին, այնտեղ քարոզելուց հետո նա անցնում է Արզուն։ Այստեղից էլ իր աշակերտներից մեկին՝ Փիլիպոսին ուղարկում է Կարդու[17]։

Իսկ ինքը շարունակում է ճանապարհը և գալիս Բեյթ-Զաբդի և շատերին քարոզելուց հետո գնում Բեյթ-Դարաբայա, այստեղից էլ՝ Արբիլ և ապա Աթուր[18]։ Արբելայում թագավորը իմանում է Մար Մարիի քարոզությունների ու հրաշագործությունների մասին, և որովհետև թագավորը հիվանդ էր, ինչպես մյուս վարքերում, այստեղ էլ Քրիստոսի առաքյալը բուժում է նրան և նրան շրջապատող բազում անձանց մկրտում։ Մկրտվածների մեջ էր նաև թագավորի սպարապետը (rab Khaïlabar խայլա) Զարդոշ անունով։ Քրիստոնեություն է ընդունում նաև քրմապետը (rab Koumra—ռաբ քումրա)[19]։

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել «քրմապետ» և «մոգպետ» բառերի ասորերենում ունեցած տարբեր իմաստների վրա։ Մեր այս աշխատության մեջ ցույց ենք տվել, որ սասանյանների կողմից Ադիաբենում նշանակված կառավարիչները կոչվում էին «մոգպետներ»[20], մինչդեռ հայկական աղբյուրներում «մոգպետը» ընկալված է «քրմապետի» իմաստով։ Ինչպես տեսնում ենք, ասորերենը տարբերում է «մոգպետը» «քրմապետից»։

Այժմ վերադառնանք Մար Մարիին։ Մար Մարին երկար չի մնում Արբիլում, այնտեղից ճանապարհը շարունակում է և քարոզչական նպատակներով շրջում համարյա պարսկական բոլոր քաղաքները։ Ի վերջո նա կանգ է առնում Տիզբոնում, որը և դառնում է նրա վերջին հանգրվանը։

---

17 *Bedjan, Acta* mart. et sanct., t. I, Parisiis, 1890, p. 53. *Մար Մարիի վարքը կառուցված է նեստորական եկեղեցու ավանդության հիման վրա և արտացոլում է նեստորական եկեղեցու շահերը, հատկապես՝ Տիզբոնի կաթողիկոսության։*

18 *Bedjan*, Acta mart. et sanct., t. I, p. 55.

19 *Նույն տեղում, էջ 57։ Պարսկաստանում կրոնական բարձր աստիճան ունեցողը կոչվում էր «*Rab Koumra—*քումրների պետ», «մեծ»։ Տե՛ս J. Payne Smith,* A comp. dict., p. 209.

20 *Այստեղ խոսքը Ադիաբենի, ավելի ճիշտ՝ «Խեդայաբի» կառավարիչ Աղրշաբուր մոգպետի (*mohbet—*մոհպետ) մասին է։*

վարքում, որը շատ ավելի ուշ շրջանում է գրի առնվել, իրերի դրությունը այնպես է ներկայացված, որ Տիզբոնը Մար Մարիի քարոզչական աշխատանքների շնորհիվ հետագայում դառնում է արևելյան եկեղեցական գործերի կենտրոն և նույնիսկ կաթողիկոսանիստ քաղաք:

Թեև վարքի սկզբում այնպես է ներկայացված, որ Մար Մարին իր քարոզչական աշխատանքները սկսել է մ. թ. I դ., Տիբերիոս կայսեր թագավորության 15-րդ տարում, սակայն, մեր կարծիքով, այս հատվածը հետագայում է ներմուծված: Ավելի ճիշտ է վարքի մեջ պահպանված մի այլ վկայություն, թե Մար Մարի առաքյալը քարոզչական աշխատանքներով պարսկական քաղաքներն է գնում ու քարոզչական աշխատանքներն է սկսում պարթևների վերջին թագավոր Արտավանի և նրանից հետո Աշտաշիրի Բեյթ-Արամեի իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո[21], այսինքն, երբ սասանյանները հաստատել էին իրենց տիրապետությունը Ադիաբենում: Ինչպես հիշում ենք Մշիխա Զեխայի «Ադիաբենի եկեղեցական պատմության» մեջ էլ այն վկայությունը կա, որ սասանյանների տիրապետության ստեղծումից հետո, օգտվելով նրանց՝ քրիստոնյաների նկատմամբ ունեցած բարյացակամությունից, քրիստոնյա քարոզիչները աշխուժացրին իրենց գործունեությունը, և նույն աղբյուրի վկայությամբ, նույն սասանյան Աշտաշիրի թագավորության օրոք, քրիստոնեական եկեղեցին իր ծաղկումը ապրեց[22]:

Մշիխա Զեխայի հաղորդած տվյալների համաձայն՝ քրիստոնեական եկեղեցին պարսկական տիրապետության մեջ, մանավանդ Ադիաբենում, շատ վաղուց տարածված մի վարդապետություն էր և նույնիսկ կային քանիից ավելի եպիսկոպոսական աթոռներ, իսկ Մար Մարիի վարքի հաղորդումների համաձայն, մինչ սասանյանների իշխանությունը արևելյան այս երկրներում կազմակերպված եկեղեցիներ կային և Մար Մարիի քարոզչական աշխատանքների շնորհիվ նաև հիմնվեցին նոր եկեղեցիներ ու նրա աշակերտները շարունակեցին գործը: Համենայն դեպս Մար Մարիի վարքը կազմվել է, ինչպես ցույց է տալիս իր ուսումնասիրություններից մեկում եվրոպացի պատմաբաններից Ֆին, Տիզբոնի կողքին գոյություն ունեցող «Քոկեի» վանքում[23], որը և դարձավ նեստորական կաթողիկոսության կենտրոն: Ֆին գտնում է, որ Մար

---

21 *Bedjan*, Acta mart. et sanct., t. I, p. 68.

22 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ, էջ 84:

23 Քոկեի վանքը գտնվում էր այն ձորում, որը նրան բաժանում էր Հելլենիստական

Մարիի Վարքը շարադրված կլինի IX դ., որովհետև, գրում է նա, այդ Վարքում հիշատակվում են ծառերի և դևերի պաշտամունքը, մինչդեռ, շարունակում է պատմաբանը, այդ ոչ ճիշտ պատկերացում է տալիս այն ժամանակվա պարթևական կրոնական հավատալիքների մասին, որովհետև, ինչպես գիտենք, պարսիկները պաշտում էին արևն ու կրակը[24]: Համենայն դեպս, ավելացնում է նա, Մարիի պարթևների մայրաքաղաք գալու պատմականությունը կապված է Քոկեի եկեղեցու հնության հետ[25], այսինքն՝ այդ ավանդությունը ծագել է այդ վանքում կամ եկեղեցում:

Մենք համաձայն ենք եվրոպացի պատմաբանի այս եզրակացության հետ, բաժանում ենք նրա այն կարծիքը, որ Քրիստոսի վերոհիշյալ առաքյալները՝ Ադդան, Ագգան, Ախան, Պկիդան գործել են մ. թ. I դ. վերջերին և կամ ավելի ուշ II դ. սկզբներին[26]: Չէր կարող պատահել, որ I դ. վերջերին քրիստոնեական կրոնն իր հետևորդներն ունենար Տիզբոնում: Ինչպես նախօրոք ասել ենք և նույնիսկ հաշվումներով ցույց տվել, այս անձնավորությունները գործել են I դ. վերջերին, իսկ Մար Մարին՝ հավանաբար III դ. առաջին տասնամյակներին, մանավանդ վարքը այդ մասին է վկայում:

Եվ եթե Մար Մարիի Վարքը, ինչպես ասել ենք, շարադրվել է այն ոգով, որ ամբողջ արևելյան, մանավանդ նեստորական եկեղեցու կենտրոնն է ներկայացվել Տիզբոնը կամ ավելի ճիշտ Տիզբոնի կաթողիկոսական աթոռանիստ վանքը, ապա «Ադիաբենի եկեղեցու պատմության» մեջ այնպես է նկարագրված, որ Տիզբոնը և ընդհանրապես պարսկական բազում քաղաքներ քրիստոնեություն են ընդունել Ադիաբենի եպիսկոպոսի և կամ Ադիաբենից գնացած քարոզիչների միջոցով:

Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ երկու եկեղեցիների այս տարբեր ձգտումներն արտացոլում են ժամանակի ընթացքում կազմավորված տարբեր մտայնություններ. և նրանցից վերջինը, այսինքն՝ Ադիաբենի եպիսկոպոսական աթոռի հետ կապված ղրույցները իրենց հիմքում ավելի հին են և ավելի մոտ պատմական ճշմարտության, որովհետև միայն IV դարից սկսյալ Տիզբոնի եպիսկոպոսությունը կաթողիկոսություն է դառնում, օգտվելով, անշուշտ, այն հանգամանքից, որ պետա-

---

Սելևկիայից: Իրականում «Քոկեն» Տիգրիս գետի նախկին հունն է եղել, որովհետև գետը իր ընթացքը փոխել էր 79—116 թթ. միջև: Այս մասին տե՛ս J. M. Fiey, Jalons pour une histoire de l'église en Iraq, Louvain, 1970, p. 40.

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում, էջ 42:

կան իշխանության մայրաքաղաքում լինելը հնարավորություն կտար իր միջնորդությամբ լուծելու եկեղեցական որոշ հարցեր։

Դեռ II դ. վերջերին Տիզբոնում կազմավորված համայնքներ գոյություն չեն ունեցել և ընդհանրապես մինչև պարթևների անկումը, ինչպես ցույց է տալիս Մշիխա Զեխան մեզ հայտնի իր երկում, Տիզբոնում դեռ գոյություն չեն ունեցել քրիստոնեական համայնքներ, որովհետև աղբյուրում հիշատակված են պարսկական տիրապետության մեջ մտնող այն քաղաքները, որոնք այն ժամանակ ունեցել են եպիսկոպոսական աթոռներ և համայնքներ։ Ահա դրանց մեջ չկա Տիզբոնի անունը. հիշատակում ենք այդ քաղաքների անունները. «(Արևելքում) կային քսան եպիսկոպոսներից ավելի. Բեյթ-Զաբդայի, Քարքա-դը-Բեյթ-Սլոխի, Քաշքարի, Բեյթ-Լափաթի, Հորմիզդ-Արտաշիրի, Պրաթ-Մայշանի, Հանիթայի, Հերբաթ-Գելալի, Արզունի, Բեյթ-Նիկթորի, Շահր-Քարդի, Բեյթ-Մեսկենեի, Հոլուանի, Բեյթ-Կետրայեյի, Բեյթ-Հեզաեյի, Բեյթ-Դայլումայի, Շիգարի և այլ քաղաքների (եպիսկոպոսներ), իսկ Մծբինն ու այլ քաղաքներ հեթանոսների վախից դեռ եպիսկոպոս չունեին»[27]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ Տիզբոնի անունը չկա և, ըստ երևույթին, քրիստոնյա քարոզիչները մինչ պարթևների անկումը չեն համարձակվել քարոզչական աշխատանքներ ծավալել Տիզբոնում՝ վախենալով մոգերից ու պարթևական պետության ղեկավարներից։ Միայն նրանց անկումից հետո, օգտվելով Սասանյան կայսրության հիմնադիր Արտաշիրի բարյացակամությունից, նրանք ոչ միայն թափանցում են մայրաքաղաք, այլև մտածում են կաթողիկոսական աթոռ հիմնել։ Անշուշտ, այն շատ ավելի ուշ է հնարավոր դառնում հիմնել, բայց ըստ Մշիխայի, այդ նպատակով III դ. երրորդ տասնամյակից քրիստոնյաները սկսում են գործել։ Ահա թե ինչ է գրված այդ մասին ասորական աղբյուրներում. «Երբ Արշակունի պարթևների տիրապետությունը վերջ գտավ աստուծո օգնությամբ, ինչպես տեղում կպատմենք, քրիստոնյաները իրենց համար կաթողիկոս ուզեցին ունենալ»[28]։

Այս վկայությունից պարզ երևում է, որ Արշակունիների անկումից հետո միայն քրիստոնյաները աշխուժանում են և ուզում են, անկասկած, սասանյանների մայրաքաղաքում իրենց համար եկեղեցական կենտրոն ստեղծել կաթողիկոսական իրավունքներով։ Տիզբոնում առա-

---

[27] Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ), էջ 83—84։

[28] Նույն տեղում։

ջին քրիստոնեական համայնքի ստեղծման մասին վկայություն կա Մշիխա Զեխայի նույն պատմության դրքում: Միայն Արտաշիրի մահից հետո, նրան հաջորդած Շապուհ Ա-ի (241—272 թթ.) թագավորության օրոք է Տիզբոնում կազմավորվում հավատացյալների առաջին խումբը: Ահա թե ինչ է պատմում մեզ ասորական աղբյուրը. «Այս ժամանակ մահացավ պարսիկների արքա՝ Արտաշիրը, և Շապուհը հաջորդեց նրան: Վերջինս ի բնե քիչ համբերող էր: Իր թագավորության առաջին իսկ տարում պատերազմեց Խուարզմիանների (սրանք ապրում էին Տաբարիստանի և Մազենդերանի հյուսիսում) և լիռներում (բնակվող) մեդացիների դեմ և հաղթեց նրանց ահավոր մի ճակատամարտում...: Շապուհի բանակում մի մեծահարուստ քրիստոնյա կար, որը Գանզիան էր կոչվում. նա երբ Ադիաբենե եկավ ու տեսավ, որ (մեր) երկրում ու նրա գյուղերում բազում քրիստոնյաներ կան, Շախլուփային (Ադիաբենի եպիսկոպոսին) խնդրեց, որ նա Տիզբոն գնա, այնտեղի փոքր համայնքի եղբայրների մոտ, որը սկսել էր (նոր) կազմավորվել»[29]:

Եվրոպացի պատմաբաններից Ֆին կարծում է, որ այս ղրույցը առաջացել է ավելի ուշ, երբ Ադիաբենի եկեղեցական աթոռը ձգտել են ցույց տալ որպես Արևելքի մայր աթոռ[30]: Այս հարցում համաձայն չենք պատմաբանի հետ, որովհետև մեզ ծանոթ բոլոր փաստերը, իրար, խոսում են այն մասին, որ մինչև սասանյանների իշխանության գլուխ անցնելը, այսինքն՝ մինչև Հույների թագավորության 535 թ.-ի Նիսան (ապրիլ) ամսի 27-ը, չորեքշաբթի օրը[31], երբ սասանյանների Արտաշիր արքան նստեց արքայական գահին, Տիզբոնը արևելյան քրիստոնեական եկեղեցու կազմավորման ու ստեղծման գործում ոչ մի դեր չի ունեցել: Տիզբոնում եկեղեցին միայն III դ. վերջից, այն էլ Պապա եպիսկոպոսի օրոք, որը հետո «Արևելքի» եկեղեցու առաջին կաթողիկոսը դարձավ, սկսեց իր դերը:

Մ. թ. II դ. վերջերին և III դ. Արևելքի երկրներում քրիստոնեական վարդապետության տարածման գործում էական դեր են կատարում Անտիոքը, Եդեսիան և Արբելան: Այս քաղաքներից Արբելան անմիջական կապերի մեջ էր պարսկական մյուս քաղաքների հետ, որովհետև ինչպես Անտիոքը, այնպես էլ Եդեսիան համարյա միշտ եղել են հռոմեական

---

[29] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Շախլուփա եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 86:

[30] *J. M. Fiey*, Jalons, p. 47.

[31] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Խիրան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 83:

քաղաքական ազդեցության տակ, և որպես այդպիսիք, բնական է, որ հռոմեական և պարսկական տիրապետության տակ եղող քաղաքները չէին կարող կապի մեջ լինել և այնտեղ քարոզչական աշխատանքներ ծավալել, ուրեմն, քրիստոնեական այս կենտրոններից միակ քաղաքը Արբելան էր, որտեղից կարող էին քարոզչական նպատակներով պարսկական քաղաքները գնալ և գործել։ Մեզ հասած ասորական վարքերում, որոնց մեջ նկարագրված են քրիստոնյա գործիչների ճանապարհորդությունները, տեսնում ենք, որ Արբելայից և հեռուներից Մծբին եկած քրիստոնյա գործիչները հիմնականում պարսկական քաղաքներն են գնացել Արբելայի վրայով, որովհետև միջազգային առևտրական քարավանները այդ ճանապարհով էին անցնում, այսինքն՝ Առևմուտքից և Հեռավոր արևելքից եկած առևտրական քարավանները իրենց ապրանքները բերում էին Մծբին, իսկ Արևելքից եկած վաճառականները իրենց ապրանքները վաճառելուց հետո, բեռներով Մծբինի վրայով գնում էին Արբելա և այստեղից էլ՝ Պարսկաստանի խորքերը։ Արբելան այն միակն միջանցիկ կայանի դեր էր կատարում Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող միջազգային առևտրական հարաբերություններում, այլև մետաքսի իր արտադրությամբ խոշոր մասնակցություն էր ունենում շուկաներում։ Արբելայի մետաքսը ինչպես Արևմուտքի, այնպես էլ արևելյան շուկաներում մեծ պահանջարկ ունեցող ապրանքներից մեկն էր, և պատահական չէ, որ IV դ. սկզբներին Արևելքի խոշորագույն գործիչներից մեկը՝ Միլես եպիսկոպոսը Մծբինում Հակոբ Մծբնացի հայրապետի կողմից կառուցվող մեծ տաճարի կարիքների համար գնաց Եդեսիա և Արբելայից մեծ քանակությամբ մետաքս ուղարկեց[32]։

Պատահական չէր, անշուշտ, ինչպես ասացինք, որ քարոզիչները առևտրական հայտնի ճանապարհներով էին գնում, և շատ անգամ այդ նույն առևտրականներն են եղել քրիստոնեական կրոնը պարսկական քաղաքներում տարածողները։ Նրանք իրենց բեռների հետ տարել են նաև նոր վարդապետության հավատալիքներն ու «Սուրբ Գրքերը»։ Այնպես որ մենք չենք կասկածում «Ադիաբենի եկեղեցական պատմության» հաղորդած վկայությունների ճշմարտացիությանը և համոզված ենք, որ, իրոք, Ադիաբենը պարսկական քաղաքների հետ անմիջական կապ պահպանելու հնարավորություն ուներ։

Ճիշտ է, եվրոպացի պատմաբաններից ոմանք Մշիխա Զխեալի պատմական այս երկի որոշ մասերը կասկածի տակ են առել և թերա-

---

32 Աբրահամու Եռատովանողի «Վկայք Արևելից», էջ 181։

հավատությամբ են մոտեցել նրա հաղորդած պատմական որոշ փաստերին[33], բայց ոչ մեկը չի կասկածել պարթևների անկման, ապա Սասանյանների իշխանության հաստատման և նրանց քաղաքական գործունեության վերաբերյալ հաղորդած տեղեկությունների ճշմարտացիությանը[34]: Երբ ծանոթանում ու քննում ենք Մշիխա Զեխայի հաղորդած տեղեկությունները, տեսնում ենք, որ դրանք հեղինակը վերցրել է այնպիսի մի աղբյուրից, որը շարադրված է ականատեսի կողմից և արտացոլում է տվյալ ժամանակի հետ կապված դատողություններ ու նույնիսկ մանրամասնություններ: Այնպես որ, մենք ոչ մի հիմք չենք գտնում կասկածելու նաև Տիզբոնի եկեղեցու կազմավորման վերաբերյալ նրա հաղորդած տեղեկություններին և գտնում ենք, որ այն դրի է առնված ոչ թե հետագայում հորինված ինչ-որ զրույցի, այլ իրականության հիման վրա: Հետագայում նման զրույց չէր կարող հորինվել, որովհետև, ինչպես ուշ շրջանում գրված Մար Մարիի վարքում տեսանք, այն ցույց է տալիս Տիզբոնի մեծությունը և նրա կատարած էական դերը, իսկ «Ադիաբենի եկեղեցու պատմության» մեջ արտացոլվել են մինչ Տիզբոնի կաթողիկոսական աթոռ դառնալու հետ կապված փաստերը, այսինքն՝ ավելի հին են և ավելի մոտ ճշմարտության:

Այսպես, ուրեմն, Շապուհ Ա-ի բանակի կարևոր դեմքերից, հավանաբար զորավարներից, մեկը՝ Գանզխանը, խնդրեց Ադիաբենի Շախլուփա եպիսկոպոսին, որ գնա ու օգնի Տիզբոնի փոքր համայնքին: Շախլուփան, ըստ այս աղբյուրի, տատանվում էր, սակայն Գանզխանը նրան վստահեցրեց ու հանգստացրեց, և Շախլուփան, «հույսը աստծու վրա դնելով», ճանապարհ դուրս եկավ, իր հետ տանելով լուծ (հիվանդությունից) բուժած Նակիխային և իր երկու սարկավագներին: Սակայն ճանապարհին նրանց հանդիպեցին արաբ ավազակներ, որոնք բռնեցին նրանց ու իրենց հետ տարան: Չորս ամիս Շախլուփա եպիսկոպոսը գերության մեջ մնաց արաբների մոտ և, ի վերջո, հաջողվեց նրան փախչել և «գնալ հարուստ քաղաք՝ Տիզբոն»: Քաղաքում քրիստոնյաները իմանալով Շախլուփայի գալուստը, հավաքվեցին նրա մոտ: Նա իր խոսքերով քաջալերեց նրանց և մեկին էլ քահանա ձեռնադրեց: Այդ օրերին պարսիկների Շապուհ արքան մեկնում է արշավանքների և այդ արշավանքները տևում են երկու տարի: Հավանաբար, խոսքը, այստեղ, նրա գահ

---

[33] *A. Vööbus.* History of the asceticism in the Syrian Orient, Louvain, 1958, p. 5.

[34] *J. M. Fiey*, Jalons, p. 38,

բարձրանալուց անմիջապես հետո, 241—243 թթ. պատերազմական գործողությունների մասին է։ Նվ ահա նույն աղբյուրի վկայությամբ, այս երկու տարիների ընթացքում Շախլուփան գործում է Տիզբոնում։ Հավանաբար կարողանում է եկեղեցի կառուցել ու հավատացյալների հոտը կազմակերպել, կարգ ու կանոն ստեղծել նրանց մեջ ու, անշուշտ, շարունակել է քարոզչական աշխատանքները։ Շապուհի վերադարձից հետո, Շախլուփան ևս Արբելայից եկած սարկավագների ուղեկցությամբ մեծ հանդիսավորությամբ մեկնում է իր աթոռը։ «Սելևկիայի ու Տիզբոնի քրիստոնյաները նրան արցունքով ճանապարհ դրեցին և վիշտը լցրել էր նրանց սիրտը։ Նրանք այդ րոպեին նման էին առաքյալներին, ճիշտ այնպես, ինչպես երբ նրանք դիտում էին մեր Տիրոջ երկինք համբարձումը»[35]։

Այս բոլորի մեջ շինծու ոչինչ չենք գտնում. և եթե այս տեղեկությունները գրի առնող հեղինակը ցանկանար շեշտել Ադիաբենի եպիսկոպոսական աթոռի առաջնությունը, ապա այդ դրույցը այլ կերպ շարադրված կլիներ։ Բացի այդ, պատմությանը հայտնի չեն այնպիսի փաստեր, որոնք ապացուցեին, որ Ադիաբենի եկեղեցին երբևէ ձգտել է առաջնության։ Համոզված ենք, որ Տիզբոնում պարթևների անկումից հետո, երբ սասանյանները իշխանությունը իրենց ձեռքը վերցրին, եթե մայրաքաղաքում եպիսկոպոս լիներ և կամ եպիսկոպոսական աթոռ, ապա այդ մասին աղբյուրը անպայման կնշեր։ Համենայն դեպս, IV դ. սկսյալ, երբ Տիզբոնը դառնում է կաթողիկոսություն կամ պատրիարքություն, Ադիաբենի թեմը չի կորցնում իր նշանակությունը և դրանից հետո էլ շարունակում է կարևոր դեր խաղալ պարսկական տիրապետության մեջ մտնող եկեղեցիների կյանքում։ Ադիաբենը հետագայում, հատկապես V դ. սկսյալ դառնում է ոչ միայն նեստորական եկեղեցու, այլ աղանդավորական շարժումների, մանավանդ «մեսալյան» կամ, ինչպես հայկական աղբյուրներում այն հայտնի է, «մծղնեական» շարժման կարևոր ամրոցներից մեկը և այդպիսին էլ մնում է մինչև ուշ միջնադարը։

Համենայն դեպս, պարսիկների Շապուհ Ա արքայի մահից հետո, **դեռ Վահրամ Բ-ի (273—293 թթ.) ժամանակ էլ, Տիզբոնը չուներ իր եպիսկոպոսը, և «մի օր Տիզբոնից ուղարկված քրիստոնյա պատգամավորները Ախադաբուհուն գտան ու խնդրեցին, որ նա Շախլուփայի օ-**

35 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Շախլուփա եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 85։

րինակով, որը նրան նախորդել էր, գա իրենց մոտ քարոզի, սովորեցնի և (ցույց տա) բարի վարքի ուղին, քաջալերի, և մի քիչ էլ մխիթարի իրենց։ Նրանք (Տիզբոնի քրիստոնյաները) հինգ հավատարիմ ու աստվածավախ մարդկանց էին ընտրել, որպեսզի նրանց ձեռնադրի։ Գործունյա ու ժրաջան վաճառականի նման, որ անընդհատ մտածում է բազմացնել իր ունեցվածքը, նա նրանց խնդրանքին ղիջելով, այս մարդկանց ձեռնադրեց։ Նա ընկերացավ մայրաքաղաք գնացող պատվիրակներին, Հերբաթ-Գելալի եպիսկոպոս Ջեխա-Յաշուղի և Բեյթ-Զաբդեի եպիսկոպոս Շաբթայի հետ։ Նրանք այնտեղ մի տարի ապրեցին և ինչպես սովորություն էր, մոլորյալներին ուղղության բերեցին»[36]։

Այնուհետև այս աղբյուրում հետաքրքիր մանրամասնություններ կան Բեյթ-Զաբդեի եպիսկոպոս Շաբթայի՝ Տիզբոնում ծավալած քարոզչական աշխատանքների, այդ կապակցությամբ առաջացած դժվարությունների ու այնտեղ ապրող քրիստոնյաներին սպառնացող վտանգի մասին[37]։ *Բայց որովհետև դրանք մեր նյութից դուրս են, դառնանք Ադիաբենի եպիսկոպոս Ախադաբուհու՝ Տիզբոնում կատարած գործերին։*

Մշիխա Ջեխայի վկայությանը հետևելով նախ ծանոթանանք Պապայի եպիսկոպոսական աստիճան ստանալու հանգամանքների հետ. «Տիզբոնի (քրիստոնյա) բնակիչները նրանից (Ախադաբուհուց) խնդրեցին, որ նա շտապ իրենց համար եպիսկոպոս ձեռնադրե, որպեսզի նա (եպիսկոպոսը) միշտ իրենց հետ լինի։ Նրան ասացին, որ «այստեղ շատ քրիստոնյաներ կան, և մեր մեծ տեր եպիսկոպոսները մեզանից հեռու են, և չեն կարող մեզ (օգնել), արդարության շավիղներով մեզ առաջնորդել, և հոգևոր, և ֆիզիկապես միշտ մեզ հետ լինել»։ Նա ուրախությամբ նրանց խնդրանքին ընդառաջեց և Սուսի եպիսկոպոս Խայ-Բաղալին (այդ մասին հայտնեց)։ Երկուսն էլ համաձայնվեցին ու ընտրեցին ասորի Պապային, որը շատ գիտուն ու իմաստուն մարդ էր»[38]։

Այս ավանդությունը խոսում է այն մասին, որ Տիզբոնը սկզբնական շրջանում քրիստոնեական խնդիրների կապակցությամբ կախում է ունեցել Ադիաբենից։ Եվ ընդհանրապես Տիզբոնի և նրա շրջակայքում

---

36 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Ախադաբուհի եպիսկոպոսի ժամանակ) էջ 90։*

37 *Նույն տեղում։*

38 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Ախադաբուհի եպիսկոպոսության ժամանակ), էջ 91—92։ Ուրեմն, Պապան եպիսկոպոս է ձեռնադրվել մինչև 291 թ., իսկ կաթողիկոս է դարձել 310 թ. հետո, Շարիղայի օրոք։ Տե՛ս նույն տեղը, էջ 93։*

ապրող քրիստոնյաների և, մասնավորապես, այդ շրջանի եկեղեցական հարցերով պրաղվել են Ադիաբենից եկած քարոզիչներն ու եպիսկոպոսները: Մենք գտնում ենք, որ այս երևույթը և՛ տրամաբանական է, և՛ պատմական, որովհետև քրիստոնյա գործիչները պարսկական տիրապետության մեջ հիմնականում, ինչպես ասացինք, կարող էին գործել Ադիաբենից, որովհետև Ադիաբենն այն ժամանակ, և համարյա միշտ, եղել է պարսկական ազդեցության ոլորտներում, մինչդեռ Արևելքի մյուս քրիստոնեական կարևոր կենտրոններից՝ Անտիոքն ու Եդեսիան, որոնք Հռոմեական ազդեցության ոլորտներում էին գտնվում, չէին կարող, առնվազն լրտեսական մեղադրանքների տակ չընկնելու համար:

Այս տեսակետից էլ գտնում ենք, որ ճիշտ չեն Մար Մարիի վարքում պահպանված այն տեղեկությունները, որոնց համաձայն Մար Մարին է Տիգրոնի կամ Տիգրոնին կից հիմնված Դեյր (վանք)-Քոկեի եկեղեցու հիմնադիրը: Ճիշտ չէ ասորական վարքերից մեզ հասած այն տեղեկությունը, որ Մար Մարին իրեն հաջորդ ձեռնադրեց IV դ. գործիչ և առաջին կաթողիկոս Պապային[39]:

Եթե հավատալու լիներնք Մար Մարիի վարքի տեղեկություններին[39], նա իր քարոզչական աշխատանքները սկսել է դեռ պարթևների թագավորության անկումից առաջ, նրանց վերջին թագավոր՝ Արտավան Ե-ի օրոք, ուստի չէր կարող պատահել, որ նա իրեն հաջորդ ձեռնադրած լիներ 310 թ. ապրած Պապային, որը նախ Տիգրոնի եպիսկոպոսն էր և ապա կաթողիկոս Արևելքի (310—329 թթ.)[40]: Այնպես որ, Պապան ժամանակակիցը չէր Մար Մարիին և սա չէր կարող եպիսկոպոսական աստիճան ունեցած լինել: Որ Պապան IV դ. սկզբում ձգտել է կաթողիկոսության, այդ մասին վկայում է ասորական մի այլ աղբյուր ևս՝ Մար Միլեսի վարքը[41]: Ըստ ասորական այս վարքի, Մար Միլես եպիսկոպոսը ծնվել է «Ռաղիկա» երկրում[42]: Երբ մեծանում է, գնում է Բեյթ Լափատ քաղաքը և այնտեղից էլ Ղիլմ քաղաքը: Այստեղ երեք տարի քարոզչական աշխատանք կատարելուց հետո, եպիսկոպոս է ձեռնադրվում Բեյթ Լափատի եպիսկոպոս Ղազից: Եվ որովհետև Ղիլմ քաղաքում մո-

---

39 *Bedjan*, Acta mart. et sanct., t. I. p. 88.

40 *J. M. Fiey*, Jalons, p. 71.

41 *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 263.

42 Մեզ հասել է ասորերեն այս վարքի հայերեն հին թարգմանությունը, «Աբրահամի Խաստավանդի Վկայք Արևելից», աշխատ. Դ. Տէր Մկրտչեանի, էջմիածին, 1921, էջ 78: Այս թարգմանության մեջ «Ռաղիկա աշխարհ» փոխարեն դրված է «Վրկանաց աշխարհ». այսպես՝ «ի Վրկան աշխարհէ»:

գերը սկսում են նրան նեղել, ապա անխնա հալածել, ուստի ստիպված լքում է այդ քաղաքը և երկար ճանապարհորդությունից հետո՝ Երուսաղեմ, Եգիպտոս և այլ քաղաքներ, գալիս է Մծբին և այնտեղ ծանոթանում է Մծբինի նշանավոր եպիսկոպոսներից Հակոբ Մծբնացու հետ[43], որն այն ժամանակ քաղաքի եպիսկոպոսն էր և նոր եկեղեցի էր կառուցում։ Այստեղ միաժամանակ մնալուց հետո գնում է «Խեդայաբ», և, ինչպես նույն մեր այս աշխատության մեջ գրել ենք, այստեղից էլ մեծ քանակությամբ մետաքս է ուղարկում Մծբին՝ կառուցվող եկեղեցու կարիքների համար։ Խեդայաբից ուղևորվում է Բեյթ Արամեի[44] այլ քաղաքները և, ի վերջո, գալիս է Տիզբոն։ Տիզբոնում Միլես եպիսկոպոսը մեղ հայտնի պատճառներով վեճի է բռնվում Տիզբոնի եպիսկոպոս Պապայի հետ։ Ահա թե ինչ է գրված այդ վարքում. «Չոգաւ դիպեցաւ հակառակութեան մեծի եպիսկոպոսի Սղակայ (ասորերեն բնագրում Սլիկ) և Տիզբոնի, որոյ անուն էր Պապա, որդի Գագեայ (ասոր. բնագիր «Բար Ղագի»), և եռես ի հակառակութեամբ կայր ընդդէմ եպիսկոպոսաց բազմաց, և անարգէր զերիցունս և զսարկաւագունս իւրոյ քաղաքին։ Ի վերայ եհաս իրաց առն, ի յԱստուծոյ անկեալ էր և զնոցանէ հայհոյութիւնս խաւսէր»[45]։

Մեզ հետաքրքրողը, անշուշտ, այն է, որ Տիզբոնի եպիսկոպոս Պապան հիշատակվում է նույնպես որպես IV դ. առաջին տասնամյակներին ապրած անձնավորություն, մի փաստ, որ համապատասխանում է իրականության, և այս հարցում մի անգամ ևս հաստատում է Մշիխա Զեխայի հաղորդած վկայության ճշմարտացիությունը։ Մշիխա Զեխան, բարեբախտաբար, մեզ թողել է այնպիսի տեղեկություններ, որոնք շատ արժեքավոր են և, մեր կարծիքով, արտացոլում են իրական այն անցուդարձերը, որոնք տեղի են ունեցել Պապայի եպիսկոպոսական իրավունք-

---

[43] Ըստ «Եդեսիայի ժամանակագրության» Հակոբ Մծբնացին մահացել է հունների 649 թ. (մ. թ. 338 թ.)։ Այս մասին տե՛ս „Эдесская хроника", „Палестинский сборник", 4 (67), 1959, стр. 90.

[44] Բեյթ Արամեի փոխարեն հայերեն հին թարգմանության մեջ գրված է «Ասորեստան»։ Հայ թարգմանիչը, ուրեմն, «Ասորեստանն» ասելով հասկացել է «Բեյթ Արամեի» երկիրը։ Իսկ ասորի հեղինակները սասանյան տիրապետության ժամանակ «Բեյթ Արամե» ասելով հասկացել են այն բոլոր եկեղեցական թեմերը, որոնք եղել են Տիզբոնի նեստորական կաթողիկոսության իշխանության ներքո։

[45] «Աբրահամի Խոսրովանողի Վկայք Արևելից», էջ 181։ Ասորական այլ աղբյուրներից իմանում ենք, որ Մար Միլես եպիսկոպոսը դեմ էր Տիզբոնի եպիսկոպոսական աթոռին, այսպես՝ «ի Վրկան աշխարհէ»։

ներ ձեռք բերելուց հետո, Տիզբոնի եպիսկոպոսական աթոռը կաթողիկոսական իրավունքներով օժտելու կապակցությամբ: Նախ տեսնենք, թե ինչ է գրում ասորի պատմիչը. «Արևելքի եպիսկոպոս Պապային, որ ապրում էր մայրաքաղաքում (Տիզբոնում) որոշ եպիսկոպոսներ արտաքին (ոչ եկեղեցական, այլ պետական) գործերի համար դիմում էին նրա օգնությանը: Ուստի այդ կապակցությամբ մտածեց բոլոր եպիսկոպոսների վրա գերիշխանություն ունենալ և դառնալ նրանց միակ ղեկավարը: Դրա վրա, մայրաքաղաքի քահանաներն ու ժողովուրդը հավաքվեցին ու ուզեցին նրան գահընկեց անել: Նույնիսկ նրա ավագ սարկավագը՝ Սիմոնը այս նորաձևությունը մերժեց և (այդ մասին) տեղեկացրեց Մուսի Միլես (եպիսկոպոսին), Քարքա-դը-Բեյթ-Սլոխի՝ Ղևաբ-Ալլահին, և շատ ուրիշներին»[46]:

Ինչպես տեսնում ենք, այս վկայությամբ պարզվում է, թե ինչո՞ւ է վեճ առաջացել Տիզբոնի եկեղեցականների, Միլես եպիսկոպոսի և Պապայի միջև: Հասկանալի է, որ Պապան օգտվելով հանգամանքից և գուցե նաև պարսիկ ղեկավարների թելադրանքով, փորձում է պարսկական տիրապետության մեջ մտնող եկեղեցիները միավորել և Տիզբոնում մեկ կենտրոն ստեղծել: Դա անհրաժեշտ էր ոչ միայն տարբեր քաղաքներում ու երկրներում ցրված եկեղեցիները միավորելու ու միասնական մեկ ուժ դարձնելու, այլ նաև քաղաքական նպատակներով, որովհետև եթե քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ զգալի ուժ էր, և կայսրության շահերից ելնելով նրանք մտածում էին այդ ուժը ծառայեցնել իրենց պետության շահերին: Ապա այդ հանգամանքը նկատի ունենալով, պարսիկները ևս ընդառաջել են Պապայի ցանկություններին, և գուցե ինքը անհրաժեշտությունն է թելադրել այն, մանավանդ, ինչպես աղբյուրն է նշում, իրապես շատ եպիսկոպոսներ իրենց հարցերը լուծելու համար ստիպված էին դիմել Տիզբոնի եպիսկոպոսի միջնորդությանը: Հասկանալի է, որ նման պայմաններում ծագեր կաթողիկոսական կամ պատրիարքական իշխանության ստեղծման կարիքը, մանավանդ որ Արևմուտքում կային արդեն Անտիոքի, Ալեքսանդրիայի, Հռոմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունները[47]: Բնական է, որ դրանց կողքին

---

46 Հ. Մելոնյան, Ասորական աղբյուրներ (Շարիղա եպիսկոպոսի ժամանակ), էջ 93:

47 «Պատրիարք» բառը հունարեն է, որը նշանակում է «ընտանիքի կամ ցեղի հայր, նահապետ, պետ» և այլն, IV դ. սկսյալ Արևելքում այն տրվել է նախապես բոլոր եպիսկոպոսներին անխտիր, որպես մարդու անձնական պատվանուն: Ենթադրվում է, որ այն որպես «եկեղեցապետ» սկսել է օգտագործվել Նիկիո առաջին Տիեզերական ժողովից հետո: Մանրամասն այդ մասին տե՛ս J. M. Fiey, Jalons, p. 71.

պարսիկները կուզենային անկախ պատրիարքություն ունենալ՝ իրենց դերիշխանության տակ ապրող քրիստոնյաներին հռոմեական ազդեցության չենթարկելու համար։ Եվ այսպես, Պապայի օրոք ստեղծվում է Արևելքի, ավելի ճիշտ պարսկական տիրապետության մեջ մտնող քրիստոնյաների կաթողիկոսությունը[48]։ Կաթողիկոսական իշխանության հիմնումը դիմադրության է հանդիպել և երկպառակության պատճառ դարձել ինչպես աթոռի ներսում, այնպես էլ դրսում՝ այլ եպիսկոպոսությունների շրջանում։ Պապայի այդ որոշման դեմ են դուրս եկել նախ մայրաքաղաքի քահանաներն ու հավատացյալները և նույնիսկ ուղում էին նրան գահընկեց անել։ Ըստ երևույթին, Պապայի դեմ շարժումը գլխավորում էր Տիզբոնի քրիստոնյա գործիչներից հայտնի ավագ սարկավագ Սիմոնը, որը հակառակվեց ու եպիսկոպոսներին այդ մասին հայտնեց։ Անկասկած, այն ժամանակ կարևոր դեմքերից էր նաև Սուսիի եպիսկոպոս Միլեսը, որն, ինչպես տեսանք իր վարքից, անմիջապես եկել էր մայրաքաղաք ու փորձել կասեցնել Պապային իր որոշումից, բայց ապարդյուն, թեև Միլեսի վարքում այնպես է ներկայացված, որ Միլեսը անիծում է Պապային և վերջինս դառնում է անդամալույծ ու 12 տարի հետո մահանում է[49]։ Բայց այդ վկայությունը չի համապատասխանում իրականությանը։ Փաստորեն, դրանից հետո Պապան երկար ժամանակ մնում է իր աթոռին, իսկ անդամալույծ վիճակում նա չէր կարող կաթողիկոսական գործերը վարել։ Մշիխա Զեխան պատմում է, որ Պապան երբ իմացավ, որ Սիմոնը դեմ է Տիզբոնի եպիսկոպոսական թեմը կաթողիկոսության վերածելու, «շատ վախեցավ, որովհետև Սիմոնի ծնողները շատ մոտիկ էին արքային և բոլորից էլ հարգված։ Ուստի նա Արևմուտքի եպիսկոպոսներին, ինչպես նաև Եդեսիայի եպիսկոպոս Սաղդային նամակ գրեց։ Բոլորը համաձայնվեցին, որովհետև գիտեին, որ Սիմոնը սոսկալի մարդ է և նրանից պետք է վախենալ, բայց խոստացան Պապային պաշտպանել Կոստանդիանոս արքայի առաջ։ Որովհետև նրանք (եպիսկոպոսները) հասկանում էին, որ լավ կլինի եթե մայրաքաղաքի եպիսկոպոսը Արևելքի բոլոր եպիսկոպոսների վրա դերիշխանություն ունենա։ Ուստի իրենց թագավորների ու Արևմուտքի մեծամեծների անունից նրան (Կոստանդիանոսին) այս խնդրի շուրջ

---

[48] Եվրոպացի նույն պատմաբանը կարծում է, որ «կաթողիկոս» ընտրյալ, բայց ոչ օծված պատրիարքին էին ասում, Նեստորական Հովսեփ կաթողիկոսի 554 թ. գումարած ժողովում այսպիսի որոշում կա՝ կաթողիկոսը մինչև իր օծումը «պատրիարք» տիտղոսը օգտագործելու իրավունք չունի։ Տե՛ս նույն տեղում, էջ 80։

[49] *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 266.

նամակ գրեցին, ասելով «որ ինչպես Արևմուտքում, այսինքն Հռոմեական կայսրության մեջ բաղում պատրիարքներ կան՝ Անտիոքի, Հռոմի, Ալեքսանդրիայի և Կոստանդնուպոլսի, այնպես էլ Թող Արևելքում, Պարսկական տիրապետության մեջ առնվազն մեկ պատրիարք լինի»[50]:

Այս վերջին հատվածը, մեր կարծիքով, պատմիչը շարադրել է շատ ավելի ուշ և գուցե նաև VI դ. կազմած զրույցների հիման վրա, այսինքն՝ 431 թ. Եփեսոսի Տիեզերական 3-րդ ժողովից հետո, երբ նեստորական եկեղեցին, անջատվելով մյուս եկեղեցիներից որպես առանձին ինքնուրույն եկեղեցի, կարիք ուներ ապացուցելու, որ պարսկական տիրապետության մեջ մնող արևելյան եկեղեցին օրինավորապես Արևմուտքից ճանաչված եկեղեցի է և իր իրավունքներով հավասար է պատրիարքական մյուս աթոռներին: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ Արևելյան այս կաթողիկոսությունը հակադրվել է Արևմուտքին, պարսիկների մոտ կասկածի տեղիք չտալու համար: Ի վերջո Պապան, օգտվելով պարսկական արքունիքի բարյացակամ վերաբերմունքից, հաստում է իր նպատակին և իրեն հռչակում Արևելքի կաթողիկոս: Մշիխա Զեխան այդ մասին գրում է. «Աստված, որ Ադամի մեղքի համար աշխարհ ուղարկեց իր միակ որդուն՝ Փրկչին, որպեսզի իսրայելացիները Եգիպտոսի հարվածներից իրենց ազատությունը գտնեն, նա, որ փշերից մրգեր աճեցրեց և մորենիներից ծաղիկներ ծաղկեցրեց, և նա, որ կարող է միշտ վատից լավը դուրս բերել, թույլ տվեց, որ իր աստվածային նախախնամությամբ ու պաշտելի ղեկավարությամբ Պապայի ցանկությունը կատարվի: Այսպես, նա դարձավ ամբողջ Արևելքի եպիսկոպոսների ու քրիստոնյաների գլխավոր հրամանատարը: Բոլոր (Արևելքի) եպիսկոպոսները հավանություն տվեցին Արևմուտքի որոշմանը, այն վախից, որ Արևմուտքի եպիսկոպոսները կարող են իրենց երկու հզոր թշնամիների միջև թողնել, Արևմուտքում՝ Հռոմի քրիստոնյաների կայսրի և Արևելքում՝ պարսիկների ամբարիշտ արքայի միջև»:

«Սակայն Պապայի ավագ սարկավագ Սիմոնը այս նորությունը չընդունեց և իր ծնողների միջոցով ուղեց արքային (համոզել), որ նա ի չիք դարձնի որոշումը: Սակայն Պապան խորամանկությամբ, հաճոյացրեց Սիմոնի հորը, նրան խոստանալով, որ իր մահից հետո, իրեն հաջորդ կնշանակի»[51]:

Մշիխա Զեխայի մոտ ոչ մի խոսք չկա այն մասին, թե նման փո-

---

[50] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Շրիղա եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 94:
[51] Նույն տեղում:

փոխությունները ինչպիսի՞ արձագանք են գտել Ադիաբենում և թե ի՞նչ դիրք է բռնել Շրիղա եպիսկոպոսը։ Համենայն դեպս, Պապայի մասին ասված դրական խոսքերը վկայում են, որ Ադիաբենի ժողովուրդն իր եպիսկոպոսով հանդերձ դեմ չի եղել այդ նորությունների, որովհետև քաղաքականապես պարսկական գերիշխանության ենթարկված Ադիաբենը միշտ էլ կարիք է ունեցել Տիզբոնում նման եկեղեցական ամուր կենտրոնի ստեղծման։ Համենայն դեպս, մեր այս ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ Հուլների 640 թ. (մ. թ 329 թ.) Պապայի մահվան կապակցությամբ Տիզբոնում հավաքվել եպիսկոպոսները, որոնք Պապային հաջորդ էին ընտրելու և այն որ այդ գործունեության ժամանակ նշանակալից դեր էր կատարում Ադիաբենի Յուհաննան եպիսկոպոսը, որը ձգտում էր ամեն կերպ Պապայի մահից հետո արժանի մի եկեղեցականի ընտրությունը կատարել։ Մշիխա Զնխան գրում է. «Մեր երկրի (Ադիաբենի) եպիսկոպոս՝ Յուհաննան այն ժամանակ իր հոտի հետ չէր, որովհետև Հուլների 640 թ.-ին (329 թ.), այլ եպիսկոպոսների հետ մայրաքաղաք (Տիզբոն) էր գնացել, ի վերջո հավատարիմ ու իմաստուն մի մարդու պատրիարք ընտրելու համար, որովհետև Սելևկիայի թեմը [պատրիարքական աթոռը], Մար Պապայի դժբախտ մահից հետո թափուր էր մնացել»[52]։

Ուշագրավ է, որ Ադիաբենի եպիսկոպոս Յուհաննանը ընտրությունից հետո ոսմիջապես չի վերադառնում իր աթոռը, այլ երկու տարի մնում է Տիզբոնում, անկասկած իր երկրի ու եկեղեցու հետ կապված հարցերը լուծելու համար[53]։

Դրանից հետո Շապուհ Բ-ի կողմից իր տիրապետության մեջ ապրող քրիստոնյաների դեմ կազմակերպված մասսայական հալածանքներն ու սպանությունները երկար տարիներ շարունակվեցին և բազում քրիստոնյա հայտնի գործիչների ու հավատացյալների մահվան պատճառ դարձան։ Այդ հալածանքները ծանր հետևանք ունեցան նաև Ադիաբենի եկեղեցու գործունեության վրա։

Ասորական աղբյուրներից իմանում ենք, որ «Շապուհի թագավորության 32-րդ տարում[54], նիսան ամսում[55], հալածանքի հրաման ե-

---

52 Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Յուհաննան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 97։

53 *Նույն տեղում*։

54 *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 248.

55 «Նիսան» ապրիլ ամիսն է։

ղալ»[56]։ Երբ Շապուհի այս հրամանը եղավ, Ադիաբենի եպիսկոպոս Յուհանանը գտնվում էր Բեյթ-Հուզայիյում։ Այդ հրամանով «կոչ էր արվում բոլոր երկրների մոգպետներին, որ անխղճորեն կոտորեն քրիստոնյաներին և նրանց բոլոր եկեղեցիները կործանեն»։ Միայն ասորական աղբյուրներում մի փոքր տարբերություն կա. եթե առաջին աղբյուրում Շապուհի այդ հալածանքի սկիզբը դրված է նրա թագավորության 32-րդ տարվա ապրիլ ամսին, ապա Մշիխա Զեխայի մոտ այդ հալածանքի սկիզբը համարվում է նույն Շապուհի թագավորության 31-րդ տարվա ապրիլի 6-ը։ Վերջին այս վկայությունը ավելի ճիշտ է և համապատասխանում է իրականությանը, որովհետև բազում այլ աղբյուրներ և մանավանդ Տիզբոնի եպիսկոպոս, Արևելքի կաթողիկոս կամ պատրիարք Շաւմղունի վարքը[57] նույնպես հաստատում է, որ Շապուհ արքան 341 թվի ապրիլի 6-ին, այսինքն իր թագավորության 31-րդ տարում է տվել քրիստոնյաների դեմ հալածանքի հրամանը[58]։

Այս հրամանի համաձայն սկսում է ոչ միայն հալածանքը, այլև զանգվածային ձերբակալություններ ու կոտորած ամբողջ պարսկական տիրապետության մեջ։ Սակայն, ինչպես «Արբելայի ժամանակագրությունից» իմանում ենք, Խեդայաբում այդ հալածանքը մի քիչ ավելի ուշ է սկսում, նույն երկրի մոգպետի կարգադրությամբ։ Ահա թե ինչ է գրված այդ մասին. «Խեդայաբի եպիսկոպոս Յոհանանը, որն այն ժամանակ Բեյթ-Հուզայիյում էր գտնվում, երբ իմացավ արքայի այդ հրամանի մասին, մեկնեց ու եկավ իր հոտի մոտ, իրեն վստահված ոչխարներն ու գառները արածացնելու համար։ Սակայն իր սիրտն ուրախությամբ լցվեց, երբ տեսավ, որ այն սուրը, որը պետք է մեր երկրի քրիստոնյաներին կոտորեր, դեռ իր պատյանի մեջ էր։ Որովհետև երկրի մոգպետ՝ Պագրասպը քաղաքի մեծամեծների հետ համաձայնվել էր մինչև Իլուլ (սեպտեմբեր) ամիսը՝ մինչև այգեկութի ավարտը քրիստոնյաներին չկոտորել»[59]։

Ուրեմն, այս վկայության համաձայն, Ադիաբենում ավելի ուշ ընկրկվեց հալածանքը, և դա եղավ անշուշտ Խեդայաբի խելամիտ ու հեռատես մոգպետի կամ կառավարիչի շնորհիվ, որովհետև Պարսկաստանի նշանակած այս պաշտոնյան հասկացել էր, որ նման հալածանքը կարող էր ծանր նստել երկրի և՛ տնտեսության, և՛ գյուղատնտեսության

[56] *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 248.

[57] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Յուհանան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 97—98։

[58] *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 128.

[59] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Յուհանան եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 98։

վրա, և այդ իսկ պատճառով նա փորձել է ոչ միայն հնարավորին չափ ձգձգել կոտորածը, այլև հնարավորին չափ քիչ քրիստոնյաների կոտորել: Համենայն դեպս, Խեդայաբի մոգպետի այս մոտեցումը ապացուցում է, որ երկրում արդեն քրիստոնյաները շատ էին և նրանք երկրի տնտեսական կյանքում կարևոր դեր էին կատարում: Բայց Պագրասպի մահով ամեն ինչ փոխվում է, և երկար տարիներ Ադիաբենում հալածանքը չի դադարում:

Իսկ ինչո՞ւ էր Շապուհը նման հալածանք սկսում իր գերիշխանության տակ ապրող քրիստոնյաների դեմ: Աղբյուրներից շատերը այն վերագրել են մոգերի կողմից կրոնամոլական զգացումների հրահրմանը, բայց «Արքելայի ժամանակագրությունը» այս տեսակետից լավագույն վերլուծությունն ու բացատրությունն է տալիս Շապուհ Բ-ի կողմից քրիստոնյաների նկատմամբ որդեգրած կրոնական հալածանքների պատճառների մասին: Նա գրում է, որ մոգերը «արքային հասկացրին, որ բոլոր քրիստոնյաները հռոմեների լրտեսներն են, և եթե նրանք իրենց այնտեղի (Արևմուտքի) եղբայրներին ոչինչ չգրեն, ապա իր տիրապետության մեջ ոչինչ չի պատահի, և (բացի այդ) նրանք (քրիստոնյաները) հարուստ են և ապահով կյանք ունեն, մինչդեռ արքայից արքան պատերազմների ու ճակատամարտերի պատճառած ծախսերի ծանրությունից կողոպտվել է, իսկ նրանք (քրիստոնյաները) պատերազմներից ազատ լինելով, միշտ խաղաղություն են վայելել»[60]:

Քրիստոնեության տարածումն ու պաշտոնապես ճանաչումը Հռոմեական կայսրության մեջ պարսիկներին ստիպում է, պետական շահերը նկատի ունենալով, քրիստոնյաների նկատմամբ փոխել իրենց քաղաքականությունը, մանավանդ որ այդ ժամանակ պարսկական տիրապետության տակ ապրող քրիստոնյաները չէին թաքցնում իրենց համակրանքը հռոմայեցիների նկատմամբ, ու այդ էր պատճառը, որ նրանք մեղադրվում էին «լրտեսության» մեջ: Անշուշտ, քրիստոնեական կրոնը ոմանց կողմից օգտագործվում էր լրտեսության նպատակով, սակայն, երբ խոսքը բոլոր քրիստոնյաների մասին է, ապա այն պիտի ընկալել այդ «համակրանքի» սահմաններում: Ինչ վերաբերում է քրիստոնյաների զինվորական ծառայությունից ազատ լինելուն, ապա այդ վկայությունը արժանի է հատուկ ուսումնասիրության: Իսկ ինչ վերաբերում է քրիստոնյաների հարուստ լինելուն, ապա դա, մեր կարծիքով, իրականությանը համապատասխանում է, որովհետև քրիստոնյաները պարսկական դեր-

---

[60] Հ. Մելիոնյան, *Ասորական աղբյուրներ (Յուհաննա եպիսկոպոսի ժամանակ)*, էջ 98:

իշխանության մեջ և՛ քաղաքներում, և՛ գյուղերում, և՛ մանավանդ միջազգային առևտրում, խոշոր և, կարելի է ասել, կարևորագույն դեր էին խաղում: Շապուհը, նկատելով, որ հալածանքի պատճառով պետական շահերն ու արքայական գանձատունը մեծապես տուժում է, իր հրամանի մեջ որոշ ուղղում կատարեց. այս անգամ կարգադրեց քրիստոնյաներից, այսինքն՝ հավատացյալներից առնել միայն կրկնակի հարկ: Այս հրամանով ոչ միայն փորձ էր արվում վերացնելու անիմաստ կոտորածներով երկրի տնտեսությունը քայքայող գործողությունները, այլ նաև կրկնակի հարկերով հարստացնել արքունի գանձարանը: Այդ մասին «Արբելայի ժամանակագրության» մեջ ասվում է. «Մոգերը արքայի միտքը փոխեցին իրենց զրպարտություններով, և նա կոտորելու իր նախորդ հրամանից բացի, կարգադրեց, որ քրիստոնյաները կրկնակի հարկ վճարեն»[61]:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ էր կատարվում Ադիաբենում: Մշիխա Զեխան գրում է, որ «Խեդայաբում, բարեգութ մոգպետ Պագրատպի բարյացակամության շնորհիվ, շատ քիչ մարդիկ զոհվեցին, որոնց անունները անհայտ են: Սակայն Պագրատպ մոգպետի մահից մեկ տարի հետո (342 թ.), նրա փոխարեն նշանակված Պերոզ Տամշաբուրի օրոք, քրիստոնյաների արյունը հոսել սկսեց և երկիրը լցվեց անիծյալ սատանայի սուտ աշակերտների անիրավություններով ու չարություններով և այն մաքրվեց ամեն տեսակի կեղտոտությունից ու բծից (քրիստոնյաների) արյան հեղեղով, և այսպիսով այն դարձավ ի վերջո երկնային փեսայի գեղեցիկ ու հաճելի հարսը»[62]:

Իսկապես էլ, Արբելան և ընդհանրապես ամբողջ Ադիաբենը քրիստոնյաների դեմ հարուցված հալածանքների գլխավոր թատերաբեմերից մեկը դարձավ և այն շարունակվեց մեր թվականության 344—376 թթ.[63]: Այդ մասին մենք իմանում ենք Բեջանի կողմից հրատարակված «Ատրական վարքերի» հավաքածուի միջոցով: Օրինակ, այդ վարքերից իմանում ենք, որ Խեդայաբի եպիսկոպոս Յուհաննանը Հակոբ քահանայի հետ միասին Արբելայում նահատակվել է 344 թ. նոյեմբերի 1-ին: Նրա հաջորդ Աբրահամ եպիսկոպոսը գլխատվել է 345 թ. փետրվարի 5-ին: Հաննունիան, մի ոչ եկեղեցական՝ աշխարհական, նահատակվել է Արբելա-

---

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում, էջ 99—100:

63 *R, Duval*, La littérature syriaque, Amsterdam, 1970, p. 127: Barḥadbešabba 'Arabaia, Histoire Ecclésiastique, I^ere partie, trad. F. Nau, 1922, t. XXIII, p. 205.

յում 346 թ. դեկտեմբերի 12-ին։ Հակոբ քահանան և նրա հավատացյալ քույր Մարիամը, որոնք Տելլա-դը-Շելյայի գյուղից էին, մահվան դատապարտվեցին 347 թ. մարտի 17-ին, Թեկլան և նրա չորս ընկերները նահատակվեցին 347 թ. հունիսի 6-ին։ Արբելայի սարկավագ Բարհադ-բեշաբան մահվան դատապարտվեց 355 թ. հուլիսի 20-ին, իսկ Այտալլահն ու Հափսան նահատակվեցին 355 թ. դեկտեմբերի 16-ին[64]։

Սակայն ամենաուշագրավ իրադարձությունը Խեդայաբի կառավարիչ Քարդագի հավատափոխության ու նահատակության պատմությունն է, որը տեղի է ունեցել մ. թ. 358 թ.-ին, այսինքն՝ Շապուհ արքայի թագավորության 49-րդ տարում[65]։ Այս վարքերը, ինչպես ցույց է տալիս եվրոպացի հայտնի ասորագետը, գրվել են VI դ.[66]։ Այդ վարքերից, ինչպես ասացինք, ուշագրավ է Քարդագի վարքը։ Ըստ այդ վարքի, Քարդագը ապրում էր Բարբաղշեմի ժամանակ, այսինքն՝ IV դ. կեսերին։ Նա պարսիկ բարձր խավի ներկայացուցիչներից էր և իր քաջության շնորհիվ Շապուհ արքայի ուշադրությունն էր գրավել։ Վերջինս, նրան նշանակել էր այն երկրի կառավարիչ, որը տարածվում էր Բեյթ Գարմայից մինչև Մծբին[67]։ Գալով այդ երկիրը, նա բնակություն հաստատեց Արբելայում։ Սկզբում քրիստոնյաները շատ էին վախենում 25 տարեկան այս երիտասարդից[68], որն Արբելայից ոչ հեռու Մալքի կոչված բարձունքում ամրոց կառուցել տվեց և այն անվանեց իր անունով[69]։ Սակայն Քարդագը աստիճանաբար ընկավ քրիստոնյաների ազդեցության տակ, ավելի ճիշտ՝ տեսնելով քրիստոնյաների տածած ատելությունն ու դժգոհությունը պարսկական կարգերից, մտածեց գալի այդ ուժն օգտագործել իր նպատակների համար և նրանց օգնությամբ ապստամբել Շապուհի դեմ։ Սակայն նա չկարողացավ իրականացնել իր նպատակը, որովհետև Շապուհին հաջողվեց ճնշել ապստամբությունը և ձերբակալելով նրան, գլխատել։ Այսպիսով, քրիստոնեություն ընդունած այս բարձրաստիճան պաշտոնյան ու զինվորականն իր անձնվեր գործունեությամբ դասվում

---

[64] Նույն տեղում։

[65] Նույն տեղում։

[66] *R. Duval*, La littérature syriaque, p. 128: *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, pp. 442—506.

[67] Այսինքն՝ Ադիաբենում։

[68] *Addai Scher*, Histoire Nestorienne (Chronique de Sèert), trad. P. Dib, Ière partie (II), p. 225.

[69] *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 445.

է սուրբերի կարգը, և հետագայում, ինչպես ասացինք, VI դ. գրում են նաև նրա՝ վարքը, որի ասորերեն բնագիրը հրատարակել է Բեջանը[70]:

Այժմ վերադառնանք Խեդայաբի եպիսկոպոս Յուհաննանին: Ինչպես ասել ենք, Խեդայաբի կառավարիչ Պերոզ Տամշաբուրը ավելի շրջահայաց քաղաքականություն էր վարում, որպեսզի երկրի տնտեսությունը համեմատաբար ավելի բարվոք վիճակում պահեր և կարողանար քայքայման առաջն առնել, սակայն նրա այս քաղաքականությունը դուր չի գալիս մոգերին ու պարսիկներին և նրանք իրենց բողոքը հասցնում են մոգպետին: Վերջինս տեսնելով, որ անելանելի վիճակ է, Շապուհ արքայի «իշխանության 35-րդ տարում», այսինքն՝ 344 թ. Պերոզ Տամշաբուրի հրամանով ձերբակալում են Յուհաննան եպիսկոպոսին ու Հակոբ քահանային[71]: Թեև աղբյուրը այստեղ նրա անգթության մասին է խոսում, բայց մեզ թվում է, որ նա տվյալ դեպքում ճիշտ չէ, որովհետև Խեդայաբի կառավարիչը կարող էր նրանց անմիջապես սպանել տալ Շապուհի հրամանի համաձայն, սակայն նա այդ չարեց, այլ միայն նրանց բանտարկել տվեց Բդիդար ամրոցում: Նրա այս քայլը, այսինքն՝ քրիստոնյաների դեմ ոչ խիստ վերաբերմունքը, նրա հակառակորդների կողմից անմիջապես օգտագործվեց և այդ մասին տեղեկացրին Շապուհին: Արքան ինչ-որ գործով այդ օրերին եկել էր Բեյթ-Լափատ և, անկասկած, իրեն հասած բողոքներին անսալով, իր մոտ կանչել տվեց Պերոզ Տամշաբուր մոգպետին: Մոգպետը, այսինքն՝ Խեդայաբի կառավարիչը, հասկանալով, որ քրիստոնյաների դեմ իր կիրառած մեղմ քաղաքականության մասին բողոքել են, «որպեսզի ցույց տա, որ ինքը հլու հնազանդ է արքայից արքայի հրամանին, և որպեսզի նրա բարյացակամությունը շահի ու իրենից հեռացնի սպառնացող (որևէ) վտանգ, իր հետ տարավ Յուհաննանին ու նրա քահանա՝ Հակոբին: Երբ վերջիններս Բեյթ-Լափատ հասան, նրանց պարտադրեցին, որ արև-աստծուն երկրպագեն, և երբ նրանք հրաժարվեցին, ասելով, որ իրենք արարիչը չեն վոխարինի արա-

---

[70] Նույն տեղում, էջ 442:

«Քարդագ» անունը պահլավերին «քարադահիկ» կամ «քարդուհակ» նշանակում է «վաճառական», իսկ գերմանացի գիտնականը այդ բառի մեջ այլ իմաստ է տեսնում և ասում, որ դա պահլավական «զինվոր» բառն է: Այդ մասին տե՛ս P. Peeters, La passionère d'Adiabène, „Analecta Bollandiana", t. XLIII, 1925, Paris, p. 301.

«Քարդագը գլխատվել է Շապուհի թագավորության 49-րդ տարում», այսինքն մ. թ. 358 թ.: Տե՛ս Bedjan, Acta mart. et sanct., t. II, p. 505.

[71] Հ. Մելիռնյան, Ասորական աղբյուրներ (Աբրահամ եպիսկոպոսի ժամանակ), էջ 101—102:

բածով, (դրա վրա) արքան հրամայեց և նրանց սրով գլխատեցին, Թեշրին երկրորդ (նոյեմբեր) ամսի 1-ին»[72]: Աղբյուրը շարունակում է, ասելով, որ Պերոզ Տամշաբուրը հավատում էր, որ այսպիսով արքայի կամքը բավարարեց. (սակայն) «արքան նրան պաշտոնանկ արեց և նրա փոխարեն նշանակեց Ադուրպարհ անունով մեկին, որը նախկինում բանակի հրամանատար էր եղել. (և ապա) մեր երկրից բազում զինվորներ հավաքեցին, որովհետև հոռոմների դեմ մեծ պատերազմի էին նախապատրաստվում»[73]:

Ահա, մինչ Յուհանանը բանտում էր, Խեդայաբի քրիստոնյաները գաղտնի հավաքվեցին և իրենց ղեկավար ընտրեցին Աբրահամին: Այդ մասին իմանում են մոգերը, որոնք բազում փորձեր են անում սրան ևս ձերբակալելու, բայց չեն հաջողում, որովհետև նա մի ամիս շարունակ թաքնվել էր հավատացյալներից մեկի տանը և այդպիսով «խուսափել արյան ծարավի ագահ գայլերի ատամներից»: Եվ երբ Պերոզ Տամշաբուրի փոխարեն Ադուրպարհը եկավ Խեդայաբ, բնական էր, որ սա քրիստոնեական տարրերին ճնշելու (պարսիկ արքային հաճոյանալու) համար ավելի դաժան միջոցների պետք է դիմեր, և ինչպես Մշիխա Զեխան է գրում. «նա ատամներն էր կրճտում (քրիստոնյաների) արյան համար ու երդվում, որ նրանց կոտորելու է: Երբ Աբրահամը իմացավ, որ այս գիշատիչ առյուծը մեր երկիրն է եկել, իսկույն գնաց Տել-Նախա գյուղը, այն հույսով, որ գուցե կկարողանա թաքնվել, և իզուր զոհ չի գնա ապականող առյուծի ամբարտավանությանը: Մոգպետը բազում մարդկանց նրա դեմ ուղարկեց, և նրան (բռնեցին) և ստիպում էին, որ նա ուրանա իր Տիրոջը՝ Քրիստոսին և երբ սա մերժեց, գլխատեցին նրան շեբաթ (փետրվար) ամսի 5-ին»[74]:

Շապուհի մասսայական հալածանքը իր արդյունքը տվեց: Արբելայի ժամանակագիրը գրում է, որ քրիստոնյաների հավատը «հատու սրի ներքո սկսել էր թուլանալ» և նրանց արիությունը «տատանվելու եզրին, բոլորովին վերանում էր», որովհետև «շատ ընտանիքներ ոչնչացան և ուրիշ շատ-շատերը իրենց զավակների կորստի համար մինչև այսօր

---

[72] Նույն տեղում:

[73] Նույն տեղում:

[74] Հ. Մելիոնյան. *Ասորական աղբյուրներ (Աբրահամ եպիսկոպոսի ժամանակ), էջ 102.*

արցունք են թափում: Սուրը նրանց պարանոցի վրա կախված մնաց մինչև հույների 662 թվականը»[75], այսինքն՝ մինչև 351 թ.: Դա նշանակում է, որ 10 տարի շարունակ քրիստոնյաները անընդմեջ հալածանքի էին ենթարկվում, հասկանալի է, որ հավատացյալներից շատերը տատանվեցին ու նույնիսկ հրաժարվեցին իրենց կրոնից: Աբրահամին հաջորդած Խեդայաբի Մարան Ձեխա եպիսկոպոսն իր թեմում որպես «արթուն հովիվ» շրջել և քաջալերել է «իր հոտին, ասելով, որ անհրաժեշտ է համբերել, որովհետև շուտով կվերջանա հալածանքը»[76]: Տասը տարի տևող այս հալածանքը, ճիշտ է, բոլորովին չդադարեց, սակայն այդ տարիների ընթացքում մի կողմից հռոմայեցիների դեմ մղվող հաճախակի պատերազմները և մյուս կողմից քրիստոնյաների և, ընդհանրապես, պարսկական կարգերից դժգոհ տարրերի՝ երկրի տնտեսական և առևտրական կյանքին չմասնակցելը, բացասականորեն անդրադարձավ և քայքայեց տնտեսությունը, դատարկելով արքունի գանձարանը: Այդ նկատի ունենալով, Շապուհը քրիստոնյաների դեմ կիրառած իր քաղաքականության մեջ որոշ փոփոխություն մտցրեց և ճնշեց միայն այն գործիչներին, որոնք իրենց գործունեությամբ պետության շահերին կարող էին անմիջական վնաս հասցնել: Պետք է ասել, որ Շապուհը հետզհետե համոզվեց, որ հնարավոր է օգտագործել ոչ միայն քրիստոնյաներին, այլև իր տիրապետության մեջ կազմավորված ասորական եկեղեցին նույն Հռոմեական կայսրության դեմ, քանի որ IV դ. 60-ական թվականներից, մանավանդ Վաղես կայսեր ոչ ճիշտ միջամտությունների պատճառով, ասորիների մոտ ատելություն էր առաջացել հռոմայեցիների նկատմամբ: Եվ ահա այդ շատ լավ հասկանալով, պարսիկ բարձրաստիճան պաշտոնյաները արդեն ասորական եկեղեցին իրենց ազդեցության տակ պահելու միջոցներ որոնեցին ու, այսպիսով, բեկում առաջացավ պարսիկների՝ քրիստոնյաների նկատմամբ իրենց որդեգրած քաղաքականության մեջ[77]:

Քաղաքական այս բեկման հետևանքով պարսկական տիրապետության մեջ քրիստոնեական եկեղեցին, հատկապես Տիզբոնում կազմավորված կաթողիկոսությունը, օգտվելով իրեն տրված որոշ առավելություններից, ասորական ամբողջ եկեղեցին միավորող գլխավոր օղակ

---

75 Նույն տեղում, էջ 102—103:

76 Նույն տեղում (Մարան Ձեխա եպիսկոպոսի ժամանակ), էջ 102:

77 Հ. Մելիոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 43:

դարձավ և կարողացավ իր հեղինակությունը պարտադրել պարսկական տիրապետության մեջ մտնող ասորի եպիսկոպոսներին, որ իրեն ճանաչեն որպես Արևելքի կաթողիկոս կամ պատրիարք։ Ամրացնելով դիրքերը, Արևելքի այս կաթողիկոսությունը սկսում է շատ կարևոր դեր խաղալ ոչ միայն պարսկական տիրապետության մեջ, այլ նաև նրա սահմաններից դուրս, մինչև Հնդկաստան ու Չինաստան։ Ասորի առևտրականները, որոնք այն ժամանակ իրենց քարավաններով հեռավոր ճանապարհորդություններ էին կատարում, իրենց ապրանքներն այդ երկրներում վաճառում և այնտեղից էլ համապատասխան արժեքավոր քարեր, համեմունքներ ու մետաքսի ընտիր կտորներ էին բերում միջազգային առևտրական կարևոր կենտրոններում վաճառելու համար։ Այդ առևտրականների հետ հեռավոր ճանապարհորդության էին դուրս գալիս նաև քրիստոնեական եկեղեցու գործիչները կամ քարոզիչները, որոնք ապրանքների հետ միասին իրենց հետ տանում էին քրիստոնեական կրոնի հավատալիքներն ու սկզբունքները, որոնց տարածումով հեռավոր երկրներում ու նրանց բազմազբաղ շուկաներում ոչ միայն ամուր հող և նպաստավոր պայմաններ էին ստեղծվում Պարսկաստանի առևտրական կապերի ընդլայնման ու տնտեսության զարգացման, այլ նաև Պարսկաստանի՝ այս երկրների հետ ունեցած քաղաքական կապերի ամրացման գործում։ Անշուշտ, այս բոլորն օգնում են, որ հետզհետե Տիզբոնի աթոռն իր հեղինակությունը բարձրացնի ոչ միայն իրեն հպատակ եպիսկոպոսների շրջանակներում, այլ նաև պարսկական արքունիքում։ Պարսից արքաները սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել ու երբեմն նույնիսկ քրիստոնյա գործիչներին, եպիսկոպոսներին վստահել քաղաքական շատ կարևոր առաքելություններ։ Այս առաքելությունների ժամանակ, որպես թարգմանիչ, թե դեսպան, ասորի քրիստոնյա քարոզիչները կամ գործիչները հավատարմորեն կատարեցին իրենց վրա դրված պարտականությունները։

Արևելքի այս պատրիարքության կամ կաթողիկոսության հեղինակության բարձրացումը սկսում է IV դ. վերջերից և V դ. սկզբներից։ Դրա լավագույն ապացույցն է մ. թ. 410 թ. Իսահակ պատրիարքի օրոք գումարված նեստորականների մեղ հայտնի առաջին եկեղեցական ընդհանուր ժողովը, որի արձանագրությունը, բարեբախտաբար, հասել է մեզ[78]։ Այս և նրանից հետո Տիզբոնի կաթողիկոսության աթոռում գումարված կրոնական ընդհանուր ժողովների արձանագրությունների առկայությունը մեզ հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմել

[78] *J. B. Chabot*, Synodicon Orientalum, Paris, 1902.

այդ ժամանակներում տեղի ունեցած շատ կարևոր եկեղեցական գործերի, հարաբերությունների, սոցիալական շարժումների և այդ շարժումները ճնշելու միջոցառումների, քաղաքական կյանքի և պարսկական տիրապետության մեջ ապրող քրիստոնյաների վիճակի ու նրանց կատարած դերի մասին: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում պարսկական տիրապետության մեջ կազմավորված եկեղեցական թեմերի, նրանց իրավասությունների, ունեցած իրավունքների և գործունեության պատմությունը: Առանձին արժեք է ներկայացնում ասացինք, որովհետև նկատի ունենք, որ այդ եկեղեցական թեմերի հիմնադրումը հիմնականում համընկել են քաղաքական այն բաժանումների հետ, որոնք կատարվել էին հատկապես սասանյանների օրոք[79]:

«Արբելայի ժամանակագրությունը» վկայում է այն մասին, որ 410 թ. Մար Իսահակի օրոք առաջին անգամ որոշվել էր, որ Արբելայի թեմը մետրապոլիտություն լինի և իրեն ենթակա այլ աթոռներ ունենա, ինչպես օրինակ՝ Բեյթ Նուհադրայի, Բեյթ Բագաշի, Բեյթ Դասենի (Դասեն), Ռամոնինի, Բեյթ Մահքարտի (եպիսկոպոսությունները)[80]:

Մեր այս աշխատության հաջորդ հատվածում կանգ կառնենք ընդհանրապես Արևելքի այս կաթողիկոսությանը ենթակա թեմերի, մասնավորապես, Ադիաբենի կամ Խեդայաբի թեմերի ու նրանց ենթակա եկեղեցիների հարցի վրա:

---

79 Կարելի է ասել, որ հնից եկած քաղաքական բաժանումները մեծ մասամբ մնացել են նույնը նաև Սասանյանների օրոք:

80 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրներ (Դանիել եպիսկոպոսի ժամանակ), էջ 107:

ԳԼՈՒԽ Բ

ՏԻԶԲՈՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. ԽԵՂԱՅԱԲԻ ԹԵՄԸ ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ

Ինչպես ասել ենք, Պարսկաստանում ապրող քրիստոնյաները IV դ. վերջերից և հատկապես V դ. սկսյալ պարսկական տիրապետությունից և նրան պատկանող քաղաքներից Հեռավոր արևելք մեկնող միջազգային առևտրական քարավանների ու առևտրական փոխհարաբերությունների կյանքում սկսել էին նշանակալից դեր կատարել և հարստացնել պարսկական տերությունը։

Պարսիկ բարձրաստիճան պաշտոնյաները հարստանում էին նաև իրենց երկրում ղարգացող արհեստների շնորհիվ, որովհետև առևտրական կապերի ընդլայնումով, նոր շուկաների առաջացումով մեծացել էր ապրանքների պահանջարկը, որը բավարարելու համար մեծացվում էին գոյություն ունեցող արհեստանոցները և կամ նորերն էին կառուցվում, նպաստելով քաղաքային կյանքի զարգացմանն ու բարգավաճմանը։ Դրանով էլ պետք է բացատրել IV դ. 2-րդ կեսից սկսյալ պարսկական տիրապետության մեջ բաղում նոր քաղաքների կառուցումն ու նախկին քաղաքների վերակառուցումը։ Այս ամբողջի մեջ առաջնակարգ դեր էին կատարում քրիստոնյաները կամ, եթե կարելի է ասել, ասորական եկեղեցու զավակները։ Այս նկատի ունենալով, պարսկական արքունիքում որոշ փոփոխություն էր տեղի ունեցել իրենց հպատակ քրիստոնյաների նկատմամբ։ Այսպես, պարսից արքայից արքա Հաղկերտը թույլատրում է, որ իր մայրաքաղաքում իրեն հպատակ քրիստոնյա գործիչները հավաքվեն և գումարեն իրենց առաջին կրոնական ընդհանուր ժողովը։ Այս թույլտվությունը բխում էր այն հանգամանքից, որ պարսիկ պաշտոնյաները ուզում էին մինչ այդ ինքնահոսի մատնված ասորական եկեղեցու գործունեությունը կանոնավորել և Տիզբոնի եպիսկոպոսության կամ կաթողիկոսության դերի ուժեղացումով, իրենց հըսկողության ու ազդեցության ներքո ստեղծել եկեղեցական կենտրոնաց-

ված մի իշխանություն, որպեսզի այդ խոշոր ուժը հնարավոր լիներ իրենց կամքով ղեկավարել Տիզբոնից: Դրա համար էլ Հազկերտ Ա-ն (որը պարսկական գահին էր բազմել 399 թ.) թույլ է տալիս Իսահակ կաթողիկոսին, որ ժողովի հրավիրի բոլոր թեմերի եպիսկոպոսներին[1]: Անշուշտ, Իսահակ կաթողիկոսի, ավելի ճիշտ արևելյան այս կաթողիկոսության համար կարևոր նշանակություն ուներ նման ժողովի գումարումը, որովհետև այն կօգներ ոչ միայն իր աթոռի պաշտոնական ճանաչմանն ու իր կաթողիկոսական իշխանության ու հեղինակության բարձրացմանը, այլև կնպաստեր ասորական եկեղեցու ներսում ծագած ներքին երկպառակությունների կարգավորման և հակառակորդներին չեզոքացնելու գործին: Այսինքն, հարցը բաղում կողմերից հասունացել էր և միայն անհրաժեշտ էր գործնական միջոցներով այն իրագործել:

Այսպես, Իսահակ կաթողիկոսի հրավերով 410 թ. հունվարի 6-ին ասորական եկեղեցու քառասուն եպիսկոպոսներ հավաքվում են Տիզբոնում: Ըստ երևույթին, կազմակերպչական որոշ հարցերի դժվարության պատճառով ժողովը գումարվում է փետրվարի 1-ին[2]:

Ժողովում գլխավոր ու առաջին հարցը, ինչպես այն կարելի է հետևցնել մեզ հասած այդ ժողովի արձանագրությունից, եղել է թեմերի բաժանման և այդ թեմերի իրավասության հարցը, այսինքն՝ ամեն մի թեմի իշխանության կամ ազդեցության ոլորտների հարցը: Ժողովում Տիզբոնի կամ Արևելքի կաթողիկոսությունը բաժանվում է վեց թեմերի[3]: Մասնագետները իրենց ուսումնասիրություններում ցույց են տվել, որ եկեղեցական այս թեմերի բաժանումը համապատասխանում է պարսկական քաղաքական բաժանումներին, այն տարբերությամբ միայն, որ եկեղեցական թեմերը վեցն են, մինչդեռ քաղաքականը՝ հինգ[4]: Այս տարբերությունը գալիս է նրանից, որ ինչպես մեր այս ուսումնասիրության նախորդ հատվածում տեսանք, և ինչպես ցույց են տալիս մեզ հասած ասորական վարքերը, մինչև IV դ. կեսերը և հավանաբար դրանից հետո, մինչև 410 թ., Բեյթ Գարմայի նահանգը քաղաքականապես միացվել էր Խեդայաբին և դարձել Խեդայաբի մարզպանության կամ, ինչպես ասորական աղբյուրներն են վկայում, Խեդայաբի մոգպետությանը հն-

---

[1] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 256.

[2] Նույն տեղում, էջ 272:

[3] Նույն տեղում:

[4] *E. Honigmann* et *A. Maricq*, Recherches sur les Res Gestae Divi Saporis, 1952, p. 45.

թակա մի մարզ[5]։ Ահա 410 թ. գումարված Իսահակ կաթողիկոսի ժողովում Բեյթ-Գարմայը եկեղեցականորեն առանձնացվում է Խեդայաբից և դառնում է եկեղեցական առանձին միավոր[6]։

Ուրեմն, ըստ այս ժողովի կաթողիկոսությունը բաժանվում է հետևյալ վեց թեմերի (մետրապոլիտությունների).

ա. Տիզբոնի կամ Սելևկիայի թեմ։

բ. Բեյթ-Լափաաի կամ ավելի ճիշտ՝ Բեյթ-Հուզայեի թեմ։

գ. Մծբինի թեմ։ Այս թեմի մեջ էին մտնում՝ Արզնի, Կարդուի, Բեյթ-Զաբդեի, Բեյթ-Ռախիմայի, Բեյթ-Մոկսայի եպիսկոպոսությունները։

դ. Փերատ-դը-Մայշանի թեմ, որին էին ենթարկվում Ռիմայի և Նեհարգուրի եպիսկոպոսությունները։

Ե. Արբելայի թեմ, որի մեջ էին մտնում Բեյթ-Նուհադրայի, Բեյթ-Բագաշի, Բեյթ-Դասենի, Ռամոնինի, Բեյթ-Մահկարտի, Դաբարինոսի եպիսկոպոսությունները։

Զ. Քարքա-դը-Բեյթ-Սլոխի թեմ, որին ենթարկվում էին Շահարքարտի, Լաշոմի, Արևանի, Ռադանի և Խարբագելալի եպիսկոպոսությունները։

Որպեսզի այս թեմերի առաջնորդները տարբերվեն մյուս եպիսկոպոսներից և իրենց ավագությունը հաստատեն, որոշվում է, որ նրանց տրվի արքեպիսկոպոսի տիտղոս և անվանվեն մետրապոլիտ. այսպես՝ Բեյթ-Լափաաի եպիսկոպոսը դառնում է արքեպիսկոպոս և իր թեմն էլ կոչվում է Բեյթ-Հուզայեի մետրապոլիտություն։ Մծբինի առաջնորդը դառնում է ամբողջ Մծբինի ենթակա եպիսկոպոսությունների Բեյթ-Արաբայեի մետրապոլիտ, իսկ Փերատ-դը-Մայշանի արքեպիսկոպոսը Քարքա-դը-Մայշանի մետրապոլիտ։ Արբելայի մետրապոլիտության մեջ էին մտնում վեց եպիսկոպոսություններ, իսկ Քարքա-դը-Բեյթ-Սլոխի մետրապոլիտության մեջ՝ հինգ եպիսկոպոսություններ[7]։

Այս բաժանումը, անշուշտ, տարբեր ժամանակներում, տարբեր ժողովներում, տարբեր քաղաքական ու տնտեսական իրադարձություններում որոշ փոփոխությունների ենթարկվել է, այս կամ այն քաղաքը կամ նահանգը ըստ իր ունեցած քաղաքական ու տնտեսական դերի ա-

---

[5] *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, pp. 442—506; *A. Scher*, Histoire Nestorienne (Chronique de Séert), 1er partie (II), p. [113], 225.

[6] *J. B. Chabot*, Syn. Orient, p. 272.

[7] Նույն տեղում։

ռաջ է քաշվել կամ կորցրել է իր տեղը, բայց և այնպես առաջին բաժանումը միշտ էլ ունեցել է էական նշանակություն։

Եկեղեցական այս թեմերի բաժանումները և նրանց ենթակա եպիսկոպոսությունների ցուցակների առկայությունը շատ կարևոր փաստաթղթեր են, պարզելու համար տվյալ ժամանակաշրջանի քաղաքական բաժանումների ու աղերսությունների ոլորտները և այն պակասը, որ զգացվում է քաղաքական բաժանումները ճշգրտելու գործում, լրացնում ու օգնում են մեզ հասած այս ցուցակները, որոնք ավելի ճիշտ են արտացոլում փաստերը։

Այս բաժանումների մասին խոսելիս կարելի չէ կանգ չառնել երկու պատկերացումների վրա, որոնք ժամանակի ընթացքում տարբեր բովանդակություն ստանալով, հաճախ շփոթության պատճառ են դարձել։ Դրանցից «Ասորեստանը» առաձգական բովանդակություն է ունեցել։ Այդ պատճառով էլ եվրոպացի պատմաբաններից Հոնիգմանն ու Մարիկը իրենց հատուկ ուսումնասիրության մեջ աղբյուրների հիման վրա փորձել են ճշտել և ցույց տալ, թե «Ասորեստան» անվան տակ ինչ են հասկացել սասանյանները։

Ասորեստանյան կայսրության անկումից հետո «Ասորեստանը» հույն և լատին պատմիչների մոտ ընկալված է որպես մի երկիր, որ գտնվում էր այժմյան Իրաքի սահմաններում։ Մ. թ. II դ. երկրորդ տասնամյակում Տրայանոսի արևելյան արշավանքների ժամանակ, կայսրը նվաճելով Ադիաբենեն, այն դարձնում է Հայաստանից, Միջագետքից հետո հռոմեական 3-րդ նահանգը Ասորեստան անունով[8]։ Սասանյանների օրոք «Ասորեստանի նահանգը» կայսրության սիրտն էր, որի մեջ մտնում էին թագավորական քաղաքներ Սելևկիան, պաշտոնապես Վեհ-Արտաշերը, Բուտա-Արտաշիրը» և Տիզբոնը[9]։ Սեբեոսը վկայում է այն մասին, որ այն թագավորական պալատը, որտեղ ապրում էր Խոսրով Աբրվեզ արքան, գտնվում էր Ասորեստանում[10]։ Համենայն դեպս, «Ասորեստանը ընդգրկում էր Տիզբոն և Սելևկիա թագավորության քաղաքները, այինքն՝ մոտավորապես այն երկրամասը, որը հայտնի է «Դասական Բաբելոն» անունով[11]։

Հայ պատմիչներից նրանք, ովքեր ժամանակակից էին սասանյան

---

[8] *D. Magie*, Roman rule, p. 608.

[9] *E. Honigmann* et *A. Maricq*, Recherches, p. 43.

[10] Նույն տեղում։

[11] Նույն տեղում, էջ 118։

հայսրուիյանը, Ասորեստան ասելով հասկացել են «Արքայական սահանյան նահանգը» և ոչ թե Ասորեստանը կամ Ասորիքը[12]: *Ակադեմիկոս Երեմյանն էլ այս կապակցությամբ իր ուսումնասիրության մեջ գրել է, որ հայերը Ասորեստան էին կոչում Սահանյան Պարսկաստանի սահմաններում գտնվող Միջագետքը, հատկապես նրա միջին և ստորին մասերը: Ասորեստանը պարթևական, ապա սասանյան պետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնն էր: Այս երկիրը ասորական և պահլավական գրականության մեջ կոչվում է «Ասորեստան» կամ «Սուրիստան»*[13]:

Այս բոլոր տվյալները, սակայն, խոսում են այն մասին, որ «Ասորեստան» ասելով և՛ հայ, և՛ ասորի, և՛ նույնիսկ արաբ պատմիչները չեն հասկացել միայն Տիգրոն—Սելևկիայի շրջանը, այլ այն ավելի լայն իմաստ է ունեցել և ավելի շատ նահանգներ է ընդգրկել իր մեջ: Ճիշտ է, երբեմն արաբ պատմիչները նույնացնում են Սուրիստանը Իրաքի նահանգներից Սավադի հետ, համենայն դեպս, այս հարցում մեզ օգնության է հասնում Շապուհ Ա-ից հասած արձանագրությունը: Այդ արձանագրության մեջ պահպանված նահանգների ցուցակը մեզ տալիս է շատ կարևոր մոտավոր պատկերը. ըստ դրա «Ասորեստանը ընդգրկում էր Մեսենի, Սուսիի, Մեդիայի, Ադիաբենի, Արվաստանի, Անապատի և Պարսից ծոցի երկրամասը»[14]: *Մի խոսքով, այն աշխարհամասի եպիսկոպոսները, որոնք պարսից Հազկերտ Ա արքայի հրամանով և Իսահակ կաթողիկոսի հրավերով 410 թ. հավաքվեցին Տիգրոնում եկեղեցական ժողովի: Հավաքվածները Սասանյանների քաղաքական բաժանմանը հետևելով, իրենք էլ եկեղեցական իշխանությունը բաժանում են 6 թեմերի: Ինչպես ասել ենք, IV դ. կեսերին քաղաքական իշխանությունը բաժանված էր 5 նահանգների, սակայն հետագայում, անշուշտ մինչև 410 թ., Բեյթ-Դարմայը Ադիաբենից բաժանվելով դարձել էր 6-րդ նահանգը: 6 նահանգներն էլ ամբողջությամբ մտնում էին Ասորեստանի մեջ, և այս նահանգների եպիսկոպոսությունները, ինչպես տեսանք, ժողովի որոշումով դարձան մետրապոլիտություններ: Ուրեմն, սասանյանների օրոք «Ասորեստանի» մեջ էին մտնում մեզ հայտնի 6 նահանգները: Եվ երե պարսիկները իրենց փաստաթղթերում, և օտար պատմիչներն իրենց գործերում Ասորեստան ասելով հասկացել են 6 նահանգներից կազմված քաղաքական*

---

12 *Նույն տեղում, էջ 41:*

13 *Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 38:*

14 *E. Honigmann et A. Maricq*, Recherches, p. 44.

ամբողջ միավորը, ասորի պատմիչները քաղաքական այդ ամբողջությանն այլ անուն են տվել: Հետևելով կրոնական իրենց հասկացողություններին, նրանք Ասորեստանի փոխարեն ամբողջ այդ աշխարհամասը անվանել են Բեյթ-Արամայե, որը եկեղեցական հասկացողություն էր: Իսկապես, արևելյան կաթողիկոսությանը ենթակա բոլոր 6 թեմերը մտնում էին Բեյթ-Արամայեի մեջ: Վաղ շրջանից, սասանյանների ժամանակից մեզ հասած ասորական բնագրերում Բեյթ-Արամայեն ընկալվել է որպես Տիգրոնի կաթողիկոսական իշխանության մեջ մտնող բոլոր թեմերի ամբողջություն: Ասորի պատմիչները այդ աշխարհամասի մասին գրելիս, երբ նկատի են ունեցել եկեղեցական գործեր և կամ ընկալել են եկեղեցական առումով, այն անվանել են Բեյթ-Արամայե[15]:

Սասանյաններից հետո, VII դ. և դրանից հետո՝ արաբական տիրապետության ժամանակ, Արբելայի թեմը միացվեց Մուսուլի և նրա շրջակայքի հետ, և այս միացյալ թեմը սկսեցին անվանել «Ասորեստան» կամ ինչպես ասորական աղբյուրներն էլ այն անվանում են՝ «Աթուր»[16]:

Անդրադառնանք Բեյթ-Արամայեի կազմում եղած Արբելայի թեմին:

2. ԱՐԲԵԼԱՅԻ ՄԵՏՐԱՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ

410 թ. Իսահակի եկեղեցական ընդհանուր ժողովի որոշմամբ Խեդայաբի նահանգը դառնում է կաթողիկոսական աթոռից հետո 4-րդ մետրապոլիտությունը, և այս ավագությունը պահպանվում է երկար ժամանակ: Ավագության այս աստիճանը արևելյան կաթողիկոսության տարբեր աթոռների միջև սահմանվում է, ինչպես երևում է մեզ հասած ժողովի արձանագրություններից, ըստ քաղաքի մեծության և քաղաքական ու տնտեսական կյանքում ունեցած կարևորության: Ինչքան մեծ է եղել քաղաքը և կարևոր, այնքան մեծացվել է այդ քաղաքում եղած եպիսկոպոսական իշխանությունը և ըստ այնմ էլ տեղ գրավել ավագության աստիճանում[17]: Ինչպես նշել ենք, նահանգների մայր քաղաքներում եղած եպիսկոպոսությունները բարձրացվել են արքեպիսկոպոսու-

---

15 *Bedjan*, Acta mart. et sanct., t. I, p. 68.

16 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 608.

17 *410 թ. Մար Իսահակ կաթողիկոսի ընդունած 18-րդ կանոնը տե՛ս J. B. Chabot*, Syn. Orient., p. 270.

Բյան կամ մետրապոլիտությյան, իսկ նույն նահանգի մյուս քաղաքների եպիսկոպոսությունները, ըստ իրենց քաղաքների մեծության, հերթական ավագության աստիճան են ստացել։ Արբելան, որը Խեդայաբի մայրաքաղաքն էր, դարձավ մետրապոլիտություն, և բնական էր, որ նույն նահանգի մյուս եպիսկոպոսություններն էլ ենթարկվեցին Արբելայի եպիսկոպոսական իշխանության։ Իսկ այն, որ Բեյթ-Հուզայեի, Մծբինի և ապա Փերատ-դը-Մայշանի մետրապոլիտությունից հետո գալիս էր Արբելայի մետրապոլիտությունը, վկայում է այն մասին, որ Խեդայաբի նահանգը Բեյթ-Լափատի և Մծբինի, Փերատ-Դը-Մայշանի նահանգներից հետո, չհաշված Տիզբոնը, քաղաքական կարևոր տեղ էր գրավում։ Ուրեմն, քաղաքական կարևորությամբ Խեդայաբի նահանգը պարսկական տիրապետության մեջ 4-րդ տեղն էր գրավում։ Այդ նկատի ունենալով 410 թ. ընդհանուր ժողովում որոշում են ավագության կարգը, և Արբելայի մետրապոլիտությանը, ինչպես մյուս թեմերին, տալիս են իրենց արժանի ավագության կարգը։ Ուրեմն, ինչպես ասացինք, Խեդայաբի թեմում եկեղեցական իշխանության կենտրոնը Արբելայի եպիսկոպոսությունն էր։ Երկրում գտնվող մյուս եպիսկոպոսական աթոռները ենթարկվում էին Արբելայի արքեպիսկոպոսին կամ մետրապոլիտին, և Արբելայի եպիսկոպոսն էր տնօրինում Խեդայաբում ապրող ինչպես քրիստոնյա հավատացյալների, այնպես էլ եկեղեցականների գործերը։ 410 թ. ժողովին, որպես Արբելայի եպիսկոպոս մասնակցում էր Դանիելը։ Նույն թեմից այդ ժողովին ներկա էին Բեյթ Նուհադրայի եպիսկոպոս Բարինոսը, Բեյթ Բագաշի եպիսկոպոս Ախադաբուհին, Բեյթ Դասենի եպիսկոպոս Ղակբալահան, Ռամոնինի եպիսկոպոս Նոախը և Դաբարինոսի եպիսկոպոսը, որի անունը ձեռագրերում ջնջված լինելով, մեզ չի հասել։ Այսպիսով, ութ եպիսկոպոսությունների մի պատկառելի պատվիրակություն, որը վկայում է այն մասին, որ քրիստոնեությունը խոր արմատներ էր գցել այդ երկրում և բնակչության զգալի մասը քրիստոնյաներ էին։ Անշուշտ, մեզ համար այստեղ կարևորն այն է, որ եպիսկոպոսական աթոռ հիմնվել է ամեն մի գավառում, ուրեմն, սասանյանների օրոք, V դ. սկզբներին Խեդայաբի նահանգը բաժանված էր ութ գավառների, որովհետև, ինչպես գիտենք, դեռ IV դ. կեսերին Բեյթ Գարմայի նահանգը, և դրանից առաջ էլ, I դ. Ադիաբենի թագավոր Իզատեսի օրոք, Ադիաբենին էր կցվել Հայկական Մծբին նահանգը։ Ուրեմն, V դ. սկզբներին Խեդայաբի նահանգը բաղկացած էր ութ գավառներից։ Այժմ տեսնենք ամեն մի գավառը առանձին-առանձին։

Ասորագետ Ֆին իր ուսումնասիրության մեջ մանրամասն վերլուծել է այս թեմերի պատմությունը և գրել ուշագրավ մի աշխատություն[18]: Այդ աշխատության մեջ նա ցույց է տվել, որ Արբելայի եպիսկոպոսական աթոռը մետրապոլիտության կամ արքեպիսկոպոսության իրավունք ստացել է Տիզբոնի ասորական կաթողիկոսության հիմնադիր Պապա կաթողիկոսի օրոք, մոտավորապես մ. թ. 310—317 թթ., այսինքն՝ Նիկիո առաջին տիեզերական ժողովի նախօրյակին, այնպես որ Արբելայի եպիսկոպոս Յուխանանը, որը նահատակվեց 343 թ. հալածանքների ժամանակ և Աբրահամ եպիսկոպոսը, որը նույնպես նահատակվեց 345 թ., սոսկ եպիսկոպոսներ չէին, այլ մետրապոլիտներ[19]: Որտե՞ղ էր Արբելայի մետրապոլիտի նստավայրը, այսինքն՝ որտե՞ղ էր գտնվում արքեպիսկոպոսարանը: Ինչպես ցույց են տալիս փաստերը, Արբելայի արքեպիսկոպոսարանը եղել է Արբելայից 12 կիլոմետր հեռու, հարավ-արևմուտքում, Խազզա կոչված քաղաքում, որը, ըստ ավանդության, կառուցվել է սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր Ա-ի օրոք և անվանվել է Բուտտ Արդաշիր[20]: Համենայն դեպս հետագայում այս քաղաքը Խազզա է անվանվել նույն Խազզա գավառի անունով, և շատ անգամ ասորական աղբյուրներում նույնիսկ Խեդայաբ նահանգը հանդիպում է Խազզա անունով[21]: Ուստի, աղբյուրներում պետք է ուշադիր լինել և տարբերել, թե «Խազզա» անունը ինչ առումով է օգտագործված՝ նահանգի, գավառի, թե քաղաքի առումով, չնայած գավառի գլխավոր քաղաքը արաբական տիրապետության ժամանակ, ինչպես արաբական աղբյուրներն էլ վկայում են, դառնում է Քաֆար-Ղուզայլը կամ Քաֆար-Ղազզին[22], որը

---

18 *J. Fiey*, Assyrie Chrétienne, vol. I, Beyrouth, 1965, p. 47.

19 *J. Fiey*, Assyrie Chrétienne, p. 47.

20 Նույն տեղում, էջ 166:

21 Այժմ այդ անունով գյուղ կա Իրաքում: Դեռ VIII դ. այս քաղաքում բնակվում էին մեծ մասամբ քրիստոնյաներ, ապա հրեաներ: Համենայն դեպս, ըստ ավանդության, ըստ կրզրից էլ Արեւելյի եպիսկոպոսական աթոռը եղել է Խազզայում, այդ ենթադրել է տվել եվրոպացի պատմաբանին, որ գուցե Ադիաբենի քրիստոնեության առաջին կենտրոնը եղել է Խազզան: Այդ մասին տե՛ս *J. Fiey*, Assyrie Chrétienne, t. I, p. 166: Ուշագրավ է, որ Խազզայի մոտակայքում Ղաբդ-Ուլ-Ղազիզում, Խազզայի հարավ-արևմուտքում կա եպիսկոպոսների, վանականների մի գերեզմանատուն: Դայնկավայի բնակիչների մոտ պահպանված մի ավանդությունն էլ հաստատում է, որ Խազզան եղել է Արբելայի եպիսկոպոսական աթոռի նստավայրը: Տե՛ս նույն տեղում (Դայնկական Արբելայից հյուսիս-արևմուտք 5 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Խեդայաբի հնագույն գյուղերից մեկն էր):

22 «Քաֆար Ղուզայլ» կամ «Քաֆար Ղազզին» թարգմանում են «Վիթի գյուղ»:

հայտնի էր VIII դ. այնտեղ բացված ասորական իր դպրոցով[23]: Ասորական, ավելի ճիշտ Նեստորական եկեղեցու գործիչները այդ դպրոցը հիմնել են, որպեսզի այն ավարտած գործիչների, վարդապետների միջոցով հնարավոր լինի պայքարել մեսալյան աղանդի դեմ, որովհետև մեսալյան քարոզիչները կարողացել էին ոչ միայն ամբողջ Խեդայաբում տարածվել, այլև հիմնել իրենց կենտրոնները, և վտանգ կար, որ ամբողջ նահանգը կարող էր ընկնել նրանց ազդեցության ներքո[24]: Աղանդավորական շարժման նման աշխուժացումը պիտի բացատրել նրանով, որ երկրի այս քաղաքի քրիստոնյա մեծամեծները, հատկապես առևտրականները, որոնք արդեն իրենց կուտակած հարստության շնորհիվ զգալի ուժ էին դարձել, ցածր խավերին ճնշելու և իրենց ուղած ձևով եկեղեցական գործերը ղեկավարելու համար իրենց կամքն էին պարտադրում նույնիսկ Տիզբոնի կաթողիկոսությանը և ցանկացած եպիսկոպոսին բազմեցնում Արբելայի մետրապոլիտական աթոռին[25]: Այս երևույթը բացատրել կարելի է նրանով, որ Արբելան կամ Իրբիլը արաբական տիրապետության ժամանակ առևտրական քարավանների ճանապարհից դուրս է ընկնում և փոխարեն Քաֆար-Ղուզայլն է սկսում աշխուժանալ: Ի վերջո IX դ.—XII դդ. Արբելայի հին քաղաքը համարյա վերանում է և դառնում նույնիսկ աննշան մի գյուղ: Եվ պատահական չէ, որ X դ. հեղինակներից Բար Բահլուլը մի տեսակ արհամարհանքով գրում է Արբելայի մասին և ասում, որ այն խազղայի գյուղերից մեկն է, որն իր անունը տվել է Մուսուլի մետրապոլիտության թեմին: Այսպես, ուրեմն, այն ժամանակ Արբելայի թեմն էլ էր «Մուսուլի թեմ»[26]: Հայտնի է, որ IX դարից Մուսուլը, որպես արաբական կայսրության քաղաքական իշխանության կենտրոն, և՛ տնտեսության, և՛ առևտրի, և՛ մշակույթի ասպարեզում շատ կարևոր դեր է կատարում: Ուրեմն հասկանալի է, թե ինչու արաբ խալիֆներն իրենց հպատակ քրիստոնյաներին, մանավանդ ասորիներին հատուկ ուշադրություն և բարյացակամություն ցույց տվիցին: Ասորիները (ինչպես պարսկական, այնպես էլ արաբական) կայսրության տնտեսության, հատկապես առևտրական կյանքում, շարունակում էին խոշոր դեր կատարել և օգնել նույնիսկ արաբական գիտության ու բժշկության զարգացմանը. արաբական արքունիքի բժիշկներից շատերն ասորի քրիստոնյա գործիչներ էին: Համենայն դեպս, IX դ. Արբելայի թեմի առաջնորդությունն իր տեղը զիջում է Մուսուլին, որը և դառնում է

---

23 *J. Assemani*, Bibliothequa Orientalis, Roma, t. III, 1725, II, p. 932.
24 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 374.
25 *J. Fiey*, Assyrie chrétienne, vol. I, p. 176.
26 Նույն տեղում, էջ 70:

մետրապոլիտության կենտրոն և այս անգամ Մուսուլի եպիսկոպոսը ստանում է «Ասորեստանի և Մուսուլի» և կամ «Մուսուլի և Արբելայի» մետրապոլիտի տիտղոսը[27], մինչդեռ ժողովների արձանագրություններից երևում է, որ Մուսուլի եպիսկոպոսն ուներ սոսկ «Նինվեի եպիսկոպոս» տիտղոսը: Մուսուլ քաղաքի այսպիսի կենտրոն դառնալը պատճառ եղավ, որ ոչ միայն Արբելան, այլև ընդհանրապես «Խեդայաբ» նահանգը կորցնի իր ազդեցությունն ու նշանակությունը, նույնիսկ անունը: Արաբ պատմիչները հետագայում Իրբիլը (Արբելան) հիշում են, որպես Հալվան նահանգի մի շրջանը: Այս փոփոխությունն, այսինքն՝ Արբելայի փոխարեն եկեղեցական գործերում Մուսուլի դերի բարձրացումը, Ֆին վերագրում է Իշոդ-Բար-Նունի, ասորի կաթողիկոսի կամ պատրիարքի (823—829 թթ.) որոշմանը: Դիտնականը ցույց է տալիս, որ կաթողիկոսն է կարգադրել այդ փոփոխությունը, նկատի ունենալով, որ Մուսուլն էր արդեն Արբելայի փոխարեն տնտեսական ու քաղաքական կյանքում կարևոր դեր կատարում. հետագայում, ինչպես հայտնի է, աբրաբների 563 թ., այսինքն՝ մ. թ. 1167 թ. Զայն-ադ-Դին Ղալի Քուշտուկ Բակտակի անունով քուրդ իշխանը Արբելայի շրջակայքում մի փոքր իշխանություն է ստեղծում և Արբելան իր մայրաքաղաքն է դարձնում[28], բայց այդ երկար չի տևում: Հավանաբար, դա այն ժամանակն էր, երբ Արբելան նորից անջատվել էր Մուսուլի մետրապոլիտությունից և ինքնուրույն դարձել, որովհետև ասորի պատրիարք Եղիա Գ-ից (1176—1190 թթ.) մեզ հասած եպիսկոպոսական ձեռնադրության կանոններից պարզվում է, որ Արբելայի ու Մուսուլի մետրապոլիտությունները առանձին են ու անկախ[29]: Եվ այսպես, նորից որպես ինքնուրույն եկեղեցական թեմ Արբելայի Նեստորական եկեղեցին շարունակում է գործել և երկար ժամանակ իր գոյությունը պահպանել. օրինակ, 1552 թ. Նեստորական պատրիարք Սուլակայի ընտրությանը մասնակցող երեք Նեստորական մետրապոլիտներից մեկը Արբելայի մետրապոլիտն էր: Դեռ XVII դ. հիշատակություն կա Արբելայում ապրող քրիստոնյաների մասին, սակայն XVIII դ. սկսյալ և հատկապես XIX դ. ոչ մի հիշատակություն՝ նույնիսկ քաղաքի մասին: Այդ ժամանակվանից հիշատակվում է միայն Արբելայի կողքին գտնվող Ղայնկավա գյուղը, որի գոյությամբ Արբելան մոռացության է մատնվում[30]:

---

[27] J. Fiey, Assyrie chrétienne, vol. I, p. 63.

[28] Նույն տեղում, էջ 70:

[29] Նույն տեղում, էջ 74:

[30] Նույն տեղում, էջ 95:

3. ԲԵՅԹ ՆՈՒՀԱԴՐԱՅԻ [BEIT NOUHADRA] ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Բեյթ Նուհադրան կամ նրա եպիսկոպոսությունը մեզ հասած նեստորական ասորիների կրոնական ընդհանուր ժողովների արձանագրություններում հիշատակվում է Արբելայից հետո, որպես երկրորդը: Մի փաստ, որը վկայում է այն մասին, որ Խեդայաբի նահանգում Արբելայից հետո երկրորդ տեղը գրավում էր Բեյթ Նուհադրան: Շաբոն իր ծանոթագրության մեջ Բեյթ Նուհադրայի գավառի մասին գրում է, որ այն «տարածվում էր Տիգրիսի, Խաբուրի, Տուր Ղաբդինի և Ջաբալ Սինջարի միջև»[31]:

Ասորագետ Ֆին ավելի մանրամասն կանգ է առել Բեյթ Նուհադրա կամ, ինչպես աղբյուրներում այն հիշատակվում է Բա Հադրա[32], Բեյթ Նուհադրան և կամ Բեթ Նուհադրե գավառի կամ թեմի վրա և գրել, որ Բա Նուհադրա ընդարձակ արգավանդ գավառը տարածվում էր Նինվեի դաշտում և այն Մադայնի ծաղկազարդ թագն էր, իսկ ինչ վերաբերում է Բա Նուհադրա անվան, ապա, եղրակացնում է նա, հավանաբար այն նշանակում է «վաճառատեղի, շուկա» (պահլավական «նուհադար» բառից): Իսկ եվրոպացի պատմաբաններից Պոգնոնն ու Մարկվարտն իրենց աշխատություններում ենթադրում են, որ «Բա Նուհադրան» պարսկերեն «Նև Հատրան» է, և գավառը այդպես է անվանվել այն պատճառով, որ գտնվում էր պարսիկների և հռոմայեցիների սահմանի վրա: Նրա նախնական սահմաններն էին արևմուտքից՝ Տիգրիսը, որը նրան բաժանում էր Արվաստանից, հարավից՝ Մեծ Ջաբը, հյուսիսից՝ Խազիրը, իսկ Գոմելը այն բաժանում էր Մարգայից: Հյուսիս-արևելքից Ջաբալ Ղայն Սիֆնիի, Ջաբալ-ալ-Աբիադ և Ջաբալ Բեխայր լեռնաշղթան է, որը հին հեղինակների մոտ անվանված է «Բա Նուհադրայի լեռ»[33]: Ճիշտ է այս սահմանների մասին վկայում է IX դ. ասորի հեղինակներից Իշոդնդնահ-

---

31 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 669: *Ասորական վարքերից իմանում ենք, որ Բեյթ Նուհադրայի եպիսկոպոսական աթոռը և գավառի կենտրոնը եղել է Սատգարար քաղաքը, որը աղբյուրներում անվանված է «Մեծ գյուղ»: Այդ մասին տե՛ս Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 391.

32 «Բա»-ն կամ ասորերեն «Բաա» նախդիրը օգտագործվել է ասորերեն «Բեյթ»-ի փոխարեն: Տե՛ս *J. M. Fiey*, Assyrie Chrétienne, vol. I, p. 257.

33 *J. M. Fiey*, Assyrie Chrètienne, vol. II, Beyrouth, 1965, p. 322.

դը-Բասրան, սակայն այդ վկայությունը կապված է աշխարհագրական հին տվյալների հետ[34]։

Համենայն դեպս, այս հարուստ գավառը հակառակ այն իրողության, որ սահմանի վրա գտնվելով միշտ պատերազմական գործողությունների թատերաբեմ է եղել, և այն փաստը, որ այս գավառում եղել են ասորական 15 վանքեր, նշանակում է, որ այն ոչ միայն տնտեսապես բարգավաճ, այլև մշակութային բավական բարձր մակարդակի վրա է գտնվել։

Վաղուց Բեյթ Նուհադրան որպես Պարսկաստանի և Հռոմի միջև առևտրի փոխհարաբերությունների կարևոր հենակետ Ադիաբենի տնտեսական կյանքում նշանակալից տեղ է ունեցել և, ինչպես ասացինք, Արբելայից հետո գրավել է երկրորդ տեղը։ Որպես այդպիսի իրավունք ունեցող՝ 410 թ. Տիզբոնի կաթողիկոս Իսահակի ժողովին ներկա էր Բեյթ Նուհադրայի եպիսկոպոս Բարհինոսը[35]։ Եվ դրանից հետո, մանավանդ 484 թ., ասորական եկեղեցու կյանքում արդեն շատ կարևոր տեղ էր գրավել։ Դրա համար էլ ասորիների Ակակիոս կաթողիկոսը եկեղեցական ընդհանուր ժողովը հրավիրում է Բեյթ Նուհադրայի գյուղերից մեկում՝ Բեյթ-Ղեդրեյում[36], որը նշանավոր էր իր վանքով[37]։ Բեյթ Նուհադրայում ժողովը գումարելու պատճառներից մեկն էլ գուցե այն էր, որ մեսալյան շարժման կարևոր կենտրոններից մեկն էր դարձել, և 484 թ. ժողովում նեստորական եկեղեցին որոշեց խիստ միջոցների դիմել այդ շարժումը ճնշելու համար։ Սակայն, ըստ երևույթին, այդ միջոցառումներն արդյունք չեն տալիս, և այդ շարժման կողմնակիցները շարունակում են իրենց գոյությունը նույնիսկ հետագա դարերում։ Հետաքրքրական է, որ 790 թ. նեստորական կաթողիկոս Մար Տիմոթեոսի գումարած

---

[34] Նույն տեղում։

[35] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 273. Մեզ հասած ասորական վարքերից «Այթիլահի» վարքում, որի հայերեն վաղ շրջանի, V դ. թարգմանությունն էլ է հասել մեզ, պատմվում է, որ պարսիկները [Այթ]իլահին ձերբակալելով բերում են Բեյթ Նուհադրա գավառը (հայերեն հին թարգմանության մեջ այն դարձել է «Բեղնադարայ»). ահա նրան բերում են այս գավառի մեծ գյուղերից մեկը, որ կոչվում էր «Սատգարարը» կամ ինչպես մի այլ ասորական ձեռագրում է «Սատգարաղ» իսկ հայկական հին թարգմանության մեջ գրված է «ի Գեղաքաղաքն, որ Տուժուր կոչի յՐիստիգարն»։ Կարևորն այստեղ այն է, որ Սատգարարը կամ «Րիստիգարը» եղել է Բեյթ Նուհադրայի տիրոջ նստատեղին, այսինքն՝ գլխավոր կենտրոնը։ Այս մասին տե՛ս *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, pp. 391, 392. Հայերեն հին թարգմանությունը՝ «Վկայք Արևելից», էջ 235։

[36] Բեյթ Ղեդրե, գյուղ Մոսուլի հյուսիս-արևելքում, Ալկոշ և Ղայն Սիֆնեի միջև։

[37] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 299.

եպիսկոպոսները Ռասոնինի համար եպիսկոպոս են ձեռնադրում ու այնտեղից մեկնում Շահրկերթ[117] քաղաքը[118]: Բնագրի անգլերեն լեզվի թարգմանիչ Մինգանան գտնում է, որ Ռասոնինը ձեռագրական սխալ է և այն պետք է ուղղել «Ռամոնին»: Եվ եթե այս ենթադրությունը ճիշտ է, ուրեմն նախ պիտի եզրակացնել, որ Ռամոնինի եպիսկոպոսական աթոռը գոյություն է ունեցել դեռ շատ վաղուց, համենայն դեպս առնվազն III դ. կեսերից, և ապա այս վկայության վրա հիմնվելով կարելի է մոտավորապես փնտրել Ռամոնինի տեղը: Այս տեղեկությանը եթե հավատալու լիներնք, ապա պիտի մտածեինք, որ Ռամոնինը Հերբաթ-Գելալի մոտակայքում ինչ-որ քաղաք է եղել, ոչ հեռու նաև Շահրկերթից: Փաստերը խոսում են այն մասին, որ Ռամոնինը պետք է Փոքր Զաբից ոչ հեռու, Բեյթ Գարմայի և Արբելայի նահանգի միջև, սահմանի վրա, հավանաբար Արբելայի կազմի մեջ մտնող մի քաղաք լինի:

Ռամոնինի աշխարհագրական դիրքի և Մինգանայի ենթադրության հարցի վրա կանգ է առել նաև Ֆին: Նա խոսելով Ռումինի գյուղի մասին, գրում է, որ այն «Ադիաբենի գյուղերից է. որի մոտակայքում Գիորգիոսը հիմնել էր իր առաջին վանքը: Թվում է, թե, շարունակում է պատմաբանը, Ռումինին նույնն է Ռամոնինի հետ, որն անվանվել է նաև (ինչպես Մինգանան է կարծում) Ռասոնին: Ինչպես գիտենք, Մինգանան «Ռամոնինը» տեղադրել է Էրբիլի հյուսիս-արևմուտքում: «Եվ եթե Մար Գիորգիոսի վանքը իսկապես Հատոն (գավառում) էր, ինչպես ես էլ եմ մտածում, ուրեմն, հավանաբար, Ռամոնինը այդ մարզի կամ նրա հին կենտրոնի (գլխավոր քաղաքի կամ մայրաքաղաքի) անունն էր: Իսկապես, այն ինչ որ կապ ունի Ադիաբենի լեռան հետ»[119]:

Այս փաստերի վրա հիմնվելով՝ եվրոպացի պատմաբանը փորձում է պարզել Ռամոնինի ճիշտ տեղը, հայտնելով այն կարծիքը, որ «մարզի անունը երևում է հավասարապես ասորերեն Խնիաա կամ Խնայտա ձևից: Արաբներից Կուդաման X դ. կեսերին այն կոչում է Ալխանայա,

---

117 Շահրկերթ քաղաքը գտնվում էր Բեյթ Գարմայ նահանգում, Դակուկի և Արբելայի միջև: IV դ. Քարդագի մարզպանության ժամանակ, Բեյթ Գարմայը միացված էր Խեդայաբի նահանգին: Հասկանալի է, որ որպես ենթական գավառ, Խեդայաբի եպիսկոպոսը գնում և Ռամոնինի համար եպիսկոպոս է ձեռնադրում: Ինչ վերաբերում է Դակուկին, այն գտնվում էր Քերքուքի հարավում, մոտավորապես 9 ժամ հեռավորության վրա՝ Մոսուլից Բաղդադի ճանապարհի վրա:

118 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրները (Շախլուփա եպիսկոպոսի ժամանակ), էջ 87:

119 J. M. Fiey, Assyrie chrétienne, vol. I, p. 208.

բնակները անվանված են եղբայրներ ու հավատակիցներ և նամակը ուղղված է առ «Տէր Դանիէլ Քարմա եպիսկոպոս ի Մաղքայ և Շաւտայ քովրիսկոպոսունք, և Աբայ և Մարի երիցունք, Միր Հորմիզդ, և Աբղա հայ սարկաւագունք, և ազատ մարդիկ», և այլն[43]:

Նախ, որտե՞ղ էր գտնվում Քարման, որի եպիսկոպոսը Դանիելն էր: Շաբոն իր ծանոթագրություններից մեջ գրում է, որ «տեղը անհայտ է, գուցե դա Քարմա-Կաստրան է, որը գտնվում էր Տագրիտի շրջանում և շուտով Հակոբիկյան թեմ եղավ»[44]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Նեստորական կաթողիկոս Ակակիոսի 486 թ. գումարած կրոնական ընդհանուր ժողովի մասնակիցների մեջ հիշատակված է Քարմայի եպիսկոպոս Դանիելը, և այդ ժողովի որոշումների տակ ստորագրած եպիսկոպոսների ցուցակում 22-րդը նույն Քարմայի եպիսկոպոս Դանիելի ստորագրությունն է[45]:

Եթե Շաբոյի այս տեղադրության հետ համաձայնվենք, կնշանակի, որ այս եպիսկոպոսական աթոռը եղել է Տիգրիս գետի վրա, Բաղդադի և Մուսուլի միջև[46], որովհետև Տագրիտը գտնվում էր այդ երկու քաղաքների միջև: Եթե դա ճիշտ է, ապա Տագրիտի եպիսկոպոսական աթոռը եղել է Տագրիտից ոչ հեռու՝ Քարմայում[47]:

Սակայն այժմ մի այլ հարց է առաջանում: Նեստորականների

---

[43] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 41:

[44] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 675.

[45] Նույն տեղում, էջ 307:

[46] Նույն տեղում, էջ 684:

[47] Բաբգեն կաթողիկոսի նամակում հիշատակվում են որոշ շրջաններ ու քաղաքներ: Ցին իր ուսումնասիրության մեջ կանգ է առել այդ տեղերի անվան վրա ու գրել, որ «Գիրք թղթոցում» հիշատակված «Ադրբմբան շահաստանը՝ Բեյթ Արամեն է, այսինքն Սուբիստանը, Կենտրոնական Միջագետքը, Գարմեկան շահաստանը, Բեյթ Գարման է: Պերոզշապուհ քաղաքը, նույն Պիրոզ Շաբուր քաղաքն է: Հերթը՝ Հիրան կամ Ալ-Հիրան է, իսկ Բղադը կամ Բլադ շահաստանը նույն Բալատ կամ Բալադն է, այսինքն Տիգրիսի վրա, Մուսուլից 7 ժամ հեռավորության վրա, այժմյան էսկի Մուսուլն է: Իսկ Մծբինից հետո հիշատակված Նինվեի նահանգի Նոմա Արտաշիրականը նույն Արբելայի թեմի մասին է: Տե՛ս J. M. Fiey, Assyrie Chrétienne. vol. II, p. 124.

Տակրիտի մասին խոսելիս, պետք է ուշադրություն դարձնել, որ VII դարից սկսյալ Հակոբիկյանները Տակրիտը իրենց գործունեության կարևորագույն կենտրոններից մեկը դարձրին և նրա եպիսկոպոսությունները՝ Բեյթ Արաբեի, Սինգարայի (Սինջար), Մաղալթայի, Արզոնի, Դոմելի (Դավդամելայի), Բեյթ Ռեմանի (Բարիմա կամ Բեյթ Վազիկի), Կարմեի, Գազարտա-դը-Կարդուի, Բեյթ Նուհադրեի, Պիրոզ Շաբուրի, Շարզուլի, Տալլիբայեյի (քոչվոր արաբ քրիստոնյաների): Տե՛ս *E. Honigmann*, et *A. Maricq*, Recherches, p. 124. Դրանից հետո ավելացան նաև 3 եպիսկոպոսություններ՝ Սեգեստանի, Հերաթի և Ատրպատականի: Տե՛ս նույն տեղը:

486 թ. ժողովին մասնակից Քարմայի Դանիել եպիսկոպոսը, պարզ է, որ պետք է նեստորական լիներ, մինչդեռ Բաբգեն կաթողիկոսի նամակում հիշատակված Դանիելը ներկայացված է որպես միաբնակ եպիսկոպոս, և նամակն էլ գրված է դատապարտելու համար Նեստորին և նրա հետևորդներին ու պաշտպանելու միաբնակ եկեղեցու աստվածաբանական տեսակետը: Բաբգեն կաթողիկոսը այդ առթիվ տեղեկացնում է, որ Հայաստանում իր գլխավորությամբ հավաքվել են եպիսկոպոսները, վանականները և նախարարները «յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուին քաղաք»[48] և այդ ժողովում դատապարտել են նեստորականներին և համամիտ են եղել հայերի պաշտպանած տեսակետներին: Այնպես որ Բաբգեն կաթողիկոսի այս նամակից երևում է, որ Հայաստան եկած ասորի պատգամավորները ոչ նեստորականներ էին, այլ՝ միաբնակներ: Եթե այդպես է, արդյոք Բաբգենի նամակում հիշատակված Դանիելը նույն անձնավորությո՞ւնն է, որը մասնակցել էր Ակակիոսի 486 թ. ժողովին: Երվանդ Տեր-Մինասյանն իր աշխատության մեջ գրել է, որ Բաբգեն կաթողիկոսի այդ ժողովը տեղի է ունեցել 506 թ.[49]: Ուրեմն, Ակակիոսի ժողովից 20 տարի հետո: Այժմ հարց է առաջանում, կարո՞ղ էր Քարմայի եպիսկոպոս Դանիելը դեռ իր աթոռին մնացած լինել: Անշուշտ կարող էր, և հնարավոր էր նաև, որ այդ քսան տարիների ընթացքում եպիսկոպոսն իր տեսակետները փոխած լիներ և նեստորական հավատի փոխարեն ընդունած լիներ միաբնակությունը: Պատմությունից հայտնի են բազում փաստեր, երբ մի կողմի եպիսկոպոսն անցնում է մյուս կողմը, ինչպես օրինակ, ասորական եկեղեցու ու գրականության հայտնի դեմքերից Եդեսիայի եպիսկոպոս Ռաբուլան[50]: Այնպես որ, Դանիելը ևս կարող էր նման դավանափոխություն կատարած լիներ: Կարծում ենք, որ երկու աղբյուրներում հիշատակված Դանիել եպիսկոպոսը նույն անձնավորությունն է, որը նեստորական դավանանքից հրաժարվելով ընդունել էր միաբնակությունը: Այս տեսակետից հետաքրքրական է, որ 497 թ. Նեստորական կաթողիկոս Բաբայի գումարած եկեղեցական ընդհանուր ժողովին նույն այս Դանիել եպիսկոպոսը չի ներկայանում, և այդ թեմից ժողովի որոշումների տակ ստորագրել է քարտուղարի պաշտոն ունեցող քահանաներից Մար Աբա անունով մեկը[51]: Ըստ երևույթին այս Մար

[48] Գիրք թղթոց, էջ 43:

[49] Ն. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 70:

[50] *R. Duval*, La littérature syriaque, Amsterdam, 1970, p. 339.

[51] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 316.

Աբա քահանան Բա Նուհադրայի եկեղեցու կարևոր դեմքերից էր, և ենթադրում ենք, որ հայոց Բաբգեն կաթողիկոսի նամակում հիշատակված Աբա երեցը նույն այս Մար Աբա քահանան է[52]:

Մեզ համար կարևորն այն է, որ եթե ամբողջ Ադիաբենում կամ ավելի ճիշտ Ադիաբենի թեմում տիրապետողը հիմնականում նեստորականներն էին, ապա Բա Նուհադրայում գոյություն է ունեցել հավատացյալների ինչ-որ մի կորիզ, որը, հակառակ նեստորական դավանանքի, հետևել է միաբնակության, և այդ կորիզը հետզհետե մեծանալով կարողացել է իրեն կենտրոն դարձնել Մուսուլից մոտավորապես 30 կիլոմետր հեռավորության վրա, հյուսիս-արևելքում գտնվող Մար Մաթայի վանքը: Բա Նուհադրայում միաբնակության ուժեղացման և եպիսկոպոսական աթոռի ստեղծման գործում հայ եկեղեցին շատ կարևոր դեր է կատարել և հայոց կաթողիկոս Քրիստափոր Ա-ն առաջին անգամ VI դ. 40-ական թվականներին Հայաստանից Մար Մաթա գալով նրանց համար եպիսկոպոս է ձեռնադրել[53]: Բար Հեբրայուսը վկայում է, որ հայոց մետրապոլիտ Քրիստափորը անցնելով այնտեղից, տեսավ, որ այնտեղ էին մնացել մի քանի վանականներ, ինչպես աղավնինները ժայռերի ծերպերում, և որովհետև Բաբայի և Բարսահդեի վանքի եպիսկոպոսները Աթուրի և Նինվեի մետրապոլիտի հետ սպանված էին, նա այս վանականներից մեկին, մի արշարակշիռ մարդու՝ Գարմա անունով, մետրապոլիտ դարձրեց[54]: Մի քիչ այլ ձևով այդ մասին է գրում նաև Միքայել Ասորին իր աշխատության մեջ[55]: Կարևորն անշուշտ այն է, որ VI դ. հայ եկեղեցին այնքան էր ուժեղացել, որ կարողացել էր Հայաստանից դուրս պարսկական տիրապետության մեջ ապրող միաբնակ քրիստոնյաների հետ ամուր կապ պահպանել և օգնել նրանց իրենց գոյությունը պահպանելու: Անշուշտ, նման կապերը ենթադրել են տալիս, որ այն ժա-

---

52 Գիրք թղթոց, էջ 41:

53 Ե. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները, էջ 122: Ասորական աղբյուրներում տեղեկություն կա այն մասին (մեր կարծիքով դա հետագայում ստեղծված ավանդություն է), որ Մար Մաթայի և Նինվե Մուսուլի առաջին առաջնորդ-եպիսկոպոսը եղել է Բար Սոհդո եպիսկոպոսը, և որը 484 թ. սպանվել է Մծբինի Բեմի առաջնորդ Բարծումա եպիսկոպոսի կողմից: Դրանից հետո աղբյուրները լռում են, մինչև Գարմայի ձեռնադրությունը: Այս մասին մանրամասն տե՛ս J. M. Fiey, Assyrie Chrétienne, vol. II, p. 350.

54 *Barhebraeus*, Chronicon Ecclesiasticum, ed. Abbeloos et Lamy, Lovanii, t. I, 1872, p. 85.

55 *Michel le Syrien*, Chronique, t. II, Paris, 1901 (Bruxelles, 1963), livre IX, chpt. IV, p. 414.

մանակ երթևեկության, ավելի ճիշտ առևտրական քարավանների և առևտրական հարաբերությունների աշխուժացում էր տեղի ունեցել և նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նման կապերի համար։ Միայն այդպիսի նպաստավոր պայմաններում կարող էր հայոց կաթողիկոսը ճանապարհորդել և հասնել Մուսուլից ոչ հեռու Մար Մաթայի վանքը ու այնտեղ միաբնակների համար եպիսկոպոս ձեռնադրել։ Քրիստափոր Ա. կաթողիկոսը այսպես գալիս է Մար Մաթա, և Գարմային՝ Մար Մաթայի[56], Աթուրի և Նինվեի մետրապոլիտ ձեռնադրում։ Համենայն դեպս, Հակոբիկյանների, այսինքն՝ միաբնակ հեղինակների մոտ այս աթոռը կամ թեմը հայտնի է նաև Բա Նուհադրայի թեմ անունով[57]։

Այժմ վերադառնանք հայոց Բաբգեն կաթողիկոսի՝ պարսկական տիրապետության մեջ ապրող «ուղղափառներին»[58] գրած նամակին։ Ինչպես գրել ենք, այդ նամակը ուղղված է եղել ի շարս այլ տեղերի ու քաղաքների նաև Նինվեի նահանգի Նո[ա Արտա]շիրականի «ուղղափառ» քրիստոնյաներին[59]։ Ցին իր ուսումնասիրության մեջ Նինվեի նահանգի Նո[ա Արտա]շիրականը նույնացնում է Արբելայի կամ Ադիաբենի թեմի հետ, անշուշտ եկեղեցական առումով[60]։

Այս հարցի շուրջը և՛ հայ, և՛ օտար պատմաբանների մոտ վեճ է առաջացել և ամեն մեկը փորձել է ապացուցել իր տեսակետի ճշտությունը։ Նրանցից, անշուշտ, Հ. Մանանդյանն է, որ այդ հարցը բազմակողմանի ուսումնասիրելով, իր աշխատություններում փորձել է պարզել Նորշիրականի աշխարհագրական դիրքը, տեղը։ Մինչ այդ նա իր այս աշխատության մեջ քննարկել է այդ կապակցությամբ գիտնական-

---

56 Այս վանքը գտնվում էր Մուսուլի հյուսիս-արևելքում, Մակլուբ լեռան գագաթին և մինչև այսօր էլ այդ վանքում ցույց են տալիս Մար Զաքայի, Բար Սոհդոյի և Բար Հերրայուսի գերեզմանները։ Տե՛ս J. M. Fiey, Assyrie Chrétienne, vol. II, p. 759.

57 Շատ ավելի ուշ, Հակոբիկյանների մասին կարելի է ասել, որ 1583 թ. այս կողմերում ճանապարհորդած Լեոնարդո Արեկը պատրաստել է Հակոբիկյան եպիսկոպոսների ցուցակը և այդ ցուցակից երևում է, որ Արբելայում այն ժամանակ արդեն վերացել էր Հակոբիկյան եպիսկոպոսական աթոռը և այդ վիճակը շարունակվել էր նույնիսկ հետագայում, որովհետև մեզ հասած 1714—1761 թթ. փաստաթղթերում չի վկայակոչված Արբելայի Հակոբիկյան եպիսկոպոսի անունը։ Հակոբիկյանները ուշ դարերում հիմնականում իրենց կենտրոններն էին դարձրել Երուսաղեմը, Համան, Հոմսը, Դամասկոսը, Հալեբը, Անտիոքը, Տուր Ղաբղինը, Ծոբինը, Մարդինը, Ամիդը և նրա շրջակայքը։ Այդ մասին տե՛ս E Honigmann, Le couvent de Barsauma, p. 179.

58 Այսինքն «միաբնակներ»։

59 Գիրք թղթոց, էջ 41։

60 J. M. Fiey, Assyrie Chrétienne, vol. II, p. 124.

ների արտահայտած կարծիքները։ Ըստ Մարկվարտի, գրում է նա. «Նոր-Շիրականի բդեշխությունը կազմվել էր հավանորեն Տիգրան Մեծի ժամանակ Մեծ Աղբակում և հարևան շրջաններում, որ վերջինս նվաճել էր Ատրպատականի կողմերում, և այն տրվել էր Արծրունիներին»[61]։ Մարկվարտը հետագայում էլ, իր այլ աշխատություններում, շարունակել է պնդել և ցույց տալ, որ Փավստոսի ու Ագաթանգեղոսի վկայությունները, որոնց համաձայն Նոր-Շիրականի բդեշխությունը Արշակունյաց Հայաստանի չորս սահմանակալ իշխանություններից մեկն է համարվում, ճիշտ չեն և չունեն պատմական արժեք։ Մարկվարտի ասելով, Նոր-Շիրական է անվանվել ամբողջ Ադիաբենը, որն անանջատ մասն է եղել Սասանյան Պարսկաստանի։ Այդ երկիրը Հայաստանի գերիշխանության տակ է եղել միայն Տիգրան Մեծի ժամանակ („Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation„, p. 68. „Südarmenien und die Tigrisquellen, p. 379)“[62]։ Շարունակելով իր այս եզրակացությունները, նա գրում է, Նոր-Շիրականը իբր „Not-Artachirakan“ անվան կրճատված ձևն է, որն ըստ Տաբարիի, Արտաշիրի հիմնած ութ քաղաքներից մեկն էր և գտնվում էր Մուսուլի կողմը[63]։

Մեր աշխատության այս հատվածի համար կարևոր նշանակություն ունեն Մարկվարտի մի այլ ուսումնասիրության մեջ Բա Նուհադրայի և Նոր-Շիրականի վերաբերյալ արտահայտված մտքերը, որոնց վրա ևս կանգ է առել Հ. Մանանդյանը։ Գերմանացի գիտնականը եզրակացնում է, որ «Նոտարատան» և «Շիրականը» իբր երկու տարբեր երկրներ են (*Markwart*, Eranschahr, p. 23)։ Նա գտնում է, որ «Նոտարատան» Մուսուլի շրջանում գտնվող նույն Բեթ-Նոհադրեն (Բա-Նուհադրան) է, իսկ «Շիրական»-ի տեղադրությունը նա ևնթադրում է այժմյան Ուշնուի, հին Շնավհ գավառի շրջանում, ուր գտնվում էր Թեոփիլակտոս Սիմոկատտեսի հիշատակած Սիրագանների դյուղը (Theoph. Sim. 5, 8, 9)“[64]։

---

[61] Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945 էջ 23։

[62] Նույն տեղում։

[63] Նույն տեղում, էջ 24։ Այս հարցերի մասին տե՛ս նույն հեղինակի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 297։ Տե՛ս նաև Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, «Պատմա-բանասիրական հանդես», թրգմ. Գ. Աբգարյան, 1961, № 1, էջ 213։

[64] Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 25։ Մարկվարտը, ինչպես ասել ենք, «Նոտարատան»-ն համապատասխան էր համարել Մուսուլի շրջանում գտնվող Bêθ Nohaðrê-ին (Eranschahr, p. 22—23), որի տեղը Հոֆմանը մատնացույց է արել Տիգրիսի ձախ ափին և Խակի-Մուսուլի դիմաց գտնվող Ավանա գյուղի հյուսիսային կողմում մինչև Թարուր գետի ձախ ափը (*Hoffmann*, Ausüge, p. 208)։ Տե՛ս Հ. Մանանդյան, Պատմական..., էջ 25։

Մարկավարտի այս եզրակացությունները ընդունելի էր համարում նաև Ադոնցը, որը, ի լրումն Մարկվարտի պնդումների, իր կողմից ավելացնում է, որ «Աշխարհացույցում Նոհատրա է անվանվում, հավանորեն ամբողջ Ադիաբենը, իսկ Աղձն՝ ամբողջ Արվաստանը։ Իսկ Նոր-Շիրականը, նրա կարծիքով, կարող է լինել Նոհատրա տեղանվան հայկական հոմանիշը»[65]։

Ն. Ադոնցն իր այս ասածը հաստատելու համար վկայակոչում է հայոց կաթողիկոս Բաբգենի նամակը[66]։ Ինչպես տեսանք, հայ բարձրաստիճան այս եկեղեցականն իր նամակում հիշատակում է նաև «Նինվեի նահանգի Նոշիրականը», իսկ, գրում է նա, հայտնի է, որ Նինվեն նեստորական եկեղեցու հինգ թեմերից մեկն էր, որն ասորիներին հաճախ հայտնի էր Խեդայաբ, հնում Ադիաբեն անունով[67]։ Այնպես որ, եզրակացնում է հայ գիտնականը, Աշխարհացույցում ամբողջ Ադիաբենը կամ Խեդայաբն է անվանված Նոհատրա[68]։ Այնուհետև Ն. Ադոնցը գրում է, որ «Նոր-Շիրականը քաղաքական տերմին էր մատնանշելու համար հայ Արշակունիներին ենթակա շրջանները Ադիաբենի սահմանում, իսկ Նիհորականը ընդհանուր անուն էր հայ Արշակունիների այն երկրամասերի համար, որոնք գտնվում էին Ատրպատականում»[69]։

Այսպիսով, Ն. Ադոնցն էլ, Մարկվարտի նման, ի վերջո, գալիս է այն եզրակացության, որ Նոր-Շիրականը նույն Նոտ-Արտաշիրականն է, որն անվանվել է Խեդայաբ կամ Ադիաբեն։ Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը գրում է. «Եթե անգամ հաստատուն կերպով ապացուցված համարվի, որ Նոր-Արտաշիրական, ինչպես մատնացույց է արել Մարկվարտը, անվանվել է, իրապես, Ադիաբեն-Իդիաբը՝ այդ դեպքում ևս, ինձ թվում է, դժվար է համաձայնվել նրա հետ, որ հայկական աղբյուրների մեջ հիշատակված Նոր-Շիրականը կրճատված ձևն է Նոր-Արտաշիրական տեղանվան»[70]։ Հ. Մանանդյանի կարծիքով, «Նոր-Շիրականը բնավ կապ չունի Տաբարիի Bûdh-Ardašir-ի, Իբն Խորդադբհի Bûdh-Ardaširân-ի և Աշխարհացույցի Նոտ-Արտաշիրականի հետ»[71]։

---

65 Հ. Մանանդյան, *Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ*, էջ 36։

66 *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 227.

67 *Նույն տեղում*։

68 *Նույն տեղում*։

69 *Նույն տեղում*, էջ 229։

70 Հ. Մանանդյան, *Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ*, էջ 26։

71 *Նույն տեղում*։ Որովհետև Տաբարիի թարգմանիչ Նյոլդեկեն ենթադրում է, որ Bûdh-Ardâšir քաղաքը կարող էր հիմնած լինել Սասանյան Արտաշիր Բ թագավորը, որը 344 և 376 թթ. հիշատակված է իբրև «թագավոր Հադայաբ»-ի (Nöledeke Th.,

Իսկապես էլ Հայոց Բաբգեն կաթողիկոսի նամակում հիշատակված Նինվեի նահանգի Նորշիրականը կապ չունի հայկական Նոր-Շիրական բդեշխության հետ, որովհետև պարզ է, որ Նինվեն և նրա շրջակայքը բոլորովին մաս չեն կազմել Հայաստանի, և միակ կապը եկեղեցական հարաբերություններն էին։ Ինչպես տեսանք, Նինվեի նահանգի Նորշիրականը Բա Նուհադրան կամ Բեյթ Նուհադրան է, և անունների նույնությունն էլ շփոթության պատճառ է դարձել և ասորական Նորշիրականը նույնացվել հայկական Նոր-Շիրականի հետ։ Ժամանակին Հ. Մանանդյանը ճիշտ է նկատել, որ հայկական աղբյուրներում էլ այդ երկուսը տարբերվել են, և հայկական Նոր-Շիրականը Շիգրեր և Շիգրիանական երկիրն է, որ Թեոփիլակտոսի մոտ անվանված է Շիրագաննեի, իսկ հայ պատմիչների մոտ՝ Նոր-Շիրական[72]։

«Սիգրիանե» երկիրը գտնվում էր այժմյան Սիդիկանի և Ռևանդուզի հյուսիսակողմում և Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջաններում։ Իսկ Նոր-Շիրականի բդեշխը իշխում էր նաև այժմյան Ռևանդուզի ու Սիդիկանի հյուսիսակողմում և պաշտպանելու էր, ուրեմն, Հայաստանի հարավարևելյան սահմանները Մարաստան—Ատրպատականի կողմից[73]։ Այսինքն, դա, ինչպես ցույց է տվել ակադեմիկոս Ս. Երեմյանը, նույն «Պարսկահայք» նահանգն էր։ Այդ կապակցությամբ նա հետևյալ տեղեկություններն է տալիս. «Պարսկահայք նահանգ—Մեծ Հայքի 7-րդ նահանգը՝ 11301 կմ² տարածությամբ։ Սույն նահանգը տվյալ տերիտորիալ առումով տալիս է միայն «Աշխարհացոյց»-ը, հասկանալով Պարսկահայք անվան տակ Նոր-Շիրական բդեշխության տերիտորիան և նրան միացնում էր Հէր և Զարաւանդ գավառները։ Պարսկահայք անվան առաջին մասը «Պարսկա» (իմաստավորված պարսիկ բառով), անշուշտ կապ ունի ուրարտական ժամանակաշրջանի Parsua. Barsua երկրի անվան հետ, որը այն ժամանակ գտնվում էր Կապուտան (Ուրմիա) լճից հարավ։ Նոր-Շիրական կամ Նոշիրական բդեշխությունը համար-

---

Tabari, Leyden, 1879, p. 20). *Ըստ Իբն-Խորդադբիհի* Bûdh-Ardašîrân *է անվանվել հետագայում Մուսուլի երկիրը, այսինքն Հին Ադիաբենը (նույնը, էջ 20 և 70)։ Պարզ է, որ հենց այս վկայություններն են հիմք ծառայել Մարկվարտին ենթադրելու, որ* „Bûdh-Ardašîre-*ը, որը նա ըստ երևույթին ուղղել է* Not-Artaschîrakan *(Նոր-Շիրական), ոչ թե Հայաստանի բդեշխությունն է եղել, այլ անունն է եղել Ադիաբեն-Իդիաբի»։ Տե՛ս Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 24։*

72 *Տե՛ս Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 28։*

73 *Նույն տեղում, էջ 29, 33։*

վում է «առաջին սահմանակալն ի Նոշիրական կողմանէն» (Ագաթանգեղոս, 873, ճիԶ, էջ 459) և պիտի հսկեր Մեծ Հայքի սահմաններին Ատրպատականի կողմից»[74]։

Այս բոլորը հաստատում են, որ Նոր-Շիրականը կամ Նոր-Շիրականի բդեշխությունը կապ չունի Ադիաբենի կամ Խեդայաբի և կամ Արբելայի թեմի մեջ մտնող Բա Նուհադրայի կամ Բեյթ Նուհադրայի հետ։

4. ԲԵՅԹ ԲԱԳԱՇ (BEIT BAGAŠ) ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Նեստորական եկեղեցու ժողովներից պարզ երևում է, որ մեր թվարկության V դ. սկզբներից, ավելի ճիշտ՝ Իսահակ կաթողիկոսի 410 թ. ժողովից հետո, Բեյթ Բագաշը որպես եպիսկոպոսանիստ քաղաք եղել է Արբելայի մետրապոլիտության իշխանության ներքո[75]։

Այս քաղաքի ու նրա եպիսկոպոսական աթոռի պատմության ու եկեղեցական գործունեության մասին աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են տվել։ Այս փաստը խոսում է այն մասին, որ Բեյթ Բագաշը քաղաքական ու եկեղեցական կյանքում կարևոր դեր չի կատարել։ Ասորական վաղ շրջանի աղբյուրներից Մար Կարդագի վարքում Բեյթ Բագաշի մասին հիշատակություն կա։ Այդ վարքից իմանում ենք, որ IV դ. կեսերին քրիստոնեական ուժեղ մի համայնք է գոյություն ունեցել այդ քաղաքում, և քաղաքից ոչ հեռու գտնվող լեռան լանջերին այն ժամանակ ճգնել են բազում քրիստոնյա գործիչներ[76]։

Այդ գործիչներից Ղաբեդյաշուղը, ըստ այդ վարքի, քարոզչական նպատակներով գալիս է Արբելա ու այդտեղ էլ նրան հաջողվում է քրիստոնեական հավատին դարձնել այն ժամանակվա Խեդայաբի մարզպան Մար Կարդագին, որը Շապուհ Բ-ի պարսկական արքունիքի կարևոր դեմքերից մեկն էր։ Չնայած վարքում (ինչպես ընդունված է նման աշխատություններում) այնպես է ներկայացված, որ Կարդագը իբր քրիստոնեական հավատալիքներով ոգևորված մոռանում է ամեն ինչ, որ երկրային է ու հետագայում էլ գլխատվելով արժանանում է մարտիրոսի պսակին, սակայն համոզված ենք, որ իրականում բոլորովին այլ

---

74 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77։

75 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 272 (33).

76 *Bedjan*, Acta mart. et sanct., t. II, p. 446: *A. Scher*, Histoire Nestorienne, 1er Partie (II), p. 225.

գործոններ են դեր ունեցել։ Մար Կարդագը, երիտասարդ այդ պաշտոնյան ու զինվորականը, տեսնելով մի կողմից քրիստոնյաների կարևոր ազդեցությունը պարսկական տերության ներսում, հատկապես խեդայաբում, և մյուս կողմից էլ կենտրոնական իշխանության դեմ հետզհետե ուժեղացող դժգոհությունն ու դժգոհ տարրերի աշխուժացումը, ընդունում է քրիստոնեությունը, որպեսզի նրանց ու երկրի դժգոհ տարրերի հետ համագործակցելով ապստամբվի Շապուհի դեմ։ Սակայն նրա այդ գործունեությունը ձախողվում է, բռնվում է իր հակառակորդների կողմից ու գլխատվում որպես դավաճան։

Որտե՞ղ է գտնվում Բեյթ Բագաշը, որը հաճախ անվանում են Բալեշ, Բալի, արաբները նաև՝ Բալիս կամ Բեյթ Բալեշ[77]։

Հոֆմանը գտնում է, որ այն Մեծ Զաբի և Ուրմիա լճի միջև էր (Ausüge, p. 277)[78], իսկ Շաբոն գրում է, թե Բեյթ Բագաշը (Բաբշիշը, Բաղաշը) գտնվում էր Մեծ Զաբի վերին հոսանքի՝ Ատրպատականի ու Դաբիլի միջև, այսինքն՝ այժմյան Բաշ Կալեի տեղում (այժմ՝ պյուտ)[79]։ Հոնիգմանի կարծիքով, այն «Քալղաթ Բալիսն» էր[80]։ Ն. Ադոնցն էլ գրտնում է, որ Բեյթ Բագաշը գտնվում էր Զաբ գետի ափին, Զերրանից և Դիզից ոչ հեռու, հավանաբար Գևերում, հայկական «Գավառում», այժմյան «Բագեշ Գևեր»-ում[81]։

Այսպես, ուրեմն՝ Բեյթ Բագեշը կամ Բեյթ Բալեշը ոչ թե հայկական Բաղեշ (այժմյան Պիթլիս) քաղաքն էր, որ գտնվում էր Աղձնիքի և Բզնունյաց գավառի սահմանում, այլ Մեծ Զաբի վերին հոսանքում գտնվող այժմյան Բաշ Կալեն[82], այն ամրոց-քաղաքը, որը միշտ էլ իր բնական ամրություններով պատճառով. դժվարամատչելի է եղել թշնամուն։ Բաշ Կալեն (կամ Պաշքալեն) հայկական հին աղբյուրներին հայտնի էր Հա-

---

[77] *E. Honigmann*, Le couvent de Barsuma et le patriarcat Jacobite d'Antioche et de Syrie, Louvain, 1954, p. 116.

[78] *P. Peeters*, La passionaire d'Adiabène, p. 298.

[79] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 667.

[80] *E. Honigmann*, Le couvent, p. 116.

[81] *Н. Адонц*, Армения, стр. 228.

[82] Մ. Յովհաննէսեան, *Հայաստանի բերդերը, Վիեննա, 1970, էջ 160։ Այս աշխատության մեջ հեղինակը գրել է. «Բաղեշ բերդը, որ կը գտնուի Վանայ կամ Բզնունեաց ծովու հարաւ-արևմտեան կողմը «Աշխարհացոյց»-ի համաձայն նշուած է իբրև սահմանագլուխ Տուրուբերանի, բայց չի հասկցուիր թէ բերդը ներփակաբար առնուած է իբրև սահմանի եզր՝ թե ոչ։ Բաղեշի բերդը սակայն գտնուելով Սալնոյ ձորին մէջ, բնականաբար, պատկանելու էր Աղձնիքի, մինչդեռ Վարդանի մոտ Բզնունիքի մէջ»։ Նույն տեղում։*

դամակերտ կամ Ադամակերտ անունով։ Մովսես Խորենացին այդ մասին գրում է. «Եւ զԱրծրունիսդ դիտեմ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջին նորա կրէին։ Բողում պառասպելացն բաջաղանս, որ ի Հադամակերտին պատմին. մանկան Նիրհելոյ անձրև և արև հակառակել, և հովանի թռչնոյ՝ պատանւոյն թալկացելոյ»[83]։

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, ճիշտ կողմնորոշվելով, Հադամակերտը նույնացրել է Բաշ-Կալեի հետ ու գրել իր ուսումնասիրության մեջ. «Վասպուրականի 17-րդ գավառը, 1655 կմ² տարածությամբ, գրավում էր Մեծ Ջավ գետի վերին հոսանքը, որը կոչվում էր Աղբակ գետ, այժմ Ալբակ-սու. գավառի կենտրոնն էր Հադամակերտ ավանը (այժմ Բաշ-Կալե)։ Նրանից ոչ հեռու գտնվում էր Սուրբ Խաչ կամ Բարդուղիմեոսի վանքը։ Աղբակ Մեծը Արծրունի տոհմի հայրենիքն էր»[84]։ Նրա հետևողությամբ նույն կարծիքին է հանգում նաև Միքայել Հովհաննեսյանը, ասելով, որ «Հին Աղբագը կոչուած է Պաշքալէի գաւառ, ուր էր հին Հադամակերտը»[85]։

Եթե, ուրեմն, Բեյթ Բագեշը նույն հայտնի Հադամակերտն է, նշանակում է, որ դեռ հին ժամանակներից Հադամակերտում հայերի հետ միասին ապրել են նաև ասորիներ, որոնք ունեցել են իրենց եկեղեցին ու եպիսկոպոսական աթոռը։

Այսպես, 410 թ. ասորիների կաթողիկոս Իսահակի կողմից գումարված ժողովին մասնակցել է նաև Բեյթ-Բագաշի եպիսկոպոս Բարիևոսը և այս ժողովի որոշումների տակ եղած ստորագրությունների մեջ 23-րդը նրանն է[86]։ Թե ով էր այս եպիսկոպոսը, ոչինչ չգիտենք, միայն հայտնի է, որ նա իր եկեղեցիով հնթարկվում էր Արբելայի մետրապոլիտին[87]։ Դրանից հետո 424 թ. Տիզբոնի կաթողիկոս Դադյեշուղի գումարած ժողովին մասնակցել է Բեյթ Բագաշի եպիսկոպոս Մարեն։ Բացի վերջին երկուսից, մեզ հայտնի են նաև այս քաղաքի եպիսկոպոսներ Ափրաատը, որը մասնակցել է 497 թ. ժողովին, Մովսեսը՝ 544 թ. Տիմոթեոսը՝ 585 թ. և նորից Տիմոթեոսը՝ 605 թ.[88]։ Այս բոլոր եպիսկոպոսներն էլ նեստորականներ էին և, բնականաբար, պատկանում էին նեստորական եկեղեցուն։ VI դ. երկրորդ կեսից սկսյալ իրերի դրությունը

---

83 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. է, էջ 111։

84 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33։

85 Մ. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, էջ 315։

86 J. B. Chabot, Syn. Orient., p. 273.

87 Նույն տեղում։

88 Նույն տեղում, էջ 274, 285, 310, 344 և այլն։

փոխվում է: Պարսիկներն իրենց արշավանքներով ավերում ու կործանում են այս երկրամասերը: Միքայել Ասորու մոտ պահպանվել են տեղեկություններ պարսիկների կատարած արշավանքների մասին: Նա պատմում է, որ «Հուստինիանոսի (Բագավորության) 15-րդ տարում, որ է հույների 854 թ.[89], պարսիկները ավերեցին սահմանների վրա եղած շրջանները և ամայացրին Կալլինիկեն ու Բեյթ Բագաշը»[90]: Ավելի ուշ, հույների 886 թ., այսինքն՝ մեր թվականության 575 թ. պարսիկները, Ադարմոն մարզպանի գլխավորությամբ, նորից արշավում են այս շրջանները և ոչ միայն ավերում, այլև բազում գերիներ են տանում Բեյթ Բագաշից ու այլ վայրերից[91]: Այս ամայացումներն իրենց ազդեցությունն ունեցան, և տեղի եպիսկոպոսական աթոռը, ըստ երևույթին, քաղաքի ամայացման պատճառով վերացավ, որովհետև 605 թվից հետո եղած կաթողիկոսական ընտրություններին և կրոնական ժողովների մասնակիցների մեջ չկա Բեյթ Բագաշի եպիսկոպոսը և միայն XI դ. սկսյալ այս քաղաքը վերաշինվում է և բարգավաճում: Այդ վերածննդի շնորհիվ նորից Բեյթ Բագաշը եպիսկոպոսանիստ քաղաք է դառնում, միայն մի տարբերությամբ, որ քաղաքում տիրապետող տարրը լինում են «միաբնակները», այսինքն՝ Հակոբիկյանները, և հասկանալի է, որ եկեղեցական իշխանությունն անցնում է Հակոբիկյանների ձեռքը: Հակոբիկյաններին՝ քաղաքի եկեղեցական գործերում ձեռք բերած ազդեցության մասին է վկայում այն փաստը, որ Հակոբիկյան Յոհաննան 8-րդ պատրիարքի ընտրության ու ձեռնադրության համար հույների 1315 թ. Թամուզ ամսի 6-ին, այսինքն՝ մ. թ. 1004 թ. հուլիսի 6-ին հավաքված 48 եպիսկոպոսների մեջ էր նաև Բալեշ քաղաքի Մարութա եպիսկոպոսը, որի ստորագրությունը 12-րդն է[92], իսկ դա նշանակում է, որ Բեյթ Բագաշի եպիսկոպոսը Հակոբիկյան եկեղեցու ներսում բավական մեծ ազդեցություն է ունեցել, որովհետև 48 եպիսկոպոսների շարքում գրավել է 12-րդ տեղը: Հակոբիկյան եպիսկոպոսական այս աթոռը գոյություն է ունեցել դեռ XI դ. վերջերին: Նույն Միքայել Ասորին վկայում է, որ հույների 1402 թ. Քանուն առաջին ամսի 1-ին, այսինքն՝ մ. թ. 1090 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած Աբուլ Ֆարաջ Դավիթի, այսինքն՝ Աթա-

---

89 *Մ. թ. 543 թ.:*

90 *Michel le Syrien*, Chronique, t. II, 1963, chpt. XXVI, p. 220.

91 *Նույն տեղում:*

92 *Michel le Syrien*, Chronique, t. III, p. 469.

նաս 7-րդ պատրիարքի ընտրությանը մասնակցել է նաև Ռակկայի և Բալեշի եպիսկոպոս Իվանիսը[93]:

Ահա այն բոլոր տեղեկությունները, ինչ որ հնարավոր եղավ աղբյուրներից գտնել Բեյթ Բագաշի և նրա եպիսկոպոսական աթոռի վերաբերյալ[94]: Ինչպես պարզ երևում է այս տվյալներից, Բեյթ Բագաշը Ադիաբենի և կամ Խեդայաբի պատմության մեջ առանձնապես տեղ չի գրավել և քաղաքական ու մշակույթի պատմության մեջ առանձին դեր չի ունեցել:

5. ԲԵՅԹ ԴԱՍԵՆ (BEIT DASEN) ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Բեյթ Դասեն գավառի մասին ասորական վաղ շրջանի աղբյուրներից Մար Մարիի վարքում տեղեկություններ կան: Ըստ այս Վարքի, Մար Մարիի քարոզչական ճանապարհորդության ընթացքում Արբելա քաղաքում «Տերը», այսինքն՝ Հիսուսը երևում է նրան և կարգադրում, որ նա «իր աշակերտներից Թումխին (գուցե մեզ հայտնի «Թոմաս» անունն է) ուղարկի Դասեն աշխարհը կամ գավառը: Մար Մարին այդ կարգադրության համաձայն Թումխին ուղարկում է այնտեղ քրիստոնեություն քարոզելու և տարածելու: Սա գալիս է, քարոզում է Դասենում, ապա Ջուղայում, և երբ իր քարոզչական աշխատանքները վերջացնում է, անցնում է Դագուր աշխարհը[95]:

Ահա այն ամենը, ինչ գրում է Մար Մարիի Վարքը Դասեն գավառի մասին: Մեր այս աշխատության մեջ կանգ ենք առել Մար Մարիի Վարքի վրա և ցույց տվել, որ այդ Վարքը շատ ավելի ուշ է գրվել, հավանաբար V դ. հետո, երբ Տիզբոնի ասորական կաթողիկոսությունը կարողացավ իր գերիշխանությունը պարտադրել պարսկական տիրապե-

---

93 Նույն տեղում, հատ. Գ, էջ 476: Հակոբիկյանների Բեյթ Բագաշի եպիսկոպոսական աթոռն, ինչպես գրում է Հոնիգմանը, կազմավորվել էր մ. թ. 845 թ.: Այս մասին տե՛ս E. Honigmann, Le couvent, p. 104:

94 Ուշագրավ է, որ ասորի պատմիչները վկայակոչում են Բեյթ Բարտվայե (քուրդերի երկիր) անունով մի վայր: Ղիտայի վարքում այն դրված է Փոքր Զաբի արևմուտքում (Budge, Vie de Bar Idta, II, I, p. 263). Ցին կարծում է, որ Բեյթ Բարտվային պետք է տեղադրել ամբողջ Ադիաբենի հյուսիսում (J. Fiey, Assyrie Chrètienne, vol. I, p. 216): Այսօր էլ նրանք բնակվում են Բեյթ Ղավեի ու Բեյթ Բաղեշի շրջաններում:

95 Bedjan, Acta mart. et sanct., t. II, p. 59.

տության մեջ մտնող ասորական-նեստորական եկեղեցիներին. այդ գերիշխանությունը օրինականացնելու համար նման զրույցների ու ավանդությունների վրա էր հիմնվում: Իսկապես էլ, 410 թ. Նեստորական ժողովի որոշմամբ Բեյթ Դասենը, որը եպիսկոպոսական աթոռ ուներ, ենթարկվում է Արբելայի կամ Խեդայաբի թեմին, այսինքն՝ մետրապոլիտին: Դրանից հետո Նեստորական եկեղեցու գումարած կրոնական ժողովներում կամ կաթողիկոսական ընտրություններում հաճախ մասնակցում է նաև Բեյթ Դասենի եպիսկոպոսը: Բացի այս տեղեկություններից, ասորական աղբյուրները, դժբախտաբար, այլ փաստեր չեն հաղորդում մեզ: Նրանք ոչ միայն աշխարհագրական տեղեկություններ չեն տալիս, այլև չեն գրում այդ գավառում տեղի ունեցած պատմական իրադարձությունների ու նաև բնակչության մասին:

Ֆրանսիացի գիտնական Շաբոն, որը հրատարակել է նեստորական ժողովների արձանագրությունները, ծանոթագրության բաժնում նրա աշխարհագրական տեղեկության մասին գրում է, որ Բեյթ Դասենը գտնվում էր Գարա լեռների շրջանում (արաբների Ջեբել Դասենը), այսինքն՝ Մեծ Զաբի արևմուտքում, Ղամադիայի հարավում[96]: Իսկ Ֆին իր ուսումնասիրության մեջ գրում է, որ «Դասենի մեջ էր մտնում ամբողջ Ղամադիայի արևելյան շրջանը՝ հարավ-արևելքը և ընդգրկում համայա Մեծ Զաբի ամբողջ հովիտը, որն այժմ կոչվում է Զիբար, և տարածվում նրա երկայնքով ավելի հյուսիս»[97]:

Նույն այս հեղինակի վկայությամբ Բեյթ Դասենը, որը շատ լեռնային էր, ասորական աղբյուրներում անվանված է «Բեյթ Տուրե», այսինքն՝ «լեռների աշխարհամաս» կամ «մարզ»[98]:

Ուրեմն այսպես՝ ասորական աղբյուրների Բեյթ Դասենը այն գավառն էր, որ մինչև արաբական արշավանքները մտնում էր Արբելայի եկեղեցական թեմի մեջ և հետագայում, երբ արաբները ստեղծեցին իրենց աշխարհակալ կայսրությունն ու Մուսուլը դարձավ այդ կայսրության կարևոր կենտրոններից մեկը, Ադիլ Ատիյայի վկայությամբ, Դասենը ևս ընկավ Մուսուլի մետրապոլիտության ազդեցության տակ: Երբ Մուսուլի և Արբելայի թեմերը դեռ բաժան էին, նրա վկայությամբ, Մուսուլի մետրապոլիտին էին ենթարկվում Նինվեի, Բեյթ Բագաշի, Հադիթայի, Դասենի, Նուհադրայի և Ուրմիայի եպիսկոպոսները, մինչդեռ Ադիաբենի, այսինքն՝ Արբելայի կամ Էրբիլի մետրապոլիտին էին են-

---

[96] *J. B. Chabot*, Syn. Orient., p. 667.

[97] *J. M. Fiey*, Assyrie Chrétienne, vol. II. p. 787.

[98] Նույն տեղում:

Բարկվում այն ժամանակ Մաալթայի, Ջուաբիայի և Կաֆտունի եպիսկոպոսները[99]: Այսպես, Սասանյանների օրոք ծաղկող ու բարգավաճող նեստորական եկեղեցին շարունակում է վերելք ապրել, երբ արաբները, մ. թ. 637 թվին, Յեշուղիհաբ Բ կաթողիկոսի օրոք (628—644 թթ.) Կտեսիփայի ճակատամարտից հետո, դրավեցին նաև Տիլբոնը, իրենց գերիշխանությանը ենթարկելով ամբողջ Պարսկաստանը: Արաբական տիրապետության այս շրջանում ինչպես Սասանյանների օրոք, նեստորականները ճանաչվեցին որպես կրոնական համայնք և իսլամ ղեկավարները շարունակեցին պահպանել այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք դարերի ընթացքում Սասանյանների կողմից շնորհվել էին նեստորական եկեղեցուն ու նրա հավատացյալներին: Արաբ խալիֆաները իրենց գերիշխանությունն ամուր հիմքերի վրա դնելու և իրենց կայսրության մեջ համակիր տարրեր ունենալու նպատակով, արտոնյալ պայմաններ են ստեղծում նեստորական եկեղեցիների ու նրանց հավատացյալների համար, որովհետև այդ եկեղեցու բաղում հայտնի գործիչներ, հատկապես սկզբնական շրջանում, շատ կարևոր ծառայություններ էին մատուցում արաբ խալիֆաներին: Այս տեսակետից հատկանշական է արաբների տիրապետության սկզբնական շրջանում, արաբական արշավանքներից հետո Խեդայաբի եպիսկոպոսի գրած նամակը, որտեղ նա հայտնում է այն միտքը, թե արաբներն այնքան էլ անարդար չէին, ինչպես կարծում էին, մանավանդ որ նրանք հարգում էին կղերականներին ու պաշտպանում եկեղեցիները (*J. Assemani*, Bib. Orientalis, t. *III*, I, p. 13): Համենայն դեպս, Աբբասյանների ժամանակ Բաղդադում ասորի ամենամեծ ուսուցիչներն ու ամենահայտնի պալատական բժիշկները այնպիսի մեծ ազդեցություն ունեցան, որ արաբ խալիֆաները պայմաններ ստեղծեցին, որ նեստորական կաթողիկոս Հանանյեշուղն (774—779 թթ.) իր աթոռը տեղափոխի Բաղդադ: Սակայն XII—XIII դդ. սկսյալ, հատկապես XIV դ., թաթարական և ապա լենգթեմուրյան արշավանքներից հետո, նեստորական եկեղեցին անկում ապրեց, և նեստորականները ստիպված գաղթեցին իրենց տեղերից ու եկան հաստատվեցին Ուրմիո ու Վանա լճի միջև ընկած տարածության վրա, իրենց կաթողիկոսական աթոռն էլ Բաղդադից տեղափոխվեց Մարաղա՝ Ուրմիո լճի արևելքը: Մծբինի դպրոցը, որը գործում էր մինչև XVI դ., վերջնականապես փակվեց[100]:

---

[99] *A. S. Atiya*, A history of Eastern christianity, p. 265.

[100] *A. S. Atiya*, A history, pp. 268—277.

Նեստորական եկեղեցու գոյության համառոտ պատմությունը տրվեցինք՝ ընդհանուր գաղափար կազմելու, ցույց տալու համար, թե ինչպես են քաղաքական պայմաններն անդրադարձել եկեղեցու (ինչպես, անշուշտ, բոլոր եկեղեցիների) կյանքի ու գործունեության վրա, և եկեղեցական թեմերը առաջանում և կամ կորցնում էին իրենց ազդեցությունն ու նշանակությունը, ղիջելով տեղը այն քաղաքներին ու կենտրոններին, որոնք քաղաքական ու տնտեսական կյանքում սկսում էին կարևոր դեր խաղալ։ Դասենի թեմը ևս գոյություն է ունեցել և միայն XIV դ. գաղթից հետո մոռացության է մատնվել[101]։ Ինչպես ասել ենք, չնայած այն երկար ժամանակ գոյատևել է, բայց ասորական աղբյուրները դրա մասին համարյա լռել են, որովհետև ասորիների կյանքում այն առանձին պատմական նշանակություն չի ունեցել, մանավանդ որ այն ոչ թե ասորական, ինչպես այժմ կտեսնենք, այլ հայկական գավառ է եղել և միայն մ. թ. 363 թ. պայմանագրից հետո անջատվել է Հայաստանից ու տրվել պարսիկներին, որոնք այն կցել են իրենց ենթակա Ադիաբենի կամ Խեդայաբի նահանգին։

Հայկական այս գավառի մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում։ Փավստոս Բուզանդը հայ նախարարների Հայոց Արշակ Բագավորի դեմ IV դ. կազմակերպված ապստամբության մասին գրելիս նշում է, որ այդ ապստամբական գործողությանը մասնակցում էր նաև, ինչպես ինքն է գրում, Դասընտրեի, այսինքն՝ Դասենի բդեշխը։ Ահա այդ հատվածը. «Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին, թողին զիւրեանց արքայն Արշակ։ Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին։ Նախ Բդեաշխն Աղձնեաց, եւ Նոշիրական Բդեաշխն, եւ Մահկերտանն, եւ Նիհորականն, եւ Դասընտրէին, եւ ամենայն նախարարութիւն Աղձնեաց»[102]։

Ինչպես տեսնում ենք, հայ պատմիչի վկայությամբ Դասենը մտնում էր Հայաստանի կազմի մեջ և նրա անբաժանելի մասն էր։ Համենայն դեպս, Դասենի վերաբերյալ տեղեկություններ կան նաև V դ. պատմիչ Եղիշեի մոտ և նրա հաղորդումներից երևում է, որ իսկապես Դասենը արդեն անջատվել ու ընկել էր պարսկական տիրապետության տակ, որովհետև այն Հայաստանից առանձին է հիշատակվում։ Եղիշեն նկարագրում է, որ պարսից արքա Հազկերտը քուշանների դեմ արշավանքի պատրաստվելիս, զորք է հավաքում իրեն ենթակա երկրամասերից ու

---

101 *J. M. Fiey*, Assyrie Chrétienne, vol. II. p. 787.

102 Փավստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, դպր. Գ, գլ. Ը, էջ 205։

այդ առիթով թվում է դրանք. «Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ մարդիկ և զազատորդի և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ ըստ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից և յաշխարհէն Լփնաց, և որ այլ ևս ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի և ի Հռոմոց աշխարհն և ի Կորդուաց և ի Դասն և ի Ծաւդէ և յԱրղնարդիւն, որք էին ամենեքեան հաւատացեալք և մկրտեալք ի մի կաթողիկէ և առաքելական եկեղեցի»[103]: Եղիշեն իր այս աշխատության մեջ մի այլ առիթով, նույն ձևով Հայաստանից առանձին է ներկայացնում Դասնը, ահա այդ հատվածը. «Զի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասն և որ այլ ևս ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զբրիստոնեութիւն»[104]:

Հայ պատմաբաններից Ն. Ադոնցն իր աշխատության մեջ անդրադարձել է Փավստոս Բուզանդի վերոհիշյալ վկայությանը և ցույց տվել, որ իսկապես IV դ. երկրորդ կեսում հայկական նշված գավառները, որոնք ապստամբել էին հայոց Արշակ արքայի դեմ, հետագայում պարսից Շապուհ Բ արքայի կողմից վերցվել ու միացվել էին Պարսկաստանին. դրանցից Նիխորականը, ապա Դասն ու Մահկերտ տունը կցվել էին պարսկական գերիշխանության տակ գտնվող Խեդայաբ նահանգին: Այս կապակցությամբ Արշակունիների թագավորության հարավային սահմանների մասին գրելիս ասում է, որ «Նոշիրական Մահկերտունը, Դասանը և Նիխորականը ենթակա էին հայ Արշակունիներին»[105] և ի վերջո, գալիս է այն եզրակացության, որ Փավստոսի վկայությամբ Նոշիրականը, Մահկերտը, Նիխորականը, Դասանը գտնվում էին մեկ Բդեշխի իշխանության ներքո[106]: Եվ ի վերջո, նրա կարծիքով, «Նոր-Շիրականը և թե Մահկերտունը, Նիհորականը և Դասնը գտնվել են Կորդուքից հարավ, Ադիաբենի ծայրամասում»: Ընդունելով, որ հին Կորդիքը կամ Տմորիքը, որի մեջն էր Ալկի քաղաքը, Կորդվաց երկրամասերից մեկն էր, Ն. Ադոնցն ենթադրում է, որ Նոր-Շիրականի, Մահկերտան, Նիհորականի և Դասնի տեղադրությունը պետք է լիներ Ալկիի հարավակողմում և Խաբուր գետի հովտում[107]:

---

103 «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», աշխատմր. Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 10:

104 Նույն տեղում, 51:

105 Н. Адонц, Армения. стр. 227.

106 Նույն տեղում, էջ 229:

107 Նույն տեղում:

Դասն գավառի և ընդհանրապես նրա տեղադրության վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ Հ. Մանանդյանը գրում է. «Մահկերտան և Նիհորականի հետ հիշատակված Դասն երկիրը (ասոր. Beit Dasen) միակն է այս երկրներից, որի տեղադրությունը հաստատուն կերպով որոշված է։ Դասնը, որը Արբելայի եպարքության եպիսկոպոսական թեմերից մեկն էր, ինչպես մանրազնին հետազոտությամբ որոշել է Հոֆմանը, գտնվել է Մեծ Զավ գետի արևմտակողմում և այժմյան Ամադիայի ու Գարա լեռների կողմերում (*Hoffmann*, Auszüge, էջ 202—207)»[108]։

Հ. Մանանդյանն իր մի այլ աշխատության մեջ ավելի մանրամասն գրել է, որ «Դասնը համապատասխան է իր տեղադրությամբ Ստրաբոնի հիշատակած Կալաքենեին[109], որի տեղը ենթադրվում է նույնպես Մեծ Զավ գետի արևմտակողմում, այդ գետի և Խաբուր-Սուի միջև։ Ստրաբոնի վկայությամբ՝ հին Կալաքենեն, որը գտնվում էր Ադիաբենե-Ասորեստանի հյուսիսում, արմենների հին գաղթավայրերից մեկն էր»։ Ապա, շարունակում է պատմաբանը ու գրում. «Արմենական Կալաքենե հին գաղթավայրը, որը Փավստոսի մոտ անվանված է Դասընտրէ և Եղիշեի մոտ՝ Դասն, ծայրամասն էր Արշակունյաց Հայաստանի։ Դասնի հարևան գավառներն ու ծայրամասերն էին Արշակունյաց թագավորության Տմորիքը և Կորդիքը, որոնք գտնվում էին այժմյան Խաբուրսուի վերին հոսանքի շրջանում՝ Հին Ալկի կամ այժմյան Էլք քաղաքի հարավակողմում»[110]։

Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ համաձայնվում են Դասն գավառի տեղադրության հարցում։ Ակադեմիկոս Ս. Երեմյանին էս փաստերը նույն եզրակացությանն են բերել և նա իր ուսումնասիրության մեջ գրել է. «Դասն-գաւառ—այժմյան Ամադիեի շրջանը՝ 1075 կմ² տարածությամբ։ Դասնը հիշվում է ասորա-բաբելական արձանագրություններում Tas ձևով, իբրև լեռների անուն, որոնք սահման էին կազմում Ուրարտուի և Ասորեստանի միջև։ Ասոր. Beθ Dasen իբրև Արբելայի եպարքիայի թեմերից մեկը։ Արաբ. Dāsin.

---

108 Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 39։

109 Στραβωνի Καλαχηνή-ն Ասորեստանի մայրաքաղաք Կալախի նահանգն էր Նինվեից հարավ և Դասնի հետ կապ չունի (ծնթ. Ս. Երեմյանի)։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն, էջ 302։

110 Նույն տեղում, էջ 303։

Դասն գավառը, որը մտնում էր Նոր-Շիրական բդեշխության կազմում, 363 թ. հետո անջատվում է Մեծ Հայքից և միացվում Սասանյան Պարսկաստանի Հեդայաբ (Ադիաբենե) նահանգին»[111]:

Այսպես, ուրեմն, ոչ մի կասկած չկա, որ ասորական աղբյուրներում հիշատակված Բեյթ Դասեն գավառը հայկական Դասն կամ Դասընտրէ գավառն է, որը 363 թ. պարսիկների կողմից անջատվել և միացվել է Խեդայաբին: Մինչ անջատումը Դասնը, ինչպես պարզվում է հայկական աղբյուրներից, մաս է կազմել Մարաց Ամուր աշխարհին, և «Մարաց Ամուր աշխարհն էր կոչվում Նիխորական, Մաճկեւրտ-տուն, և Դասն գավառների տերիտորիան 7327 կմ² ընդհանուր տարածությամբ»[112]:

Դասնը 363 թ. Հայաստանից անջատվելով, կցվում է Խեդայաբին, և ինչպես գիտենք, V դ. արդեն: գտնում է նեստորական եպիսկոպոսական մի աթոռ, Արբելայի թեմին ենթակա: Նեստորական եկեղեցու ուժեղացումն այս գավառում ենթադրել է տալիս, որ այստեղ, ըստ երեվույթին, պարսիկները, ավելի ճիշտ՝ Շապուհ Բ-ն, իր արշավանքներից բերած բազում ասորի գերիներից շատերին տեղավորել էր հայկական այս և այլ գավառներում, ինչպես օրինակ, Մահկերտ-տնում և այլն: Պարսիկները հայկական այս գավառները Հայաստանից քաղաքականապես անջատելուց հետո, ամեն կերպ աշխատել են բնակչության կազմը կտրել Հայաստանից, որպեսզի հնարավոր լիներ վերջնականապես այդ անջատումը օրինականացնել և, անկասկած, այդ նպատակով էլ նպատակավոր պայմաններ են ստեղծել քաջալերելու համար նեստորական եկեղեցու գործիչների՝ այս երկրներում ծավալած գործունեությունը: Փաստորեն, պարսիկներն այս նպատակին հասնելու համար, փորձում էին ասորի քրիստոնյաներին որպես զենք օգտագործել հայերի դեմ, նրանց դավանաբանական հակամարտությունների վրա հենվելով: Ինչպես պարսիկների, այնպես էլ հույների կազմակերպած նման քաղաքական, ազգային ու մշակութային ճնշումների դեմ պայքարելու, ազգային միասնությունն ամրապնդելու ու ժողովրդին նման հարվածներից պաշտպանելու լավագույն միջոցը, ինչպես գիտենք, հայկական գրերի գյուտն ու հայկական գրականության ստեղծումն էր: Այդ գյուտի շնորհիվ հնարավոր եղավ ոչ միայն հայրենի երկրից ներս, այլ նաև հայրենի երկրից կտրված, քաղաքական այլ պետության կամ լծի տակ ընկած հայերին կապել և՛ հայրենիքի, և՛ իր ժողովրդի հետ:

---

111 Ս. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»*, էջ 49:

112 Նույն տեղում, էջ 65:

Սակայն դժբախտությունն այն էր, որ 363 թ. անջատված հայկական Դասն գավառը այլևս երբեք չմիացավ Հայաստանին:

6. ՌԱՄՈՆԻՆ (RAMÔNÎN) ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Մեզ հասած Նեստորական ժողովների արձանագրություններում Ռամոնինը հիշատակվել է միայն մեկ անգամ, այն էլ նրանց Իսահակ կաթողիկոսի 410 թ. գումարած ժողովի կապակցությամբ: Այդ աղբյուրից իմանում ենք, որ ժողովին մասնակցում էր Ռամոնինի եպիսկոպոս Ղակբալահը, որ այդ ժողովում ընդունված որոշման համաձայն, Ռամոնինի եպիսկոպոսական աթոռը ևս մտել է Խեդայաբի կամ Արբելայի մետրապոլիտության մեջ: Եվ եթե նա եկեղեցական առումով ևս Արբելայի թեմին էր պատկանում[113], դա նշանակում է, ինչպես նախապես գրել ենք, որ նա քաղաքականապես էլ ենթակա է եղել Արբելայի կամ Խեդայաբի մարզպանության: Նախ պետք է պարզել, թե որտեղ էր գտնվում Ռամոնինը և ինչ դեր է ունեցել Նեստորական եկեղեցու կամ, տվյալ դեպքում, Ադիաբենի կյանքում ու պատմության մեջ: Դժբախտաբար, աղբյուրները նույնպես շատ ժլատ են ու համարյա ոչինչ չեն թողել և դժվար է ճշգրտել նրա աշխարհագրական դիրքը: Շաբոն, որը հրատարակել է Նեստորական ժողովների այդ արձանագրությունները, ծանոթագրություններում գրում է, որ մինչև այժմ տեղը որոշել հնարավոր չի եղել[114]: Իսկապես էլ զարմանալի է, որ IV դ. կեսերին և նրանից հետո քրիստոնյաների դեմ շարունակվող հալածանքների մասին եղած փաստաթղթերում, որոնց մեջ վկայություն կա պարսկական տիրապետության մեջ գտնվող քրիստոնեական կարևոր կենտրոնների մասին, ոչինչ չկա Ռամոնինի վերաբերյալ: «Ադիաբենի եկեղեցու պատմություն» գրքում գրված է միայն, որ Ադիաբենի եպիսկոպոս Շախլուփայի (258—273 թթ.) ժամանակ, նրան այցելության է գալիս Բեյթ-Զաբդեի եպիսկոպոս Շուբխա Լիշոն, և երկուսը միասին հովվական այցելության են գնում Հերբաթ-Գելալ[115] և Ռասոնին[116] քաղաքները: Այս

---

113 *J. B. Chabot*, Syn. Orient., pp. 272, 273.

114 *Նույն տեղում, էջ 616, 617:*

115 *Հերբաթ-Գելալ կամ* Harbagelal, *արար.* Kharaba Gelal, *հավանաբար գըտնըվում էր Զաբի վրա: Տե՛ս J. B. Chabot*, Syn. Orient., p. 672.

116 *Մինգանան գտնում է, որ այն Ռամոնին քաղաքն է:*

եպիսկոպոսները Ռասոնինի համար եպիսկոպոս են ձեռնադրում ու այնտեղից մեկնում Շահրկերտ[117] քաղաքը[118]: Բնագրի անգլերեն լեզվի թարգմանիչ Մինգանան գտնում է, որ Ռասոնինը ձեռագրական սխալ է և այն պետք է ուղղել «Ռամոնին»: Եվ եթե այս ենթադրությունը ճիշտ է, ուրեմն նախ պիտի եզրակացնել, որ Ռամոնինի եպիսկոպոսական աթոռը գոյություն է ունեցել դեռ շատ վաղուց, համենայն դեպս առնվազն III դ. կեսերից, և ապա այս վկայության վրա հիմնվելով կարելի է մոտավորապես փնտրել Ռամոնինի տեղը: Այս տեղեկությանը եթե հավատալու լինենք, ապա պիտի մտածենք, որ Ռամոնինը Հերբաթ-Գելալի մոտակայքում ինչ-որ քաղաք է եղել, ոչ հեռու նաև Շահրկերտից: Փաստերը խոսում են այն մասին, որ Ռամոնինը պետք է Փոքր Զաբից ոչ հեռու, Բեյթ Գարմայի և Արբելայի նահանգի միջև, սահմանի վրա, հավանաբար Արբելայի կազմի մեջ մտնող մի քաղաք լինի:

Ռամոնինի աշխարհագրական դիրքի և Մինգանայի ենթադրության հարցի վրա կանգ է առել նաև Ֆին: Նա խոսելով Ռումինի գյուղի մասին, գրում է, որ այն «Ադիաբենի գյուղերից է. որի մոտակայքում Գիորգիոսը հիմնել էր իր առաջին վանքը: Թվում է, թե, շարունակում է պատմաբանը, Ռումինին նույնն է Ռամոնինի հետ, որն անվանվել է նաև (ինչպես Մինգանան է կարծում) Ռասոնին: Ինչպես գիտենք, Մինգանան «Ռամոնինը» տեղադրել է Էրբիլի հյուսիս-արևմուտքում: «Եվ եթե Մար Գիորգիոսի վանքը իսկապես Հատոն (գավառում) էր, ինչպես ես էլ եմ մտածում, ուրեմն, հավանաբար, Ռամոնինը այդ մարզի կամ նրա հին կենտրոնի (գլխավոր քաղաքի կամ մայրաքաղաքի) անունն էր: Իսկապես, այն ինչ որ կապ ունի Ադիաբենի լեռան հետ»[119]:

Այս փաստերի վրա հիմնվելով՝ եվրոպացի պատմաբանը փորձում է պարզել Ռամոնինի ճիշտ տեղը, հայտնելով այն կարծիքը, որ «մարզի անունը երևում է հավասարապես ասորերեն Խնիտա կամ Խնայտա ձևից: Արաբներից Կուդաման X դ. կեսերին այն կոչում է Ալխանայա,

---

117 Շահրկերտ քաղաքը գտնվում էր Բեյթ Գարմայ նահանգում, Դակուկի և Արբելայի միջև: IV դ. Քարդագի մարզպանության ժամանակ, Բեյթ Գարմայը միացված էր Խեդայաբի նահանգին: Հասկանալի է, որ որպես ենթակա գավառ, Խեդայաբի եպիսկոպոսը գնում և Ռամոնինի համար եպիսկոպոս է ձեռնադրում: Ինչ վերաբերում է Դակուկին, այն գտնվում էր Քերքուքի հարավում, մոտավորապես 9 ժամ հեռավորության վրա՝ Մուսուլից Բաղդադի ճանապարհի վրա:

118 Հ. Մելիոնյան, Ասորական աղբյուրները (Շախլուփա եպիսկոպոսի ժամանակ), էջ 87:

119 J. M. *Fiey*, Assyrie chrétienne, vol. I, p. 208.

և ասում, որ գտնվում էր Ռևանդուզի հովտում՝ Փոքր Զաբի ափին»[120]։ Շաբոն էլ գրում է, որ Խենայտան պետք է լիներ Ռևանդուզի հովտի մոտակայքում, Փոքր Զաբի ափին[121]։

Ահա այն ամենը, ինչ որ կարելի է ասել Ռամոնինի մասին։

7. ԲԵՅԹ ՄԱՀԿԱՐՏ (BEIT MAHQART) ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Ինչպես նախորդ, այնպես էլ այս թեմի մասին ասորական աղբյուրները համարյա տեղեկություններ չեն հաղորդել։ Նույն 410 թ. Իսահակ կաթողիկոսի ժողովից իմանում ենք, որ Բեյթ Մահկարթը մաել է Խեդայաբի կամ Ադիաբենի թեմի մեջ և որպես եպիսկոպոսական աթոռ ենթարկվել է նույն թեմի առաջնորդին կամ մետրապոլիտին։ Եվ եթե Խեդայաբի մյուս եպիսկոպոսներից ոմանց անունները հասել են մեզ, ապա այս աթոռի եպիսկոպոսներից ոչ մեկի անունը մենք չգիտենք։ Այդ կապակցությամբ Շաբոն իր աշխատության ծանոթագրությունների բաժնում, կանգ առնելով 410 թ. Իսահակ կաթողիկոսի ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցուցակի վրա, նշում է, որ մեզ հայտնի նեստորական թեմերից 5-ի եպիսկոպոսների անունները չգիտենք։ Այս հանգամանքը Շաբոյին մտածել է տալիս, որ գուցե մի թեմից այս դեպքում, օրինակ, մի քանի եպիսկոպոսներ են մասնակցել (օրինակ՝ Արբելայի թեմից, բացի Արբելայի մետրապոլիտից մասնակցում էին Բեյթ Նուհադրայի, Բեյթ Բագաշի, Բեյթ Դասենի, Ռամոնինի եպիսկոպոսները), և ոմանք էլ չեն մասնակցել, որովհետև այն ժամանակ աթոռը ժամանակավորապես թափուր է եղել, և այդ պատճառով էլ այդ թեմերի 5 եպիսկոպոսները հայտնի չեն մեզ[122]։ Այդ 5 թեմերից մեկն էլ Բեյթ Մահկարտի թեմն էր և նրա եպիսկոպոսի անունը մեզ հայտնի չէ։ Հետաքրքրական է նաև այն, որ դրանից հետո գումարված նեստորականների ժողովներին չի մասնակցել Բեյթ Մահկարտի եպիսկոպոսը։ Այդ աթոռի ոչ մի եպիսկոպոսի մասին ոչինչ չգիտենք, և, ընդհանրապես, ոչ մի բան մեզ հայտնի չէ ասորական աղբյուրներից Բեյթ Մահկարտի մասին։ Այս լռությունը, ինչպես քիչ հետո կտեսնենք, մեզ համար հաս-

---

120 Նույն տեղում։

121 J. B. *Chabot*, Syn. Orient., p. 673.

122 Նույն տեղում, էջ 616։

կանալի է, որովհետև այն, ինչպես Բեյթ Նուհադրան ու Բեյթ Դասենը, 363 թ. անջատել էին Հայաստանից ու միայն դրանից հետո միացրել նեդայաբ Նահանգին: Մեր կարծիքով, եթե նեստորականները կարողացել էին Հայաստանից անջատված վերոհիշյալ գավառներից առաջիններում ստեղծել իրենց եպիսկոպոսական աթոռներն ու եկեղեցին, ըստ երևույթին, այստեղ ասորական տարրը կամ նեստորական հավատի կողմնակիցները համեմատաբար ավելի քիչ են եղել և կամ բոլորովին չեն եղել, դրա համար էլ թեև պաշտոնապես այն մտել է նեդայաբի քաղաքական ազդեցության ներքո, բայց նեստորականները չէին կարողացել հիմնել իրենց համար եպիսկոպոսական աթոռ և հավատացած ենք, որ մյուս թեմերն էլ, որոնց եպիսկոպոսների անունները մեզ հայտնի չեն, նույն պատճառն են ունեցել հիմնականում: Եվ եթե հետագայում այդ 5 թեմերից չորսը ընկան Տիզբոնի կաթողիկոսության ազդեցության տակ, ապա Մահկարտը միշտ էլ մնաց այդ ազդեցության ոլորտներից դուրս: Ուշագրավ է, որ այդ 5 թեմերից երեքը՝ Կարդուն, Բեյթ Զաբդան ու Բեյթ Մահկարտն էին: Համոզված ենք, որ այդ 5 թեմերի եպիսկոպոսները մեզ հայտնի չեն ոչ այն պատճառով, որ այդ թեմերը, ճիշտ է, քաղաքականապես մտել էին Ադիաբենի նահանգի մեջ, և եկեղեցական առումով նեստորականները իրենց իրավասության մեջ էին վերցրել դրանք, բայց իրականում այդ շրջանների մեջ նրանք եկեղեցիներ կամ չեն ունեցել և կամ իրենց ունեցածը աննշան է եղել: Կարող էր, անշուշտ, այս 5 թեմերից մեկ-երկուսի աթոռը ժամանակավորապես թափուր լիներ, բայց 5-ի բացակայությունը այդ ձևով ներկայացնել, մեր կարծիքով, ճիշտ չէր լինի: Ոչ էլ ճիշտ կլիներ վերագրել ձեռագրական աղավաղումների[123]: Իսկ տվյալ դեպքում, թե ինչու Արբելայի թեմից բոլոր մասնակիցների անունները կան[124], բացի Բեյթ Մահկարտից, պատճառները, մեր կարծիքով, տարբեր կարող են լինել: Հնարավոր է, անշուշտ, որ տեղում եպիսկոպոս չկար, մահացել էր, հնարավոր է, որ տեղի եպիսկոպոսը ըմբոստացել էր և չէր ենթարկվում Տիզբոնի կաթո-

---

123 Նույն տեղում:

124 Ուշագրավ է, որ այս ժողովում որոշում կա այն մասին, թե ովքեր են իսկական եպիսկոպոսներ և մետրապոլիտներ, այսինքն՝ Տիզբոնի կաթողիկոսական աթոռը ո՞ւմ է ճանաչում որպես եպիսկոպոս կամ մետրապոլիտ: Այդ շուցակում կան Արբելայի թեմի բոլոր եպիսկոպոսների անունները՝ Արբելայինը՝ Դանիել եպիսկոպոսը, Բեյթ Նուհադրայինը՝ Իսահակը, Բեյթ Բագաշինը՝ Բարխոսը, Բեյթ Դասենինը՝ Ախադաբուհին, Ռամոնինինը՝ Ղակրալահան, Ռաբարինխասնինը՝ Նոխը: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ չկա Բեյթ Մահկարտի եպիսկոպոսի անունը: J. B. Chabot, Syn. Orient., p. 273.

դիկոսին: Այսպես, անշուշտ, բաղում պատճառներ կարող են լինել, համենայն դեպս փաստն այն է, որ չգիտենք Բեյթ Մահկարտի եպիսկոպոսի անունը:

Այժմ տեսնենք, թե որտեղ էր գտնվում Բեյթ Մահկարտը: Շաբոն իր աշխատության մեջ գրում է, որ այս աթոռի իսկական տեղը անհայտ է[125]*, իսկ Ֆին իր ուսումնասիրության մեջ գրում է, որ «Ադիաբենից կախման մեջ եղող 410 թ. աթոռներից Բեյթ Բիհկարտը կամ Բեյթ Մահկարտը կարող էր գույք իր մեջ ունենալ Մարդան*[126]*, բայց, շարունակում է նա իմ այս ենթադրությունը հաստատող*[127] *ոչ մի փաստ չունեմ»:*

Ահա այն ամենը, ինչ եվրոպացի պատմաբանները գրել են Բեյթ Մահկարտի մասին: Ինչ վերաբերում է ասորական աղբյուրներին ու վարքերին, ապա մեզ չհաջողվեց ոչ մի տեղեկություն կամ վկայություն գտնել այս գավառի մասին, և պատճառն, ինչպես բացատրեցինք, այն էր, որ այն Հայաստանի մի մասն էր և, անկասկած, 363 թ. անջատումից հետո էլ շարունակել է իր սերտ կապերը Հայաստանի հետ, մինչև վերջ էլ նա Խեդայաբի կազմում, հավանաբար, մնացել է որպես օտար մարմին:

Մահկարտի կամ Մահկերտան մասին համեմատաբար շատ ավելի հարուստ տեղեկություններ են պահպանվել հայկական աղբյուրներում: Այսպես, Ագաթանգեղոսը պատմում է, որ Գրիգոր Լուսավորչի օրոք քրիստոնեությունը տարածվում էր «ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ճգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն» և շարունակում է մանրամասն նկարագրել, տալ գավառների անունները. այդ թվում նշում է նաև Մահկերտունը «Մահքըր-Տան» ձևով: Ահա այդ հատվածը. «մինչև ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց, և յամդացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ Տամբն Մահքր-Տան իշխանին, մինչև յԱտրպատական[128]*: Իսկ Փավստոս Բուզանդը հիշատակում է, թե ինչպես 34 տարի շարունակվող պարսկա-հայկական պատերազմից հետո, հայ նախարարներից ոմանք ձանձրանալով, հոգնելով, պարտվելով, ի վերջո,*

---

125 *Նույն տեղում, էջ 669:*

126 *J. M. Fiey*, Assyrie Chrétienne, vol. I, p. 229.

127 *Նույն տեղում:*

128 *«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», 842, էջ 440:*

լբեցին իրենց Արշակ արքային։ Լբողների մեջ էին «Նախ բդեաշխն Աղձնեաց, և Նոշիրական բդեաշխն և Մահկեր Տանն, և Նիհորականն, և Դաբնտրէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց»[129]։

Մահկերտան տեղի ու դիրքի վերաբերյալ հայ պատմաբաններից Հ. Մանանդյանն իր «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ» գրքում կանգ է առել գերմանացի հայագետ Մարկվարտի աշխատության (Sudarmenian und die Tigrisquellen, 1930, էջ 377 և հետ.) վրա և ինքն ևս համաձայնվելով եվրոպացի պատմաբանի Մահկերտան մասին արտահայտված տեսակետների հետ, գրել է. «Մահկերտունը, ավելի ճիշտ՝ Մահկերտ կամ Մահքերտ տունը, որը 410 թ. հիշատակված է նաև ասորական մատենագրության մեջ (Syn. Orientalum, էջ 272), իբրև Արբելայի նպարքության թեմերից մեկը, Մարկվարտը համապատասխան է համարում քրդական Մաջերդան ցեղի երկրին, որը գտնվում էր Անձևացյաց գավառում Բոհտան-Սուի ակունքների շրջանում»[130]։ Մարկվարտի այս եզրակացությանը հիմք են ծառայել արաբ աշխարհագիրների Մասուդիի և Նաքուտի վկայությունները, որոնց հաղորդած տեղեկություններից կարելի է հետևցնել, որ Մաջերդան քուրդ ցեղի երկրում է գտնվել al-Kin Kiwar ամրությունը, որը համապատասխանում է Խորենացու «Թուղթ առ Սահակ Արծրունի» և «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» երկերի և Բուլմա Արծրունու պատմության մեջ հիշատակված Անձևացյաց գավառի «Կանգուար» բերդին։ Այս բանը առաջին անգամ ցույց է տվել Հարտմանը (M. Hartmann, Bohtan, էջ 128)։ Անձևացյաց երկրում, ուր ևնթադրվում է Մահկերտունը, Մարկվարտի կարծիքով, հին ժամանակներում ապրում էին Պլինիոսի մատնանշած մենուբարդները կամ ավելի ճիշտ՝ մեդոմարտերը (menobardi), որ ըստ Մարկվարտի պետք է ուղղել (medomardi) մեդական մարդիը»[131]։

Հայ գիտնականներից Ն. Ադոնցն ևս անդրադարձել է Մահկերտան աշխարհագրական դիրքի վրա և գրել, որ «Հայաստանի հարավային սահմանները հետևում էին հասնում։ Նոշիրական, Մահկերտ, Դասան

---

129 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», դպր. Դ, գլ. Ը, էջ 206։

130 Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 35։

Արդյոք այստեղ Մաջերդան ասելով չպե՞տք է հասկանալ Մահկերտունը, կարծում ենք, որ խոսքը այստեղ Մահկերտան մասին է։

131 Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 35։

և Նիխորական մարզերը ենթարկվում էին հայ Արշակունիներին։ Դրանք գտնվում էին Կորդուքից հարավ՝ Ադիաբենի ծայրամասում[132]։ Համենայն դեպս, շարունակում է հայ գիտնականը, Փավստոսի խոսքից կարելի է եզրակացնել, որ «Նոշիրականը, Մակերտը, Նիխորականը և Դասանը գտնվում էին մեկ բդեշխի իշխանության ներքո»։

Այսպես, Ադոնցը ենթադրում է, որ Նոր-Շիրականի, Մահկերտան, Նիհորականի և Դասնի տեղադրությունը պետք է լիներ Ալկիի հարավակողմում և Խաբուր գետի հովտում[133]։

Մահկերտան գավառի տեղի վերաբերյալ իր կարծիքն է հայտնել նաև Հյուբշմանը, որը Մարկվարտի ենթադրությունը հաստատուն ու վերջնական չի համարում և կարծում է, որ Մահկերտունը պետք է որոնել ոչ թե Վասպուրականի Անձևացյաց գավառում, այլ այդ շրջանից ավելի դեպի հարավ-արևելք[134]։ Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը գրում է. «Ինձ ևս այնպես է թվում, որ Մարկվարտի լուսաբանությունը, թեև ուշագրավ է ու հետաքրքիր, սակայն չէ կարող ընդունվել անվերապահ կերպով։ Գլխավոր առարկությունը Մարկվարտի լուսաբանության դեմ կարող է այն լինել, որ Փավստոսի մոտ բացի Նոր-Շիրականի բդեշխին ենթակա Մահկերտուն երկրից առանձնապես հիշատակված է նաև Անձևացյաց գավառը, որի իշխանն էր այդ գավառի տեր Գնելը»[135]։

Ինչպես Ն. Ադոնցի, այնպես էլ Հ. Մանանդյանի ու Ս. Երեմյանի աշխատություններում ցույց է տրված, որ Մահկերտունը Հայաստանի հարավային ծայրամասն էր, մինչդեռ Անձևացյաց գավառի կամ, ինչպես այն «Աշխարհացույց»-ում է անվանված, «Անձևացիք գավառ»-ի մասին Ս. Երեմյանը մանրամասն ու ճշգրիտ տեղեկություններ է տալիս և հստակ գծում Անձևացիք գավառի և Մահկերտան աշխարհագրական տարբեր տեղեր լինելու մասին։ Նա գրում է. «Վասպուրականի 11-րդ գավառը 2425 կմ^2 տարածությամբ, գրավում էր Արևելյան Տիգրիս (Ջերմ, Բոհտան-Սու) գետի ակունքների բարձր, դժվարամատչելի լեռնային շրջանը։ Գավառս եղել է Անձևացեաց նախարարական տոհմի ժառանգական հայրենիքը։

---

132 *Н. Адонц*, Армения, стр. 227.

133 Նույն տեղում, էջ 227, 229։

134 Հյուբշման, Հին հայոց տեղւոյ անունները, էջ 181։

135 Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 37։

Անձևացիք գավառը հնագույն ժամանակներում կոչվել է Աղզի, որի մասին վկայում է այժմ գոյություն ունեցող Ախսի (կամ Հուսեին) գյուղը: Ասուրա-բաբելական արձանագրություններում այս գավառը կոչվում է Alzi (որից «Աղզի») և Anzi կամ Enzi (որից՝ Անձ-աւ-ացիք, Անձ-եւ-ացիք):

Այս գավառումն էին՝ Կանգաւար ամրոցը (այժմ՝ Կենգևար գյուղ), Ալաման (ասուրա-բաբելական Alamun) և Լէկ գյուղերը: Այս գավառի հյուսիսային ծայրամասումն էր Պաշատ լեռը (ասուրա-բաբել. Պածատու): Ուրարտական Արուբանա աստվածուհու և հայկական Անահիտի պաշտամունքի կենտրոններից մեկն էր Դարբնացքար կամ Ագռավաքար վայրը, որտեղ հետագայում հիմնվեց Հոգվոց վանքը (այժմ՝ Դիր-Մարիամ-Քիլիսասի, տե՛ս Մ. Խորենացուն վերագրվող «Պատմութիւն պատկերի Տիրամօրն» երկը)»[136]:

Այսպես, ուրեմն, երև Անձևացյաց գավառը գրավում էր Արևելյան Տիգրիսի ակունքների բարձր, դժվարամատչելի լեռնային շրջանը, ապա Մահկերտունը, ինչպես նույն հարգելի գիտնականն է ցույց տալիս իր նույն աշխատության մեջ, Հայաստանի ավելի հարավում էր՝ ծայրամասում. ահա թե ինչ է գրում Մահկերտան մասին իր ուսումնասիրության մեջ. «Մանկերտ-տուն (Մարծին) գաւառ—այժմ Ռևանդուզ, Մեծ-Հայքի ամենահարավային ծայրամասը, որի արևելյան սահմանին գտնվում էր Zintha սահմանամերձ պարսկական ամրոցը: Մահկերտ-տունը կոչվում էր նաև Մարծին և գտնվում էր այժմյան Ռևանդուզից հյուսիս, ունենալով 2002 կմ² տարածություն: Մինչև 363 թ. մտնում էր Նոր-Շիրականի բդեշխության կազմում»[137]:

Եվ այսպես, «Մահկերտունը որպես Նոր-Շիրականի բդեշխության մեջ մտնող մարզ, 363 թ. անջատվում է Հայաստանից և պարսիկների կարգադրությամբ այն կցվում է Ադիաբենի կամ Խեդայաբի մարզպանության, և այս կցումն էլ, ինչպես տեսանք, հետագայում շփոթություն էր առաջացրել և պատմաբաններին թյուրիմացության մեջ դրել: Համենայն դեպս, այժմ պարզ է, որ «Նիխորական, Մահկերտ-տուն և Դասն գավառների տերիտորիան 7327 կմ² ընդհանուր տարածությամբ» միասին կազմում էին մեր աղբյուրներում հիշատակված «Մարաց ամուր աշխարհը»[138]: Մարաց ամուր աշխարհի տեղը որոշվում է Տմորիքի և

---

136 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 36:

137 Նույն տեղում, էջ 64:

138 Նույն տեղում, էջ 65:

Կորդիքի արևելակողմում, գլխավորապես այն լեռնային ամուր երկրում, ուր գտնվում են այժմ Ջուլամերիկը և Դիզանը։

Ագաթանգեղոսի վկայությունից («եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տաճարն Մահքր-Տան իշխանին, մինչև յԱտրպատականն ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր։ Գլ. ՃԻ, 842) երևում է, բացի այդ, «որ Մարաց ամուր աշխարհի և Ատրպատականի միջև հավանական է ենթադրել նաև Մահկերտան իշխանի երկիրը»[139]։ Այս բոլորից հետո, մանավանդ նկատի ունենալով Սեբեոսի վկայությունը Մարաց ամուր աշխարհի տեղի մասին, նա եղրակացնում է, որ այն տարածվում էր «Զարասպ լեռան հյուսիս-արևմտակողմի լեռնային շրջանում, ուր գտնվում են Ջուլամերիկը և Դիզանը»[140]։

Մահկերտան վերաբերյալ աշխարհագրական այս ճշգրտումները վկայում են այն մասին, որ այն եղել է Հայաստանի մի մասը և բնականաբար չէինք կարող այն որոնել Խեդայաբ երկրում, և հասկանալի է, որ ճիշտ չէ Ֆին, երբ Մահկերտունը, Բեյթ Բիհնարաին և կամ Բեյթ Մահկարաը նույնացնում է Խեդայաբի գավառներից Մարագայի կամ Մարգայի հետ[141], որը գտնվում էր Մուսուլից ոչ հեռու, նրա հյուսիս-արևելքի ուղղությամբ[142]։

Եվ, մեր կարծիքով, այն փաստը, որ ասորական աղբյուրները հաճարյա լռում են այս գավառի մասին, լավագույն վկայությունն է, որ այն գտնվել է Հայաստանում և երբ 363 թ. հետո էլ կցվել է Խեդայաբին, միևնույն է, այն իր կապերը շարունակել է պահպանել Հայաստանի հետ, որովհետև բնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից, և նեստորական եկեղեցու գործիչների փորձերը այնտեղ եպիսկոպոսական աթոռ ստեղծելու և այն կապելու իրենց հետ, ըստ երև-

---

139 Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 41—42։

140 Նույն տեղում, էջ 42։

141 *J. M. Fiey*, Assyrie chrétienne, vol. I, p. 228.

142 *J. B. Chabot*, Syn Orient., p. 676.

վուլֆին, արդյունք չեն տվել, որովհետև 410 թ. այդ ժողովից հետո, ոչ մի անգամ չի հիշատակվում և ոչ մի ժողովի մասնակից չի եղել Մահկերտան եպիսկոպոսը։ Մի հանդամանք, որ խոսում է այն մասին, որ 410 թ. ստեղծված Նեստորական եպիսկոպոսական աթոռը ձևական է եղել և իրականում գոյություն չի ունեցել։

8. ԴԱԲԱՐԻՆՈՍԻ (DABARINOS) ԿԱՄ ՌԱԲԱՐԻՆԽԵՍՆԻ ԵՎ ԿԱՄ ԲԱՐԽԻՍԻ ԳԱՎԱՌԸ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Այս թեմի անունը ասորական աղբյուրներից հասել է մեզ Դաբարինոս (Dabarinos), *Ռաբարինխեսն* (Rabarinḫesn) *և Բարխիս* (Barḫis) *ձևերով, և այժմ էլ դժվար է ասել, թե դրանցից որն է ճիշտը. Շաբոն մեզ հայտնի իր հրատարակած դրքի ծանոթագրություններում բաժանում ևս տատանվել է և դժվարացել կողմնորոշվել, ուստի իր ասածը դրել է հարցական նշանի տակ և դրել «Դաբարինոս՝ Ադիաբենի նահանգի մի եպիսկոպոսության անուն։ Կարող է նույնը լինել Ռաբարինխեսնի և գուցե նաև Բարխիսի հետ»*[143]։ *Իսկապես էլ* Syn. Orient.-*ի ասորերեն բնագրում առաջին անգամ այդ թեմը հիշատակվում է Դաբարինոս* (Dabarinos) *ձևով*[144]։ *Մինչդեռ նույն փաստաթղթի հաջորդ էջում, երբ խոսում է նույն եպիսկոպոսական աթոռի մասին և թվարկում եպիսկոպոսների անուննները, նույն այս թեմի մասին գրում է, որ ներկա էր այդ ժողովին «Ռաբարինխեսնի*[145] *եպիսկոպոս Նոխր»*[146]։ *Իսկ ժողովի որոշումների տակ եղած ստորագրություններում չկա այս եպիսկոպոսի ստորագրությունը։ Այժմ, երբ նայում ենք այս բառերի ասորերենի կազմվածքին, տեսնում ենք, որ դրանք ճիշտ է տարբեր են հնչում, բայց իրենց խորքում ունեն ընդհանրություն*[147] *և գուցե այստեղ գործ ունենք ձեռագրական աղավաղման հետ, որովհետև ասորերենում մի փոքր ավելորդ գծիկը կարող էր նման աղավաղման տեղիք տալ։ Կարծում ենք, որ «Ռաբարինխեննսը» կամ «Դաբարխեննսը» նույն «Դաբարինոսի» աղավաղված ձևն է։ Իսկ ինչ վերաբերում է «Բարխիսին», այս ևս ենթադրված նման ձեռագրական աղավաղման ար-*

---

143 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 670.

144 *Նույն տեղում (ասորերեն բնագիր), էջ 33։*

145 *Նույն տեղում (ասորերեն բնագիր), էջ 34։*

146 *Հավանաբար «նոյ» անունն է։*

147 Dabarinos—Rabarinḫesn.

դյունք պետք է համարել, որովհետև այս բառը ևս ասորերենում համարյա նույն հիմքն ունի և մի փոքր փոփոխություն կարող էր նման աղավաղման պատճառ լինել (Dabarinos-Barḫis)։ Այսպես, ուրեմն, երեք անվանաձևերի տակ գտնում ենք, որ նույն Դաբարինոս (Dabarinos) անունն է պահված և խոսքը Դաբարինոսի թեմի մասին է, որն, ինչպես տեսանք, 410 թ. Իսահակ կաթողիկոսի ժողովի որոշման համաձայն մտել էր Արբելայի մետրապոլիտության մեջ։ Գիտենք նաև, որ այդ ժողովին մասնակցում էր Դաբարինոսի թեմի եպիսկոպոս Նոխը կամ Նոյը։ Դրանից հետո հաջորդ եպիսկոպոսը, որի մասին գիտենք, դա Պողոս կամ Պողոսն է, որը մասնակցել է Մար Աբա Ա. Նեստորական կաթողիկոսի 544 թ. գումարած ժողովին[148]։ Ճիշտ է, այս ձեռագրում Դաբարինոսի փոխարեն գրված է «Բարխիս», սակայն վերևում ցույց տվեցինք, որ այն նույնն է «Դաբարինոսի» հետ։ Այսպես, ուրեմն, 410 թ. մինչև 544 թ. եղած ժողովների ցուցակում ոչ մի հիշատակություն չկա այս աթոռի եպիսկոպոսի մասնակցության վերաբերյալ, բայց դա չի նշանակում, որ այդ աթոռը գոյություն չի ունեցել, այլ պարզապես այն Նեստորական եկեղեցու կյանքում աննշան դեր է ունեցել։ Դրանից հետո 544 թ. Մար Աբա ասորական կաթողիկոսի գումարած ժողովի մասնակիցների մեջ էր Բարխիսի (հավանաբար Դաբարինոսի) եպիսկոպոս Պողոսը[149], նրա ստորագրությունը կա ժողովի որոշումների վերջում։ 576 թ. Մար Եղեկիել կաթողիկոսի ժողովին մասնակցել է Բարխիսի եպիսկոպոս Սամվելը[150]։ Եվ, ի վերջո, 605 թ. Գրիգոր Ա. կաթողիկոսի գումարած ժողովի մասնակիցների մեջ ներկա է եղել նորից ինչ-որ Բարխիսի եպիսկոպոս Պողոսը[151]։ Ահա այն ամենը, ինչ գիտենք Խեդայաբի թեմի մեջ մտնող եպիսկոպոսական այս աթոռի մասին։ Այսպես, VII դ., հավանաբար արաբական արշավանքներից հետո, այս շրջանի քրիստոնյա բնակչությունը քաղաքական դժվար պայմաններից ստիպված լքում է հայրենի տունը ու հեռանում իր երկրից, որովհետև 605 թ. հետո գումարված

---

148 *J. B. Chabot*, Syn. Orient., p. 345.
Դաբարինոս—Dabarinos.
Բարխիս—Barḫis.
Ռաբարիխեսն—Rabarinḫesn.
149 Նույն տեղում, էջ 368։
150 Նույն տեղում, էջ 479։
151 Նույն տեղում։

կաթողիկոսական ժողովների ցուցակում այլևս հիշատակություն չկա այդ եպիսկոպոսական աթոռի մասին, մի փաստ, որ վկայում է, որ այլևս քրիստոնյաներ չէին ապրում այդ շրջանում և այդ պատճառով էլ վերացել էր այդ եպիսկոպոսությունը: Համենայն դեպս, արաբական արշավանքների կապակցությամբ Նեստորական եկեղեցին սկզբնական շրջանում խիստ տուժել էր և երկար ժամանակ հնարավորություն չէր ունեցել ժողովներ գումարելու. միայն 676 թ. մայիսին Մար Գիվարգիս Ա. կաթողիկոսի օրոք հնարավոր է լինում ժողով գումարել, և այն էլ այդ ժողովին մասնակցում են կաթողիկոսի հետ միասին 7 եպիսկոպոսներ, որոնք համարյա նոր թեմերից էին[152]: Նեստորականները, անշուշտ, միայն սկզբում ինչ-որ թուլություն զգացին հարվածներից, սակայն շատ շուտ վերագտան իրենց ուժերը և կարողացան արաբական արքունիքում, գիտության ու տնտեսության ասպարեզում ունեցած իրենց բարձր կարողություններով, խոշոր ազդեցություն ձեռք բերել:

Դաբարինոսի կամ Բարխիսի վերաբերյալ մեր բոլոր որոնումները ասորական ինչպես նաև այլ աղբյուրներում արդյունք չտվեցին, և այդպես էլ մենք ևս չկարողացանք նոր խոսք ասել այս գավառի կամ թեմի մասին: Ո՛չ ասորական վարքերում և ո՛չ էլ պատմական հուշարձաններում այս գավառի կամ եպիսկոպոսական աթոռի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել և ոչինչ չի կարելի ասել նրա աշխարհագրական դիրքի և Ադիաբենի կյանքում նրա ունեցած դերի մասին: Մենք ևս այս աշխատության մեջ բավարարվում ենք Նեստորական ժողովների արձանագրություններում եղած տեղեկություններով ու դրանց հետևելով հաստատում, որ Դաբարինոսի կամ Բարխիսի և կամ Ռաբարինխեսնի գավառը գտնվում էր Ադիաբենի կամ Խեդայաբի նահանգում և ենթարկվում նույն նահանգի մարզպանին:

---

152 Այս ժողովին մասնակցում էին Գիվարգիս կաթողիկոսը՝ Արևելքի պատրիարքը, Թովմասը՝ Բեյթ Կատրայեյի մետրապոլիտության եպիսկոպոսը, Իշոզ Յահբ Դեյրինի եպիսկոպոսը, Սերգիոսը՝ Բրիհանի եպիսկոպոսը, Ստեփաննոսը՝ Մազոնայեյի եպիսկոպոսը, Պոսեն՝ Հազարի եպիսկոպոսը և Շահինը՝ Խաբթայի եպիսկոպոսը: Տե՛ս J B. Chabot, Syn. Orient., p. 482.

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբա 231, 233, 259
Աբգար 98, 99, 109, 113, 138, 147, 162, 163
Աբդագես 104
Աբեներիգոս 77
Աբիաս 113
Աբղա 231
Աբրահամ եպս. 158, 159, 160, 211
Աբուլ Ֆարաջ Դավիթ 241
Ագաբոս 97, 98
Ագաթանգեղոս 138, 182, 235, 238, 253, 257
Ագգա 89, 98, 188, 189, 191, 192, 196
Ադամ 207
Ադարմոն 241
Ադդա 89, 98, 188, 189, 191—194, 196
Ադոնց Ն. 43, 44, 137, 236, 239, 246, 254, 255
Ադորգահադ 181
Ադուր պարհ 214
Ադիզ Ատիյա 243
Աթմոնիա 41
Ալբինոս 163
Ալեքսանդր Մակեդոնացի 22, 25, 26, 28, 29, 32—38, 40, 44—46, 48—52, 68, 104, 109, 149
Ախադաբուհի (Ախա) 187, 196, 201, 202, 224
Ախուդեմմեհ 230
Ակակիոս 229, 231, 232
Ահրիման 24
Ահուրամազդա 21, 24, 25, 67, 69
Ամմիանոս Մարկելլինոս 29—34, 40
Ամփիմակոս 50—52, 54
Այատալլահ 212
Անահիտ 25, 68, 69
Անանիա 81, 84, 90—93
Անանուն 98
Անիլայոս 88
Անտիգոնոս 43, 49, 50, 52, 53
Անտիոքոս Դ 54, 55
Անտիոքոս Դ 121
Անտիպատրոս 49, 50, 52, 53
Անտոնիոս Կարակալլա 169—172
Անուլլինոս 163
Աշուր-Նասիրապալ 10, 11
Ապոլոդորոս 38
Ապպիանոս 49, 53
Ապպիոս Կլավդիոս 60
Ասարհադդոն 13, 14, 16, 17
Ասինայոս 88
Ասկլեպիոդորոս 38, 49
Աստավան 63
Աստիագես 18
Ատրոպատես 37
Արամանյակ 61, 135
Արբադես 147
Արբել (Աթմոնիայի որդի) 40
Արգիշտի Ա 20
Արիակես 38
Արիոբարզանես 37
Արիստոբուլոս 121
Արիստոն Փեղղացի 157
Արմեն Թեսալացի 43, 44

Արշակ (հայոց թագ.) 245, 246, 254
Արշակ (պարթևների թագ.) 54
Արշակ (Արտավան Գ-ի որդի) 103, 104
Արշակ (Արտավան Ե-ի որդի) 178
Արշակ (Վաղարշի որդի) 133
Արտաշես 104, 138
Արտաշիր 175, 176, 178—184, 195, 197, 198, 225, 235
Արտավազդ Բ 137
Արտավան Ա 65, 67, 74
Արտավան Գ (Արտաբանոս) 37, 65, 66, 70, 75, 76, 88, 89, 94, 100—107
Արտավան Ե 170—176, 178, 183, 195, 203
Արտաքսերքսես (տե՛ս Արտաշիր)
Արտեմիս 69
Արրիանոս 35, 37, 38, 45
Արքելայոս 120
Ափրատատ 240

Բաբա 232, 233
Բաբգեն 230, 232—234, 236, 237
Բագարատ (Շամբատ Բագարատ, Փառազյան) 129—134
Բագրատունի 130, 134, 141
Բազ (Բազայոս) 61, 135
Բամբերգեր 92
Բակուր (Վաղարշ Ա-ի եղբայր) 110, 111, 119, 124, 127, 129
Բակուր Բ (պարթևների թագ.) 146
Բար Բահլուլ 226
Բարբաշեղմ 212
Բար էբրայուս (Հեբրայուս) 40, 233
Բարինոս 224, 229, 240
Բարհադ-բեշարա 212
Բարնաբաս 92, 93
Բարսահդե 233
Բարսեմիոս 163, 164
Բարքոբա (Բարքոքբա) 157, 190
Բել 25, 39, 61, 67, 69
Բեջան 211, 213
Բզնունիք 135, 136
Բիզան 108
Բուբարես 37

Գանզխան 198, 200
Գարմա 233, 234
Գարշոյլ Մաղխազ 137, 138
Գի 150
Գիվարգիս 260
Գնել 255
Գոբրիաս 19
Գոտարզ 106, 108—110
Գրիգոր Ա կաթ. 259
Գրիգոր Լուսավորիչ 253
Գուբրաշնասպ 184—186

Դադյնշուղ 240
Դանիել 224, 230—232
Դավիթ (Մարգարե) 82
Դարեհ Ա 18, 21, 22, 48, 176
Դարեհ Գ 26, 32, 35—38, 45, 48, 109, 149
Դևրենբուրգ 92
Դիլլեման Լ 31, 32, 151
Դիոդորոս Սիկիլիացի 35, 45, 46, 50—52
Դիոն Կասիոս 31—33, 125, 127, 146, 149, 153, 155, 159, 163—165, 170—173, 175—177
Դոմետիանոս 84 177, 180

Եղեկիել 259
Եղիա Գ 227
Եղիազար 84, 91—93
Եղիշե (պատմիչ) 245—247
Եվսեբիոս Կեսարացի 99
Երեմյան Ս 43, 44, 61, 121, 122, 131, 139, 222, 237, 240, 247, 255
Երվանդ Տեր-Մինասյան 232

Զահրասպ 185, 186
Զայն-ադ-դին Ղալի Քուշտուկ Բակտակ 227
Զարբիենոս 60
Զարդոշ 194
Զեխա-Յաշուղ 202
Զրադաշտ 23, 25
Զուաբիա 244
Զևս 69

Էկզեդարես (Աշխադար) 146, 147
Էրատոսթեն 33

Թակուլ-տի-Նինիբ Ա 10
Թահմասպատ 21
Թաքրեյ 72
Թեկլա 212
Թեյշեբա 20
Թեոփիլակտոս Սիմոկատես 235, 237
Թիգլաթ-Պալասար 10
Թիգլաթ-Պալասար Գ 15
Թովմա Արծրունի 254
Թորի 97
Թումիս 242

Իբն Խորդադբիհ 236
Իզատես 37, 71—73, 76—79, 81, 83—88, 90—96, 100—103, 105—109, 112—119, 127, 131, 132, 156, 191, 224
Իշոդ-Բար-Նուն 227
Իշոդեդնահ-դը-Բասրա 228
Իշտար 5, 13—15, 25, 29, 46, 67—69
Իշտար-Նատին-ապլ 15
Իսահակ եպս. 155, 157
Իսահակ (կաթ.) 216, 219, 220, 223, 229, 238, 240, 249, 251, 259
Իվանիս 242

Լաետոս 168
Լամեդոն Միտիլենացի 50
Լուկկիոս 181
Լուսիոս Կուիետոս 147, 148

Խալդ (աստված) 20
Խայ-Բաղալ 202
Խոռխոռունիներ 134—139
Խոռ Հայկազն 61, 135
Խոսրով Աբրվեզ 221
Խոսրով Ա (Հայոց թագ.) 170, 182, 183
Խոսրով (պարթևների թագ.) 146, 147, 154, 155

Կայեսենիուս Գալլոս 118
Կապ 97
Կարդագ 238, 239
Կարոս 184
Կենեդայոս 118
Կեստիոս (զորավար) 118
Կիաքսար 22
Կիրսիլոս Փարսալացի 43
Կլավդիոս 88, 97—99, 164
Կոմմոդոս 162, 163
Կոշակեր 73
Կոստանդիանոս 206
Կորբուլոն 120, 121, 125, 126, 147
Կորնելիոս Անուլլինոս 163, 164
Կրատերիոս 52
Կուդամա 250
Կուդրյավցև 122

Հաբել 154—157, 159, 192
Հաբել եպս. 161, 168
Հադրիանոս 151—154, 156, 157
Հազկերտ (Ա) 218, 219, 222, 245
Հակոբ Մծբնացի 199, 204
Հակոբ քահանա 211—213
Հակոբոս (առաքյալ) 93
Համուրաբի 9
Հայկ Նահապետ 61, 62, 130, 135
Հանունիա 211
Հարպր 22
Հարտման 254
Հափսա 212
Հերկատեոս 47
Հեղինե թագուհի (Ադիաբենի) 71—73, 75, 76, 79—81, 83—86, 90, 96—100, 116, 117, 131, 132, 191
Հեղինե (Կոստանդիանոսի մայր) 94
Հեղինե (Արգարի կին) 98
Հերովդես Մեծ 120
Հերոդիանոս 163, 164, 168, 170—172
Հերոդոտոս 47
Հերցֆելդ 35, 73—75
Հիերոնիմոս Կարդիացի 51
Հիլլել 92
Հիսպասոսինի 56
Հյուբշման 255

Հոմերոս 31
Հոնիգման 32, 221, 239
Հովսեպոս Փլավիոս 71—73, 76, 78—80, 82—88, 90, 94, 97—101, 105—108, 110, 112, 114—119, 128, 131, 189
Հովսեփ 72
Հովսեփ կաթ. 230
Հոֆման 239, 247
Հրահատ Գ 51
Հրահատ Դ 64, 104
Հրահատ Ե 64, 104
Հուլիանոս կայսր 29, 31, 32
Հուստինիանոս 241

Ղաբեդյաշուղ 238
Ղազ (եպս.) 203, 204
Ղակբալահա 224, 249
Ղափանցյան Գ 44
Ղկաբ-Ալլահ 205
Ղուկաս (ավետարանիչ) 97

Մալխասյան Ստ. 139, 142, 143
Մալկոլմ 39
Մակրինոս 172, 173, 175
Մաղխազ 61, 134—136
Մաղքա 231
Մանանդյան Հ. 44, 122, 136, 183, 234—237, 247, 254, 255
Մանավազ (Հայ նախարար) 61, 62, 135
Մանավազյան (նախարարություն) 135, 136
Մանի 25
Մանիսար (իշխան) 147
Մառ 140
Մասայուս 38, 39
Մար Աբաս Կատինա 131
Մարան Ջեխա 215
Մարդուկ 15
Մարե եպս. 240
Մարի 231, 242
Մարիկ 32, 221
Մարկոս Անտոնիոս 159, 162
Մարկոս Ավրելիոս 162
Մարկվարտ 78, 79, 228, 235, 236, 254, 255
Մար Մարի 193—196, 200
Մարութա 241
Մերարսապես 32, 128, 148, 149, 153, 154
Մեդիոս Լարիսացի 43
Մեհերդատ 108, 109
Մենուա 20
Միթրա 25, 69, 72
Միթրաուստես 38
Միլես 199, 203—206
Միհրդատ Մեծ 54—57, 63, 67
Մինգանա 250
Միր Հորմիզդ 231
Միքայել Ասորի 39, 233, 241
Միքայել Հովհաննեսյան 240
Մշիխա Զեխա 153—156, 158, 159, 162, 165, 177—181, 185, 192, 195, 197—200, 202, 204, 206—209, 211, 214
Մոնես 125, 126
Մոնոբազ (Մոնոբազոս, Բազոս) 71—73, 75—77, 79—81, 85, 87, 98
Մոնոբազ Բ (Մանավազ) 71, 76, 86, 87, 100, 112, 113, 116—119, 122, 124—129, 144, 145
Մովսես (Մարգարե) 91
Մովսես (եպս.) 240
Մովսես Խորենացի 61, 98, 99, 130—135, 106, 138—143, 157, 162, 182, 240, 254
Մուսասիր (Մուծածիր) 20
Մուզուր 121

Յասուվն 43
Յեշուղհաբ Բ (կաթ.) 244
Յոզեդեկ 230
Յոհանան 208, 209, 213, 214, 225, 241
Յուստի 72

Նարու 15

Նակիխա 200
Նահապետ 74
Նանա 68, 69
Նարուգոդոնոսոր Բ 17
Նաբո-պալասար 17
Նարսայ (Ներսեհ) 162, 167, 192
Նեստոր 232
Ներոն 75, 120, 123—125, 127, 129
Նիգեր 163, 164, 167
Նինոս 39—41
Նոախ (Նոխ, Նոյ) 224, 258, 259
Նոյ 78, 79, 140

Շաբթա 202
Շաբո 228, 231, 239, 243, 249, 251, 253, 258
Շախլուփա 198, 200, 201, 249
Շահրատ (Շահարատ, Շարհատ) 74, 174, 177, 178, 180
Շամաշ 25, 69
Շամիրամ 40, 41
Շամմա 92
Շամշի Ադադ Ա 9
Շամշի-Ռամման 12
Շապուհ Ա 25, 183, 184, 198, 200, 201, 222
Շապուհ Բ 138, 208—215, 238, 239, 246, 248
Շաւտա 231
Շեմշոն 155
Շրիղա 208
Շուբխա Լիչո 249
Շուլգի 7, 8

Որդունի (Նախարարություն) 135
Որոդես Բ 63
Որոդես Գ 64, 76

Չիտրանտախմա Սագարտացի 21, 22

Պագրասպ 209, 211
Պապա 198, 202—208, 225
Պառակ 109
Պարթամասպատ 151, 152, 156
Պարթամասիր (Բակուր Բ-ի որդի) 146, 147
Պետրոս (առաքյալ) 93
Պերդիկաս 52
Պերոզ (տե՛ս Վաղարշ Գ) 162
Պերոզ Տամշարուր 211, 213, 214
Պերտինակս 163
Պիգուլևսկայա Ն. 55, 165, 166
Պլինիոս 30, 37, 46, 57, 106, 254
Պլուտարքոս 51, 58—60
Պկիդա 192, 196
Պոզնո 228
Պոլեմոն Բ 121
Պողոս (առաքյալ) 92, 93
Պոլոս (Պողոս) 259
Պոմպեոս 51, 60, 62—64, 79, 127, 151
Պտղոմեոս 32
Պտղոմեոս (զորավար) 49, 50, 52, 53
Պուր Սին 8

Ռարուլա 232
Ռակբակտ 156, 157, 160
Ռահան 108
Ռուսա Բ 20
Ռուփոս (եպարքոս) 157

Սալմանասար Ա 11, 19
Սալմանասար Բ 11, 12
Սահակ Արծրունի 254
Սաղդա 206
Սամվել 259
Սանատրուկ 98, 106, 138
Սարգոն 16, 17
Սարգոն Բ 20
Սարդուր Ա 20
Սեակրիաս (կաղ, Նաբատեոսի որդի) 118
Սեբեոս 221
Սելեն 172
Սելևկոս 49, 50, 53, 54
Սենտինոս 149
Սիմակոս 77

Սիմոն (Արինոսի որդի) 80, 118
Սիմոն (Շամղուն, ավագ սարկավագ, ասյա Տիզրոնի կաթ.) 205—207, 209
Սինախերիբ 8, 13, 14, 16, 17
Սիննամոս (Կիննամոս, Սիննակ, Սինանակոս) 102—104
Սին-Շար-Իշքոն 17
Սոլսի 100
Ստեփանե 142
Ստրաբոն 33—36, 40, 42—44, 48, 57, 58, 247
Սուլակա 227
Սևերիանոս (զորավար) 159
Սևերոս (Ալեքսանդր կայսր) 163—165, 167—169, 181, 182

Վալերիանոս 163
Վահրամ Բ (Վարհարան) 184, 186, 207
Վաղարշակ (Վաղարշ, Հայոց թագ.) 61, 130, 132, 133, 135—137, 139, 140, 142, 143
Վաղարշակ Ա. (պարթևների թագավոր, Վաղարշ, Վոլոգես) 78, 110—112, 114—116, 119, 120, 122—127, 129, 131, 144, 180
Վաղարշ Բ (պարթևների թագ.) 156, 158
Վաղարշ Գ (Պերոզ) 158—160, 162
Վաղարշ Դ 162, 165—169
Վաղարշ Ե 169, 170
Վաղես 215
Վարդան (Ֆարուդ, պարթևների թագ.) 106—108
Վեսպասիանոս 84
Վիստոնյան եղբայրներ 139
Վիտտակեր 171
Վոնոն (Ա.) 64, 65, 104, 106
Վոնոն (Բ) 109, 110

Տարարի 235, 236
Տակիտոս 103, 104, 106, 107, 109, 110, 113, 119—123, 125—126
Տիբերիուս 104, 195
Տիգրան Բ 42, 51, 55, 57—63, 75, 79, 127, 134, 235
Տիգրան Ջ 120—123, 125—127
Տիմոթեոս 229, 240
Տիտոս 80, 84, 118
Տրայանոս 30—32, 127, 128, 144—156, 181, 221
Տրդատ Ա. (Հայոց թագ.) 75, 110, 111, 119, 120, 122—127, 129—130, 132, 134—137, 139—141, 143, 144
Տրդատ Բ 173, 174, 183
Տրդատ Գ (պարթևների թագ.) 65
Տրդատ 62

Ուլպիանոս 177
Ումախու-Իշտար 21
Ուղնու 235

Փավստոս Բ 137, 138, 235, 245—247, 253—255
Փարսաման Ա. 121
Փիլիպոս 194
Փիլիքսեննես 50
Փլավիոս Հերակլեոս 177

Քամ 140
Քանան 140
Քարդագ 212
Քրիստափոր Ա. 233, 234
Քրիստենսեն 39

Օգոստոս 123, 127, 152, 181
Օկանդոպատոս 37
Օրկսինես 37
Օրոնտես 38

Ֆի 195, 198, 225, 227, 228, 234, 243, 250, 253, 257

Ադամ(ակերտ) 140
Ադենիստրայե ամրոց 149
Ադիաբաս (գետ) 30
Ադիաբեն, Ադիաբենե, Խեդայաբ, Բելթ Խեզայա, Խեզայա passim
Աթենք 147
Աթուրիա (Աթուր) 32, 36, 150, 194, 223, 233, 234
Ալեքսանդրիա 95, 205, 207
Ալթին Քյուփրու 74
Ալխանա (Խնիտա, Խնայտա) 250, 251
Ալքի (էլք) 246, 247, 255
Ալվանի անցք 9
Ակիլիսենե (Աքիլիսենե-եկեղեց) 44, 121
Ակրա 80, 81
Աղբակ գետ (Ալբակ սու) 240
Աղբակ Մեծ 235, 240
Աղի ծով (Աղիվն) 61, 121, 135
Աղձնիք 20, 41, 239, 245, 254
Ամադիա (Ամադիե) 247
Այրարատ 232
Անձևացյաց (Անձևաց) գավառ (Աղզի) 20, 255, 256
Անձիտի 11
Անտիոք 47, 57, 59, 60, 64, 83, 97, 158, 163, 173, 181, 182, 184, 198, 203, 205, 207
Առաբխա (տե՛ս Քերքուք)
Ասորեստան (Ասսիրիա, Աշուրիստան, Աշուր) 8—12, 14, 16, 17, 20, 21, 29, 30, 32, 36, 67, 109, 145, 146, 149, 153, 162, 182, 183, 192, 193, 221—223
Ասորական միջագետք 37, 38
Ասորիք 6, 9, 11, 34, 36, 38, 48, 50, 66, 101, 125, 126, 147, 157, 163, 176, 222
Ասպամեա 54
Ասպավորդենե (Ասպավարկոտիկենե) 63
Ասպար աշխարհ 63
Ատրպատական 75, 76, 111, 112, 119, 148, 235, 238, 239, 253
Արբելա, Արբել, Իրբիլ, Արբա իլու passim
Արդին-Մուսասիր (Մուսասիր Արդինի) 20, 21
Արևան 220
Արզն (Արզրում) 194, 197, 220
Արմավիր 133
Արմե-Շուպրիա 20, 21
Արշամոս (ամրոց) 113
Արվաստան 103, 105, 222, 228, 236
Արտաքենե 35
Արտաքսատա (Արտաշատ) 120, 127, 147
Արտեմիդա 47
Արփակենե 35

Բաբելոն (Բաբելոնիա, Բաբելաստան) 9, 10, 17, 19, 30, 32, 38, 42, 46, 48—50, 53, 56, 61, 68, 152, 168, 188, 194, 221
Բաբելոն—եկբատան (Ճանապարհ) 7
Բադրա-Բախշա 47
Բակտրիա 115
Բաղդադ 231, 244
Բաղեղ (Պիթլիս) 239
Բայետիկա նահանգ 31
Բաշ կալե (Պաշքալե, Հադամակերտ, Ադամակերտ) 239, 240
Բարադան Քեփե 47
Բդիգար (ամրոց) 213
Բելթ Արաբայե (Ղարաբայե) 194, 220
Բելթ Արամե (Արամայե) 195, 204, 223
Բելթ Բագաշ (Բելթ Բալեշ, Բաղաշ, Բալիս, Բալե, Բագեշ, Բաբշիշ) 217, 220, 224, 238—243, 251
Բելթ Գարմա (Գարամանա, Բայարմա, Բնգերմա) 15, 16, 212, 219, 220, 222, 224, 250
Բելթ Դայլումա 197

Բելթ-Դասեն (Դասն, Դասան, Բելթ Տուրե, Դասընտրե) 217, 220, 224, 242, 245—248, 251, 252, 254—256
Բելթ-Զաբդի (Զաբդա, Զաբդե) 194, 197, 202, 220, 249, 252
Բելթ-Լափաթ 197, 203, 213, 220, 224
Բելթ-Կետրայե 197
Բելթ-Հուզայե (Հեզայե) 197, 209, 220, 224
Բելթ Ղեդրե 229
Բելթ Մահքարտ (Մահկարտ, Մահկերտուն, Բիհկարտ, Մահքըր-Տուն, Մարձին, Բելթ Բիհնարտ) 217, 220, 251—253, 257
Բելթ Մեսկենե 197
Բելթ Նիկթոր 197
Բելթ Նուհադրա (Բելթ Նուհադրան, Բեթ Նուհադրե, Բահադրա, Բա Նուհադրա, Նե Հադրա) 217, 220, 224, 228—230, 232, 234—236, 243, 245—248, 251—257
Բելթ Ռահիմա 220
Բզնունյաց գավառ 239
Բզնունյաց ծով 135, 139
Բրիտանիա 163
Բուտո-Արտաշիր 221, 225

Գազա 140
Գալիլեա 93, 117, 118
Գանձակ 112
Գառնի (տաճար) 144
Գարա լեռներ (Ջերել Դասեն) 243, 247
Գերարա 140
Գիլղան 11
Գիշ (Թրաաւսպա Ջիշ, Շիշ) 112
Գոգ և Մագոգ 189
Գոգերձական 121
Գոմել 228
Գոմոր 140
Գուգարք 121
Գունդիշապուր 184
Գուտիում 19
Գևեր 239

Դաբարինոս (Ռաբարինեխեսն, Բարխես) 220, 224, 258—260
Դարիլ (այժմ՝ Կալե) 239
Դագուր աշխարհ 242
Դակիա 146
Դահեր 115
Դարանաղի 121
Դիաբաս գետ (Դիաբա, Դիաբ) 30, 33, 34
Դիզ (Դիզան) 239. 257
Դմեյր 171
Դրանգիանա-Սակաստան 63
Դուին 232
Դուրա-Եվրոպա 182

Եգիպտոս 31, 48—50, 53, 98, 99, 204, 207
Եղեսիա (Ուռհա) 47, 83, 89, 98, 99, 147, 161—164, 172, 188, 189, 191—194, 198, 203, 206, 232
Եկեղեաց 121
Եմեն (Նեդժ) 113
Եվլայոս գետ 9
Երեխ 6, 14
Երզնկայի դաշտ 44
Երուսաղեմ 17, 79—81, 94—98, 100, 117, 118, 204
Եփրատ 33, 55, 80, 84, 112, 115, 117, 126, 152, 164, 173, 181, 182—184
Եփրատենսիս 31

Զագրոսյան լեռնաստան 63
Զարաւանդ 237
Զերրան 239
Զևգմա 59, 108
Զիբար 243
Զուզա 242

Էլամ 9
Էլեգիա (Իլիջա) 159
Էկրատան 45, 63

Թաղուկ 47

Թափիչի (գերեզման) 79
Թեսալիա 43

Իբերիա 31, 121
Իբերիոս գետ 31
Իլայլել 13, 95
Իսաոս 163
Իրան 18
Իրաք 221, 222

Լաշոմ 220
Լաոդիկիա 47
Լասա 140
Լարիսա (քաղաք) 43
Լիկոս (Լիխոս, Գայլ գետ) 33—35

Խաբուր գետ 161, 228, 246, 247, 255
Խաբուրի հովիտ 19
Խազա 225
Խաղիր 228
Խառան 17, 53, 57, 78, 98, 161, 172
Խարաքս (Խարաքենե թագավորություն) 77
Խարաքս-Սպասինի 77, 81, 83, 84, 165
Խարբագելալ 220
Խոյ 139
Խորասան 166
Խուրմատու 47

Ծուփաց թագավորություն 121

Կադիսա 243
Կալախ (Նեմրուդ) 11
Կալաքենե (Կալաքեն) 44, 247
Կալլինիկե 241
Կալն 40
Կակզին 8
Կապադովկիա 120, 174
Կապր գետ 33, 35
Կապուտան լիճ 237
Կասպիական դարպասներ 33
Կասպից ծով 37, 44, 54, 65, 171
Կարդու (Արարտու) 78, 194, 220, 252
Կարհա 78
Կարմիր ծով 37
Կարրոն 78, 79, 85
Կաֆտոն 244
Կեդրոն (ձոր) 79, 80
Կիլիկիա 50, 58, 104
Կիպրոս 95
Կոմագենե 37, 121
Կոստանդնուպոլիս 205, 207
Կորդվաց աշխարհ 78, 79, 147, 157
Կորդվաց լեռներ 148
Կորդվեն 78
Կորդուք (Կորդիք) 51, 55, 60, 147, 246, 247, 253, 255, 257
Կորճայք 20
Կորմա գետ 109
Կորտիս 45
Կրերյաց լեռնանցք 147
Կրման 65
Կումենուում (Կումմե) 20

Հադիթա 243
Հադրա 44, 163—165, 167, 168, 176, 182
Հալվան 227
Համադան 7, 9, 57
Հայաստան passim
Հանիթա 197
Հաշտենից (Կողմանք) 98
Հարք գավառ 61, 135
Հելլեսպոնտոս 49, 53
Հեր (Հէր, տե՛ս նաև Խոյ) 139, 237,
Հերրաթ-Գնալ 197, 202, 249, 250
Հատոն (գավառ) 250
Հիպպիկոս (աշտարակ) 79
Հիրկանիա 65
Հյուսիսային Արաբիա 11
Հնդկաստան 31, 74, 216
Հոլուան 197
Հորմիզդ-Արտաշիր 197
Հռանդեա 126, 154
Հռոմ passim
Հրեաստան 11, 57, 64, 79, 94—97, 99, 100, 118, 119, 190
Հուրուշիա 11

Ղամադիա 243
Վայնկավա 227
Ղիլմ 203

Ճորոխ 121

Մաալթա 224
Մագնեսիա 54, 55
Մազանդարան 198
Մազքթաց թագավորություն 75
Մալքի 212
Մակեդոնիա 37, 104
Մաղխազյան (տուն Մաղխազանի) 138, 139
Մանդալ 47
Մանդանի 47
Մաջերդուն 254
Մարադա 244
Մարաստան 47, 53, 63
Մարաստան-Ատրպատական 147, 248, 256
Մարաց ամուր աշխարհ 237
Մարգա (Մարագա) 228, 253, 257
Մարգիանե 63
Մար Մարիա 233, 234
Մարվ (Ալեքսանդրիա, Արաքոզիա, Փանջվեյ, Անտիոքիա, Մարգիանա) 111
Մեդական լեռներ 171
Մեդիա 45, 49, 109, 110, 115, 124, 176, 182, 183, 222
Մեծ Ջաբ (Ջավ) 8, 12, 19, 20, 27, 29, 33—35, 39, 51, 153, 167, 228, 239, 240, 243, 247
Մեծ Հայք 65, 106, 121, 122, 131, 256
Մեսեն (Խարակեն) 56, 222
Միրվ 57
Միդոնիա 37
Միջագետք 20, 21, 30, 31, 46, 47, 49—54, 56, 63, 66, 67, 74, 75, 98, 99, 101, 106, 108, 113, 140, 146, 147, 149, 151, 153, 157, 161, 173, 175—177, 179, 185, 188, 189, 221, 222
Միջագետք հայոց 121, 122, 126
Միջագետք (Հյուսիսային) 17, 18, 21, 36, 41, 59, 63
Միջագետք Ստորին 63
Միջագետք Վերին 165, 184
Միջերկրական ծով 41, 59
Մծբին (Նիսիբին, Անտիոք, Էպիմիգդոնիա) 32, 37, 57, 94, 103, 105, 106, 122, 124, 125, 130, 131, 148, 164—166, 168, 173, 188, 194, 197, 199, 204, 212, 220, 224, 244
Մոկք (Բելբ Մոկսա) 20, 142, 143, 220
Մուսուլ 223, 226, 227, 230, 231, 233—235, 243, 257

Նաիրի-Խուրուշկիա 20, 21
Նեարդա 88, 90
Նեհարդուր 220
Նիկատոր լեռ 33, 34
Նիկեֆորիում (գետ) 126
Նիկիա 225
Նիհորական (Նիխորական) 245—248, 254—256
Նինվե (Նինոս) 6, 8, 10, 14, 15, 17, 30, 32, 40, 46—48, 57, 109, 149, 162, 227, 228, 230, 233, 234, 236, 237, 243
Նիսա 68, 69
Նոտարատա 235, 236
Նոր Արտաշիրական 234, 236
Նորշիրական (Նոր-Շիրական, Նոշիրական, Շիրական) 234, 238, 245, 246, 254—256

Շաբուր 118
Շահրակերտ (Շահրկերտ, Շահրքարդ) 197, 220, 250
Շիգար 197
Շիգրեր 237
Շիլայա 11
Շնավղ 235
Շումեր 19

Շուպրիա (Շուբրիա) 41

Չինաստան 66, 216

Պալմիրա 112
Պանոնիա 163, 177
Պարթևաստան 63, 64, 68, 102, 151, 169, 176
Պարսկահայք 237
Պարսկաստան passim
Պարսից ծոց 77, 222
Պերսիս (Պարսք, Պարսու) 18, 19
Պոնտոս 34, 121
Պսևիինոս (աշտարակ) 79, 80
Պրաթ-Մայշան (Փերատ դը Մայշան) 197

Ջաբալ-ալ-Աբիւդ 228
Ջաբալ Բևխայր 228
Ջաբալ Դայն Սիֆնի 222
Ջաբալ Սինջար 228
Ջալուլա 47
Ջուլամերկ 257

Ռադան 220
Ռազիկա 203
Ռախաբոտ 40
Ռակկա 242
Ռամոնին (Ռասոնին, Ռումին) 217, 220, 224, 249—251
Ռաշան (Ռեշդայնա) 40
Ռիմա 220
Ռևանդուզ 147, 237, 251, 256

Սակաստան 63, 73
Սապիա 47, 48
Սավադ 223
Սեբոյիմ 140
Սելովամ 80
Սելևկիա 40, 47, 63, 168, 182, 185, 201, 208, 220—222
Սենջարյան լեռներ 19
Սիդիկան 237
Սիդոն 140
Սինգարա 148
Սիսպիրիտիս (Շուշպրիտիս) 44
Սիրագաններ (գյուղ) 235
Սիրիա 104
Սկյութիա 103—105
Սոդոմ 140
Սպեր գավառ 121
Սուզա (Շուշ, Սուս) 9, 202, 205, 206, 222
Սուրիստան 222

Վաղարշակերտ (Վոլոգեսակերտ) 112
Վանա լիճ 10, 19, 61, 147, 244
Վասպուրական 240, 255
Վեհ-Արտաշիր 221
Վրկանաց աշխարհ 65, 120

Տաբարիստան 198
Տագրիտ 231
Տավրոս (Հայկական) 41
Տելլա-դը-Շելլա 212
Տիգրանակերտ 58, 60, 120, 126, 147
Տիգրիս 5, 8, 9, 10, 17, 19, 20, 30, 33, 47, 48, 50, 77, 109, 122, 148, 153, 165, 168, 171, 181, 185, 228, 231, 256
Տիգրոն (Սելևկիա) 63, 69, 112, 152, 157, 159, 160, 168, 178, 183, 185, 194—198, 200—206, 208, 215, 216, 219—226, 229, 240, 242, 244, 252
Տմորիք 247, 256
Տուզ 47
Տուր Ղաբդին 228

Ուզարիտ 41
Ուրարտու 19—21
Ուրի թագավորություն 8
Ուրմիա 239, 243, 244

Փարսալա 43
Փերատ-դը-Մայշան 220, 224
Փյունիկիա 57
Փոքր Ասիա 48, 55
Փոքր Զաբ 5, 12, 27, 29, 39

Փոքր Հայք 43, 51, 121

Քալղաթ Բալիս 239
Քաշքար 197
Քարմա 230—232
Քարմա-Կաստրա 231
Քարքա-դը-Բեյթ-Սլոխ 16, 29, 177, 180, 197, 205, 220
Քալքաժ-դը-Մայշան (Փեյատ-դը-Մայշան) 220
Քաֆար-Ղուզայլ (Ղազդին) 225, 226
Քերքուք 16, 17, 41, 47, 69, 73—75
Քիրքուրիի անցքեր 12
Քոքե (Վանք) 195, 196, 203
Քաատրապա 74
Քրդստան 41
Քոսվեյթ 77
Քուփրի 47

Օնա 30
Օսրոյեն 43, 55, 76, 99, 109, 113, 147, 153—156, 161, 162, 164, 169, 189
Օփյաս 80



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

ՄԱՍՆ Ա

ԳԼՈՒԽ Ա. Արբելան մինչ Սելևկյանների իշխանության հաստատումը

1. Արբելան մակեդոնական արշավանքների ժամանակ և Ադիաբենե երկրի անվան առաջացումը 27
2. Արբելա քաղաքն ու բնակիչները 39
3. Արբելան Սելևկյանների գերիշխանության ներքո 44
4. Ադիաբենի թագավորությունը (II—I դդ. մ. թ. ա.) 56
5. Պարթևների արտաքին քաղաքականությունը իրենց հպատակ փոքր ժողովուրդների նկատմամբ 62

ԳԼՈՒԽ Բ. Ադիաբենի թագավորությունը

1. Մ. թ. I դար 71
2. Մոնոբազոս և Իզատես 76
3. Հեղինե թագուհու և նրա որդի Իզատեսի ընդունած նոր կրոնը . . . 81
4. Ադիաբենն Իզատեսի թագավորության օրոք 87
5. Հեղինե թագուհու դեպի Երուսաղեմ կատարած ուխտագնացության հարցի շուրջ 94
6. Պարթևների՝ Արտավան Գ և Ադիաբենի Իզատես թագավորների փոխհարաբերությունների հարցի շուրջ 101
7. Պարթևների արտաքին նոր քաղաքականությունն ու հարևան փոքր ժողովուրդները 110
8. Պարթևների, հայերի ու Ադիաբենի բնակիչների համագործակցությունն ընդդեմ Հռոմի 119

18—96

ԳԼՈՒԽ Դ. Ադիաբենից Հայաստան գաղթած մի ճանի նախարարական տների ճարցի շուրջ

1. Շամբատ Բագարատի տունը 129
2. Մաղխազ և «Մաղխազուհիւն» գործակալութիւնը 134
3. Գնիունիների նախարարութիւնը և «Զնեէս» գործակալութիւնը . . 139
4. «Սրիկանները» և «Սրիկաների» գործակալութիւնը 142

ՄԱՍՆ Բ

ԳԼՈՒԽ Ա. Ադիաբենը պարսկա-հռոմեական տիրապետության ներքո
Ադիաբենը («Assyria» Ասորեստան անունով) հռոմեական նահանգ . 146
ԳԼՈՒԽ Բ. Ադիաբենը պարսիկներից նշանակված կառավարիչների («մոգ-պետների իշխանության ներքո 154

ՄԱՍՆ Գ

ԳԼՈՒԽ Ա. Ադիաբենի եկեղեցական բեմն ու նրա դերը երկրի քաղաքական կյանքում Ադիաբենի քրիստոնեական առաջին համայնքների ստեղծումը 188

ԳԼՈՒԽ Բ. Տիգրոնի կաթողիկոսության ստեղծումը
1. Խեդայաբի բեմը և նրան կից եպիսկոպոսական աթոռները . . 218
2. Արբելայի մետրապոլիտությունը ու նրան ենթակա եպիսկոպոսական աթոռները 223
3. Բեյթ Նուհադրայի (Beit Nouhadra) գավառը կամ եպիսկոպոսությունը 228
4. Բեյթ Բագաշ (Beit Bagaš) գավառը, կամ եպիսկոպոսական աթոռը . 238
5. Բեյթ Դասեն (Beit Dasen) գավառը կամ եպիսկոպոսական աթոռը . 242
6. Ռամոնին (Ramônîn) գավառը կամ եպիսկոպոսական աթոռը . . 249
7. Բեյթ Մահկարտ (Beit Mahqart) գավառը կամ եպիսկոպոսական աթոռը 251
8. Դաբարինոսի (Dabarinos) կամ Ռաբարինխանի և կամ Բարխիի գավառը կամ եպիսկոպոսական աթոռը 258
Անվանացանկ 261



ՀԱՅԿ ԴՈՒԴՈՒՄ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՊԻՍԲԵՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ
Նկարիչ ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ ԻՐ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ИБ № 185

Հանձնված է շարվածքի 4.02. 1980 թ.։ Ստորագրված է տպագրության 19.09 1980 թ.։ ՎՖ 04835 Չափը 60×84 1/16 Թուղթ, № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 13,95 տպագր. 17,25 մամուլ։ Հրատ.—հաշվարկ. 15,0 մամուլ։ Տպաքանակ 3000։ Պատվեր № 96։ Հրատ. № 5268։ Գինը 2 ռ. 40 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.

Ա 64082

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220064082